

Վիկտոր Հյուգո

ԹՇՎԱՌՆԵՐ

ՎԵՊ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՖԱՆՏԻՆ

Ֆրանսերենից թարգմանեց

Վահե Միքայելյանը

Երևան «Սովետական գրող» 1987

Victor Hugo

LES MISERABLES

ROMAN

PREMIERE PARTIE

FANTINE

Traduit par

Vahé Micaélian

Erévan édition «Sovétakan grogh» 1987

Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» հայերեն թարգմանվել է դեռևս հեղինակի կենդանության օրոք:

1940—1951 թթ. Հայպետհրատը վեպը հրատարակել է նոր թարգմանությամբ, որ կատարել է Վահե Միքայելյանը:

Ընթերցողին ներկայացվող ներկա հրատարակությունը այդ թարգմանության վերահրատարակությունն է:

Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» առաջին անգամ հայերեն հրատարակվել է 1868 թվին Զմյուռնիայում, Գրիգոր Զիլինկիրյանի թարգմանությամբ, իսկ դրանից հետո բազմիցս վերահրատարակվել է որոշ վերամշակումով: Իր թարգմանությունը Գր. Զիլինկիրյանը ձոնել է Վ. Հյուգոյին և նրան գրած նամակներին ստացել է հետևյալ պատասխանը.

Հոթվիլ Հաուզ. 12 դեկտ. 1868

Պ ա ր ո ն Գ ր ի գ ո ր Զ ի լ ի ն կ ի ր յ ա ն

Զմյուռնիա

Պարոն.

Ձեր առաջին նամակն ինձ չի հասել. երկրորդն էլ ստացա երկար բացակայությունից հետո՝ վերադարձիս: Դա է պատասխանիս ուշանալու պատճառը:

Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը:

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելս: Երախտագիտությամբ եմ ընդունում ձեր ազնիվ ձոնը և շնորհակալություն եմ հայտնում:

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ

Այնքան ժամանակ, ինչքան օրենքների ու բարքերի հիման վրա գոյություն ունենա այն սոցիալական դատապարտությունը, որ ներկա քաղաքակրթության մեջ դժոխքներ է ստեղծում և մարդկությանը շեղում է իր գեղեցիկ ճանապարհից, այնքան ժամանակ, ինչքան չեն լուծվել մեր դարի երեք պրոբլեմները՝ մարդու նվաստացումը պրոլետար դառնալով, կնոջ անկումը քաղցի պատճառով, երեխայի հյուծումը տգիտության պատճառով, այնքան ժամանակ, ինչքան որոշ շերտերում սոցիալական շնչահեղձությունը հնարավոր կլինի, այլ խոսքով և ավելի լայն տեսակետով՝ ինչքան որ երկրի վրա գոյություն կունենան տգիտությունն ու թշվառությունը՝ այս տեսակ գրքերը չեն կարող անօգուտ լինել:

ՀԵՂԻՆԱԿ

Հոթվիլ Հաուզ, 1862

Գիրք առաջին

ԱՐԴԱՐԸ

I

ՊԱՐՈՆ ՄԻՐԻԵԼ

1815 թվականին պարոն Շառլ Ֆրանսուա-Բենեդիկտ Միրիելը Դիյոնի¹ եպիսկոպոսն էր: Նա մոտավորապես յոթանասունհինգ տարեկան ծերունի էր և վարում էր այդ պաշտոնը 1806 թվականից: Թեև այս մանրամասնությունը ոչ մի ձևով կապ չունի մեր անելիք պատմության հետ, բայց որպեսզի ճշմարտացի լինենք, անհրաժեշտ է նշել այստեղ այն շուրջներն ու լուրերը, որ շրջում էին նրա մասին, երբ նա հասավ իր թեմը: Այն ամենը, ինչ ասում են մարդկանց մասին, լինեն դրանք ճիշտ կամ սուտ, նույնքան տեղ են գրավում նրանց կյանքում, որքան նրանց արարքները: Պարոն Միրիելը Էքսի դատարանի խորհրդականի որդին էր, ուստի հանդերձի ազնվականությանն² էր պատկանում: Ասում էին, որ նրա հայրը, պահելով իր որդուն որպես իր պաշտոնի ժառանգորդ՝ շատ շուտ, տասնութ կամ քսան տարեկան հասակում ամուսնացրել էր նրան՝ ըստ դատական ընտանիքներում բավական տարածված սովորության: Չնայած այս ամուսնությանը, ասում են, որ Շառլ Միրիելը շատերի խոսակցության առարկան էր դարձել: Նա թեև կարճահասակ, բայց բարեձև մարդ էր, գեղեցկադեմ, շնորհալի ու սրամիտ և իր կյանքի առաջին մասը նվիրել էր աշխարհիկ կյանքին ու կնահաճություններին:

Վրա հասավ հեղափոխությունը, դեպքերն արագ իրար հաջորդեցին և դատական ընտանիքները ջարդվելով, արտաքսվելով ու հալածվելով՝ ցրվեցին: Պարոն Շառլ Միրիելը հեղափոխության հենց առաջին օրերից փախավ Բուսիլի: Նրա կինն այնտեղ մեռավ թոքախտից, որով վաղուց հիվանդ էր: Երեխա չունեին:

Ի՞նչ է տեղի ունենում հետո պարոն Միրիելի կյանքում: Ֆրանսիական հին հասարակության փլուզումն էր արդյոք, իր սեփական ընտանիքի խորտակումն էր, 93 թվականի սոսկալի տեսարանները, — որոնք վտարանդիների համար թերևս ավելի սարսափելի էին, որովհետև նրանք հեռվից էին տեսնում ու սոսկումն ավելի մեծ էր թվում, — սերմանեցին նրա մեջ հրաժարման ու մենակության գաղափարներ: Արդյոք դա տեղի ունեցավ նրա զվարճությունների ժամանակ հանկարծ առաջացած խորհրդավոր հարվածի՞ց, որ երբեմն խփում է սրտին ու տապալում մարդուն, այն մարդուն, որին հասարակական աղետները չեն խորտակում, երբ հարվածում են գոյությանն ու հարստությանը: Ոչ ոք չէր կարող պատասխանել այս հարցին: Մի բան միայն որոշակի էր. այն, որ երբ նա վերադարձավ Բուսիլիից՝ արդեն քահանա էր:

¹ Դիյոնը մի փոքրիկ քաղաք է հարավային Ֆրանսիայում, Ալպերի ստորոտում, Մարսելից դեպի հյուսիս-արևելք:

² Նախահեղափոխական Ֆրանսիայում ազնվականությունը բաղկացած էր երկու մասից — սրի ազնվականություն (զինվորական բարձր պաշտոններ) և հանդերձի ազնվականություն (մինիստրներ, դատավորներ և վարչական պաշտոնյաներ): Ծ. թ.:

1804 թվականին պարոն Միրիելը Բրինյոլի ավագերեցն էր: Նա արդեն ծեր էր և ապրում էր խոր մենության մեջ:

Նապոլեոնի թագադրության օրերին իր համայնքին վերաբերող և այժմ անհայտ մի փոքր գործով նա գնաց Փարիզ: Զանազան ազդեցիկ մարդկանցից բացի, իր ծխականների օգտին բարեխոսելու համար նա այցելեց նաև կարդինալ պարոն Ֆեշին: Մի օր էլ, երբ կայսրը եկել էր այցելելու իր հորեղբորը՝ կարդինալին, արժանավոր ավագերեցը, որ սպասում էր նախասենյակում, տեսավ նրան: Նապոլեոնը նկատելով, որ այդ ծերունին մի առանձին հետաքրքրությամբ է նայում իրեն, շուտ եկավ ու հանկարծ հարցրեց.

— Ո՞վ է այս բարեմիտ մարդը, որ նայում է ինձ:

— Արքա,— ասաց պարոն Միրիելը,— դուք տեսնում եք մի բարեմիտ մարդու, իսկ ես՝ մի մեծ մարդու: Մեզնից յուրաքանչյուրը կարող է օգտվել դրանից:

Նույն երեկոյան իսկ կայսրը կարդինալին հարցրեց ավագերեցի անունը և որոշ ժամանակ անց պարոն Միրիելը խիստ զարմացավ, իմանալով, որ նշանակվել է Դիյնի եպիսկոպոս:

Կա՞ր արդյոք որևէ ճիշտ բան պարոն Միրիելի կյանքի առաջին մասին վերաբերող տարածված պատմությունների մեջ: Ոչ ոք չգիտեր: Քիչ ընտանիքներ էին ճանաչել Միրիելների ընտանիքը հեղափոխությունից առաջ:

Պարոն Միրիելը պիտի կրեր այն բոլոր նորեկների ճակատագիրը, որոնք նոր են գալիս որևէ փոքր քաղաք, որտեղ դատարկախոս բերանները շատ են, իսկ մտածող գլուխները՝ քիչ: Նա պետք է կրեր այդ, թեև եպիսկոպոս էր և հենց նրա համար, որ եպիսկոպոս էր: Բայց վերջ իվերջո, այն բոլորը, որ խոսվում էր, կապված նրա անվան հետ, լոկ խոսքեր էին, շշուկներ, բառեր, զրույցներ, նույնիսկ ոչ թե զրույցներ, այլ դատարկախոսություններ, ինչպես ասում են հարավի հզոր լեզվով:

Ինչ էլ որ լինի, Դիյնի եպիսկոպոս դառնալուց ինը տարի հետո այս բոլոր պատմություններն ու խոսակցության նյութերը, որ սկզբում զբաղեցնում են փոքր քաղաքներին ու փոքր մարդկանց, թաղվել էին խոր մոռացության մեջ: Ոչ ոք չէր համարձակվի խոսել դրանց մասին, ոչ ոք չէր համարձակվի հիշել դրանք:

Պարոն Միրիելը Դիյն էր եկել մի պառաված աղջկա ընկերակցությամբ: Դա նրա քույրը՝ օրիորդ Բատիստինն էր, իրենից տասը տարով փոքր:

Նրանք միայն մի սպասուհի ունեին, որն օրիորդ Բատիստինին տարեկից էր և կոչվում էր տիկին Մագլուար, և այժմ արդեն երկու կոչում ուներ. օրիորդի սենեկապանուհի և գերապատիվ հոր տնտեսուհի:

Օրիորդ Բատիստինը բարձրահասակ, դժգույն, նիհար ու բարեհամբույր դեմքով մի կին էր և ներկայացուցիչն այն ամեն իդեալականի, որ արտահայտում է «մեծահարգ» բառը, որովհետև թվում է, որ որևէ կին «պատկառելի» լինելու համար պետք է մայր լինի: Նա երբեք սիրուն չէր եղել: Նրա ողջ կյանքը, որ լոկ բարեգործությունների մի շարան էր, դեմքին դրոշմել էր մի տեսակ սպիտակություն ու պայծառություն, և ծերանալով նա ձեռք էր բերել այն, ինչ կարելի է կոչել բարության գեղեցկություն: Այն, ինչ նրա երիտասարդության միջոցին եղել էր նիհարություն, հասունության տարիներին դարձել էր թափանցիկություն, և այդ թափանցիկության միջից երևում էր հրեշտակը: Նա ավելին էր, քան կույսն է՝ հոգի էր: Նրա անձը կարծես ստվերից էր շինված,

հագիվ մի քիչ մարմին՝ նրա սեռը որոշելու համար, լույս կրող մի քիչ նյութ, խոշոր ու միշտ խոնարհած աչքեր, մի պատրվակ, որպեսզի այդ հոգին միշտ երկրի վրա մնա:

Տիկին Մագլուարը մի փոքրիկ, սպիտակ, գիրուկ, մտազբաղ կին էր ու միշտ հևում էր. նախ իր գործունեության, ապա շնչարգելության հիվանդության պատճառով:

Դիյն հասնելուն պես պարոն Միրիելին տեղավորեցին իր եպիսկոպոսական պալատում այն բոլոր մեծարանքներով, որ պահանջվում էր կայսերական դեկրետներով, ըստ որոնց եպիսկոպոսը դասվում է անմիջապես բրիգադային գեներալից հետո: Քաղաքապետն ու դատարանի նախագահը առաջինը այցելեցին նրան. ինքն էլ իր հերթին այցելեց գեներալին ու նահանգապետին:

Տեղավորելուց հետո քաղաքն սպասեց իր եպիսկոպոսի գործունեությանը:

II

ՊԱՐՈՆ ՄԻՐԻԵԼԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԳԵՐԱՊԱՏԻՎ ԲԻԵՆՎՆՅՈՒ

Դիյնի եպիսկոպոսական պալատը կից էր հիվանդանոցին:

Եպիսկոպոսական պալատը մի ընդարձակ ու գեղեցիկ քարաշեն շենք էր, կառուցված վերջին դարի սկզբին Փարիզի աստվածաբանության ֆակուլտետի դոկտոր և Սիմոնի աբբա գերապատիվ Անրի Պյուժեի կողմից, որը 1712 թվականին Դիյնի եպիսկոպոսն էր: Այս պալատը մի իսկական իշխանական բնակարան էր: Ամեն բան այդտեղ վեհաշուք էր. եպիսկոպոսի սենյակները, սրահները, շքեղ, խիստ լայն և ֆլորենտինյան հին ոճով շինված կամարակապ ճեմելիներով բակը և սքանչելի ծառերով այգիները: Ճաշարանում, որ մի երկար ու փարթամ սրահ էր ներքնահարկում և բացվում էր այգիների վրա, 1714 թվականի հուլիսի 29-ին գերապատիվ Անրի Պյուժեն հանդիսավոր ճաշկերույթ էր տվել, որին ներկա էին Էմբրյոնի իշխան՝ արքեպիսկոպոս Շառլ Բրյուլար դը Ժանլիսը, Գրասի եպիսկոպոս կապուցին Անտուան դը Մեգրինին, Ֆրանսիայի ավագ մեծավոր և Սենտ-Օնորե դը Լերենի աբբա Ֆիլիպ դը Վանդոմը, Վանսի բարոն՝ եպիսկոպոս Ֆրանսուա դը Բերտոն դը Կրիյոնը, Գլանդնի սինյոր՝ եպիսկոպոս Սեզար դը Սաբրան դը Ֆուկլալքիեն և Սենեզի սինյոր, թագավորի մշտական քարոզիչ ու աղոթարանի երեց՝ եպիսկոպոս Ժան Սանենը: Այս յոթ գերապայծառ անձնավորությունների նկարները զարդարում էին դահլիճը և այդ արժանահիշատակ թվականը՝ 1714 թվականի հուլիսի 29-ը ոսկե տառերով դրվագված էր մի սպիտակ մարմարե տախտակի վրա:

Հիվանդանոցը մի նեղ, ցածրիկ ու միահարկ տուն էր և մի փոքր այգի ուներ: Ժամանելուց երեք օր հետո եպիսկոպոսն այցելեց հիվանդանոց: Այցելությունը ավարտելուց հետո նա խնդրեց հիվանդանոցի դիրեկտորին գալ իր մոտ:

— Պարոն դիրեկտոր,— հարցրեց նրան,— քանի՞ հիվանդ ունեք այս բույեին:

— Քսանվեց, գերապատիվ հայր:

— Ճիշտ այդքան էլ ես էի հաշվել:

— Մահճակալները միմյանց շատ մոտ են,— շարունակեց դիրեկտորը:

— Ես էլ նկատեցի:

— Սենյակները անհարմար են, օդափոխությունը դժվարությամբ է կատարվում:

— Ինձ էլ է այդպես թվում:

— Իսկ երբ մի քիչ արևոտ օր է լինում, այգին փոքր է գալիս ապաքինվողներին:

— Ես էլ նույն բանը մտածեցի:

— Համաճարակների ժամանակ (այս տարի մենք տիֆ ունեցանք, իսկ երկու տարի առաջ՝ ջերմախտ) երբեմն հարյուր հիվանդ է լինում և մենք չենք իմանում ինչ անենք:

— Այդ միտքն իմ գլխում էլ ծագեց:

— Ինչ անենք, գերապատիվ հայր, պետք է համակերպվենք:

Այս խոսակցությունը տեղի էր ունենում ներքնահարկի ճաշասրահում:

Եպիսկոպոսը մի րոպե լռեց, ապա հանկարծ դարձավ դեպի հիվանդանոցի դիրեկտորը.

— Պարոն, ձեր կարծիքով քանի՞ մահճակալ կտեղավորվի միայն այս սրահում:

— Գերապատիվ հոր ճաշասրահո՞ւմ,— բացականչեց ապշած դիրեկտորը:

Եպիսկոպոսը հայացքը շրջում էր սրահում և կարծես աչքերով չափում ու հաշվում էր:

— Քսան մահճակալ ազատ կտեղավորվի,— ասաց նա կարծես ինքն իր հետ խոսելով, ապա բարձրացնելով ձայնը:— Լսեք, պարոն դիրեկտոր, ձեզ բան եմ ասելու: Այստեղ մի ակներև սխալ կա: Դուք քսանվեց հոգի եք հինգ կամ վեց փոքր սենյակի մեջ, իսկ մենք երեք հոգի ենք այստեղ, մինչդեռ վաթսունի տեղ ունենք: Ասում եմ, որ մի սխալ կա այստեղ: Դուք կվերցնեք իմ բնակարանը, իսկ ես՝ ձերը: Վերադարձրեք ինձ իմ տունը, իսկ սա ձերն է:

Հաջորդ օրը քսանվեց հիվանդներին տեղավորեցին եպիսկոպոսի պալատում, իսկ եպիսկոպոսը տեղափոխվեց հիվանդանոց:

Պարոն Միրիելը հարստություն չուներ, որովհետև հեղափոխությունը քայքայել էր նրա ընտանիքը: Նրա քույրն ստանում էր տարեկան հինգ հարյուր ֆրանկ ցմահ եկամուտ, որ բավարարում էր նրա անձնական ծախսերին: Պարոն Միրիելը, որպես եպիսկոպոս, պետությունից ստանում էր տարեկան տասնհինգ հազար ֆրանկ: Հենց այն օրը, երբ պարոն Միրիելը տեղափոխվեց հիվանդանոցի շենք, մեկընդմիջտ կազմեց այս գումարի օգտագործման հետևյալ ձևը: Մենք կարտագրենք նրա ձեռքով գրված այս բաշխումը.

Իմ տան ծախսերը կանոնավորելու հաշվեցուցակ

Փոքր հոգևոր դպրոցին.

1500 ֆրանկ

Քարոզիչների միաբանությանը

100 ›

Մոնղիդիեի լազարականներին

100 ›

Փարիզի օտարերկրյա քարոզիչների հոգևոր դպրոցին	200 ›
Սուրբ հոգու միաբանությանը	150 ›
Սուրբ Երկրի կրոնական հիմնարկություններին	100 ›
Մայրերի պաշտպանության ընկերությանը	300 ›
Առլի համանուն ընկերությանը	50 ›
Բանտերը բարելավելու գործին	400 ›
Բանտարկյալների վիճակը մեղմացնելու և նրանց ազատելու գործին	500 ›
Պարտքերի համար բանտարկված ընտանիքի հայրերին ազատելու համար	1000 ›
Թեմի աղքատ ուսուցիչների աշխատավարձի հավելման համար	2000›
Վերին Ալպերի նահանգական շտեմարանին՝ սովի դեմ	100 ›
Դիյնի, Մանոսկի և Սիստերոնի կանանց միաբանությանը՝ աղքատ աղջիկներին ձրի ուսում տալու համար	1500 ›
Աղքատներին	6000 ›
Իմ անձնական ծախսը	1000 ֆրանկ

Ընդամենը 15000 ֆրանկ

Դիյնի եպիսկոպոսական պաշտոնը վարելու ողջ ժամանակաշրջանում պարոն Միրիելը ոչ մի բան չփոխեց այս բաշխման մեջ: Այս կարգավորումը, ինչպես տեսնում ենք, նա կոչում էր իր տան ծախսերը կանոնավորել:

Օրիորդ Բատիստինն այս բաշխումն ընդունեց բացարձակ հնազանդությամբ: Այս սուրբ աղջկա համար Դիյնի գերապատիվը միաժամանակ և՛ նրա եղբայրն էր, և՛ եպիսկոպոսը. նրա բարեկամն էր ըստ բնության օրենքների և մեծավորն էր ըստ եկեղեցու: Նա սիրում էր նրան և մեծարում: Երբ եպիսկոպոսը խոսում էր, նա խոնարհվում էր. երբ գործում էր, նա հավանություն էր տալիս: Միայն սպասուհին՝ տիկին Մագլուարը մի քիչ մոթմոթաց: Եպիսկոպոսն, ինչպես տեսանք, միայն հազար ֆրանկ էր պահել իրեն, որը միանալով օրիորդ Բատիստինի թոշակին՝ կազմում էր տարեկան հազար հինգ հարյուր ֆրանկ: Այդ հազար հինգ հարյուր ֆրանկով էին ապրում երկու տարիքոտ կանայք ու ծերունին:

Եվ երբ որևէ գյուղական տերտեր էր գալիս Դիյն, պարոն եպիսկոպոսը նրան հյուրասիրելու միջոց էլ էր գտնում՝ շնորհիվ տիկին Մագլուարի խիստ խնայողության և օրիորդ Բատիստինի իմաստուն կառավարության:

Մի անգամ, Դիյն հասնելուց երեք ամիս հետո, եպիսկոպոսն ասաց.

— Այս բոլորով հանդերձ ես խիստ նեղվում եմ:

— Կարծում եմ,— բացականչեց տիկին Մագլուարը,— գերապատիվ հայր, դուք դեռ չեք պահանջել այն գումարը, որ նահանգական իշխանությունը պարտավոր է տալ ձեզ քաղաքում և թեմում կառքով շրջագայելու ծախսերի համար: Առաջվա եպիսկոպոսների համար դա ընդունված էր:

— Իսկապես,— ասաց եպիսկոպոսը,— իրավունք ունեք, տիկին Մագլուար:

Եվ ներկայացրեց իր պահանջը:

Որոշ ժամանակ անց գլխավոր խորհուրդը նկատի առնելով այս պահանջը, նշանակեց նրան տարեկան երեք հազար ֆրանկ՝ հետևյալ մակագրությամբ. «Պարոն եպիսկոպոսին կառքի, փոստի և թեմում շրջագայելու ծախսերի համար»:

Տեղական բուրժուազիան մեծ աղմուկ բարձրացրեց այս առթիվ և կայսրության շրջանի մի սենատոր,— Բրյուների տասնութին համակրող Հինգ հարյուրի խորհրդի նախկին անդամ և Դիյնի մոտ գտնվող մի շքեղ սենատորական կալվածքի տերը,— պաշտամունքների միևիստր պարոն Բիգո դը Պրեամնյին մի զայրացկոտ գաղտնի նամակ գրեց, որից մենք քաղում ենք հետևյալ վավերական տողերը.

«Կառքի ծախսե՞ր, ինչի՞ է պետք կառքը չորս հազարից պակաս բնակիչ ունեցող քաղաքի համար: Շրջագայության ծախսե՞ր. նախ՝ ինչի՞ համար են այդ շրջագայությունները, հետո էլ՝ ինչպե՞ս է կառքն անցնելու այս լեռնոտ երկրում, որտեղ ճանապարհներ չկան և միմիայն ձիով են ճամփորդում: Նույնիսկ Դյուրանսը Շատո Առնուին կապող կամուրջը հազիվ կարող է եզան սայլերի դիմանալ: Քահանաները բոլորն էլ այսպես են՝ անկուշտ ու ժլատ: Մա նոր գալով Բարի առաքյալ ձևացավ, իսկ այժմ ուրիշների նման է անում: Շքեղ կառք և ուղեկառք է ուզում: Նախկին եպիսկոպոսների նման պերճանք է պետք նրան: Օ՛հ, այդ սևագլուխները: Պարոն կոմս, գործերը կլավանան միայն այն ժամանակ, երբ կայսրը մեզ ազատի կղերականներից: Կորչի՛ պապը (գործերը վատանում են Հռոմի հետ): Ինչ վերաբերում է ինձ, ես կողմնակից եմ միայն Կեսարին: Եվ այլն, և այլն»:

Բայց դրա փոխարեն այս հատկացումը խիստ ուրախացրեց տիկին Մագլուարին:

— Լավ,— ասաց նա օրիորդ Բատիստինին,— գերապատիվ հայրն սկսեց ուրիշներից, բայց ստիպված եղավ վերջացնել իրենով: Նա կարգավորել է իր բոլոր գթության գործերը: Այս երեք հազար ֆրանկն էլ մեզ համար: Վերջապե՛ս:

Նույն երեկոյան եպիսկոպոսը գրեց ու իր քրոջը հանձնեց հետևյալ նախահաշիվը.

Կառքի և շրջագայությունների ծախսեր

Հիվանդանոցի հիվանդներին մսաջուր տալու համար	1500 ֆրանկ ,
Էքսի որբախնամ ընկերությանը	250 ,
Դրագինյանի որբախնամ ընկերությանը	250 ,
Ընկեցիկ երեխաների համար	500 ,
Որբերի համար	500 ,

Ընդամենը 3000 ֆրանկ

Այս էր պարոն Միրիելի բյուջեն:

Ինչ վերաբերում է այլ եկամուտներին,— ամուսնական թույլտվություն, կնունք, քարոզ, եկեղեցիներ կամ մատուռներ օծել, պսակադրություն և այլն,— եպիսկոպոսն այդ բոլորը հավաքում էր հարուստներից այնպիսի խստությամբ, ինչպիսի թեթևությամբ տալիս էր աղքատներին:

Շատ ժամանակ չանցած սկսեցին դրամական նվերներ տեղալ: Պարոն Միրիելի դուռը ծեծում էին նրանք, ովքեր չունեն: Առաջինները գալիս էին տալու, մյուսները՝ ողորմություն խնդրելու: Մեկ տարի չանցած եպիսկոպոսը դարձավ գանձապահը բոլոր բարեգործությունների և բոլոր կարիքավորների: Ձգալի գումարներ էին անցնում նրա ձեռքով, բայց ոչ մի բան չկարողացավ փոխել նրա ապրելակերպը կամ ավելացնել նրա անհրաժեշտ ծախսերը:

Ավելին: Քանի որ ներքևում միշտ էլ ավելի թշվառություն կա, քան վերևում՝ եղբայրական սեր, ապա նա բոլորը տալիս էր այսպես ասած նախքան ստանալը: Դա նման էր չոր հողի վրա բաց թողնված ջրի: Թեև միշտ էլ փող էր ստանում, բայց շարունակ գրպանը դատարկ էր: Այդ ժամանակ նա կողոպտում էր ինքն իրեն:

Սովորություն է, որ եպիսկոպոսները դնեն իրենց կոնդակների և շրջաբերականների վրա թե ծննդյան, և թե ձեռնադրության անունները: Երկրի չքավոր մարդիկ մի տեսակ սիրո բնագոյով պարոն Միրիելի բոլոր անուններից ընտրել էին այն, որ մի իմաստ ուներ և այլ կերպ չէին անվանում, եթե ոչ գերապատիվ Բիենվնյու³: Մենք էլ նրանց պես կանենք և հարկ եղած դեպքում այսպես էլ կանվանենք նրան: Բացի դրանից այս անունը դուր էր գալիս և իրեն՝ եպիսկոպոսին:

Մենք չենք հավակնում, որ մեր նկարած այս պատկերը ճիշտ է. մենք սահմանափակվում ենք միայն ասելով, որ նման է:

III

ԲԱՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՏԱԺԱՆԵԼԻ ԹԵՄ

Եպիսկոպոսն իր կառքի ծախսերը ողորմության վերածելուց հետո այնուամենայնիվ պակաս շրջագայություն չէր կատարում: Իսկ Դիյնի թեմը հոգնեցնող էր: Նա քիչ դաշտեր, բայց շատ լեռներ ունի, իսկ ճանապարհ գրեթե չկա. մինչդեռ երեսուներկու երեցություն, քառասունմեկ փոխերեցություն և երկու հարյուր ութսունհինգ մատուռ ունի:

Իսկ այս բոլորին այցելելը հեշտ գործ չէ, սակայն եպիսկոպոսը գլուխ էր հանում: Երբ տեղը հեռու չէր՝ ոտքով էր գնում, երբ դաշտում էր՝ սայլակով էր գնում, իսկ լեռներում՝ ջորիով: Քույրն ու սպասուհին էլ ընկերակցում էին նրան, իսկ երբ ճամփորդությունը խիստ տանջալի էր լինում նրանց համար, մենակ էր գնում:

Մի օր նա էշով գնաց Մենենեզ, որ մի հին եպիսկոպոսանիստ քաղաք է: Նրա քսակը, որ այդ միջոցին չափազանց նիհար էր, երթևեկության այլ միջոց ընտրելու հնարավորություն չէր թողել: Քաղաքապետը եկավ ընդունելու նրան եպիսկոպոսարանի դռանը և խայտառակվածի հայացքով նայեց, թե ինչպես է իջնում նա էշից: Մի քանի քաղթենիներ էլ ծիծաղում էին նրա շուրջը:— «Պարոն

³ Բիենվնյու բառը ֆրանսերեն նշանակում է «բարի գալուստ», «բարի եկար»: Ծ. թ.:

քաղաքապետ և պարոն բուրժուաներ,— ասաց նրանց եպիսկոպոսը,— տեսնում եմ, թե ինչն է ամաչեցնում ձեզ. դուք կարծում եք, որ հպարտությունից մղված հեծել եմ մի այնպիսի անասուն, որ երբևէ Հիսուս Քրիստոսին է կրել: Վստահեցնում եմ ձեզ, որ կարիքից և ոչ թե սնափառությունից դրդված եմ այդպես արել»:

Շրջագայությունների միջոցին նա ներող էր և հեզահամբույր և ավելի շատ գրուցում էր, քան քարոզում: Նա երբեք իր դատողություններն ու օրինակները հեռունեքում չէր փնտրում: Որևէ շրջանի բնակիչների համար նա բերում էր հարևան շրջանի օրինակը: Այն գավառակներում, որի բնակիչները քարսիրտ էին կարիքավորների նկատմամբ, նա ասում էր. «Նայեցեք Բրիանսոնի բնակիչներին: Նրանք աղքատներին, այրիներին ու որբերին իրավունք են տվել հնձել իրենց խոտհարքերը երեք օր մյուսներից շուտ: Նրանք վերաշինում են նրանց քանդված տները: Դրա համար էլ դա աստծո օրհնած երկիր է: Մի ողջ հարյուրամյակի ընթացքում ոչ մի մարդասպան չի եղել այդտեղ»:

Այն գյուղերում, որտեղ փող չահելու և հունձքը հավաքելու պայմանները դաժան են, նա ասում էր. «Տեսեք թե ինչպես են անում Էմբրյոնի բնակիչները: Երբ բերքահավաքի ժամանակ որևէ ընտանիքի հոր որդիները բանակում են, իսկ աղջիկները ծառայում են քաղաքում, և ինքն էլ հիվանդ է ու չի կարող աշխատել, քահանան քարոզի ժամանակ հանձնարարում է նրան գյուղական համայնքին: Եվ կիրակի օրը, պատարագից հետո, գյուղի բոլոր բնակիչները՝ մարդ, կին, երեխա գնում են աղքատ մարդու դաշտը հնձելու և հատիկն ու հարդը բերում լցնում են մարագը: Փողի և ժառանգության հարցերով զժտված ընտանիքներին ասում էր. «Նայեցեք Դվոլնիի լեռնցիներին, դա այնպիսի վայրենի բնություն ունեցող մի երկիր է, որ հիսուն տարին հազիվ մեկ անգամ սոխակի երգ է լսվում այդտեղ: Բայց երբ ընտանիքի հայրը մեռնում է՝ տղաները հեռանում են տնից ու գնում բախտ փնտրելու և ունեցվածքը թողնում աղջիկներին, որպեսզի սրանք կարողանան ամուսին գտնել»: Այն շրջանների բնակիչներին, որոնք դատեր վարելու սեր ունեն և տնտեսապես քայքայվում են դրոշմաթղթերից՝ նա ասում էր. «Նայեցեք Քեյրասի հովտի բարի գյուղացիներին: Նրանք երեք հազար հոգի են, բայց, աստված իմ, կարծես մի փոքրիկ հանրապետություն լինի դա: Նրանց անձանոթ են և դատավորը, և կատարածուն: Ամեն բան գյուղապետն է անում: Նա է բաժանում հարկը, յուրաքանչյուրին խղճով հարկադրում, կոիվները ձրի դատում, առանց վարձատրության բաժանում հայրերի ժառանգությունը, և նրան հնազանդում են, որովհետև այդ պարզ մարդկանց մեջ նա էլ արդար մարդ է: Այն գյուղերում, որտեղ ուսուցիչներ չէր գտնում՝ դարձյալ Քեյրասի օրինակն էր բերում: «Գիտե՞ք, թե ինչպես են անում նրանք: Որովհետև տասներկու կամ տասնհինգ ծխից բաղկացած փոքր գյուղերը չեն կարող ապրեցնել մի ուսուցիչ՝ ապա նրանք էլ ողջ հովտի հաշվին են ուսուցիչներ պահում, որոնք շրջում են գյուղերը, ութ օր այստեղ են մնում, տասն օր այնտեղ, և ուսուցանում են: Այդ ուսուցիչները գնում են տոնավաճառները, որտեղ էլ ես տեսել եմ նրանց: Նրանց ճանաչում են գլխարկի ժապավենի մեջ խրած գրչից: Նրանք, որոնք միայն կարդալ են սովորեցնում՝ կրում են մեկ գրիչ, ովքեր կարդալ ու հաշվել են սովորեցնում՝ երկու գրիչ, իսկ կարդալ, հաշվել ու լատիներեն սովորեցնողները՝ երեք գրիչ: Այս վերջիններն արդեն մեծ գիտնական են համարվում: Բայց ի՞նչ ամոթ բան է տգետ լինելը: Դուք էլ քեյրասցիների նման արեք»:

Նա խոսում էր այսպես ծանրախոհ և հայրական շեշտով: Երբ օրինակները պակասում էին, հնարում էր առակներ ու դիմում էր ճիշտ նպատակին, քիչ նախադասություններով և բազում պատկերներով, մի բան, որ Հիսուսի ճարտասանությունն էր՝ համոզված ու համոզիչ:

IV

ԳՈՐԾԵՐԸ ՆՄԱՆ ԵՆ ԽՈՍՔԵՐԻՆ

Նրա խոսակցությունը քաղցր էր և ուրախ: Նա իրեն հասկանալի էր դարձնում երկու պառավ կանանց, որոնք իրենց կյանքը անց էին կացնում նրա մոտ: Երբ նա ծիծաղում էր, ծիծաղում էր դպրոցականի նման:

Տիկին Մագլուարը սիրով նրան Ձերդ մեծություն էր անվանում: Մի անգամ նա վեր կացավ բազկաթոռից ու գնաց գրապահարանում մի գիրք փնտրելու: Այս գիրքը վերին դարակներից մեկի վրա էր և որովհետև ինքը կարճահասակ էր՝ չկարողացավ հասնել: «Տիկին Մագլուար,— ասաց նա,— մի աթոռ բերեք: Իմ մեծությունը չի հասնում այս դարակին»:

Նրա հեռու ազգականներից մեկը՝ կոմսուհի դը Լոն, առիթը գրեթեչէր փախցնում նրա ներկայությամբ թվելու այն, ինչ ինքը անվանում էր իր երեք որդիների «հույսը»: Կոմսուհին բազմաթիվ խիստ ծեր ու մեռնելու մոտ ազգականներ ուներ, որոնց ժառանգորդները բնականաբար իր որդիներն էին լինելու: Դրանցից ամենափոքրը մի տատիկից ստանալու էր հարյուր հազար ֆրանկի եկամուտ. երկրորդ որդին ժառանգելու էր իր մորեղբոր դուքս տիտղոսը, իսկ անդրանիկը պիտի հաջորդեր իր պապի պերության պաշտոնին: Եպիսկոպոսը սովորաբար լռությամբ էր լսում մայրական այս անմեղ ու ներելի մեծախոսությունը: Մի անգամ սակայն նա կարծես սովորականից ավելի մտախոհ էր, մինչդեռ կոմսուհին վերսկսում էր այս բոլոր ժառանգությունների ու «հույսերի» մանրամասնությունները: Եվ անհամբեր ընդհատեց ասելով. «Աստված իմ, քեռորդի, այդ ինչի՞ մասին եք այդպես մտածում»: «Մտածում եմ,— պատասխանեց եպիսկոպոսը,— մի բացառիկ բանի մասին, որը կարծես սուրբ Օգոստինոսի մոտ եմ կարդացել. «Դրեք ձեր հույսը նրա վրա, որին ոչ ոք չի ժառանգում»:

Մի ուրիշ անգամ էլ մի նամակ ստացավ տեղական ազնվականներից մեկի թաղմանը մասնակցելու համար: Այդ նամակի մեջ մի երկար էջի վրա սփռված էին, բացի հանգուցյալի արժանիքներից, նաև իր բոլոր ազգականների ֆեոդալական և ազնվական տիտղոսները: «Ինչպիսի լավ աստատ են հազցնում մահվանը,— բացականչեց նա:— Տիտղոսների ինչպիսի հիանալի բեռ զվարթությամբ կրել են տալիս նրան, և մարդիկ ինչքան հնարամիտ պետք է լինեն, որ գերեզմանն էլ օգտագործեն սնափառության համար»:

Պետք եղած դեպքում նա մեղմ ծաղրել գիտեր և նրա ծաղրը միշտ էլ լուրջ իմաստ ուներ: Մի անգամ, մեծ պահքին, մի երիտասարդ տեղապահ եկավ Դիյն և մայր եկեղեցում բավական մեծ ճարտասանությամբ քարոզ կարդաց: Քարոզի նյութը գթասիրությունն էր: Նա կոչ արեց հարուստներին՝ բաժին հանել աղքատներին, խուսափելու համար դժոխքից, որը ինչքան կարող էր սարսափելի գույներով նկարագրեց, և արժանանալ արքայության, որ պատկերեց ցանկալի ու հրապուրիչ: Բազմության մեջ կար նաև գործից հեռացած մի հարուստ, մի քիչ էլ վաշխառու պարոն Ժեբորան անունով, որը երկու միլիոն ֆրանկ էր շահել՝ հաստ չուխա և ուրիշ կտորներ արտադրելով: Այդ քարոզից հետո նկատեցին, որ նա ամեն կիրակի եկեղեցու դռան առջև շարված մուրացիկ կանանց մեկ սու էր տալիս: Մուրացիկները վեց հոգի էին և հինգ սանտիմը պետք է բաժանեին իրար մեջ⁴: Մի անգամ եպիսկոպոսը տեսավ նրան ողորմություն տալիս և ծիծաղելով ասաց իր քրոջը. «Տես, թե ինչպես է պարոն Ժեբորանը մեկ սուով արքայություն գնում»:

⁴ Մեկ սուն կամ հինգ սանտիմը խիստ փոքր դրամ է և գրեթե անբաժանելի: Շ. թ.:

Երբ բանը գալիս էր ողորմությանը, նա չէր վիատվում նույնիսկ երբ մերժվում էր. նման դեպքերում նա այնպիսի բառեր էր գտնում, որ մարդկանց ստիպում էր մտածել: Մի անգամ նա հոգուտ աղքատների հանգանակություն էր անում քաղաքի սալոններից մեկում: Այստեղ էր նաև ծեր, հարուստ ու ժլատ մարքիզ դը Շանտերսին, որ միաժամանակ և ծայրահեղ արքայական, և ծայրահեղ վոլտերյան էր: Այս այլազանությունը գոյություն է ունեցել: Եպիսկոպոսը նրան հասնելիս թեթև խփում է թևին. «Պարոն մարքիզ, պետք է մի բան տաք ինձ»: Մարքիզը ետ է դառնում ու չոր պատասխանում. «Գերապատիվ հայր, ես իմ աղքատներն ունեմ»: «Տվեք նրանց ինձ»,— ասում է եպիսկոպոսը:

Մի օր մայր եկեղեցում հետևյալ քարոզը կարդաց նա.

«Իմ սիրելի եղբայրներ ու ազնիվ բարեկամներ, Ֆրանսիայում մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար գյուղացիական տներ կան, որ երեք բացվածք ունեն. մեկ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար, որ երկու բացվածք ունեն՝ դուռն ու լուսամուտը, և վերջապես երեք հարյուր քառասունվեց հազար խրճիթ էլ, որ միայն մեկ բացվածք ունեն՝ դուռը: Եվ սա այն բանի պատճառով, որ կոչվում է դռան ու լուսամուտի հարկ: Բնակեցրեք այդտեղ աղքատ ընտանիքներ, փոքր երեխաներ և կտեսնեք տենդ ու այլ հիվանդություններ: Ավա՛ղ, աստված օղ է տալիս մարդկանց, իսկ օրենքն այն ծախում է: Ես չեմ մեղադրում օրենքը, բայց օրհնում եմ աստծուն: Իզերում, Վարում, Վերին ու Ներքին Ալպյան նահանգներում գյուղացիք նույնիսկ ձեռնասայլ չունեն և գումադը փոխադրում են իրենց կոնակով: Նրանք մոմ չունեն և վառում են խեժոտ ձողեր ու բնեկնախեժի մեջ թխմված պարանի կտորներ: Այդպես է Դոֆինեի ողջ բարձրավանդակում: Հացը նրանք թխում են վեց ամսվա համար և թխում են տավարի չորացած թրիքով: Ձմեռը նրանք այդ հացը մանրում են կացնով, և քսանչորս ժամ ջրի մեջ թրջում, որ կարողանան ուտել: Եղբայրներ ր, գութ ունեցեք, տեսե՛ք, թե ինչպես են տանջվում ձեր շուրջը»:

Ծնված լինելով Պրովանսում, նա հեշտությամբ ընտելացել էր հարավային բոլոր բարբառներին⁵: Սա շատ էր դուր գալիս ժողովրդին և շատ էր նպաստել ամեն տեսակ մարդկանց մոտենալու: Խրճիթներում կամ լեռներում լինելիս նա իրեն կարծես զգում էր իր տանը: Նա կարող էր ամենամեծ բաների մասին խոսել բոլոր բարբառներով: Խոսելով այդ բարբառներով, նա մտնում էր բոլոր հոգիների մեջ:

Բացի դրանից, նա միշտ նույնն էր թե բարձրաշխարհիկ շրջանում, թե հասարակ ժողովրդի մեջ:

Ոչ մի բան շտապով և առանց հանգամանքները նկատի առնելու չէր դատապարտում: Նա ասում էր. «Հապա տեսնենք ճանապարհը, որ բերել է հանցանքի»:

Լինելով մի նախկին մեղավոր, ինչպես ինքն էր ժպտալով որակում իրեն, նա զերծ էր խստակրոնության ծայրահեղություններից, բարձրաձայն ու առանց մոլեգին առաքինիների նման խոժոռվելու, դավանում էր մի վարդապետություն, որ մոտավորապես այսպես կարելի է ամփոփել.

«Մարդն իր վրա մարմին ունի, որ միաժամանակ և նրա բեռն է, և նրա փորձությունը: Նա կրում է այդ բեռը ու ենթարկվում նրան:

«Նա պետք է հսկի նրան, զսպի, ճնշի և հնազանդի միայն ծայրահեղ դեպքում: Այս հնազանդության մեջ էլ դեռ կարող է սխալ գործվել, բայց այս ձևով գործված սխալը ներելի է: Դա անկում է, բայց անկում ծնկների վրա, որ կարող է վերջանալ աղոթքով:

⁵ Այստեղ բաց ենք թողնում մի քանի բարբառային, հայերեն անփոխադրելի նմուշներ: *Օ. թ.*:

«Սուրբ լինելը բացառիկ բան է, իսկ արդար լինելը՝ կարգ է: Մոլորվեք, թերացեք, մեղանչեք, բայց արդար եղեք»:

«Հնարավոր մեղքի նվազագույնը մարդկային օրենքն է: Բնավ չմեղանչելը հրեշտակի երազն է: Այն բոլորը, ինչ երկրային է՝ ենթակա է մեղքին: Մեղքը մի տեսակ ձգողականություն ունի»:

Երբ նա տեսնում էր, որ բոլորն էլ գոռում են ու շատ շուտ վիրավորվում, ժպտալով ասում էր. «Օ, օ, ակներև է, որ սա մի մեծ ոճիր է և ամենքն էլ գործում են այդ: Միայն սարսափահար կեղծավորներն են շտապում բողոքել ու թաքնվել»:

Նա ներողամիտ էր կանանց ու երեխաների նկատմամբ, որոնց վրա էլ ընկնում է մարդկային հասարակության ծանրությունը: «Կանանց, երեխաների, ծառաների, թույլերի, չքավորների ու տգետների հանցանքները ամուսինների, հայրերի, տերերի, ուժեղների, հարուստների գիտնականների հանցանքն է»,— ասում էր նա:

— Նրանց, ովքեր տգետ են, սովորեցրեք ինչքան կարող եք ավելի: Հասարակությունը հանցավոր է ձրի կրթություն չտալու համար. նա պատասխանատու է իր առաջացրած խավարի համար: Այս հոգին լի է խավարով, մեղքն էլ այդտեղ է կատարվում: Հանցավորը նա չէ, ով մեղք է գործում, այլ նա, ով խավար է առաջացնում,— ասում էր նա:

Ինչպես տեսնում եք, նա յուրահատուկ ու տարօրինակ ձևով էր երևույթները դատում: Ես կասկածում եմ, որ նա այդ բանը սովորել էր ավետարանից:

Մի անգամ քաղաքի սալոններից մեկում նա լսեց մի դատի մասին, որի նախաքննությունն էին անում և շուտով լսելու էին: Մի թշվառ մարդ՝ մի կնոջ ու նրանից ունեցած երեխայի նկատմամբ տաժած սիրուց և տնտեսապես խիստ նեղվելով, դրամ էր կեղծել: Այդ ժամանակներում դրամանենգներին մահապատժի էին ենթարկում: Կինը ձերբակալվել էր այն պահին, երբ այդ մարդու շինած առաջին կեղծ դրամն ուզեցել էր շրջանառության մեջ դնել: Նրան բռնել էին և միայն նրա դեմ փաստեր ունեին: Միայն նա կարող էր ամբաստանել իր սիրեկանին և կործանել նրան՝ խոստովանելով իսկությունը: Եվ նա ուրացավ: Պնդեցին: Նա համառեց ուրանալ: Սրա վրա արքայական դատախազը մի միտք հղացավ: Նա ենթադրել տվեց, թե կնոջ սիրեկանն անհավատարիմ է և ճարպկորեն սարքված նամակների պատառիկներով կարողացավ համոզել դժբախտ կնոջը, որ կա ախտյան կին և, որ այդ մարդը խաբում էր նրան: Այդ ժամանակ խանդից հուսահատված կինը մատնել էր իր սիրեկանին, ամեն ինչ խոստովանել էր ու ապացուցել: Մարդը կորած էր: Նրան շուտով դատելու էին Էքսում իր մեղսակցուհու հետ: Ամենուրեք պատմում էին այս դեպքը և ամենքն էլ ապշում էին դատախազի հնարամտության վրա: Խանդը գործի դնելով՝ նա իսկությունը երևան էր բերել զայրույթի միջոցով և երևան էր հանել արդարությունը՝ վրեժի համար: Եպիսկոպոսը լուռ լսում էր այս պատմությունը: Երբ վերջացրին՝ նա հարցրեց.

— Որտե՞ղ են դատելու այդ մարդուն ու կնոջը:

— Երդվյալների աստյանում:

— Իսկ որտե՞ղ են դատելու պարոն արքայական դատախազին,— վրա բերեց նա:

Դիյնում մի ողբերգական դեպք պատահեց: Մի մարդ սպանության համար մահվան դատապարտվեց: Դա մի դժբախտ մարդ էր՝ ոչ բոլորովին գրագետ և ոչ էլ բոլորովին անգետ, տոնավաճառներում խեղկատակ էր եղել ու հասարակաց գրագիր: Դատավարությունը խիստ զբաղեցրեց քաղաքը: Մահապատժի համար նշանակված օրվա վաղ առավոտյան բանտի

խոստովանահայրը հիվանդացավ: Դատապարտյալին վերջին բռնությունն ընկերակցելու համար մի քահանա էր պետք: Գնացին ավագերեցին կանչելու: Սա հրաժարվեց, ասելով, թե դա իմ գործը չէ, ես կոռվոր չեմ, ես անելիք չունեմ այդ խեղկատակի հետ. ես էլ հիվանդ եմ, բացի դրանից դա իմ տեղը չէ: Այս պատասխանը հաղորդեցին եպիսկոպոսին. «Պարոն ավագերեցն իրավունք ունի, դա նրա տեղը չէ, իմն է»:

Եվ անմիջապես գնաց բանտ, իջավ «խեղկատակի» խցիկը, կանչեց նրան իր անունով, բռնեց նրա ձեռքը ու սկսեց խոսել հետը: Ողջ օրն անցկացրեց նրա մոտ, մոռանալով սնունդն ու քունը՝ աղոթելով աստծուն դատապարտյալի հոգու համար և խնդրելով դատապարտյալին աղոթել՝ իր սեփական հոգու համար: Նա նրան ամենապարզ ու լավագույն ճշմարտություններն ասաց: Եղավ նրա հայրը, եղբայրը և բարեկամը, իսկ եպիսկոպոս՝ սուկ օրհնելու համար: Սովորեցրեց ամեն բան՝ գոտեպնդելով ու մխիթարելով նրան: Այդ մարդը հուսահատ մեռնելու էր և մահը խորխորատ էր նրա համար: Ցնցվելով կանգնած այդ սգալի շեմին, նա սարսափած ետ էր դառնում: Նա այնքան անզետ չէր, որ բոլորովին անտարբեր լիներ: Նրա դատապարտությունը, որ մի խորցնցում էր եղել, մի տեսակ խզել էր նրա շուրջն եղած այն միջնորմը, որ մեզ բաժանում է իրերի խորհրդավորությունից և, որ մենք անվանում ենք կյանք: Նա անդադար նայում էր այս աշխարհից դուրս այդ ճակատագրական բացվածքներից և միայն խավար էր տեսնում: Եպիսկոպոսը սովորեցրեց նրան լույս տեսնել:

Առավոտյան, երբ եկան տանելու դատապարտյալին, եպիսկոպոսն այդտեղ էր: Նա հետևեց նրան և երևաց ամբոխին մանուշակագույն փիլոնով և եպիսկոպոսական խաչը վզին՝ պարանով կապկպված այդ թշվառականի կողքին:

Նրա հետ միասին բարձրացավ դատապարտյալների սայլակը և նրա հետ միասին՝ կառափնարան: Դատապարտյալը, որ դեռ երեկ այնքան մռայլ էր ու ճնշված, այժմ զվարթ էր: Նա զգում էր, որ իր հոգին հաշտված է և հույս ուներ աստծուն: Եպիսկոպոսը գրկեց նրան և այն պահին, երբ սուրն իջնելու էր, ասաց. «Մարդու սպանածին աստված հարություն է տալիս: Նա, որին եղբայրները վռնդում են՝ գտնում է հորը: Աղոթեցեք, հավատացեք, մտեք կյանք. հայրն այնտեղ է»: Երբ նա կառափնարանից ցած իջավ, նրա հայացքում կար մի այնպիսի բան, որ ստիպեց ձգվել ժողովրդին: Դժվար էր ասել, թե ինչն էր ավելի սքանչելի՝ նրա դժգունությունը, թե՞ խաղաղությունը: Վերադառնալով այն համեստ բնակարանը, որ նա անվանում էր իր պալատը, ասաց քրոջը. «Ես հենց նոր եպիսկոպոսականորեն ժամերգություն կատարեցի»:

Քանի որ ամենավսեմ բաները հաճախ ամենից վատ են հասկացվում, ապա քաղաքում գտնվեցին մարդիկ, որ մեկնաբանելով եպիսկոպոսի այս վարքը՝ ասում էին. «Ձևացնում է»: Բայց այս խոսքը միայն սալոններում լսվեց: Ժողովուրդը, որ սուրբ գործերում չարիք չի փնտրում, հուզվեց ու հիացավ:

Ինչ վերաբերում է եպիսկոպոսին, ապա գիլիոտին տեսնելը նրա համար մի հարված եղավ և երկար ժամանակ անց միայն նա իր անդորրը գտավ:

Եվ իսկապես, կառափնարանը, իր տեղում ցցված, կարծես զգայախաբություն առաջացնող հատկություն ունի: Մարդը կարող է որոշ անտարբերություն ունենալ մահապատժի նկատմամբ, բնավ էլ կարծիք չհայտնել, այդ կամ ոչ չասել՝ քանի դեռ իր աչքերով գիլիոտին չի տեսել. բայց երբ տեսնում էս, ուժեղ ցնցում էս ունենում, պետք է վճռկան լինես և կողմնորոշվես՝ թե՛ր կամ դեմ: Ոմանք հիանում են նրանով, ինչպես դը Մեստրը, ոմանք էլ ատում, ինչպես Բեկկոփան: Գիլիոտինը օրենքի կոնկրետացումն է, վրեժխնդրության նման մի բան: Այն չեզոք չէ, և ձեզ թույլ չի տալիս չեզոք մնալ: Ով տեսնում է այն, ցնցվում է ամենախորհրդավոր ցնցումներով: Սոցիալական

բոլոր հարցերն իրենց հարցական նշանն են դնում այդ մսի-դանակի շուրջը: Կառափնարանը տեսիլք է: Կառափնարանը դազգահ չէ, կառափնարանը մեքենա չէ, կառափնարանը փայտից, երկաթից ու պարաններից շինված անշարժ մեխանիկա չէ: Թվում է, որ մի տեսակ էակ է և չգիտես ինչպիսի մոայլ նախաձեռնություն ունի: Կարծես այդ դազգահը տեսնում է, այդ մեքենան լսում է, այդ մեխանիկան հասկանում է, թե ինչ են ուզում այդ փայտը, այդ երկաթն ու պարանները: Այն զարհուրելի մտածմունքները, որոնց մեջ ընկնում է հոգին գիլիոտինին ի տես՝ նա երևում է ահավոր և իր արարքին խառն: Կառափնարանը դահճի մեղսակիցն է: Նա լափում է, միս է ուտում և արյուն է խմում: Կառափնարանը դատավորի ու հյուսնի ձեռքով շինված մի ճիվաղ է, մի ուրվական, որ կարծես ապրում է իր գործած ողջ մահերից կազմված մի տեսակ զարհուրելի կյանքով:

Դրա համար էլ նրա ազդեցությունը խոր ու սարսափելի է: Մահապատժի հաջորդ օրը և դրանից դեռ շատ օրեր անց եպիսկոպոսը ճնշված էր: Դժնդակ բոլորի գրեթե բոլորն հանդարտությունն անհետացել էր և սոցիալական արդարադատության ուրվականը հալածում էր նրան: Նա, որ սովորաբար իր բոլոր գործերից վերադառնում էր պայծառադեմ, թվում էր, այս անգամ կշտամբում է ինքն իրեն: Երբեմն նա խոսում էր ինքն իր հետ և սգալի մենախոսություններ էր մոթմոթում կիսաձայն: Ահա դրանցից մեկը, որ նրա քույրը մի երեկո լսեց ու միտքը պահեց. «Ես չէի կարծում, որ դա այդպես դժնդակ է: Միայն է ընկղմվել աստվածային օրենքի մեջ այն աստիճան, որ այլևս չտեսնես մարդկային օրենքը: Մահը միայն աստծուն է պատկանում: Ի՞նչ իրավունքով մարդիկ ձեռք են գարկում այս անձանոթ բանին»:

Ժամանակի հետ այս տպավորություններն աղոտացան և հավանաբար ջնջվեցին: Սակայն մարդիկ նկատեցին, որ դրանից հետո եպիսկոպոսը խուսափում էր մահապատիժների հրապարակով անցնել:

Ամեն բոլոր կարելի էր պարոն Միրիելին կանչել հիվանդների ու մահամերձների սնարի մոտ: Նա չէր մոռանում, որ դա իր մեծագույն պարտականությունն է ու մեծագույն աշխատանքը: Այրի ու որբ ընտանիքները կարիք չունեին նրան խնդրելու, նա ինքն էր գալիս: Նա կարող էր երկար նստել ու լուռ մնալ իր սիրեցյալ կնոջը կորցրած մարդու կամ որդուն կորցրած մոր մոտ: Ինչպես նա գիտեր, թե երբ պետք է լուռ մնալ, այնպես էլ գիտեր, թե երբ պետք է խոսել: Ո՛վ սքանչելի մխիթարիչ. նա չէր փորձում վիշտը մոռացմամբ ջնջել, այլ հուսադրությամբ մեծացնում էր այն ու արժանավորում: «Զգուշացեք այն ձևից, որով շրջվում եք մեռյալից: Մի մտածեք այն մասին, որ նեխում է: Նայեք շեշտակի: Դուք կնկատեք ձեր սիրեցյալ մեռյալի կենդանի լույսը երկնքի խորքում», — ասում էր նա: Նա գիտեր, որ հավատքն առողջարար է: Նա փորձում էր մխիթարել ու հանդարտեցնել հուսահատ մարդուն՝ մատնացույց անելով համակերպված մարդուն. փորձում էր գերեզմանին նայող վիշտը վերածել աստղին նայող վշտի:

V

ԳԵՐԱՊՍԻՎ ԲԻԵՆՎՆՅՈՒՆ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԷՐ

ՀԱԳՆՈՒՄ ԻՐ ՍՔԵՄՆԵՐԸ

Պարոն Միրիելի ներքին կյանքը լի էր այն մտածմունքներով, ինչով լի էր նրա հասարակական կյանքը: Այն կամավոր աղքատությունը, որի մեջ ապրում էր նա, մի լուրջ ու հրապուրիչ պատկեր էր ներկայացնում նրանց համար, ովքեր կարող էին այդ տեսնել:

Բոլոր ծերունիների և մտածողների մեծ մասի նման նա քիչ էր քնում: Բայց այդ կարճատև քունը խոր էր: Առավոտները նա մի ժամ ամփոփվում էր ինքն իր մեջ, ապա պատարագն էր մատուցում մայր եկեղեցում կամ իր տանը: Պատարագն ավարտելուց հետո նախաճաշում էր հաճախե հացը թաթախելով իր կովերի կաթի մեջ, ապա սկսում էր աշխատել:

Եպիսկոպոսը խիստ զբաղված մարդ է: Նա պետք է ամեն օր ընդունի եպիսկոպոսարանի քարտուղարին (որն առհասարակ կանոնիկոս է լինում), և գրեթե ամեն օր՝ ավագերեցներին: Նա պետք է հսկի միաբանություններին, մենաշնորհներ տա, եկեղեցական մի ամբողջ գրադարան՝ աղոթագրքեր, քրիստոնեականներ, ժամագրքեր քննի, կոնդակներ գրի, քարոզների թույլտվություն տա, ավագերեցին ու գավառապետին հաշտեցնի, կղերական ու վարչական թղթակցությունը վարի, մի կողմից պետությունը, մյուս կողմից սրբազան աթոռը, վերջապես հազար ու մի գործ:

Այս հազար ու մի գործերից, ծիսակատարությունից ու ժամասացությունից մնացած ժամանակն ամենից առաջ նա հատկացնում էր կարիքավորներին, հիվանդներին ու վշտահարներին:

Կարիքավորներից, հիվանդներից ու վշտահարներից ավելացած ժամանակը տալիս էր աշխատանքին: Երբեմն փորում էր այգին, երբեմն էլ կարդում ու գրում էր: Աշխատանքի այս երկու տեսակներին նա միայն մեկ անուն էր տալիս. «Պարտիզպանություն անել»: «Միտքն էլ մի պարտեզ է»,— ասում էր նա:

Կեսօրվա մոտ, երբ լավ եղանակ էր լինում, նա դուրս էր գնում ու ոտքով զբոսնում դաշտում կամ քաղաքում, հաճախ մտնում խարխուլ տնակները: Նրան կարելի էր տեսնել մենակ քայլելիս, բոլորովին տարված իր մտքերով, հայացքը խոնարհած, հենված իր երկար գավազանին, հագած իր մանուշակագույն՝ վատիկով լցված խիստ տաքուկ վերնագգեստը, մանուշակագույն գուլպաներով ու կոպիտ կոշիկներով և տափակ գլխարկով, որի երեք անկյուններին ամրացված էին երեք ոսկեհուռ ծոպեր:

Ամենուրեք, որտեղ նա երևար, վերածվում էր տոնի: Կարծես թենրա անցնելը մի տեսակ ջերմացնող ու լուսավոր բան ուներ: Երեխաներն ու ծերունիները թե եպիսկոպոսի, և թե արևի համար հավաքվում էին դռան շեմքին: Նա օրհնում էր, և նրան էին օրհնում: Նրա տունն էին ցույց տալիս այն մարդուն, ով որևէ բանի կարիք ուներ:

Նա կանգ էր առնում այստեղ ու այնտեղ, խոսում էր փոքր տղաների ու աղջիկների հետ և ժպտում էր մայրերին: Քանի փող ուներ՝ այցելում էր աղքատներին, իսկ երբ էլ փող չէր մնում՝ այցելում էր հարուստներին:

Քանի որ նա շատ երկար ժամանակ էր հագնում իր սքեմը և չէր ուզում, որ նկատեն այդ՝ ապա քաղաք դուրս գալիս անպատճառ հագնում էր իր մանուշակագույն վերնագգեստը: Մա մի քիչ ճնշում էր նրան ամռանը: Զբոսանքից վերադառնալով՝ ճաշում էր: Ճաշը նման էր նախաճաշին:

Երեկոյան ժամը ութն անց կեսին ընթրում էր իր քրոջ հետ, իսկ տիկին Մագլուարը, կանգնած նրանց ետև, սպասարկում էր: Ոչ մի բան այնքան պարզ չէր, ինչքան այդ ընթրիքը: Բայց եթե նրա ավագերեցներից մեկնումեկը մնում էր նրա մոտ ընթրիքի, տիկին Մագլուարն օգտվում էր այդ առիթից ու մատուցում էր որևէ ընտիր ձուկ կամ լեռնային համեղ թռչուն: Յուրաքանչյուր ավագերեցի այցելություն լավ ընթրիքի պատրվակ էր հանդիսանում, և եպիսկոպոսը չէր առարկում: Դրանից դուրս նրա սովորական ընթրիքը կազմված էր լինում ջրով խաշված

բանջարեղենից ու ձեթով ապուրից, այնպես որ քաղաքում ասում էին.— «Երբ եպիսկոպոսը ավագերեցի սեղան չի ունենում, տրապյանի՞⁶ սեղան է սարքում»:

Ընթրիքից հետո մի կես ժամ գրույց էր անում օրիորդ Բատիստինի և տիկին Մագլուարի հետ, ապա քաշվում էր իր սենյակն ու սկսում էր գրել մերթ անջատ թղթերի, մերթ էլ մեծածավալ գրքերի լուսանցքների վրա: Նա գրասեր էր, մի քիչ էլ գիտնական և թողել է մի դիսերտացիա Ծննդոց գրքի՝ «Ի սկզբանե հոգին աստուծո շրջեր ի վերա Զուրց» հատվածի մասին, բաղդատելով այն երեք տարբեր տեքստերի հետ,— արաբական հատվածի հետ, որն ասում է՝ Աստծո քամիները փչում էին. Ֆլավիոս Յոսեֆի հետ, որն ասում է՝ Վերսից մի քամի էր խուժում երկրի վրա և վերջապես Օնկելոսի քաղդեական մեկնության հետ, որն ասում է՝ Աստծուց եկող մի քամի փչում էր ջրերի մակերեսի վրա: Մի այլ դիսերտացիայում նա քննում է Պտղեմայիսի եպիսկոպոս Հյուգոյի, սույն գիրքը գրողի պապի հորեղբոր աստվածաբանական գործերը և հաստատում է, որ այս եպիսկոպոսին պետք է վերագրել տասնութերորդ դարում Բարլեկյուր կեղծանունով հրատարակված տարբեր փոքրածավալ գործերը:

Երբեմն, ընթերցանության միջոցին, ինչպիսի գիրք էլ որ ունենար ձեռքին՝ հանկարծ ընկնում էր խոր խոկման մեջ, որից դուրս էր գալիս սոսկ նրա համար, որ մի քանի տող գրի հենց այդ գրքի լուսանցքում: Այս տողերը երբեմն ոչ մի առնչություն չունեին գրքի բովանդակության հետ: Մեր առջև է մի նշում, որ նա արել է «Լորդ Ժերմենի թղթակցությունները Կլինտոն, Կորնվալիս գեներալների և Ամերիկայի կայանի ծովակալների հետ: Վերսալում ծախվում է գրավաճառ Պուանսոյի մոտ, Փարիզում՝ գրավաճառ Պիսոյի մոտ, Օգյուստենների քարափ» վերնագիրը կրող մեծածավալ գրքի լուսանցքներում:

Ահա այդ դիտողությունը.

«Ով դուք, որ եք

Ըստ Սողոմոնի գրքի՝ ամենակարող, ըստ Մակաբայեցիների գրքի՝ արարիչ, ըստ Թուղթ առ եփեսացիսի՝ ազատություն, ըստ Բարուխի՝ անհուն, ըստ Մաղմուսի՝ իմաստություն և ճշմարտություն, ըստ Հովհաննու՝ լույս, ըստ Թագավորաց գրքի՝ նախախնամություն, ըստ Ղևտականի՝ սրբություն, ըստ Եզրասի՝ արդարություն, արարչությունը կոչում է ձեզ աստված, մարդը կոչում է հայր, բայց Սողոմոնը ձեզ անվանում է գթասիրություն, և սա ձեր բոլոր անուններից ամենագեղեցիկն է»:

Երեկոյան ժամը իննի մոտ կանայք հեռանում էին ու բարձրանում առաջին հարկի իրենց սենյակները, իսկ նրան մինչև առավոտ թողնում ներքնահարկում:

Այստեղ անհրաժեշտ է տալ Դիյնի գերապատիվ եպիսկոպոսի բնակարանի ճիշտ նկարագրությունը:

⁶ Տրապի միաբանության անդամները կոչվում են տրապյան կամ տրապիստ և վարում են խիստ սակավակեր կյանք:

Ո՞ՒՄ ԷՐ ՊԱՀՊԱՆԵԼ ՏԱԼԻՍ ԻՐ ՏՈՒՆԸ

Նրա ապրած տունն, ինչպես ասացինք, բաղկացած էր ներքնահարկից և նրա վրա եղած միակ հարկից՝ երեք սենյակ ներքևում, երեք էլ վերևում, իսկ ամենավերևը՝ ձեղնահարկն էր: Տան ետև մի փոքր այգի կար՝ քառորդ օրավար տարածությամբ: Կանայք ապրում էին վերևում, իսկ եպիսկոպոսը՝ ներքնահարկում: Փողոցի վրա բացվող սենյակը ծառայում էր որպես ճաշարան, երկրորդը՝ ննջարան, իսկ երրորդը՝ աղոթարան: Հնարավոր չէր աղոթարանից դուրս գալ՝ առանց ննջարանով անցնելու, ինչպես նաև ննջարանից դուրս գալ՝ առանց ճաշարանով անցնելու: Աղոթարանի խորքում կար մի ծածկված անկողնախորշ կպատրաստի անկողին՝ հյուրընկալության համար: Եպիսկոպոսն այս անկողինն էր տրամադրում գյուղից գործով եկող տերտերներին:

Հիվանդանոցի դեղատունը, որ այգու կողմը շինված մի կից շինություն էր, այժմ վերածված էր խոհանոցի և մատանի:

Բացի դրանից այգում կար նաև մի ախոռ, որ հիվանդանոցի նախկին խոհանոցն էր, ուր այժմ եպիսկոպոսը երկու կով էր պահում: Ինչքան էլ, որ կաթ տային այդ կովերը՝ եպիսկոպոսը անփոփոխ կերպով ուղարկում էր հիվանդանոցի հիվանդներին: «Իմ տասանորդն եմ վճարում»,— ասում էր նա:

Նրա սենյակը բավական մեծ էր և ցուրտ եղանակին դժվար էր, տաքացնել: Եվ, որովհետև փայտը շատ թանկ է Դիյնում, ապա եպիսկոպոսն ախոռի մի մասը տախտակներով անջատելով մի փակ խցիկ է շինել տվել և խիստ ցուրտ օրերին երեկոներն այդտեղ էր անցկացնում:

— Իմ ձմեռային դահլիճն է դա,— ասում էր նա:

Այս ձմեռային դահլիճում, ինչպես նաև ճաշարանում մի քառակուս սպիտակ փայտե սեղանից ու չորս ծղոտե աթոռից բացի՝ այլ կարասի չկար: Ճաշարանն ի միջի այլոց, զարդարված էր նաև մի հին, վարդագույն ջրաներկ բուֆետով: Մի ուրիշ այդպիսի բուֆետ էլ, ըստ պատշաճի ծածկելով սպիտակ սփռոցներով ու կեղծ ժանյակներով՝ եպիսկոպոսը դարձրել էր իր աղոթարանը զարդարող խորան:

Նրա հարուստ ապաշխարուհիներն ու Դիյնի սրբակյաց կանայք հաճախ հանգանակություն էին կատարում գերապատիվ հոր աղոթարանի համար մի նոր, շքեղ խորանի ծախսերը հոգալու նպատակով: Եպիսկոպոսն ամեն անգամ փողը վերցնում էր ու տալիս աղքատներին:

«Ամենագեղեցիկ տաճարը,— ասում էր նա,— աստծուն շնորհակալություն հայտնող դժբախտի մխիթարված հոգին է»:

Աղոթարանում կար երկու ծղոտե գրքակալ և մի հատ էլ դարձյալ ծղոտե բազկաթոռ նրա ննջարանում: Երբ պատահաբար միանգամից յոթ կամ ութ այցելու էր ունենում՝ նահանգապետը, գեներալը, կայագործի շտաբի պետը, կամ թե հոգևոր դպրոցի աշակերտներից մի քանիսը, ստիպված էին լինում հավաքել բոլոր աթոռները՝ ախոռի ձմեռային դահլիճից, աղոթարանից և ննջարանից: Այս ձևով կարողանում էին հավաքել տասնմեկ աթոռ: Յուրաքանչյուր նոր այցելության առթիվ դատարկում էին որևէ սենյակ:

Պատահում էր, որ երբեմն տասներկու մարդ էր հավաքվում: Այդ ժամանակ եպիսկոպոսն անհարմար դրությունը լուծում էր կանգնելով բուխարու առջև՝ երբ ձմեռ էր լինում, կամ զբոսնում էր այգում՝ եթե ամառ էր:

Բացի դրանցից, ծածկված անկողնախորշում ևս մի աթոռ կար, բայց այն գրեթե ծակված էր և միայն երեք ոտք ուներ, այնպես որ միայնպատին հենած կարող էր գործածվել: Օրիորդ Բատիստինի ննջարանում կար նաև մի խիստ մեծ բազկաթոռ՝ ժամանակին ոսկեգոծ ու ծաղկանկար ատլասով պատված, բայց սանդուղքի նեղության պատճառով ստիպված էին լուսամուտից բարձրացնել. այնպես որ այն չէր կարող մտնել շարժական կահույքի թվի մեջ:

Օրիորդ Բատիստինը մի փառասիրություն էր ունեցել. գնել կարմրափայտից շինված մի ձեռք հյուրասենյակի կահույք՝ պատված Ուտրեխտի դեղին վարդանկար թավշով: Բայց սա կարծեսար առնվազն հինգ հարյուր ֆրանկ և քանի որ այդ նպատակով հաջողվել էր հինգ տարում խնայել միայն քառասուներկուուկես ֆրանկ, ապա ի վերջո հրաժարվել էր դրանից: Ի դեպ, ո՞վ է իր իդեալին հասնում:

Չափազանց հեշտ է պատկերացնել եպիսկոպոսի ննջարանը: Այգուն նայող մի ապակեպատ դուռ, դրա դիմաց մահճակալ, հիվանդանոցի մի երկաթե մահճակալ՝ կանաչ քաթանե ամպեռվանիով: Անկողնի մոտ, վարագույրի տակ՝ արդուզարդի պարագաներ, որոնք մատնում էին աշխարհիկ մարդու ներքին պճնասեր սովորությունները. երկու դուռ, մեկը բուխարու մոտ և աղոթարանի մեջ բացվող, մյուսը՝ ճաշարան տանող: Գրադարանը գրքերով լի ապակե դռնակներով մի մեծ պահարան էր, մարմարանման ներկված բուխարին սովորաբար անկրակ էր. բուխարու մեջ դրասանգավոր վազերով և ժամանակին արծաթագոծ ակոսներով զարդարված մի գույգ խաչերկաթ կար, որը եպիսկոպոսական շքեղության նմուշ էր: Բուխարու վրա, ոսկեգոծումից զրկված փայտե շրջանակի մեջ՝ խավը թափած սև թավշի վրա արծաթաջուրը ջնջված մի պղնձե խաչելություն կար: Ապակեպատ դռան կողքին մի մեծ սեղան, վրան թանաքաման, խառնիխուռն թղթեր ու մեծածավալ գրքեր: Սեղանի առջև մի ծղոտե բազկաթոռ, իսկ մահճակալի առջև՝ աղոթարանից վերցված մի գրակալ:

Անկողնու երկու կողմից պատին խփված էին ձվաձև շրջանակներով երկու դիմանկար, որոնց ներքևի ազատ մասում եղած մանր ոսկետառ մակագրությունները ցույց էին տալիս, որ այդ նկարներից մեկին պատկերված է Մեն-Կլոդի եպիսկոպոս աբբա դը Շալիոն, մյուսին՝ Շարտրի թեմի Սիտոյի կարգի Գրան-Շանի աբբա՝ Ազդի առաջնորդ աբբա Տուրտոն: Եպիսկոպոսը բնակություն հաստատելով հիվանդանոցի այս սենյակում՝ գտել էր այդտեղ այս նկարները և թողել էր իրենց տեղը: Դրանք քահանաներ էին և հավանաբար պարզևատուներ, երկու պատճառ, որպեսզի հարգեր նրանց: Միակ բանը, որ նա գիտեր այդ երկու անձանց մասին այն էր, որ նրանց երկուսին էլ նշանակել էր թագավորը, մեկին որպես եպիսկոպոս, մյուսին՝ հոգևոր կալվածքի կառավարիչ, միննույն օրը՝ 1785 թ. ապրիլի 27-ին: Մի անգամ, երբ տիկին Մագլուարը իջեցրել էր այդ նկարները փոշին մաքրելու համար, եպիսկոպոսն այս մանրամասնությունը գտել էր ժամանակի ընթացքումդեղնած և Գրան-Շանի աբբայի նկարի ետև կնքամոմով չորս անկյունից փակցված մի քառանկյունի թղթի վրա սպիտակավուն թանաքով գրված մակագրության մեջ:

Նրա լուսամուտը ծածկում էր բրդե հաստ կտորից մի հին վարագույր, որն այնքան մաշվել էր, որ նորը գնելու ծախսից խուսափելու համար տիկին Մագլուայն ստիպված եղավ մի մեծ կար գցել ճիշտ մեջտեղը: Այդ կարը խաչաձև էր և եպիսկոպոսը հաճախ նկատում էր.

— Ինչքան գեղեցկացնում է դա:

Տան բոլոր սենյակները, թե ներքնահարկում, թե վերևում առանց բացառության սպիտակեցված էին կաթնագույն կրով, մի բան, որ գորանոցներում ու հիվանդանոցներում ընդունված էր:

Բայց վերջին տարիներին տիկին Մագլուարը հայտնագործեց, ինչպես քիչ հետո կտեսնենք, որ ներկված պաստառի տակ նկարներ կային և ժամանակին զարդարում էին օրիորդ Բատիստինի սենյակը: Հիվանդանոց լինելուց առաջ, այս տունը եղել էր բուրժուաների գրուցարանը և դրանից էլ մնացել էր այս զարդարանքը: Մենյակները սալարկված էին կարմիր աղյուսով, որոնք ամեն շաբաթ վանում էին: Յուրաքանչյուր մահճակալի առջև մի փոքրիկ խսիր կար: Ի միջի այլոց, այդ երկու կանանց խնամքի ներքո՝ այս բնակարանը վերնից-ներքև անթերի մաքրության մեջ էր: Դա միակ պերճանքն էր, որ եպիսկոպոսը թույլ էր տալիս: «Մա ոչինչ չի խլում աղքատներից»,— ասում էր նա:

Սակայն պետք է խոստովանել, որ նրա երբեմնի ունեցածից մնացել էր վեց արծաթե ճաշասարք և մեկ շերեփ, որ տիկին Մագլուարն ամեն օր երանությամբ դիտում էր, երբ նրանք կուրացուցիչ փայլում էին սպիտակ քաթանե հաստ սփռոցի վրա: Եվ քանի որ մենք այստեղ նկարագրում ենք Դիյնի եպիսկոպոսին այնպես, ինչպես էր, ապա պետք է ավելացնենք, որ նա մեկ անգամ չէր ասել. «Ես դժվարությամբ կհրաժարվեի արծաթե ամաններով ճաշելուց»:

Այս արծաթեղենին պետք է ավելացնել նաև մի գույզ խոշոր արծաթե հաստաբեստ աշտանակ, որ նա ժառանգել էր իր տատի քույրերից մեկից: Այդ աշտանակների մեջ միշտ էլ մի գույզ մեղրամոմ էր լինում և սովորաբար դրված էին լինում եպիսկոպոսի բուխարու վրա: Երբ ընթրիքին հյուր էր լինում՝ տիկին Մագլուարը վառում էր մոմերը և գույզ աշտանակներն էլ դնում սեղանին:

Եպիսկոպոսի մահճակալի գլխավերևում մի պատի պահարան կար, որտեղ ամեն երեկո տիկին Մագլուարը դնում էր այդ վեց արծաթե ճաշասարքը և շերեփը: Անհրաժեշտ է ասել, որ դրա բանալին բնավ չէին հանում:

Այգիին, որ ինչպես ասել ենք, մի քիչ փչացել էր տգեղ շինություններով՝ հատված էր իրար խաչաձևող չորս ծառուղիներով, որոնց կենտրոնում մի ջրափոս կար: Մի ուրիշ ծառուղի էլ շրջապատում էր այգին՝ չորս կողմից՝ սպիտակ պատերի երկարությամբ, որոնցով նա շրջափակված էր: Այս ծառուղիների արանքում ընկած էր մշտադալար տոսախներով շրջապատված չորս քառակուսի տարածություն, որոնցից երեքի վրա տիկին Մագլուարը բանջարեղեն էր մշակում, իսկ չորրորդում եպիսկոպոսը ծաղիկներ էր տնկել: Տեղ-տեղ կային պտղատու ծառեր: Մի անգամ տիկին Մագլուարը մեղմ չարամտությամբ ասաց նրան.

— Գերապատիվ հայր, դուք, որ ամեն բանից օգուտ եք քաղում, այս մի քառակուսի հողամասը թողել եք անօգուտ: Ավելի լավ է սալաթ ստանալ այդտեղից, քան ծաղկեփնջեր:

— Տիկին Մագլուար, դուք սխալվում եք,— պատասխանեց եպիսկոպոսը:— Գեղեցիկը նույնքան օգտակար է, որքան ինքը՝ օգտակարը:— Եվ մի փոքր լռելուց հետո ավելացրեց:— Գուցեն ավելի:

Այս քառակուսին, որ կազմված էր երեք-չորս ածուներից, զբաղեցնում էր պարոն եպիսկոպոսին գրեթե այնքան, ինչքան գրքերը: Նա հաճույքով մեկ կամ երկու ժամ անց էր կացնում այդտեղ, կտրում էր, քաղհանում, հողի մեջ այս ու այնտեղ փոքր փոսեր փորում ու սերմեր թաղում: Նա այնքան թշնամի չէր միջատներին, ինչքան որևէ պարտիզայան կցանկանար, որ լինե: Բացի դրանից նա ոչ մի հավակնություն չուներ բուսաբանությամբ զբաղվելու. նա չգիտեր ոչ խմբերը, ոչ էլ ընտանիքները, երբեք էլ չէր մտածում անցնելու Տուրնֆորի կամ բնական մեթոդի կողմը. ոչ պաշտպանում էր խորշավորները՝ ընդդեմ բլթակավորների, ոչ ևս Ժյուսիոյին՝ ընդդեմ Լիննեի: Նա չէր ուսումնասիրում բույսերը, այլ սիրում էր ծաղիկները: Նա խիստ հարգում էր գիտնականներին, էլ ավելի հարգում տգետներին, և առանց երբևիցե թերանալու այս երկու հարգանքները մատուցելուց՝ ամառները ամեն երեկո ջրում էր ածուները կանաչ ներկված մի թիթեղե ցնցուղով:

Տանը ոչ մի դուռ չկար, որ բանալիով փակվեր: Ճաշասենյակի դուռը, որն, ինչպես ասել ենք, բացվում էր անմիջականորեն մայր եկեղեցու հրապարակի վրա, երբեմնի բանտի դռան նման ունեցել էր փականք ու սողնակ: Եպիսկոպոսը հանել էր տվել այս բոլոր երկաթե փականքները և այդ դուռը թե գիշեր, թե ցերեկ փակվում էր միմիայն մի փայտե մղլակով: Յուրաքանչյուր այցելու, ժամը քանիսն էլ որ լիներ՝ միայն պետք է մղեր այդ մղլակը: Սկզբում երկու կանայք խիստ անհանգստացել էին այս երբեք չփակվող դռան պատճառով, բայց Դիյնի եպիսկոպոսը նրանց ասել էր.

— Եթե ձեզ հաճելի է, ձեր սենյակներին փականք դնել տվեք:

Նրանք ի վերջո միացել էին այս վստահությանը կամ թե ձևացրել էին, որ միացել են: Միայն տիկին Մազլուարն էր մերթ ընդ մերթ երկյուղ զգում: Ինչ վերաբերում է եպիսկոպոսին, ապա նրա մտածելակերպը կարելի է գտնել բացատրված կամ գոնե նշանակված աստվածաշնչերից մեկի լուսանցքի վրա. «Ահա փոքր տարբերությունը. բժշկիդուռը երբեք չպետք է փակվի, իսկ քահանայի դուռը միշտ բաց պետք է լինի:

Մի ուրիշ, «Բժշկագիտության փիլիսոփայությունը» անունը կրող գրքի վրա հետևյալ մակագրությունն էր արել. «Միթե ես էլ նրանց պես բժիշկ չե՞մ: Ես էլ իմ հիվանդներն ունեմ. ես ունեմ նախ այնպիսիք, որոնց հիվանդ են անվանում նրանք, ապա ունեմ և իմոնքը, որոնց դժբախտներ եմ անվանում»:

Մի այլ տեղ էլ նա գրել էր. «Մի հարցրեք անունն այն մարդու, ով ձեզնից մի օթևան է խնդրում: Հենց անունն է ճնշում այն մարդուն, ով ապաստանի կարիք ունի»:

Մի օր էլ մի արժանավոր ավագերեց, այժմ էլ ճիշտ չեմ հիշում, Կուլուբբուի կամ Պոմպիեռիի ավագերեցը, համարձակվեց հարցնել նրան, հավանաբար տիկին Մազլուարի դրդմամբ, թե գերապատիվը բոլորովին վստահ էր, որ որոշ չափով անզգուշություն չէր անում գիշեր-ցերեկ դուռը բաց թողնելով յուրաքանչյուրի առջև, և նա չէ՞ր վախենում վերջապես, որ կարող է որևէ դժբախտություն պատահել այդքան քիչ պահպանված տան մեջ: Եպիսկոպոսը մեղմ խստությամբ խփեց նրա ուսին ու ասաց. «Եթե աստված չի պահպանել տունը, իգուր են հսկում նրան պահպանողները»: Ապա սկսեց այլ բանի մասին խոսել:

Նա բավական հաճությամբ ասում էր. «Կա քահանայի քաջություն, ինչպես կա վիշապագորքերի գնդապետի քաջություն,— միայն թե,— ավելացնում էր նա,— մերը պետք է հանդարտ լինի»:

VII

Ք Ո Ա Վ Ա Տ

Բնականաբար տեղն է պատմելու մի դեպք, որ մենք չպետք է բաց թողնենք, որովհետև դա այն դեպքերից է, որոնք ամենից ավելի լավ ցույց են տալիս, թե ինչպիսի մարդ էր Դիյնի եպիսկոպոսը:

Գասպար Բեսի ավագակախումբը ջարդվելուց հետո, մի խումբ, որ ասպատակում էր Օլիուլի կիրճերում, նրա տեղակալներից մեկը՝ Քոավատը, փախավ սար: Մի քանի ժամանակ իր ավագակների, այսինքն Գասպար Բեսի խմբի մնացորդների հետ նա թաքնվեց Նիցցայի կոմսությունում, ապա անցավ Պիեմոնտը և հանկարծ նորից երևաց Ֆրանսիայում, Բարսելոնեյի կողմերը: Նրան տեսան նաև Ժոզիեում, ապա Տյուրիում: Նա թաքնվեց Ժուզ դը-լ'Էզլի

քարանձավներում և այդտեղից Ուրեյի և Ուբեյետի հովիտներով իջավ ավաններն ու գյուղերը: Նա նույնիսկ իջավ մինչև Էմբրյոն, մի գիշեր էլ սողոսկեց մայր եկեղեցի ուկողոպտեց ավանդատունը: Նրա ավագակություններն ավերում էին երկիրը: Ժանդարմներ ուղարկեցին նրա ետևից, բայց իզուր: Նա միշտ խույս էր տալիս, երբեմն էլ կատաղի դիմադրում: Շատ խիզախ սրիկա էր: Այս ահաբեկությունների թունդ շրջանում էր, երբ եպիսկոպոսը եկավ այդ կողմերը: Նա իր հերթական այցելությունն էր կատարում Շաստելար: Քաղաքապետը եկավ նրա մոտ և առաջարկեց ետ դառնալ ճանապարհից: Քռավատը սարը բռնել էր մինչև Արչ և նրանից դենը: Վտանգավոր էր մեկնել՝ նույնիսկ մի դասակի ուղեկցությամբ: Դա կնշանակեր զուր տեղը երեք-չորս դժբախտ ժանդարմների վտանգի ենթարկել:

— Ուրեմն,— ասաց եպիսկոպոսը,— ես կգնամ առանց ուղեկիցների:

— Մտածո՞ւմ եք լրջորեն, գերապատիվ հայր,— բացականչեց քաղաքապետը:

— Այնքան լուրջ եմ մտածում, որ բացարձակապես հրաժարվում եմ ժանդարմներից ու մի ժամից կմեկնեմ:

— Կմեկնե՞ք:

— Կմեկնեմ:

— Մենա՞կ:

— Մենակ:

— Գերապատիվ հայր, այդ բանը չեք անի:

— Այնտեղ, սարում,— շարունակեց եպիսկոպոսը,— մի փոքրիկ ու համեստ, սրանից ոչ մեծ համայնք կա, որ երեք տարի է, ինչ չեմ տեսել: Իմ լավ բարեկամներն են նրանք: Քաղցրաբարո և պարկեշտ հովիվներ են, և իրենց պահած երեսուն այծերից մեկն իրենցն է: Նրանք խիստ գեղեցիկ պարաններ են հյուսում տարբեր գույնի բրդից և լեռնային արիաներ են նվագում վեց անցք ունեցող փոքր սրինգներով: Նրանք կարիք ունեն երբեմն աստծո մասին լսելու: Իսկ ի՞նչ կասեին նրանք այն եպիսկոպոսի մասին, որ վախենում է: Ի՞նչ կասեին, եթե չգնայի այնտեղ:

— Բայց ավագակնե՞րը, գերապատիվ հայր:

— Իսկապես,— ասաց կաթողիկոսը,— լավ միտս ընկավ: Դուք իրավունք ունեք, ես կարող եմ հանդիպել նրանց: Նրանք էլ կարող են կարիք ունենալ աստծո մասին լսելու:

— Գերապատիվ հայր, բայց դա ավագակախումբ է, գայլերի մի ռիմակ:

— Պարոն քաղաքապետ, թերևս հենց այդ ռիմակի համար է, որ Հիսուսն ինձ հովիվ է կարգել: Ո՞վ գիտե նախախնամության ուղիները:

— Գերապատիվ հայր, նրանք կկողոպտեն ձեզ:

— Իսկ ես ոչինչ չունեմ:

— Նրանք ձեզ կսպանեն:

— Մի միամիտ ծեր քահանայի՞, որ անցնում է իր խեղկատակությունները մոթմոթալով: Պահ, ի՞նչ օգուտ դրանից:

— Օ՛, աստված իմ, բայց եթե հանդիպեք նրանց:

— Ողորմություն կխնդրեմ իմ աղքատների համար:

— Գերապատիվ հայր, թե աստված կսիրեք, մի գնացեք այնտեղ: Դուք վտանգում եք ձեր կյանքը:

— Պարոն քաղաքապետ,— ասաց եպիսկոպոսը,— ուրեմն միմիայն դրա՞ համար: Ես աշխարհ եմ եկել ոչ իմ կյանքը պահպանելու, այլ հոգիները պահպանելու համար:

Ստիպված եղան թողնել, որ ուզածն անի: Նա մեկնեց միայն մի երեխայի ուղեկցությամբ, որը հոժարությամբ համաձայնեց ծառայել որպես ուղեցույց: Եպիսկոպոսի համառությունը տարածվեց երկրում և խիստ երկյուղ պատճառեց:

Նա չուզեց հետը տանել ոչ իր քրոջը, ոչ էլ տիկին Մագլուարին: Սարը ջորիով անցավ և առանց որևէ մարդու պատահելու՝ ողջ-առողջ հասավ իր «բարի բարեկամներ» հովիվների մոտ: Այդտեղ նա մնաց տասնհինգ օր և այդ ժամանակամիջոցում քարոզեց, խորհուրդներ տվեց սովորեցրեց և բարոյախոսեց: Երբ պատրաստվում էր մեկնել այդտեղից, որոշեց հայրապետաբար «Te Deum» երգել: Այդ մասին նա ասաց գյուղի երեցին: Բայց ի՞նչ կարելի էր անել, երբ եպիսկոպոսական զգեստավորում չկար: Նրա տրամադրության տակ կարող էին դնել միայն մի աղքատիկ գյուղական ավանդատուն, որտեղ մի քանի հին ու մաշված դամասկյան գործվածքից պատրաստված ու կեղծ տրեզներով պճնված շուրջառներ կային:

— Էհ,— ասաց եպիսկոպոսը,— պարոն երեց, այնուամենայնիվ հայտարարենք, որ քարոզի ժամին Te Deum է լինելու: Մի կերպ գլուխ կգա:

Փնտրեցին շրջապատի գյուղերի եկեղեցիներում: Այս բոլոր խոնարհ ծխերի ամբողջ շքեղությունը միասին հավաքած չէր բավականացնի պատշաճորեն զգեստավորելու մայր եկեղեցու մի տիրացուի:

Երբ այս շփոթ դրության մեջ էին, երկու անծանոթ ձիավորներ մի մեծ արկղ բերին ու դրեցին երիցատուն պարոն եպիսկոպոսի համար և անմիջապես մեկնեցին: Արկղը բաց արին. այդտեղ կար մի ոսկեհուր փիլոն, ադամանդակուռ մի խույր, մի արքեպիսկոպոսական խաչ, մի սքանչելի գավազան և հայրապետական բոլոր զգեստները, բոլորն էլ մի ամիս առաջ գողացված Էմբրյոնի Մայր Աստվածածնի տաճարի գանձարանից: Արկղում մի թուղթ կար, որի վրա գրված էր «Քոստանտին՝ գերապատիվ Բիենվյուին»:

— Հո ասո՞ւմ էի, որ գլուխ կգա,— ասաց եպիսկոպոսը: Ապա ժպտալով ավելացրեց:— Ով կբավականանա երեցի ժամաշապիկով՝ աստված նրան արքեպիսկոպոսական փիլոն կուղարկի:

— Գերապատիվ հայր,— մրմնջաց երեցը ժպտազին օրորելով գլուխը,— աստվա՞ծ, թե՞ սատանան:

Եպիսկոպոսը շեշտակի նայեց երեցին ու հեղինակությամբ պատասխանեց.

— Աստված:

Շաստելար վերադառնալիս ողջ ճանապարհի ընթացքում մարդիկ գալիս էին հետաքրքրությամբ նայելու նրան: Շաստելարի երիցատանը նա գտավ օրիորդ Բատիստինին ու տիկին Մագլուարին, որոնք սպասում էին իրեն: Իր քրոջը նա ասաց.

— Ինչպես է, իրավունք ունե՞ի: Աղքատ քահանան գնաց խեղճ լեռնցիների մոտ ձեռնունայն, բայց վերադարձավ լիաձեռն: Մեկնելիս տանում էի ինձ հետ միայն վստահություն առ աստված. այժմ բերում եմ մի մայր եկեղեցու գանձը:

Երեկոյան, քնելուց առաջ, նա ավելացրեց.

— Երբեք չվախենաք ոչ գողերից, ոչ մարդասպաններից: Դրանք արտաքին վտանգներ են և փոքր վտանգներ: Մեզինք վախենանք: Նախապաշարումներն են գողերը, մոլություններն էլ մարդասպաններն են: Մեծ վտանգները մեր ներսն են: Կարևոր չէ այն, ինչ սպառնում է մեր գլխին կամ քսակին: Մտածենք միայն նրա մասին, որ սպառնում է մեր հոգուն:

Ապա դառնալով իր քրոջը՝ ավելացրեց.

— Քույր իմ, քահանան երբեք չպետք է նախագգուշություն ձեռք առնի ապագայի նկատմամբ: Այն, ինչ մերձավորն է անում, աստված է թույլատրում: Բավականանա՞նք աղոթելով աստծուն, երբ կարծում ենք, թե վտանգ է սպառնում մեզ: Աղոթեցե՛ք նրան ոչ թե մեզ համար, այլ որպեսզի մեր եղբայրները մեր պատճառով սխալի մեջ չընկնեն:

Անկախ դրանից, պատահարները հազվադեպ էին նրա կյանքում: Մենք պատմում ենք միայն մեր իմացածները, բայց սովորաբար նրա կյանքն անց էր կենում միշտ միևնույն բաները միևնույն ժամին անելով: Նրա տարվա մեկ ամիսը նման էր նրա օրվա մեկ ժամին:

Գալով այն բանին, թե ինչ եղավ Էմբրյոնի մայր եկեղեցու «գանձը», մենք անհարմար ենք զգում հարցաքննել այդ մասին: Դրանք շատ գեղեցիկ, շատ հրապուրիչ և խիստ հարմար բաներ էին՝ գողանալու հօգուտ աղքատների: Գողանալո՞ւ, դրանք արդեն գողացված էին: Արարքի կեսը կատարված էր, մնում էր միայն գողության ուղղությունը փոխել դեպի աղքատները: Մենք ոչինչ չենք պնդի այս առթիվ: Սակայն եպիսկոպոսի թղթերի մեջ մի բավական մութ մակագրություն գտնվեց ի վերջո, որը թերևս այս գործին է վերաբերում և այսպես է հղացված. «Հարցն այն է, որ իմանանք, թե սա պետք է վերադառնա մայր-եկեղեցի՞, թե՞ հիվանդանոց»:

VIII

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ՝ ԽՄԵԼՈՒՅ ՀԵՏՈ

Մենաստորը, որի մասին քիչ վերև խոսեցինք, ճարպիկ մարդ էր և անցել էր իր ճանապարհը առանց ուշադրություն դարձնելու խոչնդոտներին, որոնք հանդիպում են մարդու ճանապարհին և կոչվում են խղճմտանք, երդում, արդարություն և պարտականություն: Նա ուղիղ քայլել էր դեպի իր նպատակը՝ առանց նույնիսկ մեկ անգամ խոտորվելու իր առաջանալու և շահի գծից: Նա նախկին դատախազ էր և հաջողությունից մեղմացել էր. բոլորովին չար մարդ չէր և կարողության սահմաններում ամեն տեսակ մանր ծառայություններ էր մատուցում իր որդիներին, փեսաներին, ազգականներին և նույնիսկ բարեկամներին: Դրանց հետ մեկտեղ՝ կյանքից իմաստությամբ վերցրել էր լավ կողմերը, լավ առիթները և լավ շահերը, իսկ դրանից դուրս եղածը թվում էր հիմար բան: Նա սրախոս էր և ճիշտ այնքան կարդացած, որ կարծում էր, թե Էպիկուրի աշակերտն է, մինչդեռ գուցե

Պիզո-Լեբյոնի⁷ արտադրանքը հազիվ լիներ: Նա հաճությամբ ու զվարճությամբ ծիծաղում էր անվերջ ու հավիտենական բաների և «բարի եպիսկոպոսի խենթությունների վրա»: Նա ծիծաղում էր դրանց վրա երբեմն նույնիսկ պարոն Միրիելի ներկայությամբ:

Չեմ հիշում, թե ինչ կիսապաշտոնական արարողության առթիվ կոմսը (այս սենատորը) և պարոն Միրիելը միասին ճաշում էին նահանգապետի մոտ: Աղանդերի ժամանակ սենատորը, փոքր-ինչ ուրախ տրամադրությամբ, թեև շարունակելով պահել արժանապատվությունը, գոչեց.

— Գրողը տանի, պարոն եպիսկոպոս, գրուցենք մի քիչ: Սենատորն ու եպիսկոպոսը դժվար են իրար նայում առանց աչք թարթելու: Մենք երկու գուշակ ենք այստեղ: Ես ձեզ մի խոստովանություն պիտի անեմ: Ես իմ փիլիսոփայությունն ունեմ:

— Եվ իրավունք ունեք,— պատասխանեց եպիսկոպոսը,— երբ մարդ սկսում է իր փիլիսոփայությունն անել՝ պառկում է քնելու: Դուք ծիրանի անկողնու վրա եք, պարոն սենատոր:

Սենատորը, քաջալերված սրանից, շարունակեց.

— Լավ բարեկամների պես խոսենք:

— Թեկուզ լավ բարեկամների պես,— ասաց եպիսկոպոսը:

— Հայտարարում եմ,— շարունակեց սենատորը,— որ մարքիզ դ'Արժանը, Պիոնը, Հոբսը և պարոն Նեժոնը սրիկաներ չեն: Իմ գրադարանում կան իմ բոլոր փիլիսոփաները ոսկեզօծ կտրվածքներով:

— Ինչպես դուք ինքներդ, պարոն կոմս,— ընդհատեց եպիսկոպոսը:

Սենատորը շարունակեց .

— Ես ասում եմ Դիդրոյին. նա խղետուգ է, դեկլամատոր և հեղափոխական. ըստ էության հավատում է աստծուն և Վոլտերից ավելի կեղծ բարեպաշտ է: Վոլտերը ծաղրեց Նիդհեմին և սխալվեց, որովհետև Նիդհեմի օձաձկներն ապացուցում են, որ աստված անօգուտ է: Մի փոքր խմորի կտորի մեջ լցված մի կաթիլ քացախը փոխարինում է Եղիցի լույս-ին: Ենթադրեք, որ խմորն ավելի մեծ է և քացախն ավելի շատ, և դուք կունենաք աշխարհը: Մարդը օձաձուկն է: Ուրեմն ինչի՞ համար է Հայր-ամենակալը: Պարոն եպիսկոպոս, Եհովայի հիպոթեզն ինձ հոգնեցնում է: Նա պիտանի է միայն նիհար ու դատարկ երազող մարդիկ արտադրելու համար: Կորչի այդ ամենակարողը, որ ինձ նեղում է: Կեցցե Ջերոն, որ ինձ հանգիստ է թողնում: Խոսքը մեր մեջ, բեռս թեթևացնելու և ինչպես որ արժան է հովվիս խոստովանելու համար՝ ձեզ ասում եմ, որ ես ողջամիտ մարդ եմ: Ես գլուխս չեմ կորցնում ձեր Հիսուսի համար, որ ամեն վայրկյան քարոզում է հրաժարում և զոհողություն: Ժլատի խորհուրդն աղքատներին: Հրաժարում, ինչո՞ւ: Չոհողություն, ինչի՞ համար: Ես չեմ տեսնում, որ որևէ գայլ զոհվի մի ուրիշ գայլի երջանկության համար: Ուրեմն բնության մեջ մնանք: Մենք զագաթի վրա ենք, ուստի ունենանք վերին փիլիսոփայությունը: Ի՞նչ բանի կծառայի վերևում լինելը, երբ ուրիշները քթի ծայրից դեն չեն տեսնում: Ուրախ ապրենք: Կյանքը ամեն ինչ է: Իբր թե մարդ այնտեղ վերևում կամ որևէ տեղ մի այլ ապագա ունի. ես դրան մագաչափ իսկ չեմ հավատում: Օ, ինձ հանձնարարում են զոհողություն և հրաժարում, ես պետք է զգուշանամ այն ամենից, ինչ անում եմ, պետք է գլուխ ջարդեմ լավի ու վատի, արդարի ու անարդարի, այս արա-ի և այդ մի՛ արա-ի վրա: Ինչո՞ւ, որովհետև արածներիս համար հաշիվ եմ տալու: Ե՞րբ. մահվանիցս հետո: Ի՞նչ լավ երազ: Իմ մահվանից հետո ճարպիկ է նա, ով ինձ կխոցի: Փորձեք ստվերային

⁷ Ֆրանսիացի գրող (1753 — 1835): Գրել է թեթև, անպարկեշտ վեպեր:

ձեռքով մի բուռ մոխիր բռնել տալ: Պարզ խոսենք, մենք, որ իրագել ենք և Իդիսի⁸ շրջագգեստը բարձրացրել ենք, գիտենք, որ ոչ լավ կա, ոչ վատ, այլ բողբոջում ու թառամում կա: Իրականը փնտրենք, փորձենք մինչև խորքը, գրո՛ղը տանի: Պետք է ճշմարտության հոտն առնել, պեղել հողի տակ և գտնել: Այն ժամանակ նա ձեզ առաջնակարգ հաճույքներ կպատճառի: Այն ժամանակ դուք կուժեղանաք ու կծիծաղեք: Ես ազատախոս մարդ եմ: Պարոն Եպիսկոպոս, մարդու անմահությունը դատարկ խոստում է: Օ, ի՛նչ սքանչելի խոստում: Հավատացե՛ք դրան: Աղամի ունեցած վիճակախաղի տոմսը: Հոգի ես, հրեշտակ կդառնաս, կապույտ թևեր կունենաս թիկնուկրի տեղ:

Օգնեցե՛ք ինձ, խնդրեմ, Տերտուլիանոսն է կարծեմ ասել, թե երանելիները մի աստղից մյուսն են գնալու, այնպես չէ՞: Շատ լավ: Կդառնաս ուրեմն աստղերի մորեխը, իսկ հետո կտեսնես ասածուն: Տա-տա-տա: Անհամ բաներ են այդ դրախտները: Աստված էլ մի բարբաջանքային ճիվաղ է: Այս խոսքը ես «Մոնիտոր»-ում չէի գրի, բայց բարեկամների շրջանում շնչում եմ, Inter pocula⁹: Զոհաբերել երկիրը դրախտի համար, նշանակում է բաց թողնել որսն ստվերի համար: Խաբվել հավերժի համար, այդքան հիմար չենք: Ես ոչինչն եմ: Ես կոչվում եմ պարոն կոմս Ոչինչ, սենատոր: Իմ ծննդից առաջ գոյություն ունեի՞: Ոչ: Ու Մահվանիցս հետո գոյություն կունենա՞մ: Ոչ: Ուրեմն ի՞նչ եմ ես. մի քիչ փոշի՝ անդամակցված օրգանիզմի կողմից: Ի՞նչ եմ անելու այս երկրի վրա: Ընտրությունն ինձ է թողնված: Տառապել կամ վայելել: Ո՞ր կտանի ինձ տառապանքը: Դեպի ոչինչը: Բայց ես կտառապեմ: Ո՞ր կտանի ինձ վայելքը: Դեպի ոչինչը: Ուրեմն ես կվայելեմ: Ընտրությունը արված է: Կամ պետք է ուտող լինես, կամ ուտվես: Ես ուտում եմ: Ավելի լավ է ատամ լինել, քան խոտ: Այդպես է իմ իմաստությունը, որից հետո գնա, ինչպես հրում են, գերեզմանափորը միշտ այնտեղ է, Պանթեոնը մեզ բոլորիս համար է, ամեն բան ընկնում է այդ խոշոր փոսի մեջ: Վերջ: Finis¹⁰: Վերջնական լուծարք: Դա անհետացման վայրն է: Մահը կմեռնի, հավատացե՛ք ինձ: Թող այնտեղ լինի մեկը, որ ինձ բան ունենա ասելու, ես ծիծաղում եմ դրա մասին մտածելիս: Ստնտուների գյուտն է դա: Խրտվիլակը երեխաների, իսկ Եհովան՝ մեծերի համար: Ոչ, մեր ապագան մթություն է: Գերեզմանից դենը միայն հավասար ոչնչություններ կան: Դուք եղել եք Սարդանաբալ, կամ Վենսսան դը Պոլ, միևնույն է, ոչինչ եք դառնալու: Ահա իրականը: Դուք ապրում եք ամենից վերև: Օգտագործե՛ք ձեր եսը, ինչքան նրա տերն եք: Ճիշտ եմ ասում, պարոն Եպիսկոպոս, ես ունեմ իմ փիլիսոփայությունն ու իմ փիլիսոփաները: Ես չեմ ուզում, որ ինձ պսակագարդեն դատարկ խոսքերով: Դրանից հետո պետք է որևէ բան տալ ներքնում գտնվողներին՝ չքավորներին, դանակ-մկրատ սրողներին, թշվառներին: Նրանց առասպելներ, քիմերաներ, հոգի, անմահություն, դրախտ ու աստղեր են տալիս կլլելու: Նրանք որոճում են այս բաները: Նրանք իրենց չոր հացի վրա են դնում դրանք: Ով ոչինչ չունի, բարի աստված ունի: Սա նվազագույնն է: Ես չեմ խանգարում դրան, բայց կպահեմ ինձ համար Նեժոնը¹¹: Բարի աստվածը պիտանի է աղքատներին:

Եպիսկոպոսը ձեռքերն իրար խփեց:

— Ա՛յ քեզ խոսել, — բացականչեց նա: — Հիանալի, իսկապես հրաշալի բան է այս մատերիալիզմը: Ամեն ուզող չի կարող ունենալ այն: Օ, բայց երբ ունես՝ այլևս չես խաբվի. այլևս թույլ չես տա, որ հիմարաբար քեզ աքսորեն Կատոնի նման, քարկոծեն՝ Ստեփանոսի նման, կամ թե կենդանի այրեն ժաննա դ'Արկի նման: Նրանք, ում հաջողվել է հիանալի մատերիալիզմը ձեռք բերել, իրենց

⁸ Ըստ հին եգիպտական կրոնի՝ աստվածուհին էր բժշկության, ամուսնության, ցորենի մշակության և այլն: Անձնավորում է եգիպտական առաջին քաղաքակրթությունը:

⁹ Բաժակակիցների միջև (լատ.):

¹⁰ Վախճան, վերջ (լատ.):

¹¹ Ժակ-Անդրե Նեժոն՝ ֆրանսիացի գրականագետ-անաստված (1738 — 1810):

անպատասխանատու զգալու հաճույքն ունեն և կարծում են, որ առանց անհանգստանալու կարող են ամեն բան կլլել՝ պաշտոններ, սինեկուրներ¹², տիտղոսներ, լավ կամ վատ կերպով ձեռք բերված իշխանություն, շահաբեր կարծիքափոխություն, օգտակար դավաճանություն, ախորժահամ խղճավաճառք և սեղան կնստեն՝ ամեն բան մարսած: Ի՞նչ հաճելի է: Այս բանը ձեզ համար չեմ ասում, պարոն սենատոր: Սակայն չեմ կարող ձեզ չշնորհավորել: Դուք, մեծ իշխաններդ, ասում եք, թե ձեր փիլիսոփայությունն ունեք, այն էլ սոսկ ձեզ համար, մի ընտիր, նրբին, միմիայն հարուստներին մատչելի փիլիսոփայություն, որ ամեն ինչի հարմարում է ու սքանչելիորեն համեմուն կյանքի հեշտանքները: Այս փիլիսոփայությունը հանված է երկրի խորքերից, և հողից հանել են հատուկ փնտրողները: Բայց դուք բարի իշխաններ եք և վատ բան չեք համարում, որ աստծուն հավատալը լինի ժողովրդի փիլիսոփայությունը, մոտավորապես այնպես, ինչպես տապակած սագը ժողովրդի համար նույնն է, ինչ գետնասունկով հնդկահավը՝ հարուստի համար:

IX

ԵՂԲԱՅԸՆ՝ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՔՐՈՋ ԿՈՂՄԻՑ

Որպեսզի մի գաղափար տանք Դիյնի եպիսկոպոսի ներքին կենցաղավարության և այն ձևի մասին, թե ինչպես այդ երկու սուրբ աղջիկներն իրենց գործունեությունը, մտքերը, նույնիսկ իրենց կանացի դյուրախաբ բնագոյները ենթարկում էին եպիսկոպոսի սովորություններին ու հնարքներին՝ թույլ չտալով նույնիսկ, որ նա խոսի այդ մասին, մենք ավելի լավ բան չենք անի, եթե ոչ արտագրել այստեղ մի նամակ, որ օրիորդ Բատիստինը գրել է իր մանկության ընկերուհուն՝ դերկոմսուհի դը Բուշվրոնին: Այդ նամակը մեր ձեռքում է:

Դիյն, 16 դեկտեմբերի, 18...

«Իմ բարի տիկին, ոչ մի օր չի անցնում, որ մենք չխոսենք ձեր մասին: Դա որոշ չափով մեր սովորությունն է, բայց մի ուրիշ պատճառ էլ կա: Պատկերացրեք, որ տիկին Մագլուարը պատերն ու առաստաղները սրբելիս ու լվանալիս հայտնագործություններ է արել. այժմ մեր երկու սենյակները, որ հին պաստառներ ունեին, կրով սպիտակեցնելուց հետո՝ չեն նսեմանում ձեր դղյակի առջև: Տիկին Մագլուարը պոկեց պաստառները, իսկ դրանց տակ բաներ կային: Իմ հյուրասենյակը, որտեղ կարասիներ չկան և, որը մենք օգտագործում ենք լվացած սպիտակեղենը փռելու համար՝ տասնհինգ ոտք բարձրություն և տասնութ քառակուսի ոտք լայնություն ունի: Նրա առաստաղն անցյալում ոսկեգոծված է եղել և ձերի նման հեծաններ ունի: Այն ծածկված էր կտավով այն ժամանակից, երբ հիվանդանոց էր: Վերջապես պատի տախտակամածը գալիս էր մեր տատերի ժամանակից: Բայց տեսնելու արժանին իմ սենյակն է: Տիկին Մագլուարը իրար վրա փակցված առնվազն տասը պաստառի տակ հայտնաբերեց նկարներ, որոնք թեև լավը չեն, բայց հանդուրժելի են: Մեկը ներկայացնում է Տելեմաքին, որին Աթենասն ընդունում է ասպետ, մյուսը դարձյալ նա է այգիներում, որոնց անունը չեմ հիշում, մի խոսքով այն այգին, ուր հռոմեացի կանայք գալիս էին սոսկ մի գիշեր: Ի՞նչ եմ ասում, այնտեղ կան հռոմեացի տղամարդիկ ու կանայք (այստեղ մի բառ անընթեռնելի է), և մի ողջ շքախումբ: Տիկին Մագլուարը մաքրեց այս բոլորը և այս ամռան կնորոգի մի քանի մանր վթարումները, նորից ջնարակ կքսի բոլորին և իմ սենյակը կդառնա մի իսկական թանգարան: Նա գտել է նաև ձեղնահարկի մի անկյունում հին ոճի մի գույգ փայտե կոնսոլ, որոնք նորից ոսկեգոծելու համար տասներկու ֆրանկ էին պահանջում, բայց ավելի լավ է այդ գումարն

¹² Անվանական, բայց եկամտաբեր պաշտոն:

աղքատներին տալ. բացի դրանից, դա շատ տգեղ է և ես կգերադասեի ունենալ մի կլոր կարմրափայտե սեղան:

Ես միշտ էլ խիստ երջանիկ եմ: Եղբայրս այնքան բարի է, որ իր ողջ ունեցածը տալիս է կարիքավորներին ու հիվանդներին: Մենք չափազանց նեղվում ենք: Ձմեռը խիստ է այստեղ և պետք է մի բան անել չքավորների համար, իսկ մենք հազիվհազ ենք ջեռուցում ու լուսավորում մեր բնակարանը: Ինչպես տեսնում եք, սրանք մեծ հաճույքներ են:

Եղբայրս իր ուրույն սովորություններն ունի: Երբ նա գրույց է անում, ասում է, որ եպիսկոպոսն այդպես պետք է լինի: Երևակայեցեք, որ տան դուռը բնավ չի փակվում: Ով ուզի կմտնի և անմիջապես կընկնի եղբորս մոտ: Նա ոչնչից չի վախենում, նույնիսկ գիշերը: Դա, ինչպես ինքն է ասում, իր ուրույն քաջությունն է:

Նա չի ուզում, որ ես վախենամ իր համար, ոչ էլ տիկին Մազլուարն անհանգստանա: Նա իրեն ենթարկում է բոլոր վտանգներին և նույնիսկ չի ուզում, որ մենք ձևացնենք, թե այդ բանը նկատում ենք: Մարդ պետք է կարողանա նրան հասկանալ:

Նա դուրս է գալիս, երբ անձրևում է, քայլում է ջրի միջով, ճամփորդում է ձմռանը: Նա չի վախենում գիշերից, կասկածելի ճանապարհներից և ոչ էլ հանդիպումներից:

Անցած տարի նա բոլորովին մենակ գնաց գողերով բռնված մի շրջան և չուզեց մեզ էլ տանել իր հետ: Տասնհինգ օր բացակայեց: Երբ վերադարձավ, ոչինչ չէր պատահել, լավ էր զգում, մինչդեռ կարծում էինք, որ նա մեռած է: Նա ասաց՝ տեսեք ինչպես են կողոպտել ինձ և բաց արեց մի ճամպրուկ՝ լի էմբրյոնի մայր եկեղեցու զարդերով, որ գողերն էին տվել նրան:

Այդ անգամ, վերադառնալիս, ես չկարողացա զսպել ինձ և մի փոքր հանդիմանեցի նրան, և այդ ասացի աղմկող կառքի գնալու ժամանակ, որպեսզի ոչ ոք չկարողանա լսել:

Սկզբում ես ինձ ասում էի, թե չկա մի այնպիսի վտանգ, որ կասեցնի նրան, նա սոսկալի մարդ է: Այժմ, վերջապես, վարժվեցի դրան: Ես նշանով հասկացնում եմ տիկին Մազլուարին, որ չհակառակի նրան: Նա իրեն վտանգում է, ինչպես ուզում է: Ես դուրս եմ տանում տիկին Մազլուարին, քաշվում եմ իմ սենյակը, աղոթում եմ նրա համար ու քնում: Ես հանգիստ եմ, որովհետև լավ գիտեմ, որ եթե նրան մի դժբախտություն պատահի, ապա դա կլինի իմ վերջը: Այդ օրն իսկ ես կմեկնեմ դեպի բարի աստվածը իմ եղբոր ու իմ եպիսկոպոսի հետ: Տիկին Մազլուարն ինձնից ավելի չարչարվեց, մինչև վարժվեց նրա, ինչպես ինքն է անվանում՝ անզգուշություններին: Բայց այժմ արդեն սովորություն է դարձել. մենք երկուսս միասին ենք աղոթում, միասին ենք վախենում ու քնում: Մատանան կմտնեք տուն, եթե թողնեին: Վերջ ի վերջո, ինչի՞ց ենք վախենում մենք այս տան մեջ: Միշտ էլ մեզ հետ կա մեկը, որ ավելի ուժեղ է: Մատանան կգա ու կգնա, բայց բարի աստված բնակվում է այնտեղ:

Այսքանը բավական է: Եղբայրս այլևս կարիք չունի որևէ խոսք ասելու ինձ. ես նրան հասկանում եմ անխոս էլ, և մենք մեզ հանձնում ենք նախախնամությանը:

Ահա թե ինչպես պետք է ապրել մեծահոգի մարդու հետ:

Ես հարցրի իմ եղբորը այն տեղեկանքի վերաբերյալ, որ դուք պահանջում եք ինձնից դր Ֆո ընտանիքի մասին: Դուք գիտեք, թե ինչպես նա ամեն բան գիտե և ինչպիսի հիշողություն ունի, որովհետև միշտ էլ լավ ճոյալիստ է: Իրականում դա Նորմանդիայի Կաենի շրջանի մի հին ընտանիք է: Հինգ հարյուր տարի առաջ ոմն Ռաուլ դը Ֆո և Թոմաս դը Ֆո ազնվականներ են եղել,

որոնցից մեկն էլ Ռոշֆորի իշխանն է եղել: Վերջինը Գի-Էտիեն-Ալեքսանդրն էր, որը եղել է գնդապետ և Բրետայնի թեթևագեն հեծելազորների գնդում մի պաշտոն է ունեցել: Նրա դուստրը՝ Մարի-Լուիզն ամուսնացավ Ֆրանսիայի պեր, ֆրանսիական թիկնապահների գնդապետ, բանակի գեներալ-լեյտենանտ, Լուի դը Գրամոն դքսի որդու՝ Ադրիեն-Շառլ դը Գրամոնի հետ:

Բարի տիկին, հանձնարարեք ձեր սրբազան ազգական պարոն կարդինալին՝ աղոթել մեզ համար: Ինչ վերաբերում է ձեր սիրելի Սիլվանիային, նա լավ է արել, որ չի կորցրել ձեզ մոտ անցկացրած թանկ րոպեները ու հատկացրել դրանք ինձ նամակ գրելուն: Նա լավ է զգում իրեն, աշխատում է ըստ ձեր ցանկությունների ու շարունակում է սիրել ինձ: Իմ ամբողջ ուզածն էլ այդ է: Նրա հիշատակը ձեր միջոցով հասավ ինձ, որից ես երջանիկ եմ: Իմ առողջությունը շատ վատ չէ, բայց և այնպես օր-օրի ավելի եմ նիհարում: Մնաք բարով, թուղթս հատավ և ես ստիպված եմ բաժանվել ձեզնից: Լավագույն ցանկություններս:

Բատիստին:

Հ. Գ. Ձեր եղբոր թոռնիկը սքանչելի է: Գիտեք, որ նա շուտով հինգ տարեկան կդառնա: Երեկ նա տեսավ, որ մի անցնող ձիու ծնկակալներ էին հագցրել ու ասաց. «Այդ ի՞նչ է նրա ծնկներին»: Նա այնքան սիրալիր է: Նրա փոքր եղբայրը մի հին ավել է քաշ տալիս սենյակներում, պատկերացնելով, թե կառք է ու ճչում է. «Նո-ո՛»:

Ինչպես երևում է նամակից, այս երկու կանայք կարողանում էին հարմարվել եպիսկոպոսի կենցաղակերպին կանանց այն առանձնահատուկ հանճարով, որով նրանք ավելի լավ են հասկանում տղամարդուն, քան տղամարդն ինքն իրեն: Դիյնի եպիսկոպոսն այս քաղցրաբար ու միամիտ տեսքի տակ, որ բնավ չէր դավաճանում, երբեմն նույնիսկ առանց իմանալու, հանդուգն ու հոյակապ գործեր էր կատարում: Կանայք դողում էին, բայց չէին արգելում: Երբեմն տիկին Մագլուարը փորձում էր նախապես զգուշացնել, բայց ոչ մի անգամ արարքի ընթացքում կամ հետո չէր ասում: Որևէ սկսված գործողության ժամանակ նրան երբեք չէին խանգարում, եթե չհաշվենք լոկ ակնարկը: Որոշ րոպեներին, երբ նա ասելու կարիք էլ չուներ, երբ նույնիսկ չէր էլ գիտակցում այդ, կանայք զգում էին տարտամորեն, որ նա գործում է որպես եպիսկոպոս,— այնքան կատարյալ էր նրա պարզությունը,— այդ ժամանակ կանայք ոչ այլ ինչ էին տան մեջ, եթե ոչ մի գույգ ստվեր: Նրանք պասիվորեն ծառայում էին նրան և եթե հնազանդելու համար պետք լիներ անհետանալ՝ անհետանում էին: Նրանք բնագործի մի հիանալի փափկանկատությամբ գիտեին, որ երբեմն խնամքը ճնշում է: Ուստի նույնիսկ գիտենալով, որ նա վտանգի մեջ է, թափանցում էին ոչ թե նրա միտքը, այլ բնավորությունը մինչև այն աստիճան, որ այլևս չէին հսկում նրան: Եվ հանձնում էին աստծուն:

Բացի դրանից, ինչպես քիչ վերև կարդացինք, Բատիստինն ասում էր, որ նրա վախճանը կլինի և իրենը: Տիկին Մագլուարն այդ բանը չէր ասում, բայց գիտեր:

X

ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՄԻ ԱՆԾԱՆՈԹ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Վերոհիշյալ նամակի թվագրությունից մի քիչ առաջ ընկած ժամանակ, եթե հավատանք քաղաքի ողջ բնակչությանը, նա կատարեց շատ ավելի վտանգավոր մի գործ, քան թե ավագակներով վիստացող լեռներում արած ճամփորդությունը:

Դիյնի մերձակայքում, բաց դաշտում մի մենակյաց մարդ էր ապրում: Այդ մարդը, ասենք անմիջապես այդ ծանր խոսքը, նախկին կոնվանսիոնե¹³ էր և կոչվում էր Ժ:

Կոնվանսիոնե¹³ Ժ-ի մասին Դիյնի փոքրաթիվ ազգաբնակչությունը մի տեսակ սարսափով էր խոսում: «Կոնվանսիոնե¹³, պատկերացնո՞ւմ եք այս բանը: Դա գոյություն ուներ այն ժամանակներում, երբ մարդիկ «դու»-ով էին խոսում միմյանց հետ և իրար «քաղաքացի» էին անվանում: Այդ մարդը մոտավորապես ճիշտ էր: Նա թեև չէր քվեարկել թագավորի գլխատման համար, բայց մասնակցել էր: Նա համարյա արքայասպան էր և զարհուրելի մարդ էր: Ինչպե՞ս էր պատահել, որ օրինական իշխանների վերադարձից հետո դատական ատյանի առջև չէին հանել: Նրա գլուխն իհարկե չէին կտրի, պետք է ողորմած լինել, բայց ցմահ վտարում՝ անշուշտ: Վերջապես մի օրինակ պետք է տալ և այլն, և այլն: Բացի դրանից, նա անասոված էր, ինչպես նրա բոլոր համախոհները...» Սազերը բամբասում էին անգորին:

Բայց արդյո՞ք Ժ-ն անգղ էր: Այո, եթե նրա մասին դատեն իր մենակությունից բխող անընտելության հիման վրա: Եվ որովհետև թեր չէր քվեարկել թագավորի գլխատման, ապա նրան չէին մտցրել աքսորականների ցուցակների մեջ և նա կարողացել էր մնալ Ֆրանսիայում:

Նա ապրում էր քաղաքից երեք քառորդ ժամ հեռավորության վրա: Հեռու որևէ շենից ու ճանապարհից, մի խիստ վայրի հովտի անծանոթ խորշում: Ասում էին, որ նա մի փոքր դաշտ, մի ծակ, ավելի ճիշտ մի որջ ուներ այդտեղ: Ոչ հարևան ուներ, ոչ նույնիսկ անցորդ էր լինում: Այն օրվանից, ինչ նա ապրում էր այդ հովտում, այնտեղ առաջնորդող արահետը ծածկվել էր խոտով ու անհետացել: Այդ վայրի մասին խոսում էին այնպես, ինչպես դահճի տան մասին:

Սակայն եպիսկոպոսը մտածում էր և ժամանակ առ ժամանակ նայում հորիզոնի այն կետին, ուր ծառերի մի պուրակ ցույց էր տալիս ծեր կոնվանսիոնե¹³ի հովիտը և ասում էր. «Այդտեղ մի մենակյաց մարդ կա»: Եվ իր մտածմունքի մեջ թաղված՝ ավելացնում էր. «Ես պարտավոր եմ այցելել նրան»:

Բայց ճիշտն ասած, այս միտքը, որ առաջին վայրկյանին նրան թվում էր բնական, մի րոպե խորհրդածելուց հետո թվում էր արտառոց ու անհնարին, նույնիսկ զարշելի, որովհետև, եթե խոր նայենք, նա դատում էր ըստ ընդհանուր տպավորության և առանց լավ հաշիվ տալու իրեն, զգուժ էր, որ կոնվանսիոնե¹³ը ներշնչում է իրեն այն զգացմունքը, որ կարծես ատելության սահման է և այնքան լավ արտահայտվում է հակակրթություն բառով:

Այնուամենայնիվ արդյո՞ք ոչխարի քոսը պետք է ետ մղի հովվին: Ոչ, բայց ինչպիսի ոչխար:

Բարի եպիսկոպոսը խիստ շվարել էր: Երբեմն նա գնում էր այդ կողմը, բայց ետ էր դառնում:

Մի օր էլ վերջապես քաղաքում լուր տարածվեց, թե պատանի հովվի նման մի էակ, որ սպասարկում էր կոնվանսիոնե¹³-ին իր խոզաբնում, եկել էր բժիշկ որոնելու: Ասում էին, որ ծեր սրիկան մեռնում է, կաթվածը տարածվում է ողջ մարմնում և գիշերը չի լուսացնի: «Փառք աստծո», — ավելացնում էին ոմանք:

Եպիսկոպոսը վերցրեց իր ձեռնափայտը և որովհետև, ինչպես ասել ենք, սքեմը շատ էր մաշվել, հագավ վերարկուն, որպեսզի երեկոյան քամուց էլ պաշտպանվի ու ճամփա ընկավ:

¹³ Կոնվանսիոնի (Կոնվենտի) անդամ: Կոնվանսիոնը ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխության ժամանակ իշխանության գերագույն օրգանն էր: Միապետության (Բուրբոնների) վերականգնումից հետո կենդանի մնացած կոնվանսիոնե¹³ներին հալածում էին, որի պատճառով էլ նրանց մեծ մասը հեռացավ Ֆրանսիայից: Ծ. թ.:

Արևը թեքվել և գրեթե մոտենում էր հորիզոնին, երբ նա հասավ նգովյալ վայրը: Սրտի որոշ բաբախումով նա նկատեց, որ գտնվում է մի որջի մոտ: Ապա ցատկեց փոսի վրայից, անցավ ցանկապատը, մտավ մի անխնամ փոքր պարտեզ, մի քանի համարձակ քայլ էլ արեց և հանկարծ բարձր մացառների ետև, խոպան տարածության խորքում նկատեց որջը:

Դա մի խիստ ցած, աղքատիկ, փոքր ու մաքուր խրճիթ էր, ճակատին խաղողի մի թուփ ամրացած:

Դռան առջև մի հին, գեղջկական անիվավոր բազկաթռոխի մեջ մի ալեհեր մարդ էր նստել ու ժպտում էր արևին:

Ծերունու կողքին կանգնած էր մի պատանի՝ փոքրիկ հովիվը, և ամանով կաթ էր մատուցում նրան:

Այդ միջոցին, երբ եպիսկոպոսը դիտում էր նրան, ծերունին ձայն հանեց: «Շնորհակալ եմ,— ասաց նա,— էլ ոչ մի բանի կարիք չունեմ»,— և նրա ժպիտը արևից կտրվելով կանգ առավ տղայի վրա:

Եպիսկոպոսն առաջացավ: Նրա ոտնաձայնի վրա ծերունին գլուխը շուռ տվեց, և նրա դեմքն արտահայտեց այն ողջ զարմանքը, որ կարող է ունենալ երկար կյանք ապրած մարդը:

— Այն օրվանից, որ այստեղ եմ, առաջին անգամ է մարդ գալիս ինձ մոտ: Դուք ո՞վ եք, պարոն:

Եպիսկոպոսը պատասխանեց.

— Ես կոչվում եմ Բիենվյու Միրիել:

— Բիենվյու Միրիել՞: Լսել եմ այդ անունը: Դուք այն մարդը չե՞ք, որին ժողովուրդն անվանում է գերապատիվ Բիենվյու:

— Ես եմ:

Ծերունին կիսաժպիտով շարունակեց.

— Այդ դեպքում դուք իմ եպիսկոպոսն եք:

— Մի քիչ:

— Ներս մտեք, պարոն:

Կոնվանսիոնելը ձեռքը մեկնեց եպիսկոպոսին, բայց նա չբռնեց այն և սահմանափակվեց ասելով.

— Ես բավարարված եմ տեսնելով, որ ինձ խաբել են: Դուք անկասկած հիվանդ չեք երևում:

— Պարոն,— շարունակեց ծերունին,— ես շուտով կառողջանամ:

Ապա մի փոքր դադարից հետո ավելացրեց.

— Երեք ժամ հետո կմեռնեմ:

Հետո շարունակեց.

— Ես մի քիչ բժիշկ եմ, գիտեմ, թե ինչ ձևով է գալիս վերջին բուպեն: Երեկ միայն ոտքերս էին սառը, այսօր արդեն հասել է ծնկներին, իսկ այժմ զգում եմ, որ բարձրանում է դեպի մեջքս, երբ հասնի սրտիս՝ կանգ կառնեմ: Գեղեցիկ է արևը, այնպես չէ՞: Ես խնդրեցի, որ ինձ դուրս բերի, որպեսզի մի վերջին հայացք նետեմ աշխարհի վրա: Դուք կարող եք խոսել ինձ հետ, դա ինձ բնավ չի

հոգնեցնում: Լավ էք արել, որ եկել էք տեսնելու մի մահամերձ մարդու: Լավ է, որ այդ ըոպեն վկաներ ունենա: Ամեն մարդ մի տարօրինակություն ունի. ես կուզենայի ապրել մինչև լուսաբաց: Բայց գիտեմ, որ հազիվ երեք ժամվա կյանք է մնացել: Գիշերը շուտով կիջնի: Բայց մի՞թե միևնույնը չէ: Վախճանվելը պարզ գործ է: Դրա համար առավոտն անհրաժեշտ չէ: Թող այդպես լինի: Ես կմեռնեմ աստղազարդ գիշերին:

Ծերունին դարձավ դեպի հովիվը.

— Իսկ դու գնա քնի: Դու հսկել ես անցած գիշեր և հոգնել ես:

Երեխան մտավ խրճիթը:

Ծերունին աչքերով հետևեց նրան, ապա ավելացրեց, կարծես ինքն իր հետ խոսելով.

— Նրա քնած միջոցին ես կմեռնեմ: Երկուսն էլ քուն են և կարող են լավ հարևանություն անել:

Եպիսկոպոսն այնպես հուզված չէր, ինչպես թվում է, թե պիտի լիներ: Նրան չէր թվում, թե զգում է աստծո ներկայությունը մեռնելուայս ձևի մեջ: Ամեն բան ասենք, որովհետև մեծ սրտերի փոքր հակասությունները պետք է նշվեն, ինչպես մնացած ամեն բան: Նա, որ հաճությամբ ծիծաղում էր, երբ իրեն «Ձերդ մեծություն» էին անվանում, մի քիչ խայթված էր այժմ, որ մահամերձն իրեն «գերապատիվ» չէր կոչել, և շատ էր ուզում «քաղաքացի» անվանել նրան: Նա էլ համակվեց այն ընտանեկար ու անհրապույր կամայականությամբ, որ բավական հատուկ է բժիշկներին ու քահանաներին, բայց հատուկ չէր իրեն՝ եպիսկոպոսին: Չէ՞ որ վերջապես այս կոնվանսիոնները, ժողովրդի ներկայացուցիչը, եղել է երկրիս հզորներից մեկը, և եպիսկոպոսը, իր կյանքում թերևս առաջին անգամ, խստասրտություն զգաց:

Սակայն կոնվանսիոններ Ժ-ն դիտում էր նրան այն համեստ սրտակցությամբ, որի մեջ գուցե կարելի է ճանաչել այն խոնարհությունը, որ իջնում է մարդու վրա, երբ նա շատ մոտ է փոշիանալուն:

Եպիսկոպոսն էլ իր կողմից թեև հետաքրքրություն չէր ցուցաբերում, մի բան, որ ըստ նրա, հարակից էր վիրավորանքի, չէր կարող չզննել կոնվանսիոնների այն ուշադրությամբ, որի աղբյուրը թեև համակրանքը չէր, բայց խիղճը նրան կհանդիմաներ, եթե մի այլ մարդու նկատմամբ այդպես վարվեր: Որևէ կոնվանսիոններ նրա վրա մի քիչ օրենքից դուրս լինելու ազդեցություն էր գործում, նույնիսկ գթասրտության օրենքից դուրս:

Ժ-ն հանգիստ, իրանը գրեթե ուղիղ, ձայնը թրթռուն, մեկն էր այն ութսունամյաններից, որոնք զարմանք են պատճառում ֆիզիոլոգներին: Հեղափոխությունը դարաշրջանին համապատասխան այսպիսի մարդիկ շատ է ունեցել: Այդ ծերունու մեջ նկատվում էր փորձությունների ենթարկված մարդը: Մահամերձ վիճակում էլ պահել էր առողջության բոլոր շարժումները: Նրա ջինջ հայացքի, հաստատուն առողջության, ուսերի հուժկու շարժումների մեջ կար մի այնպիսի բան, որ կարող է շփոթմունք պատճառել մահին: Ազրայելը՝ մահմեդականների հոգեառ հրեշտակը, ճամփից ետ կդառնար և կկարծեր, թե սխալ դուռ է ծեծել: Թվում էր, թե Ժ-ն մեռնում է լույն նրա համար, որ ուզում է մեռնել: Նրա հոգեվարքը տեղի էր ունենում ազատ կերպով: Միմիայն սրունքներն էին անշարժ, և մահը այդտեղից էր բռնել նրան: Ուտքերը մահացել էին ու սառել, գլուխն ապրում էր կյանքի ողջ հզորությամբ և թվում էր կատարելապես պայծառ: Այս ծանրագին վայրկյանին Ժ-ն նման էր արևելյան հեքիաթների թագավորին, որի մարմնի վերնի մասը մտնում է, իսկ ներքևինը՝ մարմարե:

Մի քար կար այդտեղ, և եպիսկոպոսը նստեց վրան: Առաջաբանն սկսվեց¹⁴:

— Շնորհավորում եմ ձեզ,— ասաց նա նախատական շեշտով:— Դուք համենայն դեպս թեր չեք քվեարկել թագավորի մահվան:

Կոնվանսիոնելը ձևացրեց, թե չնկատեց «համենայն դեպս» բառի մեջ թաքնված լուռ, բայց կծու իմաստը և պատասխանեց: Նրա դեմքից ժպիտն ամբողջովին անհետացել էր:

— Այնքան էլ մի շնորհավորեք, պարոն: Ես թեր եմ քվեարկել բռնակալի վախճանին:

Դա մի բարկ շեշտ էր՝ եպիսկոպոսի խիստ շեշտին դեմ առ դեմ:

— Ի՞նչ եք ուզում ասել դրանով,— շարունակեց եպիսկոպոսը:

— Ուզում եմ ասել, որ մարդը մի բռնակալ ունի՝ տգիտությունը: Ես քվեարկել եմ հոգուտ այդ բռնակալի վախճանի: Այդ բռնակալն է ծնունդ տվել թագավորական սիստեմին, որը կեղծիքից հանված իշխանությունն է, այնինչ գիտությունը ճշմարտությունից հանված իշխանությունն է: Մարդը գիտությամբ միայն պետք է կառավարվի:

— Եվ խղճով,— ավելացրեց եպիսկոպոսը:

— Միևնույն բանն է դա: Խիղճը մեր մեջ եղած բնածին գիտության քանակն է:

Գերապատիվ Բիենվնյուն մի քիչ զարմացած լսում էր իր համար խիստ նոր այդ խոսքերը:

Կոնվանսիոնելը շարունակեց.

— Ինչ վերաբերում է Լյուդովիկոս 16-րդին, ես ասել եմ «ոչ»: Ես չեմ կարծում, թե իրավունք ունեմ մարդ սպանելու, սակայն զգում եմ, որ պարտավոր եմ ջնջել չարիքը: Ես թեր եմ քվեարկել բռնակալի վախճանին: Դա նշանակում է կնոջ պոռնկության վախճանը, մարդու ստրկության վախճանը և երեխայի տգիտության վախճանը: Քվեարկելով հոգուտ հանրապետության՝ քվեարկել եմ հոգուտ սրանց: Ես քվեարկել եմ հոգուտ եղբայրության, համերաշխության և լուսաբացին: Ես օգնել եմ նախապաշարումների ու մոլորությունների կործանմանը: Նախապաշարումների ու մոլորությունների կործանումից կծագի լույսը: Մենք՝ կոնվանսիոնելներս, կործանեցինք հին աշխարհը, իսկ հին աշխարհը՝ թշվառությունների այդ անոթը, խորտակվելով՝ դարձավ հրճվանքի սափոր մարդկային ցեղի համար:

— Խառն հրճվանքի,— նկատեց եպիսկոպոսը:

— Կարող էիք ասել տազնապալից հրճվանքի. և այսօր, անցյալի այն ճակատագրական վերադարձից հետո, որ կոչվում է 1814 թվական¹⁵, կարող եք ասել՝ անհետացած հրճվանքի: Ավաղ, գործն անկատար էր, խոստովանում եմ. հին ռեժիմը մենք նյութապես քարուքանդ արինք, բայց չկարողացանք հին ռեժիմն ամբողջովին ջնջել գաղափարներից: Բավական չէ խորտակել չարաշահությունները, պետք է ձևափոխել և բարձր: Հողմաղացն այլևս չկա, բայց հողմը դեռ այնտեղ է:

¹⁴ Լատ. հանպատրաստից:

¹⁵ Այս թվականին տապալվեց Նապոլեոն 1-ի կայսրությունը և տեղի ունեցավ Բուրբոնների թագավորության վերականգնումը: Շ. թ.:

— Դուք քարտեքանդ արիք: Քանդելն օգտակար կարող է լինել, սակայն ես խուսափում եմ զայրույթախառն քանդումից:

— Իրավունքն ունի իր զայրույթը, պարոն Եպիսկոպոս, և իրավունքի զայրույթը առաջադիմության տարրերից մեկն է: Ինչ ուզում են ասեն, միևնույն է, բայց ֆրանսիական հեղափոխությունը մարդկային ցեղի ամենահզոր քայլն է Քրիստոսի գալուստից հետո: Թերի¹⁶ է, լավ, բայց վսեմ է: Նա դուրս բերեց սոցիալական բոլոր անհայտները: Նա մեղմեց մտքերը, հանգստացրեց, խաղաղեցրեց ու լուսավորեց և քաղաքակրթության անելիքներ սփռեց երկրի վրա: Ֆրանսիական հեղափոխությունը բարյացակամ էր. նա մարդկության պսակադրումն է:

Եպիսկոպոսը չկարողացավ զսպել իրեն ու մոթմոթաց.

— Այո, իսկ 93 թվական¹⁷:

Կոնվանսիոնեղն ուղղվեց իր աթոռի վրա գրեթե սգալի հանդիսավոռությամբ և ինչքան որ մահամերձը կարող է գոչել՝ գոչեց.

— Ա՛, վերջապես հասա՛նք դրան: 93 թվական¹⁷: Սպասում էի այդ բառերին: Մի ամպ էր գոյացել հազար հինգ հարյուր տարվա ընթացքում: Տասնհինգ դար հետո այն պայթեց: Դուք մեղադրում եք որոտը:

Եպիսկոպոսն զգաց, որ մի հարված ստացավ, բայց զսպեց իրեն ու պատասխանեց.

— Դատավորը խոսում է արդարադատության անունից, քահանան՝ գթության անունից, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ավելի բարձր արդարադատություն: Որոտի հարվածը չպետք է սխալվի:

Ապա շեշտակի նայելով կոնվանսիոնեղին՝ ավելացրեց.

— Իսկ Լյուդովիկոս 17-րդը¹⁶:

Կոնվանսիոնեղը մեկնեց ձեռքը և բռնեց Եպիսկոպոսի թևը:

— Լյուդովիկոս 17-րդը: Ասացեք, ո՞ւմ վրա եք լաց լինում: Այդ անմեղ երեխայի¹⁶, լավ, ես էլ ձեզ հետ լաց կլինեմ: Իսկ եթե արքայորդու վրա եք լաց լինում, ապա ես դեռ կմտածեմ: Ինձ համար Կարտուշի¹⁷ եղբայրը, այդ անմեղ երեխան, որ անութներից կախաղան հանվեց Գրևի հրապարակում՝ մինչև որ մահը վրա հասնի, սոսկ այն ոճրի համար, որ Կարտուշի եղբայրն էր, նույնքան ցավալի է, ինչքան Լյուդովիկոս 15-րդի թոռը, այդ անմեղ երեխան, որ նահատակվեց Տամպլի ամրոցում, սոսկ այն ոճրի համար, որ Լյուդովիկոս 15-րդի թոռն էր:

— Պարոն,— ընդհատեց Եպիսկոպոսը,— ես չեմ սիրում այդ երկու անունների զուգորդումը:

— Կարտո¹⁸ ու Լյուդովիկոս 15-րդ: Այս երկուսից ո՞րի համար եք առարկում դուք:

Մի վայրկյան լռություն տիրեց: Եպիսկոպոսը գրեթե զոջացել էր, որ եկել էր, բայց և այնպես զգում էր, որ տարտամ ու տարօրինակ կերպով այլայլվել է:

¹⁶ 1793 թ. Փարիզում գլխատված Լյուդովիկոս 16-րդի որդին, որին էմիգրանտները թագավոր հռչակեցին, բայց նա երկու տարի հետո՝ 1795 թ. մեռավ բանտում:

¹⁷ Լուի Դոմինիկ — գողերի մի բանդայի նշանավոր պարագլուխ, անվամահի ենթարկվեց Գրևի հրապարակում 1721 թ. 28 տարեկան հասակում: Առասպելական հանդգնության և ճարպկության տեր էր: Շ. թ.:

Կոնվանսիոնելը շարունակեց.

— Օ, պարոն հոգևորական, դուք չեք սիրում ճշմարտության խստությունները: Մինչդեռ Քրիստոսը սիրում էր: Նա մի ձող էր վերցնում ու փռաբացում էր տաճարը: Երբ նա ասում էր՝ *Sinite parvulos...*¹⁸, ապա փոքր երեխաների մեջ խտրություն չէր դնում: Նա չէր ճնշվի մոտեցնելու Բարաբբայի¹⁹ որդուն Հերովդեսի ժառանգին: Անմեղությունն ինքնին իր պսակն է, պարոն: Այն փարթամ երևալու կարիք չունի, նույնքան վեհ է ցնցոտիների մեջ, ինչքան արքայական շուշանանիշ հանդերձների մեջ:

— Ճիշտ է,— ասաց եպիսկոպոսը ցածր ձայնով:

— Ես պնդում եմ,— շարունակեց կոնվանսիոնել Ժ-ն:— Դուք հիշատակեցիք Լյուդովիկոս 17-րդին: Եկեք հասկանանք միմյանց: Լանք բոլոր անմեղների, բոլոր նահատակների, բոլոր երեխաների վրա՝ լինեն դրանք հասարակության ստորին կամ վերին շերտերից: Համաձայն եմ: Բայց այդ դեպքում, ինչպես ասացի, պետք է 93 թվականից ետ գնալ և Լյուդովիկոս 17-րդից առաջ պետք է սկսել արցունք թափել: Ես ձեզ հետ կողբամ թագավորների որդիներին՝ եթե միայն դուք էլ ինձ հետ ողբաք ժողովրդի երեխաներին:

— Ես կողբամ բոլորին,— պատասխանեց եպիսկոպոսը:

— Ես էլ,— բացականչեց Ժ-ն,— և եթե նժարն իջնի, ապա դա թող լինի ժողովրդի նժարը: Շատ վաղուց է, որ նա տառապում է:

Նորից լռություն տիրեց: Այս անգամ էլ կոնվանսիոնելը խզեց այն: Հենվելով արմունկին, նա մի քիչ վեր բարձրացավ, իր ծալած ցուցամատով և բթամատով բռնեց այտը, ինչպես անում են մեքենայաբար, երբ հարցաքննում կամ դատում են և հոգեվարքի ողջ եռանդով համակված մի հայացքով հարցաքննեց եպիսկոպոսին: Դա գրեթե նման էր պայթյունի:

— Այո, պարոն, վաղուց է ինչ ժողովուրդը տառապում է: Եվ ապա, լսեք, ի՞նչ եք եկել հարցաքննելու և պատմելու ինձ Լյուդովիկոս 17-րդի մասին: Ես ձեզ չեմ ճանաչում: Այն օրվանից, ինչ այստեղ եմ, ապրում եմ այս որջում մենակ, երբեք ոտքս դուրս չեմ դրել, ոչ ոքի չեմ տեսել, բացի այս երեխայից, որ օգնում է ինձ: Ձեր անունը, ճիշտ է, տարտամորեն հասել է ինձ, և ես պետք է ասեմ, որ վատ չի հիշատակված: Բայց դա ոչինչ չի նշանակում. ճարպիկ մարդիկ միամիտ ժողովրդի վստահությունը շահելու բազմաթիվ միջոցներ ունեն: Ի դեպ, ես չլսեցի ձեր կառքի դղրդյունը, դուք անշուշտ այն թողել եք այս պուրակից դենը՝ ճամփի բաժանման կետում: Կրկնում եմ, ես ձեզ բնավ չեմ ճանաչում: Դուք ասացիք, որ եպիսկոպոս եք, բայց դա ոչ մի տեղեկություն չի հաղորդում ինձ ձեր բարոյականի մասին: Մի խոսքով, ես կրկնում եմ իմ հարցը: Ո՞վ եք դուք: Եպիսկոպոս եք, այսինքն եկեղեցու իշխաններից մեկը, մեկը այն ոսկեճամուկ, զինանշանակիր և ապահովված մարդկանցից, որոնք մեծ հասույթ ունեն. Դիմի եպիսկոպոսությունը տասնհինգ հազար ֆրանկ հիմնական, տասը հազար էլ զանազան եկեղեցական, ընդամենը քսանհինգ հազար եկամուտ ունի, եպիսկոպոսները ճոխ խոհանոց և ոսկեհուր հագուստներով սպասավորներ ունեն, սիրում են լավ ուտել, ուրբաթ օրերը որսի թռչուն են վայելում և պճնված զբոսնում են՝ մի սպասավոր առջևից, մյուսն էլ ետևից,

¹⁸ Լատ. *Sinite parvulos venire ad me* Քրիստոսի խոսքերը՝ թողեք, որ երեխաներն ինձ մոտ գան (ըստ Նոր Կտակարանի):

¹⁹ Բարաբբան մի բանտարկված մարդասպան էր, երբ Քրիստոսին ներկայացրին Պիղատոսին դատելու: Ըստ տեղական սովորության, զատկական տոներին որևէ հանցագործի ազատ էին արձակում: Պիղատոսն առաջարկեց հրեաներին, թե որի՞ն կուզեն ազատ արձակել՝ Բարաբբայի՞ն, թե՞ Քրիստոսին: Նրանք ընտրեցին առաջինին, որն և ազատ արձակվեց (ըստ Նոր Կտակարանի):

շքեղ կառքերով. պալատներ ունեն ու հարստանում են հանուն Հիսուս Քրիստոսի, որ բոքիկ էր քայլում: Դուք թեմական առաջնորդ եք, ունեք հասույթ, պալատ, ձիեր, սպասավորներ, շքեղ ճաշասեղան, կյանքի բոլոր զգայական հաճույքները. դուք այդ բոլորն ունեք, ինչպես ուրիշները և ուրիշների նման էլ վայելում եք դրանք. դա լավ է, բայց դրանք շատ բան են ասում կամ թե ոչ բավականաչափ, սա չի պարզում ինձ ձեր ներքին ու էական արժեքը, մանավանդ, որ դուք եկել եք ինձ իմաստություն բերելու հավանական հավանականությամբ: Վերջապես ո՞ւմ հետ եմ ես խոսում. ո՞վ եք դուք:

Եպիսկոպոսը խոնարհեց գլուխը և պատասխանեց.

— Vermis sum²⁰:

— Գետնի որդը կառքո՞ւմ,— մոլտաց կոնվանսիոնեյը:

Այժմ արդեն կոնվանսիոնեյի գոռոզանալու և եպիսկոպոսի համեստանալու հերթն էր:

Եպիսկոպոսը մեղմ շեշտով պատասխանեց.

— Թող այդպես լինի, պարոն: Բայց բացատրեք ինձ, թե ինչպե՞ս իմ շքեղ կառքը, որ ծառերի ետևում է, իմ ճոխ սեղանը և որսի թռչունները, որ վայելում եմ ուրբաթ օրերը, իմ քսանհինգ հազար եկամուտը և պալատս ու սպասավորներս ապացուցում են, որ գթասիրությունն առաքիությունն չէ, ողորմած լինելը պարտականությունն չէ և 93 թվականն անողորմ չէ:

Կոնվանսիոնեյը ձեռքով շփեց ճակատը կարծես մի ամպ փարատելու համար:

— Նախքան ձեզ պատասխանելը,— ասաց նա,— խնդրում եմ ներել ինձ: Ես մի սխալ գործեցի, պարոն: Դուք իմ տանն եք, ուրեմն իմ հյուրն եք: Ես պարտավոր եմ մեծարող լինել ձեր նկատմամբ: Դուք վիճարկում եք իմ հայացքները, ուստի անհրաժեշտ է, որ ես սահմանափակվեմ լույս ձեր դատողությունների դեմ մարտնչելով: Ձեր հարստությունն ու վայելքներն այնպիսի առավելություններ են, որ ես վիճաբանության մեջ ձեր դեմ ուղղեցի, սակայն կիրթ ճաշակը պահանջում է, որ չօգտագործեմ դրանք: Խոստանում եմ, որ այլևս ի չար չեմ գործադրի դրանք:

— Շնորհակալ եմ,— ասաց եպիսկոպոսը:

Ժ-ն շարունակեց.

— Վերադառնանք ձեր պահանջած բացատրությանը: Որտե՞ղ հասանք: Ի՞նչ էիք ասում ինձ... որ 93 թվականն անողորմ էր:

— Այո, անողորմ,— ասաց եպիսկոպոսը:— Ի՞նչ կասեք գիլիոտինին ծափահարող Մարատի մասին:

— Իսկ ի՞նչ կասեք դուք Բոսյուեի²¹ մասին, որ Te Deum²² էր երգում դրագոնադների²³ առթիվ:

²⁰ Որդ եմ (լատ.):

²¹ Ժակ Բոսյուե — ֆրանսիացի նշանավոր կրոնական հոեետոր, քարոզիչ և եպիսկոպոս, բացարձակ միապետության տեսաբանը (1627—1704):

²² Լատ. «Ձքեզ, տեր, փառավորենք» աղոթքի սկզբի բառերը:

²³ Դրագոններից կազմված զորամասեր, որ դաժանորեն հետապնդում էին հարավային Ֆրանսիայում բողոքականներին՝ Նանտի հրովարտակը ջնջվելուց հետո: Մ. թ.:

Պատասխանը խիստ էր, բայց նպատակին էր դիմում սրածայր պողպատի կարծրությամբ: Եպիսկոպոսը ցնցվեց դրանից և ոչ մի առարկություն չգտավ, բայց վիրավորվեց Բոսյունեին այդ ձևով անվանելուց: Ամենապայծառ մտքերն էլ իրենց ֆետիշն ունեն և երբեմն տարտամորեն խոցված են զգում իրենց, երբ տրամաբանության օրենքը չի հարգվում:

Կոնվանսիոնելն սկսում էր հնալ. հոգեվարքի շնչահեղձությունը, որ խառնվում է վերջին շնչին, ընդհատում էր նրա ձայնը, բայց դեռ նրա աչքերի մեջ երևում էր հոգու կատարյալ պայծառություն: Նա շարունակեց.

— Մի քիչ էլ խոսենք այս խնդրի մասին, ինձ հաճելի է դա: Հեղափոխությունից դուրս, որ իր ամբողջության մեջ վերցրած, մարդկային մի մեծ գործ է, 93 թվականն, ավաղ, մի պարզ ռեպլիկ է: Դուք այն գտնում եք անողոք, իսկ ողջ միապետությունը, պարոն: Կարիեն բանդիտ է, բայց ի՞նչ անուն կտայիք Մոնտրվելին: Ֆուքիե-Տինվիլը սինլքոր է, բայց ի՞նչ է ձեր կարծիքը Լամուանյոն-Բավիլի մասին:

Մայառը զարհուրելի է, բայց ասեք խնդրեմ, Մո-Տավա՞նը: Հայր Դյուշենը վայրագ է, բայց ի՞նչ ածական կտայիք հայր Լետելիեին: Ժուրդան-Գլխահատը գազան է, բայց նվազ, քան պարոն մարքիզ դը Լուվուան: Պարոն, պարոն, ես ցավում եմ Մարի-Անտուանետին՝ արքիդքսուհուն և թագուհուն, բայց ցավում եմ նաև այն խեղճ հուզենոտ կնոջը, որը 1685 թվականին, Լյուդովիկոս Մեծի օրոք, մինչև գոտկատեղը մերկացված կապվեց պոնին, մինչդեռ երեխային պահել էին նրանից քիչ հեռու: Նրա ստիներներն ուռչում էին կաթից, իսկ սիրտն՝ անձկությունից: Քաղցած ու գունատ երեխան տեսնում էր մոր ստիներները և հոգեվարքի միջից ճչում էր, իսկ այդ միջոցին դահիճն ասում էր մայր ու ստնտու կնոջը. «Ուրացի՛ր», նրա ընտրությանը թողնելով երեխայի կամ իր խղճի մահը: Ի՞նչ կասեք մոր վրա գործադրված այս Տանտալյան²⁴ տանջանքին: Պարոն, լավ ըմբռնեք սա. ֆրանսիական հեղափոխությունն իր դրդապատճառներն ուներ: Ապագան կների նրա զայրույթը: Նրա հետևանքը լավագույն կյանքն է: Նրա ամենադաժան հարվածներից փաղաքշանք կծնվի մարդկության համար: Ես կարճ եմ կապում, կանգ եմ առնում և գոհ եմ: Բացի դրանից, ես մեռնում եմ:

Եվ դադարելով եպիսկոպոսին նայելուց, վերջացրեց իր միտքը հետևյալ խիստ հանգիստ բառերով.

— Այո, առաջադիմության վայրագությունները կոչվում են հեղափոխություն: Երբ նրանք վերջանում են, մարդիկ խոստովանում են. մարդկությունը խոշտանգվեց, բայց առաջ ընթացավ:

Կոնվանսիոնելը չէր հասկանում, որ հաջորդաբար, մեկը մյուսի ետևից գրավում էր եպիսկոպոսի բոլոր ներքին ամրոցները: Բայց մնացել էր մեկը և այդ մեկից՝ գերապատիվ Բիենվյուտի դիմադրության գերագույն աղբյուրից դուրս եկավ այս խոսքը, որի մեջ վերստին երևաց սկզբի ողջ անողոքությունը:

— Առաջադիմությունը պետք է հավատա աստծո: Բարին չի կարող ամբարիշտ ծառայող ունենալ: Անաստվածը մարդկային ցեղի վատ առաջնորդ է:

²⁴ Ըստ հունական դիցաբանության՝ Տանտալը Լիդիայի (Փոքր Ասիա) թագավորն էր: Մի անգամ, երբ աստվածներն այցի եկան նրան՝ նա հրամցրեց նրանց իր հարազատ որդու՝ Պելոպսի անդամները, փորձելու համար նրանց աստվածությունը: Յուպիտերը նրան գցեց Տարտարոս՝ դատապարտելով անվերջ տանջվել մերթ ծարավից, մերթ քաղցից: *Օ. թ.*:

Ժողովրդի ծեր ներկայացուցիչը չէր պատասխանում: Նա մի ցնցում ունեցավ, ապա նայեց երկնքին և մի արցունք դանդաղորեն ծայր տվեց այդ հայացքի մեջ: Երբ կռպերը լցվեցին, արցունքը հոսեց նրա կապարագույն այտից, և նա գրեթե թոթովելով, ցածր ձայնով ու կարծես ինքն իր հետ խոսելով, հայացքը կորած հեռունեքում՝ ասաց.

— Ով դու, ով իդեալ, միայն դու գոյություն ունես:

Եպիսկոպոսը մի աննկարագրելի ցնցում ունեցավ:

Մի փոքր լռությունից հետո մահամերձը մի մատը բարձրացրեց դեպի երկինքն ու ասաց.

— Անեզրությունը կա: Նա այնտեղ է: Եթե անեզրությունն իր եսը չունենար՝ մեր եսը կլիներ նրա սահմանը. նա այլևս անեզր չէր լինի, այլ խոսքով՝ նա չէր լինի: Ուրեմն նա կա: Ուրեմն նա մի ես ունի: Անեզրի այդ եսը աստվածն է:

Մահամերձն այս խոսքերն արտասանեց բարձր ձայնով և հափշտակության սարսուռով՝ կարծես տեսնում էր մեկին: Երբ նա վերջացրեց խոսելը՝ աչքերը փակվեցին: Գործադրած ճիգն ուժասպառ էր արել նրան: Ակներն էր, որ այդ մեկ ընկալում նա ապրեց մնացած մի քանի ժամը: Գերագույն վայրկյանը մոտենում էր:

Եպիսկոպոսն այդ հասկացավ, բռնեց ստիպողական էր, իսկ նա եկել էր որպես քահանա: Ծայրահեղ սառնությունից նա աստիճանաբար անցել էր ծայրահեղ հուզմունքի: Նա նայեց այդ փակ աչքերին, բռնեց այդ խորշումած ու սառցանման ձեռքը և կռացավ մահամերձի վրա:

— Այս պահն աստծուն է պատկանում: Չե՞ք կարծում, որ ցավալի կլինեք, եթե մեր այս հանդիպումը գուր անցներ: Կոնվանսիոնելն աչքերը բացեց: Նրա դեմքի վրա դրոշմված էր մահվան ստվերով համակված մի խստություն:

— Պարոն եպիսկոպոս,— ասաց նա դանդաղությամբ, որն առաջանում էր գուցե էլ ավելի հոգու արժանապատվությունից, քան ուժասպառությունից,— ես անց եմ կացրել իմ կյանքը խոկումների, ուսումնասիրության և հայեցողության մեջ: Վաթսուն տարեկան էի, երբ երկիրս ինձ կանչեց ու հրամայեց խառնվել իր գործերին: Ես հնազանդվեցի: Չարաշահություններ կային այնտեղ, ես պայքարեցի դրանց դեմ. բռնակալություններ կային, ես խորտակեցի, կային իրավունքներ ու սկզբունքներ, ես հռչակեցի դրանք ու ջատագովեցի: Մեր երկիրը նվաճված էր, ես այն պաշտպանեցի: Ֆրանսիան սպառնալիքի տակ էր, ես դեմ արի իմ կուրծքը: Ես հարուստ չէի, այժմ աղքատ եմ: Ես եղել եմ պետության իշխանավորներից մեկը, գանձարանի նկուղներն այնքան լցվել էին դրամով, որ ստիպված էին հենակներ խփել պատերին, որոնք քիչ էր մնացել փուլ գային ոսկու և արծաթի ծանրությունից, մինչդեռ ես ճաշում էի Արբը-Մեք փողոցում՝ քսաներկու սուտով: Ես օգնել եմ ճնշվածներին ու մեղմել եմ տառապյալների վիշտը: Ճիշտ է, ես պատռել եմ տաճարի սփռոցը, բայց հայրենիքի վերքերը կապելու համար: Ես միշտ էլ պաշտպանել եմ մարդկության առաջընթացը դեպի լույսը և երբեմն էլ անողոք կերպով դիմադրել եմ առաջադիմությանը, երբ տեսել եմ, որ նա անգութ է: Երբեմն էլ անհրաժեշտության դեպքում պաշտպանել եմ իմ սեփական հակառակորդներին՝ ձեր կարգի մարդկանց: Ֆլանդրիայում, Պետեգեմում, Ճիշտ այն տեղը, ուր գտնվում էր մերովինգյան²⁵ թագավորների ամառային պալատը, կար մի կանանց վանք՝ սուրբ Կլարայի աբբայությունը, որ ես փրկեցի 1793 թվին: Ըստ ուժերիս կատարել եմ իմ պարտականությունը և լավություն եմ արել՝ ինչքան կարողացել եմ: Դրանից հետո արտաքսվել եմ, հետապնդվել, ծաղրվել, այպանվել, անիծվել ու բանադրվել: Երկար տարիներ ի վեր արդեն, իմ

²⁵ Ֆրանկների առաջին թագավորական դինաստիան (5—8-րդ դար):

ալեհեր դրությամբ, զգում եմ, որ շատ մարդիկ կարծում են, թե իրավունք ունեն ինձ արհամարհել. իսկ տգետ ու աղքատ ամբոխի համար ես գեհենապարտի դեմք ունեմ և առանց որևէ մեկին ատելու՝ ընդունում եմ ատելության ստեղծած մեկուսացումը: Այժմ ես ութսունվեց տարեկան եմ և մեռնում եմ: Ի՞նչ եք եկել պահանջելու ինձնից:

— Ձեր օրհնությունը,— պատասխանեց եպիսկոպոսը:

Եվ չոքեց նրա առջև:

Երբ եպիսկոպոսը գլուխը բարձրացրեց՝ կոնվանսիոնելի դեմքը վեհատեսիլ էր դարձել: Նա շունչը փչել էր:

Եպիսկոպոսը վերադարձավ տուն խորապես թաղված զանազան մտքերի մեջ: Ողջ գիշերը նա անցկացրեց աղոթելով: Հաջորդ օրը մի քանի համարձակ հետաքրքրասերներ փորձեցին խոսել նրա հետ կոնվանսիոնել Ժ-ի մասին, բայց նա սահմանափակվեց ցույց տալով երկինքը: Այդ բուպեից սկսած նա կրկնապատկեց դեպի երեխաներն ու տառապյալները տաժած քնքշությունն ու սերը:

«Օեր սրիկա Ժ-ին» ուղղված որևէ ակնարկ նրան զցում էր մի բացառիկ մտազբաղության մեջ: Կարելի էր ասել, որ եպիսկոպոսի կատարելությանը նպաստող պատճառներից մեկն էլ այն էր, որ նրա միտքն ու խիղճը շփվեցին կոնվանսիոնելի մեծ մտքի ու խղճի հետ:

Այս «հովվական այցելությունը», բնականաբար, առիթ տվեց տեղական հասարակայնության փոքր շրջանակների փսփսոցին.

«Այդպիսի մահամերձի գլխավերևն արդյո՞ք եպիսկոպոսին վայել տեղ է: Հավանաբար հույս չկար, որ նա դարձի կգա: Այդ բոլոր հեղափոխականներն էլ հավատամերժ են: Ուրեմն էլ ի՞նչ կարիք կար գնալու այնտեղ: Ի՞նչ կար այդտեղ տեսնելու: Պետք է, որ շատ հետաքրքրական լինի տեսնել, թե ինչպես սատանան առնում է այդպիսի մարդու հոգին»:

Մի անգամ մի այրի ազնվականուհի, որ իր ավելոցփեղությունները սրախոսություններ էր համարում, հետևյալ լայիք խոսքն ասաց նրան. «Գերապատիվ հայր, շատերը հարցնում են, թե Ձեր մեծությունը ե՞րբ է կարմիր գդակ դնելու»²⁶:

— Օ, այ քեզ վառ գույն,— պատասխանեց եպիսկոպոսը:— Բարեբախտաբար նրանք, ովքեր այդ գույնն արհամարհում են գդակի վրա, այն հարգում են գլխարկի մեջ:

XI

ՄԻ ՎԵՐԱՊԱՆՈՒՄ

Միավելու վտանգի մեջ կրնկնեինք, եթե դրանից եզրակացնեինք, թե գերապատիվ Բիենվյուն «փիլիսոփա եպիսկոպոս» էր կամ «հայրենասեր երեց»: Նրա հանդիպումը, որ գրեթե կարելի էր կոչել նրա գոգումը կոնվանսիոնել Ժ-ի հետ, մի տեսակ զարմանք ազդեց նրան, որը նրան էլ ավելի մեղմ դարձրեց: Այս է բոլորը:

²⁶ 1789 թվականի հեղափոխության ժամանակ հանրապետականներն ու հայրենասերները կարմիր գդակ (bonnet) էին դնում: Օ. թ.:

Թեև գերապատիվ Բիենվյուն էլ պակաս քաղաքական մարդ չի եղել, այնուամենայնիվ թերևս տեղին է շատ կարճ կերպով նշելու, թե ինչ է եղել նրա վերաբերմունքն այդ ժամանակվա դեպքերին, ենթադրելով, որ գերապատիվ Բիենվյուն երբեք չի մտածել որևէ վերաբերմունք ունենալու մասին:

Ուստի մի քանի տարով ետ գնանք:

Պարոն Միրիելի եպիսկոպոսական աթոռ բարձրանալուց որոշ ժամանակ հետո կայսրը նրան դարձրեց կայսրության բարոն բազմաթիվ այլ եպիսկոպոսների հետ միաժամանակ: Ինչպես գիտենք, պապի ձերբակալությունը տեղի ունեցավ 1809 թվականի հուլիսի 5-ից 6-ի գիշերը: Այս առթիվ Նապոլեոնը կանչեց պարոն Միրիելին Փարիզում գումարված Ֆրանսիայի ու Իտալիայի եպիսկոպոսների սինոդին: Այս սինոդը տեղի ունեցավ Նոտր-Դամ եկեղեցում և առաջին նիստը գումարվեց 1811 թ. հունիսի 15-ին, կարդինալ Ֆիշի նախագահությամբ: Պարոն Միրիելը մեկն էր այդտեղ հավաքված իննսունհինգ եպիսկոպոսներից: Բայց նա մասնակցեց միայն մեկ նիստի և երեք-չորս մասնավոր կոնֆերանսների: Լինելով մի լեռնային թեմի եպիսկոպոս, ապրելով բնությանը խիստ մոտիկ, գեղջկականության ու զրկանքի մեջ, թվում էր, որ այդ բարձրադիր անձնավորությունների մեջ նա մտցնում էր այնպիսի գաղափարներ, որ փոխում էին ժողովրդի մթնոլորտը: Նա շուտով վերադարձավ Դիյն: Նրան հարցրին այս հապճեպ վերադարձի պատճառը և նա պատասխանեց. «Ես ճնշում էի նրանց: Իմ միջոցով դրսի օդ էր փչում նրանց վրա: Բաց դռան ազդեցություն էի գործում նրանց վրա»:

Մի ուրիշ անգամ նա ասաց. «Ի՞նչ ասեմ, այդ գերապատիվներն իշխաններ են, իսկ ես մի խեղճ գեղջուկ քահանա»:

Իրողությունն այն է, որ ինքը դուր չէր եկել նրանց: Ի միջի այլ տարօրինակ բաների, մի անգամ, երբ նա գտնվում էր ամենից ավելի բարձրաստիճան պաշտոնակիցներից մեկի մոտ, բերանից թոցրել էր հետևյալ խոսքը. «Գեղեցիկ ժամացույցներ, գեղեցիկ գորգեր, ոսկեճամուկ նշանազգեստներ: Գլխացավանք բաներ են դրանք: Օ՛, ինչպես ես չեի ցանկանում այս բոլոր ավելորդ բաներն ունենալ, որպեսզի այդ պատճառով շարունակ ականջիս չգոռան, թե քաղցած մարդիկ կան, մրսող մարդիկ կան, աղքատներ կան, խեղճեր կան»:

Անցողիկ կերպով ասենք, որ շքեղությունն ատելը խելացի ատելություն չէր լինի: Այդ ատելությունը կառաջացներ և արվեստների ատելություն: Սակայն եկեղեցու ներկայացուցիչների մոտ, արարողություններից ու ներկայացումներից դուրս՝ պերճանքն անհանդուրժելի է: Նա կարծես ծնեցնում է իրապես քիչ գթասիրական սովորություններ: Պճնասեր քահանան խելքից դուրս բան է: Քահանան պետք է աղքատներին մոտ լինի: Արդ, ինչպե՞ս կարելի է անընդհատ, գիշեր-ցերեկ կաշել բոլոր զրկանքներին, բոլոր դժբախտություններին ու կարիքներին՝ առանց մի քիչ իրենց վրա զգալու այդ թշվառությունը, ինչպես աշխատանքի փոշին: Կարելի՞ է պատկերացնել այնպիսի մարդ, որ կրակարանի մոտ լինի և չչոզի: Կարելի՞ է պատկերացնել մի բանվոր, որ շարունակ աշխատում է հնոցի մոտ, և ոչ մազն է խանձված, ոչ եղունգն է սևացած, մի կաթիլ քրտինք չունի ճակատին և ոչ էլ մի հատիկ մոխիր՝ դեմքի վրա: Քահանայի, մանավանդ եպիսկոպոսի գթասիրության առաջին ապացույցը աղքատությունն է:

Այս բանն էր անկասկած մտածում Դիյնի եպիսկոպոսը:

Կարիք չկա հավատալ նաև, որ նա բաժանում էր այն մի քանի նուրբ կետերը, որ մենք անվանում ենք «դարի գաղափարներ»: Նա քիչ էր խառնվում դարի աստվածաբանական վեճերին և լռում էր այն հարցերի մասին, որոնց մեջ եկեղեցին ու պետությունն անվանարկված էին. բայց եթե շատ

ստիպելին, կպարզվեր, որ նա ավելի շուտ անդրլեռնյան էր, քան գալլական²⁷: Քանի որ մենք գծում ենք նրա պատկերը և չենք ուզում որևէ բան թաքցնել, ապա պարտավոր ենք ասել, որ նա սառն վերաբերմունք ունեցավ Նապոլեոնի հանդեպ, երբ նրա աստղն սկսեց աղոտանալ 1813 թվականից սկսած նա հավանություն տվեց կամ ծափահարեց բոլոր թշնամական ցույցերին: Նա հրաժարվեց նրան տեսնել, երբ վերջինս վերադառնում էր Էլբա կղզուց և անցնում էր Դիյոնով: Նա ձեռնպահ մնաց հարյուր օրվա ընթացքում իր թեմում հանրային աղոթքների կարգադրություն անելուց:

Բացի իր Բատիստին քրոջից, նա ուներ նաև երկու եղբայր, մեկը գեներալ, մյուսը նահանգապետ և բավական հաճախակի նամակ էր գրում նրանց: Որոշ ժամանակ նա խստություն ցույց տվեց առաջինին, որովհետև Պրովանսում, Կանի ցամաքահանման ժամանակ լինելով մի զորամասի հրամանատար՝ գեներալը զուլի էր կանգնել հազար երկու հարյուր հոգու և հետապնդել էր կայսրին, ինչպես մի մարդու, որին ոչ թե ուզում էս բռնել, այլ թույլ տալ, որ փախչի: Նրա թղթակցությունն ավելի սիրալիր մնաց մյուս եղբոր՝ նախկին նահանգապետի հետ, որը, լինելով ուղղամիտ ու արժանապատիվ մարդ, քաշված կյանք էր վարում Փարիզում, Կասետ փողոցում:

Այսպես ուրեմն, գերապատիվ Բիենվյուն էլ ունեցավ իր քաղաքական տարաձայնությունները, դառնության ժամը, մոռալ ստվերը: Ըոպեի կրքերի ստվերն անցավ հավիտենական բաներով զբաղված այս հեզ ու մեծ հոգու միջով: Այդպիսի մարդը, անկասկած, ավելի լավ կաներ, եթե քաղաքական կարծիքներ չունենար: Թող մեր այս միտքը սխալ չհասկացվի. մենք երբեք չենք շփոթում այն, ինչ անվանում են «քաղաքական կարծիք»՝ առաջադիմության մեծ ձգտումի հետ, հայրենասիրական, դեմոկրատական ու մարդկային վսեմ հավատքի հետ, որը մեր օրերում յուրաքանչյուր վեհանձն մտքի հիմքը պետք է լինի: Առանց խորացնելու այն հարցերը, որոնք անուղղակի կերպով միայն կապ ունեն այս գրքի հետ, մենք պարզապես հետևյալը կասենք:— Լավ կլիներ, եթե գերապատիվ Բիենվյուն ռոյալիստ եղած չլիներ և նրա հայացքը մի վայրկյան իսկ շուտ չգար այն պայծառ հայեցողությունից, որտեղ, մարդկային բաների փոթորկոտ եռուզեռից վեր, որոշակի շողշողում են այս երեք ջինջ լույսերը՝ ճշմարտություն, արդարություն և գրասիրություն:

Համաձայնելով հանդերձ, որ բնավ էլ քաղաքական պաշտոնի համար աստված չէր ստեղծել գերապատիվ Բիենվյունին, մենք կհասկանանք ու կողջունենք հանուն իրավունքի ու ազատության արած բոլորքը, հպարտ ընդդիմությունը և կորստաբեր ու արդար դիմադրությունը՝ ամենագոր Նապոլեոնին: Բայց ինչ որ մեզ հաճելի է բարձրացողների նկատմամբ, նվազ հաճելի է ընկնողների նկատմամբ: Մենք մարտը սիրում ենք միայն այնքան, ինչքան որ վտանգ կա և բոլոր դեպքերում էլ միայն առաջին ժամվա մարտնչողներն իրավունք ունեն վերջին ժամը բնաջնջել: Ով որևէ մեկի բարեկեցության ժամանակ համառ մեղադրող չի եղել, պետք է լռի նրա կործանման ժամանակ: Հաջողությունն ամբաստանողը միայն անկման օրինական դատավորն է: Ինչ վերաբերում է մեզ, ապա երբ նախախնամությունը հարվածում է ու պատժում, թողնում ենք, որ պատժի: 1812 թվականն սկսում է մեզ զինաթափ անել: 1813 թվականին, այդ լռակյաց և վրա հասած աղետներից սիրտ առածօրենսդիր ժողովի լռության փոքրոգի խզումը միայն գայրացրեց, և դրան ծափահարելը սխալ էր: 1814 թվականին պետք էր զգվել այդ դավաճանող մարշալներից, նույնպես պետք էր զգվել մի ստորությունից մյուսին անցնող այդ սենատից, որը Նապոլեոնին աստվածացնելուց հետո նախատում էր նրան: 1815 թվականին, երբ գերագույն աղետներն օդում էին, երբ Ֆրանսիան սարսռում էր նրանց չարագուշակ մոտեցումից, երբ տարտամորեն կարող էիր որոշել Նապոլեոնի առջև բացված Վաթերլոոն, ժողովրդի ու բանակի կսկծալի ցնծությունը ճակատագրի

²⁷ Անդրլեռնյան կամ անդրալպյան, պապի գերիշխանության կողմնակից, պապամոլ: Գալլական կամ ֆրանսիական եկեղեցի: Գալլականները ձգտում են ֆրանսիական եկեղեցին անջատել և դուրս հանել Հռոմի պապի իշխանությունից: *Մ. թ.*:

դատապարտածի նկատմամբ ոչ մի ծաղրելի բան չունեն և բռնակալի նկատմամբ արված յուրաքանչյուր վերապահման դեպքում իսկ Դիյնի եպիսկոպոսի սիրտն ունեցողը թերևս իրավունք չունեն չճանաչել, թե ինչ վսեմ ու հուզող բան ունեն անդունդի եզրին կանգնած մի մեծ ազգի և մի մեծ մարդու սեղմ գրկախառնությունը:

Բացի սրանցից, եպիսկոպոսը յուրաքանչյուր դեպքում կար և մնաց արդար, ճշմարտասեր, ուշիմ, խոնարհ ու արժանապատիվ, բարեգործ ու բարյացակամ, որն ինքնին մի այլ բարեգործություն է: Դա քահանա էր, իմաստուն էր ու մարդ էր: Նույնիսկ պետք է ասել և այն, որ այն քաղաքական կարծիքի նկատմամբ էլ, որի համար մենք կշտամբեցինք քիչ առաջ նրան և տրամադիր ենք գրեթե խստորեն ասել՝ նա ներող էր ու դյուրակամ, թերևս ավելի, քան մենք, որ խոսում ենք այստեղ:

Քաղաքապետարանի դռնապանն իր պաշտոնն ստացել էր կայսրից: Դա հին թիկնապահ գնդի մի ծեր ենթասպա էր, Առուստելիցի լեգեոներներից և արծվի նման բռնապարտիստ: Առիթը ներկայանալիս այդ խեղճ մարդը բերանից չստածված խոսքեր էր փախցնում, մի բան, որ այդ ժամանակվա օրենքը որակում էր իբրև գայթակղիչ խոսքեր: Այն օրվանից, ինչ կայսեր կիսադեմն անհետացել էր Պատվո լեգեոնի խաչի վրայից, նա այլևս համազգեստ չէր հագնում, որպեսզի հարկադրված չլինի խաչը կրել: Նա ինքն էր երկյուղածորեն հանել խաչի վրայի կայսերական պատկերը, որ Նապոլեոնն էր տվել նրան և որից մի ծակ էր գոյացել, իսկ նա չէր ուզեցել որևէ բան դնել դրա տեղը: «Ավելի շուտ կմեռնեմ,— ասում էր նա,— քան սրտիս վրա կկրեմ երեք դողոշներին»: Նա հաճությամբ բարձրաձայն ծաղրում էր Լյուդովիկոս 18-րդին: «Անգլիական սոնապաններով ծեր հողատապի՝ կը²⁸,— ասում էր նա,— թող կորչի գնա Պրուսիա իր քոշմորութի²⁹ հետ»: Երջանիկ էր զգում իրեն, որ կարողանում էր միևնույն անեծքի մեջ միացնել իրեն ամենից ատելի երկու բան, այն է՝ Պրուսիան ու Անգլիան: Նա այնքան խոսեց այս ձևով, որ պաշտոնը կորցրեց: Եվ ահա առանց մի կտոր հացի ընկավ փողոց՝ կնոջ ու երեխաների հետ: Եպիսկոպոսը կանչել տվեց նրան, մեղմորեն հանդիմանեց ու նշանակեց մայր եկեղեցու դռնապան:

Ինը տարվա ընթացքում իր սուրբ գործերով և քաղցրաբարո վերաբերմունքով գերապատիվ Բիենվյուն ողջ քաղաքը լցրել էր մի տեսակ մեղմ ու որդիական հարգանքով: Նույնիսկ նրա վերաբերմունքը Նապոլեոնի հանդեպ ընդունեց ու լռելյայն ներեց ժողովուրդը, այդ բարի ու թույլ հոտը, որ պաշտում էր իր կայսրին, բայց սիրում էր եպիսկոպոսին:

XII

ԳԵՐԱՊԱՏԻՎ ԲԻԵՆՎՆՅՈՒՆ ԱՌԱՆՁՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրեթե միշտ էլ որևէ եպիսկոպոսի շուրջ կա փոքր աբբաների մի դասակ, ինչպես որևէ գեներալի շուրջ՝ երիտասարդ սպաների մի խումբ: Հենց սրանց մասին է խոսել մի տեղ երանելի սուրբ Ֆրանսուա դը Մալը և անվանել է «դեղնակտուց քահանաներ»: Յուրաքանչյուր ասպարեզ ունի իր թեկնածուները, որոնք դառնում են եկողների շքախումբը: Չկա որևէ հզորություն, որ իր մարդիկ չունենա, չկա որևէ հարուստ, որ իր պնակալեզները չունենա: Ապագա փնտրողները թռչկոտում են չքնաղ ներկայի շուրջ: Յուրաքանչյուր թեմ ունի իր շտաբը: Յուրաքանչյուր քիչ ազդեցիկ եպիսկոպոս ունի պատանի քերթե-ճեմարանականներից կազմված պահակախումբ, որ նայում է չորս կողմը, կարգուկանոն է պահպանում եպիսկոպոսական պալատում և պահակ է կանգնում

²⁸ Հողատապով տառապող, բնագրում geux:

²⁹ Բույս է: Ունի բազմաթիվ մանր թերթիկներից ու ցողուններից կազմված փնջանման ծաղիկ: Բնագրում salsifis:

գերապատվի ժպիտի շուրջ: Հաճենալ որևէ եպիսկոպոսի, դա ենթադրարի համար ոտն ասպանդակ դնել է նշանակում: Պետք է ճամփան հարթել. առաքելությունը չի արհամարհում կանոնիկոսությունը:

Ճիշտ այնպես, ինչպես այլ տեղերում կան մեծ գդակներ, եկեղեցում էլ կան մեծ խույրեր: Սրանք ապարանքներում ապրող եպիսկոպոսներն են, հարուստ, եկամուտներով ապահովված, ճարպիկ, բարձր դասում ընդունված, որոնք անկասկած գիտեն աղոթել, բայց գիտեն նաև միջնորդել, մի ամբողջ թեմի՝ ընդունելությունների համար սպասել տալու դեպքում շատ քիչ խղճահարվել, որոնք շաղկապ են ավանդատան ու դիվանագիտության միջև, ավելի շուտ աբբա են՝ քան քահանա, ավերի շուտ առաջնորդ՝ քան եպիսկոպոս: Բախտավոր է այն մարդը, որ մոտենում է նրանց: Լինելով ազդեցիկ մարդիկ, նրանք սփռում են իրենց շուրջը կամակատարների, հոժարափայլների, և դուր գալ իմացող ողջ երիտասարդության վրա՝ չաղ ծխերը, կանոնիկոսությունները, սարկավագապետությունները, երիցություններն ու մայր եկեղեցուները՝ սպասելով միաժամանակ եպիսկոպոսական պատիվներին: Իրենք առաջ գնալով՝ առաջ են մղում նաև իրենց արքանյակներին. սա շարժման մեջ գտնվող մի ամբողջ արեգակնային սիստեմ է: Իրենց շողշողումից շառագունում է և իրենց շքախումբը: Իրենց բարեկեցությունը հաց է բրդում նաև կուլիսներին, փոքրիկ, բայց լավ առաջաշունների ձևով: Ինչքան մեծ է մեծավորի թեմը՝ այնքան էլ մեծ է շնորհընկալի ծուխը: Եվ հետո, չէ՞ որ Հռոմն այնտեղ է: Այն եպիսկոպոսը, որ կարող է դառնալ արքեպիսկոպոս, արքեպիսկոպոսը՝ կարդինալ, ձեզ կտանի որպես պապընտրի փոքրավոր, դուք կմտնեք տասներկուսի աստյանը, պալիումի³⁰ կարժանանաք, և ահա դարձաք դատավոր, դարձաք պապի սենեկապետ, մոնսինյոր, և Ձերդ Մեծությունից մինչև Ձերդ Գերագանցություն միայն մի քայլ կա, իսկ Գերագանցությունից մինչև Սրբություն՝ միայն մի քվեարկության ծուխը: Յուրաքանչյուր կնգուղ կարող է խույր երագել: Մեր օրերում քահանան միակ մարդն է, որ կարող է կանոնավոր ձևով թագավոր դառնալ, այն էլ ինչ թագավոր, գերագույն թագավորը: Տենչանքների ինչպիսի տնկարան է հանդիսանում ուրեմն հոգևոր դպրոցը: Քանի-քանի կարմրած տիրացուներ ու երիտասարդ արքաներ կրում են իրենց գլխի վրա Պեռետի մի կճուճ կաթը³¹: Ինչպես փառասիրությունը հեշտորեն հորջորջվում է որպես կոչում, և ո՞վ գիտի, թերևս անկեղծորեն և ինքնին խաբվում է՝ այդ երանելի փառասիրությունը:

Խոնարհ, աղքատ ու առանձնացած գերապատիվ Բիենվնյուն չէր հաշվվում այն մեծ խույրերի մեջ: Սա նկատվում էր երիտասարդ քահանաների բացարձակ բացակայությունից նրա շուրջը: Մենք տեսանք, որ Փարիզում «նա հաջողություն չունեցավ»: Որևէ ապագա չէր մտածում պատվաստվել այս մենակյաց ծերունու վրա: Որևէ փառասիրության ծիլ նրա ստվերի տակ կանաչելու խենթությունը չէր անում: Նրա կանոնիկոսներն ու ավագերեցները բարի ծերունիներ էին, նրա նման մի քիչ ժողովրդի գավակներ, նրա նման այս թեմում մեծացած և առանց կարդինալության ձգտում ունենալու և նմանում էին իրենց եպիսկոպոսին, այն տարբերությամբ միայն, որ սրանք վերջացած, իսկ նա ավարտված մարդ էր: Այնքան լավ զգացվում էր, թե անհնար է աճել գերապատիվ Բիենվնյուի մոտ, որ նրա ձեռնադրած երիտասարդները հանձնարարություն էին ստանում էքսի կամ Օշի եպիսկոպոսների մոտ և շուտով հեռանում էին այդտեղից, որովհետև վերջ ի վերջո, կրկնում ենք, ուզում էին առաջ քաշվել: Անձնուրացության նուպայի մեջ ապրող սուրբը վտանգավոր հարևան է. նա կարող է վարակման միջոցով անբուժելի աղքատություն, առաջ ընթանալու օգտակար հողերի գոսություն հաղորդել մի ուրիշի: Մի խոսքով, ավելի հրաժարում,

³⁰ Սպիտակ, բրդե մի երիզ, վրան սև խաչ նկարված, որ պապը կրում է իր քահանայապետական հագուստների վրա և ուղարկում է բոլոր արքեպիսկոպոսներին ու մի քանի մենաշնորհյալ եպիսկոպոսների:

³¹ Ակնարկում է ժողովրդական հեքիաթը (Կաթը կծախեմ, էլի կով կառնեմ, կովերը կշատանան, հոտ կդառնան... Այդ միջոցին կճուճն ընկնում է ու կտրվում):

քան նա ուզում է: Եվ դրա համար էլ փախչում էին այս քոսոտ առաքինությունից: Դրանից էլ առաջացել է գերապատիվ Բիենվնյուի առանձնությունը: Մենք ապրում ենք մի մթագնած հասարակության մեջ: Հաջողություն ունենալ, ահա այն կրթությունը, որ ապականությունը շիրտ շիրտ ավանդում է ամենին:

Անցողիկ կերպով ասենք, որ բավական զգվելի բան է հաջողությունը: Նրա կեղծ նմանությունն արժանիքին՝ խաբում է մարդկանց: Ամբոխի համար հաջողությունը գրեթե նույնն է, ինչ որ գերազանցությունը: Հաջողությունը՝ տաղանդի այս նմանակերպը, մի խաբվող ունի — պատմությունը: Միայն Յուվենալն ու Տակիտոսն են դժգոհում նրանից: Մեր օրերում որևէ քիչ-շատ պաշտոնական փիլիսոփայություն մտնում է նրա՝ պատմության մոտ ծառայության, հաջողության նշանագրեստ է հագնում և նրա նախասենյակի սպասավորությունն է կատարում: Հաջողեցեք — դա է տեսությունը: Բարեկեցությունը ենթադրում է ընդունակություն: Շահեք վիճակախաղում, և դուք արդեն ճարպիկ մարդ եք: Խաբողը մեծարվում է: Գլխարկո՛ւ ծնվեք, ամեն բան այդտեղ է: Բախտ ունեցեք, մնացածը կունենաք. երջանիկ եղեք, կկարծեն, որ մեծ մարդ եք: Բացի հինգ կամ վեց անսահման բացառություններից, որ կազմում են դարի փայլը, ժամանակակից հիացմունքը պարզապես կարճատեսություն է: Ոսկեգոծումը ոսկի է: Առաջին եկողը բնավ չի խանգարում, բավական է, որ նա նորելուկ լինի: Գռեհիկը մի ծեր Նարցիս է³², որ պաշտում է ինքն իրեն և ծափահարում է գռեհիկին: Այն հսկայական ունակությունը, որով դառնում են Մովսես, Էսքիլես, Դանթե, Միքելանջելո կամ Նապոլեոն, ամբոխը միանգամից և ցնծության ձայներով շնորհում է նրան, ով ինչ բնագավառում ուզում է լինի՝ հասնում է իր նպատակին: Թող որևէ նոտար վերածվի պատգամավորների պալատի անդամի, թող մի կեղծ-Կոռնել գրի «Տրդատ» ողբերգությունը, թող որևէ ներքինի հասնի մի ամբողջ հարեմ ունենալուն, թող մի զինվորական Պրուդոմ³³ պատահաբար շահի դարաշրջանի վճռական ճակատամարտը, թող մի դեղագործ խավաքարտե կրունկներ հնարի Սամբր և Մյոզի բանակի համար և կաշվի տեղ ծախված այդ խավաքարտով չորս հարյուր հազար ֆրանկ եկամուտ ապահովի իրեն, թող մի կուզ չարչի ամուսնանա վաշխի հետ ու ծնել տա նրան յոթից ութ միլիոն, որի նա և հայրն է, և մայրը, թող որևէ քարոզիչ ռնգախոսության շնորհիվ դառնա եպիսկոպոս, թող լավ տնից սերած մի ինտենդանտ իր պաշտոնից դուրս գալիս այնքան հարուստ լինի, որ նրան դարձնեն ֆինանսների մինիստր,— մարդիկ այս բոլորն անվանում են Հանճար, ճիշտ այնպես, ինչպես գեղեցկություն են անվանում Մուսքտոնի դեմքը և Վսեմություն՝ Կլոդի կերպարանքը: Նրանք անհունի համաստեղությունների հետ շփոթում են այն աստղերը, որ բաղերի ոտներն առաջացնում են ճահճուտի կակուղ տիղմի վրա:

XIII

ԻՆՉԻ՞Ր ԷՐ ՀԱՎԱՏՈՒՄ ՆԱ

Ուղղափառության տեսակետից մենք բնավ էլ Դիյնի պարոն եպիսկոպոսին խորագնեելու կարիք չունենք: Այդպիսի հոգու հանդեպ մենք միայն հարգանքի տրամադրություն ունենք: Արդարի խիղճը պետք է հավատք ընծայի լուկ խոսքով: Բայց որոշ բնավորությունների նկատմամբ մենք ենթադրում

³² Ըստ հունական դիցաբանության՝ Կեֆիս գետի որդին է: Նա սիրահարվեց իր սեփական պատկերին՝ երբ նայում էր մի աղբյուրի ջրի մեջ, որտեղ էլ նետվեց. ապա վերածվեց գետի, որ կրում է նրա անունը:

³³ Բավարարված ոչնչության ժամանակակից տիպը, որ երևան հանեց Անրի Մոնիեն իր «Ժոզեֆ Պրուդոմի հուշերը» գրքով: Այս Պրուդոմն ամեն տեղ լինում է, մանավանդ մանր բուրժուազիայի մեջ, որտեղ հեշտորեն է ճանաչվում իր լեզվի տափակ հանդիսավորությամբ: Մ. թ.:

ենք, որ մարդկային առաքիլության բոլոր գեղեցկությունների զարգացումը կարող է տեղի ունենալ նաև մերից տարբեր հավատքի մեջ:

Ի՞նչ էր մտածում նա այսինչ դավանանքի կամ այնինչ խորհրդավորության մասին: Հոգու ատյանի այս գաղտնիքները ճանաչում է միայն գերեզմանը, որտեղ հոգիները մերկ են մտնում: Այն, ինչի մասին մենք որոշակի գիտենք, այն է, որ հավատքի դժվարությունները նրա համար կեղծավորության չէին վերածվում: Որևէ նեխում հնարավոր չէ աղամանդի համար: Նա հավատում էր այնքան, ինչքան կարող էր: Credo in Patrem³⁴,— հաճախ բացականչում էր նա: Դրանից զատ նա իր բարի գործերով ստանում էր այն գոհունակությունը, որ բավական է խղճին և կամացուկ շնջում էր ականջիդ. «Դու աստծու հետ ես»:

Այն, ինչ մենք կարծում ենք, թե պետք է հիշատակել, այն է, որ դուրսը, այսպես ասած իր հավատքից դենը՝ եպիսկոպոսը սիրո մի ծայրահեղություն ուներ: Հենց դրա համար էր, quida multum amavit³⁵, որ նա խոցելի էր նկատված «լուրջ մարդկանց», «ծանրաբարո անձնավորությունների» և «իրավախոհ մարդկանց» կողմից. մեր տխուր աշխարհի սիրեցյալ ասացվածքները, որտեղ եսասիրությունն ստանում է պեղանտիզմի օրակարգը: Ի՞նչ բան էր այդ ծայրահեղ սերը: Դա մի ջինջ բարեգործություն էր, որ անցնում էր մարդկանցից դենը, և ինչպես արդեն նշել ենք, կարիք եղած դեպքում տարածվում էր մինչև իրերը: Նա ապրում էր առանց արհամարհանքի: Նա ներող էր աստծո ստեղծագործության հանդեպ: Յուրաքանչյուր մարդ, նույնիսկ լավագույնը, մի չմտածված խստություն ունի իր մեջ, որ թողնում է պահեստի՝ կենդանու համար: Դիմի եպիսկոպոսը չուներ այս խստությունը, որ հատուկ է սակայն բազմաթիվ քահանաների: Նա չէր հասնում մինչև Բրահման, բայց կարծես լավ խոկացել էր Մոդոմոնի Ժողովոց գրքի. «Հայտնի՞ է, թե ուր է գնում անասունների հոգին» ասացվածքը: Դեմքի տգեղությունները, բնագդի այլանդակությունները նրան չէին հուզում և չէին զայրացնում: Նրա սիրտը փխրուն էր, գրեթե քնքուշ: Թվում էր, որ երբ նա խոսում էր, գնում էր փնտրելու տեսանելի կյանքից դենը՝ պատճառը, բացատրությունը կամ ներումը: Երբեմն կարծես ամոքում էր հայցում նա աստծուց: Նա անզայրույթ, հին մագաղաթ վերձանող լեզվաբանի նման քննում էր բնության մեջ դեռ գոյություն ունեցող մեծաթիվ քառասները: Այս երազանքը երբեմն տարօրինակ բառեր էր խլում նրա բերանից: Մի առավոտ նա իր այգում էր և կարծում էր թե մենակ է, մինչդեռ քույրը քայլում էր նրա ետևից, իսկ նա չէր տեսնում. հանկարծ նա կանգ առավ և նայեց գետնի վրա եղած մի բանի. մի խոշոր, սև, զարհուրելի ու թավամազ սարդ էր: Քույրը լսեց նրա խոսքերը. «Խեղճ անասուն. դա քո հանցանքը չէ»:

Ինչո՞ւ չասել բարության այս գրեթե աստվածային երեխայությունները: Երեխայությունն, թող այդպես լինի. բայց այս գերագույն երեխայություններից չէ՞ն ունեցել արդյոք սուրբ Ֆրանսուա Ասիզցին և Մարկոս Ավրելիանոսը: Մի օր նա ոտքի խախտում պատճառեց իրեն սոսկ նրա համար, որ չուզեց մի մրջյուն տրորել:

Այսպես էր ապրում այս արդար մարդը: Երբեմն նա քնում էր իր այգում և այդ պահին նրանից ավելի պատկառելի բան չկար:

Եթե հավատանք նրա պատանեկությանը, նույնիսկ երիտասարդության շրջանին վերաբերող պատմություններին, գերագույն Բիենվյուն եղել էր կրքոտ, գուցե բուռն մարդ: Նրա համայնապարփակ հեգույությունը շատ ավելի քիչ բնական բնագդ էր, քան հետևանք մի մեծ համոզման, որ զոտված էր նրա սրտի մեջ կյանքի միջով և դանդաղորեն ընկել էր նրա մեջ՝ խոհ առ

³⁴ Հավատարիմ ի հայր (լատ.):

³⁵ Որ զբաղումս սիրեց (լատ.):

խոհ, որովհետև բնավորությունն էլ ժայռի նման կարող է ջրի կաթիլներից առաջացած ծակեր ունենալ: Այս փորձումներն անջնջելի են և այս բնավորություններն՝ անկործանելի:

1815 թվականին, մենք կարծեմ ասացինք արդեն, որ նա դարձավ յոթանասունհինգ տարեկան: Նա խոշոր չէր, մի թեթև գիրություն ուներ և այն վերացնելու համար հաճությամբ ոտքով երկար զբոսանքներ էրանում: Նրա քայլվածքը հաստատուն էր, ինքը շատ քիչ կռացած, մի մանրամասնություն, որից մենք չէինք հավակնում որևէ եզրակացություն անել: Գրիգոր 16-րդը³⁶ ութսուն տարեկան հասակում բոլորովին ուղիղ կեցվածք ուներ և ժպտերես էր, բայց դա չէր խանգարում նրան վատ եպիսկոպոս լինելու: Գերապատիվ Բիենվյուն ուներ այն բանը, որ ժողովուրդն անվանում է «գեղեցիկ գլուխ», բայց այնքան սիրալիր, որ մոռանում էին, թե նա գեղեցիկ է:

Երբ նա խոսում էր այն մանկական ուրախությամբ, որ նրա հրապույրներից մեկն էր և որի մասին մենք արդեն խոսել ենք, շատ լավ էիր զգում քեզ նրա հետ, թվում էր, որ նրա ողջ անձնավորությունից ցնծություն է բխում: Նրա թարմ ու գունեղ դեմքը, բոլորովին սպիտակ և պահպանված ատամները, որ ժպտալիս երևում էին, նրան տալիս էին այն սրտաբաց ու դուրսահաղորդ տեսքը, որ հիմք է տալիս ասելու որևէ մարդու մասին. «Լավ տղա է», իսկ ծերունու մասին՝ «Բարեմիտ մարդ է»: Ինչպես ընթերցողը կհիշի՝ այդ միևնույն տպավորությունը նա թողել էր Նապոլեոնի վրա: Առաջին հայացքից, մանավանդ նրան առաջին անգամ տեսնող մարդու համար, նա մի բարի ծերուկ էր պարզապես: Բայց եթե մի քանի ժամ մնային նրա մոտ և ինչքան քիչ էլ մտածկոտ լինեի նա՝ բարեմիտ ծերուկը քիչ-քիչ կերպարանափոխվում էր և դառնում մի չգիտես ինչպիսի պատկանելի բան. նրա լայն ու լուրջ ճակատը, որ սպիտակ մազերը դարձնում էին վեհ, էլ ավելի վեհանում էր խոհով տարվելիս. վսեմություն էր դուրս ցայտում այդ բարությունից, բայց բարությունը չէր դադարում ճառագայթելուց. զգում էիր մի այնպիսի հուզականություն, որպիսին կունենար մարդը մի ժպտացող ու թևերը դանդաղորեն բաց անող հրեշտակ տեսնելիս, որը չի դադարում ծիծաղել: Հարգանքը, մի անարտահայտելի հարգանք աստիճանաբար թափանցում էր ձեր մեջ ու լցվում սիրտը և զգում էիք, որ ձեր առջև գտնվում է մեկն այն ուժեղ, փորձված ու ողորմած հոգիներից, որտեղ միտքն այնքան ուժեղ է, որ այլևս միմիայն քնքուշ կարող է լինել:

Ինչպես տեսանք՝ աղոթքը, կրոնական արարողություններ կատարելը, ողորմությունը, վշտահարների մխիթարելը, մի կտոր հող մշակելը, եղբայրասիրությունը, սակավապետությունը, հյուրընկալությունը, ինքնամերժումը, վստահությունը, ուսումնասիրություններն ու աշխատանքն էին լցնում նրա կյանքի յուրաքանչյուր օրը: Լցնում էին՝ ճիշտ խոսքն է, և անկասկած եպիսկոպոսի օրը լիովին լեցուն էր բարի մտքերով, բարի խոսքերով և բարի գործերով: Սակայն նրա օրը թերի էր մնում, երբ ցուրտ կամ անձրևային օրերը խանգարում էին երեկոները, կանանց հեռանալուց հետո, մեկ կամ երկու ժամ քնելուց առաջ այգում անցկացնել: Թվում էր, որ նրա համար մի տեսակ ծես էր քնելու պատրաստվել խոկումի միջոցով՝ գիշերային մեծ տեսարանների ներկայությամբ: Երբեմն, նույնիսկ բավական ուշ գիշերը, երբ երկու պառավ աղջիկները չէին քնում, լսում էին, թե ինչպես նա դանդաղ քայլում է ծառուղիներում: Նա մեն մենակ էր այդտեղ, ինքն իր հետ, ամփոփված, անվրդով և իր սրտի պայծառությունը համեմատելով եթերի պայծառության հետ, շրջապատող խավարի մեջ սիրտը քնքշացած համաստեղությունների տեսանելի շքեղությունից և աստծո անտեսանելի պայծառությունից, և բաց անելով իր հոգին Անծանոթից ընկնող խոհերի առջև: Այդ բոլորներին, մատուցելով իր սիրտը ժամին, երբ գիշերային ծաղիկները մատուցում են իրենց բուրմունքը, լամպի նման վառված աստղազարդ գիշերին և համակված զմայլանքով՝ ստեղծագործության տիեզերական ճաճանչավորման մեջ՝ նա թերևս ինքն էլ չկարողանար ասել, թե ինչ էր տեղի

³⁶ Հռոմի պապ՝ 1831—1846:

ունենում իր հոգում. նա զգում էր, որ մի ինչ-որ բան էր դուրս թռչում իրենից և մի ինչ-որ բան էլ իջնում էր իր մեջ: Հոգու անդունդների խորհրդավոր փոխանակություններ տիեզերքի անդունդների հետ: Նա խորհում էր աստծո մեծության և ներկայության մասին, ապագայի հավիտենականության, այդ արտառոց գաղտնիքի մասին. անցյալի հավիտենականության, այդ էլ ավելի արտառոց գաղտնիքի մասին. այն բոլոր անհունների մասին, որ խորանում էին նրա աչքերի առջև բոլոր իմաստներով, և առանց ճգնելու անհասկանալին հասկանալ՝ նա դիտում էր: Նա չէր ուսումնասիրում աստծուն, նրա աչքերը խտրոտում էին նրանից: Նա գնում էր ատմների այն սքանչելի հանդիպումները, որ նյութին տեսք են տալիս, հայտնաբերում են ուժերը և ապացուցում, ստեղծում են անհատականություններ միասնության մեջ, համամասնություններ տարածության մեջ, անթիվը՝ անհունի մեջ, և լույսի միջոցով առաջացնում են գեղեցկությունը: Այս հանդիպումները հանգուցվում են անընդհատ և քանդվում, դրանից էլ առաջանում է կյանքն ու մահը:

Նա նստում էր ճրճտացող որթատունկին հենված փայտե նստարանին և դիտում էր աստղերը պտղատու ծառերի վտիտ և ռախիտիկ ուրվագծերի արանքից: Այնքան խեղճ բուսապատված և խարխուլ տնակներով ու սայլատներով խճողված այդ քառորդ օրավար հողը նրան սիրելի էր ու բավականացնում էր:

Դրանից ավելի ի՞նչ էր պետք այս ծերունուն, որ մասնակից էր կյանքի պարապ ժամանակին, որի մեջ այնքան քիչ ազատ պահ կար, ցերեկվա այգեպանության և գիշերվա հայեցողության միջև: Այս նեղ ցանկապատված վայրը, որի առաստաղը երկինքն էր, բավական չէ՞ր արդյոք աստծուն պաշտելու համար՝ իր ամենավեհ գործերի մեջ մեջընդմեջ: Ամեն ինչ այդտեղ չէ՞ր արդյոք և դրանից դենն էլ ի՞նչ կարելի էր ցանկանալ: Մի փոքր այգի՝ զբոսնելու համար և անհունությունը՝ երազելու համար: Նրա ոտքերի առջև փռված էր այն, ինչ կարելի է մշակել ու քաղել, գլխավերևը՝ այն, ինչ կարելի է ուսումնասիրել և վրան խոկալ. մի քանի ծաղիկ՝ գետնի վրա և բոլոր աստղերը՝ երկնքում:

XIV

Ի՞ՆՉ ԷՐ ՆԱ ՄՏԱԾՈՒՄ

Մի վերջին խոսք էլ:

Քանի որ այս բնության մանրամասնությունները, մանավանդ այնտեղ, ուր մենք հիմա գտնվում ենք և եթե այժմ մոդայիկ դարձած արտահայտություն գործածենք, կարող էին Դիյնի եպիսկոպոսին որոշ չափով «բազմաստվածյան» կերպարանք տալ և հավատացնել,— կամ նրան պախարակելու, կամ գովաբանելու համար,— որ նրա մեջ կար մեկը մեր դարին հատուկ այն անձնական փիլիսոփաներից, որոնք երբեմն ծնվում են մենակյաց հոգիների մեջ, այնտեղ էլ ամրանում ու մեծանում են մինչև կրոններին փոխարինելու աստիճան, մենք կպնդենք այն բանի վրա, որ գերապատիվ Բիենվյուին ճանաչողներից ոչ մեկը չի կարծել, թե լիազորված է որևէ նման բան մտածել:

Ոչ մի սխառեմ, բայց շատ գործեր: Խրթին մտազնությունները գլխապտույտ են պարունակում. ոչ մի բան ցույց չի տալիս, որ նա վտանգում էր իր միտքը հայտնությունների մեջ: Առաքյալը կարող է հանդուգն լինել, բայց եպիսկոպոսը պետք է ամաչկոտ լինի: Նա հավանաբար կիղձահարվեր, եթե շատ խորագին կերպով քններ որոշ հարցեր, որոնք մի կերպ վերապահված են մեծ ու արտակարգ մտքերին: Մի սրբազան սարսափ կա հանելուկի գավիթների ներքո. այդ մութ բացվածքները

բոլորովին բաց են, բայց մի բան ձեզ ասում է, ձեզ՝ որ անցնում եք կյանքից, թե այնտեղ չպետք է մտնել: Վա՛յ նրան, ով մտնում է այդտեղ: Այսպես ասած բոլոր դոգմաներից դուրս գտնվող վերացականության և զուտ մտազննության անլսելի խորքերում՝ հանճարներն իրենց գաղափարներն առաջարկում են աստծուն: Նրանց աղոթքը հանդգնորեն բանավեճ է մատուցում: Նրանց պաշտումը հարցաքննող է: Մա ուղղակի կրոնն է՝ լի անձկությամբ ու պատասխանատվությամբ նրանց համար, ովքեր կփորձեն նրա սեպածն ելևեջները բարձրանալ:

Մարդկային մտահոգությունը բնավ սահման չունի: Իրեն իսկ վտանգի ենթարկելով՝ նա վերլուծում է, քննում իրեն շլացնող բնությունը: Թերևս կարելի է ասել, որ մի տեսակ շքեղ արտացոլումով նա շլացնում է բնությունը. մեզ շրջապատող խորհրդավոր աշխարհը վերադարձնում է այն, ինչ ստանում է, հնարավոր է, որ հիացմամբ դիտողները հիացմամբ էլ դիտվում են: Ինչ էլ որ լինի, երկրի վրա կանմարդիկ, որ հստակորեն նշմարում են երազների հորիզոնների խորքում բացարձակի բարձունքները և որոնց առջև հառնում է անհուն լեռան ահավոր տեսիլքը: Գերապատիվ Բիենվյուն բնավ էլ այս մարդկանցից չէր: Գերապատիվ Բիենվյուն հանճար չէր: Նա կգարհուրեր այն մեծություններից, որոնցից մի քանիսը, նույնիսկ շատ մեծերը, ինչպես Սվեդենբորգն³⁷ ու Պասկալը³⁸, գլորվել են խելագարության գիրկը: Այս հզոր երազանքներն անկասկած ունեն իրենց բարոյական օգտակարությունը և այս քարքարոտ ուղիներով են մարդիկ հասնում իդեալական կատարելագործության: Իսկ նա գնում էր կրճատող արահետով՝ ավետարանով:

Նա երբեք չէր փորձում իր շուրջառի վրա Եղիա մարգարեի թիկնոցի ծալքերը պատրաստել տալ, նա ոչ մի ապագա ճառագայթ չէր ծրագրում՝ հենվելով դեպքերի խավարապատ տատանումների վրա, նա չէր փորձում առարկաների փայլը դարձնել բոց, նա ոչ մի մարգարեական կամ մոգական բան չունեւր: Այս խոնարհ հոգին սիրում էր, այս է բոլորը:

Որ նա հասցնում էր իր աղոթքը մինչև գերմարդկային բաղձանքի, այդ հնարավոր է, բայց երբեք չի կարելի այնքան շատ աղոթել, ինչքան կարելի է շատ սիրել և, եթե հերետիկոսություն է համարվում սուրբ գրքի բնագրերից ավելի աղոթելը, ապա սրբուհի Թերեզան և սուրբ Ժերոմը հերետիկոսներ կլինեին:

Նա կռանում էր այն ամենի վրա, որ հեծեծում է ու քավություն խնդրում: Տիեզերքը նրան թվում էր որպես մի անսահման հիվանդություն. ամենուրեք նա տենդ էր զգում, ամեն տեղ ականջ էր դնում տառապանքի, և առանց ջանալու հանելուկը լուծել՝ ջանում էր բուժել վերքը: Ստեղծված իրերի ահավոր տեսարանը զարգացնում էր նրա մեջ եղած փափկասրտությունը. նա զբաղված էր միայն գտնելով նախ իր համար, ապա ուրիշներին ներշնչելու համար՝ խղճալու և ամոքելու լավագույն միջոցը: Այն ամենը, ինչ որ գոյություն ունի այս բարի ու հազվագյուտ հոգևորականի համար, մխիթարություն որոնող տխրության մի մշտական նյութ էր:

Մարդիկ կան, որ աշխատում են ոսկի հանելու համար, իսկ նա աշխատում էր գույք հանելու համար: Համաշխարհային թշվառությունն էր նրա հանքը: Համատարած ցավը բարության առիթ էր միշտ: Միքեյեք միմյանց. այս էր հայտարարում նա և դրանից ավելի ոչինչ չէր ցանկանում և նրա ողջ վարդապետությունն այդ էր: Մի օր այն մարդը, որ հավակնում էր, թե «փիլիսոփա» է, այն սենատորը, որ արդեն հիշատակել ենք, ասաց եպիսկոպոսին. «Նայեցեք սակայն աշխարհի տեսարանի վրա, բոլորն էլ կռվում են բոլորի դեմ, ամենաուժեղը ամենախելացին է: Ձեր «սիրեցեք

³⁷ Շվեդացի միստիկ փիլիսոփա (1688—1772):

³⁸ Նշանավոր ֆրանսիացի մաթեմատիկոս, ֆիզիկոս ու փիլիսոփա: Մաթեմատիկայի և ֆիզիկայի ասպարեզում բազմաթիվ գյուտեր է արել շատ վաղ հասակից (1623—1662):

միմյանց»-ը հիմարություն է»: «Շատ լավ,— պատասխանեց գերապատիվ Բիենվնյուն առանց վիճաբանելու,— եթե դա հիմարություն է, հոգին պետք է փակվի այնտեղ, ինչպես մարգարիտը ոստրեի մեջ»: Նա այդտեղ էր փակվում ուրեմն, այդտեղ էր ապրում, բացարձակապես բավարարվում էր դրանով, մի կողմ թողնելով քարշող ու սարսափեցնող զարմանալի հարցերը, վերացականության անքննելի հեռանկարները, մետաֆիզիկայի խորխորատները և այն բոլոր անդունդները, որտեղ առաքյալի համար աստված, իսկ անաստվածի համար ոչնչություն կար. օրինակ ճակատագիրը, լավն ու վատը, էակի պայքարը էակի դեմ, մարդու խիղճը, անասունի մտածկոտ քնաշրջությունը, մահվան ձևափոխությունը, գոյությունների համառոտ կրկնությունը գերեզմանի մեջ, հոգին, բնությունը, ազատությունը, անհրաժեշտությունը,— ցցուն պրոբլեմներ, չարագուշակ զանգվածներ, որոնց վրա կռանում են մարդկային մտքի վիթխարի հրեշտակապետները. հաստամեստ անդունդներ, որ Լուկրեցիան, Պոդոս առաքյալը, Մանուն ու Դանտեն զննում են այն փայլակնացայտ հայացքով, որը կարծես շեշտակիորեն դիտելով անհունը՝ աստղեր կվառի այնտեղ:

Գերապատիվ Բիենվնյուն պարզապես մի մարդ էր, որ արտաքուստ էր հավաստում խորհրդավոր հարցերը՝ առանց հետազոտելու, առանց շարժելու դրանք և դրանցից խռովելու իր սեփական միտքը, բայց իր հոգին խորապես հարգում էր անքննելի գաղտնիքը:

Գիրք երկրորդ

ԱՆԿՈՒՄԸ

I

ՄԻ ՕՐ ՔԱՅԼԵԼՈՒՑ ՀԵՏՈ՝ ԵՐԵԿՈՑԱՆ

1815 թվականի հոկտեմբեր ամսի առաջին օրերից մեկին, մայրամուտից մոտ մեկ ժամ առաջ, ոտքով ճամփորդող մի մարդ էր մտնում փոքրիկ Դիյն քաղաք: Այն փոքրաթիվ բնակիչները, որ այդ րոպեին գտնվում էին իրենց լուսամուտների մոտ կամ դռան շեմին՝ մի տեսակ մտահոգությամբ էին նայում այդ ճանապարհորդին: Դժվար էր դրանից ավելի թշվառ տեսք ունեցող անցորդի հանդիպել: Դա մի միջափասակ, ամրակազմ ու թիկնեղ մարդ էր և կլիներ քառասունվեց կամ քառասունութ տարեկան: Կաշվե ցած ընկած չքոցով գլխարկը մասամբ ծածկում էր նրա արևակեզ ու քրտնաթոր դեմքը: Նրա դեղին, կոպիտ գործվածքից կարված շապիկը, որ վզի վրա ամրացած էր մի փոքրիկ արծաթե խարսխով, ցույց էր տալիս նրա մագոտ կուրծքը: Վզին կար պարանի նման ոլորված մի փողկապ, հագել էր կապույտ քաթանե մաշված ու քրքրված, մի ծունկը ծակված, մյուսն սպիտակած շալվար և ցնցոտի դարձած մի գորշ բլուզ, որի արմունկին կանաչ չուխայե մի կարկատան էր կարված: Մեջքին կրում էր լեփ լեցուն, լավ կռճկված և բոլորովին նոր մի զինվորական պայուսակ. ձեռքին մի հսկայական ու ոստղոտ մահակ. անգուլպա ոտքերին հագել էր կոպիտ, երկաթե գամերով կոշիկներ. գլուխն ածիլված էր և երկար մորուք ուներ:

Քրտինքը, շոգը, ոտքով ճամփորդությունը և փոշին մի տեսակ գծուծ բան էին ավելացնում այս մարդուն:

Մագերն ածիլված էին, բայց ցցված, որովհետև արդեն մի քիչ բուսել էին և թվում էր, որ վաղուց է ինչ կտրված չեն:

Ոչ ոք նրան չէր ճանաչում և հավանաբար մի անցորդ էր նա: Որտեղի՞ց էր գալիս նա, հարավից, թերևս ծովեզրից, որովհետև նա Դիյն էր մտնում այն միևնույն փողոցից, որը յոթ ամիս առաջ տեսել էր Նապոլեոն կայսեր անցնելը Կանից Փարիզ գնալիս: Այդ մարդն ըստ ամենայնի ողջ օրը քայլել էր և խիստ հոգնած էր: Քաղաքի ներքևում գտնվող հին ավանի կանայք տեսել էին նրան Գասանդի փողոցի ծառերի տակ կանգ առնելիս և փողոցի ծայրին գտնվող աղբյուրից ջուր խմելիս: Նա երևի խիստ ծարավ էր, որովհետև նրան հետևող երեխաները տեսել էին, որ երկու հարյուր քայլ հետո նորից կանգ էր առել և ջուր էր խմել շուկայի հրապարակի աղբյուրից:

Պուաշվեր փողոցի անկյունը հասնելուց հետո նա թեքվեց ձախ, ուղղվեց դեպի քաղաքապետարան, մտավ այդտեղ և մի քառորդ ժամ հետո դուրս եկավ այնտեղից: Մի ժանդարմ էր նստել դռան մոտի քարե նստարանին, ուր բարձրացել էր գեներալ Դրուտն մարտի 4-ին, կարդալու համար Դիյնի բնակիչների շշմած ամբոխին Ժուան ծովածոցի պրոկլամացիան: Անցորդը հանեց իր գլխարկը և խոնարհությամբ բարևեց ժանդարմին:

Ժանդարմն առանց պատասխանելու նրա բարևին՝ ուշադրությամբ գննեց նրան, մի քանի րոպե աչքերով հետևեց նրան, ապա մտավ քաղաքապետարան:

Այդ ժամանակ Դիյնում մի գեղեցիկ պանդոկ կար «Կուլբայի Խաչ» անունով, որի պանդոկապանը Ժակեն Լաբառ անունով մի մարդ էր և հայտնի էր Գրենոբլ քաղաքում «Երեք թագաժառանգներ» պանդոկի տիրոջ՝ թիկնապահների գնդում ծառայած մի ուրիշ Լաբառի հետ ունեցած ազգակցությամբ: Կայսեր ցամաք իջնելու ժամանակ շրջանում շատ լուրեր էին տարածված այդ «Երեք թագաժառանգների» պանդոկի մասին: Պատմում էին, որ գեներալ Բերտրանը սալլապանի ծպտումով հունվար ամսին բազմիցս եկել էր այդտեղ, Պատվո լեզեռնի խաչեր էր բաժանել զինվորներին և բուռ-բուռ Նապոլեոն³⁹ տվել բուրժուաներին: Իրականությունն այն է, որ կայսրը Գրենոբլ մտնելիս հրաժարվել էր նահանգապետարանի շենքում իջևանելուց, շնորհակալություն էր հայտնել քաղաքապետին և ասել. «Ես կգնամ մի ազնիվ ծանոթի մոտ», — և գնացել էր «Երեք թագաժառանգներ», որի տիրոջ՝ Լաբառի այս փառքը արտացոլվում էր քսանհինգ լիո⁴⁰ հեռու մինչև «Կուլբայի խաչի» Լաբառը, որի մասին քաղաքում ասում էին. սա Գրենոբլի Լաբառի հորեղբորորդին է:

Անցորդն ուղղվեց դեպի այս պանդոկը, որ շրջանի լավագույնն էր: Նա մտավ խոհանոց, որը լայն բացվում էր փողոցի վրա: Բոլոր հնոցներն էլ վառված էին, իսկ բուխարու մեջ բոցկլտում էր թեժ կրակը: Պանդոկապանը, որ միաժամանակ և խոհարարապետն էր, օջախից վազում էր դեպի կաթսաները, խիստ զբաղված էր և հսկում էր մի պատվական ճաշի, որ կանխորոշված էր հարևան սրահում մեծ աղմուկով զրուցող ու ծիծաղող կառապանների համար: Ով ճանապարհորդել է, գիտե, որ ոչ ոք այնպես լավ չի ուտում-խմում, ինչքան ապրանքատար կառապանները: Կաքավներով և այլ որսի թռչուններով լի ամանը պտտվում էր երկաթե ձողի վրա՝ կրակի շուրջը, իսկ տապկոցների մեջ խորովվում էին Լոզե լճի ծածաններ ու Ալոզ լճի կարմրախայտեր:

³⁹ 20 ֆրանկանոց ոսկեդրամ:

⁴⁰ Մեկ լիոն 4444 մետր է:

Պանդոկապանը, լսելով դոան բացվելը և մեկի ներս մտնելը, առանց աչքերն իր հնոցներից կտրելու, հարցրեց.

— Ի՞նչ է ուզում պարոնը:

— Ուտել և գիշերել,— պատասխանեց նորեկը:

— Դրանից հեշտ բան չկա,— ասաց պանդոկապանը: Այդ բոլորին նա գլուխը շուտ տվեց և ոտքից-գլուխ չափելով նորեկին՝ ավելացրեց.— Վճարելով:

Նորեկը բլուզի գրպանից մի մեծ կաշվե քսակ հանեց ու պատասխանեց.

— Ես փող ունեմ:

— Ուրեմն պատրաստ եմ ձեզ ծառայելու,— ասաց պանդոկապանը:

Նորեկը քսակը դրեց գրպանը, հանեց պայուսակը, դրեց ցած՝ դոան կողքին և գնաց նստեց կրակի մոտ մի ցածրիկ նստարանի վրա: Դիպնը բարձրադիր է և հոկտեմբերի երեկոները ցուրտ է լինում այնտեղ:

Սակայն պանդոկապանը ներս ու դուրս անելիս գնում էր ճամփորդին:

— Ե՞րբ կտաք ճաշը,— հարցրեց անցորդը:

— Իսկույն,— պատասխանեց պանդոկապանը:

Երբ նորեկը կոնակը դարձրած տաքանում էր, արժանավոր պանդոկապան Ժակեն Լաբառը մի մատիտ հանեց գրպանից, ապա լուսամուտի մոտ փոքրիկ սեղանի վրա փռված հին լրագրից մի կտոր պատռեց և սպիտակ լուսանցքի վրա մեկ-երկու տող գրեց, ծալեց ու առանց ծրարելու այդ թղթի կտորը, տվեց մի տղայի, որն ըստ երևույթին ծառայում էր նրան և որպես աման լվացող, և որպես մատուցող: Պանդոկապանը մի բառ փսփսաց տղայի ականջին, և փոքրիկը վազելով հեռացավ քաղաքապետարանի ուղղությամբ:

Ճամփորդն այս բոլորից ոչինչ չէր տեսել:

Եվ նորից հարցրեց.

— Շո՞ւտ կտաք ճաշը:

— Անմիջապես,— պատասխանեց պանդոկապանը:

Երեխան վերադարձավ և բերեց նույն թուղթը: Պանդոկապանը շտապով բացեց այն՝ պատասխան սպասողի նման: Երևում էր, որ ուշադրությամբ է կարդում, հետո շարժեց գլուխը և մի բոլոր մնաց մտածկոտ: Ապա մի քայլ արեց դեպի ճամփորդը, որ կարծես խորասուզվել էր իր ոչ պայծառ խոհերի մեջ:

— Պարոն,— ասաց նա,— ես չեմ կարող ընդունել ձեզ:

— Ինչպե՞ս, վախենում եք, որ չե՞մ վճարի: Ուզո՞ւմ եք սկզբից վճարեմ: Ասացի, որ փող ունեմ:

— Պատճառն այդ չէ:

— Հապա ի՞նչ է:

— Դուք փող ունեք...

— Այո,— ասաց ճամփորդը:

— Իսկ ես սենյակ չունեմ,— ասաց պանդոկապանը:

Նորեկը հանդարտությամբ շարունակեց.

— Տեղավորեք ինձ ախոռում:

— Չեմ կարող:

— Ինչո՞ւ:

— Ձիերը գրավել են ողջ տարածությունը:

— Դե լավ,— շարունակեց ուղևորը,— ձեզունի տակ մի անկյուն և մի խուրձ խոտ: Դրա մասին ընթրիքից հետո կխոսենք:

— Ես ձեզ ընթրիք չեմ կարող տալ:

Այս չափավոր, բայց հաստատ շեշտով արված հայտարարությունը ծանր թվաց օտարականին: Նա վեր կացավ:

— Բա՛հ, բայց ես մեռնում եմ քաղցից: Արևածաղից սկսած քայլել եմ և տասներկու լիո ճամփա եմ եկել: Կվճարեմ: Ուտել եմ ուզում:

— Ոչինչ չունեմ,— պատասխանեց պանդոկապանը:

Օտարականը քրքջաց և դարձավ դեպի բուխարին ու օջախները:

— Ոչի՞նչ, իսկ այս բոլո՞րը:

— Այս բոլորը պատվիրված է:

— Ո՞ւմ կողմից:

— Այս պարոն կառապանների կողմից:

— Քանի՞ հոգի են դրանք:

— Տասներկու:

— Այդտեղ քսան մարդու ուտելիք կա:

— Նրանք բոլորն էլ վերցրել են և նախօրոք վճարել:

Մարդը նորից նստեց և առանց ձայնը բարձրացնելու ասաց.

— Ես պանդոկում եմ գտնվում, քաղցած եմ և մնում եմ:

Պանդոկապանը կռացավ նրա ականջին և այնպիսի շեշտով, որը ցնցեց նրան, ասաց.

— Կորեք այստեղից:

Ճամփորդն այդ բոլորին կռացել էր և իր երկաթաձայր ձեռնափայտով մի քանի ճյուղ էր մղում կրակի մեջ։ Նա աշխուժորեն շուտ եկավ և երբ բերանը բացած ուզում էր առարկել՝ պանդուկապանը շեշտակի նայեց նրան և նույն ցածր ձայնով ավելացրեց.

— Լսեք, այլևս ոչ մի խոսք։ Ուզո՞ւմ եք, որ ձեր անունն ասեմ։ Դուք կոչվում եք Ժան Վալժան։ Հիմա ուզո՞ւմ եք, որ ասեմ, թե ով եք դուք։ Երբ դուք ներս մտաք, ես ինչ-որ բան կասկածեցի և ուղարկեցի քաղաքապետարան՝ հարցնելու։ Ահա թե ինչ են պատասխանել։ Կարդալ գիտե՞ք։

Այս խոսքերից հետո բոլորովին կուչ եկած օտարականին պարզեց բաց արած այն թուղթը, որ քիչ առաջ ճամփորդեց պանդուկից քաղաքապետարան և քաղաքապետարանից պանդուկ։ Օտարականը մի հայացք նետեց դրան։ Մի բոլոր լռելուց հետո պանդուկապանը շարունակեց.

— Ես սովորություն ունեմ բոլորի հետ էլ քաղաքավարի լինել։ Կորեք այստեղից։

Ուղևորը խոնարհեց գլուխը, վերցրեց պայուսակը, որ դրել էր գետնին և հեռացավ։

Նա ուղղվեց դեպի մեծ փողոցը։ Նա առաջանում էր առանց մտածելու, քսվելով տներին՝ նվաստացած ու տխուր մարդու նման։ Ոչ մի անգամ ետ չնայեց։ Եթե նայեր՝ կտեսներ, թե ինչպես «Գոլբայի խաչի» պանդուկապանը, կանգնած իր դռան շեմին և շրջապատված պանդուկի բոլոր ճամփորդներով ու փողոցի բոլոր անցորդներով՝ աշխույժ խոսում էր և մատով ցույց էր տալիս նրան շրջապատողների անվստահության ու սարսափով լի հայացքների ներքո։ Նա կգուշակեր նաև, որ շատ չանցած իր գալը կդառնա ողջ քաղաքի դեպքը։

Այս բոլորից նա ոչինչ չտեսավ։ Վշտահար մարդիկ ետ չեն նայում։ Նրանք շատ լավ գիտեն, որ չար բախտն է հետևում իրենց։

Այդպես նա մի քանի ժամանակ առաջ գնաց առանց գիտենալու, թե ուր, անձանոթ փողոցներով, հոգնությունը մոռացած, ինչպես դա պատահում է տխրության պահերին։ Հանկարծ նա ուժեղ քաղց զգաց։ Գիշերը վրա էր տալիս։ Նա նայեց չորս կողմը տեսնելու, թե որևէ օթևան չի՞ կարող ճարել։

Գեղեցիկ պանդուկը փակվել էր նրա առջև, այժմ նա փնտրում էր որևէ համեստ ճաշարան՝ գինետուն, որևէ աղքատիկ խցիկ։

Ճիշտ փողոցի ծայրին մի լույս էր վառվում։ Վերջալույսի կապույտ երկնքի վրա երկաթե ձողից կախված սոճու մի ճյուղ էր գծագրվում։ Նա գնաց այդտեղ։

Եվ իսկապես դա ճաշարան-գինետուն էր։ Շաֆո փողոցի գինետունը։

Ճամփորդը մի բոլոր կանգ առավ և ապակուց նայեց գինետան ցած սրահը, որ լուսավորված էր սեղանի վրա դրված փոքր լամպով և բուխարու առատ կրակով։ Մի քանի մարդ խմում էին այնտեղ։ Գինեպանը տաքանում էր։ Երկաթե եռոտանուց կախված կաթսայի մեջ մի բան էր թշշում։

Այդ գինետուն, որ նույնպես մի տեսակ պանդուկ է, մտնում են երկու դռնով, մեկը փողոցից, մյուսը գոմաղբով լի բակից։

Ուղևորը համարձակվեց փողոցի դռնից ներս մտնել։ Նակամացուկ անցավ բակը, մի քիչ կանգ առավ, ապա ամոթխածորեն բարձրացրեց մղլակը և դուռը հրեց։

— Այդ ո՞վ է,— հարցրեց տերը։

— Մի մարդ, որ ուզում է ընթրել ու գիշերել։

— Շատ լավ. այստեղ և ընթրում են, և քնում:

Նա մտավ: Բոլոր խմողներն էլ շուտ եկան: Լամպը մի կողմից էր լուսավորում նրան, կրակը՝ մյուս կողմից: Մի քանի բույե նրան գննեցին, երբ նա իր պայուսակն էր արձակում:

Պանդոկապանն ասաց.

— Այստեղ կրակ կա: Ընթրիքը եփում է կաթսայում: Եկեք տաքացեք, ընկեր:

Նա նստեց օջախի կողքին ու հոգնածությունից ճմլված ոտքերը պարզեց կրակին: Կաթսայից հաճելի բուրմունք էր բարձրանում: Այն ամենը, որ կարելի է որոշել նրա դեմքի վրա քաշած գլխարկի տակից, ընդունեց գոհունակության մի տարտամ արտահայտություն՝ խառնված այն մյուս կսկծալի տեսքին, որ տառապանքի սովորությունն է հաղորդում:

Դրանից զատ, դա մի հաստատակամ, եռանդուն և տխուր դեմք էր: Այդ կերպարանքը մի տարօրինակ կազմություն ուներ. սկսում էր խոնարհ երևալ և վերջանում էր խստությամբ: Աչքերը հոնքերի տակից փայլում էին, ինչպես կրակը չոր մացառների տակից:

Բայց սեղանի շուրջը նստած մարդկանցից մեկը, որ ձկնավաճառ էր, նախքան Շաֆո փողոցի գինետուն մտնելը գնացել էր Լաբառի մոտ՝ իր ձին նրա ախոռում կապելու համար: Եվ այնպես էր պատահել, որ առավոտյան էլ նա այդ անախորժ տեսքով օտարականին տեսել էր Բռա-դ'Ասի և... (մոռացել էմ անունը, կարծեմ Էսկուրլոն է) միջև: Հանդիպելով օտարականին, որ արդեն խիստ հոգնած էր երևում՝ ճամփորդը խնդրել էր իրեն ձիու գավակը վերցնել: Այս խնդրանքին ձկնավաճառը պատասխանել էր սոսկ ձիու քայլերն արագացնելով: Մի կես ժամ առաջ այդ ձկնավաճառը Ժակեն Լաբառին շրջապատող խմբի մեջ էր և հենց նա էր պատմել «Կուլբայի խաչի» հաճախորդներին այդ առավոտյան իր անախորժ հանդիպման մասին: Իր նստած տեղից նա մի աննկատելի ակնարկ արեց գինեպանին: Գինեպանը մոտեցավ նրան: Նրանք ցածր ձայնով մի քանի խոսք փոխանակեցին: Օտարականը նորից թաղվել էր իր մտածմունքների մեջ:

Գինեպանն այդտեղից գնաց դեպի բուխարին, ձեռքը թափով դրեց ուղևորի ուսին և ասաց.

— Դու պետք է հեռանաս այստեղից:

Օտարականը շուտ եկավ և մեղմ պատասխանեց.

— Ա, դո՞ւք էլ գիտեք...

— Այո:

— Ինձ դուրս արին մյուս պանդոկից:

— Եվ քեզ կարտաքսեն այստեղից էլ:

— Ո՞ւր եք ուզում, որ գնամ:

— Ուրիշ տեղ:

Ուղևորը վերցրեց իր ձեռնափայտն ու պայուսակը և գնաց:

Երբ նա դուրս էր գալիս, մի քանի երեխաներ, որ «Կուլբայի Խաչից» հետևել էին նրան և կարծես սպասում էին, քար շարտեցին նրան: Նա զայրացած մի քանի քայլ ետ դարձավ և ձեռնափայտով սպառնաց: Երեխաները թռչունի երամի նման ցրվեցին:

Նա անցավ բանտի առջևից: Դռնից մի շղթա էր կախված և կապված էր զանգին: Նա զանգահարեց.

Դռնակը բացվեց:

— Պարոն գնդապետ,— ասաց ճամփորդը, հարգանքով գլխարկը հանելով,— չէի՞ք կամենա բաց անել դուռը և այս գիշեր ինձ ներս ընդունել:

Մի ձայն պատասխանեց.

— Բանտը պանդոկ չէ: Ձերբակալվեք, և դուռը կբացվի: Դռնակը փակվեց: Նա մտավ մի փոքր փողոց, որտեղ բազմաթիվ այգիներ կան: Դրանցից մի քանիսը փակված են դալար ցանկապատով, մի բան, որ զվարթացնում է փողոցը: Այգիների ու ցանկապատերի միջև նա մի փոքրիկ, միահարկ տուն տեսավ, որի լուսամուտը լուսավորված էր: Նա նայեց դրա ապակուց, ինչպես արել էր գինետանը: Դա գաջով սպիտակեցված մի մեծ սենյակ էր, հնդկական չթե գործվածքով ծածկված մի մահճակալ, անկյունում դրված մի օրորոց, մի քանի փայտե աթոռ և պատից կախված մի երկհարվածյան հրացան: Սենյակի մեջտեղ գտնվող սեղանը ծածկված էր ուտելիքներով: Պղնձե լամպը լուսավորում էր սպիտակ, կոպիտ կտավե սփռոցը, արծաթի նման փայլող անագե գինով լի ամանը և գորշ թանամանը, որից գոլորշի էր բարձրանում: Սեղանի մոտ նստել էր մոտ քառասուն տարեկան, զվարթ ու սրտաբաց դեմքով մի մարդ և մի փոքրիկ երեխա էր թովռացնում ծնկներին: Նրա կողքին մի բոլորովին մանկամարդ կին ստիճքով կերակրում էր մի ուրիշ երեխայի: Հայրը ծիծաղում էր, երեխան էլ էր ծիծաղում, իսկ մայրը ժպտում էր:

Օտարականը մի բռնեց մնաց երազկոտ կանգնած այս քաղցր ու հանգստացնող պատկերի առջև: Ի՞նչ էր տեղի ունենում նրա մեջ: Միայն ինքը կարող էր այդ ասել: Հավանական է, որ նա մտածեց, թե այս ուրախ տունը հյուրընկալ կլինի և այնտեղ, ուր նա այդքան ջերմություն էր տեսնում, թերևս մի քիչ զթասիրություն կգտներ:

Նա թույլ ծեծեց ապակիներից մեկը:

Ոչ ոք չլսեց:

Երկրորդ անգամ ծեծեց:

Ինձ թվում է, որ բախում են դուռը:

— Ոչ,— պատասխանեց ամուսինը:

Երրորդ անգամ ծեծեց:

Ամուսինը վեր կացավ, վերցրեց լամպը և գնաց դուռը բացեց:

Դա մի բարձրահասակ, կիսագյուղացի և կիսաարհեստավոր մարդ էր, կրում էր մի լայն, կաշվե գոգնոց, որ հասնում էր մինչև ձախ ուսը: Այդ գոգնոցը փորի վրա ուռել էր մի մուրճից, կարմիր թաշկինակից, վառողաշշից և բազմաթիվ այլ առարկաներից, որ գոտին պահում էր գրպանի նման: Նա գլուխը ետ էր գցել, նրա լայն բացված ու ծավալած օձիքով շապիկը երևան էր հասնում սպիտակ, մերկ, ցուլանման վիզը: Հոնքերը խիտ էին, ուներ խոշոր ու սև այտմորուսներ, աչքերը գրեթե

ճակատի մակերեսին հավասար, դունչը առաջ եկած և այս բոլորի վրա՝ իր տան մեջ գտնվելու գոհունակության արտահայտությունը, որ մի անարտահայտելի բան է:

— Ներեցեք, պարոն,— ասաց ճամփորդը:— Կարո՞ղ էիք վճարով ինձ մի պնակ ապուր և գիշերելու մի անկյուն տալ այս սայլատանը՝ այգում: Ասեք, կարո՞ղ եք: Վճարով:

— Ո՞վ եք դուք,— հարցրեց տանտերը:

Ուղևորը պատասխանեց.

— Պյուի-Մուասոնից եմ գալիս: Ողջ օրը քայլել եմ: Տասներկու լիո եմ անցել: Կարո՞ղ եք: Վճարով:

— Ես չեի մերժի օթևան տալ որևէ վճարող բարեգործ մարդու,— ասաց գյուղացին:— Բայց ինչո՞ւ պանդոկ չեք գնում:

— Տեղ չկա:

— Պահ, անկարելի է: Ոչ տոնավաճառի, ոչ էլ շուկայի օր է: Գնացե՛լ եք Լաբառի մոտ:

— Այո:

— Հետո՞:

Ճամփորդը շփոթությամբ պատասխանեց.

— Չգիտեմ, ինձ չընդունեց:

— Գնացե՛լ եք, էն, ի՞նչ էր անունը, որ Շաֆո փողոցում է:

Օտարականի շփոթությունն աճում էր: Նա թոթովեց.

— Նա էլ չընդունեց:

Գյուղացու դեմքն անվստահության արտահայտություն ստացավ, նա ոտքից-գլուխ դիտեց նորեկին և հանկարծ մի տեսակ ցնցվելով, աղաղակեց.

— Դուք հո այն մարդը չե՞ք...

Նա մի նոր հայացք նետեց օտարականի վրա, երեք քայլ ետ գնաց, լամպը դրեց սեղանին և հրացանը պատից վերցրեց:

Գյուղացու «դուք այն մարդը չեք» խոսքի վրա կինը վեր էր կացել, գրկել իր երկու երեխաներին և խոյանալով ապաստանել իր ամուսնու ետևը և կուրծքը բաց ու շշմած աչքերով սարսափահար նայում էր տեսարանին, կամացուկ մրմնջալով Tso-maraudel⁴¹:

Այս բոլորն ավելի կարճ ժամանակում կատարվեց, քան անհրաժեշտ է այն պատկերացնելու համար: Մի քանի վայրկյան զննելով մարդուն այնպիսի ձևով, ինչպես իժին են զննում, տանտերը մոտեցավ դռանն ու ասաց.

— Կորիք այստեղից:

⁴¹ Ֆրանսիական Ալպերի շրջանի բարբառով՝ լրբուհու կատու: Ծ. թ.:

— Ի սեր աստծու,— թախանձեց օտարականը,— մի բաժակ ջուր:

— Հրացանի մի հարված,— պատասխանեց գյուղացին:

Հետո թափով դուռը փակեց, և օտարականը լսեց, որ նա երկու ծանր սողնակ էլ քաշեց: Մի րոպե հետո լուսամուտն էլ դռնակով ծածկվեց և երկաթե ձողի ճոխնչը դրսից լսվեց:

Գիշերն առաջանում էր: Ալպերի ցուրտ քամին փչում էր: Վերջալույսի թույլ լույսով օտարականը նկատեց փողոցը եզերող այգիներից մեկում հյուղակի նման մի բան, որ կարծես շինված էր խոտածածկ հողակոշտերից: Նա վճռականորեն անցավ փայտե պատվարից, իջավ այգին, մոտեցավ հյուղակին, որի դուռը մի խիստ ցած բացվածք էր ու նման էր այն շինություններին, որ ճամփա շինող բանվորները շինում են ճանապարհների եզրին և անշուշտ մտածեց, որ իրոք դա ճամփա շինողի հյուղակ է: Նա տանջվում էր և ցրտից, և քաղցից. քաղցին համակերպվել էր, բայց այդտեղ գոնե պաշտպանված կլինեիր ցրտից: Այս տեսակ շինություններն ընդհանրապես գիշերներն զբաղված չեն լինում: Նա պառկեց փոքրի վրա ու սողաց հյուղակը: Տաք էր այդտեղ և հարդի մի լավ խշտյակ կար: Մի րոպե նա մնաց տարածված առանց որևէ շարժում անել կարողանալու, այնքան որ հոգնել էր: Ապա զգալով, որ մեջքի պայուսակը նեղում է իրեն և բացի դրանից բոլորովին պատրաստ բարձ էր դա, սկսեց արձակել փոկերից մեկը: Այդ միջոցին մի կատաղի կաղկանձյուն լսվեց: Նա զլուխը բարձրացրեց ու նայեց: Մի խոշոր գամփոփ գլուխ գծագրվեց հյուղակի բացվածքի ստվերի վրա:

Շնաբուն էր դա:

Նա ինքն էլ ուժեղ էր ու երկյուղ ազդող, ուստի զինվեց իր ձեռնափայտով, պայուսակն էլ վահան դարձրեց և մի կերպ դուրս եկավ շնաբնից, լայնացնելով իր հագուստի պատռվածքները:

Այգուց էլ դուրս եկավ, բայց ետ-ետ գնալով, որովհետև ստիպված էր գամփոփն պատկառելի հեռավորության վրա պահել, օգտագործելով ձեռնափայտի այնպիսի շարժումներ, որ այդ թրախաղի վարպետներն անվանում են «ծածկված վարդ»:

Երբ նա ոչ առանց դժվարության անցավ պատվարից և նորից ընկավ փողոց՝ մենակ, անօթևան, անապաստան, առանց տանիքի, արտաքսված նույնիսկ հարդե անկողնուց ու զզվելի շնաբնից, ավելի շուտ ընկավ, քան նստեց մի քարի: Մի անցորդ, որ հեռանում էր, կարծես լսեց.

— Նույնիսկ մի շուն էլ չարժեմ:

Քիչ հետո նա վեր կացավ ու նորից սկսեց քայլել: Դուրս եկավ քաղաքից հուսալով, որ դաշտում որևէ ծառ կամ խոտի դեզ կգտնի պատսպարվելու:

Այսպես, նա միառժամանակ ճանապարհ գնաց շարունակ գլխիկոր մնալով: Երբ զգաց, որ որևէ մարդկային բնակությունից հեռու է, աչքերը բարձրացրեց և սկսեց չորս կողմը նայել: Նա մի դաշտի մեջ էր, և նրա առջև գտնվում էր այն ցածր, կարճ ցողուններով ծածկված բլուրներից մեկը, որոնք հունձքից հետո նմանվում են խուզված գլխի: Հորիզոնը բոլորովին սև էր. դա միայն գիշերվա խավարը չէր, այլ խիստ ցածր ամպերն էին, որ կարծես հենվել էին բլրի վրա և բարձրանում, լցնում էին ողջ երկինքը: Բայց քանի որ լուսինը ծագելու վրա էր և զենիթում դեռ մնացել էր վերջալուսային փայլի մի նշույլ, ապա այս ամպերը երկնքի վերին մասում մի տեսակ սպիտակավուն կամար էին կազմում, որտեղից մի թեթև լույս էր ընկնում երկրի վրա:

Այսպիսով, երկիրն ավելի լուսավոր էր, քան երկինքը, մի բան, որ առանձնահատուկ չարագուշակ տպավորություն է գործում, իսկ խեղճ ու վտիտ շրջագիծ ունեցող բլուրը գծագրվում էր տարտամ ու դժգույն կերպով խավարամած հորիզոնի վրա: Այս ամբողջ պատկերը զգվելի էր, մանր, սգալի ու սահմանափակ: Թե դաշտում և թե բլրի վրա ոչինչ չկար, բացի մի տձև ծառից, որ երերուն տնկված էր ուղևորից մի քանի քայլ հեռու:

Այս մարդն ակներև կերպով հեռու էր իմացականության և հոգու այն նրբագգաց սովորություններն ունենալուց, որոնք մարդուն զգայուն են դարձնում իրերի խորհրդավոր պատկերի ներկայությամբ. բայց և այնպես երկնքում, բլրի մեջ, դաշտում և այդ ծառի մեջ մի այնպիսի խորապես վշտահար բան կար, որ մի ընդհանուր անշարժ ու երազկոտ մնալուց հետո նա թափով շուտ եկավ: Վայրկյաններ կան, երբ բնությունը թվում է թշնամի:

Նա ետ դարձավ: Դիյնի դարպասները փակել էին: Դիյն քաղաքը, որ կրոնական պատերազմների ժամանակ պաշարումներ է կրել, դեռ 1815 թվականին շրջապատված էր հին պարիսպներով ու քառանկյունի աշտարակներով, որոնք հետո քանդել են: Նա անցավ մի բացվածքից ու նորից մտավ քաղաք:

Երեկոյան ժամը ութը կլինեք և, որովհետև նա փողոցները չէր ճանաչում, սկսեց առանց իմանալու առաջ շարժվել:

Այսպես նա հասավ նահանգապետարան, ապա հոգևոր դպրոց: Մայր եկեղեցու հրապարակը մտնելիս նա բռնունքն ուղղեց դեպի եկեղեցին:

Այս հրապարակի անկյունում մի տպարան կա: Այդտեղ տպագրվեցին առաջին անգամ բանակին ուղղված կայսեր և կայսերական թիկնապահ գնդի պրոկլամացիաները, որոնք բերված էին Էլբա կղզուց ու թելադրված էին անձամբ Նապոլեոնի կողմից:

Հոգնությունից ուժասպառ և էլ ոչ մի բանի հույս չունենալով՝ նա պառկեց քարե նստարանին, որ գտնվում էր տպարանի դռան առջև:

Այդ ընդմիջում մի ծեր կին էր դուրս գալիս: Նա տեսավ մթի մեջ պառկած այդ մարդուն:

— Ի՞նչ եք անում այդտեղ, բարեկամ,— հարցրեց նա:

Մարդը չոր ու զայրացկոտ շեշտով պատասխանեց.

— Ինչպես տեսնում եք, բարի կին, քնում եմ:

Բարի կինը, իսկապես արժանի այդ անվան, մարքիզուհի Ռ-ն էր:

— Այս նստարանի վրա՞,— շարունակեց նա:

— Տասնինը տարի փայտե ներքնակ եմ ունեցել,— ասաց նա,— այսօր քարե ներքնակ ունեմ:

— Դուք զինվո՞ր եք եղել:

— Այո, բարի կին, զինվոր:

— Ինչո՞ւ պանդոկ չեք գնում:

— Որովհետև փող չունեմ:

— Ավադ,— ասաց տիկին Ռ-ն,— քսակումս միայն չորս սուռն են:

— Այդքանն էլ տվեք:

Մարդը վերցրեց չորս սուռն: Տիկին Ռ-ն շարունակեց.

— Այդքան քիչ փողով դուք չեք կարող պանդոկում գիշերել: Այնուամենայնիվ փորձե՛լ եք: Անհնար է, որ գիշերն այդպես անցկացնեք: Դուք անկասկած մրսում եք ու քաղցած եք: Կարող էին ձեզ գթասիրաբար օթնան տալ:

— Ես բախել եմ բոլոր դռները:

— Հետո՞:

— Ամենուրեք ինձ վռնդեցին:

«Բարի կինը» մատով բռնեց օտարականին և հրապարակի մյուս կողմը՝ եպիսկոպոսարանի կողքին գտնվող փոքրիկ ու ցածրիկ տունը ցույց տվեց:

— Դուք բախել եք բոլոր դռները,— կրկնեց նա:

— Այո:

— Այդ դուռն է՞լ բախել եք:

— Ոչ:

— Բախեք ուրեմն:

II

ԽՈՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ե՝ ՏԱԼԻՍ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ

Այդ երեկո, Դիյնի պարոն եպիսկոպոսը, քաղաքում կատարած զբոսանքից հետո, իր սենյակում փակված երկար նստել էր: Նա զբաղված էր Պարտականությունների մասին մի խոշոր աշխատանք գրելով, որը դժբախտաբար մնացել է անավարտ: Նա խնամքով քննում էր այն բոլորը, ինչ որ եկեղեցու հայրերն ու դոկտորներն ասել են այս ծանրակշիռ առարկայի մասին: Նրա գիրքը բաժանված էր երկու մասի, առաջինը՝ բոլորի պարտականությունները, երկրորդը՝ յուրաքանչյուրի պարտականությունները՝ ըստ իրենց պատկանած դասակարգի: Բոլորի պարտականությունները մեծ պարտականություններն են. դրանք չորսն են: Սուրբ Մատթեոսը նշում է դրանք.— պարտականություններ աստծո հանդեպ (Մատթ., 6-րդ), պարտականություններ իր հանդեպ (Մատթ., 5-րդ, 29, 30), պարտականություններ մերձավորի հանդեպ (Մատթ., 7-րդ, 12), պարտականություններ արարածների հանդեպ (Մատթ., 6-րդ, 20, 25): Գալով մյուս պարտականություններին՝ եպիսկոպոսը դրանք գտել էր այլ տեղ նշված ու պատվիրազրված. վեհապետներին ու հպատակներին՝ Թուլթ առ Հռոմայեցիս-ի մեջ. բարձր պաշտոնյաներին, մայրերին, ամուսնացած կանանց ու երիտասարդներին՝ Պետրոս առաքյալն է գրել. ամուսիններին, հայրերին, երեխաներին ու ծառաներին՝ Թուլթ առ Եփեսացիս-ի մեջ. հավատարիմներին՝ Թուլթ առ Եփրաեցիս-ի մեջ. կույսերին՝ Թուլթ առ Կորնթացիս-ի մեջ: Այս բոլոր պատվիրադրություններից

նա ջանասիրաբար մի ներդաշնակ ամբողջություն էր կազմում և ուզում էր ներկայացնել դա հոգիներին:

Ժամը ութին նա դեռ աշխատում էր և անհարմար ձևով գրում քառակուսի փոքրիկ թղթերի վրա՝ ծնկներին էլ մի խոշոր գիրք դրած, երբ տիկին Մագլուարն ըստ իր սովորության ներս մտավ արծաթե ամանները անկողնու վերևի պահարանից վերցնելու համար: Մի րոպե անց եպիսկոպոսն զգալով, որ սեղանը պատրաստ է և թերևս քույրն սպասում է իրեն՝ գիրքը փակեց, վեր կացավ սեղանից և մտավ ճաշասենյակ:

Ճաշասենյակը բուխարու երկարությամբ էր, դուռը փողոցի վրա (ինչպես ասել ենք) և լուսամուտը՝ այգու վրա:

Տիկին Մագլուարն իրոք վերջացնում էր սեղան պատրաստելը:

Կատարելով հանդերձ իր ծառայությունը՝ նա խոսում էր օրիորդ Բատիստինի հետ:

Լամպը դրված էր սեղանի վրա. սեղանը բուխարու մոտ էր, և բավական թեժ կրակ կար այնտեղ:

Հեշտությամբ կարելի է պատկերացնել վաթսուներեկացրած այսերկու կանանց: Տիկին Մագլուարը փոքր, չաղլիկ ու աշխույժ, օրիորդ Բատիստինը բարեհամբույր, նրբակազմ, քնքուշ և եղբորից քիչ ավելի խոշոր, մետաքսե զգեստ հագած, որը նա գնել էր 1806 թ. Փարիզում և դեռ դիմանում էր: Եթե գոեհիկ արտահայտություններ գործածենք, որոնք այն արժանիքն ունեն, որ մեկ բառով կարող են տալ մի գաղափար, որը մեկ էջը հագիվ կարողանար արտահայտել — տիկին Մագլուարը գեղջկուհու տեսք ուներ, իսկ օրիորդ Բատիստինը՝ տիկնոջ: Տիկին Մագլուարը կրում էր փոթ-փոթ սպիտակ գլխանոց, պարանոցին մի ոսկե խաչ՝ այդ տան միակ զարդեղենը, վերին աստիճանի սպիտակ վզնոցը դուրս էր գալիս լայն ու կարճ թևեր ունեցող սև, հաստ շրջագգեստից, կարմիր ու կանաչ քառակուսիներով բամբակե տուալից շինված կրծկալ, որ կապված էր գոտուն կանաչ ժապավենով, ոտքերին կոպիտ կոշիկներ և դեղին գուլպաներ, ինչպես Մարսելի կանայք են անում: Օրիորդ Բատիստինի շրջագգեստը ձևված էր 1806 թ. օրինակով, կարճ, նեղ պարեգոտ, թևերին ուսադիրներ, փոքր կապեր և կոճակներ: Նա իր գորշ մագերը թաքցնում էր մանկական կոշվոդ գանգրեցված կեղծամով: Տիկին Մագլուարը խելացի, աշխույժ ու բարի արտահայտություն ուներ, թեև նրա բերանի անհավասար բարձրացած զույգ անկյունները և ներքինից ավելի հաստ վերին շրթունքը նրան մի տեսակ անբարեհամբույր ու խրոխտ տեսք էին տալիս: Քանի դեռ գերապատիվը լուրջ էր, նա խոսում էր վճռականորեն, հարգանքի ու ազատության խառնուրդով, բայց հենց գերապատիվը խոսում էր, նա օրիորդ Բատիստինի նման կրավորապես հնազանդվում էր:

Օրիորդ Բատիստինը նույնիսկ չէր խոսում: Նա սահմանափակվում էր հնազանդվելով և հավանություն տալով: Նա գեղեցիկ չէր նույնիսկ, երբ մանկամարդ էր, ուներ խոշոր, կապույտ ու բարձր ընկած աչքեր, երկար ու կեռ քիթ, բայց նրա ողջ դեմքը, նրա անձը, ինչպես սկզբում ասացինք, մի անպատմելի բարություն էր արտահայտում: Նա միշտ էլ նախասահմանված էր հեգուության, բայց հավատքը, գրասիրությունը և հույսը՝ այս երեք առաքինությունները, որ ջերմացնում են հոգին, քիչ-քիչ այս հեգությունը զարգացրել ու հասցրել էին սրբության: Բնությունը նրան լոկ գառնուկ էր ստեղծել, կրոնը դարձրել էր հրեշտակ: Խեղճ սուրբ աղջիկ, անհետացած քաղցր հիշատակ:

Օրիորդ Բատիստինը դրանից հետո այնքան շատ է պատմել, թե ինչ էր տեղի ունեցել եպիսկոպոսարանում այդ երեկո, որ բազմաթիվ, դեռ կենդանի անձնավորություններ հիշում են դրա ամենավոքր մանրամասնությունները:

Այն բուպեին, երբ պարոն եպիսկոպոսը ներս մտավ, տիկին Մագլուարը խոսում էր բավական աշխույժ: Նա պատմում էր օրիորդին մի նյութ, որ նրա համար սովորական էր և որին եպիսկոպոսը վարժվել էր: Հարցը դռան մղլակի մասին էր:

Բանն այն էր, որ ընթրիքի համար մի քանի բաներ գնելու նպատակով դուրս գնացած ժամանակ տիկին Մագլուարը տարբեր տեղերում զանազան բաներ էր լսել: Խոսում էին մի վատ տեսք ունեցող թափառաշրջիկի մասին, մի կասկածելի դատարկապորտ էր եկել քաղաք և այժմ որևէ տեղ թաքնված կլիներ և հավանաբար անախորժ հանդիպումներ կարող էին ունենալ նրանք, ովքեր այդ գիշեր ուշ կվերադառնային տուն: Ասում էին, որ ոստիկանությունը վատ է աշխատում, նկատի առնելով, որ պարոնայք նահանգապետն ու քաղաքապետն իրար չեն սիրում և իրար վնասելու դիտավորությամբ պատահարներ են առաջացնում: Ուրեմն մնում էր, որ խելացի մարդիկ իրենք անձամբ ոստիկանություն կատարեն և հոգ տանեն, որ ինչպես հարկն է տները փակեն, նիզեն, պատնեշեն և դռները պինդ փակեն:

Տիկին Մագլուարը շեշտեց այս վերջին բառերը, բայց եպիսկոպոսը գալիս էր իր սենյակից, որտեղ բավական մրսել էր, ուստի նստած բուխարու առջև տաքանում էր և ուրիշ բանի մասին էր մտածում: Նա ոչ մի բառ չլսեց տիկին Մագլուարի հենց նոր ասած խոսքերից: Բայց սա կրկնեց դրանք: Այդ ժամանակ օրիորդ Բատիստինը, ցանկանալով բավարարել տիկին Մագլուարին և միաժամանակ չուզենալով դուր չգալ եղբորը՝ համարձակվեց ամոթխածորեն նկատել.

— Եղբայր, լսո՞ւմ եք, թե ինչ է ասում տիկին Մագլուարը:

— Մի քանի անորոշ բան լսեցի,— պատասխանեց եպիսկոպոսը:

Ապա կիսով չափ պտտելով աթոռը, ձեռքերը ծնկներին դնելով և պառավ սպասուհուն հառելով իր սիրալիր ու դյուրագլար ղեմքը, որ կրակը ներքնից լուսավորում էր, ասաց.

— Հապա, ի՞նչ է եղել, ի՞նչ կա: Մենք ուրեմն մի մեծ վտանգի մեջ ենք:

Այդ ժամանակ տիկին Մագլուարը վերսկսեց ողջ պատմությունը և առանց նկատելու մի քիչ էլ չափազանցեց: Պարզվեց, որ մի գնչու, բոքիկ ու վտանգավոր մուրացկանի մի տիպ, այս բուպեին քաղաքում է: Գիշերելու համար նա գնացել է Լաբառի մոտ, որը չի ուզեցել ընդունել: Նրան տեսել են Գասանդի փողոցից ներս մտնելիս և մթնշաղին փողոցներում դեգերելիս: Կախաղանի արժանի մի զարհուրատեսիլ մարդ:

— Իսկապե՞ս,— նկատեց եպիսկոպոսը:

Իրեն հարցաքննելու այս համաձայնությունը քաջալերեց տիկին Մագլուարին, նրան թվաց, թե եպիսկոպոսը տազնապի մատնվելուց հեռու չէ, ուստի հաղթականորեն շարունակեց.

— Այո, գերապատիվ հայր: Ճիշտ այդպես: Այս գիշեր որևէ դժբախտություն լինելու է քաղաքում: Ամենքն էլ այդպես են ասում: Մանավանդ որ ոստիկանությունն էլ լավ կազմակերպված չէ (ավելորդ կրկնություն): Ապրել լեռնային երկրում և փողոցներում նույնիսկ ապտերնե՛ր չունենալ: Դուրս գաս թե չէ, մի դժբախտություն կլինի: Եվ ես ասում եմ, գերապատիվ հայր, օրիորդն էլ անհա նույնն է ասում...

— Ե՞ս,— ընդհատեց քույրը,— ես ոչինչ չեմ ասում: Ինչ որ եղբայրս անում է՝ ճիշտ է:

Տիկին Մազլուարը շարունակեց, կարծես բնավ առարկություն չէր եղել:

— Մենք ասում ենք, որ այս տունը բնավ էլ ապահով չէ, և եթե գերապատիվը թույլ տա, ես անմիջապես կգնամ փականագործ Պոլեն Մյուզբուային կանչելու, որ գա, նորից հաստատի դռան նախկին սողնակները. դրանք այնտեղ են, մի բռնակի բան է և ես ասում եմ, որ սողնակներ են պետք, գերապատիվ հայր, թեկուզ այս զիջերվա համար, որովհետև ես ասում եմ, թե ավելի սարսափելի բրան չկա, քան այն, երբ դուրը դրսից կարող է բաց անել յուրաքանչյուր մարդ լոկ մղակը հրելով, մանավանդ որ գերապատիվը միշտ էլ սովորություն ունի ասելու՝ մտեք, այն էլ զիջերվա կեսին: Օ՛, աստված իմ, կարիք չունեն նույնիսկ թույլտվություն խնդրելու...

Այդ բռնակին դուրը ծեծեցին՝ բավական ուժեղ մի հարվածով:

— Մտեք,— ասաց եպիսկոպոսը:

III

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՆԱՋԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Դուրը բացվեց:

Բացվեց թափով և ամբողջությամբ, կարծես մեկը հրում էր այն՝ եռանդով և վճռականությամբ:

Մի մարդ ներս մտավ:

Մենք արդեն ճանաչում ենք այդ մարդուն: Դա այն ճամփորդն էր, որին քիչ առաջ տեսանք դեգերելիս՝ մի ապաստարան փնտրելու համար:

Նա ներս մտավ, մի քայլ արեց ու կանգ առավ, թողնելով իր ետևում դուրը լայն բաց արած: Պայուսակը մեջքին էր, ձեռնափայտը ձեռքին, արտահայտությունը բիրտ էր, հանդուգն ու հոգնած, իսկ աչքերը՝ մոլեգին: Բուխարու կրակը լուսավորում էր նրան: Նա սարսռազդեցիկ էր: Մի չարաշուք հայտնություն էր դա:

Տիկին Մազլուարը նույնիսկ մի ճիչ արձակելու ուժ չունեցավ: Նա ցնցվեց և մնաց բերանը բաց:

Օրիորդ Բատիստինը շուտ եկավ, նկատեց ներս մտնող մարդուն, շշմածությունից մի քիչ ուղղվեց, ապա քիչ-քիչ նորից գլուխնուղղելով դեպի բուխարին՝ սկսեց դիտել եղբորը և նրա դեմքը նորից դարձավ խորապես հանդարտ ու պայծառ:

Եպիսկոպոսը սկեռել էր այդ մարդու վրա իր հանդարտ հայացքը:

Եվ, որովհետև նա բերանը բաց էր արել նորեկին հարցնելու համար, թե ինչ է ցանկանում, օտարականը զույգ ձեռքը հենեց իր ձեռնափայտին, աչքերը ման ածեց փոխնիփոխ ծերունու ու կանանց վրա և առանց սպասելու, որ եպիսկոպոսը խոսի, ասաց բարձր ձայնով.

— Ահա թե ինչ: Իմ անունը Ժան Վալժան է: Ես թիապարտ եմ: Տասնինը տարի անց եմ կացրել թիարանում⁴²: Չորս օր է, ինչ ազատվել եմ և գնում եմ Պոնտառլիե, որտեղ ապրելու եմ: Չորս օր է, ինչ Տուլոնից դուրս եմ եկել և քայլում եմ: Այսօր ոտքով տասներկու լիո եմ անցել: Այս երեկո, հասնելով այս քաղաքը, գնացի մի պանդոկ, որտեղից ինձ վոնդեցին դեղին անձնագրիս պատճառով, որ ես ներկայացրել էի քաղաքապետարանին: Իսկ դա անհրաժեշտ էր: Գնացի մի ուրիշ պանդոկ: Ինձ ասացին՝ կորիք: Երկու տեղն էլ: Ոչ ոք չուզեց ընդունել ինձ: Գնացի բանտ, դռնապանը դուռը բաց չարեց: Մտա մի շան բուն: Շունն ինձ կծեց ու վոնդեց՝ կարծես նա էլ մարդ լիներ: Կարծես թե նա էլ գիտեր, թե ով եմ ես: Հետո գնացի դաշտ՝ աստղագարդ երկնքի տակ քնելու: Աստղ չկար: Մտածեցի, որ անձրև է գալու և աստված էլ չկա, որ արգելի անձրևի գալը ու վերադարձա քաղաք որևէ ներս ընկած դուռ գտնելու համար: Այնտեղ, հրապարակում, պատրաստվում էի քնել քարի վրա, երբ մի բարի կին ինձ ցույց տվեց ձեր տունը և ասաց. «Բախիր այդտեղ»: Ես էլ բախեցի: Այս ի՞նչ տեղ է: Պանդոկ է: Ես փող ունեմ: Իմ դրամագլուխը՝ հարյուր ինը ֆրանկ և տասնհինգ սու, որ շահել եմ թիարանում իմ աշխատանքով տասնինը տարվա ընթացքում: Ես կվճարեմ: Ինչ կա որ, ես փող ունեմ: Շատ եմ հոգնել. տասներկու լիո ոտքով, և խիստ քաղցած եմ: Ուզո՞ւմ եք, որ մնամ:

— Տիկին Մագլուար,— ասաց եպիսկոպոսը,— մի ճաշասարք ավելին կդնեք:

Օտարականը երեք քայլ առաջացավ և մոտեցավ սեղանի լամպին:

— Լսեք,— շարունակեց նա, կարծես լավ չէր հասկացել,— այդպես չէ: Լավ լսեցի՞ք: Ես թիապարտ եմ: Տաժանակիր եմ: Թիարանից եմ գալիս:

Նա գրպանից մի լայն դեղին թուղթ հանեց ու բաց արեց.

— Ահա իմ անձնագիրը: Դեղին է, ինչպես տեսնում եք: Դա էլ պատճառ է դառնում, որ ինձ ամեն տեղից, որտեղ մտնում եմ, վոնդեն: Ուզո՞ւմ եք կարդալ: Ես կարդալ գիտեմ: Թիարանում սովորեցի: Մի դպրոց կա այնտեղ ցանկացողների համար: Նայեք, ահա թե ինչ են գրել անձնագրի վրա. «Ժան Վալժան, ազատված տաժանակիր, բնիկ...— ցի,— այս կետը ձեզ համար միևնույն է...— մնացել է տասնինը տարի թիարանում: Հինգ տարի՝ կոտրելով գողություն անելու համար: Տասնչորս տարի էլ փախչելու չորս փորձ կատարելու համար: Այս մարդը «խիստ վտանգավոր է»: Ահա: Ամենքն էլ ինձ դուրս շարտեցին: Իսկ դուք ուզո՞ւմ եք ընդունել ինձ: Սա պանդոկ է: Ուզո՞ւմ եք ուտելիք և քնելու տեղ տալ: Ախտո չունե՞ք:

— Տիկին Մագլուար,— ասաց եպիսկոպոսը,— նոր սավաններ կդնեք աղոթարանի անկողնում:

Մենք արդեն բացատրել ենք, թե ինչ բնույթ ուներ այդ երկու կանանց հնազանդությունը:

Տիկին Մագլուարը դուրս եկավ կատարելու նրա հրամանները:

Եպիսկոպոսը դարձավ դեպի նորեկը:

— Պարոն, նստեք և տաքացեք: Մի բոպեից կընթրենք և ձեր ընթրելու միջոցին կպատրաստեն ձեր անկողինը:

⁴² Անցյալ ժամանակներում գերիներին, ստրուկներին և երկարամյա դատապարտվածներին աշխատեցնում էին նավերի վրա, որպես թիավար: Այդ աշխատանքի բնույթից էլ առաջացել են թիարան և թիապարտ բառերը և տրվում են առհասարակ տաժանակիր աշխատանքի դատապարտվածներին: Նույնն է ռուսերեն казора բառի սկզբնական նշանակությունը, որը նավի մի տեսակի անունն է:

Այստեղ նորեկը նոր միայն հասկացավ: Նրա դեմքի արտահայտությունը, որ մինչ այդ մռայլ էր ու խիստ, դրոշմվեց շվարումով, կասկածով, հրճվանքով և ի վերջո դարձավ արտակարգ: Նա սկսեց գծի նման թոթովել:

— Իսկապէ՞ս, ի՞նչ, դուք ինձ պահո՞ւմ եք, դուք ինձ չե՞ք արտաքսում, ինձ՝ տաժանապարտիս: Դուք ինձ պարո՞ն եք անվանում, դու-ով չե՞ք խոսում: Կորի՛ր, շո՛ւն, այդպէս են ինձ միշտ ասում: Ես կարծում էի, որ ինձ կվռնդէք: Դրա համար էլ անմիջապէս ասացի, թէ ով եմ ես: Օ, ինչ բարի կին էր նա, որ ցույց տվեց այս տունը: Ընթերե՛ւ եմ: Ներքնակով ու սավանով անկողի՛ն, ինչպէս բոլորը: Անկողի՛ն: Տասնինը տարի է, որ անկողնու մեջ չեմ քնել: Ուրեմն դուք համաձայն եք, որ չգնամ: Ի՛նչ արժանավոր մարդիկ եք: Բայց չե՞ որ ես փող էլ ունեմ: Լավ կվճարեմ: Ներեցեք, պարոն պանդոկապան, ի՞նչ է ձեր անունը: Կվճարեմ, ինչքան պահանջէք: Դուք ազնիվ մարդ եք: Պանդոկապան եք, չե՞:

— Ես քահանա եմ և ապրում եմ այստեղ,— պատասխանեց եպիսկոպոսը:

— Քահանա՞ եք,— շարունակեց օտարականը:— Օ՛ր, բայց ինչ լավ քահանա: Ուրեմն դուք փող չեք պահանջի ինձնից: Ավագ քահանա եք, այնպէս չե՞, այս մեծ եկեղեցու ավագ քահանան: Պահ, իսկապէս հիմար եմ ես, չէի նկատել ձեր գլխի թասակը:

Խոսելով հանդերձ նա իր պայուսակն ու ձեռնափայտը դրել էր միանկյուն, անձնագիրը տեղավորել գրպանն ու նստել: Օրիորդ Բատիստինը քաղցրությամբ զննում էր նրան: Նա շարունակեց:

— Դուք մարդասեր եք, պարոն ավագերեց, դուք չեք արհամարհում: Շատ լավ բան է բարի քահանան: Ուրեմն դուք կարիք չունե՞ք իմ վճարելուն:

— Ոչ,— ասաց եպիսկոպոսը,— պահեք ձեր դրամը: Ինչքա՞ն փող ունեք. կարծեմ հարյուր ինը ֆրանկ ասացիք:

— Եվ տասնհինգ սու,— ավելացրեց նորեկը:

— Հարյուր ինը ֆրանկ, տասնհինգ սու: Եվ ինչքա՞ն ժամանակում եք վաստակել այդ:

— Տասնինը տարում:

— Տասնի՛նը տարում:

Եպիսկոպոսը խոր հառաչեց:

Նորեկը շարունակեց.

— Իմ ողջ գումարը դեռ մնում է: Չորս օրվա ընթացքում ծախսել եմ միայն քսանհինգ սու⁴³, որ աշխատեցի Գրասում սայլերը բեռնաթափելուն օգնելիս: Քանի որ դուք աբբա եք, ապա ձեզ ասեմ, որ թիարանում մենք մի երեց ունենինք: Մի օր էլ մի եպիսկոպոս տեսա. նա, որին գերապատիվ հայր են ասում: Նա Մարսելի լա Մաժորի եպիսկոպոսն էր: Դա ավագերեցների ավագերեցն է: Գիտե՞ք, ես վատ եմ խոսում, ներեցեք, բայց ինձ համար այնքան հեռավոր բաներ են դրանք: Դուք հասկանում եք, որ մենք... Նա պատարագ մատուցեց հենց թիարանում, բեմի վրա, մի սրածայր ոսկե բան կար նրա գլխին: Կեսօրվա լույսի տակ դա փայլում էր: Մենք շարված էինք երեք կողմից,

⁴³ Մեկ սուն հինգ սանտիմ է, քսան սուն՝ մեկ ֆրանկ:

իսկ դիմացը պատրույզը վառված թնդանոթներ: Մենք լավ չէինք տեսնում: Նա խոսեց, բայց մենք շատ հեռու էինք և լավ չլսեցինք: Ահա թե ինչ բան է եպիսկոպոս ասվածը:

Երբ նա խոսում էր, եպիսկոպոսը գնաց փակելու դուռը, որ մնացել էր լայն բաց արած:

Տիկին Մազլուարը ներս մտավ և մի ճաշասարք բերելով դրեց սեղանի վրա:

— Տիկին Մազլուար,— ասաց եպիսկոպոսը,— այդ պնակն ինչքան հնարավոր է դրեք կրակին մոտ:— Եվ դառնալով իր հյուրին.— Գիշերային քամին խիստ է Ալպերում, դուք երևի լավ մրսել եք, պարոն:

Ամեն անգամ, որ նա կրկնում էր պարոն բառը՝ իր քաղցրավուն ու ծանր ձայնով և բարեկամական շեշտով, օտարականի դեմքը ճառագայթում էր: Թիապարտին պարոն անվանել, նշանակում է «Մեղուգայի»⁴⁴ նավաբեկյալին մի բաժակ ջուր տալ: Անարգվածն էլ ծարավի է հարգանքի:

— Այս լամպը վատ է լուսավորում,— շարունակեց եպիսկոպոսը: Տիկին Մազլուարը հասկացավ և գնաց գերապատիվի ննջասենյակի բուխարու վրայից բերեց արծաթե զույգ աշտանակներ և վառած դրեց սեղանի վրա:

— Պարոն ավագերեց,— ասաց թիապարտը,— դուք բարի եք: Դուք չեք արհամարհում ինձ: Դուք ինձ ընդունում եք ձեր տանը: Ձեր մոմերը վառում եք ինձ համար: Այնինչ ես ձեզնից չթաքցրի, թե որտեղից եմ գալիս և մի դժբախտ մարդ եմ:

Եպիսկոպոսը նրա կողքին նստած կամացուկ ձեռքը դիպրեց նրա ձեռքին:

— Դուք կարող էիք ինձ չասել, թե ով եք: Մա իմ տունը չէ, Հիսուս Քրիստոսի տունն է: Այս տունը ներս մտնողին չի հարցնում, թե անունն ինչ է, այլ ինչ ցավ ունի: Դուք տառապում եք. քաղցած եք և սոված, ուրեմն բարի եք եկել: Եվ ինձ շնորհակալություն մի հայտնեք, մի ասեք, որ ես ձեզ ընդունում եմ ինձ մոտ: Այստեղ ոչ ոք իր տանը չէ, բացի նրանից, ով որևէ ապաստարանի կարիք ունի: Ես այդ ասում եմ ձեզ, որ անցորդ եք, դուք այստեղ ավելի շուտ ձեր տանն եք, քան ես ինքս: Այն բոլորն, ինչ կա այստեղ, ձերն է: Ի՞նչ կարիք ունեմ ձեր անունն իմանալու: Բացի դրանից, նախքան ձեր անունն ասելը, դուք ունեք մի այլ անուն, որ ես գիտեի:

Օտարականն աչքերը զարմացած բաց արեց:

— Իսկապե՞ս, դուք գիտեի՞ք իմ անունը:

— Այո,— պատասխանեց եպիսկոպոսը,— դուք կոչվում եք իմ եղբայրը:

— Լսե՛ք, պարոն ավագերեց,— բացականչեց օտարականը,— երբ մտա այստեղ, խիստ քաղցած էի, բայց դուք այնքան բարի եք, որ այժմ չգիտեմ, թե ինչի կարիք ունեմ, քաղցս էլ անցավ:

Եպիսկոպոսը նայեց նրան ու ասաց.

⁴⁴ Իր դժբախտ ելքով հայտնի նավարկություն, որ տեղի ունեցավ 1816 թ. հուլիսի 2-ին Աֆրիկայի ափերից 40 լիո հեռու: Երբ «Մեղուգա» նավը փրկելու բոլոր հույսերն սպառվեցին՝ 149 հոգի ապաստանեցին շտապ կերպով շինված մի լաստանավի վրա, որը շատ չանցած մնաց անհուն ծովի մեջտեղը: Հոգեվարքային տասներկու օրից հետո լաստը վերջապես նկատեցին «Արգուս» նավից, որը վերցրեց 15 մահամերձներին. մնացածները ծովի խորքում էին կամ կեր էին դարձել վերապրողներին: Ֆրանսիացի հայտնի նկարիչ Ժերիկոն թողել է մի սքանչելի կտավ այս տխուր նավաբեկության մասին: *Օ. թ.*

— Դուք շա՛տ եք տառապել:

— Օ՛, կարմիր բլուզը, ոտքերիս ագուցված գունդը, քնելու համար տախտակի կտորը, շոգը, ցուրտը, աշխատանքը, թիապարտները, ճիպոտի հարվածները: Կրկնակի շղթա՝ չնչին բանի համար: Զնդան՝ մի բառի համար: Շղթան ոտքիդ՝ երբ նույնիսկ հիվանդ ես ու ընկած անկողնում: Շները, շներն ավելի բախտավոր են: Տասնի՛նը տարի: Իսկ ես այժմ քառասունվեց տարեկան եմ: Հիմա էլ դեղին անձնագիր: Ահա թե ինչ:

— Այո,— շարունակեց եպիսկոպոսը,— դուք դուրս եք գալիս տխրության մի վայրից: Լսեք: Երկնքում ավելի հաճելի կլինի մի զոջացող մեղավորի արտասովալից դեմքի համար, քան թե հարյուր արդարների սպիտակ զգեստի համար: Եթե դուք դուրս եք գալիս այդ վշտավից վայրից մարդկանց հանդեպ ասելության և զայրույթի մտքերով, դուք արժանի եք խղճալու, իսկ եթե դուրս եք գալիս բարյացակամության, մեղմության և խաղաղության զգացումներով, ապա ավելի արժանավոր եք, քան մեզանից որևէ մեկը:

Սակայն տիկին Մագլուարն արդեն մատուցել էր ընթրիքը: Զրով, ձեռով, հացով ու աղով պատրաստված ապուր, մի քիչ խոզի ճարպ, մի կտոր ոչխարի միս, թուզ, թարմ պանիր և մի խոշոր հաճարե հաց: Տիկին Մագլուարն ինքնաբերաբար ավելացրել էր եպիսկոպոսի սովորական ընթրիքին մի շիշ Մովի հին գինի:

Եպիսկոպոսի դեմքը հանկարծ պատվեց ուրախության այն արտահայտությամբ, որ հատուկ է հյուրընկալ բնավորություններին:

— Սեղան նստենք,— ասաց նա աշխուժորեն:

Ըստ իր սովորության, երբ մի օտարական էր ընթրում իր հետ, նրան նստեցրեց իր աջ կողմը: Օրիորդ Բատիստինը միանգամայն հանդարտ ու բնականի պես նստեց նրա ձախ կողմը:

Եպիսկոպոսն ասաց սեղանօրհները, ապա ըստ իր սովորության անձամբ մատուցեց ապուրը: Օտարականն սկսեց ազահորեն ուտել:

Եպիսկոպոսը հանկարծ նկատեց.

— Ինձ թվում է, որ մի բան պակասում է սեղանի վրա:

Տիկին Մագլուարն իսկապես դրել էր երեք բացարձակապես անհրաժեշտ ճաշասարքերը: Իսկ այդ տանը սովորություն կար, որ երբ պարոն եպիսկոպոսն ընթրիքին հյուր էր ունենում, սեղանին դնում էին արծաթե վեց սարքն էլ՝ անմեղ ցուցադրություն: Պերճանքի այս շքեղ նմանողությունը հրապույրով լի մի տեսակ երեխայություն էր այդ բարեհամբույր ու խստամբեր տան մեջ, ուր աղքատությունը հասցվում էր մինչև արժանիքի:

Տիկին Մագլուարը հասկացավ նկատողությունը, առանց մի բառ ասելու դուրս գնաց և մի րոպե հետո եպիսկոպոսի պահանջած երեք ափսեներն էլ փայլում էին սփռոցի վրա համաչափորեն շարված երեք ճաշողների դիմաց:

IV

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈՆՏԱՌԻԵՒ ՊԱՆՐԱԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ գաղափար տալու համար այն մասին, թե ինչ տեղի ունեցավ այդ սեղանի շուրջ, մենք ավելի լավ բան արած չենք լինի, քան եթե արտագրենք այստեղ մի հատված օրիորդ Բատիստինի՝ տիկին Բուշվեռնին գրած նամակից, որտեղ տաժանապարտի ու եպիսկոպոսի խոսակցությունը պատմված է մանրամասնությամբ.

.

«...Այդ մարդը ոչ ոքի ուշադրություն չէր դարձնում: Նա ուտում էր սովահարի անհագությամբ: Բայց ընթրիքից հետո ասաց.

— Բարի աստծո պարոն ավագերեց, այս բոլորը շատ լավ է ինձ համար, բայց ես պետք է ասեմ, որ ապրանք փոխադրող սայլապանները, որ ինձ թույլ չտվին իրենց հետ ճաշելու, ավելի լավ սեղան են ունենում, քան դուք:

Մեր մեջ ասած, նկատողությունն ինձ մի քիչ խայթեց: Եղբայրս պատասխանեց. «Նրանք ինձնից ավելի են հոգնում»:

— Ոչ,— շարունակեց այդ մարդը,— նրանք ավելի շատ փող ունեն: Դուք աղքատ եք, տեսնում եմ: Դուք թերևս ավագերեց էլ չեք: Իրոք ավագերեց եք դուք: Ա՛, ինչ եք ասում, եթե բարի աստվածն իրավացի լիներ, դուք անպայման պետք է ավագերեց լինեիք:

— Բարի աստվածն ավելի իրավացի է,— նկատեց եղբայրս: Մի բուպե անց ավելացրեց.— Պարոն Ժան Վալժան, դուք Պոնտառլիե եք գնում, չէ՞:

— Հարկադրական ուղեգծով:

Կարծեմ նա այսպես պատասխանեց: Ապա շարունակեց.

— Վաղը, լուսադեմին, ես պետք է ճանապարհ ընկնեմ: Դժվար է ճամփա գնալ: Եթե գիշերները ցուրտ են, ապա ցերեկներն էլ շոգ են:

— Դուք լավ տեղ եք գնում,— շարունակեց եղբայրս:— Հեղափոխության ժամանակ մեր ընտանիքը քայքայվեց, սկզբում ես փախա Ֆրանշ-Կոնտե, որոշ ժամանակ ապրեցի այդտեղ իմ բազուկներով: Ես լավ կամք ունեի: Այնտեղ զբաղվելու բան գտա: Պետք է միայն ընտրել: Կան թղթի, կաշվի գործարաններ, թորանոցներ, ձիթարաններ, խոշոր ժամացույցների գործարաններ, պողպատի գործարաններ, պղնձի գործարաններ, առնվազն քսան երկաթի գործարաններ, որից չորսը Լոզսում, Շատիոնում, Օդենկուրում, և Բյոռում և որոնք խիստ նշանակալից են...

Ես կարծում եմ, որ չեմ սխալվել և երբ եղբայրս այս անունները հիշատակեց, ընդհատեց և խոսքն ինձ ուղղեց.

— Միրելի քույր, մենք այդտեղ ազգականներ չունենք:

Ես պատասխանեցի.

— Ունենք, ի միջի այլոց, պարոն դը Լյուսենն, որ Պոնտառլիեի դարպասների կապիտան էր հին ռեժիմի ժամանակ:

— Այո,— շարունակեց եղբայրս,— բայց 93 թվականին այլևս ազգական չկար, կային միայն բազուկները: Ես աշխատեցի: Պոնտառլիեի շրջանում, ուր դուք գնում էք, պարոն Վալժան, կա միանգամայն նահապետական ու սքանչելի մի արդյունաբերություն: Դա նրա պանրագործարաններն են, որ նրանք անվանում են պտղանոց:

Այդ ժամանակ եղբայրս, շարունակելով հյուրասիրել այդ մարդուն, չափազանց մանրամասն բացատրեց նրան, թե ինչ բան են Պոնտառլիեի պտղանոցները, որոնք երկու խմբի են բաժանվում. մեծ մարագները, որ պատկանում են հարուստներին և որտեղ քառասունից հիսուն կով կա, որոնք յոթից ութ հազար գլուխ պանիր են արտադրում ամռանը. ընկերակցության պտղանոցները, որոնք աղքատներին են պատկանում. դրանք միջակ կարողության տեր գյուղացիներն են, հանրայնացնում են իրենց կովերը և բաժանում արտադրանքը: Իրենց ծախսով մի պանրագործ են վարձում, որին *grurin* են անվանում. այդ գրյուրենն ընկերակիցներից կաթն ստանում է օրը երեք անգամ և քանակը նշանակում գույզ հաշվետախտակի վրա: Ապրիլի վերջերին սկսվում է պանրագործարանների աշխատանքը, իսկ հունիսի կեսերին պանրագործները սար են տանում իրենց կովերը:

Այդ մարդը շարունակում էր ուտել և աշխուժանում էր: Եղբայրս խմեցնում էր նրան Մովի լավորակ գինին, որից ինքն իսկ չի խմում, որովհետև, ասում է, թանկ գինի է: Եղբայրս պատմում էր նրան այս մանրամասնությունները այն հանգիստ զվարթությամբ, որին դուք ծանոթ եք, և ժամանակ առ ժամանակ սիրալիր դիմում էր ինձ: Նա մի քանի անգամ վերադարձավ գրյուրենի հաճելի դրությանը, կարծես թե ցանկանում էր, որ այդ մարդը հասկանա՝ առանց ուղղակի ու չոր կերպով խորհուրդ տալու, որ այդ վիճակը մի ապաստարան կլիներ նրա համար: Մի բան ինձ զարմացրեց: Այդ մարդն այն էր, ինչ որ ձեզ ասացի արդեն: Այնուամենայնիվ, եղբայրս ոչ ընթրիքի միջոցին և ոչ էլ ամբողջ երեկոյի ընթացքում, բացի նրա մտնելու ժամանակ Հիսուսի մասին ասած մի քանի խոսքերից՝ ոչ մի խոսք չասաց, որ կարողանար հիշեցնել այդ մարդուն, թե ով էր նա և ոչ էլ հասկացնել նրան, թե ով էր ինքը՝ եղբայրս: Դա արտաքուստ լավ առիթ էր մի քիչ քարոզ կարդալու և իր եպիսկոպոս լինելը թիապարտին ցույց տալու: Մի որևէ ուրիշի կթվար թերևս, որ այդ դժբախտին ունենալով ձեռքի տակ, լավ առիթ էր սնուցանելու միաժամանակ և նրա հոգին, և մարմինը, ինչպես նաև մի քիչ բարոյականությամբ ու խորհուրդներով համեմված մի փոքր կշտամբանք անել նրան և կամ թե մի փոքր կարեկցություն՝ ապագայում լավ վարք ունենալու հորդորով: Եղբայրս նույնիսկ չհարցրեց նրան, թե որտեղացի է, ոչ էլ նրա պատմությունը, որովհետև իր պատմության մեջ նա մի հանցանք ունի, և եղբայրս կարծես խուսափում էր այն ամենից, ինչ կարող է այդ բանը հիշեցնել: Եվ այդ զգուշությունն այն աստիճանի էր հասնում, որ որոշ պահերին, երբ եղբայրս խոսում էր Պոնտառլիեի լեռնցիների մասին, որոնք մի հաճելի աշխատանք ունեն սարի գլխին և ավելացնում էր, երջանիկ են, որովհետև անմեղ են, կարճ կտրեց, վախենալով, որ բերանից թռած այս խոսքի մեջ այնպիսի բան չլինի, որ կարողանա սարսռեցնել այդ մարդուն: Դրա մասին երկար մտածելուց հետո, կարծում եմ, որ հասկացա, թե ինչ էր տեղի ունենում եղբորս սրտում: Նա կարծում էր, որ այդ մարդը, որ կոչվում է Ժան Վալժան, դեռ շատ թարմ էր կրում իր ներկա թշվառությունը և ավելի լավ էր մտացրիվ անել նրան և հավատացնել թեկուզ մեկ բոլեով, որ նա էլ ուրիշների նման մարդ է և իր համար միանգամայն սովորական: Իսկապես, մի թե սա չէ գթասիրության ճիշտ ըմբռնումը: Չկա՞ արդյոք, բարի տիկին, ինչ-որ իսկապես ավետարանական բան այս փափկանկատության մեջ, որ խուսափում է քարոզից, բարոյախոսությունից ու պատրանքներից և լավագույն կարեկցությունը, երբ մարդը խոցված տեղ ունի, արդյոք ավելի լավ չէ՞ բնավ ձեռք չտալ նրան: Ինձ թվաց, որ իմ եղբոր ներքին մտածմունքն այս էր: Համենայն դեպս ես կարող եմ ասել, որ եթե նա ունեցել է այս բոլոր մտքերը, ապա ոչինչ չի ցույց տվել նույնիսկ ինձ համար. նա սկզբից մինչև վերջ մնաց նույն մարդը, ինչպես բոլոր երեկոներին և

ընթերց այդ Ժան Վալժանի հետ միևնույն արտահայտությամբ և միևնույն ձևով, ինչպես նա կընթերցեր պարոն Գեդեոն Լը Պրետյի հետ և կամ թե ծխական պարոն ավագերեցի հետ:

Ընթերիքի վերջին, երբ արդեն թուզն էինք ուտում, դուռը ծեծեցին: Մայր Ժերբոն էր իր փոքրիկին գրկած: Եղբայրս համբուրեց երեխայի ճակատը և փոխ վերցրեց ինձնից մոտս եղած տասնհինգ սուն՝ մայր Ժերբոյին տալու համար: Այդ միջոցին մեր հյուրը մեծ ուշադրություն չէր դարձնում: Նա այլևս չէր խոսում և թվում էր խիստ հոգնած: Հենց որ խեղճ պառավ Ժերբոն գնաց, եղբայրս ճաշավերջի աղոթքն ասաց, ապա դարձավ դեպի այդ մարդն ու ասաց. «Դուք երևի մեծ կարիք ունեք անկողին մտնելու»:

Տիկին Մագլուարը շատ շուտ հավաքել էր պնակները: Ես հասկացա, որ մենք պետք է հեռանանք, որպեսզի այդ մարդը քնի, և իսկույն երկուսս էլ վեր բարձրացանք: Սակայն մի րոպե հետո տիկին Մագլուարին ուղարկեցի ներքև, որ Շվարցվալդի այծյամի մորթին, որ իմ սենյակում է՝ տանի ու դնի այդ մարդու անկողնում: Գիշերները սառնամանիք է լինում, իսկ դա տաք է պահում: Ցավալի է, որ այդ մորթինհնացել է, մազերը պոկվում են: Եղբայրս դա գնել է այն ժամանակ երբ Գերմանիայում էր, Տոտլինդենում, Դանուբի ակունքների մոտ, ինչպես նաև փղոսկրե կոթով փոքր դանակը, որ ես գործ եմ անում սեղան նստելիս:

Տիկին Մագլուարը գրեթե անմիջապես վեր բարձրացավ և մենք սկսեցինք աղոթել աստծուն սրահում, որտեղ սպիտակեղենն ենք փռում, ապա ամեն մեկս գնացինք մեր սենյակները՝ առանց իրար որևէ բան ասելու»:

V

ՀԱՆԴԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Իր քրոջը բարի գիշեր մաղթելուց հետո գերապատիվ Բիենվյուն վերցրեց սեղանի վրայի արծաթե աշտանակներից մեկը, մյուսն էլ տվեց իր հյուրին և ասաց.

— Պարոն, եկեք ձեզ տանեմ ձեր սենյակը:

Հյուրը հետևեց նրան:

Վերևում ասվածներից նկատեցինք, որ բնակարանն այնպես էր դասավորված, որ աղոթարան գնալու համար, որտեղ անկողնախորշն էր գտնվում, և կամ այդտեղից դուրս գալու համար պետք էր անցնել եպիսկոպոսի ննջասենյակի միջով:

Այն րոպեին, երբ նրանք անցնում էին այդ սենյակով, տիկին Մագլուարը տեղավորում էր արծաթեղենը եպիսկոպոսի գլխավերևում եղած պահարանի մեջ: Դա վերջին աշխատանքն էր, որ նա կատարում էր ամեն երեկո քնելուց առաջ:

Եպիսկոպոսն իր հյուրին տեղավորեց անկողնախորշում: Սպիտակ ու մաքուր անկողին էր պատրաստված այդտեղ: Հյուրն իր աշտանակը դրեց փոքր սեղանի վրա:

— Դե, բարի գիշեր,— ասաց եպիսկոպոսը:— Առավոտը մեկնելուց առաջ մի թաս մեր կովերի տաք կաթից կխմենք:

— Շնորհակալություն, պարոն ավագերեց,— ասաց հյուրը:

Հազիվ էր նա արտասանել այս հաշտությանը լի խոսքերը, երբ հանկարծ և առանց անցումի մի տարօրինակ շարժում գործեց, որ սարսափից կքարացներ երկու սուրբ աղջիկներին, եթե ներկա լինեին: Նույնիսկ այսօր մենք դժվարանում ենք հաշիվ տալ, թե ինչն էր մղում նրան այդ թուպեին: Արդյո՞ք նա ուզում էր որևէ նախագուշացում կամ սպառնալիք անել: Հնազանդվո՞ւմ էր նա արդյոք իր համար էլ բնագդական ու մութ մի տեսակ մղումի: Նա հանկարծակի շուտ եկավ դեպի ծերունին, խաչաձևեց ձեռքերը և մի մոլեգին հայացք սևեռելով իր հյուրընկալի վրա՝ բացականչեց խապոտ ձայնով.

— Օ՛, իրավ դուք ինձ օթևանում եք ձեզ մոտ, նույնիսկ ձե՛ր կողքին:

Նա ընդհատեց ու ավելացրեց մի այնպիսի ծիծաղով, որի մեջ մի տեսակ ճիվադային բան կար:

— Ամեն բան լավ մտածե՞լ եք: Ձեզ ո՞վ ասաց, որ ես մարդասպան չեմ:

Եպիսկոպոսը պատասխանեց.

— Դա բարի աստծուն է վերաբերում:

Ապա շարժելով շրթունքները, նման այն մարդուն, որ աղոթում կամ ինքն իրեն խոսում է, նա ծանրաբար տնկեց իր աջ ձեռքի երկու մատները և օրհնեց օտարականին, որը չկոացավ, ապա առանց գլուխը շուտ տալու կամ ետ նայելու, վերադարձավ իր սենյակ:

Երբ անկողնախորշում մարդ էր լինում քնած, մի մեծ, քաթանե վարագույր էր քաշվում, որը ծայրեծայր ծածկում էր խորանը: Եպիսկոպոսն այս վարագույրի առջևից անցնելիս ծնրադրեց և մի կարճ աղոթք ասաց:

Մի թուպե հետո նա այգում էր, քայլում, երագում և խոկում էր, հոգին ու միտքն ամբողջությամբ տված այն մեծ խորհրդավոր երևույթներին, որ աստված ցույց է տալիս բաց մնացած աչքերին:

Գալով օտարականին, նա իսկապես այնքան էր հոգնել, որ նույնիսկ չէր օգտվել սպիտակ ու մաքուր սավաններից: Տաժանապարտների ձևով նա քթածակելով փչել էր մոմը և առանց հանվելու ընկել էր անկողնու վրա ու անմիջապես խոր քուն մտել:

Գիշերվա տասներկուսը խփեց, երբ եպիսկոպոսն այգուց վերադարձավ իր սենյակ:

Մի քանի թուպե հետո բոլորն էլ քնել էին փոքրիկ տան մեջ:

VI

ԺԱՆ ՎԱԼԺԱՆ

Գիշերվա կեսին Ժան Վալժանն արթնացավ:

Ժան Վալժանը Բրիի շրջանի աղքատ գյուղացու որդի էր: Մանկության ժամանակ նա կարդալ չէր սովորել: Հասունության տարիքին նա ծառ էտող դարձավ Ֆավոլում: Նրա մոր անունը Ժաննա Մաթիո էր, իսկ հորը՝ Ժան Վալժան կամ Վլաժան՝ հավանաբար voilà Jean-ի⁴⁵ ծաղրամականվան սղումը:

⁴⁵ Վուալա Ժան՝ ահա Ժանը (ֆր.):

Ժան Վալժանը մտածկոտ, բայց ոչ տխուր բնավորություն ուներ, մի բան, որ հատուկ է գորովալից հոգիներին: Ընդհանուր առմամբ սակայն, գոնե արտաքուստ նա մի տեսակ թմրած և բավական աննշան մարդ էր: Խիստ վաղ տարիքից նա կորցրել էր իր հորն ու մորը: Նրա մայրը հիվանդացել էր կաթնատենդով և վատ խնամքի պատճառով մեռել էր: Հայրը, որ նույնպես էտոդ էր, ընկել էր ծառից ու մեռել: Ժան Վալժանին մնացել էր միմիայն իրենից մեծ մի քույր, որն այրի էր և ուներ յոթ երեխա՝ աղջիկ ու տղա: Այս քույրը խնամել էր Ժան Վալժանին և քանի դեռ ամուսինը կենդանի էր, օթևանել ու սնուցել էր իր փոքր եղբորը: Ամուսինը մեռավ: Յոթ երեխաներից անդրանիկը ութ տարեկան էր, վերջինը՝ մեկ: Այդ ժամանակ Ժան Վալժանի քսանհինգ տարին էր լրանում: Նա փոխարինեց հորը և իր հերթին պահեց քրոջը, որ խնամել էր իրեն: Դա շատ պարզ ձևով տեղի ունեցավ, պարտականության պես, Ժան Վալժանը նույնիսկ մի տեսակ գոռոզացավ: Նրա երիտասարդությունը մսխվում էր այդպես՝ ծանր ու վատ վճարված աշխատանքի մեջ: Ոչ ոք չէր լսել, որ նա «մտերմուհի» ունենար իրենց շրջանում: Նա ժամանակ չէր ունեցել սիրահարվելու:

Երեկոյան նա վերադառնում էր հոգնած և առանց մի բառ արտասանելու ուտում էր ապուրը: Նրա ուտելու միջոցին, քույրը՝ Ժաննան, հաճախ վերցնում էր նրա փայտամանից մսի կտորը, ճարպի շերտը, կաղամբի միջուկը՝ երեխաներից մեկնումեկին տալու համար: Իսկ նա կռացած սեղանի վրա, գլուխը գրեթե ապուրի մեջ, երկար մազերը փռած փայտամանի շուրջը և աչքերը փակած՝ շարունակում էր ուտել և այնպիսի արտահայտություն ուներ, թե ոչինչ չի տեսնում և թողնում էր, որ անի: Ֆավորում, Վալժանների տնակից ոչ հեռու, նեղ փողոցի մյուս կողմում մի ազարակապանուհի էր ապրում՝ Մարի-Կլոդ անունով: Ժան Վալժանի քրոջ երեխաները, որ սովորաբար քաղցած էին լինում, գնում էին երբեմն Մարի-Կլոդի մոտ և իրենց մոր անունից մի լիտր կաթ էին փոխ ուզում և թաքնվելով որևէ ցանկապատի կամ ծառուղու անկյունում՝ խմում էին, ամանն իրար ձեռքից խլելով և այնքան շտապելով, որ փոքր աղջիկները կաթը թափում էին իրենց կրծկալի կամ պարանոցի վրա: Եթե մայրն իմանար այս ասպատակությունը՝ խստորեն կպատժեր հանցապարտներին: Ժան Վալժանը, թեև բիրտ ու մոթմոթան, մորից թաքուն վճարում էր Մարի-Կլոդի կաթի գինը և երեխաներն ազատվում էին պատժվելուց:

Էտի եղանակին նա օրական շահում էր տասնութ սու, հետո վարձվում էր որպես բերք հավաքող, որմնադրի աշակերտ, եզնարած կամ ընդհանրապես մշակ: Անում էր, ինչ կարող էր: Քույրն էլ իր կողմից էր աշխատում, բայց ինչ կարող էս անել յոթ երեխա ունենալիս: Դա միտխուր խմբակ էր, որին թշվառությունը շրջապատեց ու քիչ-քիչ խեղդեց: Մի անգամ ձմեռը շատ խիստ էր: Ժանն աշխատանք չգտավ:

Մի կիրակի երեկո Ֆավորլի եկեղեցու հրապարակի հացագործը՝ Մոբեր Իզաբոն, պատրաստվում էր քնել, երբ մի ուժեղ հարված լսեց իր կրպակի ցանցածածկ ու ապակեպատ ճակատամասից: Նա հասավ ժամանակին և տեսավ, որ մի բազուկ ներս էր մտել ցանցի ու ապակու մեջ բռունցքի հարվածի բացած ծակից: Բազուկը մի հաց վերցրեց ու տարավ: Իզաբոն շտապ դուրս եկավ. գողն ամենայն ուժով փախչում էր. Իզաբոն վազեց նրա ետևից ու բռնեց նրան: Գողը շարտել էր հացը, բայց բազուկն արնաշաղախ էր: Ժան Վալժանն էր դա:

Այս դեպքը տեղի էր ունենում 1795 թվականին: Ժան Վալժանը դատի հանձնվեց «գիշերը բնակված տան մեջ, ջարդելով հանդերձ գողություն անելու» մեղադրանքով: Նա մի հրացան ուներ, որն ավելի լավ էր գործածում, քան որևէ նշանաձիգ: Նա երբեմն էլ գաղտագողի որսորդություն էր անում, մի հանգամանք, որ նրան վնասեց: Գաղտնի որսի նկատմամբ մի օրինական նախապաշարմունք կա: Գաղտնի որսորդը, ինչպես նաև մաքսանենգը՝ ավագակին խիստ մոտ է: Սակայն անցողիկ կերպով նկատենք, որ այս կարգի մարդկանց և քաղաքների զազրելի մարդասպանների միջև մի անդունդ կա: Գազանի որսն անողն ապրում է անտառում, մաքսանենգը՝ սարում կամ ծովի վրա:

Քաղաքները մարդկանց գազանացնում են, որովհետև մարդկանց ապականում են: Լեռը, ծովը և անտառը մարդկանց վայրենացնում են: Նրանք զարգացնում են վայրագ կողմը, բայց հաճախ չեն քայքայում մարդկային կողմը:

Ժան Վալժանը հայտարարվեց հանցավոր: Օրենսգրքի խոսքերը բացահայտ էին: Մեր քաղաքակրթության մեջ ահավոր ժամեր կան. դա այն բուլեններն են, երբ պատժական օրենքը նավաբեկության վճիռ է արձակում: Ինչպիսի մահագույժ վայրկյան է, երբ հասարակությունը հեռանում ու լքում է մի մտածող էակի: Ժան Վալժանը դատապարտվեց հնգամյա թիապարտության:

1796 թվականի ապրիլի 22-ին Փարիզի փողոցներում ծանուցում էին Մոնտենոտի հաղթանակը, որ տարել էր Իտալիայի բանակի գլխավոր գեներալը, որին Դիրեկտորիայի⁴⁶ պատգամավորը Հինգ Հարյուրի ժողովում 6-րդ տարվա Ֆլորենտի 2-ին անվանում է Բուոնապարտե: Այդ նույն օրը կալանավորների մի մեծ շղթա կազմվեց Բիսետրում⁴⁷: Ժան Վալժանն էլ մաս կազմեց այդ շղթային: Բանտի հին դռնապաններից մեկը, որ հիմա իննսուն տարեկանի մոտ է, դեռ շատ լավ հիշում է այս դժբախտին, որը շղթայվեց չորրորդ շարանի վերջը՝ բակի հյուսիսային անկյունում: Նա էլ մնացած բոլորի նման նստել էր գետնին: Թվում էր, որ ոչինչ չի հասկանում իր վիճակից, միայն այն, որ դա սարսափելի վիճակ է: Հնարավոր է նաև, որ խեղճ ու տգետ մարդու իր տարտամ մտքերի միջից ինչ-որ ծայրահեղ բան էր խառնում այդ վիճակին: Այն միջոցին, երբ մուրճի ծանր հարվածներով նրա ծոծրակի մոտ ամրացնում էին երկաթե անուրի խոշոր գամը, նա լաց էր լինում, արտասուքները խեղդում էին նրան ու թույլ չէին տալիս խոսել. երբեմն նա միայն կարողանում էր ասել. «Ես էտոդ էի Ֆավոլում»: Ապա շարունակելով հեկեկալ, նա բարձրացնում էր իր աջ ձեռքը և աստիճանաբար իջեցնում յոթ անգամ, կարծես հաջորդաբար դիպցնում էր յոթ անհավասար գլուխներին և այս շարժումով գուշակում էիր, որ նա արած հանցանքը կատարել էր յոթ փոքրիկներին սնուցելու և հագցնելու համար:

Նա էլ գնաց Տուլոն: Քսանյոթ օր շղթան վզին սայլակով ճանապարհ գնալուց հետո տեղ հասավ: Տուլոնում նրան կարմիր բաճկոն հագցրին: Այն բոլորը, որ կազմել էր նրա կյանքը, ջնջվեց, նույնիսկ անունը. նա մինչև անգամ Ժան Վալժան չմնաց, այլ դարձավ համար 24601: Ի՞նչ եղավ քույրը, ի՞նչ եղան յոթ երեխաները: Ո՞վ է զբաղվում սրանով: Ի՞նչ են դառնում արմատից սողցված դալար ծառի տերևները: Միշտ միևնույն պատմությունն է տեղի ունենում: Այս կենդանի խեղճ էակները, աստծո արարածները, մնալով այլևս առանց պաշտպանի, առանց առաջնորդի ու ապաստանի՝ գնացին դեպի անորոշություն և ո՞վ գիտե, թերևս յուրաքանչյուրն իր ուղղությամբ և խրվեցին քիչ-քիչ այն սառն մառախուղի մեջ, որտեղ ընկղմվում են մենակյաց ճակատագրեր, այն տխրադեմ մշուշի մեջ, որտեղ հաջորդաբար անհետանում են այնքան դժբախտ գլուխներ մարդկային ցեղի մոայլ երթի մեջ: Նրանք հեռացան երկրից: Նրանց գլուղի զանգակատունը մոռացավ նրանց, դաշտի սահմանը մոռացավ նրանց և թիարանում մի քանի օր մնալուց հետո Ժան Վալժանն ինքն էլ մոռացավ նրանց: Այս սրտի մեջ, որտեղ մի վերք էր գոյացել, առաջացավ մի սպի: Ահա բոլորը: Այն ողջ ժամանակ, որ նա անցկացրեց Տուլոնում, հազիվ մեկ անգամ լուր ստացավ իր քրոջից: Դա կարծես նրա գերության

⁴⁶ Դիրեկտորիա անունն էր տրվում ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխության ժամանակ այն կառավարությանը, որ Օերերի Խորհրդի և Հինգ Հարյուրի խորհրդի օգնությամբ 4-րդ տարվա բրյումերի 5-ից (1795 թ. հոկտ. 27) կառավարում էր երկիրը: Դիրեկտորիան և խորհուրդները, որ ի վերջո որևէ ազդեցություն չունեին, տապալվեց 8-րդ տարվա բրյումերի 18-ին (1799 թ. նոյեմբերի 9-ին) գեներալ Բոնապարտի ձեռքով: Հեղափոխության սկզբի տարիներին հաստատվեց մի նոր տոմար, որով փոխվեցին ամիսների անունները և տարեթվերը: Կայսրության հռչակումից հետո այդ հեղափոխական տոմարը ջնջվեց: Ծ. թ.:

⁴⁷ Գյուլ Փարիզի մոտակայքում, հայտնի է իր անկելանոցով ու բանտով:

չորրորդ տարվա վերջերին էր: Չգիտեմ այլևս, թե ինչ ուղիով այս տեղեկությունը հասավ նրան: Մի մարդ, որին ճանաչում էր գյուղից, տեսել էր նրա քրոջը: Նա Փարիզում էր: Ապրում էր Սեն-Սյուլպիս եկեղեցու մոտերքը, Ժենդր խճուկ փողոցում: Միայն մի երեխա էր մնացել նրա մոտ, վերջին տղան: Ո՞ր էին մյուս վեցը: Թերևս մայրն ինքն էլ չգիտեր: Ամեն օր առավոտյան նա գնում էր Սաբո փողոց, համար 3-ում գտնվող տպարանը և աշխատում էր որպես թուղթ ծալող և պրակ անող: Ժամը վեցին պետք է այդտեղ լիներ, ձմեռները լուսաբացից առաջ: Տպարանի բակում մի դպրոց կար և մայրն այդտեղ էր տանում իր յոթ տարեկան երեխային: Բայց քանի որ նա տպարան էր գնում ժամը վեցին, իսկ դպրոցը բացվում էր միայն յոթին, ապա երեխան ստիպված էր սպասել բակում մեկ ժամ, մինչև դպրոցը բաց անեին: Ձմեռը, մեկ գիշերային ժամ, բաց օդում: Թույլ չէին տալիս, որ երեխան տպարան մտնի, որովհետև, ասում էին, կխանգարի: Բանվորներն առավոտյան անցնելիս տեսնում էին այդ խեղճ փոքր էակին՝ նստած սալահատակի վրա, քնից օրորվելիս, հաճախ էլ պազած ու ծավլած իր զամբյուղի վրա՝ քնած մթի մեջ: Երբ անձրև էր գալիս, մի պառավ կին՝ դռնապանուհին, գրում էր նրան և վերցնում իր խցիկը, որտեղ սոսկ մի խշտյակ, մի ճախարակ ու երկու փայտե աթոռ կար: Փոքրիկը քնում էր այդտեղ մի անկյունում և սեղմվում կատվին՝ ավելի քիչ մրսելու համար: Ժամը յոթին դպրոցը բացվում էր և երեխան ներս էր մտնում: Ահա թե ինչ հաղորդեցին Ժան Վալժանին: Միայն մի օր ապրեց նա այդ լուրերով, բայց դա մի բուպե, մի շող եղավ, նման հանկարծակի կերպով այս էակների բախտի վրա բացված լուսամուտին, որոնց այդ շողը սիրել էր, ապա ամեն բան նորից փակվեց: Նրանցից էլ որևէ լուր չհասավ նրան. այլևս երբեք նրանց չտեսավ, երբեք չհանդիպեց և այս վշտալի պատմության շարունակության ընթացքում էլ այլևս նրանց չենք գտնի:

Այս չորրորդ տարվա վերջին հասավ Ժան Վալժանի փախչելու հերթը: Ընկերներն օգնեցին նրան, ինչպես դա ընդունված է այդ տխուր տեղում: Նա փախավ: Երկու օր նա ազատ թափառեց դաշտերում, եթե կարելի է ազատ համարել, երբ հալածվում ես, ամեն բուպե գլուխդ շուռ ես տալիս, նվազագույն շշուկից ցնցվում, ամեն բանից վախենում՝ ծխացող տանիքից, անցնող մարդուց, հաչող շնից, արշավասույր ընթացող ձիուց, ժամացույցի գնդոցից, ցերեկից՝ որ տեսնում ես, գիշերից, որովհետև չեն տեսնում, ճանապարհից, արահետից, թփից ու քնից: Երկրորդ օրը երեկոյան նա նորից բռնվեց: Երեսուներեք ժամից ի վեր ոչ կերել էր և ոչ էլ քնել: Ծովային դատարանն այս հանցագործության համար դատապարտեց նրան երեք տարվա երկարաձգման, որով դարձավ ութ տարի: Վեցերորդ տարին նորից փախչելու հերթը հասավ նրան. նա օգտվեց դրանից, բայց չկարողացավ իրագործել: Ստուգումն անելիս նա բացակա էր: Թնդանոթի մի հարված արձակվեց և շուրջկալ անողները գիշերը գտան նրան թաքնված մի շինվող նավի ողնափայտի տակ: Նա դիմադրեց պահապաններին, բայց նրան բռնեցին: Փախուստն ըմբոստություն: Այս կետը, որ նախատեսված է հատուկ օրենսգրքով՝ պատժվեց հինգ տարվա ծանրացմամբ, որից երկուսը կրկնակի շղթայով: Տասներեք տարի: Տասներորդ տարին նորից նրա հերթը հասավ և նա դարձյալ օգտվեց դրանից: Այս անգամ ավելի հաջողակ չեղավ: Եվս երեք տարի այս նոր փորձի համար: Վերջապես կարծեմ տասներեքերորդ տարվա ընթացքում մի վերջին անգամ էլ փորձեց ու այն հաջողությունն ունեցավ, որ չորս ժամ բացակայելուց հետո նորից բռնվեց: Եվս երեք տարի այս չորս ժամվա համար: Տասնինը տարի: 1815 թվականի հոկտեմբերին նա ազատ արձակվեց: Նա մտել էր այդտեղ 1798 թվականին մի ապակի ջարդելու և մեկ հատ հաց գողանալու համար:

Այստեղ մի կարճ միջանկյալ խոսք ասենք. երկրորդ անգամն է որ այս գրքի հեղինակը պատժային հարցի և օրենքով դատապարտելու ուսումնասիրությունների մեջ հանդիպում է մեկ հատ հացի գողության, որպես մի կյանքի դժբախտության ելակետի: Կլոդ Գյոն մի հաց էր գողացել, Ժան Վալժանն էլ մի հաց էր գողացել: Անգլիական մի վիճակագրություն ցույց է տալիս, որ Լոնդոնում հինգ գողությունից չորսի անմիջական պատճառը քաղցն է:

Ժան Վալժանը թիարան էր մտել հեկեկալով ու սարսռալով: Այդտեղից նա դուրս եկավ անզգա: Նա մտել էր այդտեղ հուսահատ, դուրս եկավ մռայլ:

Ի՞նչ էր տեղի ունեցել նրա հոգում:

VII

ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՄԸ

Փորձենք ցույց տալ այդ:

Անհրաժեշտ է, որ հասարակությունը տեսնի այս բաները, որովհետև ինքն է ստեղծում դրանք:

Նա, ինչպես ասել ենք, մի տգետ, բայց ոչ տխմար մարդ էր: Բնական լույս էր վառվում նրա մեջ: Դժբախտությունը, որ նույնպես իր լույսն ունի, ավելացրեց նրա հոգում փոքր շող: Ճիպոտի ու շղթայի տակ, գնդանում, հոգնաձության պահերին, թիարանի կիզիչ արևի տակ, տաժանապարտների փայտե անկողնու վրա նա խորասուզվեց իր խղճի մեջ ու երկար մտածեց:

Նա իր դատարանը կազմեց:

Եվ սկսեց ինքն իրեն դատել:

Խոստովանեց, որ ինքն ապօրինի կերպով պատժված մի անմեղ չէր:

Խոստովանեց, որ կատարել էր մի բռնի ու դատապարտելի արարք, որ թերևս այդ հացը չմերժեին իրեն, եթե խնդրած լիներ, որ համենայն դեպս ավելի լավ կլիներ սպասել կամ գթասիրության, կամ աշխատանքի, որ անառարկելի իրավացիություն չէ՝ ասել, թե ինչպե՞ս կարելի է սպասել, երբ քաղցած ես, որ նախ և առաջ խիստ հազվադեպ է, որ մարդը բառացի առումով քաղցից մեռնի, և ապա, մարդ էակը բարեբախտաբար, թե դժբախտաբար այնպես է ստեղծված, որ կարող է երկար ու շատ տառապել, թե բարոյապես, թե ֆիզիկապես և չմեռնել: Ուստի պետք էր համբերել, իսկ դա նույնիսկ ավելի լավ կլիներ այդ խեղճ փոքր երեխաների համար, մինչդեռ ինքը՝ այդ թույլ ու դժբախտ մարդը, խելագարություն էր արել, բռնելով ողջ հասարակության օձիքից ու երևակայել, որ գողության միջոցով կարելի է թշվառությունից դուրս գալ, իսկ համենայն դեպս թշվառությունից դուրս գալու վատ դուռ էր այն, որով մտնում են նշավակության մեջ: Մի խոսքով սխալվել էր:

Ապա ինքն իրեն հարցրեց.

Արդյոք ինքը միակ հանցավորն էր այդ ճակատագրական պատմության մեջ: Արդյոք ամենից առաջ ծանրակշիռ բան չէ՞ր այն, որ ինքը՝ աշխատավորը աշխատանք չունենար, ինքը՝ աշխատասերը հաց չունենար: Եվ հետո հանցանքը կատարելուց և խոստովանելուց հետո՝ պատիժն արդյոք գազանային ու ծանր չէ՞ր եղել: Արդյոք օրենքն ավելի մեծ սխալ չէ՞ր կատարել պատիժը նշանակելիս, քան թե մեղսագործը հանցանքը գործելիս: Արդյոք կշռի նժարներից այն մեկը, որտեղ քավությունն է՝ խիստ ծանր չէ՞ր եղել: Արդյոք ծայրահեղ պատիժն ինքնին ջնջումը չէ՞ր և չէ՞ր հանգում դրությունը շրջելու հետևանքին՝ մեղսագործի հանցանքը փոխարինելով ճնշման հանցանքով, հանցավորին զոհ դարձնելով, պարտատերին՝ պարտապահանջ և իրավունքը դնելով նույնիսկ նրա կողքին, ով խախտել էր այն: Արդյոք այդ պատիժը, որ կնճռոտել էր փախչելու հաջորդական փորձեր անելու բարդացումով, չէ՞ր դառնում մի տեսակ մահափորձ՝ կատարված

ամենաուժեղի կողմից ամենաթույլի վրա, չէ՞ր դառնում հասարակության գործած ոճիրը անհատի վրա, մի ոճիր, որ վերսկսվում էր ամեն օր ու տնում էր տասնինը տարի:

Նա հարցրեց նաև, թե մարդկային հասարակությունը կարո՞ղ էր իրավունք ունենալ հավասարապես ենթարկելու իր անդամներին՝ մի դեպքում իր անմիտ աննախատեսությամբ, իսկ մյուս դեպքում իր անխիղճ նախատեսությամբ և մի խեղճ մարդու ընդմիջող պահել պակասի ու ծայրահեղության մեջ, պակասը՝ աշխատանքի, ծայրահեղությունը՝ պատժի:

Չափազանց չէ՞ր արդյոք, որ հասարակությունն այսպես վերաբերվի հենց իր այն անդամների հետ, որոնք ամենավատ բաժինն էին ստացել բարիքների պատահական բաժանման ժամանակ և հետևաբար ամենից ավելի արժանի էին արգահատության:

Այս հարցերը դնելուց ու լուծելուց հետո նա դատեց հասարակությունը և դատապարտեց նրան:

Եվ դատապարտեց նրան իր ատելությանը:

Նա պատասխանատու դարձրեց նրան այն ճակատագրի համար, որին ենթարկվել էր և ինքն իրեն ասաց, որ թերևս չէր երկմտի մի օր նրանից հաշիվ պահանջելու: Նա պարզեց իրեն, որ իր հասցրած վնասի և իրեն հասցված վնասի մեջ հավասարակշռություն չկար և ի վերջո եզրակացրեց, որ իր կրած պատիժը, ճիշտն ասած, անարդարություն չէր, բայց անիրավություն էր:

Բարկությունը կարող է անմիտ ու խենթ լինել. կարելի է գուր տեղը բարկանալ, բայց մարդը զայրանում է միայն այն ժամանակ, երբ իսկապես որևէ կողմից իրավունք ունի: Ժան Վալժանն զգում էր, որ զայրացած է:

Եվ բացի դրանից, մարդկային հասարակությունը նրան միայն վատություն էր արել: Ոչ մի ժամանակ նա չէր տեսել հասարակության այլ դեմքը, քան այն, որ նա անվանում է իր արդարադատությունը և որ նա ցույց է տալիս նրանց, ում հարվածում է: Մարդիկ նրան մոտեցել էին միմիայն խոցելու համար: Երբեք, սկսած իր մանկությունից, մորից ու քրոջից նա քաղցր խոսքի ու բարյացակամ հայացքի չէր հանդիպել: Տառապանքից-տառապանք անցնելով՝ նա քիչ-քիչ հանգեց այն համոզման, որ կյանքը պատերազմ է և այդ պատերազմում ինքը պարտվել է: Նա իր ատելությունից զատ այլ զենք չուներ: Եվ որոշեց այն սրել թիարանում և դուրս գալուց հետո տանել:

Տուլոնում տաժանակիքների համար մի դպրոց կար, որը պահում էին անգետ եղբայրները⁴⁸ և որտեղ սովորեցնում էին ամենաանհրաժեշտ բաներն այդ դժբախտներից նրանց, ովքեր ցանկություն ունեին: Նա էլ այդ բարի ցանկությունն ունեցողներից մեկը եղավ: Քառասուն տարեկան հասակին նա դպրոց գնաց և սովորեց կարդալ, գրել ու հաշվել: Նա զգաց, որ միտքն ուժեղացնել՝ նշանակում էր ուժեղացնել ատելությունը: Որոշ դեպքերում կրթությունն ու լույսը կարող են չարի զարգանալուն նպաստել:

Թեև տխուր բան է ասել, բայց իր դժբախտության պատճառը հանդիսացող հասարակությունը դատելուց հետո նա դատեց նաև այդ հասարակությունն ստեղծող նախախնամությունը և նրան էլ նույն ձևով դատապարտեց:

Այսպիսով, տասնիննամյա տանջանքից ու ստրկությունից հետո այս հոգին միաժամանակ և բարձրացավ, և ընկավ: Մի կողմից լույս մտավ այդտեղ, իսկ մյուս կողմից՝ խավար:

⁴⁸ Սեն-Ժան դը Դիո միաբանության եղբայրները իբր թե խոնարհաբար այս անունն էին ընդունել: Շ. թ.:

Ինչպես տեսանք, Ժան Վալժանը վատ խառնվածք չուներ: Նա դեռ բարի էր, երբ թիարան եկավ: Այդտեղ նա դատապարտեց հասարակությունը և զգաց, որ դառնում է չար. այդտեղ նա դատապարտեց նախախնամությունը և զգաց, որ դառնում է ամբարիշտ:

Այստեղ դժվար է մի փոքր խորհրդածություն չանել:

Մարդկային բնավորությունն այսպես հիմնովին և ամբողջապես ձևափոխվում է արդյոք: Աստծո ստեղծած մարդը կարո՞ղ է չարանալ մարդու ձեռքով: Բախտը կարո՞ղ է անընդհատ վերափոխել հոգին և վատացնել այն, երբ ինքն էլ վատ է լինում: Միտը կարո՞ղ է այլանդակվել և անզգուշաչափ դժբախտության ճնշման ներքո ձեռք բերել անբուժելի սոցիոլոգիաների ու սոկրատիկությունների, ինչպես ողնային պուլսը խիստ ցածր կամարի ներքո: Չկա՞ արդյոք յուրաքանչյուր մարդկային հոգու, հատկապես Ժան Վալժանի հոգու մեջ մի նախնական կայծ, մի աստվածային տարր, որն այս աշխարհում անապականելի է, իսկ մյուսում անմահ, որը բարին կարող է զարգացնել, արծարծել, վառել ու պայծառ շողեր արձակել տալ և չարը չի կարող երբեք ամբողջությամբ հանգցնել:

Ծանր ու մութ հարցեր, որոնցից վերջինին յուրաքանչյուր ֆիզիոլոգ հավանաբար և առանց տատանվելու կպատասխաներ ոչ, եթե Տուլնում հանգստի ժամերին, որոնք Ժան Վալժանի համար երազանքի ժամեր էին, տեսած լիներ այդ նստած, բազուկները որևէ ոլորանի ճաղերի վրա խաչաձևած, շղթայի ծայրը քարշ չգալու համար գրպանը դրած մռայլ, լուրջ, լռիկ ու մտախոհ թիապարտին, օրենքների պարիային, որ զայրույթով էր նայում մարդկանց, քաղաքակրթության դատապարտածին, որ խստությամբ էր նայում երկնքին:

Անտարակույս ֆիզիոլոգ դիտողը, իսկ մենք չենք ուզում ծածկել այդ, մի անդարմանելի թշվառություն կտեսներ այդտեղ. նա գուցե խղճար օրենքի իրողության այս հիվանդին, բայց նա նույնիսկ չպիտի փորձեր բուժել. նա իր հայացքը շուտ կտար նրա հոգու մեջ նշմարած խռոչներից և ինչպես Դանտեն ջնջեց դժոխքի վրայից, նա էլ կջնջեր այդ էակից այն բառը, որն աստծո մատը գրել է սակայն յուրաքանչյուր մարդու ճակատին՝ Հույս:

Այս հոգեկան վիճակը, որ մենք փորձեցինք վերլուծել, արդյո՞ք նույնքան կատարելապես պարզ էր Ժան Վալժանին, ինչպես մենք ջանացինք դարձնել մեր ընթերցողների համար: Ժան Վալժանը տեսնո՞ւմ էր որոշապես իր բարոյական թշվառությունը կազմող տարրերը, այդ տարրերի կազմությունից թե հետո, թե կազմվելու ընթացքում: Այս կոպիտ ու անգրագետ մարդը հստակորեն ըմբռնե՞լ էր այն գաղափարների հաջորդականությունը, որով նա աստիճանաբար բարձրացել ու իջել էրմինչև այն սզալի պատկերները, որոնք երկար տարիներ ի վեր նրա մտքի ներքին հորիզոն էին կազմում: Լավ գիտակցո՞ւմ էր նա այն բոլորը, որ տեղի էր ունեցել նրա մեջ և այն բոլորը, որ շարժվում էր այդտեղ: Հենց այս էլ մենք չէինք համարձակվի ասել. հենց այս էլ մենք չենք կարծում: Շատ մեծ սոցիոլոգություն կար Ժան Վալժանի մեջ, որպեսզի նույնիսկ այդքան դժբախտություններից հետո՝ այդտեղ մեծ անորոշություն չմնար: Լինում էին բուպեններ, երբ նա նույնիսկ լավ չէր իմանում, թե ինչ է զգում: Ժան Վալժանը խավարի մեջ էր և նա տառապում էր խավարի մեջ. նա աստում էր խավարի մեջ և կարելի է ասել, որ նա աստում էր անգիտակցորեն: Նա ապրում էր սովորաբար այդ ստվերի մեջ՝ խարխափելով կույրի և երագողի պես: Բայց ընդմիջումներով, հանկարծ, թե իրենից և թե դրսից ունենում էր զայրույթի մի ցնցում, տառապանքի հավելում, մի դժգույն և վաղանցիկ շողշողում, որ լուսավորում էր նրա ողջ հոգին և հանկարծակի տեսանելի էր դարձնում նրա չորս կողմը: Այդ սոսկալի լույսի շողերի տակ նա տեսնում էր իր բախտի քստմանելի անդունդներն ու մռայլ հեռանկարները:

Շողն անցնում էր ու գիշերը նորից իջնում. ո՞ր էր նա, ինքն էլ չգիտեր:

Այս տեսակ պատիժները, որոնց մեջ գերիշխում է այն, ինչ անգութ է, այսինքն այն, ինչ ապշեցնող է, այն հատկությունն ունեն, որ քիչ-քիչ, մի տեսակ տխմար ձևափոխության միջոցով մարդուն վայրի կենդանի, երբեմն էլ վայրի գազան են դարձնում: Ժան Վալժանի հաջորդական ու համառ փախուստի փորձերը բավական կլինեին ապացուցելու օրենքի կատարած այս տարօրինակ աշխատանքը մարդկային հոգու վրա: Ժան Վալժանը կկրկներ այս միանգամայն անօգուտ ու անիմաստ փորձերն այնքան անգամ, ինչքան առիթը ներկայանար՝ առանց մի լուրջ մտածելու հետևանքների կամ թե արդեն արված փորձերի մասին: Նա թափով խույս էր տալիս, ինչպես վանդակի դուռը բաց տեսնող գայլը: Բնագործ նրան ասում էր՝ փրկիր քեզ: Դատողությունը կասեր՝ կաց: Սակայն այդպիսի բուռն փորձության առջև դատողությունն անհետացել էր և մնացել էր միայն բնագործ: Մոսկվա գազանն էր գործում: Երբ նորից նրան բռնում էին, հարկադրած նոր խստությունները ծառայում էին միայն նրան ավելի շվարեցնելու:

Մի մանրամասնություն, որ մենք չպետք է անտեսենք, այն է, որ նա այնպիսի ֆիզիկական ուժի տեր էր, որին թիապարտներից ոչ ոք չէր կարող հավասարվել: Ծանր աշխատանքում, որն է հաստ պարան ոլորելիս կամ ոլորանը պտտեցնելիս Ժան Վալժանը չորս մարդ արժեր: Նա երբեմն բարձրացնում ու պահում էր իր մեջքին հսկայական ծանրություններ ու անհրաժեշտության դեպքում փոխարինում էր այն գործիքին, որ անվանում են վերամբարձ և, որը հնում *orgueil*⁴⁹ էին անվանում, որից անցողակի ասենք, իր անունն է ստացել Փարիզի կենտրոնական շուկայի մոտի Մոնտոգյոյ փողոցը: Մի անգամ, երբ վերանորոգում էին Տուլոնի քաղաքապետարանի պատշգամբը, քանդակագործ Պյուժեի սքանչելի կարիատիդներից մեկը, որ պահում էր այդ պատշգամբը, տեղից պոկվեց և քիչ մնաց ընկներ: Ժան Վալժանը, որ այդտեղ էր, իր ուսով պահեց կարիատիդը, որով և ժամանակ տվեց բանվորներին հասնելու:

Նրա դյուրաշարժությունը գերազանցում էր նրա ուժին. որոշ տաժանապարտներ, փախուստի մշտական երագողները ի վերջո ուժն ու հանդգնությունը համադրելով՝ դարձնում են այն մի իսկական գիտություն: Դա մկանների գիտությունն է: Մի ամբողջ խորհրդավոր ստատիկա են գործադրում ամեն օր բանտարկյալները՝ ձանձերին ու թռչուններին մշտնջենապես նախանձողները: Ժան Վալժանի համար խաղ էր որևէ ուղղաձիգ մագլցելը և հենման կետեր գտնելն այնտեղ, որտեղ հազիվ մի ցայտ են տեսնում: Նա իր մեջքն ու սրունքները ձգելով, արմունկներն ու կրունկներն ագուցելով քարի խորդորորդությունների մեջ, կարծես կախարդաբար պատի մի անկյունից պարզվում ու հասնում էր երրորդ հարկը: Երբեմն նա այս ձևով բարձրանում էր մինչև թխարանի տանիքը:

Նա սակավախոս էր և չէր ծիծաղում: Որևէ ծայրահեղ հուզում պետք է լիներ, որպեսզի տարին մեկ-երկու անգամ դուրս պրծներ նրանից թիապարտի այն սգալի ծիծաղը, որ կարծես դևի ծիծաղի արձագանքն է: Նրան նայելիս կկարծեիր, որ անվերջ զբաղված է մի զարհուրելի բան դիտելով:

Եվ իսկապես նա խորասուզված էր:

Անկատար բնավորության և ճնշված իմացականության հիվանդագին ըմբռնողության միջից նա խառնաշփոթ կերպով զգում էր, որ մի ճիվաղային բան կար իր վրա: Այս խավար ու դժգույն կիսասուվերի մեջ, ուր նա սողում էր, ամեն անգամ գլուխը շուռ տալիս կամ հայացքը բարձրացնելիս՝ կատաղությամբ խառնված մի սոսկումով տեսնում էր, որ դիզվում է, կուտակվում, մերթ տեսողությունից կորչելով, զարհուրելի ցցունություններով իր վրա է բարձրանում մի տեսակ սոսկալի դիզվածք իրերի, օրենքների, նախապաշարումների, մարդկանց և դեպքերի, որի շրջագծերը խույս էին տալիս նրանից, որի զանգվածը սարսափեցնում էր նրան և որն այլ բան չէր,

⁴⁹ Նշանակում է՝ գոռոգություն, հպարտություն:

Եթե ոչ այն վիթխարի բուրգը, որ անվանում ենք քաղաքակրթություն: Դեսուդեն, այս խլրտացող ու տձև ամբողջության մեջ, մերթ իր մոտ, մերթ հեռու և անմերձենալի բարձրավանդակների վրա նա որոշում էր որևէ խումբ, որևէ խիստ լուսավորված մանրամասնություն, այստեղ պահապանն ու նրա մահակը, ժանդարմն ու նրա թուրը, այնտեղ խույրը գլխին արքեպիսկոպոսը, իսկ ամենավերևը, մի տեսակ արևի մեջ՝ թագակիր ու ականախտիտ կայսրը: Նրան թվում էր, որ այս հեռավոր շքեղությունները ոչ միայն չեն ցրում իր շուրջն եղած խավարը, այլ նաև ավելի սգալի ու սև են դարձնում: Այս ամենը՝ օրենքներ, նախապաշարումներ, իրողություններ, մարդիկ, իրեր գնում-գալիս էին նրա վրա, ըստ այն բարդ ու խորհրդավոր շարժման, որ աստված դրոշմում է քաղաքակրթության վրա, քայլում էին նրա վրա ու տրորում մի ինչ-որ դաժան հանդարտությամբ և անտարբեր անողորմությամբ: Հնարավոր դժբախտության խորքերի մեջ ընկած հոգիներ և անբախտ մարդիկ, որ կորսվում են այդ լիմպոսի⁵⁰ ամենացածր խորքերում, որտեղ այլևս ոչ ոք չի նայում, օրենքի դատապարտվածները զգում են, որ իր ողջ ծանրությամբ ճնշում է իրենց գլխի վրա այս մարդկային հասարակությունը, որ այնքան պատկառելի է դուրսը եղողների համար և այնքան սոսկալի՝ ներքևում գտնվողների համար:

Այս դրության մեջ Ժան Վալժանը մտածում էր: Իսկ ինչպիսի՞ն էր նրա երազանքի բնույթը:

Եթե երկնաքարի տակ եղած կորեկի հատիկը մտածեր, ապա նա անկասկած կմտածեր այն, ինչ մտածում էր Ժան Վալժանը:

Այս բոլոր բաները, ուրվականներով լի իրականությունները և իրականություններով լի ուրվատեսիլները ի վերջո ստեղծել էին մի տեսակ ներքին, գրեթե անբացատրելի դրություն:

Երբեմն իր տաժանակիր աշխատանքի միջոցին նա կանգ էր առնում և սկսում էր մտածել: Նրա բանականությունը, որ առաջվանից թե ավելի հասունացել և թե խռովված էր՝ ըմբոստանում էր: Այն ամենը, որ անցել էր նրա գլխով՝ թվում էր անիմաստ. այն ամենը, որ շրջապատում էր նրան՝ թվում էր անհնարին: Նա ասում էր ինքն իրեն՝ երազ է սա: Նայում էր իրենից մի քանի քայլ հեռու գտնվող պահակին, պահակը նրան թվում էր ուրվական. հանկարծ այդ ուրվականը ճիպտորի մի հարված էր հասցնում նրան:

Տեսանելի բնությունը հազիվ թե գոյություն ուներ նրա համար: Համարյա ճիշտ կլիներ ասել, որ Ժան Վալժանի համար արևը երբեք չկար, ոչ էլ ամառային գեղեցիկ օրերը, պայծառ երկինքը և ապրիլի թարմ լուսաբացները: Չգիտեմ, թե ինչպիսի օդանցքի լույս էր լուսավորում նրա հոգին:

Վերջացնելիս, ամփոփելու համար այն, որ կարող է ամփոփել ու երևան հանվել որպես դրական հետևանք այն բոլորից, որ մենք նշեցինք, մենք կսահմանափակվենք հաստատելով, որ տասնինը՝ տարվա ընթացքում Ժան Վալժանը, ֆավորիցի անվնաս էտողը, Տուլոնի վտանգավոր թիապարտը՝ շնորհիվ թիարանի նրան տված կաղապարման՝ ընդունակ էր դարձել երկու տեսակի վատ արարք կատարելու. առաջին՝ որևէ արագ, չմտածված, ապուշությամբ լի, ամբողջապես բնագդական վատ արարք, որն ինքնին մի տեսակ փոխվրեժ կարելի է համարել կրած տանջանքի փոխարեն, երկրորդ՝ որևէ ծանրակշիռ, լուրջ, խղճի առջև վիճաբանման ենթարկված և նման դժբախտությունից առաջացած կեղծ գաղափարներով խոկված մի վատ արարք: Նրա կանխամտածություններն անցնում էին հետևյալ երեք հաջորդական փուլերից, որ միայն որոշ կոփվածություն ունեցող խառնվածքները կարող են անցնել. դատողություն, կամք և համառություն: Որպես շարժառիթ նա ուներ սովորական նվաստացումը, հոգու դառնությունը, կրած անիրավությունների խոր զգացումը,

⁵⁰ Ըստ աստվածաբանության այն վայրն է, ուր գնում են անկնունք մեռած երեխաների հոգիները: Մ. թ.:

ռեակցիան՝ նույնիսկ բարիների, անմեղների և արդարների նկատմամբ, եթե երբևէ այդպիսիք լինեին: Նրա բոլոր մտքերի ելակետը, ինչպես նաև ժամանման կետը, մարդկային օրենքի ատելությունն էր, այն ատելությունը, որ եթե իր զարգացման մեջ կանգ չի առել որևէ նախախնամական դիպվածով, մի որոշ ժամանակի ընթացքում դառնում է հասարակության ատելություն, ապա մարդկային ցեղի ատելություն, հետո արարչության ատելություն, և վերածվում է վնասելու մի տարտամ, շարունակական ու վայրագ ցանկության, ով ուզում է լինի, միայն թե մի որևէ կենդանի արարած: Ինչպես տեսնում ենք, անհիմն չէր անձնագրի որակումը, թե ժան Վալթանը խիստ վտանգավոր մարդ է:

Տարեցտարի այս հոգին ավելի ու ավելի էր չորացել, դանդաղ՝ բայց ճակատագրական կերպով: Չոր սրտին՝ չոր աչք: Թիարանից դուրս գալիս, տասնինը տարի էր, որ նա մի կաթիլ արցունք չէր թափել:

VIII

ԱԼԻՔՆ ՈՒ ՍՏՎԵՐԸ

Ծովն ընկած մի մարդ:

Ինչ հոգ, նավը կանգ չի առնում: Քամին փչում է, և այդ մթին նավը մի ճանապարհ ունի, որն ստիպված է շարունակել: Եվ նա անցնում է:

Այդ մարդն անհետանում է, ապա նորից երևում, սուզվում է, նորից բարձրանում մակերեսի վրա, կանչում է, ձեռքերը պարզում, նրան չեն լսում. ամպրոպից ցնցվող նավն զբաղված է իր առաջընթացը վարելով, նավաստիներն ու ճամփորդները նույնիսկ չեն տեսնում ընկղմված մարդուն. նրա թշվառ գլուխը սոսկ մի կետ է վիթխարի ալիքների մեջ:

Խորխորատներից նա հուսահատ ճիչեր է արձակում: Եվ ինչ ուրվական կարող է լինել, քան այդ հեռացող առագաստը: Նա նայում է դրան, նայում է մոլեգնորեն: Առագաստը հեռանում է, գունատվում նվազում: Այդ մարդն էլ քիչ առաջ այդտեղ էր, անձնակազմից էր, մյուսիների հետ գնում-գալիս էր տախտակամածի վրա, ուներ շնչելու և արևի իր բաժինը, մի կենդանի էակ էր: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ հիմա: Նա սահեց, ընկավ՝ այլևս վերջացած է:

Նա դժոխային ջրի մեջ է: Նրա ոտքերի տակ միմիայն սահում ու փլուզում կա: Քամուց պատառոտված և ծվեն-ծվեն եղած կռիակները ժահադեմ կերպով շրջապատում են նրան, անդունդի տատանումները տանում են նրան, ջրի բոլոր ցնցոտիներն ալեկոծվում են նրա գլխի շուրջը, ալիքների մի խաժամուժ բազմություն թքում է նրա վրա, խառնաշփոթ բացվածքները գրեթե հոշոտում են նրան: Ամեն անգամ խորասուզվելիս նա տեսնում է խավարապատ անդունդներ, զարհուրելի ու անձանոթ բույսեր բռնում են նրան, հանգուցում նրա ոտքերը և քաշում իրենց կողմը: Նա զգում է, որ դառնում է անդունդ. փրփուրի մասն է կազմում, կռիակները նրան նետում են իրար գիրկ, նա դառնություն է խմում, նենգ օվկիանոսը կատաղում է նրան խեղդելու համար, վիթխարիությունը պայքարում է նրա հոգեվարքի հետ: Թվում է, որ այս ամբողջ ջուրն ատելություն կդառնա:

Բայց և այնպես նա պայքարում է:

Նա փորձում է պաշտպանվել, փորձում է ջրի վրա մնալ, ճգնում է ու լողում: Նա, անմիջապես ուժասպառ եղող այդ խղճուկ ուժը, պատերազմում է անապատի դեմ:

Ո՞ր է ուրեմն նավը: Այնտեղ: Հագիվ է տեսնվում հորիզոնի դժգույն ստվերում:

Հողմը մոնչում է, բոլոր փրփուրներն ընկճում են նրան: Նա բարձրացնում է աչքերը և տեսնում միայն կապարագույն ամպերը: Իր հոգեվարքի մեջ նա ներկա է լինում ծովի անհուն խելագարության: Այդ խելացնորությունը մահապատժում է նրան: Նա լսում է մարդու համար խորթ աղմուկներ, որոնք կարծես երկրից հեռու մի տեղից, չգիտես թե ինչ սոսկալի դրսաշխարհից են գալիս:

Ամպերի մեջ թռչուններ կան, ճիշտ այնպես, ինչպես մարդկային ճակատագրերի վերնում հրեշտակներ կան, բայց ի՞նչ կարող են անել նրանք այդ մարդու համար: Նա թռչում է, երգում ու ճախրում, մինչդեռ սա խորքում է:

Նա զգում է, որ միաժամանակ թաղում են իրեն երկու անհունները՝ օվկիանոսն ու երկինքը. մեկը գերեզման է, մյուսը՝ պատանք:

Գիշերն իջնում է, ժամեր շարունակ նա լողում է, նրա ուժերը մոտեն սպառվելու: Այն նավը, այդ հեռավոր բանը, որտեղ մարդիկ կային, ջնջված է: Նա մենակ է վերջալույսի ահեղ անդունդի մեջ, նա սուզվում է, կարծրանում ու գալարվում, զգում է իր ներքև անտեսանելի տարտամ ճիվաղներին: Նա կանչում է:

Այլևս մարդիկ չկան: Ո՞ր է աստված:

Նա օգնության է կանչում: Գոնե մի մարդ: Եվ կանչում է միշտ:

Ոչ մի բան հորիզոնի վրա: Ոչ մի բան երկնքում:

Աղերսում է տարածությանը, ալիքին, ջրախոտին, փրփուրներին. նրանք խուլ են: Աղաչում է փոթորիկին. անխռով փոթորիկը միայն անհունին է հնազանդում:

Նրա շուրջը խավարն է, մառախուղը, մենությունը, մրրկալի և անհաստատ ժխորը, կատաղի ջրերի անորոշ ծալքավորումը: Նրա մեջ՝ սարսափն ու հոգնությունը: Նրա տակ՝ անկումը: Ոչ մի հենման կետ: Նա մտածում էր իր դիակի մշուշապատ արկածների մասին անսահման խավարի մեջ: Անհատակ ցուրտը անդամալուծում է նրան: Նրա ձեռքերը կծկվում են, փակվում և անէանում: Քամիներ, ամպեր, հողմապտույտներ, անօգուտ աստղեր: Ի՞նչ անել: Հուսահատը վիատում է, այլևս հոգնել է, վճռում է մեռնել, թողնում է, որ լինելիքը լինի, ուր ուզում է տարվի, հրաժարվում է և ահա գլորվում է հավիտենական ընկղմումի սգալի խորխորատների մեջ:

Ո՞վ մարդկային հասարակության անողոք երթ, որ իր ճանապարհին խորտակում է մարդկանց և հոգիներին: Օվկիանոս, ուր ընկնում է այն ամենը, ինչ ցած է գցում օրենքը: Օգնության չարագուշակ անհետացում: Ո՞վ բարոյական մահ:

Ծովը դա սոցիալական անողոք խավարն է, ուր պատժական օրենքը նետում է իր դատապարտվածներին: Ծովը դա անսահման թշվառությունն է:

Հոգին, տարվելով այդ անդունդի հոսանքով՝ կարող է դիակ դառնալ: Ո՞վ հարություն կտա նրան:

IX

ՆՈՐ ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

Երբ թիարանից դուրս գալու ժամը հասավ, երբ Ժան Վալժանի ականջներին հասավ «դու ազատ ես» տարօրինակ խոսքը, այդ րոպեն անիրական թվաց և անլուր: Ուժեղ լույսի մի ճառագայթ, իսկական լույսի մի շող հանկարծ թափանցեց նրա մեջ: Բայց այս ճառագայթը շատ չանցած աղոտացավ: Ժան Վալժանը շլացել էր ազատության մտքից և կարծել էր, որ նոր մի կյանք է սկսվում: Բայց շատ շուտ նա տեսավ, թե ինչ բան էր այն ազատությունը, որի համար դեղին անձնագիր են տալիս:

Եվ բացի դրանից, ինչքա՛ն այլ դառնություններ: Նա հաշվել էր, որ թիարանում անցկացրած ժամանակ ստանալիք գումարը հասած կլինի հարյուր յոթանասունմեկ ֆրանկի: Արդարությունը պահանջում է ավելացնել, որ նա մոռացել էր այդ հաշվից գեղջել կիրակիների ու տոների հարկադրական հանգիստը, որ տասնինը տարվա մեջ կազմում էր մոտ քսանչորս ֆրանկի նվազում: Ինչ էլ որ լինի, այդ գումարը զանազան տեղական պահումների պատճառով պակասել ու մնացել էր հարյուր ինը ֆրանկ և տասնհինգ սու, որ նրան վճարեցին դուրս գալիս:

Նա ոչինչ չէր հասկացել այդ հաշվից և կարծում էր, թե խաբել են կամ ավելի ճիշտ, կողոպտել են իրեն:

Ազատվելու հաջորդ օրը Գրասում, նարնջենու ծաղիկների մի թորանոցի դռան առջև տեսավ մի խումբ հակեր իջեցնող մարդիկ և խնդրեց իրեն էլ աշխատանք տալ: Գործն ստիպողական էր և նրան ընդունեցին: Նա կպավ գործի: Հմուտ էր նա, հուժկու և ճարպիկ, ուստի և լավ էր աշխատում, իսկ գործատերը գոհ էր երևում: Երբ նա աշխատում էր, մի ժանդարմ անցավ, նկատեց նրան և պահանջեց թղթերը: Պետք եղավ դեղին անձնագիրը ցույց տալ: Դրանից հետո Ժան Վալժանը շարունակեց աշխատանքը: Քիչ առաջ նա հարցրել էր բանվորներից մեկին, թե ինչքան են ստանում օրական այդ գործի համար և նրան պատասխանել էին՝ երեսուն սու: Երբ երեկոն վրա հասավ և քանի որ նա ստիպված էր հաջորդ առավոտ մեկնել այդտեղից, ներկայացավ թորանոցի տիրոջը և խնդրեց, որ իր աշխատավարձը տա: Տերը ոչ մի խոսք չարտասանեց ու տասնհինգ սու տվեց նրան: Ժան Վալժանը պահանջեց տարբերությունը, գործատերը պատասխանեց. դա էլ բավական է քեզ: Նա պնդեց: Տերը շեշտակի նայեց նրան ու ասաց. «Զգուշացիր քարե վանդակից»:

Այստեղ էլ նա զգաց, որ կողոպտում են իրեն:

Հասարակությունը, պետությունը, նվազեցնելով իր կուտակված աշխատավարձը՝ կողոպտել էին մեծաքանակ: Այժմ էլ անհատի հերթն էր և սա էլ կողոպտում էր փոքրաքանակ:

Ազատագրությունը ազատվել չէ: Դուրս են գալիս թիարանից, բայց ոչ դատապարտությունից:

Ահա թե ինչ էր եկել նրա գլխին Գրասում, իսկ թե ինչպես ընդունեցին Դիյնում, տեսանք արդեն:

X

ՆՈՐԵՎՆ ԱՐԹՆԱՆՈՒՄ Է

Այսպիսով, երբ մայր եկեղեցու ժամացույցը խփեց գիշերվա ժամը երկուսը, Ժան Վալժանն արթնացավ:

Նրան արթնացնողը խիստ լավ անկողինն էր: Շուտով քսան տարին կլրանար, որ նա անկողնում չէր քնել և թեև շորերը չէր հանել, բայց և այնպես զգայականությունն այնքան նոր էր, որ չէր կարող չխանգարել նրա քունը:

Նա քնել էր չորս ժամից ավելի և հոգնությունն անցել էր: Նա վարժվել էր հանգստանալուն երկար ժամեր չհատկացնել:

Նա բացեց աչքերը և մի բոպե խավարում նայեց իր շուրջը, ապա փակեց աչքերը նորից քնելու համար:

Երբ բազմաթիվ տարբեր զգացողություններ հուզում են մարդուն ցերեկը և զանազան բաներ զբաղեցնում միտքը, նա քնում է, բայց եթե արթնանում է, նորից քնել չի կարող: Քունն ավելի հեշտ գալիս է, քան թե վերադառնում է: Նույնը պատահեց և Ժան Վալժանին: Նա չկարողացավ նորից քնել և սկսեց մտածել:

Նա գտնվում էր այն վիճակում, երբ գլխում եղած մտքերը խառնաշփոթ են լինում: Մի տեսակ մութ երթնեկ կար նրա ուղեղում: Նրա հին և բոլորովին նոր հիշողությունները խառնիխուռն ալեկոծվում էին այդտեղ և անորոշ կերպով խաչաձևում, ձևափոխվում, խիստ մեծանում, ապա հանկարծ անհետանում կարծես տղմոտ ու ալեկոծ ջրի մեջ: Բազմաթիվ մտքեր էին ծագում, բայց դրանց մեջ կար մեկը, որ շարունակ ներկայանում էր ու վանում մնացածները: Ասենք անմիջապես այդ միտքը. նա տեսել էր արծաթե վեց ճաշասարքերը և շերեփը, որ տիկին Մագլուարը դրել էր սեղանի վրա:

Այդ վեց պնակները հետապնդում էին նրան: Այնտեղ էին դրանք, մի քանի քայլ հեռու: Այն բոպեին, երբ նա անցել էր կողքի սենյակից իր քնած սենյակը գալու համար, պառավ սպասուհին տեղավորում էր դրանք մահճակալի սրահի վերևի պահարանում: Նա լավ էր նկատել այդ պահարանը: Աջ կողմը՝ ճաշասենյակից մտնելիս: Դրանք զանգվածային էին ու հին աշխատանք: Շերեփի հետ միասին կարելի էր երկու հարյուր ֆրանկ հանել դրանցից: Կրկնակին այն գումարի, որ նա շահել էր տասնինը տարվա ընթացքում, թեև նա կարող էր ավելին շահել, եթե ղեկավարությունը նրան կողոպտած չլիներ:

Նրա միտքը մի ամբողջ ժամ տատանվեց ալեկոծությունների մեջ, որոնց մի փոքր էլ պայքար էր խառնված: Հնչեց ժամը երեքը: Նա բացեց աչքերը, թափով վեր թռավ ու նստեց, մեկնեց ձեռքերը և խարխափելով գտավ իր տոպրակը, որ գցել էր անկողնախորշի անկյունը, ապա ոտքերը կախեց ցած, կանգնեց հատակին, բայց մեկ էլ նկատեց, առանց իմանալու թե ինչպես՝ նստել է անկողնու վրա:

Որոշ ժամանակ նա մտազբաղ մնաց այդ դիրքում, որը մի տեսակ չարաշուք բան ուներ այն մարդու համար, ով տեսներ ողջ քնած տան այդ միակ արթուն էակին այդպիսի վիճակում: Հանկարծ նա կռացավ, հանեց ոտնամանները և կամացուկ դրեց մահճակալի առջևի խարի վրա, ապա նորից ընդունեց իր մտազբաղ դիրքը և մնաց անշարժ:

Այս սոսկալի խոհերի մեջ, այն միտքը, որ մենք նշեցինք, ալեկոծում էր անդադար նրա ուղեղը, մտնում, դուրս էր գալիս, նորից մտնում և մի տեսակ ճնշում գործ դնում նրա վրա: Ապա առանց գիտնալու ինչու և երազելու մեքենայական համառությամբ մտածում էր Բրեվե անունով մի թիապարտի մասին, որի շալվարը պահում էր միայն մեկ ուսին մնացած հյուսված փոկը: Այդ փոկի շախմատային հյուսվածքը շարունակ տնկվում էր նրա մտքում:

Այդ դրության մեջ էր նա մնացել և գուցե անորոշակի էլ մնար մինչև լուսաբաց, եթե ժամացույցը մի հարված չխփեր՝ քառորդ կամ կես: Այս հարվածը կարծես նրան ասաց. «Դե, շուտ»:

Նա վեր կացավ, մի վայրկյան էլ երկմտեց ու ականջ դրեց. տունը բոլորովին լուռ էր: Այդ ժամանակ մանր քայլերով առաջացավ դեպի նշմարվող լուսամուտը: Գիշերը շատ խավար չէր, լիալուսնի ժամանակ էր և խոշոր ամպերը՝ հարվածվելով քամուց, վազում էին լուսնի վրայով: Դրանից դուրսը մերթ մթնում, մերթ լուսավորվում էր, երբեմն խավարումներ էր առաջանում, երբեմն երկնային բացատներ, իսկ ներսում մի տեսակ վերջալույս էր գոյանում: Այս վերջալույսը, որ բավական էր առաջնորդել կարողանալու համար և ամպերի պատճառով ընդհատվում էր, նմանում էր այն կապարագույնին, որ ընկնում է նկուղի երդիկից, երբ նրա առջնից մարդիկ են երթնելում: Լուսամուտին հասնելուց հետո՝ Ժան Վալժանը քննեց այն: Նա ճաղեր չունեւ, նայում էր այգու վրա և ըստ տեղական սովորության փակված էր միայն մի փոքրիկ կեռով: Նա բացեց լուսամուտը, բայց որովհետև սառն ու խիստ օդը խուժեց սենյակ՝ իսկույն փակեց այն: Նա դիտեց այգին այն ուշադիր հայացքով, որով ավելի շուտ ուսումնասիրում, քան թե դիտում են: Այգին շրջապատված էր սպիտակ, բավական ցածր և հեշտ անցանելի պատով: Խորքում, պատից դենը, նա նշմարեց իրարից հավասարապես հեռու գտնվող ծառերի գլուխներ, մի բան, որ ցույց էր տալիս, թե այդ պատն այգին բաժանում է մի ծառագարդ պողոտայից կամ փողոցից:

Այս հայացքը նետելուց հետո նա վճռական մարդու շարժում գործեց, վերադարձավ անկողնախորշը, վերցրեց պայուսակը, քրքրեց այն, այդտեղից մի բան հանեց ու դրեց անկողնու վրա, կոշիկները մտցրեց գրպաններից մեկը, փակեց տոպրակն ու կապեց մեջքին, գլխարկը դրեց և չքոցով ծածկեց աչքերը, խարխափելով գտավ ձեռնափայտը, տարավ դրեց լուսամուտի անկյունը, նորից վերադարձավ անկողնու մոտ և վճռականորեն վերցրեց այդտեղ դրած առարկան: Դա նման էր երկաթե կարճ ձողի և մի ծայրը սուր էր:

Խավարի մեջ դժվար էր որոշել, թե ինչ գործածության համար կարող էր շինված լինել այդ երկաթի կտորը: Թերևս լծակ էր: Թերևս լախտ էր:

Ցերեկը կարելի էր իմանալ, որ դա պարզապես հանքափորի մոմակալ էր: Այդ տարիներին երբեմն տաժանապարտներին աշխատեցնում էին Տուլոնը շրջապատող բարձր բլուրներից քար հանելու համար և հազվադեպ չէր, որ նրանք հանքափորի գործիքներ ունենային իրենց տրամադրության տակ: Հանքափորերի մոմակալները զանգվածային երկաթից են, որոնց ներքնի ծայրը սուր է, որի շնորհիվ էլ խրում են դրանք քարի մեջ:

Ժան Վալժանն այդ մոմակալը պահեց աջ ձեռքում և շունչը պահելով ու ոտնաձայնը խլացնելով՝ դիմեց դեպի հարևան՝ եպիսկոպոսի սենյակի դուռը, մի բան, որ մեզ ծանոթ է: Երբ մոտեցավ դռանը՝ նկատեց, որ կիսաբաց է: Եպիսկոպոսը չէր փակել այն:

XI

Ի՞ՆՉ ԱՐԵՑ ՆԱ

Ժան Վալժանը ականջ դրեց: Ոչ մի շշուկ:

Դուռը հրեց:

Հրեց մատի ծայրով, թեթև, ներս մտնել ուզող կատվի գողունի ու երկչոտ զգուշությամբ:

Դուռը տեղի տվեց այդ ճնշմանը և աննկատելի ու լուռ շարժում գործեց, որից բացվածքը մի քիչ լայնացավ:

Մի բոլոր սպասեց, ապա դուրս երկրորդ անգամ հրեց, բայց ավելի համարձակ կերպով:

Դուրս շարունակեց լուռ տեղի տալ: Բացվածքն այժմ բավական մեծ էր, որպեսզի նա կարողանար անցնել: Բայց դռան կողքին մի փոքրիկ սեղան կար, որը դռան հետ դժվարություն հարուցող անկյուն էր կազմում և պատնեշում էր մուտքը:

Ժան Վալժանն ըմբռնեց դժվարությունը: Պետք էր ինչպես էլ լինի ավելի լայնացնել բացվածքը:

Նա վճռեց և երրորդ անգամ հրեց դուրս՝ ավելի ուժգին, քան առաջին և երկրորդ անգամ: Այս անգամ վատ յուղված ծղխնին մի սուր ու երկար ճոխն արձակեց:

Ժան Վալժանը ցնցվեց: Այս ծղխնու ճոխն զրնգաց նրա ականջներում երկարատև ու ահավոր կերպով՝ ահեղ դատաստանի շեփորի նման:

Առաջին բոլոր ֆանտաստիկ չափազանցման մեջ նա գրեթե պատկերացրեց, որ այդ ծղխնին կենդանացավ ու զարհուրելի կյանք ստացավ, որ նա շան նման հաչում էր ողջ աշխարհին ծանուցելու և քնած մարդկանց արթնացնելու համար:

Նա ցնցվելով ու խելակորույս կանգ առավ և մատի ծայրերից իջավ ներքանի վրա: Լսեց, որ իր քունքերի երակները խփում են դարբնի մուրճերի նման և զգաց, որ շունչը կրծքից դուրս է գալիս քարանձավից փչող քամու պես: Նրան անկարելի թվաց, որ այդ զայրացած ծղխնու արձակած սոսկալի ճոխն չցնցի ողջ տունը երկրաշարժի նման, նրա հրած դուռն ընդունել էր տագնապի ազդարարությունը և օգնություն էր կանչել. ծերունին հիմա վեր կկենա, պառավ կանայք կգոռան, մարդիկ օգնության կփութան ծերունուն. քառորդ ժամ չանցած քաղաքն իրար կանցնի և ժանդարմերիան էլ ոտքի կկանգնի: Մի բոլոր նա կարծեց, թե կորած էր:

Նա մնաց իր տեղում՝ աղե արձանի նման քարացած և չհամարձակվելով որևէ շարժում անել:

Մի քանի բոլոր անցավ: Դուրս լայն բացված էր: Նա խիզախեց նայել սենյակի ներսը: Ոչինչ չէր շարժվել այդտեղ: Ականջ դրեց: Տանը ոչինչ չէր շարժվում: Ժանգոտած ծղխնու ճոխն ոչ ոքի չէր արթնացրել:

Առաջին վտանգն անցել էր, բայց դեռ մի սոսկալի տագնապ կար նրա մեջ: Այնուամենայնիվ նա չնահանջեց: Նա չէր նահանջել նույնիսկ այն բոլորին, երբ կարծել էր, թե կորած է: Այժմ արդեն մտածեց շուտ վերջացնելու մասին: Մի քայլ արեց ու մտավ սենյակ:

Այդ սենյակը կատարյալ լռության մեջ էր: Խավարում, այսուայնտեղ երևում էին խառնաշփոթ ու տարտամ ձևեր, որոնք ցերեկը դիտելիս կտեսնեիր, որ սեղանի վրա ցիրուցան թղթեր ու մեծածավալ բաց հատորներ էին, նստարանի վրա կուտակված գրքեր էին, զգեստներով ծածկված մի բազկաթոռ կար, մի աղոթարան. այդ բոլորն այս պահին մութ անկյուններ կամ սպիտակավուն տարածություններ էին: Ժան Վալժանն զգուշությամբ առաջ գնաց՝ խուսափելով գույքերին կայչելուց: Սենյակի խորքից լսեց քնած եպիսկոպոսի հավասար ու խաղաղ շնչառությունը:

Նա հանկարծ կանգ առավ: Անկողնու մոտ էր: Ավելի շուտ էր հասել այդտեղ, քան կարծում էր:

Բնությունը երբեմն իր ներգործությունն ու տեսարանները խառնում է մեր արարքներին մի տեսակ մթագին ու խելացի պատճառով և կարծես դրանով մեզ ստիպում է խորհել: Կես ժամից ավելի էր, ինչ մի խոշոր ամպ ծածկում էր երկինքը: Այն բոլորին, երբ Ժան Վալժանը կանգ առավ մահճակալի առջև, այդ ամպը կարծես դիտմամբ պատռվեց և լուսնի շողը ներս ընկնելով երկար լուսամուտից՝

լուսավորեց հանկարծ եպիսկոպոսի դժգոյն դեմքը: Նա անխռով քնել էր և Ստորին Ալպերի⁵¹ ցուրտ գիշերների պատճառով անկողնում հագել էր մի գորշ բրդե հագուստ, որ ծածկում էր նրա բազուկները՝ մինչև դաստակները: Գլուխն ընկած էր բարձի վրա հանգիստ դիրքով: Անկողնուց կախվել էր այն ձեռքը, որ կրում էր հովվական մատանին և որից այնքան բարի գործեր ու սուրբ գործողություններ էին բխել: Նրա ողջ դեմքը պայծառացած էր գոհունակության, հույսի և երանության մի տարտամ արտահայտությամբ: Դա ավելի ճիշտ ճառագայթում էր, քան ժպիտ: Նրա ճակատի վրա լույսի մի անպատմելի ցոլք կար, որ չէր տեսնվում: Արդարների հոգին քնի միջոցին նայում է խորհրդավոր երկնքին:

Այս երկնքի արտացոլումից մի կտոր ընկել էր եպիսկոպոսի վրա:

Դա միաժամանակ և մի լուսավոր թափանցիկություն էր, քանի որ այդ երկինքը նրա ներսում էր: Այդ երկինքը նրա խիղճն էր:

Այն րոպեին, երբ լուսնի շողը եկավ նստելու այսպես ասած այս ներքին պայծառության վրա, քնած եպիսկոպոսը երևաց կարծես փառքի մեջ: Իսկ նա մնաց նույն քաղցր դեմքով և մի անջնջելի կիսալույսով շրջապատված: Երկնքում շողշողացող լուսինը, ննջած բնությունը, անշարժ այգին, խաղաղ տունը, ժամը, րոպեն, լռությունը չգիտես ինչ հանդիսավոր ու անասելի բան էին հաղորդում այս պատկառելի մարդու հանգստին և մի տեսակ մեծափառ ու պայծառ լուսապսակով շրջապատում էին նրա ալեհեր մազերը, փակված աչքերը, ծերունու գլուխը և մանավանդ քունը, նաև նրա դեմքը, ուր ամեն ինչ հույս էր ու վստահություն:

Գրեթե մի աստվածային բան կար իր այդ վեհության մեջ, մի բան, որ եպիսկոպոսն ինքն էլ չէր զգում:

Ժան Վալժանն ինքը մթի մեջ էր և երկաթե մոմակալը ձեռքին կանգնել էր՝ այդ լուսավոր ծերունու տեսքից շշմած ու անշարժացած: Նա երբեք այդպիսի բան չէր տեսել: Այդ վստահությունը սարսափեցնում էր նրան: Բարոյական աշխարհը սրանից ավելի մեծ տեսարան չունի. վրդովված ու անհանգիստ խիղճը հասել է մի վատ արարք կատարելու եզրին և դիտում է արդարի քունը:

Այս քունը, այն էլ այդպիսի մեկուսացման մեջ և մի այնպիսի հարևանի հետ, որպիսին ինքն էր՝ մի վսեմ բան ուներ, որ նա զգում էր տարտամորեն, բայց հրամայողաբար:

Ոչ ոք չէր կարող ասել, թե ինչ էր տեղի ունենում նրա մեջ, ոչ նույնիսկ ինքը: Որպեսզի փորձենք դրա հաշիվը տալ, պետք է պատկերացնենք ամենաբուռն բանը՝ ամենամեղմ բանի ներկայությամբ: Անգամ նրա դեմքի վրա չէր կարելի որոշակի ոչինչ նկատել: Դա մի տեսակ վայրագ զարմանք էր: Նա դիտում էր այդ պատկերը: Այս է բոլորը: Բայց ի՞նչ էր մտածում նա, անհնար էր այդ բանը կռահել: Մի բան միայն ակներև էր, նա հուզված էր ու այլալված: Բայց ինչպիսի՞ ալլալում էր դա:

Նրա աչքը չէր պոկվում ծերունուց: Միակ բանը, որ հստակորեն երևում էր նրա կեցվածքից ու արտահայտությունից, դա տարօրինակ անվճռականությունն էր: Կարծես թե նա տատանվում էր երկու անդունդների միջև, մեկը, որ դեպի կորուստ է տանում, մյուսը՝ դեպի փրկություն: Թվում էր, որ նա պատրաստ է փշրել այդ զանգը կամ համբուրել այդ ձեռքը:

⁵¹ Դեպարտամենտի անուն է: Կա նաև Վերին-Ալպեր: Օ.թ.:

Մի քանի վայրկյան հետո նրա ձախ բազուկը կամացուկ բարձրացավ դեպի ճակատը, հանեց գլխարկը, ապա միննույն դանդաղությամբ ցած ընկավ, և Ժան Վալժանը նորից մտավ իր խոհերի մեջ, գլխարկը ձախ ձեռքին, մոմակալն աջ ձեռքին և ցցված մազերը վայրագ գլխի վրա:

Եպիսկոպոսը խոր հանդարտությամբ ու այդ զարհուրելի հայացքի ներքո շարունակում էր քնել:

Լուսնի արտացոլումն անորոշ կերպով տեսանելի էր դարձնում բուխարու վերև գտնվող խաչելությունը, որ կարծես իր թևերը բաց էր անում նրանց երկուսին էլ, ըստ որում մեկին օրհնություն, մյուսին ներում շնորհելով:

Հանկարծ Ժան Վալժանը նորից գլխարկը դրեց ճակատին, ապա արագ և առանց եպիսկոպոսին նայելու առաջացավ անկողնու երկարությամբ ուղիղ դեպի սնարի վերևում նշմարվող պահարանը, բարձրացրեց երկաթե մոմակալը կարծես փականքը ջարդելու մտադրությամբ, բայց բանալին վրան էր, և նա բացեց: Առաջին բանը, որ նա տեսավ, արծաթի ամանների զամբյուղն էր, որը նա վերցրեց, արագաքայլ ու առանց զգուշանալու, որ աղմուկ կբարձրանա, հասավ դռանը, մտավ աղոթարան, բաց արեց լուսամուտը, վերցրեց ձեռնափայտը, ցատկեց ներքնահարկի հենարանից, արծաթեղենը դրեց տոպրակի մեջ, զամբյուղը գցեց դեն, անցավ այգին, վագրի նման ցատկեց պատի վրայից ու փախավ:

XII

ԵՊԻՍԿՈՊՈՍՆ ԱՇԽԱՏՈՒՄ Է

Մյուս օրը, արևածագին, գերապատիվ Բիենվյունը զբոսնում էր իր այգում, երբ տիկին Մագլուարն ամբողջովին այլալված վազեց դեպի նա:

— Գերապատի՛վ, գերապատի՛վ,— գոչեց նա,— ձերո՞ւ մեծությունը գիտե՞՞, թե ուր է արծաթեղենների զամբյուղը:

— Այո,— պատասխանեց եպիսկոպոսը:

— Օրհնյալ լինի աստված,— շարունակեց կինը:— Չէի իմանում, թե ինչ էր եղել:

Եպիսկոպոսը քիչ առաջ գտել էր զամբյուղը մի թմբի վրա, ուստի և ցույց տվեց տիկին Մագլուարին:

— Ահա:

— Հետո՞,— ասաց նա:— Իսկ մեջը ոչի՞նչ: Իսկ արծաթեղենը:

— Օ՛հ,— վրա բերեց եպիսկոպոսը:— Ուրեմն արծաթեղենն է ձեզ զբաղեցնում: Չգիտեմ, թե ուր է:

— Տեր աստված, գողացե՛լ են: Երեկ իրիկվա մա՛րդն է գողացել:

Մի ակնթարթում տիկին Մագլուարն իր ողջ ծեր աշխուժությամբ վազեց աղոթարան, մտավ անկողնախորշը և վերադարձավ եպիսկոպոսի մոտ: Եպիսկոպոսը կռացել էր ու հառաչելով զննում էր մի տունկ, որ ջարդել էր զամբյուղը թմբի վրա ընկնելիս: Տիկին Մագլուարի ճիչի վրա նա ուղղվեց:

— Գերապատիվ հայր, այդ մարդը մեկնել է ու մեր արծաթեղենն էլ գողացել:

Այս բացականչությունն անելիս նրա հայացքն ընկավ այգու մի անկյան վրա, որտեղ մազլցելու հետքեր էին երևում: Պատի ծպեղն ընկել էր:

— Ահա, այդտեղից է նա փախել, ցատկել է Կոշֆիլե նրբանցքը: Այս ի՛նչ խայտառակություն է, գողացել է մեր արծաթեղենը:

Եպիսկոպոսը մի թույլ մնաց լուռ, ապա աչքերը լրջորեն բարձրացրեց և մեղմությամբ ասաց տիկին Մազլուարին:

— Բայց արդյո՞ք այդ արծաթեղենը մերն էր:

Տիկին Մազլուարը մնաց շվարած: Մի փոքր լռություն տիրեց, որից հետո եպիսկոպոսը շարունակեց.

— Տիկին Մազլուար, ես սխալմամբ այսքան ժամանակ պահել էի այդ արծաթեղենը: Նա աղքատներինն էր: Իսկ ո՞վ էր այդ մարդը: Հավանաբար մի աղքատ:

— Տեր Հիսուս,— վրա տվեց տիկին Մազլուարը:— Դա ոչ ինձ և ոչ էլ օրիորդի համար էր: Մեզ համար դա միևնույն է: Ես գերապատիվի համար եմ մտահոգվում: Ի՞նչ ամանով այժմ գերապատիվը կճաշի:

Եպիսկոպոսը զարմանքով նայեց նրան:

— Օ՛, մի՞թե անագե պնակներ չկան:

— Տիկին Մազլուարն ուները թոթվեց:

— Անագը հոտ ունի:

— Ուրեմն երկաթե պնակներ:

Տիկին Մազլուարը մի արտահայտիչ ծամածռություն արեց:

— Երկաթն էլ համ ունի:

— Դե լավ, փայտե պնակներ,— ասաց եպիսկոպոսը:

Մի քանի թույլ հետո նա նախաճաշում էր միևնույն սեղանի մոտ, որտեղ Ժան Վալժանն էր նստել նախորդ երեկոյան: Ուտելու միջոցին գերապատիվ Բիենվիյուն զվարթությամբ նկատել էր տալիս իր քրոջը, որը ոչինչ չէր ասում և տիկին Մազլուարին (որը խուլ մոթմոթում էր), թե ոչ մի կարիք չկա, թեկուզ փայտե գդալի կամ պատառաքաղի՝ հացի կտորը կաթի մեջ թաթախելու համար:

— Այ քեզ խե՛ղք,— ասում էր տիկին Մազլուարն ինքն իրեն ներս դուրս անելիս,— ընդունել դրա նման մի մարդ, քնեցնել նրան իր կողքին և դեռ ի՛նչ բարեբախտություն, որ նա միմիայն գողություն է արել: Ով տեր աստված, երբ մտածում ես դրա մասին՝ ցնցվում ես:

Երբ եղբայրն ու քույրը վեր էին կենում սեղանից՝ դուռը ծեծեցին:

— Մտեք,— ասաց եպիսկոպոսը:

— Դուռը բացվեց և մի արտասովոր խումբ թափով շարժվեց շենքի մոտ: Երեք մարդ բռնել էին չորրորդին՝ օձիքից: Երեքը ժանդարմներ էին, իսկ մյուսը Ժան Վալժանն էր:

Ժանդարմերիայի մի դասակապետ, որ կարծես խմբի առաջնորդն էր, կանգնած էր դռան մոտ: Նա մտավ ներս և զինվորական բարն տալով առաջացավ դեպի եպիսկոպոսը:

— Գերապատիվ հայր...— ասաց նա:

Այս խոսքի վրա Ժան Վալժանը, որ մռայլ էր ու թվում էր ընկճված՝ ապշած արտահայտությամբ բարձրացրեց գլուխը:

— Գերապատիվ,— մրմնջաց նա:— Ուրեմն սա ավագերեցը չէ...

— Սուս,— ասաց ժանդարմներից մեկը:— Գերապատիվ եպիսկոպոսն է:

Սակայն գերապատիվ Բիենվնյուն մոտեցել էր այնքան արագ, ինչքան նրա տարիքը թույլ կտար:

— Ա՛, այդ դուք եք,— բացականչեց նա Ժան Վալժանին նայելով:— Ուրախ եմ ձեզ տեսնելով, բայց չէ՞ որ աշտանակներն էլ էի տվել ձեզ, նրանք էլ մյուսների պես արծաթե են և դրանցից դուք հավանաբար երկու հարյուր ֆրանկ կարող եք ստանալ: Ինչո՞ւ դրանք էլ չեք տարել ձեր պնակների հետ:

Ժան Վալժանը լայն բացեց աչքերը և նայեց մեծահարգ եպիսկոպոսին այնպիսի արտահայտությամբ, որ մարդկային ոչ մի լեզու չի կարող նկարագրել:

— Գերապատիվ հայր,— ասաց ժանդարմերիայի դասակապետը,— ուրեմն այս մարդու ասածը ճիշտ է: Մենք հանդիպեցինք նրան, նա փախչողի տեսք ուներ: Մենք էլ կանգնեցրինք նրան ստուգելու համար և գտանք այս արծաթեղենները:

— Եվ նա ձեզ ասաց,— ընդհատեց եպիսկոպոսը,— որ դրանք միբարի քահանա է տվել, որի մոտ նա գիշերել է: Այժմ հասկանում եմ: Եվ դուք նրան վերադարձրել եք այստե՞ղ: Թյուրիմացություն է դա:

— Ճիշտ այդպես,— պատասխանեց դասակապետը,— կարո՞ղ են բաց թողնել նրան:

— Անշուշտ,— ասաց եպիսկոպոսը:

Ժանդարմները բաց թողին Ժան Վալժանին, որ քիչ հետ գնաց:

— Միթե ճիշտ է, որ ինձ ազատ են արձակում,— ասաց նա անշեշտ ձայնով ու կարծես քնի մեջ խոսելով:

— Այո, ազատում են, չէ՞ս լսում, ինչ է,— ասաց ժանդարմներից մեկը:

— Բարեկամս,— շարունակեց եպիսկոպոսը,— մեկնելուց վերցրեք ձեր աշտանակները: Ահա այստեղ են դրանք:

Նա գնաց դեպի բուխարին, վերցրեց արծաթե զույգ աշտանակները և բերեց Ժան Վալժանին: Երկու կանայք դիտում էին նրա արարքը՝ առանց ծպտուն հանելու, որևէ շարժումի կամ այնպիսի հայացքի, որը կարող էր խանգարել եպիսկոպոսին:

Ժան Վալժանն իր բոլոր անդամներով դողում էր: Նա մեքենայաբար ու շփոթված վերցրեց աշտանակները:

— Այժմ,— ասաց եպիսկոպոսը,— գնացեք խաղաղությամբ: Ի դեպ, երբ վերադառնաք, բարեկամս, հարկ չկա, որ պարտեզից անցնեք: Կարող եք միշտ ելումուտ անել փողոցի դռնից, որ գիշեր-ցերեկ մի-միայն մի մղակով է փակված:

Ապա դառնալով ժանդարմներին.

— Պարոնայք, դուք կարող եք գնալ:

Ժանդարմները հեռացան:

Ժան Վալժանը, թվում էր, ուր որ է նվաղելու է:

Եպիսկոպոսը մոտեցավ նրան ու ցածր ձայնով ասաց.

— Մի մոռացեք, երբեք մի մոռացեք, որ դուք ինձ խոստացել եք գործածել այս փողը պարկեշտ մարդ դառնալու համար:

Ժան Վալժանը, որ բնավ չէր հիշում, թե որևէ բան է խոստացել, մնաց շվարած: Եպիսկոպոսն այդ խոսքերն արտասանելիս շեշտել էր դրանք: Հետո հանդիսավորությամբ շարունակեց.

— Ժան Վալժան, եղբայրս, դուք այլևս չարին չեք պատկանում, այլ՝ բարուն: Ես ձեր հոգին գնեցի, ես այն հանում եմ սև ու կորստաբեր մտքերից ու հանձնում աստծուն:

XIII

ՓՈՔՐԻԿ ԺԵՐՎԵՆ

Ժան Վալժանն այնպես դուրս եկավ քաղաքից, որ կարծես փախչում էր: Նա ամենայն արագությամբ սկսեց քայլել դեպի դաշտերը, առաջանալով դեմը եկած ճանապարհներով ու արահետներով՝ չնկատելով, որ միշտ վերադառնում է նույն տեղը: Այսպես նա ամբողջ առավոտ թափառեց՝ առանց ուտելու և քաղց զգալու: Նա մատնված էր բազմաթիվ նոր զգայությունների և մի տեսակ զայրույթ էր զգում՝ չիմանալով ում դեմ: Դժվար թե նա կարողանա ասել՝ զգացվա՞ծ էր, թե՞ նվաստացած: Երբեմն համակվում էր մի տարօրինակ մեղմությամբ, որի դեմ պայքարում էր և որին հակադրում էր իր վերջին քսան տարիների ընթացքում կուտակված խստասրտությունը: Այս դրությունը հոգնեցնում էր նրան: Անհանգստությամբ նա տեսնում էր, թե իր ներսում խաբլիվում է այն ահավոր լռակյացությունը, որ առաջացել էր իր անարդարացիորեն կրած դժբախտությունից: Նա հարցնում էր ինքն իրեն, թե ինչն է փոխարինելու դրան: Երբեմն նա իսկապես կգերադասեր լինել բանտում՝ ժանդարմների հետ և եթե դեպքերն այսպես տեղի ունեցած չլինեին, նա ավելի քիչ հուզված կլիներ: Թեև ձմեռը մոտ էր, բայց տեղ-տեղ ուշացած ծաղիկներ կային, որոնց հոտը մանկական հիշողություններ էր արթնացնում նրա մեջ՝ երբ անցնում էր նրանց կողքով: Այդ հիշատակներն անտանելի էին նրան. այնքան վաղուց չէր ունեցել այդպիսի հուշեր:

Զանազան անպատմելի մտածմունքներ կուտակվեցին այսպես ողջ օրը նրա մեջ:

Երբ դեպի մայրամուտը թեքվող արևը պարզում էր երկրի վրա նույնիսկ ամենափոքր խճերի ստվերները, Ժան Վալժանը նստած էր մի թփի տակ՝ բացարձակապես ամայի մի մեծ շիկագույն դաշտում: Հորիզոնի վրա միայն Ալպերն էին երևում: Ոչ նույնիսկ հեռավոր գյուղի զանգակատունը:

Ժան Վալժանը Դիյնից երեք լիռ հեռու կլիներ: Դաշտը կտրող մի արահետ անցնում էր այդ թփից մի քանի քայլ հեռու:

Այս մտածմունքների մեջ, որոնք էլ ավելի սարսափելի էին դարձնում նրա ցնցոտիները նրան հանդիպող որևէ մարդու համար, նա մի զվարթ աղմուկ լսեց: Նա շուտ տվեց գլուխը և տեսավ արահետով եկող մի փոքր, մոտ տասը տարեկան սավոյացի երեխայի, որ ջութակը կողքից կախած ու իրերի տուփը մեջքին գցած երգում էր: Նա մեկն էր այն համակրելի ու զվարթ երեխաներից, որոնք երկրե-երկիր են գնում՝ շավարի ծակերից երևան հանելով իրենց ծունկը:

Շարունակելով երգել՝ նա մերթ-մերթ կանգ էր առնում և խաղում էր ձեռքում եղած վեզերով ու հավանաբար նրա ողջ հարստությունը կազմող մի քանի դրամներով, որոնց մեջ մեկ հատ երկու ֆրանկանոց կար:

Երեխան կանգ առավ թփի մոտ և առանց Ժան Վալժանին տեսնելու՝ վեր գցեց իր փողերը ձեռքի հակառակ կողմով բռնելու համար, մի բան, որ մինչ այդ նա արել էր բավական ճարպիկ կերպով:

Այս անգամ երկու ֆրանկանոցը դուրս ընկավ և գլորվելով դեպի թուփը՝ հասավ Ժան Վալժանի մոտ:

Ժան Վալժանը ոտքը դրեց վրան:

Բայց երեխան աչքով հետևել էր իր փողին ու տեսել էր:

Նա բնավ չզարմացավ և գնաց ուղղակի դեպի այդ մարդը:

Բացարձակապես ամայի մի տեղ էր դա և ինչքան որ աչքը կարող էր կտրել՝ ոչ մի մարդ չկար ոչ դաշտում և ոչ էլ արահետի վրա: Լսվում էր միայն չափազանց բարձրից թռչող թռչունների թույլ ճլվղոցը: Երեխան մեջքն արել էր արևին, որը ոսկե թելեր էր դրել նրա մազերի մեջ և որն արյան փայլով շառագունել էր Ժան Վալժանի վայրենի դեմքը:

— Պարոն,— ասաց փոքրիկ սավոյացին այն մանկական վստահությամբ, որ կազմված էր սգիտությունից ու անմեղությունից,— դրամ:

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Ժան Վալժանը:

— Փոքրիկ Ժերվե, պարոն:

— Կորիր,— ասաց Ժան Վալժանը:

— Պարոն,— շարունակեց երեխան,— վերադարձրեք դրամ:

Ժան Վալժանը խոնարհեց գլուխն ու չափափականեց:

Երեխան վերսկսեց.

— Դրամ, պարոն:

Ժան Վալժանի հայացքը մնաց գետնին սևեռած:

— Դրա՛մ,— աղաղակեց երեխան,— սպիտակ, արծաթ դրա՛մ:

Թվում էր, որ Ժան Վալժանը չլսեց նույնիսկ: Երեխան բռնեց նրա բլուզի օձիքից ու ցնցեց՝ միաժամանակ ճգնելով դեն մղել իր փողի վրա դրված խոշոր, գամված կոշիկը:

— Իմ դրամն եմ ուզում, իմ երկու ֆրանկանո՛ցը:

Երեխան լաց էր լինում: Ժան Վալժանի գլուխը բարձրացավ, բայց ինքը շարունակում էր նստած մնալ: Նրա աչքերում խռովություն կար: Մի տեսակ զարմանքով նա գննեց երեխային, ապա ձեռքը մեկնեց դեպի ձեռնափայտը և մի ահարկու ձայնով գոռաց.

— Այդ ո՞վ է:

— Ես եմ, պարոն,— պատասխանեց երեխան,— փոքրիկ Ժերվեն եմ, ես եմ, ե՛ս: Վերադարձրեք խնդրեմ երկու ֆրանկս: Վերցրեք խնդրեմ ձեր ոտքը, պարոն:

Ապա զայրացած և հակառակ փոքր երեխա լինելուն՝ գրեթե սպառնական դիրք ընդունելով,

— Դե, կվերցնե՞ք ձեր ոտքը, թե ոչ: Դե վերցրեք ձեր ոտքը, շո՛ւտ:

— Ա՛, էլի դո՞ւ ես,— ասաց Ժան Վալժանը և հանկարծ բարձրանալով, բայց ոտքը միշտ փողի վրա՝ ավելացրեց,— կցանվե՞ս, թե չէ:

Երեխան խիստ շփոթված նայեց նրան, ապա ոտքից-գլուխ սկսեց դողալ և մի քանի րոպե ապշած մնալուց հետո, սկսեց ամենայն ուժով փախչել, չհամարձակվելով ետ նայել կամ ծալտուն հանել:

Սակայն որոշ տարածության վրա շնչասպառ լինելով ստիպված կանգ առավ և Ժան Վալժանն իր մտածմունքների մեջ լսեց, որ երեխան հեկեկում է:

Մի քանի րոպե հետո երեխան անհետացավ:

Արևը մայր էր մտել:

Մուրճ տարածվում էր Ժան Վալժանի շուրջը: Ողջ օրը նա ոչինչ չէր կերել և հավանական է, որ տենդ ուներ:

Նա մնացել էր կանգնած և երեխայի փախչելուց հետո դիրքը չէր փոխել: Շնչառությունը երկար ու անհավասար միջնադադարներով բարձրացնում էր նրա կուրծքը: Տասը-տասներկու քայլի վրա սևեռված նրա հայացքը կարծես խոր ուշադրությամբ ուսումնասիրում էր խոտի մեջ ընկած մի կապույտ հախճապակու բեկորի ձևը: Հանկարծ նա ցնցվեց, նոր միայն զգաց գիշերվա ցուրտը:

Գլխարկը քաշեց աչքերին, մեքենայորեն ուզեց բլուզը վրա բերել ու կոճկել, մի քայլ արեց և կռացավ գետնից իր ձեռնափայտը վերցնելու:

Այդ րոպեին նա նկատեց իր ոտքի տակի երկու ֆրանկանոցը, որ մի քիչ խրվել էր հողի մեջ և փայլում էր խճերի արանքից:

Կարծես գալվանական հոսանք անցավ նրա մարմնով: «Ի՞նչ է սա»,— ասաց նա ատամների արանքից: Ապա երեք քայլ ետ գնաց, կանգ առավ, բայց չկարողացավ իր հայացքը պոկել այն կետից, որ մի րոպե առաջ իր ոտքը կոխել էր. կարծես թե մթի մեջ փայլող այդ իրը նրա վրա սևեռված աչք լիներ:

Մի քանի թույլից նա ջղաձգորեն նետվեց դեպի արծաթ փողը, վերցրեց այն և շտկելով սկսեց նայել հեռու դաշտին, հայացքը պտտեցնելով հորիզոնի չորս կողմը և սարսռալով ապաստան որոնող շփոթված գազանի նման:

Ոչինչ չտեսավ: Գիշերն իջնում էր, դաշտը ցուրտ էր ու ամայի, մանուշակագույն մեծ մշուշներ էին բարձրանում վերջալույսի շողերի մեջ:

Մի ախ քաշեց և սկսեց արագ քայլել որոշ ուղղությամբ, այն կողմը, ուր երեխան էր հեռացել: Մոտ երեսուն քայլ առաջանալուց հետո կանգ առավ ու նայեց, ոչինչ չտեսավ:

Ապա ողջ ուժով գոռաց.

— Փոքրիկ Ժերվե՛, փոքրիկ Ժերվե՛:

Լռեց ու սպասեց:

Ոչ մի պատասխան:

Դաշտն ամայի էր ու խավար, իսկ նա շրջապատված էր լայն տարածությամբ: Չորս կողմը միմիայն խավար կար, ուր կորչում էր նրա հայացքը և լռություն՝ ուր նրա ձայնն էր խլանում:

Ցրտաշունչ քամին փչում էր և շրջապատի իրերին մի տեսակ սգալի տեսք տալիս: Մացառներն անհավատալի մոլեգնությամբ ցնցում էին իրենց վտիտ բազուկները: Թվում էր, որ նրանք սպառնում էին ու հետապնդում մի մարդու:

Նա վերսկսեց քայլել, ապա սկսեց վազել: Մերթ-մերթ նա կանգ էր առնում և այդ մենակության զարհուրելի ու վշտալի ձայնով գոռում էր.

— Փոքրիկ Ժերվե՛, փոքրիկ Ժերվե՛:

Երեխան եթե լսեր՝ անկասկած խիստ կվախենար և կզգուշանար երևալ: Բայց նա անշուշտ շատ հեռու էր:

Ժան Վալժանը հանդիպեց մի ձիավոր քահանայի, մոտեցավ նրան ու հարցրեց.

— Պարոն ավագերեց, այստեղից անցնող երեխա չե՞ք տեսել:

— Ոչ,— պատասխանեց քահանան:

— Անունը փոքրիկ Ժերվե:

— Ոչ ոքի չեմ տեսել:

Նա երկու հատ հինգ ֆրանկանոց հանեց իր քսակից ու պարզեց քահանային:

— Պարոն ավագերեց, ձեր աղքատների համար: Պարոն ավագերեց, դա մոտավորապես տասը տարեկան փոքր երեխա էր, մի տուփ և կարծեմ մի ջութակ ուներ: Նա սավոյացի էր և անցավ այստեղից:

— Բնավ չեմ տեսել:

— Փոքրիկ Ժերվեի՞ն: Այս գյուղերից չե՞ նա արդյոք: Չե՞ք կարող ասել:

— Եթե այնպես է, ինչպես դուք եք ասում, ապա նա օտարական է, բարեկամս: Դրանք գալիս անց են կենում և ոչ ոք նրանց չի ճանաչում:

Ժան Վալժանը թափով երկու ուրիշ հինգ ֆրանկանոց էլ հանեց ու տվեց քահանային:

— Ձեր աղքատների համար,— ասաց նա:

Ապա մոլորված կերպով ավելացրեց.

— Պարոն ավագերեց, ձերբակալել տվեք ինձ, ես գող եմ:

Քահանան խթանեց ձին ու խիստ սարսափած փախավ:

Ժան Վալժանն սկսեց առաջվա ուղղությամբ վազել:

Այսպես նա բավական երկար ճանապարհ կտրեց, նայելով, կանչելով ու գոռալով, բայց էլ ոչ ոքի չպատահեց: Երկու կամ երեք անգամվազեց դեպի դաշտում պառկածի կամ պղծածի տեսք ունեցող բաները, բայց դրանք մացառներ էին կամ մամռապատ քարեր: Վերջապես մի տեղ, ուր երեք արահետներ խաչաձևվում էին՝ նա կանգ առավ: Լուսինը ծագել էր: Նա հայացքը ման ածեց հեռվում և վերջին անգամ աղաղակեց.

— Փոքրիկ Ժերվե՛, փոքրիկ Ժերվե՛, փոքրիկ Ժերվե՛:

Նրա ձայնը խլացավ մառախուղի մեջ՝ առանց նույնիսկ արձագանք առաջացնելու: Ապա մի անգամ էլ մրմնջաց.

— Փոքրիկ Ժերվե,— բայց թույլ ու անշեշտ ձայնով. դա նրա վերջին ճիգը եղավ. սրունքները ճկվեցին, հանկարծ կարծես մի անտեսանելի գործություն ծանրաբար ճնշեց նրա խղճին: Նա ուժասպառ ընկավ մեծ քարի վրա՝ ձեռքերը խրած մագերի մեջ, իսկ դեմքը ծնկների արանքը և գոչեց.

— Թշվառական եմ ես:

Այդ ժամանակ նրա սիրտը հորդեց և նա սկսեց լաց լինել: Տասնինը տարուց ի վեր առաջին անգամ էր լաց լինում:

Երբ Ժան Վալժանը բաժանվել էր եպիսկոպոսից, ինչպես տեսանք, նա հեռու էր այն ամենից, ինչ նրա մտածմունքն էր հանդիսացել մինչ այդ: Նա չէր կարող հաշիվ տալ իրեն այն ամենի մասին, որ տեղի էր ունեցել իր մեջ: Նա անհողորդ էր մնում ծերունու հրեշտակային գործունեության և մեղմ խոսքերի առջև: «Դուք ինձ խոստացել եք պարկեշտ մարդ դառնալ. Ես գնեցի ձեր հոգին: Ես այն հանում եմ կորստաբեր մտքերից ու հանձնում բարի աստծուն»: Այս խոսքերն անընդհատ վերականգնվում էին նրա գլխում: Այս երկնային ներողամտությանը նա հակադրում էր այն հպարտությունը, որ մեր մեջ է միշտ, որպես չարիքի ամբոց: Անորոշ կերպով նա զգում էր, որ այդ քահանայի ներումն այն մեծագույն հարվածն ու սաստկագույն գրոհն էր, որից նա կարող էր սասանել. զգում էր, որ իր խստասրտությունը վերջնական կլիներ, եթե դիմադրեր այդ ներողամտությանը, իսկ եթե զիջեր, ստիպված կլիներ հրաժարվել այն ատելությունից, որով լցրել էին նրա հոգին այդքան տարիների ընթացքում այլ մարդկանց արարքները. իսկ իր կուտակած ատելությունը դուր էր գալիս իրեն: Սակայն այս անգամ արդեն պետք էր կամ հաղթել, կամ հաղթվել և պայքարը, մի վիթխարի ու վերջնական պայքար, սկսվել էր իր չարության և այդ մարդու բարության միջև:

Այս բոլոր լույսերի ներկայությամբ նա առաջանում էր հարբած մարդու նման: Երբ նա քայլում էր այսպես դաժանատեսիլ, որոշակի ըմբռնում ունե՞ր արդյոք այն ամենի մասին, որ կարող էր առաջանալ Դիյնի դեպքից: Լսո՞ւմ էր նա այն բոլոր խորհրդավոր բզզոցները, որ կյանքի որոշ բույներին ավետում կամ տաղտկացնում են հոգին: Մի ձայն նրա ականջին շշնջում էր, որ հենց նոր նա անցկացրեց իրճակատագրի հանդիսավոր ժամը, որ նրա համար այլևս միջինը չկա, որ սրանից հետո եթե ինքը լավագույն մարդը չդառնա, ապա հոռեգույնը կլինի, որ այժմ, այսպես ասած, պետք է, որ նա կամ եպիսկոպոսից ավելի բարձրանա, կամ թիապարտից էլ ցած ընկնի, որ եթե ուզում է բարի լինել, պետք է հրեշտակ դառնա, իսկ եթե ուզում է չար մնալ, անհրաժեշտ է ճիվաղ դառնալ:

Այստեղ էլ ի դեպ պետք է մի քանի հարց տանք մեզ, որ արդեն այլ տեղ տվել ենք. այս բոլորից գոնե խառնաշփոթ կերպով որևէ ստվեր մնո՞ւմ էր նրա մտքում: Դժբախտությունն, անշուշտ, ինչպես ասել ենք, կրթում է ուշիմությունը, բայց կասկածելի է, որ Ժան Վալժանն ի վիճակի լիներ լուսաբանել այն ամենը, որ մենք նշեցինք այստեղ: Երբ այս մտքերը ծագում էին, նա ավելի շուտ նշմարում էր դրանք, քան տեսնում և այդ մտքերը կարողանում էին միայն գցել նրան մի անբացատրելի ու գրեթե ցավատանջ տագնապի մեջ: Թիարան կոչվող այդ այլանդակ ու սև վայրից դուրս գալուց հետո՝ եպիսկոպոսը ցավացրել էր նրա հոգին, ինչպես որ ուժեղ լույսը ցավացրել էր նրա աչքերը խավարից դուրս գալիս: Ապագա կյանքը, հնարավոր կյանքը, որ սրանից հետո ընձեռնվում էր նրան բոլորովին մաքուր ու շողշողուն՝ լցնում էր նրան սարսուռով ու անձկությամբ: Նա այլևս ստույգ չգիտեր, թե ուր է հասել: Թիապարտը շլացել ու կարծես կուրացել էր առաքինությունից՝ նման այն բվին, որ հանկարծ արևի ծագումն է տեսնում:

— Մի բան միայն անվիճելի էր և որ ինքն էլ չէր կասկածում — դա այն էր, որ նա այլևս նույն մարդը չէր, ամեն բան փոխվել էր նրա մեջ, որ այլևս իր կարողությունից դուրս էր այնպես անել, որ եպիսկոպոսն այլևս չշշնջա ականջին կամ չկպչի իրեն:

Այս մտավիճակում նա հանդիպել էր փոքրիկ Ժերվեին ու գողացել նրա երկու ֆրանկը: Ինչո՞ւ: Ինքն էլ անտարակույս չէր կարողանա բացատրել այդ, արդյոք դա թիարանից բերված վատ մտքերի գերագույն ճի՞գն էր, պոռթկումի մնացո՞րդը, կամ այն հետևա՞նքը, որ ստատիկայում կոչվում է ստացված ուժ: Այո, այդ էր, բայց գուցեն դրանից պակաս մի բան: Ասենք պարզապես, որ նա չէր, մարդը չէր, որ գողացել էր, այլ գազանը, որ ըստ սովորության ու ըստ բնագդի ոտքը հիմարաբար դրել էր այդ փողի վրա, այն միջոցին, երբ իմացությունը մաքառում էր այդքան նոր ու անլուր հալածանքների դեմ: Երբ իմացությունն արթնացավ և տեսավ այդ բիրտ արարքը, Ժան Վալժանն անձկությամբ ետ գնաց և սարսափահար ճչաց:

Բանն այն է, որ գողանալով այդ դրամը երեխայից՝ նա կատարել էր մի բան, որին այլևս ընդունակ չէր. զարմանալի երևույթ, որ հնարավոր էր միայն այն դրության մեջ, որում նա գտնվում էր:

Ինչ էլ որ լինի, այս վերջին վատ արարքը վճռական ներգործությունն էր նրա վրա. նա միանգամից ճեղքեց ու ցրեց իր իմացության մեջ եղած քառսը, խավարը տարավ մի կողմ, իսկ լույսը մյուս կողմ և ազդեց հոգու վրա (այն դրության մեջ, որ նրա հոգին գտնվում էր), նման այն քիմիական ռեակտիվներին, որոնք ազդում են պղտոր լուծույթի վրա՝ վայրասուզելով մի տարր և հստակեցնելով մի ուրիշը:

Ամենից առաջ, առանց նույնիսկ քննելու իրեն ու մտածելու, ազատվելու միջոց որոնող մարդու խելակորույս վիճակում՝ նա ջանաց գտնել այդ երեխային, վերադարձնելու համար նրա փողը, հետո, երբ համոզվեց, որ դա անօգուտ է ու անհնար՝ հուսահատ կանգ առավ: Այն բույներին, երբ նա գոչեց. «Թշվառական եմ ես», արդեն նկատել էր, թե ինչպիսին է իրոք ինքը և արդեն այնքան

բաժանված էր զգում ինքն իրենից, որ նրան թվաց, թե ինքը սոսկ մի ուրվական է, թե իր առջև կանգնել է մսից ու ոսկորից կազմված, ձեռնափայտը ձեռքին, բլուզը հագին, գողացած իրերի տոպրակը մեջքին, վճռական ու թախծոտ դեմքով, խայտառակ ծրագրերով լի ուղեղով քստմունքի թիապարտ Ժան Վալժանը:

Ծայրահեղ դժբախտությունը, ինչպես նկատեցինք, որոշ չափով երագատես էր դարձրել նրան: Սա էլ ուրեմն մի տեսակ երագ եղավ: Նա իսկապես տեսավ իր առջև կանգնած այդ Ժան Վալժանին ու նրա չարագուշակ դեմքը: Նա գրեթե հասավ այնպիսի կետի, որ ուզում էր հարցնել ինքն իրեն՝ ով է այս մարդը, և սարսափեց դրանից:

Նրա ուղեղն այդ բոլորին գտնվում էր այն բոռն, բայց և այնպես սարսափելի հանդարտ բոլորներից մեկում, երբ երագանքն այնքան խոր է, որ խորասուզում է իրականությունը: Այլևս առջևիդ իրերը չես տեսնում և մտքումդ եղած պատկերները տեսնում ես քեզնից դուրս:

Նա գննեց ուրեմն իրեն, այսպես ասած, երես առ երես, և միևնույն ժամանակ, այդ զգայախաբությունից նա տեսնում էր խորհրդավոր խորության մեջ բոցավառվող մի լույս, որն սկզբում ջահ թվաց նրան: Ավելի ուշադրությամբ դիտելով իր խղճին երևացող այդ լույսը՝ նա տեսավ, որ դա մարդկային ձև ուներ և այդ ջահը եպիսկոպոսն էր:

Նրա խիղճը հերթով գննեց իր առջև կանգնած այդ երկու մարդկանց՝ եպիսկոպոսին ու Ժան Վալժանին: Երկրորդին ապակոփելու համար անպայման առաջինն անհրաժեշտ էր եղել: Այն բացառիկ ազդեցություններից մեկի շնորհիվ,— որոնք հատուկ են այս տեսակ զմայլումներին,— ինչ չափով նրա երագը երկարում էր, այնչափ էլ եպիսկոպոսը մեծանում ու պայծառանում էր նրա աչքում, իսկ Ժան Վալժանը փոքրանում էր ու ջնջվում: Մի բոլոր էլ նա դարձավ սոսկ մի ստվեր: Եվ հանկարծ անհետացավ: Միայն եպիսկոպոսն էր մնացել:

Եվ նա լցնում էր այդ թշվառի հոգին սքանչելի ճաճանչափայլումով:

Ժան Վալժանը երկար լաց եղավ: Լաց եղավ ջերմ արցունքներթափելով, լաց եղավ հեծկլտալով, կնոջից ավելի թուլականությամբ և երեխայից ավելի սարսափահար վիճակով:

Լալու միջոցին լույսն ավելի ու ավելի էր ուժեղանում նրա ուղեղում. դա մի արտասովոր, զմայլելի ու միաժամանակ ահավոր լույս էր: Նրա անցյալ կյանքը, առաջին հանցագործությունը, երկարատև քավությունը, արտաքին բրտացումը, ներքին կարծրացումը, բազմաթիվ վրեժխնդրական ծրագրերի հետ կապված ազատ արձակվելը, եպիսկոպոսի մոտ պատահածը, վերջին արարքը՝ երեխայից երկու ֆրանկ գողանալը, մի ոճիր, որն էլ ավելի ստոր, էլ ավելի ճիվաղային էր դառնում, որովհետև կատարվում էր եպիսկոպոսի ներումից հետո, այս ամենը նորից երևաց նրան հստակորեն, բայց այնպիսի հստակությամբ, որպիսին մինչ այդ նա չէր տեսել: Նա դիտեց իր կյանքը և այդ կյանքը երևաց զարհուրելի, դիտեց հոգին և այդ հոգին երևաց սոսկալի: Սակայն մի քաղցր լույս էր սփռվել այդ կյանքի ու հոգու վրա: Նրան թվում էր, որ սատանային է տեսնում արքայության լույսի առաջ:

Քանի՞ ժամ նա այդպես լաց եղավ, ի՞նչ արեց լաց լինելուց հետո, ո՞ր գնաց, ոչ ոք չիմացավ: Մի բան միայն ստույգ է, որ այդ նույն գիշերը հանրակառք վարողը, որն այդ ժամանակ կանոնավորապես երթևեկում էր Գրենոբլի ու Դիյնի միջև, գիշերվա ժամը երեքին Դիյն հասնելիս՝ եպիսկոպոսարանի փողոցում մի մարդ տեսավ գերապատիվ Բիենվյուլի դռան առջև աղոթողի դիրքում, ստվերում՝ չոքած սալահատակի վրա:

Գիրք երրորդ

1817 ԹՎԱԿԱՆԻՆ

I

1817 ԹՎԱԿԱՆԸ

1817 թվականն այն տարին է, որ Լյուդովիկոս 18-րդը արքայական որոշ ինքնավստահությամբ ու հպարտությամբ որակում էր որպես իր թագավորության քսաներկուերորդը: Այդ այն տարին է, երբ պարոն Բրյուգիեր դը Սորսոմը հայտնի էր: Կեղծամ վաճառող բոլոր խանութները, հուսալով, որ կեղծամն ու արքայական թռչունը կվերադառնան, բաց կապույտ էին ներկվել և արքայաշուշաններով նկարազարդվել: Դա այն միամիտ ժամանակն էր, երբ կոմս Լինչը ամեն կիրակի բազմում էր եկեղեցական գանձանակի առջև Սեն-Ժերմեն դը Պրե տաճարում Ֆրանսիայի պերի հագուստով, կարմիր շքանշաններիգով, իր կարմիր քթով և դեմքի վեհությամբ, որ հատուկ է մի փայլուն գործ կատարած մարդուն: Պարոն Լինչի կատարած փայլուն գործը հետևյալն էր. լինելով Բորդոյի քաղաքագլուխ, 1814 թվականի մարտի 12-ին քաղաքը մի քիչ շուտ էր հանձնել Անգուլեմի դքսին և դրա համար էլ պերության տիտղոս էր ստացել: 1817 թվականին մոդան չորսից վեց տարեկան փոքր տղաներին խորասուզում էր մարտքյան կաշուց կարված ականջակալներ ունեցող լայն գլխարկների տակ, որոնք բավական նման էին էսկիմոսների խույրին: Ֆրանսիական բանակը ավստրիականի նմանողությամբ՝ սպիտակ համազգեստ էր հագնում. գնդերը կոչվում էին լեգեոն և համարների փոխարեն կրում էին դեպարտամենտների անուններ: Նապոլեոնը Սուրբ Հեղինե կղզում էր և որովհետև Անգլիան հրաժարվում էր կանաչ մահուդ տալ նրան, նա էլ շրջել էր տալիս իր հին հագուստները: 1817 թվականին Պելլեգրինին երգում էր, օրհորդ Բիգոտտինին պարում: Իշխում էր Պոտիեն, Օդրին դեռ գոյություն չուներ: Տիկին Սաքին էր հաջորդում Ֆորիոգոյին: Ֆրանսիայում դեռ պրուսացիներ կային: Պարոն Դլալոն անձնավորություն էր: Օրինավորությունը հաստատվում էր կտրելով նախ բռնցքը, ապա գլուխը Պլենիեի, Կարբոնոյի ու Տոլերոնի: Արքունի սենեկապետ իշխան Թալեյրանը և ֆինանսների ականավոր մինիստր աբբա Լուին իրար նայելիս ծիծաղում էին զույգ գուշակների նման. նրանք երկուսն էլ 1790 թ. հուլիսի 14-ին կատարել էին Մարսյան դաշտում տեղի ունեցած ֆեդերացիայի պատարագը. Թալեյրանը պատարագը մատուցել էր որպես եպիսկոպոս, իսկ Լուին սպասավորել էր որպես սարկավագ: 1817 թվականին, այդ միևնույն Մարսյան դաշտի կողմնակի ծառուղիներում երևում էին անձրևի տակ ընկած ու խոտերի մեջ փռող, ոսկեգոծումից զրկված արծիվների ու մեղունների հետքեր կրող փայտե խոշոր, կապույտ ներկված գլաններ: Դրանք այն սյուներն էին, որ երկու տարի առաջ, Մայիսյան երթին կրել էին կայսեր ամբիոնը: Դրանք տեղ-տեղ սևացել էին Գրո-Կայուի մոտ բանակ խփած ավստրիական բացօթյակը այրելուց: Այս սյուներից երկուսը կամ երեքը անհետացել էին այդ բացօթյակների բոցերի մեջ և տաքացրել էին գերմանական կայսերագործի լայն ձեռքերը: 1817 թվին մայիսյան երթն այն նշանավոր հանգամանքն ունեցավ, որ տեղի ունեցավ հունիս ամսին ու Մարսյան դաշտում: Այդ 1817 թվականին երկու բան ժողովրդական էին. Վոլտեր-Տուբե բազկաթոռը և խարտիայով ծխատուփը: Փարիզի ամենավերջին հուզումնալից նորությունը Դոսյուսի ոճիրն էր. նա իր եղբոր գլուխը գցել էր ծաղիկների շուկայի ավազանը: Ծովային մինիստրության մեջ սկսել էին մի հարցաթերթիկ կազմել «Մեղուզա» չարաբաստիկ նավի մասին, որն ամոթով պիտի ծածկեր Շոմարեին և փառքով՝ Ժերիկոյին: Գնդապետ Սելվը Եգիպտոս էր գնում, որպեսզի այնտեղ

Սուլեյման փաշա դառնա: Լա Հարափ փողոցի Թերմի պալատը ծառայում էր որպես մի տակառագործի կրպակ: Կյունի ապարանքի ութանկյունի աշտարակի հենահարթակի վրա դեռ երևում էր տախտակե փոքրիկ խցիկը, որը Լյուդովիկոս 16-րդի ժամանակվա ծովային աստղաբաշխ Մեսիեին ծառայել էր որպես աստղադիտարան: Դքսուհի Դյուրան երկնագույն ատլասով և X-աձև կահույքով կահավորված իր զարդասենյակում երեք-չորս բարեկամների կարդում էր անտիպ «Ուրիկան»: Լուվրի պալատի պատերից քերում էին տառերը: Աուստեռլիցի կամուրջը հրաժարվում էր իր անունից ու կոչվում Արքայական Այգու կամուրջ, մի կրկնակի հանելուկ, որ միաժամանակ քողարկում էր Աուստեռլիցի կամուրջը և Բուսաբանական այգին: Գերզադված Լյուդովիկոս 18-րդը եղունգով Հորացիոսի վրա ընդգծելով կայսր դարձող հերոսներին ու թագաժառանգ դարձող սանդալակարներին՝ երկու մտահոգություն ուներ. Նապոլեոնը և Մաթյուրեն Բրյունոն: Ֆրանսիական ակադեմիան որպես մրցանակի թեմա տալիս էր՝ կրթության ընձեռած երջանկությունը: Պարոն Բելարը պաշտոնապես ճարտասան էր, իսկ նրա սովերի տակ բողբոջում էր Պոլ Լուի Կուրիեի սարկավանդին խոստացված ապագա գլխավոր դաստիարակ դը Բրոն: Մի կեղծ Շատոբրիան կար, որին անվանում էին Մարշանժի և սպասում, որ լինի նաև միկեղծ Մարշանժի՝ դ'Արլենկուր կոչվելու համար: Ալբայի Կլարան և Մալեք-Ադելը գլուխգործոցներ էին, իսկ տիկին Կոտենը հայտարարված էր դարաշրջանի առաջին գրող: Ֆրանսիայի ինստիտուտը թույլ տվեց, որ իր ցուցակից ջնջվի ակադեմիկոս Նապոլեոն Բոնապարտի անունը: Արքայական մի հրամանով Անգուլեմ քաղաքը վերածվեց ծովային դպրոցի. որովհետև Անգուլեմի դուքսը մեծ ծովակալ էր, ապա ակներև էր, որ Անգուլեմ քաղաքն իրավամբ ծովային նավահանգստի բոլոր հատկություններն ունենար, առանց որի միապետության սկզբունքը կմասնատվեր: Մինիստրական խորհրդում ծեծում էին այն հարցը, թե պե՞տք է հանդուրժել ձիախաղեր ներկայացնող զարդաշրջանակները, որ համեմունք էին Ֆրանկոնիի աֆիշները և իրենց վրա էին հավաքում փողոցի չարաճճիներին: Պարոն Պաերը՝ «Միամիտ աղջիկ»-ի հեղինակը, քառակուսի դեմքով և երեսին կոծիծ ունեցող այդ բարի մարդուկը դեկավարում էր լա Վիլ լ'Էվեք փողոցում մարքիգուհի Սասնեի մտերմական փոքր համերգները: Բոլոր դեռատի աղջիկները երգում էին «Սուրբ Ավելի ճգնավորը», խոսք Էդմոն Ժերոյի: «Դեղին թզուկ» լրագիրը վերանվանվեց «Հայելի»: «Լամբլեն» սրճարանը կայսեր կողմնակից էր, ընդդեմ «Վալուա» սրճարանի, որ Բուրբոններին էր կողմնակից: Սիցիլիացի մի իշխանուհու ամուսնացրին Բեռլինի դքսի հետ, որին սովերի միջից արդեն նշմարել էր Լուվելը: Մի տարի էր արդեն, որ տիկին դը Ստալը մեռել էր: Արքայական թիկնապահները սուլում էին օրիորդ Մարսին: Մեծ օրաթերթերը չափազանց փոքրացել էին: Ծավալը սեղմված էր, բայց ազատությունը մեծ էր: «Կոնստիտյուսիոնել» լրագիրը սահմանադրական էր: «Միներվան» Շատոբրիանի անունը գրում էր մի տառ փոփոխելով, մի բան, որ չափազանց ծիծաղեցնում էր բուրժուաներին ի հեճուկս մեծ գրողին: Ծախված օրաթերթերի մեջ պոռնկացած ժուռնալիստները նախատում էին 1815 թվականի տարագիրներին. Դավիդն այլևս տաղանդ չուներ, Առնոն՝ սրամտություն, Կառնոն՝ ուղղամտություն. Սուլտը ոչ մի պատերազմ չէր շահել. ճիշտ է, որ Նապոլեոնն այլևս հանճար չուներ: Ոչ ոք չի անգիտանում, որ բավական հազվադեպ է, որ փոստի միջոցով որևէ աքսորականի հասցեագրված նամակները հասնեն նրան, որովհետև ոստիկանությունները կրոնական պարտականություն են համարում դրանք գրավելը: Այս երևույթը նորություն չէ, տարագրված Դեկարտը գանգատվում էր դրանից: Արդ, քանի որ Դավիդը մի բելգիական օրաթերթում փոքր դժգոհություն էր հայտնել իրեն գրված նամակները չստանալու համար, ապա այս բանը զվարճալի էր թվում ռոյալիստական թերթերին, որոնք այս առթիվ այպանում էին տարագրին: Արքայասպանի փոխարեն քվեարկող ասելը, թշնամիների փոխարեն դաշնակիցներ ասելը, Նապոլեոնի փոխարեն Բուոնապարտե ասելը ավելի էր հեռացնում երկու մարդու, քան խորխորատը: Բոլոր ողջամիտ մարդիկ համաձայնում էին, որ հեղափոխությունների դարաշրջանն ընդմիջտ փակված էր Լյուդովիկոս 18-րդ՝ «խարտիայի անմահ հեղինակ» մականվանած թագավորի ձեռքով: Պոն-Նյոֆի սարահարթում, այն պատվանդանի վրա,

որ սպասում էր Հենրի 4-րդի արձանին, քանդակեցին Redivivus⁵² բառը: Պարոն Պիեն Թերեզա փողոցի № 4 տանը ծրագրում էր իր գաղտնի ժողովը՝ միապետությունն ամրացնելու համար: Աջերի պարագլուխները ծանրակշիռ դեպքերում ասում էին. «Պետք է գրել Բակոյին»: Պարոնայք Կանյուելը, ՕՄահոնին և Շապոլենը թագավորի կրտսեր եղբոր մասնակի համաձայնությամբ ուրվագծում էին այն, որ շատ չանցած դառնալու էր «ջրի ափի դավադրությունը»: Սև Գնդասեղի կազմակերպությունն էլ իր կողմից էր դավադրում: Դավերդրին ձայնակցում էր Տրոգոֆի հետ: Պարոն Դեկազը, որոշ չափով լիբերալ այդ մարդը՝ գերիշխում էր: Շատոբրիանը ամեն առավոտ Սեն-Դոմինիկ փողոցի № 27 տան իր լուսամուտի առջև մինչև ոտքի ծայրերը հասնող շալվար ու սենյակի մաշիկներ հագած, իր ալեխառն մագերը մադրասյան թաշկինակով ծածկած, աչքերը հայելուն սևեռած, ատամնաբույժի մի լրիվ բուժատուփ առջև բացած, բուժում էր իր գեղեցիկ ատամները, շարունակելով թելադրել իր քարտուղար պարոն Պիլորժին «Միապետությունն ըստ Խարտիայի»-ի տարբերակները: Քննադատությունը հեղինակություն հանդիսանալով, Լաֆոնին գերադասում էր Տալմայից: Պարոն Ֆելեցն ստորագրում էր Ա., պարոն Հոֆմանն ստորագրում էր Զ.: Շառլ Նոդին գրում էր «Թերեզ Օբերը»: Ապահարգանք վերացված էր: Լիցեյները կոչվում էին կոլեջ: Ոսկեկար արքայաշուշան կրող օձիքներով պճնված կոլեջականները ծեծկոտվում էին այնտեղ Հռոմի թագավորի առթիվ: Դոյակի հակառակորդությունը ծանուցում էր նորին արքայական վսեմություն թագավորի կրտսեր եղբոր կնոջը, թե ամենուրեք ցուցադրված է նկարը Օռլեանի դքսի, որն ավելի լավ տեսք ունի հուսարական գեներալի համազգեստով, քան թե Բեռլինի դուքսը դրագունների գեներալի համազգեստով. ծանրակշիռ անպատեհություն: Փարիզ քաղաքն իր ծախսով նորից ոսկեգոծել էր տալիս Ինվալիդների տան գմբեթը: Լուրջ մարդիկ հարցնում էին իրար, թե այս կամ այն առթիվ ինչպես կվարվի պարոն դը Տրենքլազը. պարոն Կլոզել դը Մոնտալը զանազան կետերում համաձայն չէր պարոն Կլոզել դը Կուսերգին. պ. Սալաբերին գոհ չէր: Կատակերգությունների հեղինակ Պիկարը, որ ֆրանսիական ակադեմիայի անդամ էր և որին կատակերգությունների հեղինակ Մոլիերը չէր կարողացել անդամ լինել, բեմադրում էր «Երկու Ֆիլիբերները» Օդեոնում, որի ֆրոնտոնի վրայից պոկված տառերի տեղ որոշակի կարդացվում էր «Կայսրուհու թատրոն»: Շատերը Կյոյնե դը Մոնտառոյի կողմն էին, շատերն էլ նրա դեմ: Ֆաբլիեն հերձվածող էր: Բավուն՝ հեղափոխական: Ազատախոս Պելիսիեն հրապարակում էր Վոլտերի մի նոր հրատարակություն՝ «Երկասիրությունը Վոլտերի՝ անդամ ֆրանսիական ակադեմիայի» վերնագրով: «Գնորդներ կբերի դա»,— ասում էր այս միամիտ հրատարակիչը: Ընդհանուր կարծիքն այն էր, որ պարոն Շառլ Լուազոնը կդառնա դարի հանճարը. նախանձն սկսում էր կրծել նրան,— փառքի նշան,— և նրա մասին հետևյալ ոտանավորն էին կազմել.

Երբ նույնիսկ Լուազոնը⁵³ թռչում է, զգացվում է, որ թաթեր ունի:

Կարդինալ Ֆեշը հրաժարվում էր իր պաշտոնը թողնել, պարոն դը Պենը՝ Ամադիի արքեպիսկոպոսը, կառավարում էր Լիոնի թեմը: Կապիտան, հետագայում գեներալ Դյուֆուրի մի գեկուցագրից սկսվում էր Շվեյցարիայի ու Ֆրանսիայի միջև Դապ հովտի վեճը: Անտեսված Սեն-Սիմոնը կուտակում էր իր վեհ երազը: Գիտությունների ակադեմիայում կար մի նշանավոր Ֆուրիե, որին հետագա սերունդները մոռացան և մի ինչ-որ ձեռնահարկում կար մի անհայտ Ֆուրիե, որին ապագան կհիշի: Լորդ Բայրոնն սկսում էր ծագել. Միլվուայի պոեմներից մեկի մի ծանոթագրությունը ազդարարում էր Ֆրանսիային՝ Ուն լորդ Բայրոն: Դավիդ Անժերցին փորձում էր ձևավորել մարմարը: Աբբա Կարոնը գովասանքով էր խոսում Ֆոյանտինի անել փողոցներից մեկում համախմբվող սեմինարիստների մի փոքր կոմիտեում Ֆելիսիտե Ռոբեր կոչվող մի անծանոթ քահանայի մասին, որ հետագայում դարձավ Լամենն: Սենա գետի վրա մի բան էր ծխում

⁵² Վերակենդանացած (լատ.):

⁵³ Այս անունը ֆրանսերենում գրեթե նման է թռչուն բառին:

և շան աղմուկ հանելով, լողալով երթնելու՝ եր Տյուրիլլիի լուսամուտների տակ, Արքայական կամրջից մինչև Լյուդովիկոս 15-րդի կամուրջը. դա մի մեծ բանի պիտանի չեղող մեխանիզմ էր, մի տեսակ խաղալիք, մի երագող գյուտարարի անուրջ, ուտոպիա-շոգենավ էր դա: Փարիզցիք անտարբերությամբ էին դիտում այս անօգտակարությունը: Պարոն դը Վոբլանը՝ պետական հեղաշրջումից հետո ինստիտուտը վերանորոգողը, բազմաթիվ մարդկանց ակադեմիկոսների կոչում տալու հեղինակը, չէր կարող ինքն էլ այդպիսին դառնալ: Մեն-ժերմեն արվարձանը և Մարսան տաղավարը ցանկանում էին պարոն Դլավոյին ռստիկանապետ տեսնել՝ նրա բարեպաշտության պատճառով: Դյուայյուիտրենն ու Ռեկամիեն բժշկական դպրոցի ամֆիթատրոնում կովի էին բռնվում ու բռնկվում սպառնում իրար Հիսուս-Քրիստոսի աստվածության առթիվ: Կյուվիեն՝ մի աչքը ծննդոց գրքին հառած, մյուսը՝ բնությանը, ճգնում էր դուր գալ պաշտամով ռեակցիային՝ բրածոները հաշտեցնելով Սուրբ գրքի հետ և Մովսեսին մաստոդոնտների փաղաքշանքին արժանացնելով: Պարոն Ֆրանսուա դը Լյուշատոն՝ Պարմանտիեի հիշատակի գովելի մշակողը, հազարավոր միջոցների էր դիմում, որպեսզի պոմ դը տեր⁵⁴ բառն արտասանվի Պարմանտիե, բայց չէր հաջողվում: Նախկին եպիսկոպոս, նախկին կոնվանսիոնել, նախկին սենատոր աբբա Գրեգուարը ռոյալիստական բանավեճի մեջ անցել էր «վատահամբավ Գրեգուար» դրությանը: «Անցել էր դրության» արտահայտությունը, որ մենք հիմա գործածեցինք, պարոն Ռուայե-Կոլլարն ազդարարեց որպես նորաբանություն: Իենայի կամրջի երրորդ կամարի տակ կարելի էր իր սպիտակությունից դեռ նկատել այն նոր քարը, որով երկու տարի առաջ խցել էին ականի ծակը, որ Բյուլիերը շինել էր կամուրջը պայթեցնելու համար: Արդարադատությունն իր ասոյանը կանչեց մի մարդու, որ տեսնելով Արտուայի կոմսին Նոտր-Դամ եկեղեցին մտնելիս՝ բարձր ձայնով ասել էր. «Գրո՛ղը տանի, երանի այն ժամանակներին, երբ տեսնում էիր Բոնապարտին ու Տալմային թեանցուկ Բալ-Սովաժ մտնելիս»: Խռովարկու խոսքեր: Վեց ամիս բանտարկություն: Դավաճանները մերկապարանոց էին հանդես գալիս. այդ մարդիկ, որ ճակատամարտի նախօրյակին իմաց էին արել թշնամուն, ոչինչ չէին թաքցնում ստացած վարձատրությունից և օրը ցերեկով լկտիորեն քայլում էին հարստության և տիտղոսների ցինիզմով պճնված. Լինյիի և Քատր-Բոայի դասալիքներն իրենց վճարված խայտառակությունների անպատկառությամբ բոլորովին մերկ կերպով արտահայտում էին իրենց անձնվիրությունը միապետության, մոռանալով, թե ինչ է գրված Անգլիայում հասարակական արտաքնոցների պատերի վրա — Please adjust your dress before leaving⁵⁵:

Ահա խառնիխուռն ձևով այն, ինչ խառնաշփոթ կերպով մնացել է մոռացված 1817 թվականից: Պատմությունն անտեսում է գրեթե այս բոլոր մասնավոր դեպքերը, այլ կերպ էլ չի կարող անել, այլապես անսահմանը կնվաճեր նրան: Սակայն այս մանրամասնությունները, որ սխալմամբ անվանում են մանր,— մարդկության մեջ մանր դեպքեր չկան, ոչ էլ բուսականության մեջ մանր տերևներ,— օգտակար են: Տարիների կերպարանքից է կազմվում դարերի դեմքը:

Այդ 1817 թվականին փարիզցի չորս երիտասարդներ «մի լավ խեղկատակություն» խաղացին:

⁵⁴ Գետնախնձոր — կարտոֆիլ (ֆր.):

⁵⁵ Բարեհաճեք ձեր հագուստները շտկել հեռանալուց առաջ (անգլ.):

II

ԶՈՒՅԳ ՔԱՆՑԱԿ

Այդ փարիզցիներից մեկը տուլուզցի էր, մյուսը՝ լիմոժցի, երրորդը՝ կահորցի, չորրորդը՝ մոնտոբանցի. բայց նրանք ուսանողներ էին և ով որ ուսանող է ասում՝ փարիզցի է ասում. Փարիզում ուսանել՝ նշանակում է Փարիզում ծնվել:

Նրանք աննշան երիտասարդներ էին, ամենքն էլ տեսել են այդպիսի դեմքեր, առաջին պատահածի չորս նմուշ. ոչ լավ, ոչ վատ. ոչ գիտնական, ոչ տգետ. ոչ հանճար, ոչ ապուշ. գեղեցիկ՝ քսան տարեկանի ապրիլյան շքեղությամբ: Դրանք չորս ինչ-որ Օսկարներ էին, որովհետև այդ ժամանակ Արթուրներ չկային դեռ: «Արաբական անուշահոտություններ ծխեցեք նրա համար,— ասում էր ռոմանսը,— Օսկարը գալիս է, Օսկարը, գնամ նրան տեսնելու»: Հրաժարվում էին Օսիանից, նրբաճաշակությունը սկանդինավականն էր ու կալեդոնիականը, մաքուր անգլիական սեռը գերազնահատվելու էր ավելի ուշ, իսկ Արթուրների առաջինը՝ Վելինգտոնը, դեռ հազիվ էր Վաթերլոոյի ճակատամարտը շահել:

Այս Օսկարներից մեկի անունը Ֆելիքս Թոլումիես էր՝ Տուլուզից, մյուսինը Լիստոլիե՝ Կահորից, երրորդինը Ֆամոյ՝ Լիմոժից, վերջինինը Բլաշվել՝ Մոնտոբանից: Բնականաբար յուրաքանչյուրն ուներ իր սիրուհին: Բլաշվելը սիրում էր Ֆավուրիտին, որին այդպես էին անվանել Անգլիա գնացած լինելու համար. Լիստոլիե Կաշտում էր Դալիային, որը որպես ավելորդ անուն ընտրել էր ծաղկի անուն⁵⁶, Ֆամոյը խիստ սիրում էր Ջեֆինին, որ Ժոզեֆինի կրճատ ձևն է, որին Բլոնդ էին անվանում նրա գեղեցիկ արևագույն մազերի համար:

Ֆավուրիտը, Դալիան, Ջեֆինն ու Ֆանտինը չորս զմայելի աղջիկներ էին, անուշահոտ ու զվարթադեմ, դեռ մի քիչ բանվորուհի, քանի որ դեռ բոլորովին չէին զցել իրենց ասեղը, անցողիկ սերերով վթարված, բայց դեմքի վրա դեռ պահած աշխատանքի պայծառության մնացորդը, իսկ հոգու խորքում՝ պարկեշտության այն ծաղիկը, որ կնոջ մեջ վերապրում է առաջին անկումից հետո: Այդ չորսից մեկին անվանում էին մանկամարդ, որովհետև նա ամենավտոբքն էր, մի ուրիշի էլ անվանում էին պառավ: Պառավը քսաներեք տարեկան էր: Որևէ բան չթաքցնելու համար ասենք, որ առաջին երեքը ավելի փորձված էին, ավելի անհոգ և ավելի մեծ թոփչք ունեին կյանքի աղմուկի մեջ, քան խարտյաշ Ֆանտինը, որ դեռ իր առաջին պատրանքի մեջ էր:

Դալիան, Ջեֆինն ու մանավանդ Ֆավուրիտը չէին կարող Ֆանտինի նման առաջին պատրանքով սահմանափակվել: Նրանց հազիվ սկսված սիրավեպն արդեն մեկից ավելի դրվագ ուներ և սիրահարը, որ առաջին գլխում կոչվում էր Ադոլֆ, երկրորդում Ալֆոնս էր, իսկ երրորդում՝ Գյուստավ: Աղքատությունն ու պչրանքը երկու աղետաբեր խորհրդատուներ են. մեկը կշտամբում է, մյուսը՝ փաղաքշում և հասարակ ժողովրդի գեղեցիկ աղջիկներն ունեն թե մեկը և թե մյուսը, որոնցից յուրաքանչյուրն իր կողմից կամացուկ շնջում է նրանց ականջին: Այս վատ պահպանված հոգիները լսում են: Դրանից էլ առաջանում են նրանց անկումները և նրանց շարտված քարերը: Նրանց նվաճում են այն ամենի շքեղությամբ, ինչ որ անբիժ է ու անմատչելի: Ավաղ, եթե Յունգֆրաուն⁵⁷ քաղցած լիներ:

⁵⁶ Դալիան քաջվարդի նմանող ծաղիկ է: Շ. թ.:

⁵⁷ Ալպերի գագաթներից մեկը, նշանակում է նաև ջահել տիկին (գերմ.). ըստ երևույթին այս առումով է գործածված այստեղ:

Զեֆիրն ու Դավիան հիանում էին Ֆավուրիտով, որովհետև նա եղել էր Անգլիայում: Նա շատ վաղ տարիքից առանձին բնակարան էր ունեցել: Նրա հայրը մաթեմատիկայի մի ծեր, բիրտ ու պոռոտախոտ ուսուցիչ էր և հակառակ իր տարիքին տներում դաս էր տալիս: Այս ուսուցիչը երիտասարդ ժամանակ տեսել էր մի սենեկապանուհու շրջագգեսը վառարանի անթեղոցին կառչելիս և այդ առթիվ սիրահարվել էր նրան: Դրա հետևանքը եղել էր Ֆավուրիտը: Երբեմն-երբեմն նա հանդիպում էր իր հորը, որ բարևում էր նրան: Մի առավոտ կեղծ բարեպաշտի տեսքով մի պառավ կին մտել էր նրա սենյակն ու ասել. «Դուք ինձ չե՞ք ճանաչում»: «Ոչ»: «Ես քո մայրն եմ»:— Ապա պառավը բաց էր արել բուֆետը, կերել-խմել էր, բերել էր տվել իր ունեցած ներքնակը և տեղավորվել այդտեղ: Այս մոթմոթան ու կրոնամոլ մայրը երբեք չէր խոսում Ֆավուրիտի հետ, ժամերով ծպտուն չէր հանում, նախաճաշում, ճաշում ու ընթրում էր չորս մարդու չափ, իջնում էր ներքև դռնապանի հետ բարձր հասարակություն կազմելու և վատաբանում էր իր աղջկան:

Այն, ինչ որ Դավիային մղել էր դեպի Լիստոլին, կամ թերևս դեպի ուրիշները և դեպի անաշխատությունը՝ խիստ գեղեցիկ վարդագույն եղունգներ ունենալն էր: Ինչպե՞ս աշխատեցնել այդ եղունգները: Առաքինի մնալ ցանկացող կինը չպետք է խղճա իր եղունգները: Գալով Զեֆիրին, ապա նա նվաճել էր Ֆամոյին՝ այո, պարոն ասելու իր կայտառ ու փաղաքշական եղանակով:

Երիտասարդներն ընկերներ էին, մանկամարդ աղջիկները՝ բարեկամուհիներ: Այսպիսի սերեր միշտ էլ երկրորդվում են այսպիսի բարեկամություններով:

Իմաստունը փիլիսոփայից տարբերվում է և դա ապացուցվում է նրանով, որ այս անկանոն ու փոքր տնտեսություններում արված բոլոր զգուշություններն առաջացել էին այն բանից, որ Ֆավուրիտը, Զեֆիրն ու Դավիան փիլիսոփա աղջիկներ էին, իսկ Ֆանտինը՝ իմաստուն:

«Իմաստո՞ւն,— կարող եք հարցնել,— իսկ Թոլոմիե՞սը»: Մողոմոնը կպատասխաներ, որ սերն իմաստության մասն է: Մենք կսահմանափակվենք ասելով, որ Ֆանտինի սերը առաջին սեր էր, միակ ու հավատարիմ սեր էր:

Նա միակն էր այդ չորսից, որին միայն մի մարդ էր դուռով կանչում:

Ֆանտինը մեկն էր այն էակներից, որպիսիք, այսպես ասած, ցանկապատվում են ժողովրդի խորքում: Դուրս եկած սոցիալական խավի ամենաանքննելի խորքերից՝ նա կրում էր իր ճակատի վրա անանուխի և անծառնի նշանը: Ծնվել էր Մոնտրոյ այլու-Մեռում: Ի՞նչ ծնողներից: Ո՞վ կարող է ասել: Նրա ոչ հորը, ոչ մորը ոչ ոք չէր ճանաչել: Նրա անունը Ֆանտին էր: Ինչո՞ւ Ֆանտին: Այլ անունով նրան ոչ ոք չէր ճանաչել: Նրա ծննդյան ժամանակ դիրեկտորիան դեռ գոյություն ուներ: Ոչ մի ազգանուն, քանի որ նա ընտանիք չուներ. ոչ էլ մկրտության անուն, քանի որ եկեղեցին այլևս այդտեղ չէր: Նա անվանվեց այնպես ինչպես դուր եկավ առաջին անցորդին, որ հանդիպեց նրան խիստ փոքր ժամանակ ոտաբորիկ փողոցով գնալիս: Նա ստացավ անուն, ինչպես իր ճակատին ստանում էր ամպերի ջուրը, երբ անձրևում էր: Նրան անվանում էին փոքրիկ Ֆանտին, դրանից ավելի ոչ ոք չգիտեր: Այս մարդկային արարածն այդպես էլ քաղաք էր եկել: Տասը տարեկան հասակում Ֆանտինը հեռացավ քաղաքից և գնաց ծառայության մտավ շրջակայքի ազգարկապանների մոտ: Տասնհինգ տարեկանում Փարիզ եկավ «բախտ որոնելու»: Ֆանտինը գեղեցիկ էր և ինչքան երկարատև կարողացավ՝ մնաց մաքուր: Դա գեղեցիկ ատամներով մի գեղեցիկ խարսյաշ աղջիկ էր: Օժիտի համար նա ուներ ոսկի և մարգարիտ, բայց նրա ոսկին գլխի վրա էր, իսկ մարգարիտը՝ բերանի մեջ:

Նա աշխատեց ապրելու համար, ապա՝ դարձյալ ապրելու համար, քանի որ սիրտն էլ է քաղցածանում՝ նա սիրեց:

Եվ սիրեց Թուլմիեսին:

Վերջինիս համար վաղանցուկ սեր էր դա, իսկ Ֆանտինի համար՝ ուժեղ սեր: Լատինական թաղամասի փողոցները, ուր վխտում են ուսանողներն ու գրիգետուհիները, տեսան այն երագի սկիզբը: Ֆանտինը Պանթեոնի⁵⁸ բլրի այդ լաբիրինթոսում, որտեղ այնքան արկածներ են հյուսվում ու քանդվում, երկար ժամանակ խույս էր տվել Թուլմիեսից, բայց շարունակ նրան հանդիպելու ձևով: Կա խուսափելու մի ձև, որ նման է փնտրելուն: Կարճ, հովվերգը տեղի ունեցավ:

Բլաշվելը, Լիստովիեն ու Ֆամոյը մի տեսակ խմբակ էին կազմում, որի պարագլուխը Թուլմիեսն էր: Սրամիտը նա էր: Թուլմիեսը պառաված, հարուստ ու երկարամյա ուսանող էր, ուներ չորս հազար ֆրանկ տարեկան եկամուտ. չորս հազար ֆրանկ եկամուտը հիանալի սկանդալ է Սուրբ-Ժենրվիլի բլրի վրա: Թուլմիեսը երեսուն տարեկան ու թորշոմած գվարճասեր էր: Դեմքը ծածկված էր կնճիռներով ու ատամները թափվել էին: Ճաղատությունն արդեն ուրվագծվում էր գլխի վրա, որի մասին ինքն իսկ առանց տխրության ասում էր. «Երեսնամյա գանգ, քառասնամյա սրունք»: Վատ էր մարսում կերածը և մի աչքը շարունակ արցունքակալում էր: Բայց ինչ չափով որ նրա երիտասարդությունը մարում էր, այնքան ավելի էր արծարծում իր ուրախությունը: Ատամները փոխարինում էր խեղկատակություններով, մազերը՝ զվարճությամբ, առողջությունը՝ հեգնանքով և նրա լավկան աչքը շարունակ ծիծաղում էր: Նա քայքայված էր, բայց փթթուն տեսք ուներ: Վաղաժամ մեկնելու պատրաստվող նրա երիտասարդությունը կատարյալ կարգապահությամբ էր նահանջում, ծիծաղից ուշաթափվում էր և միայն ուրախանում ու զվարճանում էր: Վոդկիների թատրոնին մի պիես էր ներկայացրել, բայց մերժել էին: Երբեմն-երբեմն աննշան ոտանավորներ էր գրում: Բացի դրանից, նա մեծամտորեն կասկածում էր ամեն բանի, մի բան, որ մեծ ուժ է թույլերի աչքին: Այսպիսով, լինելով հեգնող ու ճաղատ՝ խմբի ղեկավարն էր հանդիսանում: Iron անգլերեն բառ է և նշանակում է երկաթ: Արդյոք դրանից չի՞ առաջացել իրոնիա (հեգնանք) բառը:

Մի օր Թուլմիեսը մի կողմ տարավ իր երեք ընկերներին, պատգամախոսի մի շարժում գործեց ու ասաց.

— Շուտով մի տարի կլինի, որ Ֆանտինը, Դալիան, Ջեֆինն ու Ֆավորիտը մեզ խնդրում են մի անակնկալ անել իրենց: Մենք հանդիսավոր կերպով խոստացել ենք նրանց: Նրանք շարունակ հիշեցնում են մեզ այդ, մանավանդ ինձ: Ինչպես Նեապոլում պառավ կանայք գոռում են սուրբ Գենարիոսին՝ «Faccia gialluta, ta o miracolo!— դեղնավուն երես, հրա՛շքդ կատարիր», այդպես էլ մեզ գեղեցկուհիներն անվերջ ասում են. «Թուլմիես, ե՞րբ ես դու հղիանալու քո հրաշքով: Միննույն ժամանակ էլ մեր ծնողներն են մեզ կանչում: Երկու սրի մեջ ենք: Ինձ թվում է, որ ժամանակը հասել է: Խոսենք:

Սրա վրա Թուլմիեսը ձայնն իջեցրեց և խորհրդավոր կերպով մի այնպիսի ուրախ բան ասաց, որ չորս բերաններից էլ միաժամանակ մի խանդավառ ու երկար քրքիջ փրթավ և Բլաշվելը բացականչեց. «Օ՛, դա լավ միտք է»:

Ծխով լի մի սրճարան կար այնտեղ, որտեղ և նրանք մտան ու խորհրդակցության մնացած մասը կորսվեց ստվերի մեջ:

⁵⁸ Նեո-հունական ոճով կառուցված գեղեցիկ հուշարձան է Փարիզում: Շինված է Սուրբ-Ժենրվիլի բլրի կատարին որպես եկեղեցի, բայց հեղափոխության ժամանակ հատկացվեց երկրի մեծ մարդկանց դամբարաններին: Ռեստավրացիայի և Երկրորդ կայսրության ժամանակ դարձավ եկեղեցի, բայց Երրորդ հանրապետությունից հետո՝ Վիկտոր Հյուգոյի աճյունն այդտեղ ամփոփելու առթիվ, նորից վերածվեց դամբարանավայրի: Օ. Թ.:

Այս ստվերում կատարված խորհրդակցության արդյունքը եղավ մի շլացուցիչ քեֆ, որ տեղի ունեցավ հաջորդ կիրակի. չորս երիտասարդները հրավիրեցին չորս դեռատի աղջիկներին:

III

ՉՈՐՍ ԱՌ ՉՈՐՍ

Այժմ դժվար է պատկերացնել, թե ինչ բան էր սրանից քառասունհինգ տարի առաջվա ուսանողների ու գրիգետուհիների դաշտային զվարճությունը: Փարիզն այլևս նույն շրջանակները չունի. կես դարի ընթացքում ամբողջովին փոխվել է կերպարանքն այն բանի, որ կարելի է անվանել շուրջփարիզյան կյանք: Այնտեղ, ուր երկանիվ հանրակառքն էր, այժմ վագոններն են, ուր նավակներ էին, այժմ շոգենավեր են: Այժմ այնպես են գնում Ֆեկան⁵⁹, ինչպես այն ժամանակ գնում էին Սեն-Գլու: 1862 թվականի Փարիզը մի քաղաք է, որի համար ողջ Ֆրանսիան արվարձան է:

Չորս գույգերը բարեխղճորեն կատարեցին այն ժամանակվա համար հնարավոր բոլոր դաշտային խելահեղությունները: Արձակուրդները մոտենում էին, այնպես որ այդ օրը ամառային տաք ու անամպ օր էր: Նախօրյակին Ֆավուրիտը, միակ գրել իմացողը, չորսի անունից հետևյալն էր գրել Թոլունիեսին. «Խիստ հաճելի է շուտ դուրս գալ»: Դրա համար էլ ժամը հինգին վեր կացան: Ապա կառքով գնացին Սեն-Գլու⁶⁰, դիտեցին ցամաքած ջրվեժը և բացականչեցին՝ ջուր լինելիս հավանաբար գեղեցիկ է: Նախաճաշեցին Սև Գլույն պանդոկում, ուր Կաստենը դեռ չէր մտել, մեծ ավազանում մի պարտիա հնգանկյուն-օղակախաղ խաղացին: Դիոգենեսյան լապտերով վեր բարձրացան, Սևրի կամուրջի վրա այլ խաղեր խաղացին, Պյուտոյում ծաղկեփնջեր կազմեցին, Նյոյիում եղեգե սրինգներ գնեցին, ամեն տեղ խնձորի միջուկով կարկանդակներ կերան և կատարելապես երջանիկ զգացին:

Դեռատի աղջիկները ճվճվում ու շատախոսում էին վանդակից փախած սոխակի նման: Իսկական ցնորք էր դա: Երբեմն մի թեթև ապտակ էին խփում երիտասարդներին: Կյանքի առավոտյան արբո՛ւմը: Պաշտելի՛ տարիներ: Շերեփագիների⁶¹ թևերը սարսռում են: Օ՛, ով էլ որ լինեք դուք, հիշո՛ւմ եք ձեզ: Քայլե՛լ էք դուք թփերի մեջ, մի կողմ մղելով ճյուղերը այն գեղեցիկ գլխի պատճառով, որ ձեր հետևից է գալիս: Ծիծաղելով սահե՛լ էք դուք անձրևից թրջված զառիվայրից սիրեցյալ կնոջ հետ, որ բռնում է ձեր ձեռքն ու բացականչում. «Օ՛, իմ բոլորովին նոր կոշիկները ի՛նչ վիճակի են հասել»:

Անմիջապես ասենք, որ մի զվարճալի հակառակությունից անձրևի երակից խուսափեց ուրախ խումբը, թեև Ֆավուրիտը մեկնելիս ասել էր տիրական ու մայրական շեշտով. «Խխունջներ են զբոսնում արահետներում: Անձրևի նշան է, զավակներս»:

Չորս աղջիկներն էլ խելահեղորեն սիրուն էին: Մի բարի ծեր դասական բանաստեղծ, որ այդ ժամանակ հռչակ ու մի էլեռնորա ուներ. ասպետ պարոն դը Լաբույսը այդ նույն օրը Սեն-Գլուի շագանակենիների տակ թափառելիս տեսավ նրանց առավոտյան ժամը տասի մոտերը ու

⁵⁹ Լամանշի ափին, Փարիզից 150 կմ հեռու մի փոքր քաղաք է:

⁶⁰ Փարիզից մոտ 8 կմ հեռու մի փոքր քաղաք է Վերսալի շրջակայքում:

⁶¹ Թռչող, քառաթև գեղեցիկ միջատներ են:

բացականչեց՝ մեկն ավելի է, ակնարկելով Երեք Շնորհքներին⁶²: Ֆավորիտը, Բլաշվելի մտերմուհին, այն, որ քսաներեք տարեկան էր, «պառավը», վագում էր կանաչ ճյուղերի տակ, ցատկում էր փոսերի վրայով, խոլաբար կոխոտում էր թփերը և նախագահում էր այդ ուրախության՝ դաշտերի երիտասարդ աստվածուհու⁶³ ավյունով: Ջեֆինն ու Դալիան, որոնց պատահականությունն այնպես գեղեցիկ էր ստեղծել, որ նրանք իրար մոտենալով ավելի էին ցուցադրվում ու լրացնում միմյանց, իրարից չէին բաժանվում ավելի շուտ պչրանքի բնագոյից, քան թե բարեկամությունից մղված և իրար հենվելով՝ անգլիական դիրքեր էին ընդունում: Կիպսեքները⁶⁴ նոր էին սկսել երևալ, մելամաղձոտությունը սավառնում էր կանանց վրա, ինչպես շատ չանցած՝ բայրոնիզմը տղամարդկանց վրա և քնքուշ սեռի մազերն սկսում էին ալեծածան դառնալ: Ջեֆինն ու Դալիան գլանաձև էին սանրել մազերը: Լիստոլիեն ու Ֆամոյը վեճի էին բռնվել իրենց պրոֆեսորների մասին և բացատրում էին Ֆանտինին, թե ինչ տարբերություն կար պարոնայք Դելվենկուրի և Բլոնդոյի միջև: Բլաշվելը կարծես հատկապես ստեղծված էր կիրակի օրը իր թևի վրա կրելու Ֆավորիտի շալը:

Թուլմիեսը հետևից էր գալիս, բայց իշխում էր խմբին: Նա խիստ ուրախ էր, բայց զգացվում էր կառավարող շեշտը, նրա գվարձության մեջ դիկտատուրա կար: Նրա գլխավոր զարդարանքը մի լայն փողքերով շալվար էր, նանկինյան դեղնավուն կտորից՝ հյուսված պղնձալարե փողքաժապավեններով: Ուներ երկու հարյուր ֆրանկանոց ամուր, եղեգե ձեռնափայտ և, որովհետև ամեն բան թույլ էր տալիս իրեն՝ ապա բերանին ուներ մի տարօրինակ բան՝ սիգար: Նրա համար նվիրական ոչ մի բան չկար, նա ծխում էր:

— Այս Թուլմիեսը զարմանալի մարդ է,— ասում էին մյուսները պատկառանքով:— Ինչպիսի՜ շալվար, ինչպիսի՜ եռանդ:

Գալով Ֆանտինին, նա ամբողջությամբ ցնծություն էր: Նրա հիանալի ատամներն ակներևորեն մի պաշտոն էին ստացել աստծուց՝ ծաղել: Նա ավելի հաճությամբ ձեռքն էր պահում, քան թե գլխին էր դնում իր փողքիկ, ծղոտե, սպիտակ ծնոտակալով գլխարկը: Նրա խարտյաշ ու խիտ մազերը, որ հակամետ էին ծփալու և հեշտ արձակվում էին ու պետք էր անընդհատ հավաքել, կարծես ստեղծված էին Գալատեայի համար՝ ուռենիների տակից փախչելիս: Նրա վարդագույն շրթունքները դյուրիշ կերպով անվերջ շաղակրատում էին: Նրա բերանի ծայրերը, որ հեշտասիրաբար դեպի վեր էին բարձրանում Էրիզոնի անտիկ զարդագլուխների բերանների նման՝ հանդգնությունները քաջալերելու տեսք ունեին, սակայն ստվերող երկար թարթիչներն զգուշությամբ իջնում էին դեմքի ներքնամասից ելնող խառնաշփոթ ձայնի վրա՝ կարծես խաղաղեցնելու համար: Նրա ամբողջ արդուզարդը մի ինչ-որ երգող ու բոցանման բան ուներ: Հազել էր բրդե հյուսած շրջագգեստ, ոսկեթուխ գույնի բարձր կրունկով կիսակոշիկներ, որի ժապավեններն X-եր էին գծագրում նրա սպիտակ, նուրբ գուլպաների վրա և մուսլինե սպենսեր⁶⁵՝ մարսելյան մի հորինում, որի անունը՝ կանեզու՝ Կանեֆեր փողոցում արված Քենգ-ու⁶⁶ բառի աղավաղումն է և նշանակում է լավ եղանակ, ջերմություն, կեսօր: Մյուս երեք աղջիկները, ինչպես նկատել ենք արդեն, նվազ համեստ էին, բոլորովին հոլանդի էին, մի բան, որ ամռան, ծաղիկներով ծածկված գլխարկների տակ խիստ շնորհալի գրավիչ է: Բայց այս հանդուգն հարդարման կողքին խարտյաշ Ֆանտինի կանեզուն, իր թափանցիկությամբ, անգաղտնապահությամբ ու լուռ

⁶² Հույս, Հավատք, Մեր: Լատ. Երեք Գրացիաները, որոնց պատկերում են կանանց տեսքով:

⁶³ Ֆաունա: Հին հռոմեացիների դաշտերի աստվածուհին:

⁶⁴ Անգլերեն բառ է՝ keepsake, նկարներով կամ զարդաշրջանակներով լի ալբոմ՝ հատկապես նվեր տալու համար:

⁶⁵ Ժիլետի նման կանացի հագուստ:

⁶⁶ Quinze août — օգոստոսի 15-ը (ֆր.):

արտահայտությամբ, միաժամանակ և թաքցնելով, և ցուցադրելով՝ կարծես պարկեշտության մի գրգռիչ հնարք էր, և սիրո հայտնի ատյանը, որին նախագահում էր ծովային կանաչ աչքերով դերկոմսուհի դը Սենտը, պչրանքի մրցանակը թերևս տար այդ կանեզուին, որ մրցում էր ողջախոհության համար: Երբեմն ամենամիամիտը ամենախելացին է: Այսպես պատահում է:

Դեմքը շողշողուն, կիսադեմը նրբագեղ, աչքերը ծով կապույտ, թարթիչները հաստ, ոտքերը փոքր ու ծառս եղած, դաստակներն ու ոտքի ճաները սքանչելիորեն կաղապարված, մորթն սպիտակ, որ տեղ-տեղ երևացնում էր երակների կապտագույն ճյուղավորումները, այտերը մանկական ու թարմ, վիզը Եգիպյան⁶⁷ Հունոնների⁶⁸ պես պիրկ, ծոծրակն ուժեղ ու ճկուն, ուսերը, որ կարծես Կուստուն⁶⁹ էր ձևավորել, կենտրոնում, մուսլինի տակից երևացող մի գրգռիչ փոսիկ ուներ. անուրջներից սառած ուրախություն. մարմինը քանդակային ու նրբաճաշակ. այսպիսին էր Ֆանտինը: Նրա զգեստների ու ժապավենների տակ պատկերացնում էիր մի արձան և այդ արձանի մեջ՝ հոգի:

Ֆանտինը գեղեցիկ էր՝ առանց լրիվ գիտակցելու այդ: Հազվագյուտ երագողները, գեղեցիկ խորհրդավոր քուրմերը, որ ամեն բան լրիկ բաղդատում են կատարելության հետ, այս փոքրիկ բանվորուհու մեջ՝ փարիզյան շնորհալիության թափանցիկության միջից՝ կնշմարեին անտիկ սրբազան բարեհնչունությունը: Ստվերի մեջ ապրող այս աղջիկն ազնվացեղ էր: Նա գեղեցիկ էր երկու որակով՝ ոճով և ռիթմով: Ոճը իդեալականի ձևն է, ռիթմը նրա շարժումն է:

Մենք ասացինք, որ Ֆանտինն ուրախություն էր, ավելացնենք, որ նա նմանապես և ամոթխածություն էր:

Եթե որևէ դիտող ուշադրությամբ զննեք նրան, կնկատեք, որ նրա այդ արբունքի տարիքի, եղանակի և ժամանակավոր սիրո միջից դուրս էր գալիս զսպվածության ու համեստության մի անպարտելի արտահայտություն: Նա մնացել էր մի քիչ զարմացած: Այս ժուժկալ զարմանքն այն նրբերանգն է, որ Պսիխեին⁷⁰ տարբերում է Վեներայից⁷¹: Ֆանտինն ուներ երկար, սպիտակ ու նուրբ մատները վեստալուհու⁷², որ ոսկե գնդասեղով խառնում է սրբազան մոխիրը: Թեև նա ոչինչ չէր մերժել Թուլմիեսին, դա ինքնին հասկանալի է, բայց նրա դեմքը հանգստի ժամին գերազանցորեն կուսական էր. մի տեսակ լուրջ, գրեթե խիստ արժանապատվություն հանկարծակի համակում էր նրան որոշ ժամերի և ոչ մի բան այնքան եզակի ու անհանգստացնող չէր, ինչքան այն, երբ տեսնում էիր, որ ուրախությունն այնքան արագ մարում է այնտեղ և ինքնամփոփումն առանց անցումի հաջորդում է զվարթությանը: Այս հանկարծակի, երբեմն խստորեն շեշտված ծանրախոհությունը նմանում էր որևէ աստվածուհու արհամարհանքին: Նրա ճակատը, քիթը և կզակը ներկայացնում էին գծերի այն հավասարակշռությունը, որ խիստ զանազանվում է համաչափության

⁶⁷ Աթենքից քիչ հեռու մի կղզի է, համարվում էր Աթենքի ախտյան: Նախ այդտեղ զարգացավ քանդակագործությունը:

⁶⁸ Ջեսի կինը, Մատուրնոսի աղջիկը — ամուսնության աստվածուհին: Բանաստեղծները նրան պատկերում են ամբարտավան, նախանձ ու վրեժխնդիր:

⁶⁹ Ֆրանսիացի քանդակագործներ՝ Նիկոլա Կուստու (1658 — 1733): Գիյոմ հայրը (1677 — 1746) և Գիյոմ որդին (1716 — 1777): Հայտնի չէ, թե սրանցից որին է ակնարկում Հյուգոն:

⁷⁰ Խիստ գեղեցիկ աղջիկ, որին սիրում էր Ամուրը (հին հուն. դիցաբանություն):

⁷¹ Գեղեցկության աստվածուհին. ծնվեց ծովի փրփուրից, որի համար էլ հաճախ արձանագործները քանդակում են նրան կոհակներից դուրս գալիս (հին հուն. դիցաբանություն):

⁷² Քրմուհիներ, որոնց մեծ քրմապետն էր ընտրում Հռոմի տոհմիկ ընտանիքներից, որպեսզի գիշեր-ցերեկ վառ պահեն Վեստայի տաճարի սրբազան կրակը: Նրանք պարտավոր էին իրենց պաշտոնի ամբողջ տևողության ընթացքում ողջախոհ լինել, հակառակ դեպքում, կամ էլ կրակը հանգցնելիս՝ ողջ-ողջ թաղում էին: Դրա փոխարեն մեծ հարգանք էին վայելում՝ և իրավունք ունեին դատապարտվածին ազատել՝ եթե հանդիպեին: Շ.

հավասարակշռությունից և որից էլ առաջանում է դեմքի ներդաշնակությունը: Այնքան բնորոշ այն տարածությունը, որ բաժանում է քթի հիմքը վերին շրթունքից՝ Ֆանտինի մոտ ուներ այն անշոշափելի ու չքնաղ ծավալը՝ ողջախոհության խորհրդավոր նշանը, որ Բարբարոսային սիրահարեցնում է Կոնիայի պեղումներից գտնված մի Դիանայի:

Մերը հանցանք է՝ ասում են, թող այդպես լինի: Ֆանտինը հանցանքի երեսին լողացող անմեղությունն էր:

IV

ԹՈՒՆՍԻԵՄՆ ԱՅՆՔԱՆ ՈՒՐԱՆ Է, ՈՐ ՄԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԵՐԳ Է ԵՐԳՈՒՄ

Այդ օրն սկզբից մինչև վերջ արշալույս էր: Ողջ բնությունը կարծես արձակուրդ էր ստացել ու ծիծաղում էր: Սեն-Կլուի ծաղկանոցները բուրում էին, Սենայի շունչը մեղմորեն օրորում էր տերևները, ծառերի ճյուղերը երերում էին քամուց, մեղունները կողոպտում էին հասմիկներին, թիթեռների մի ամբողջ քոչ խուժում էր հազարան-թերթիկների, երեքնուկների և կորնգանի վրա: Ֆրանսիայի թագավորի փառահեղ զբոսայգում թափառաշրջիկների մի խոշոր խումբ կար՝ թռչունները:

Չորս ուրախ գույգերը՝ խառնված արևին, դաշտերին, ծաղիկներին ու ծառերին, շողշողում էին:

Եվ այս դրախտանման համայնքում խոսելով, երգելով, վազելով, պարելով, թիթեռներ որսալով, պատուտակներ քաղելով, թրջելով իրենց թափանցիկ վարդագույն գուլպաները բարձրահասակ խոտերի մեջ՝ այդ թարմ, խոլ ու բնավ ոչ կամակոր աղջիկները ամեն կողմից մի գլուխ համբույրներ էին ստանում, բացի Ֆանտինից, որ ամփոփված էր իր երագուն ու կատաղի, բայց և անորոշ դիմադրության մեջ և սիրում էր: «Դու,— ասում էր նրան Ֆավուրիտը,— դու միշտ էլ մտախոհ տեսք ունես»:

Ահա սա է ուրախությունը: Երջանիկ գույգերի այս կարճատև բուրբները կյանքին ու բնությանն ուղղված մի խոր կոչ են և ամեն բանից փաղաքշանք ու լույս են դուրս բերում: Ժամանակով մի բարի կախարդ կար, որ հատկապես սիրահարների համար մարգագետիններ ու ծառեր ստեղծեց: Դրանից էլ առաջացել է սիրահարների այս հավիտենական թփուտների դպրոցը, որ շարունակ վերսկսվում է ու կտևի այնքան, ինչքան թփերն ու դպրոցականները: Դրանից էլ մտածողների մոտ մնացել է ժողովրդականությունը: Պատրիկն ու շրջիկ-սրիչը, դուքսը, պերը և դատավորը, պալատականներն ու քաղաքացիները, ինչպես առաջներում էին ասում, բոլորն էլ ենթակա են այս կախարդին: Ծիծաղում են և իրար փնտրում. օդում ապոթեոզի լույս կա, ինչպիսի՝ այլակերպություն է սիրելը: Նստարանների գրագիրներն աստվածներ են դառնում: Փոքր ճիչերը, խոտերի մեջ իրար հետապնդելը, վազքի ժամանակ մեջքը բռնելը, մեղեդու նմանող բարբառային արտահայտությունները, միմյանց տածած պաշտամունքը, որ դրսևորվում է որևէ վանկ արտասանելու ձևի մեջ, իրար բերանից խլված կեռասները — այս բոլորը բոցավառվում է ու անցնում երկնային փառքերի մեջ: Դեռատի աղջիկները կրկնակի են վատնում իրենք իրենց: Կարծում են, որ դա վերջ չի ունենա: Փիլիսոփաները, բանաստեղծներն ու նկարիչները դիտում են այդ էքստազները և չգիտեն ինչ անեն — այնքան շլացուցիչ է դա: Ուղևորություն դեպի Ցիթերա⁷³,

⁷³ 18-րդ դ. ֆրանսիացի նկարիչ ու գրաֆիկ Վատոյի (1684—1721) գլուխգործոցն է: Այս նկարում, արիստոկրատիայի պատվերները կատարող Վատոն պատկերում է մի խումբ ազնվական կանայք ու տղամարդիկ, որոնք պատրաստվում էին Ցիթերա կղզին ուղևորվել՝ սիրային զբոսանքի ու վայելքի համար:

բացականչում է Վատոն. Լանկրեն⁷⁴, անտոհմիկների նկարիչը՝ նայում է կապույտում թռչող իր քաղթենիներին. Դիդրոն պարզում է իր ձեռքերը այդ բոլոր վաղանցուկ սերերին, իսկ դ՛Ուրֆեն⁷⁵ դրուիդներ⁷⁶ է խառնում դրանց:

Նախաճաշից հետո չորս գույգերը գնացին այսպես կոչված թագավորի անձնական մասը, տեսնելու նորերս Հնդկաստանից ստացված մի բույս, որի անունն այս րոպեին չենք կարող վերհիշել և որն այդ ժամանակները ողջ Փարիզը ձգում էր դեպի Սեն-Կլու: Դա մի տարօրինակ, բարձր բնով գեղեցիկ թուփ էր, որի անթիվ թելանման, անտերև, նուրբ ու խճճված ճյուղերը ծածկված էին մոտ մեկ միլիոն փոքրիկ, սպիտակ վարդերով, մի բան, որ այդ թփին տալիս էր ծաղիկներով պատած մագերի տեսք: Միշտ էլ հիացողների բազմություն էր լինում նրա շուրջը:

Այդ ծառը տեսնելուց հետո Թոլումիեսը բացականչեց: «Էշով հյուրասիրում եմ» և մի իշապանի հետ գնի շուրջ համաձայնելուց հետո վերադարձան՝ Վանվի ու Բսիի վրայով: Իսիում մի անակնկալ պատահեց: Ազգային Կալվածք կոչվող զբոսայգին, որ այդ ժամանակ պատկանում էր բանակի մատակարար Բուրգենին՝ պատահմամբ բաց էր: Նրանք անցան վանդակադուռը, այցելեցին քարանձավի խրտվիլակ-ճգնավորին, փորձեցին հայելիների անվանի սենյակի խորհրդավոր ֆոկուսները՝ ցանկասեր ծուղակ միլիոնատեր դարձած որևէ սատիրի կամ Պրիապոսի⁷⁷ վերափոխված Տյուրկարեի⁷⁸: Ապա մի լավ ճոճվեցին մեծ ցանցում, որ ամրացված էր աբբա Բեռնիի նշանավորած երկու շագանակենիներին: Երբ այս գեղեցկուհիներն իրար ետևից ճոճվում էին այդտեղ, որից ընդհանուր ծիծաղի շրջապատում շրջագցեստների ծալքերը վեր էին թռչում և որտեղ Գրյոզը⁷⁹ կարող էր իրեն թեմա գտնել, տուլուզցի Թոլումիեսը, որ մի քիչ իսպանացի էր (Տուլուզը Տոլոսայի⁸⁰ մոտաքրոջ աղջիկն է), մելամաղձոտ եղանակով երգում էր հին gallega երգը, որ ներշնչել էր հավանաբար որևէ գեղեցիկ աղջիկ՝ ամենաարագ թռիչքով զույգ ծառերի միջև, պարանի վրա ճոճվելիս.

Soy de Badajoz.

Amor me llama,

Toda mi alma

Es en mis ojos,

Porque enseñas

⁷⁴ Վատոյի լավագույն մրցակիցն է նույն դարի ֆրանսիացի նկարիչ Նիկոլա Լանկրեն (1690—1743):

⁷⁵ Ազնվականության վիպասան, հեղինակ «Աստրա» աշխատության (1568—1626):

⁷⁶ Նախառոմեական Գալլիայի կելտական քրմեր, որոնք տաճարներ չունեին և հավաքվում էին մութ անտառներում:

⁷⁷ Այգիների ու որթատունկերի աստվածը (հին հուն. դիցաբանություն):

⁷⁸ Ֆրանսիացի վիպասան Լսամի (1668—1747) համանուն կատակերգության հերոսն է: Տյուրկարեն անագնիվ ու անընդունակ սպասավոր է և վաշխի ու զանազան խարդախությունների միջոցով մտնում է հարուստների շրջանակ: Գրականության մեջ այս անունը նշանակում է նորելուկ փողասեր, ֆինանսական կապիտալիստ:

⁷⁹ Ֆրանսիացի նկարիչ (1725—1805), որ առանձնակի տեղ է գրավում 18-րդ դ. արիստոկրատական նկարիչների շրջանում իր դեմոկրատիկ կոմպոզիցիաներով: Դիդրոն իր ժամանակակից նկարիչներից ամենից ավելի բարձր էր դասում Գրյոզին:

⁸⁰ Քաղաք է Իսպանիայում, Բասկերի երկրում, իսկ Տուլուզը գտնվում է հարավային Ֆրանսիայում՝ Պիրենեյան լեռների մոտ: Հյուզոն բացի աշխարհագրական մոտիկությունից՝ ակնարկում է նաև անունների նմանությունը:

Միայն Ֆանտինը հրաժարվեց ճոճվել:

— Չեմ սիրում, երբ այսպես ձևեր են թափում,— մոթմոթաց բավական թթու կերպով Ֆավուրիտը:

Էշերը վերադարձնելուց հետո մի նոր զվարճություն սկսվեց.— նավով անցան Սենան և Պասիից ոտքով հասան Էտուալի ցանկապատին: Նրանք, ինչպես գիտենք, առավոտյան ժամը հինգից ոտքի վրա էին. բայց ի՛նչ: «Կիրակիները հոգնություն չկա,— ասում էր Ֆավուրիտը,— կիրակի օրը հոգնությունը չի աշխատում»: Ժամը երեքի մոտ չորս զույգերը երջանկությունից շշմած գլորվում էին ռուսական լեռներում⁸², միակ հուշարձանը, որ այդ ժամանակ գրավում էր Բոժոնի բարձունքները և որի օձապտույտ գիծը նշմարվում էր Շանգ Էլիզեի ծառերի վերև:

Մերթ-մերթ Ֆավուրիտը բացականչում էր.

— Իսկ անակնկալը, ես պահանջում եմ անակնկալը:

— Համբերություն,— պատասխանում էր Թոլումիսը:

V

ԲՈՍԲԱՐՊԱՅԻ ՄՈՏ

Ռուսական լեռներում զվարճանալուց հետո մտածեցին ճաշել, և խնդուն ութնյակը վերջապես մի քիչ հոգնելով ապաստանեց Բոմբարդայի մոտ, բաժանմունք, որ հայտնի ճաշարանապետ Բոմբարդան բաց էր արել Շանգ Էլիզեում և որի ցուցատախտակը երևում էր այդ ժամանակ Ռիվոլի փողոցում, Դըլորմ պասաժի մոտ:

Մի մեծ, բայց տգեղ սենյակ, խորքում էլ անկողնախորշ ու անկողին (նկատի առնելով ճաշարան-գինետների կիրակի օրերը լիքը լինելը, ստիպված էին ընդունել այս որջը). երկու լուսամուտ, որտեղից կարելի էր ծփիների արանքից դիտել քարափն ու գետը: Օգոստոսյան սքանչելի արևը թեթևակի կպել էր լուսամուտներին: Երկու սեղան, մեկի վրա տղամարդկանց ու կանանց գլխարկներին խառնված ծաղկեփնջերի մի հաղթական լեռ, մյուս սեղանի շուրջ շարվել էին չորս զույգերը և շրջապատել էին պնակների, ափսեների, բաժակների ու շշերի մի շողշողուն դեզ. գարեջրի փարչերը՝ խառնված գինու շշերին. սեղանի վրա քիչ կարգ կար, իսկ տակը՝ մի փոքր անկարգություն:

Սեղանի տակ, մարդու նման ոտքերը զարհուրելի աղմուկ էին հանում — ասում է Մոլիերը: Ահա թե ուր էր հասել առավոտյան ժամը հինգին սկսած հովվերգությունը երեկոյան չորս անց կեսին: Արևն իջնում էր, իսկ ախորժակը՝ կտրվում:

⁸¹ Բառացի թարգմանություն. «Ծնվել եմ Բադախոսում: Մերն ինձ կանչում է: Ողջ սիրտս աչքերիս մեջ է, որովհետև գեղեցիկ սրունքներդ ցույց ես տալիս ինձ»:

⁸² Ելնեջներով բարձունքներ, արհեստական կառուցվածքներ են, որոնց վրա նավակն ու ճամփորդները սուրում են: Նաև անվանում են ամերիկյան լեռներ:

Արևոժ ու ամբոխով լի Շանգ'ելիզեն ոչ այլ ինչ է, եթե ոչ լույս ու փոշի, երկու բան, որից կազմված է փառքը: Մառլիի ձիերը, այդ վրնջացող մարմարները⁸³ ծառս էին եկել ոսկեգույն ամպի մեջ: Շքեղ կառքերը բարձրանում ու իջնում էին: Արքունի թիկնապահների մի հիանալի հեծելավաշտ՝ շեփորներն առջևից՝ իջնում էր Նյոյիի պողոտայից:

Սպիտակ դրոշը, որ վերջալույսից մի քիչ կարմրին էր տալիս՝ ծածանվում էր Տյուիլլրիի գմբեթի վրա: Համաձայնության հրապարակը, որ այդ ժամանակ նորից դարձել էր Լյուդովիկոս 15-րդի հրապարակ՝ լեփ-լեցուն էր գոհ զբոսնողներով: Դրանցից շատերը սպիտակ վետիկետով ժապավենից կախված արծաթե շուշանածաղիկ էին կրում, մի բան, որ 1817 թվականին բոլորովին չէր անհետացել լափալիի օղակից: Տեղ-տեղ շրջանակ կազմած ու ծափահարող անցորդների միջև շուրջպար կազմող փոքրիկ աղջիկներ մի բուրբոնյան երգ էին երգում, որն այդ ժամանակ հայտնի էր և նպաստակ ուներ Հարյուր օրը ջախջախել և որի կրկներգը հետևյալն էր.

Վերադարձրեք մեզ մեր հայր Գանը,

Վերադարձրեք մեզ մեր հայրը:

Կիրակնօրյա շորեր հագած բազմաթիվ արվարձանցիներ, երբեմն նույնիսկ բուրժուանների պես շուշանածաղիկով պճնված, ցրված մեծ հրապարակում, հատկապես Մարինյի հրապարակում, օղակախաղ էին խաղում և պտտվում էին փայտե ձիերի վրա: Ումանք խմում էին, տպարանի աշակերտները թղթե գնդակներ էին դրել. լսվում էր դրանց ծիծաղը: Ամեն ինչ ժպտերես էր: Դա անվիճելի խաղաղության և արքայական խոր ապահովության շրջանն էր: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ոստիկանության պետ Անգլեսի՝ թագավորին ուղղած մտերմական ու հատուկ զեկուցագիրը Փարիզի արվարձանների մասին վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Ամեն ինչ լավ գննված է, տեք, այդ մարդկանցից վախենալու ոչ մի բան չկա: Նրանք կատունների պես անհոգ ու անփութ են: Գավառների հասարակ ժողովուրդը անհանգիստ է, իսկ Փարիզիներ՝ ոչ: Դրանք բոլորն էլ մանր մարդիկ են: Նրանցից, ով արքա, երկու հոգի իրար վրա պետք է դնել, որպեսզի ձեր գրենադեներին մեկն ստացվի: Ոչ մի վախ չկա մայրաքաղաքի բնակչության ստորին խավից: Նշանակալից է, որ այդ բնակչության հասակը հիսուն տարվա ընթացքում կարճացել է և Փարիզի արվարձանների ժողովրդի հասակն ավելի կարճ է, քան հեղափոխությունից առաջ: Նա բնավ էլ վտանգավոր չէ: Մի խոսքով դրանք լավ գոեհիկներ են»:

Որ կատուն կարող է դառնալ առյուծ, ոստիկանության պետերը հնարավոր չեն համարում, բայց դա այդպես է և հենց դա է Փարիզի բնակչության հրաշքը: Իսկ կոմս Անգլեսի այնքան արհամարհած այդ կատուն հարգում էր անտիկ հանրապետությունները, հանձինս որոնց նա մարմնավորում էր ազատությունը և կարծես Պիրեայի անթև Աթենասի⁸⁴ հետ զույգ կազմելու համար Կորնթոսի հրապարակում մի վիթխարի բրոնզե կատու կար: Ռեստավրացիայի միամիտ ոստիկանությունը շատ «բարյացակամ» էր համարում Փարիզի ժողովրդին: Դա, ինչքան էլ որ կարծես, բնավ էլ «լավ գոեհիկներ» չեն: Փարիզցին ֆրանսիացու համար նույնն է, ինչ աթենացին հույնի համար. ոչ ոք նրանից լավ չի քնում, ոչ ոք այնքան համարձակորեն ունայն ու ծույլ չէ, ինչքան նա, բայց և այնպես թող չվստահեն դրան, նա ընդունակ է ամեն տեսակ անփութության, իսկ եթե գործի վերջում փառք կա՝ նա սքանչելի է ամեն տեսակ մոլեգնություններ անելու մեջ: Մի նիզակ տվեք նրան և նա

⁸³ Արձանախումբ, գործ ֆրանսիացի քանդակագործ Գ. Կուստուի (1677 — 1746):

⁸⁴ Կամ Միներվա, նույնը և Պալլաս, Ջեսի դուստրը, իմաստության և արվեստների աստվածուհին (հին հուն, դիցաբ.): Պիրեան քաղաք է Աթենքի մոտ:

օգոստոսի 10-ը⁸⁵ կսարքի, տվեք նրան մի հրացան՝ և դուք հանդիսատես կլինեք Աուստերլիցի⁸⁶: Նա Նապոլեոնի հենակետն է և Դանտոնի աղբյուրը: Հենց որ հարցը հայրենիքին է վերաբերում, նա զինվորագրվում է, իսկ երբ ազատությանը՝ նա փողոցի սալահատակն է քանդում: Զգո՛ւյշ, զայրույթով լցված նրա մազերն էպիկական են, նրա բլուզը վերածվում է քղամիդեի⁸⁷: Զգուշացեք: Հենց առաջին պատահած Գրենետա փողոցը նա Կառլոլիումյան կամար⁸⁸ կդարձնի: Եթե ժամը հնչի, այդ արվարձանցին կմեծանա, այդ փոքրիկ մարդը ոտքի կկանգնի և զարհուրելի ձևով կնայի. նրա շունչը կդառնա հողմ և այդ խղճուկ ու նրբակերտ կրծքից բավականաչափ քամի դուրս կգա Ալպերի ծալքերը խանգարելու համար: Փարիզի արվարձանցու շնորհիվ է, որ հեղափոխությունը խառնվելով բանակներին՝ նվաճում է Եվրոպան: Նա երգում է, դա է նրա ուրախությունը: Համաչափեք նրա երգն ըստ խառնվածքի և դուք կտեսնեք, թե նա ինչի է ընդունակ: Ինչքան ժամանակ որ նրա կրկներգը Կարմանյուն⁸⁹ է, նա միայն Լյուդովիկոս 16-րդին կտապալի, Բայց նրան Մարսելյեզ⁹⁰ երգել տվեք՝ նա կազատագրի ողջ աշխարհը:

Այս ծանոթագրությունը Անգլիայի զեկուցագրի լուսանցքի վրա գրելուց հետո՝ վերադառնանք մեր չորս զույգերին: Ճաշը, ինչպես արդեն ասացինք, վերջանում էր:

VI

ԱՅՍ ԳԼԽՈՒՄ ԻՐԱՐ ՊԱՇՏՈՒՄ ԵՆ

Սեղանի խոսքեր ու սիրո՛ խոսքեր. առաջիններն էլ վերջինների նման անորսալի են. սիրո խոսքերն ամպ են, սեղանի խոսքերը՝ գոլորշի:

Ֆամոյն ու Դալիան գեղգեղում էին, Թոլմիեսը խմում էր, Ջեֆինը՝ ծիծաղում, Ֆանտինը՝ ժպտում: Լիստոլիեն Սեն-Կլոտում գնած փայտե շվին էր փչում: Ֆավուրիտը քնքշորեն նայում էր Բլաշվելին ու ասում.

— Բլաշվել, պաշտում եմ քեզ:

Այս խոսքը տեղի տվեց Բլաշվելի հետևյալ հարցին.

— Ի՞նչ կանեիր, Ֆավուրիտ, եթե դադարեի քեզ սիրել:

⁸⁵ 1789 թ. սկսված ֆրանսիական բուրժուական Մեծ հեղափոխության ժամանակ՝ 1792 թ. օգոստոսի 10-ին տեղի ունեցավ փարիզյան ապստամբություն, որի վերջնական հետևանքը եղավ Լյուդովիկոս 16-րդի բանտարկությունն ու միապետության տապալումը:

⁸⁶ Քաղաք է Ավստրիայում, որտեղ Նապոլեոն 1-ինը 1805 թ. դեկտեմբերի 2-ին տարավ իր ամենամեծ հաղթանակներից մեկը ավստրիական և ռուսական միացյալ բանակների վրա: Դրա համար էլ կոչվում է Երեք կայսրերի ճակատամարտը:

⁸⁷ Հին Հունաստանի զինվորների վերնազգեստ:

⁸⁸ Կառլոլիում կամ Սամնիում քաղաքի (Իտալիա) մոտ հռոմեական բանակը սեղմվելով սամնիացի զորավար Պոնտիոս Հերեննիուսի կողմից կիրճի մեջ՝ ստիպվեց լծի տակից անցնել (321 թ. ն. ք.): Գրականության մեջ Կառլոլիումյան կամար արտահայտությունը նշանակում է խիստ նվաստացուցիչ պայմաններ թելադրել պարտվածներին:

⁸⁹ 1789 թ. հեղափոխության առաջին շրջանում խիստ ժողովրդական երգ էր:

⁹⁰ Ֆրանսիական հայրենասիրական երգ, որ դարձավ ազգային հիմն: Հեղինակել է 1792 թ. Ռուժե դը-Լիլ սպան՝ Հռենոսյան բանակի համար: Բայց, որովհետև մարսելյի կամավորներն առաջին անգամ այն ծանոթացրին Փարիզին, դրա համար էլ կոչվեց Մարսելյեզ (Մարսելական):

— Ե՞ս,— բացականչեց Ֆավուրիտը:— Օ՛, մի ասա այդ խոսքը, թեկուզ ծիծաղելու համար: Եթե դադարեիր ինձ սիրել, կցատկերի վրադ, կճանկերի, ջուր կածեի վրադ և ձերբակալել կտայի:

Բլաշվելը ժպտաց ինքնասիրությունը խոցված մարդու հեշտասեր ու հիմար բավականությամբ: Ֆավուրիտը շարունակեց.

— Այո, ոստիկան կկանչեի: Ինչպե՛ս, կարծում ես թե պիտի լռե՞մ, գռեհիկ:

Բլաշվելը ընկնելով հափշտակության մեջ, գլորվեց իր աթոռի վրա և սնափառորեն աչքերը փակեց:

Դալիան, ուտելով հանդերձ, կամացուկ ասաց Ֆավուրիտին այդ խառնաշփոթ ձայների մեջ.

— Ուրեմն դու շա՞տ ես պաշտում նրան, քո Բլաշվելին:

— Ատում եմ նրան,— պատասխանեց Ֆավուրիտը միևնույն շեշտով ու նորից վերցրեց պատառաքաղը:— Միտում եմ մեր դիմացի ապրող փոքրիկին: Շատ լավն է այդ երիտասարդը, ճանաչո՞ւմ ես նրան: Երևում է, որ դերասան է: Միտում եմ դերասաններին: Հենց որ վերադառնում է տուն, մայրն ասում է. «Աստված իմ, հանգիստս կորավ»,— և սկսում է գոգոռալ,— բարեկամ, գլուխս տրաքում է»: Որովհետև բարձրանում է վերնահարկը, ուր մկներն են վիստում, մտնում մույթ ծակերը, բարձրանում համարյա տանիք և երգում, արտասանում, էլ ինչ իմանամ ինչ է անում, այնքան բարձր, որ ներքևից էլ եմ լսում իր ձայնը: Նա արդեն օրը մեկ ֆրանկ է վաստակում մի երդվյալ հավատարմատարի մոտդատաստանագրեր գրելու համար: Մեն-Ժակ-դյու-Հո-Պայի նախկին տիրացուի որդին է: Օ՛, շատ լավն է: Նա ինձ այնքան է պաշտում, որ երբ մի օր տեսավ, թե ինչպես խմոր էի հունցում կարկանդակի համար, ասաց. «Օրիորդ, ձեր ձեռնոցներից կարկանդակ պատրաստեք, և ես կուտեմ այն»:

— Միայն արտիստները կարող են այսպիսի բաներ ասել: Օ՛, նա շատ լավն է: Ես սկսում եմ արդեն խելքս կորցնել այդ փոքրիկի համար: Բայց միևնույն է, Բլաշվելին կասեմ, որ պաշտում եմ իրեն: Ինչպե՛ս եմ ստում, հը՞, ինչպես եմ ստում:

Ֆավուրիտը մի փոքր դադարեց, ապա շարունակեց.

— Դալիա, տեսնում ես, տխուր եմ: Ողջ ամառ անձրև է եկել, քամին ինձ զայրացնում է, չի դադարում, Բլաշվելը շատ ժլատ է, շուկայում հազիվ լոբի է ճարվում, չգիտես ինչ ուտես, ես, ինչպես անգլիացիք են ասում, սպլին⁹¹ ունեմ, իսկ կարագն այնքան թանկ է, և բացի այդ, մի տես, սարսափելի է, ճաշում ենք այնպիսի տեղ, ուր անկողին կա, դա ինձ զզվեցնում է կյանքից:

VII

ԹՈՒՆՍԻԵՍԻ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանիսը երգում էին, մյուսները խառնիխտոն խոսում. իսկ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ժխոր: Թոլումիեսը միջամտեց.

— Գլխին փչածը դուրս չտանք և ոչ էլ այսպես արագ խոսենք,— բացականչեց նա:— Եթե ուզում եք շլացուցիչ լինել՝ պետք է խորհենք: Հանպատրաստից հորինումները շուտ են դատարկում ուղեղը: Հոսող զարեջուրը փրփուր չի հավաքում: Կարիք չկա շտապել, պարոններ: Վեհություն հաղորդենք

⁹¹ Spleen — ձանձրախտ (անգլ.):

մեր կերուխումին, ինքնամփոփ կերպով ուտենք, դանդաղորեն մեր խնջույքն անենք, բայց չճնշվենք: Նայեք գարնան, շտապո՞ւմ է նա, նա բոցավառված է, այսինքն սառած: Ծայրահեղ եռանդը սպանում է լավ ճաշերի շնորհքն ու ուրախությունը: Կարիք չկա մեծ եռանդի, պարոններ: Գրիմոն դը լա Ռեյնիերը Թալեյրանի⁹² կարծիքին է:

Մի խուլ ըմբոստություն ծայր տվեց խմբի մեջ:

— Թոլմիես, մեզ հանգիստ թող,— ասաց Բլաշվելը:

— Կորչի՛ բռնակալը,— ասաց Ֆամոյը:

— Բոմբարդա, Բոմբանս ու Բամբոշ,— գոչեց Լիստոլիեն:

— Կիրակին գոյություն ունի,— շարունակեց Ֆամոյը:

— Մենք սակավապետ ենք,— ավելացրեց Լիստոլիեն:

— Թոլմիե՛ս,— ասաց Բլաշվելը,— զննիր իմ հանդարտությունը⁹³:

— Դու Մոնկալմի⁹⁴ մարքիզն ես,— պատասխանեց Թոլմիեսը:

Այս անհամ բառախաղը ջրակույտի մեջ գցված քարի ազդեցություն գործեց և բոլոր գորտերը լռեցին: Մարքիզ դը Մոնկալմը այդ ժամանակվա նշանավոր ռոյալիստներից մեկն էր:

— Բարեկամներ,— գոչեց Թոլմիեսը նորից իշխանությունը ձեռք գցած մարդու շեշտով,— կարգի եկեք: Չպետք է այսքան ապշություն առաջացնի երկնքից ընկած այս բառախաղը: Այս ձևով ընկած յուրաքանչյուր խոսք անհրաժեշտ չէ, որ խանդավառության ու հարգանքի արժանանա: Բառախաղը մտքի ծերտն է ու թռչում, անհետանում է: Զվարճախոսությունն ուր ասես ընկնում է, իսկ միտքը՝ որևէ հիմարություն դուրս տալուց հետո սլանում է դեպի լազուրը: Ժայռի վրա ճապղած սպիտակավուն բիծը վարագահավին չի խանգարում սավառնել: Հեռու ինձնից բառախաղը պարսավելը, ես այն հարգում եմ իր արժանիքի սահմաններում. ուրիշ ոչինչ: Մարդկության և գուցե մարդկությունից դուրս ամենավսեմը, ամենավեհն ու ամենագեղեցիկը նույնպես բառախաղեր է արել: Հիսուս-Քրիստոսը մի բառախաղ է ասել Պետրոս Առաքյալի մասին, Մովսեսը՝ Իսահակի, Էսքիլեսը՝ Պոլինիկեի, Կլեոպատրան՝ Օկտավիանոսի մասին և նկատի առեք, որ Կլեոպատրայի այս բառախաղը նախորդել է Ակտիումի ճակատամարտին և առանց դրա ոչ ոք չպիտի հիշեր Տորին քաղաքի մասին, որ հունական անուն է ու նշանակում է շերեփ: Այսքանը շնորհելուց հետո վերադառնում եմ իմ հորդորին: Եղբայրներ, կրկնում եմ, ոչ մեծ եռանդ, ոչ ժխտը և ոչ էլ ծայրահեղություն, նույնիսկ սրախոսությունների, ցնծությունների կամ բառախաղերի մեջ: Լսեք ինձ, ես ունեմ Ամֆիարաուսի խոհեմությունը և Կեսարի ճաղատությունը: Ամեն բան պետք է սահման ունենա: Նույնիսկ ռեբուսը. *Est modus in rebus*⁹⁵: Ճաշն էլ պետք է սահման ունենա: Դուք, տիկիներ, խնձորի կարկանդակներ եք սիրում, լավ, բայց չափը մի անցկացրեք: Նույնիսկ կարկանդակ ուտելու մեջ պետք է առողջ միտք ու արվեստ հայտնաբերել: Որկրամոլությունը պատժում է որկրամոլին՝ *gula punit gulax*. Աստված հանձնարարել է անմարտությունը՝

⁹² Թալեյրան՝ իշխան դը Բենեվան, ֆրանսիացի հայտնի դիպլոմատ: Հին ռեժիմի օրոք Օսյունի եպիսկոպոս, հեղափոխության ժամանակ Ազգ. ժողովի նախագահ (1790), Դիրեկտորիայի օրոք արտաքին հարաբերությունների մինիստր, ինչպես նաև Նապոլեոնի օրոք, որի անկումից հետո հարեց Բուրբոններին և մեծ դեր խաղաց Վիեննայի վեհաժողովում՝ չանտեսելով սակայն իր անձնական շահերը:

⁹³ Մոնկալմ անունը կիսելիս կատացվի *Mon calme* և կնշանակի՝ իմ հանդարտությունը:

⁹⁴ Ամեն բանի սահման կա (լատ.):

⁹⁵ Վերջ, վախճան (լատ.):

բարոյականություն սովորեցնել ստամոքսներին: Եվ մտքներումդ լավ պահեք այս խոսքը. մեր կրքերից յուրաքանչյուրն ստամոքս ունի, որը չպետք է շատ լցնել: Յուրաքանչյուր դեպքում, իր ժամանակին պետք է գրել *finis* բառը, պետք է գուսպ լինել և երբ ստիպողական է դառնում՝ սողնակ քաշել ախորժակի վրա, երևակայությունը դնել բանտ և անձամբ գնալ ու հանձնվել պահականոցին: Իմաստունն այն է, ով գիտե ճիշտ ժամանակին ինքն իրեն ձերբակալել: Որոշ վստահություն տաձեք դեպի ինձ և, որովհետև ես մի քիչ իրավաբանություն սովորել եմ, ինչպես վկայում են իմ քննությունները, որովհետև գիտեմ, թե ինչ տարբերություն կա որևէ ընթացք ստացած հարցի և առկա հարցի միջև, որովհետև ես մի լատիներեն թեզ եմ պաշտպանել այն մասին, թե ինչպես էին տանջում մարդկանց Հռոմում, այն ժամանակները, երբ Մունատիուս Դեմենստը ծնողասպանության գործերի քվեստոր էր, և որովհետև, ինչպես երևում է, շուտով իրավաբանության դոկտոր եմ լինելու, ապա այս բոլորից անհրաժեշտաբար չի հետևում, որ ես հիմար լինեմ: Ես ձեզ չափավորություն եմ հանձնարարում ձեր ցանկությունների մեջ: Եթե ճիշտ է, որ ես կոչվում եմ Ֆելիքս Թուլմիես, ապա ճիշտ է, որ լավ եմ խոսում: Երջանիկ է նա, ով, երբ ժամը հնչի, հերոսական վճիռ է կայացնում ու հրաժարվում Մուլլայի⁹⁶ կամ Օրոգինեսի⁹⁷ նման:

Ֆավորիտը լսում էր խոր ուշադրությամբ:

— Ֆելիքս,— ասաց նա,— ինչ գեղեցիկ բառ, սիրում եմ այդ անունը: Լատիներեն է դա և նշանակում է Պրոսպեր⁹⁸:

Թուլմիեսը շարունակեց.

— *Quirites, gentlemens, caballeros*⁹⁹, բարեկամներս: Ուզո՞ւմ եք ոչ մի խայթոց չգալ, զանց առնել անկողնային կյանքը և հաղթահարել սերը: Դրանից հեշտ բան չկա: Ահա դեղատոմսը. խմեք լիմոնադ, չափից դուրս աշխատեք, տաժանակրի պես, մեջք ցավացրեք, խոշոր քարեր կրեք, մի քնեք, արթուն կացեք, հղփացեք ազոտային խմիչքներով ու նիմֆեայի բուսաջրով, ճաշակեք խաշխաշի ու ագնուս-կաստուսի օշարակ, համեմեք դա խիստ սննդակարգով, քաղցից տրաքեք, ապա ավելացրեք դրան սառն լոգանքներ, խոտե գոտի, կապարե սկավառակ գործածեք, Սատուրնի հեղուկից լուծույթներ և քացախաջրե սպեղանիներ քսեք:

— Ես գերադասում եմ կինը,— ասաց Լիստոլիեն:

— Կի՛նը,— առարկեց Թուլմիեսը,— մի հավատացեք նրան: Վայ նրան, ով անձնատուր է լինում հարափոփոխ սրտին: Կինը նենգ է ու ոլոր-մոլոր: Նա աստում է օձին, որովհետև իր արհեստի ախտյանն է նա: Օձը՝ դա դիմացի մրցող խանութն է:

— Թուլմիես,— գոչեց Բլաշվելը,— դու հարբա՛ծ ես:

— Ինչպե՛ս չէ,— ասաց Թուլմիեսը:

— Ուրեմն ուրախ եղիր,— շարունակեց Բլաշվելը:

⁹⁶ Կամ Միլլա — Հռոմեացի դիկտատոր (ծնվ. 136, մեռ. 78 մ.թ.ա.): Նախ պաշտոնակից Մարիուսի, ապա նրա ախտյան, 88 թ. կոնսուլ: Հաղթեց Միհրդատին, ապա դարձավ արիստոկրատիայի պարագլուխ և շատ չանցած Հռոմի ու Բուլղարիայի տեր: Սահմանադրությունը փոփոխեց հոգուտ սենատի-արիստոկրատիայի. իր հզորության գագաթնակետին հրաժարվեց և մեկ տարի հետո մեռավ:

⁹⁷ Աստվածաբան ու մեկնիչ, ծնվ. Ալեքսանդրիայում (185—254):

⁹⁸ Պրոսպեր նշանակում է բարեկեցիկ, բարգավաճ, իսկ ֆելիքս՝ երջանիկ:

⁹⁹ *Quirites* լատիներեն *quiris* (Հռոմի քաղաքացի) բառի հոգնակին է: *Gentlemens* անգլերեն ջենտլմեն բառի հոգնակին է: *Caballeros* իսպաներեն՝ ընկերներ:

— Համաձայն եմ,— պատասխանեց Թոլմիեսը:

— Եվ իր բաժակը լցնելով վեր կացավ:

— Փառք գինուն. Nunc te, Bacche, canam!¹⁰⁰: Ներեցեք, օրիորդներ, սա իսպաներեն է: Եվ ահա ապացույցը, սենյորաներ,— ինչպիսի ժողովուրդ, այնպիսին էլ տակառը: Կաստիլիական «առողքը» տասնվեց լիտր է, Ալիկանտեի «կանտարոն» տասներկու, Կանարյան կղզիների «ալմուդը» քսանհինգ, Բալեարյան «կվարտինը» քսանվեց, իսկ Պետրոս ցարի կոշիկը՝ երեսուն: Կեցցե այդ ցարը, որ մեծ էր, կեցցե և նրա կոշիկը, որ էլ ավելի մեծ էր: Տիկիներ, մի բարեկամական խորհուրդ տամ ձեզ: Սխալմամբ մտեք ձեր հարևանի սենյակը: Մերը սիրում է թափառել: Անցողիկ սերը նրա համար չէ, որ պզգի ու ապշանա ծնկներին ոսկրացած սպի ունեցող անգլիացի սպասուհու նման: Նա սրա համար չէ ստեղծված, նա ուրախ թափառում է, այդ քաղցր սերը: Ասել են, սխալմունքը մարդկային է: Ես ձեզ բոլորիդ էլ պաշտում եմ, տիկիներ: Ով Ջեֆին, ով Ժոզեֆին, ով գողտրիկ դեմք, դուք խիստ հրապուրիչ կլինեիք, եթե ծուռ չլինեիք: Դուք նման եք այն սիրուն դեմքին, որի վրա, անզգուշությամբ, նստել են: Գալով Ֆավորիտին, ով ծովահարսեր ու մուսաներ, մի անգամ, երբ Բլաշվելն անցնում էր Գերենբուստ փողոցի առուն, տեսավ մի գեղեցիկ աղջիկ սպիտակ ու լավ ձգված գուլպաներով, որ ցուցադրում էին նրա սրունքները: Այս նախաբանը դուր եկավ նրան, ու Բլաշվելը սիրեց: Նրա սիրածը Ֆավորիտն էր: Ով Ֆավորիտ, դու հոնիական շրթունքներ ունես: Մի հույն նկարիչ կար՝ Եվֆորիոնը, որին մականվանել էին շրթունքների նկարիչ: Միայն այդ հույնն արժանի կլինեի նկարել քո բերանը: Լսիր, քեզնից առաջ այդ անվան արժանի էակ չկար: Դու ստեղծված ես Վեներայի նման խնձորն ստանալու կամ Եվայի նման այն ուտելու: Գեղեցկությունը քեզնով է սկսվում: Հենց նոր խոսեցի Եվայի մասին, դու ես նրան ստեղծել: Դու արժանի ես գեղեցիկ կնոջ գյուտի արտոնագիր ստանալու: Ով Ֆավորիտ, էլ «դու»-ով չեմ դիմի քեզ, որովհետև բանաստեղծությունից անցնում եմ արձակի: Քիչ առաջ դուք իմ անվան մասին էիք խոսում: Դա ինձ խանդաղատեց. բայց ով էլ որ լինենք, չհավատանք անուններին: Նրանք կարող են սխալական լինել: Իմ անունը Ֆելիքս է, բայց ես երջանիկ չեմ: Բառերը ստախոս են: Չընդունենք ուրեմն կուրաբար նրանց տված ցուցումները: Սխալ կլինեի Լիեժից խցաններ պատվիրել կամ Պոլից ձեռնոցներ: Miss Դալիա, եթե ձեր տեղը լինեի, Ռոզա կդնեի անունս: Ծաղիկը պետք է և լավ բուրմունք ունենա, իսկ կինը՝ սրամիտ լինի: Ֆանտիմի մասին ոչինչ չեմ ասի, նա երագող է, անբջային, մտածկոտ ու զգայուն: Նա ծովահարսի տեսքով ուրվական է և վանական կույսի ողջախոհություն ունի: Թեև մոլորվելով ընկել է գրիգետների կյանքի մեջ, բայց ապաստանում է իր մտապատրանքներին, երգում է, աղոթում ու դիտում կապուտակ երկինքն առանց լավ իմանալու, թե ինչ է տեսնում կամ ինչ է անում: Աչքերը երկնքին հառած թափառում է այգում, ուր ավելի շատ թռչուններ է տեսնում, քան գոյություն ունեն: Ով Ֆանտին, այս մի բանը լավ իմացիր,— ես՝ Թոլմիեսս, պատրանք եմ, բայց նա ինձ նույնիսկ չի լսում, քիմերաների խարտյաշ աղջիկը: Դրանից դուրս, նրա մեջ ամեն ինչ թարմություն է, անուշություն, ջահելություն, առավոտյան քաղցր պայծառություն: Ով Ֆանտին, մի աղջիկ, արժանի կոչվելու մարգարիտ կամ գոհար, դուք արևելքի ամենագեղեցիկ դուստրն եք: Տիկիներ, մի երկրորդ խորհուրդ տամ ձեզ. երբեք չամուսնանաք: Ամուսնությունը պատվաստ է: Կարող է կպչել կամ կարող է չորանալ: Հեռու կացեք այդ վտանգից: Բայց, ավաղ, ի՞նչ եմ երգում. խոսքերս խառնում եմ: Աղջիկներն անբուժելի են ամուսնության նկատմամբ և այն ամենը, որ մենք, փորձված իմաստուններս, ասում ենք, երբեք էլ բաձկնագործ ու կոշիկ ասեղնագործող կանանց չի արգելի երագել աղամանդազարդ ամուսինների մասին: Վերջիվերջո, թող այդպես լինի, բայց լավ լսեք այս, շատ եք շաքար ուտում: Դուք, ով կանայք, միայն մի թերություն ունեք, շաքար եք կրծում: Ով կրծողների սեռ, քո սպիտակ ու մանրիկ սիրուն ատամները շաքար են պաշտում: Արդ, լավ լսեք, շաքարն էլ աղ է: Յուրաքանչյուր աղ չորացնող է,

¹⁰⁰ Այժմ քեզ, ո՛վ Բաքոս, կերգեմ (լատ.):

իսկ բոլոր աղերից ամենաչորացնողը շաքարն է: Երակների միջից նա ջրհանի նման ծծում է արյան հեղուկը, որից էլ առաջանում է նաև արյան մակարդում, ապա կարծրացում, որից էլ թոքախտ, իսկ թոքախտից էլ մահ: Ահա թե ինչու շաքարախտը սահմանակից է հյուծախտին: Ուրեմն այլևս շաքար մի կրծեք և այդ դեպքում կապրեք: Վերադառնում եմ տղամարդկանց: Պարոններ, հաղթանակներ տարեք: Առանց խղճի խայթի խլեք իրարից ձեր սիրեցյալներին: Խաչաձև որսացեք, որովհետև սիրո մեջ բարեկամ չկա: Ամենուրեք, ուր մի սիրուն կա, թշնամության ճանապարհը բաց է: Անխնա եղեք և մոլեգին կոիվմեղեք: Գեղեցիկ կինը casus belli¹⁰¹ է, գեղեցիկ կինն ինքնին ոճրագործության առիթ է: Պատմության բոլոր արշավանքների պատճառը կանացի ներքնաշապիկներն են: Կինը տղամարդու իրավունքն է: Հռոմուլոսն առևանգեց սաբինուհիներին¹⁰², Վիլհելմը՝ սաքսոնուհիներին, Կեսարը՝ Հռոմի կանանց: Միրո չարժանացած տղամարդը անգղի նման սավառնում է ուրիշների սիրուհիների վրա: Գալով ինձ, այդ բոլոր անբախտ այրիներին ես նետում եմ Բոնապարտի՝ իտալական բանակին ուղղած սքանչելի կոչը. «Զինվորներ, դուք զուրկ եք ամեն բանից: Թշնամին դրանք ունի»:

Թոլումիեսն ընդհատեց:

— Շունչ քաշիր, Թոլումիես,— ասաց Բլաշվելը:

Այդ ժամանակ Բլաշվելը Լիստոլիեի ու Ֆամոյի օգնությամբ, տրտնջալի եղանակով սկսեց երգել այն արհեստանոցային երգերից մեկը, որ հորինվում է պատահական խոսքերից, մերթ հարուստ հանգեր ունի, մերթ երբեք չունի և ոչ մի իմաստ չի պարունակում, ինչպես ծառի տատանումն ու քամու սուլոցը և որ ծնվում է ծխամորձի պարունակությունից ու թռչում, ցնդում նրա հետ: Ահա այն կուպլետը, որով խումբը պատասխանեց Թոլումիեսի ճոռում ճառին.

Les pères dindons donnèrent

De l'argent à un agent

Pour que mon Clermont Tonnerre

Fût fait pape à la Saint-Jean.

Mais Clermont ne put pas être,

Fait pape n'étant pas prêtre;

Alors leur agent rageant

Leur rapport leur argent¹⁰³.

Բայց սա այնպիսի երգ չէր, որ կարողանար դեմ դնել Թոլումիեի հանպատրաստից հեղինակության հեղեղին. նա դատարկեց իր բաժակը, նորից լցրեց ու վերսկսեց.

¹⁰¹ Պատերազմի շարժառիթ (լատ.):

¹⁰² Հռոմի առասպելական հիմնադիրն ու առաջին թագավորը՝ Հռոմուլոսը, որին ավանդությունը վերագրում է պատերազմասեր բնավորություն՝ հարձակվեց Մարինայի (Հռոմից հյուսիս) վրա խրախճանքի պահին և առևանգեց նրանց կանանց ու աղջիկներին: Հետո սարինացիք հարձակվեցին հռոմեացիների վրա և հաղթելու մոտ էին, երբ արդեն հռոմեացիների հետ ամուսնացած սաբինուհիները երեխաները գրկած մտան կոպոդների միջև և բաժանեցին իրենց հայրերին ամուսիններից:

¹⁰³ Անթարգամանելի նույնահնչյուն բառերից կազմված երգ է:

— Կորչի՛ իմաստությունը, մոռացե՛ք այն ամենը, որ ասացի: Ոչ սուտ-զգաստ լինենք, ոչ զգաստ լինենք, ոչ էլ լինենք: Իրավաբանության մեր դասընթացը լրացնենք խոլությամբ ու կերուխումով:

Անմաքսողություն և մաքսողություն¹⁰⁴: Թող Հուստինիանոսը լինի արուն, իսկ Ռիպայն էգը: Ուրախություն խորխորատներում: Ապրիր, ով արարչություն: Աշխարհը մի խոշոր աղամանդ է: Ես երջանիկ եմ: Թռչունները զարմանալի են: Ինչպիսի տոն ամենուրեք: Սոխակը մի ձրի էլլեվիու է¹⁰⁵: Ով ամառ, ողջունում եմ քեզ: Ով Լյուքսեմբուրգ: Ով Մադամ փողոցի և Աստղադիտարանի ծառուղու գեղոգիկներ¹⁰⁶, ով երագող առաջամարտիկներ, ով դուք չքնաղ դայակներ, որ երեխաներին հսկելով հանդերձ, զվարճանում եք այդպիսի էակներ ունենալու նախագծեր կազմելով: Հարավային Ամերիկայի պամպասներն ինձ դուր կգային, եթե չլիներ Օդեոնի կամարները: Հոգիս սլանում է կուսական անտառներում ու անձայրածիր մարգագետիններում: Ամեն ինչ գեղեցիկ է: Ճանձերը բզգում են շողերի մեջ: Արևի փռտոցից առաջացել է կոլիբրին¹⁰⁷: Համբուրի ինձ, Ֆանտին:

Նա սխալվեց և համբուրեց Ֆավուրիտին:

VIII

ՄԻ ԶԻՈՒ ՄԱՆԸ

— Էդոնի մոտ ավելի լավ են ճաշում, քան Բոմբարդայի մոտ,— բացականչեց Զեֆինը:

— Ես Բոմբարդային գերադասում եմ Էդոնից,— հայտարարեց Բլաշվելը:— Այստեղ ավելի շքեղ է, ավելի ասիական է: Նայեցեք ներքևի սրահը, ինչքան հայելիներ կան պատերին:

— Ես այն¹⁰⁸ գերադասում եմ իմ պնակում,— ասաց Ֆավուրիտը:

Բլաշվելը պնդեց.

— Նայեք դանակներին: Բոմբարդայի մոտ նրանց կոթերն արծաթե են, իսկ Էդոնի մոտ՝ ոսկրե: Արծաթը ոսկորից ավելի թանկ է:

— Միայն թե ոչ նրանց համար, ում կզակն արծաթե է,— նկատեց Թոլմիեյը:

Այդ միջոցին նա նայում էր Ինվալիդների պալատի գմբեթին, որ երևում էր Բոմբարդայի լուսամուտներից:

Մի փոքր լռություն տիրեց:

— Թոլմիե՛ս,— գոչեց Ֆամոյը,— քիչ առաջ ես ու Լիստովին վիճում էինք:

¹⁰⁴ Այստեղ մի նուրբ բառախաղ կա: Indigestion (անմաքսողություն) բառի ժխտական նախադիրը (in) և վերջածանցը (tion) անելով՝ Թոլմիեյը թողնում է diges բառը, որ նշանակում է Հուստինիանոս կայսեր օրենսգիրքը, թեև նման է մաքսողություն (digestion) բառին:

¹⁰⁵ Ֆրանսուա Էլլեվիու՝ ֆրանսիացի հայտնի երգիչ (1769—1842):

¹⁰⁶ Գյուղատնտեսական աշխատանքներին նվիրված պոեմ, որ ծագում է լատին նշանավոր գրող Վիրգիլիոսի (Մշակական) աշխատությունից: Այստեղ փոխաբերաբար է գործածված:

¹⁰⁷ Փոքրիկ գեղեցիկ թռչուն է:

¹⁰⁸ Բառախաղ է. բառը նշանակում է և հայելի, և պաղպաղակ:

— Վեճը լավ բան է,— պատասխանեց Թոլոմիեսը,— իսկ կոիվն էլ ավելի լավ:

— Փիլիսոփայության մասին էինք վիճում:

— Հետո՞:

— Ո՞ւմ ես գերադասում դու, Դեկարտի՞ն, թե Սպինոզային:

— Դեժոզիեին¹⁰⁹,— պատասխանեց Թոլոմիեսը:

Այս վճիռն արձակելուց հետո նա խմեց ու շարունակեց.

— Ես համաձայն եմ ապրել: Աշխարհումս ամեն բան վերջացած չէ, քանի դեռ կարելի է ցնդաբանել: Դրա համար շնորհակալություն եմ հայտնում անմահ աստվածներին: Սուտ ես ասում, բայց ծիծաղում ես: Հավաստում ես, բայց կասկածում ես: Անակնկալը բխում է սիլլոգիզմից: Լավ է դա: Այստեղ դեռ մարդիկ կան, որ կարող են ուրախությամբ բացուխտի անել պարադոքսների գաղտնի տուփը: Այո, որ դուք հանգիստ խմում եք, տիկիներ, Մադերայի գինի է, լավ իմացեք, Կուրալ դաս Ֆրեյրասի բերքից շինված և որ ծովի մակերեսից երեք հարյուր տասնյոթ տուազ¹¹⁰ բարձր է: Խմեք, բայց ուշադրություն դարձրեք, երեք հարյուր տասնյոթ տուազ և պարոն Բոմբարդան, այդ պատվական ճաշարանատերը այդ երեք հարյուր տասնյոթ տուազը ձեզ տալիս է չորսուկես ֆրանկով:

Ֆամոյը նորից ընդհատեց.

— Թոլոմիես, քո կարծիքն օրենք է: Քո սիրած հեղինակն ո՞վ է:

— Բեր...

— Քե՞նք:

— Ոչ, Շու:

Եվ Թոլոմիեսը շարունակեց.

— Փառք Բոմբարդային. նա կհավասարվեր Էլեֆանտյան Մունտֆիսին՝ եթե կարողանար մի այլմեա¹¹¹ ճարել ինձ, և Քերոնցի Թիգելիոնին՝ եթե կարողանար մի հետայր¹¹² բերել ինձ, որովհետև, ով տիկնայք, Հունաստանում ու Եգիպտոսում էլ Բոմբարդաներ կային: Սրա մասին Ապուլեյն¹¹³ է հիշատակում: Ավաղ, միշտ միևնույն բանն է, ոչ մի նոր բան: Ոչ մի անտիպ բան արարչի ստեղծագործության մեջ: «Nil sub sole novum»¹¹⁴,— ասում է Սոդոմոնը. «Amor omnibus idem»¹¹⁵,— ասում է Վիրգիլիոսը. Կարաբինը Կարաբինի հետ Սեն-Կլուի նավակով վեր է բարձրանում, ինչպես Ասպազիան էր նավարկում Պերիկլեսի հետ Սամոսի նավերով: Մի վերջին խոսք: Գիտե՞ք ով է Ասպազիան, տիկիներ: Թեև նա ապրել է այնպիսի դարաշրջանում, երբ կանայք դեռ հոգի չունեին, բայց նա ուներ — վարդաբոսորագույն նրբերանգով մի հոգի, ավելի բոցավառ, քան կրակը և ավելի

¹⁰⁹ Ֆրանսիացի երգահան ու վոդևիլիստ (1772—1827):

¹¹⁰ Հին չափ է, հավասար է 1 մ 95 սմ:

¹¹¹ Հին Եգիպտոսում պարուհի-երգիչ:

¹¹² Հին Հունաստանում բարձր դասի պոռնիկ:

¹¹³ Երկրորդ դարի լատին գրող, հեղինակ «Ոսկե էջ» կամ «Մետամորֆոզ» ֆանտաստիկ վեպի:

¹¹⁴ Արևի տակ նոր բան չկա (լատ.):

¹¹⁵ Սերն ամենքի համար նույնն է (լատ.):

թարմ, քան արշալույսը: Ասպազիան մի արարած էր, որի մեջ միանում էին կանացի երկու հակադիր հատկություններ. նա պոռնիկ էր և աստվածուհի: Նա Մոկրատ էր, գումարած Մանոն Լեսկո: Ասպազիան ստեղծվեց այն պարագայի համար, երբ Պրոմեթեոսին մի ցոփուհի էր պետք:

Ոգևորված Թուլմիեսին խիստ դժվար կլինեք կանգնեցնել, եթե այդ բոլորին քարափի վրա մի ձի չընկներ: Բախումից կանգ առան թե սայլակը, թե հռետորը: Դա մի ծերացած, վտիտ, բուերոնյան զամբիկ էր՝ արժանի իրեն մաշկելու, որը քաշում էր ծանր սայլակը: Հյուսիսից ուժասպառ կենդանին հասնելով Բոմբարդայի առջև՝ հրաժարվել էր ճամփան շարունակել: Այս դեպքը մեծ ամբոխ էր հավաքել: Նախատված և հայիոյող սայլապանը հագիվ մի գռեհիկ հայիոյանք ասելու և այն մտրակի մի անողոք հարվածով հիմնավորելու ժամանակ էր ունեցել, երբ զառամած ձին ընկել էր՝ այլևս վեր չկենալու համար: Անցորդների բարձրացրած աղմուկից Թուլմիեսի ուրախ ունկնդիրները գլուխները շրջեցին, իսկ Թուլմիեսն օգտվեց դրանից եզրափակելու համար իր բանախոսությունը հետևյալ մեղամաղձոտ քառյակով.

Նա (զամբիկը) այն աշխարհից էր, ուր երկանիվն ու կառքը

Նույն ճակատագիրն ունեն,

Եվ այդ վտիտ ձին ապրեց այնքան, ինչքան ապրում են այդպիսի ձիերը.—

Հայիոյանքի տևողությունը¹¹⁶:

— Խեղճ ձի,— հառաչեց Ֆանտինը:

Իսկ Դալիան նկատեց.

— Ֆանտինն էլ բան չունի ու ձիերին է խղճում: Կարելի՞ է սրա պես տխմար լինել:

Այդ բոլորին Ֆավուրիտը խաչաձևելով բազուկները և գլուխը ետ զցելով վճռականապես նայեց Թուլմիեսին ու ասաց.

— Իսկ անակնկալ՞ լը:

— Իսկապես: Բոպեն հասել է,— պատասխանեց Թուլմիեսը:— Պարոնայք, այս տիկիններին անակնկալը պատճառելու ժամը հնչել է: Տիկիներ, մի բոպե սպասեք մեզ:

— Դա սկսվում է մի համբույրով,— ասաց Բլաշվելը:

— Ճակատին,— ավելացրեց Թուլմիեսը:

Ամեն մեկն իր սիրուհու ճակատին լրջությամբ մի համբույր դրոշմեց, ապա չորսն էլ շարքով ուղղվեցին դեպի դուռը՝ մատը բերանին դնելով:

Նրանց դուրս գնալու միջոցին Ֆավուրիտը ծափ տվեց:

— Արդեն սկսում է զվարճալի դառնալ,— ասաց նա:

¹¹⁶ Թուլմիեսն այստեղ խիստ սրամիտ կերպով փոխում է ֆրանսիացի քնարերգու և բանաստեղծ Մալերրի (1555—1628) մի ստանսը (տունը), որ նա գրել է Դյուպերիեի աղջկա մահվան առթիվ և, որ ֆրանսիական գրականության մեջ շատ հայտնի է: Դրա բառերից մի քանիսը փոխելով՝ աղջկա ողբը դառնում է ուժասպառ ձիու ողբ. *Օ, թ.*:

— Շատ չուշանաք,— մրմնջաց Ֆանտինը:— Սպասում ենք ձեզ:

IX

ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՈՒՐԱԽ ՎԱԽՃԱՆԸ

Դեռատի աղջիկները մենակ մնալով՝ զույգ-զույգ հենվեցին լուսամուտին և սկսեցին շաղակրատել, կռանալ և մի լուսամուտից մյուսը խոսել:

Նրանք տեսան, որ երիտասարդները թևանցուկ արած Բոմբարդայի ճաշարանից դուրս եկան, ապա շուտ գալով ժպտագին նշաններ արին և անհետացան շաբաթը մի անգամ Շանգ'ելիզեն նվաճող կիրակիի փոշալի ժխորի մեջ:

— Շատ չուշանա՛ք,— գոչեց Ֆանտինը:

— Ի՞նչ են մեզ բերելու,— ասաց Զեֆինը:

— Անկասկած լավ բան կլինի,— նկատեց Դալիան:

— Ես ուզում եմ, որ ոսկե մի բան լինի,— վրա տվեց Ֆավուրիտը:

Շատ չանցած նրանք գրավվեցին ջրի շարժումով, որ երևում էր մեծ ծառերի ճյուղերի արանքից և խիստ զվարճացնում էր նրանց: Փոստակառքերի ու դիլիժանսների մեկնելու ժամն էր: Հարավի ու արևմուտքի գրեթե բոլոր սուրհանդակային կառքերն անցնում էին Շանգ'ելիզեից և դրանց մեծ մասը գնում էր քարափով ու Պասիի պատնեշից դուրս գալիս: Ամեն թույլ երևե խոշոր, դեղին ու սև ներկված կառք, ծանր բեռնված, աղմուկ հանելով, պայուսակներից, արկղիկներից ու վերնածածկից այլանդակ ձև ստացած, շուտ անհետացող գլուխներով լի, քանդելով խճուղին ու փշրելով սալաքարերը՝ մոլեգնորեն առաջանում էր ամբոխի միջով, հնոցի նման կայծեր սփռելով և ծխի տեղ փոշի բարձրացնելով: Այս ժխորը զվարճացնում էր չորս աղջիկներին: Ֆավուրիտը բացականչեց.

— Ինչ հարայ-հրոց, կարծես շղթաների մի դեզ է թռչում:

Պատահեց նաև, որ այդ կառքերից մեկը, որ հազիվ էր նշմարվում ծփիների սաղարթի միջից, մի թույլ կանգ առավ, ապա նորից սրընթաց արշավեց: Այս բանը զարմացրեց Ֆանտինին:

— Տարօրինակ է,— ասաց նա: Ես կարծում էի, որ դիլիժանսը բնավ կանգ չի առնում:

Ֆավուրիտն ուները թոթվեց:

— Այս Ֆանտինը զարմանալի է: Հետաքրքրասիրությունից մղված եմ գալիս նրա մոտ: Նա շլանում է ամենապարզ բաներից: Ենթադրենք ես ճամփորդ եմ, դիլիժանսին ասում եմ, թե առջևից կգնամ, իսկ դուք անցնելիս ինձ կվերցնեք քարափից: Դիլիժանսն ինձ տեսնում է, կանգ առնում ու ինձ վերցնում: Այդպիսի դեպքեր միշտ լինում են: Միբեղիս, դու կյանքը չես ճանաչում:

Որոշ ժամանակ այսպես անցավ: Հանկարծ Ֆավուրիտը քնից արթնացող մարդու շարժում գործեց:

— Հետո՞, ո՞ր մնաց անակնկալը,— ասաց նա:

— Իսկապես,— գոչեց Դալիան,— այդ նշանավոր անակնկալը:

— Շատ ուշացան,— նկատեց Ֆանտինը:

Երբ Ֆանտինը վերջացնում էր այս հառաչալի խոսքը, ճաշը մատուցող սպասավորը ներս մտավ: Նրա ձեռքին նամակի նման մի բան կար:

— Այդ ի՞նչ է,— հարցրեց Ֆավորիտը:

Մատուցողը պատասխանեց.

— Այս թուղթն այն պարոնները տվեցին այս տիկիններին տալու:

— Իսկ ինչո՞ւ անմիջապես չբերեցիք:

— Որովհետև այդ պարոնները պատվիրեցին միայն մեկ ժամ անց հանձնել,— պատասխանեց մատուցողը:

Ֆավորիտն այդ թուղթը իսկեց մատուցողի ձեռքից: Իրոք դա նամակ էր:

— Վա՛յ,— ասաց նա:— Հասցե չկա: Բայց լսեք, թե ինչ է գրված վրան.

«Մա է անակնկալը»:

Նա արագ պատռեց ծրարը, բացեց նամակն ու կարդաց (նա կարդալ գիտեր):

«Մեր սիրուհիներ,

Իմացեք, որ մեծ ծնողներ ունենք: Դուք լավ չեք իմանում, թե ինչ բան է ծնողը: Դա մանկական ու պարկեշտ քաղաքացիական օրենսգրքում կոչվում է հայր, մայր: Արդ, այդ ծնողները հեծեծում են, այդ ծերունիները մեզ պահանջում են, այդ բարի մարդիկ ու բարի կանայք մեզ անվանում են անառակ որդի, ցանկանում են, որ վերադառնանք և խոստանում են մի լավ քեֆ հրավիրել: Մենք հնազանդում ենք նրանց, որովհետև առաքինի ենք: Այն ժամանակ, երբ դուք այս նամակը կարդաք՝ հինգ մոլեգին ձիեր մեզ կտանեն դեպի մեր պապաներն ու մամաները: Մենք փախչում ենք ճամբարից, ինչպես Բոսյունեն է ասում: Մեկնում ենք, մեկնել ենք: Մենք փախչում ենք Լաֆիտի բազուկներով և Կայարի թների վրա: Տուլուզի դիլիժանսը մեզ փրկում է անդունդից, իսկ անդունդը դուք եք, ով գեղեցիկ փոքրիկներ: Մենք նորից մտնում ենք հասարակության մեջ, պարտականության ու կարգականոնի մեջ՝ սրաշալ, ժամը երեք լիտ արագությամբ: Կարևոր է հայրենիքին, որ մենք էլ ամենքի պես լինենք նահանգապետ, ընտանիքի հայր, դաշտային պահակ և պետական խորհրդական: Հարգեք մեզ: Մենք մեզ գոհում ենք: Մեզ արագ ողբացեք և շուտ փոխարինող գտեք: Եթե այս նամակը պատառոտի ձեր սիրտը, դուք էլ պատառոտեք այդ նամակը... Մնաք բարով:

Մոտ երկու տարի մենք երջանկացրել ենք ձեզ: Դրա համար ոխ մի պահեք մեր դեմ:

Ստորագրված՝ Բլաշվել

Ֆամոյ

Լիստովիե

Թուլմիես

Հետգրություն. Ճաշի համար վճարված է»:

Չորս աղջիկներն իրար նայեցին:

Առաջինը Ֆավուրիտը խզեց լուրջունը:

— Ի՛նչ արած,— գոչեց նա,— այնուամենայնիվ սա լավ գավեշտ է:

— Շատ ծիծաղելի է,— ասաց Ջեֆինը:

— Հավանաբար Բլաշվելն է այս միտքը հղացել,— շարունակեց Ֆավուրիտը:— Դրա համար էլ սկսում եմ սիրահարվել նրան: Հենց որ գնաց, դարձավ սիրելի: Այ քեզ պատմություն:

— Ոչ,— ասաց Դալիան,— Թոլումիեսի գաղափարը կլինի դա: Երևում է:

— Եթե այդպես է, մա՛հ Բլաշվելին, կեցցե՛ Թոլումիեսը:

— Կեցցե՛ Թոլումիեսը,— գոչեցին Դալիան ու Ջեֆինը:

Եվ սկսեցին քրքջալ:

Ֆանտինն էլ մյուսների պես ծիծաղեց:

Մի ժամ հետո, երբ վերադարձավ իր սենյակ, նա լաց եղավ: Դա, ինչպես ասել ենք, նրա առաջին սերն էր. նա անձնատուր էր եղել Թոլումիեսին, որպես ամուսնու: Եվ խեղճ աղջիկը երեխա ուներ:

Գիրք չորրորդ

ՎՍՏԱՀԵԼ՝ ԵՐԲԵՄՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՄԱՏՆԵԼ

I

ՄԻ ՄԱՅՐ, ՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՄԻ ՈՒՐԻՇ ՄՈՐ

Այս դարի առաջին քառորդին, Փարիզի մոտ, Մոնֆերմեյում հասարակ ճաշարանի նման մի բան կար, որն այժմ այլևս չկա: Այս ճաշարանը պահում էին Թենարդիե ամուսինները: Այն գտնվում էր Բուլանժե նրբանցքում: Դռան ճակատին երևում էր պատին գամված մի տախտակ: Այդ տախտակի վրա նկարված էր մի բան, որ նման էր մեջքին մի մարդ գցած մի այլ մարդու: Շալակված մարդը գեներալի մեծ ու ոսկեհուռ ուսադիրներ էր կրում, որոնց վրա արծաթագույն խոշոր աստղեր կային: Նկարի մնացած մասը ներկայացնում էր ծուխ և հավանաբար որևէ ճակատամարտ: Ներքևում կարդացվում էր հետևյալ մակագրությունը. «Վաթերլոոյի Մերժանտը»:

Ոչ մի բան այնքան սովորական չէ, ինչքան պանդոկների դռան առջև ընկած սայլը: Սակայն այդ սայլը, կամ ավելի ճիշտ՝ սայլի բեկորը, որ «Վաթերլոոյի Մերժանտ» ճաշարանի առջև փողոցը դարձնում էր անանցանելի, 1818 թվականի գարնան մի երեկո իր զանգվածով գրավել էր անկասկած այդտեղից անցած մի նկարչի ուշադրությունը:

Դա առաջամասն էր այն բեռնասայլերի, որ գործածում են անտառոտ վայրերում՝ փոխադրելու համար հաստ տախտակներ կամ ծառերի բներ: Այս առաջամասը բաղկացած էր երկաթե զանգվածային առանցքավոր տնակից, որին ամրացած էր մի ծանր քեղի և որ հենված էր երկու ահագին անիվների վրա: Այս ամբողջը մի հաստ ու կարճ, ծանր ու տձև բան էր, և կարծես մի վիթխարի թնդանոթի հրետանասայլ լիներ: Անիվների շառավիղները, անվակունդերը, քեղին ու սոնակը ծածկել էր ցեխը, մի զգվելի դեղնավուն, նման այն գույնին, որով այնքան հաճությամբ ներկում են մայր եկեղեցիները: Փայտը կորել էր ցեխի տակ, իսկ երկաթը՝ ժանգի: Սոնակից որպես զգեստավորություն կախ էր ընկել տաժանակիր Գողիաթին արժանի մի ծանր շղթա: Այդ շղթան մտածել էր տալիս ոչ թե այն գերանների մասին, որ նա պարտավոր էր փոխադրել, այլ մաստողոնտների ու մամոնտների մասին, որ նրան կարող էին լծել. նրանից թիարանի հոտ էր փչում, այն էլ գերմարդկային, կիկլոպյան թիարանի և կարծես որևէ ճիվաղից էր պոկվել: Հոմերոսը դրանով կկապեր Պոլիֆեմին, իսկ Շեքսպիրը՝ Կալիբանին:

Ինչո՞ւ էր բեռնասայլի այս առաջամասը գտնվում փողոցի այդ կետում: Նախ՝ փողոցը խցանելու, հետո վերջնականապես ժանգոտելու համար: Սոցիալական հին իրավակարգում կան բազմաթիվ հաստատություններ, որ այդպես օրը ցերեկով գտնվում են նրա ճանապարհի վրա և որոնք այդտեղ լինելու այլ պատճառ չունեն:

Շղթայի կենտրոնը սոնակի տակից բավական մոտենում էր գետնին և նրա կորության վրա, ինչպես ճոճի պարան, այդ երեկո կողք-կողքի նստել էին սքանչելիորեն իրար պարուրված երկու փոքր աղջիկ, մեկը մոտավորապես երկուսուկես տարեկան, մյուսը տասնութ ամսական, փոքրը մեծի գրկում: Խելացիորեն կապված գլխաշորն արգելում էր նրանց ընկնել: Մի մայր տեսել էր այդ զարհուրելի շղթան ու ասել.

— Ահա մի խաղալիք երեխաների համար:

Երեխաները, որ ի դեպ շնորհալիորեն պճնված էին, այն էլ որոշ նրբաճաշակությամբ՝ ճառագայթում էին գոհունակությունից: Կարծես հին երկաթեղենների մեջ դրված երկու վարդ լինեին. նրանց աչքերը հաղթանակ էին արտահայտում, իսկ թարմ այտերը ծիծաղում էին: Մեկը թխահեր էր, մյուսը՝ շագանակագույն: Նրանց միամիտ դեմքերը հիացած զարմանք էին: Քիչ դենը գտնվող ծաղկած թուփն անցորդներին անուշ բույր էր ուղարկում, մինչդեռ թվում էր, որ դա երեխաներից է գալիս: Նա, որ տասնութ ամսական էր, մանկական ողջախոհ պարկեշտությամբ ցուցադրում էր իր սիրուն, մերկ փորը: Այս գույգ սքանչելի, իրենց երջանկությունից շաղված ու լուսաշող գլուխների շուրջն ու ներքև, բեռնասայլի վիթխարի առաջամասը ժանգից սևացած ու գրեթե զարհուրելի, ամբողջովին խառնափնթորված ահավոր կորություններից ու անկյուններից՝ շրջանակ էր կազմում քարանձավի գավթի նման: Մի քանի քայլ հեռու, պանդոկի շեմքին պազած մայրը, մի կին, ի դեպ, ոչ հաճելի, բայց այդ թոպեին սրտառուչ տեսքով, օրորում էր երեխաներին մի երկար պարանի միջոցով և աչքերով հսկում նրանց՝ վախենալով որևէ արկածից այն կենդանական ու երկնային արտահայտությամբ, որ հատուկ է մայրությանը: Յուրաքանչյուր տարուբերումին շղթայի օղակները զայրույթի ճիչի նմանող սուր ճռռոց էին արձակում: Փոքրիկ աղջիկները զմայլում էին, մայր մտնող արևը խառնվում էր այս հրճվանքին և ոչ մի բան այնքան հրապուրիչ չէր, ինչքան պատահականության այս քմահաճույքը, որ տիտանների շղթան դարձրել էր քերթների ճոճ:

Փոքրիկներին օրորելով հանդերձ՝ մայրը կեղծ ձայնով մրմնջում էր այդ ժամանակ հայտնի մի ռոմանս.

Նրա երգը և աղջիկներին հսկելը թույլ չէին տալիս, որ լսի ու տեսնի փողոցում տեղի ունեցող բաները:

Բայց մեկը մոտեցել էր նրան, երբ նա սկսում էր ռոմանսի առաջին քառյակը, և հանկարծ նա լսեց մի ձայն, որ նրա ականջին խիստ մոտից ասում էր.

— Ինչ սիրուն երեխաներ ունեք, տիկին:

— A la belle et tendre Imogine¹¹⁸,— պատասխանեց մայրը շարունակելով ռոմանսը, ապա շուտ եկավ:

Քիչ հեռու մի կին էր կանգնել: Այս կինն էլ մի երեխա ուներ գրկած: Բացի դրանից նա շալակել էր և մի մեծ տոպրակ, որ թվում էր բավական ծանր:

Այս կնոջ երեխան մեկն էր այն աստվածային եակներից, որ երբևէ կարելի է տեսնել: Դա մի փոքրիկ աղջիկ էր՝ երկու-երեք տարեկան և կարող էր մյուս երկուսի հետ մրցել ճաշակավոր արդուզարդով. գլխին նուրբ կտորից, ժապավեններով զարդարված գլխարկ, իսկ մարմնին էլ ժանեկազարդ ժիլետ: Վեր բարձրացած շրջագգեստի ծալքից երևում էր նրա սպիտակ, մսուտ ու ամրակազմ ազդրը: Նա շատ դուրեկան, վարդագույն ու առողջ դեմք ուներ: Փոքրիկ գեղեցկուհին իր թշերը կծելու ցանկություն էր առաջացնում: Նրա աչքերի մասին միայն մի բան կարելի էր ասել, որ շատ խոշոր պետք է լինեին ու սքանչելի թարթիչներ ունեին: Նա քնած էր:

Քնած էր այն բացարձակ վստահության քնով, որ հատուկ է այդ տարիքին: Մայրերի բազուկները գուրգուրանքից են շինված և երեխաներն այդտեղ խոր քնում են:

Մայրն աղքատիկ ու տխուր էր երևում: Նա ուներ այն բանվորուհու տեսքը, որ ձգտում է կրկին գեղեցկուհի դառնալ: Նա ջահել էր. գեղեցիկ էր՝ գուցե, բայց այդ արդուզարդով չէր երևում: Նրա մազերը, որից մի խարսյաշ գանգուր դուրս էր եկել՝ թվում էին շատ խիտ, բայց խստորեն անհետացել էին տգեղ, սեղմված, նեղ ու կզակի մոտ հանգուցված մոլեռանդ կանանց հատուկ գլխանոցի տակ: Եթե գեղեցիկ աստամներ ունես՝ ծիծաղը ցուցադրում է դրանք: Բայց այդ կինը չէր ծիծաղում: Երևում էր, որ նրա աչքերը վաղուց է չեն չորացել: Նա գունատ էր և խիստ հոգնած ու հիվանդ տեսք ուներ: Նա դիտում էր իր բազուկներում քնած փոքրիկ աղջկան՝ իր երեխային սնուցած մոր հատուկ հայացքով: Շալի ձևով ծալված մի լայն ու ու կապույտ թաշկինակ՝ նման նրանց, որով հաշմանդամներն են իրենց քիթը սրբում՝ ծանրորեն ծածկում էր նրա իրանը: Նրա ձեռքերն արևակեզ էին և ամբողջովին ծածկված կարմիր բծերով, ցուցամատն ասեղից կարծրացել ու հերձոտել էր: Հազել էր բրդե կոշտ ու տձև վերարկու, բամբակե կտորից շրջագգեստ ու կոպիտ կոշիկներ: Այդ կինը Ֆանտինն էր:

Ֆանտինն էր և դժվար էր ճանաչել նրան, բայց եթե ուշադրությամբ քննեիր, կնկատեիր նրա գեղեցկությունը: Մի տխուր ծալք, որ նման էր հեգնանքի սկզբնավորության՝ խորշմում էր նրա աջ այտը: Ինչ վերաբերում է նրա արդուզարդին, մուսլինի ու ժապավենների այդ օղային արդուզարդին, որ կարծես ուրախությամբ, խելահեղությամբ ու երաժշտությամբ էր կատարված և լի էր չիկչիկան բռնածներով ու եղրնանու անուշահոտությամբ՝ ցնդել էր այն գեղեցիկ ու փայլուն

¹¹⁷ Այսպես է պետք, ասում էր մի մարտիկ...

¹¹⁸ Գեղեցիկ ու քնքուշ Իմոժինին:

եղյամի նման, որ արևի տակ աղամանդի տեղ ես ընդունում, բայց հալչում է մնում ամբողջովին սև ճյուղը:

«Լավ խեղկատակությունից» հետո տասը ամիս էր անցել:

Դժվար չէ գուշակել, թե ինչ էր տեղի ունեցել այդ տասը ամսվա ընթացքում:

Լքումից հետո նեղություն: Ֆանտինն անմիջապես իր տեսադաշտից կորցրել էր Ֆավուրիտին, Զեֆինին ու Դալիային. կապը տղամարդկանց կողմից խզվելուց հետո՝ կտրվեց նաև կանանց կողմից. տասնհինգ օր հետո նրանք խիստ կզարմանային, եթե ասեիր, թե բարեկամուհիներ են եղել. այդ բարեկամությունն այլևս գոյության իրավունք չունեի: Ֆանտինը մնացել էր մենակ: Իր երեխայի հոր մեկնելուց հետո (այսպիսի բաժանումներն, ավաղ, անդարձ են) նա մնաց բոլորովին առանձնացած, աշխատելու սովորությունը նվազած և զվարճանալու ցանկությունն աճած: Թուլմիեսի հետ ունեցած կապի պատճառով նա տրամադրվել էր արհամարհել իր իմացած փոքր արհեստը, կարևորություն չէր տվել եկամտի աղբյուրներին և դրանք էլ ցամաքել էին: Ոչ մի եկամուտ չէր մնացել: Ֆանտինը հազիվ կարդալ գիտեր, իսկ գրել չէր իմանում. մանուկ հասակում նրան սովորեցրել էին միմիայն իր անունն ստորագրել. մի անգամ հանրային գրագրի միջոցով մի նամակ էր գրել Թուլմիեսին, ապա երկրորդը, երրորդը: Թուլմիեսը ոչ մեկին էլ չէր պատասխանել: Մի անգամ Ֆանտինը լսեց, թե ինչպես բամբասաքեր կանայք նայելով իր աղջկան՝ ասացին. «Մի՞ թե կարելի է լքոթեն վերաբերվել այսպիսի երեխաների. դրանց միայն արհամարհել կարելի է», — այդ ժամանակ նա մտածեց Թուլմիեսի մասին, որ արհամարհում էր իր երեխային և այդ անմեղ էակին լքոթեն չէր վերաբերվում և նրա սիրտը լցվեց այդ մարդու դեմ: Ի՞նչ անել: Նա այլևս չգիտեր, թե ում դիմի. մի սխալ էր գործել, բայց հոգու խորքում, ինչպես հիշում ենք, մաքուր էր ու առաքինի: Տարտամոթեն նա զգաց, որ գտնվում է թշվառության մեջ ընկնելու նախօրյակին և էլ ավելի վատի մեջ զլորվելու մոտ: Արիություն էր պետք և նա ունեցավ, դիմացկունություն հանդես բերեց: Մտածեց վերադառնալ իր ծննդավայր քաղաքը՝ Մոնտրոյ-սյուռ-Մեռ. այդտեղ գուցե որևէ մեկը ճանաչեր իրեն ու աշխատանք տար: Այո, բայց պետք է հանցանքը թաքցնել: Անորոշ կերպով նշմարում էր առաջինից ավելի կսկծալի մի նոր բաժանման հնարավոր անհրաժեշտությունը: Սիրտը սեղմվեց, բայց որոշում կայացրեց: Ֆանտինը, — հետո կտեսնենք, — կյանքի կատաղի արիություն ուներ: Նա արդեն խիզախորեն հրաժարվել էր զարդարանքներից ու հագել էր կտավե հագուստ, իսկ իր բոլոր մետաքսեղենը, սնդուսները, ժապավեններն ու ժանյակները տվել էր իր աղջկան — միակ հպարտությունը, որ մնացել էր, բայց դա սուրբ հպարտություն էր: Ինչ որ ուներ ծախեց և երկու հարյուր ֆրանկ գոյացավ դրանից, իսկ մանր պարտքերը վճարելուց հետո մնաց մոտավորապես ութսուն ֆրանկ: Քսաներկու տարեկան հասակում, զարնան մի գեղեցիկ առավոտ նա հեռացավ Փարիզից՝ երեխան շալակին: Եթե որևէ մարդ տեսներ նրանց անցնելը՝ կխղճար: Այդ կինն աշխարհում միայն այդ երեխան ուներ, այդ երեխան էլ՝ միայն այդ կինը: Ֆանտինը սնուցել էր իր երեխային. այդ բանն ազդել էր նրա կրծքի վրա, և նա մի քիչ հագում էր:

Մենք այլևս առիթ չենք ունենա խոսելու պարոն Ֆելիքս Թուլմիեսի մասին, ուստի սահմանափակվենք ասելով, որ քսան տարի հետո, Լուի-Ֆիլիպի թագավորության օրոք, նա գավառական խոշոր ազդեցիկ ու հարուստ փաստաբան էր, իմաստուն ընտրող և խստասիրտ երդվյալ դատավոր. բայց միշտ էլ հաճույքի մարդ:

Կեսօրվա մոտերը, երբեմն-երբեմն հանգստանալու նպատակով և լիոյին երեք-չորս սու վճարելով այսպես կոչված Փարիզի Շրջականների Փոքր Հանրակառքերով ճամփորդելով՝ Ֆանտինը հասավ Մոնֆերմեյ՝ Բուլանժե փողոցը:

Երբ նա անցնում էր Թենարդիեի պանդոկի առջևից, իրենց ճիվաղային ճոճի վրա հիացած երկու փոքրիկ աղջիկները մի տեսակ շլացում էին պատճառել Ֆանտինին և նա կանգ էր առել բերկրանքի այս տեսիլքի առջև:

Աշխարհում հրապույրներ շատ կան և այս փոքրիկ աղջիկները երևացին որպես հրապույր այդ մորը:

Նա խիստ հուզված դիտեց նրանց: Հրեշտակների ներկայությունը դրախտի ազդանշան է: Նրան թվաց, որ այս խորհրդավոր պանդոկի վրա տեսնում է նախախնամության ձեռքով գրված **Այստեղ** բառը: Ակներև էր, որ այդ փոքրիկները երջանիկ են: Ֆանտինը նայում էր նրանց, հիանում նրանցով և այնքան էր խանդաղատել, որ այն վայրկյանին, երբ նրանց մայրը շունչ էր քաշում իր երգի զույգ տողերի միջև՝ այլևս չկարողացավ չասել հետևյալ խոսքը.

— Երկուսն էլ գեղեցիկ են, տիկին:

Ամենակատաղի էակներն էլ զինաթափվում են, երբ նրանց ձագերին փաղաքշում ես: Մայրն իր զլուխը բարձրացրեց ու շնորհակալություն հայտնեց և անցորդ կնոջը նստեցրեց դռան նստարանին, իսկ ինքը շեմքին էր նստել: Եվ սկսեցին զրույց անել:

— Իմ անունը տիկին Թենարդիե է,— ասաց փոքրիկների մայրը:— Մենք ենք բանեցնում այս պանդոկը:

Ապա,— դեռ խելքն իր ռոմանսին տված,— շարունակեց ատամների միջից.

Il le faut, je suis chevalier

Et je pars pour la Palestine¹¹⁹.

Այս տիկին Թենարդիեն մի շիկահեր, մուստ մարմնով ու անճռոնի դեմքով կին էր. զինվորական կնոջ տիպ՝ իր ողջ ապաշնորհությամբ: Եվ զարմանալի բան՝ նազանք էր ծախում, դա էլ վեպեր կարդալու շնորհիվ. այլ կերպ առնակերպ կոտրտվող էր: Հին վեպերը, որ ծվատվել են պանդոկապանուհիների երևակայությունից՝ երբեմն այսպիսի ազդեցություն են գործում: Նա դեռ ջահել էր, հազիվ երեսուն տարեկան լինել: Եթե այդ կինը, որ պզգած էր, ուղիղ կանգներ՝ գուցե նրա բարձր հասակը և տոնավաճառներին հատուկ շրջիկ ու վիթխարի առևտրականների թիկնեղությունը հենց սկզբից էլ սարսափեցնեին Ֆանտինին, խախտեին վստահությունը և ուշաթափեին, մի բան, որ մենք պատմելու ենք: Մարդու բախտը երբեմն կախված է այն բանից, նստած է նա, թե կանգնած:

Ֆանտինը պատմեց իր կյանքը, միայն թե մի քիչ փոփոխելով: Այսինքն.

Եղել էր բանվորուհի, ամուսինը մեռել էր, Փարիզում աշխատանք չէր ճարում և գնում է այլ տեղ աշխատանք փնտրելու՝ իր ծննդավայրում: Փարիզից դուրս էր եկել այդ առավոտ՝ ոտքով և, որովհետև կրում էր իր երեխային ու հոգնում էր՝ ապա Վիլմուֆրի հանրակառքին պատահելիս նստել էր, իսկ Վիլմուֆրից ոտքով էր եկել Մոնֆերմեյ. փոքրիկը մի քիչ քայլել էր, բայց ոչ շատ, որովհետև այնքան փոքր է նա, և պետք էր եղել գրկել, և ի վերջո այդ գոհարը քնել էր:

¹¹⁹ Այդպես է պետք, ես ասպետ եմ:

Եվ գնում եմ Պաղեստին:

Եվ այս խոսքի վրա նա մի կրքոտ համբույր դրոշմեց իր աղջկան, որից երեխան արթնացավ: Նա բաց արեց աչքերը, կապույտ, խոշոր, ինչպես մորն էին և նայեց, ինչի՞ ոչնչի, և ամեն բանի. նայեց փոքր երեխաների այն լուրջ և երբեմն էլ խիստ հայացքով, որ նրանց լուսավոր անմեղության գաղտնիքն է մեր առաքինության վերջալույսի առջև: Կարծես թե նրանք իրենց հրեշտակ են զգում և գիտեն, որ մենք մարդ ենք:

Հետո երեխան սկսեց ծիծաղել և թեև մայրը նրան բռնեց, բայց սահեց, իջավ գետին՝ վազել ցանկացող երեխայի անհաղթելի եռանդով: Հանկարծ նա նկատեց մյուս երկուսին՝ ճոճի վրա, մեկն և կանգ առավ և ի նշան հիացմունքի՝ լեզուն դուրս հանեց:

Մայր Թենարդիեն քանդեց իր աղջիկների կապը, իջեցրեց նրանց ճոճից ու ասաց.

— Երեքով միահին խաղացեք:

Այս հրեշտակները շուտ են ընտելանում իրար և մի րոպե հետո փոքրիկ Թենարդիենները խաղում էին նորեկի հետ ու փոս էին փորում հողի մեջ. անհուն հաճույք:

Այդ նորեկը շատ ուրախ էր. մոր բարությունը գրված է մանկիկի ուրախության մեջ: Նա մի փոքր փայտե ձող էր վերցրել և գործածում էր որպես բահ ու եռանդագին մի փոս էր փորում կարծես ճանճի համար: Գերեզմանափորի արածը ծիծաղ է հարուցում, երբ դա երեխան է անում:

Կանայք շարունակում էին զրուցել:

Ինչպե՞ս են անվանում ձեր փոքրիկին:

— Կոզետ:

Կոզետ, այսինքն Եպրաքսի: Փոքրիկի անունը Եպրաքսի էր, բայց մայրը Եպրաքսին դարձրել էր Կոզետ, մայրերի ու ժողովրդի այն քնքուշ ու շնորհալի բնագողով, որ Ժոզեֆան դարձնում է Պեպլիտա, Ֆրանսուազը՝ Սիլետ: Ածանցելու մի ձև է սա, որ խառնակում ու շուտ է տալիս ստուգաբանների ողջ գիտությունը: Ես մի տատիկ եմ ճանաչել, որ հաջողել էր Թեոդորը դարձնել Գնոն:

— Քանի՞ տարեկան է նա:

— Շուտով երեքը կլրանա:

— Ինչպես իմ անդրանիկը:

Այդ միջոցին փոքր աղջիկները խմբված էին խոր անհանգստություն, բայց և երանություն արտահայտող դիրքով. մի դեպք էր պատահել, հողից մի խոշոր որդ էր դուրս եկել, և երեխաները թե վախեցել էին, թե զմայլվել:

Նրանց պայծառ ճակատներն իրար էին կաշում, կարծես փառապսակի մեջ դրված երեք գլուխ:

— Երեխաները,— գոչեց մայր Թենարդիեն,— անմիջապես մտերմանում են. ասես երեք քույր լինեն:

Այս բառը հանդիսացավ այն կայծը, որ մյուս մայրը հավանաբար սպասում էր: Նա բռնեց Թենարդիեի ձեռքը, շեշտակի նայեց նրան ու ասաց.

— Չե՞ս ուզենա իմ երեխային պահել:

Տիկին Թենարդիեն մի այնպիսի զարմացական շարժում գործեց, որը ոչ համաձայնություն է, ոչ մերժում:

Կոզետի մայրը շարունակեց.

— Ինչպես տեսնում եք, ես չեմ կարող աղջկաս ինձ հետ տանել: Աշխատանքը թույլ չի տալիս: Մանավանդ գավառացիներն այնքան տարօրինակ են: Աստված ինձ մղեց, որ ձեր պանդոկի առջևից անցնեմ: Երբ տեսա ձեր երեխաներին այդպես սիրուն, մաքուր ու գոհ՝ հուզվեցի և ինքս ինձ ասացի՝ ահա մի լավ մայր: Ճիշտ այդպես երեք քույր կլինեն: Բացի դրանից երկար չեմ ուշանա, կվերադառնամ: Չե՞ք ուզում երեխայիս պահել:

— Պետք է մտածել,— ասաց տիկին Թենարդիեն:

— Ամսական վեց ֆրանկ կտամ:

Այդ միջոցին ճաշարանից մի տղամարդու ձայն գոչեց.

— Ամսական յոթ ֆրանկից ոչ պակաս. վեց ամսվանն էլ առաջուց վճարելով:

— Վեց անգամ յոթ՝ քառասուներկու,— ասաց տիկին Թենարդիեն:

— Կտամ,— ասաց մայրը:

— Եվ տասնհինգ ֆրանկ էլ առանձին նախնական ծախսերի համար,— ավելացրեց տղամարդու ձայնը:

— Ընդամենը հիսուներեք ֆրանկ,— ասաց տիկին Թենարդիեն, շարունակելով այս թվերի միջից թերթն երգել.

Il le faut, disait un guerrier.

— Կտամ,— ասաց մայրը,— ութսուն ֆրանկ ունեմ: Ծննդավայրս վերադառնալու փող կմնա: Եթե ոտքով գնամ: Այնտեղ փող կվաստակեմ և հենց որ մի քիչ հավաքեմ՝ կվերադառնամ երեխայիս տեսնելու:

Տղամարդու ձայնը շարունակեց.

— Փոքրիկը հագուստներ ունի՞:

— Ամուսինս է,— նկատեց տիկին Թենարդիեն:

— Իհարկե, ունի, խեղճ գանձս: Իսկույն իմացա, որ ձեր ամուսինն է: Այն էլ լավ հագուստներ, հիանալի հագուստներ: Ամեն բան դյուրինով, և մետաքսե շրջագգեստներ՝ տիկնոջ պես: Այստեղ են, տոպրակում:

— Պետք է դրանք տալ,— շարունակեց մարդու ձայնը:

— Իհարկե, պետք է տամ,— ասաց մայրը:— Ծիծաղելի կլինեք, եթե երեխայիս մերկ հանձնեի:

Ամուսնու դեմքը երևաց:

— Շատ լավ,— ասաց նա:

Սակարկությունը վերջացավ: Մայրը գիշերն անցկացրեց պանդոկում, տվեց փողը և այդտեղ թողեց երեխային, կապեց արդեն փոքրացած ու թեթևացած տոպրակը և հաջորդ առավոտն իսկ մեկնեց՝ հուսալով շուտ վերադառնալ: Այսպիսի մեկնումները շուտ են կատարվում, բայց դրանք հուսահատություն են, քան թե մեկնում:

Թենարդիենների հարևանուհիներից մեկը հանդիպեց այդ մորը գնալիս, և վերադառնալով ասաց.

— Մի կին տեսա հիմա, այնպես էր լաց լինում փողոցում, սիրտս կտրտվեց:

Երբ Կոզետի մայրը մեկնեց, մարդն ասաց կնկան.

— Սրանով կվճարեմ հարյուր տասը ֆրանկի պարտքս, որի ժամկետը լրանում է վաղը: Պակասում էր հիսուն ֆրանկ: Կարող էի բողոքագիր ստանալ ու կատարածուի դիմավորել, գիտե՞ս: Երեխաներովդ հիանալի թակարդ ես լարել այդտեղ:

— Առանց գիտակցելու,— պատասխանեց կինը:

II

ԵՐԿՈՒ ՄՈՒԹ ԱՆՁԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ՈՒՐՎԱՆԿԱՐԸ

Թակարդն ընկած մուկը շատ նիհար էր, բայց կատուն հրճվեց նույնիսկ վտիտ մկան առթիվ:

Ուլքե՞ր էին Թենարդիենները:

Հենց այժմվանից մի երկու խոսք ասենք նրանց մասին, իսկ հետո կլրացնենք այդ ուրվանկարը:

Այս էակները պատկանում էին այն խորթ դասակարգին, որ կազմված է կոպիտ նորեկուկներից ու ձախողակ, բայց ուշիմ մարդկանցից և, որ համադրում է երկրորդների թերություններից մի քանիսը առաջինների գրեթե բոլոր մոլությունների հետ՝ չունենալով բանվորի մեծահոգի թոխքը և ոչ էլ քաղքենու պարկեշտ կարգապահությունը:

Այս գաճաճ մարդկանցից շատերը հեշտությամբ ճիվաղային են դառնում, երբ որևէ աղոտ կրակ պատահաբար ջերմացնում է նրանց: Կնոջ մեջ կար գռեհիկի հոգին, իսկ մարդու մեջ՝ սինլքորի ցնցոտին: Երկուսն էլ վերին աստիճանի ընդունակ էին այն զզվելի առաջադիմությանը, որով մարդը դիմում է դեպի չարությունը: Կան այնպիսի արարածներ, որ խեղճեցեղանների նման շարունակ նահանջում են ետ՝ դեպի խավարը, որոնք կյանքում ավելի շուտ հետադիմում են, քան թե առաջանում, կյանքի փորձառությունն օգտագործում են իրենց այլանդակությունն ավելացնելու, անընդհատ վատանալու համար և ավելի ու ավելի ծածկվում հարաճուն սևությանը: Այդ մարդն ու կինը այս արարածներից էին:

Թենարդիեն առանձնապես ճնշող էր դիմագետի համար: Կան որոշ մարդիկ, որոնց վրա նայելն իսկ բավական է չվստահելու համար, որովհետև զգում ես, որ ոտից-գլուխ մութ արարածներ են: Նրանք հետևիցանհանգիստ են, իսկ առջևից՝ սպառնական: Նրանց մեջ անծանոթ բան կա: Չես կարող պատասխանատու լինել նրանց արածին, ոչ էլ անելիքին: Նրանց հայացքի մեջ եղած ստվերը մատնում է նրանց: Բավական է միայն լսել նրանց մի խոսքը կամ տեսնել արած շարժումը՝ անմիջապես կնշմարես նրանց անցյալի մթին գաղտնիքները կամ ապագայի մոայլ խորհուրդները:

Այս Թենարդիեն, եթե հավատանք նրան, զինվոր էր եղել. սերժանտ, ասում էր ինքը, հավանաբար մասնակցել էր 1815 թվականի պատերազմին և ըստ երևույթին բավական քաջություն էր հայտնաբերել: Հետագայում կոտեսենք, թե ինչ էր եղել: Նրա պանդոկի ցուցատախտակը անձնական սխրագործություններից մեկն էր ակնարկում: Այդ ցուցանակն ինքն էր նկարել, քանի որ ամեն բան կարող էր անել՝ թեև վատ:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ հին, դասական վեպը, որ սկզբում «Կլեյիան» էր, դարձել էր արդեն «Լոդոյսկան», միշտ էլ ազնիվ, բայց հետզհետե գոեհկացող և օրիորդ դը Սկյուդերիից հասել էր տիկին Բուրնոն Մալարմին, տիկին դը Լաֆայետից՝ տիկին Բարթելեմի-Հագոյին¹²⁰

և հրդեհում էր Փարիզի դոնապանուհիների սիրատուչոր հոգին մի քիչ էլ ավերածություններ էր կատարում նույնիսկ արվարձաններում: Տիկին Թենարդիեն ճիշտ այնքան գրագետ էր, որ կարողանում էր այսպիսի վեպեր կարդալ: Դրանցով էլ նա սնվում էր: Իր ունեցած ողջ ուղեղը նա խորասուզում էր դրանց մեջ և այս հանգամանքը, երբ նա ջահել էր, նույնիսկ հետո էլ՝ մի տեսակ մտածկոտ կեցվածք էր տվել նրան իր ամուսնու մոտ. իսկ ամուսինը որոշ խորություն ունեցող մի սրիկա, հազիվ գրաճանաչ մի անառակ, կոպիտ, բայց խորամանկ մի մարդ էր, իսկ սենտիմենտալիզմի բնագավառում կարդում էր Պիգո-Լբրյոն և այն ամենի նկատմամբ, որ «վերաբերում էր իգական սեռին», ինչպես ինքն էր ասում իր բարբառով, կատարյալ ու անխառն անասուն էր: Նրա կինը տասներկու-տասնհինգ տարով իրենից փոքր էր: Ավելի ուշ, երբ վիպականորեն սփռվող մագերն սկսեցին սպիտակել և Պամելան¹²¹ վերածվեց մեգերայի¹²², Թենարդուհին դարձավ հիմար վեպեր ճարակած մի չաղ ու չար կին: Բայց այս անմտություններն անպատիժ կերպով չեն կարդացվում: Դրա հետևանքն այն եղավ, որ նրա մեծ աղջիկն անվանվեց Էպոնին, իսկ խեղճ փոքրը քիչ մնաց կրեթ Գյուլնարա անունը և միայն Դյուկրեյ-Դյումինելի վեպերից մեկի բարեբաստիկ հեղաշրջումով նա վերանվանվեց Ազելմա:

Բայց և այնպես, անցողիկ կերպով ասենք, որ ամեն բան ծիծաղելի ու մակերեսային չէ այդ հետաքրքրական ժամանակաշրջանում, որը մենք այստեղ ակնարկում ենք և, որը կարելի է կոչել անունների անարխիա: Մեր նշած վիպական տարրի կողքին կա նաև սոցիալական մոմենտ: Այժմ հազվադեպ չէ, որ եզնարած պատանին կրի Արթուր, Ալֆրեդ կամ Ալֆոնս անունը, իսկ դերկոմսը (եթե դեռ դերկոմսեր կան) կրի Թոմաս, Պետրոս կամ Հակոբ անունը: Այս տեղափոխությունը, որ «նրբաճաշակ» անունը դնում է պլեբեյին և գեղջկական անունն արիստոկրատին՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ հավասարվելու միտող հակահոսանք: Նոր հոսանքի անդիմադրելի ներթափանցումն է դա, ինչպես և այլ տեղեր: Այս արտաքին աններդաշնակության տակ մի խոշոր ու խոր բան կա՝ ֆրանսիական հեղափոխությունը:

III

ԱՐՏՈՒՅՏԸ

Չար լինելը բավական չէ բարգավաճելու համար: Ճաշարանի գործերը վատ էին:

¹²⁰ Հիշատակված չորս կանայք էլ 17—18-րդ դդ. երկրորդական գրողներ են: Ավելի արժեքավոր են օրիորդ դը Սկյուդերին և տիկին դը Լաֆայետը:

¹²¹ Կամ «Վարձատրված առաքինություն» — անգլիացի գրող Ռիչարդսոնի (1689—1761) բարոյախոսությամբ ու զգայնությամբ լի վեպի հերոսուհին:

¹²² Կատաղի, մոլեգին կին (դիցաբանական անունից է առաջանում):

Ֆանտիմի հիսունյոթ ֆրանկի շնորհիվ Թենարդիեն զերծ մնաց բողոքագրից և հարգեց իր ստորագրությունը։ Մյուս ամսին նրանք նորից փողի կարիք ունեցան և կինը Փարիզ գնաց ու Կոզետի հագուստները գրավատուն դնելով՝ վաթսուս ֆրանկ ստացավ։ Հենց որ այս գումարն էլ ծախսվեց՝ Թենարդիենները վարժվեցին այդ փոքրիկ աղջկան նկատել որպես գթասիրաբար իրենց մոտ վերցրած մի երեխա և ըստ այնմ էլ սկսեցին վերաբերվել նրան։ Եվ որովհետև նա այլևս զրկվել էր իր հագուստներից՝ նրան հագցրին փոքր Թենարդիենների հին շրջագգեստներն ու հին շապիկները, այսինքն՝ ցնցոտիներ։ Սկսեցին կերակրել նրան բոլորի կերածի մնացորդներով, շան կերածից քիչ լավ և կատվի կերածից ավելի վատ։ Առանց դրա էլ շունն ու կատուն նրա սովորական սեղանակիցներն էին։ Կոզետն ուտում էր նրանց հետ՝ սեղանի տակ, փայտե ամանում, ինչպես շանն ու կատվինն էր։

Մայրը, ինչպես հետո կտեսնենք, հաստատվել էր Մոնտրոյ-սյուռ-Մեռում և ամեն ամիս գրում էր, ավելի ճիշտ, գրել էր տալիս՝ իր երեխայից լուր ստանալու համար։ Թենարդիեններն անփոփոխ կերպով պատասխանում էին՝ Կոզետը սքանչելի դրության մեջ է։

Առաջին վեց ամիսն անցնելուց հետո մայրը յոթ ֆրանկ ուղարկեց յոթերորդ ամսվա համար և բավական կանոնավոր կերպով շարունակեց ամսեամիս ուղարկել։ Տարին դեռ չէր վերջացել, երբ Թենարդիենն ասաց.

— Մի մեծ շնորհ է մեզ անում, ի՞նչ է ուզում այդ կինը, որ մենք անենք նրա յոթ ֆրանկով։

Եվ մի նամակ գրելով պահանջեց տասներկու ֆրանկ։ Մայրը, որին համոզում էին, թե երեխան երջանիկ է և «քաջառողջ»՝ համակերպվեց և ուղարկեց տասներկու ֆրանկ։

Որոշ բնավորություններ չեն կարող սիրել՝ առանց մյուս կողմից էլ ատելու։ Մայր Թենարդիեն կրքոտ կերպով սիրում էր իր երկու աղջիկներին, որի պատճառով էլ ատեց օտար աղջկան։ Թախծալի է խորհել, որ մոր սիրտը կարող է այդպիսի տգեղ պատկեր ունենալ։ Այնքան քիչ տեղ, որ Կոզետն էր բռնում նրա մոտ, նրան թվում էր, թե դա վերցվում է յուրայիններից և, որ այդ փոքրիկ աղջիկը նվազեցնում է իր աղջիկների շնչած օդը։ Այս կինը, ինչպես նաև նրա նման բազմաթիվ կանայք, գուրգուրանքի, հարվածների ու հայհոյանքների մի-մի պաշար ունեն, որ ծախսում էր ամեն օր։ Եթե Կոզետը չլիներ, անկասկած է, որ նրա աղջիկները, ինչքան էլ պաշտեր նրանց՝ կստանային այդ բոլորը, բայց օտար աղջիկն այն ծառայությունը մատուցեց, որ այդ հարվածները շուտ տվեց իր վրա։ Նրա աղջիկներն ստացան միմիայն փաղաքշանքը։ Կոզետը չէր կարող որևէ շարժում անել՝ առանց գլխին տեղացնելու մոլեգին ու անտեղի պատիժների կարկուտ։ Այդ քաղցրիկ էակը, որ ոչինչ չպետք է հասկանար ոչ աշխարհից և ոչ էլ աստծուց, անվերջ պատժվում էր, կշտամբվում, չարչարվում ու ծեծվում և տեսնում էր իր կողքին իր նման երկու փոքր արարածներ, որոնք ապրում էին արշալույսի շողերում։

Մայր Թենարդիեն չար էր Կոզետի նկատմամբ, Էպոնինն ու Ազելման էլ չար եղան։ Երեխաներն այդ տարիքին ոչ այլ ինչ են, եթե ոչ մոր ընդօրինակությունը։ Միակ տարբերությունը ծավալի փոքրությունն է։

Մի տարի անցավ, ապա երկրորդը։

Գյուղում ասում էին.

— Թենարդիեններն ազնիվ մարդիկ են։ Իրենք հարուստ չեն, բայց պահում են իրենց մոտ լքված մի խեղճ երեխա։

Կարծում էին, որ Կոզետի մայրը մոռացել է նրան:

Սակայն Թենարդիեն չգիտես ինչ մութ ճանապարհներով իմանալով, որ երեխան հավանաբար ապօրինի կապի հետևանք է և մայրը չի կարող խոստովանել այն՝ ամսական տասնհինգ ֆրանկ պահանջեց, ասելով, որ «այդ արարածն» աճում է և շատ ուտում, սպառնալով նաև հետ ուղարկել: «Թող զահլես չտանի,— բացականչեց նա,— նրա երեխային կշարտեմ իրեն՝ և իր խայտառակությունները կհայտնեմ բոլորին: Ինձ հավելում է պետք»: Մայրը վճարեց տասնհինգ ֆրանկ:

Տարեցտարի երեխան մեծացավ, մեծացավ նաև նրա թշվառությունը:

Քանի դեռ Կոզետը խիստ փոքր էր, մյուս երկուսի ծաղրածանակի նշավակն էր. բայց հենց որ մի քիչ աճեց՝ այսինքն նույնիսկ հինգ տարեկան դեռ չդարձած, տան աղախինը դարձավ:

Հինգ տարեկան, կարող են ասել, անհավանական է: Ավաղ, ճիշտ է: Մոցիալական տառապանքն սկսվում է յուրաքանչյուր տարիքից: Մի թե վերջերս չէր, որ մենք ականատես եղանք ոմն Դյումուլարի դատին: Այդ մարդը որք է եղել և դարձել է բանդիտ, և ինչպես պաշտոնական փաստաթղթերն են ասում, հինգ տարեկան հասակից աշխարհում մենակ լինելով՝ «աշխատում էր ապրելու համար, այսինքն գողություն էր անում»:

Կոզետին ստիպեցին որոշ հանձնարարություններ կատարել. ավել սենյակները, բակը, փողոցը, լվալ ճաշի պարագաները և նույնիսկ բեռներ կրել: Թենարդիենները կարծեցին, որ առավել ևս իրավունք ունեն այդպես վարվելու, քանի որ Ֆանտինը շարունակելով Մոնտրոյ-սյուռ-Մեռում մնալ՝ սկսեց վատ վճարել: Մի քանի ամիս մնաց առկախ:

Եթե մայրը այդ երեք տարին անց վերադառնար Մոնֆերմեյ՝ բնավ չէր ճանաչի իր երեխային: Կոզետը, որ այնքան սիրուն ու թարմ էր այդ տունը գալու օրը, այժմ նիհարել էր, բոլորովին դեղնել: Նա մի տեսակ անհանգիստ տեսք էր ստացել:

— Ծածկամիտ է,— ասում էին Թենարդիենները:

Անարդարությունը նրան դյուրագրգիռ էր դարձրել, իսկ թշվառությունը՝ տգեղ: Միայն գեղեցիկ աչքերն էին մնացել նրան, որոնք կսկիծ էին առաջացնում, որովհետև մնալով նույնքան մեծ, կարծես լցվել էին ամենամեծ տխրությամբ:

Սրտաճմլիկ պատկեր էր ներկայանում, երբ տեսնում էիր այդ խեղճ երեխային, որ դեռ վեց տարեկան էլ չէր, ձմռանը, իր հին, ծակծկված կտավե ցնցոտիների մեջ դողդողալով, լուսաբացից առաջ, մի հսկայական ցախավել փոքրիկ ու կարմրած ձեռքին և խոշոր աչքերում արցունքներ լճացած՝ փողոցն ավելելիս:

Գյուղում նրան անվանում էին Արտույտ: Ժողովուրդը, որ պատկերներ է սիրում՝ հարմար էր գտել այդ անունը տալ փոքր էակին, թռչունից ոչ ավելի մեծ, դողդոջուն ու վախեցած մանկիկին, որ ամեն առավոտ այդ տան և ողջ գյուղի ամենից շուտ արթնացողն էր և միշտ էլ լուսաբացից առաջ լինում էր փողոցում կամ դաշտերում:

Միայն թե խեղճ արտույտը բնավ չէր երգում:

Գիրք հինգերորդ

ՎԱՅՐԷԶՔ

I

ՄԵՎ ՈՒԼՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բայց ի՞նչ եղավ այդ մայրը, որ ըստ Մոնֆերմեյի բնակիչների խոսակցության, կարծես լքել էր իր երեխային. ո՞ր էր նա, ի՞նչ էր անում:

Իր փոքրիկ Կոզետին Թենարդիենների մոտ թողնելուց հետո նա շարունակել էր ճանապարհը ու հասել Մոնտրոյ-սյուռ-Մեռ:

Դա, ինչպես գիտենք, 1818 թվականին էր:

Տասը տարի էր, ինչ Ֆանտինը հեռացել էր իր գավառից: Մոնտրոյ-սյուռ-Մեռի տեսքը փոխվել էր և մինչ Ֆանտինը դանդաղորեն թշվառությունից թշվառություն էր գլորվում՝ նրա հայրենի քաղաքը բարգավաճել էր:

Մոտ երկու տարի էր, որ այդտեղ տեղի էր ունեցել արդյունաբերական այն դեպքերից մեկը, որ փոքր բնակավայրերի մեծ դեպքերն են հանդիսանում:

Սա կարևոր մանրամասնություն է և մենք կարծում ենք, որ օգտակար է այն զարգացնել, նույնիսկ կասեինք, որ պետք է ընդգծել:

Անհիշելի ժամանակներից ի վեր Մոնտրոյ-սյուռ-Մեռի առանձնահատուկ արդյունաբերությունը անգլիական գազատների և գերմանական սև ուլունքեղենի նմանագործությունն էր: Այս արդյունաբերությունը միշտ էլ մի կերպ քարշ էր տվել իր գոյությունը, շնորհիվ հումքի թանկության, որն ազդում էր աշխատավարձի վրա: Այն միջոցին, երբ Ֆանտինը Մոնտրոյ-սյուռ-Մեռ վերադարձավ՝ մի անլուր ձևափոխություն էր կատարվել այդ «սևմանրուքների» արտադրության մեջ: 1815 թվականին մի անձանոթ մարդ էր եկել հիմնվելու այդ քաղաքում և միտք էր հղացել արդյունաբերության մեջ բուսախեժը փոխարինել կնքախեժով և մասնավորապես ապարանջանների պատրաստության մեջ գոդված օղակները փոխարինեց պարզապես իրար մոտեցված օղակներով: Այս փոքր փոփոխությունը մի ամբողջ հեղաշրջում էր առաջացրել:

Այս խիստ փոքր փոփոխությունն իսկապես չափազանց իջեցրել էր հումքի արժեքը, մի բան, որ ամենից առաջ հնարավորություն էր տվել բարձրացնել աշխատավարձը, — բարեգործություն երկրի համար, երկրորդ՝ բարելավել արտադրանքի որակը, — առավելություն սպառողի համար, երրորդ՝ շահը եռապատկելով հանդերձ ավելի էժան ծախել — օգուտ արդյունաբերողին:

Այսպիսով, մի մտքից երեք հետևանք էր առաջացել:

Ավելի պակաս, քան երեք տարում, այս կատարելագործության հեղինակը հարստացել էր, որը լավ բան է, քանի որ իր շրջապատն էլ հարստացրել էր, որն ավելի լավ բան է: Նա այդ դեպարտամենտում օտարական էր և նրա ծագման մասին ոչինչ չգիտեին, իսկ գործունեության սկզբնավորության մասին՝ շատ քիչ բան:

Պատմում էին, որ նա շատ քիչ փողով, ամենաշատը մի քանի հարյուր ֆրանկով էր եկել այդ քաղաքը:

Այս նիհար կապիտալով էր, որ նա հարստացել էր և հարստացրել իր երկիրը՝ ի սպաս դնելով այն մի տաղանդավոր գաղափարի և բեղմանավորելով այն կարգուկանոնով ու իմաստուն կառավարությամբ:

Մոնտրոյ-սյուռ-Մեռ հասնելիս նա հագել էր բանվորի հագուստներ և ուներ բանվորի շարժումներ ու խոսակցության եղանակ:

Պարզվում է, որ հենց այն օրը, երբ նա դեկտեմբերյան մի երեկո պայուսակը մեջքին և փշենի ձեռնափայտը ձեռքին, սուսիկ-փուսիկ մտնում էր Մոնտրոյ-սյուռ-Մեռ փոքրիկ քաղաքը՝ մի մեծ հրդեհ էր ծագել քաղաքատանը: Այդ մարդը նետվել էր կրակի մեջ և իր կյանքը վտանգելու գնով փրկել էր երկու երեխա, որոնք, ինչպես պարզվեց, ժանդարմերիայի կապիտանի երեխաներն էին, մի հանգամանք, որ առիթ էր ծառայել այլևս չհետաքրքրվելու նրա անցագրով:

Այդ օրվանից հետո իմացել էին նրա անունը. նա կոչվում էր Հայր Մադլեն:

II

ՄԱՂԼԵՆ

Նա մոտ հիսուն տարեկան մի մարդ էր, գերգաղված տեսք ուներ, բարի էր: Ահա այն ամենը, որ կարող էին ասել նրա մասին:

Շնորհիվ այդ արդյունաբերության արագ առաջադիմության, մի բան, որ այնքան հիանալիորեն նա վերակառուցել էր, Մոնտրոյ-սյուռ-Մեռը դարձել էր գործարքային նշանակալի կենտրոն:

Իսպանիան, որ մեծքանակությամբ սև գազատ է սպառում՝ ամեն տարի խոշոր պատվերներ էր տալիս այդտեղ և Մոնտրոյ-սյուռ-Մեռը այս ապրանքի առևտրով գրեթե մրցում էր Լոնդոնի և Բեռլինի հետ: Հայր Մադլենի շահն այնքան էր, որ հենց երկրորդ տարվանից էլ նա կարողացել էր մի խոշոր ֆաբրիկա կառուցել, որտեղ երկու ընդարձակ արհեստանոց կար, մեկը տղամարդկանց, մյուսը կանանց համար: Որևէ քաղցած մարդ կարող էր ներկայանալ այնտեղ և վստահ լինել, որ աշխատանք ու հաց կգտնի: Հայր Մադլենը տղամարդկանցից պահանջում էր բարի կամեցողություն, կանանցից՝ մաքուր բարք, իսկ բոլորից՝ ուղղամտություն: Արհեստանոցները նա բաժանել էր՝ կանանց ու տղամարդկանց առանձնացնելու համար և որպեսզի աղջիկներն ու կանայք ողջախոհ մնան: Այս հարցում նա անողոք էր և դա միակ կետն էր, ուր նա որոշ չափով աններող էր: Ավելի խստություն էր ցուցաբերում այս հարցում նաև այն պատճառով, որ Մոնտրոյ-սյուռ-Մեռը կայագորային քաղաք էր, որով և գայթակղության առիթները շատ առատ էին: Եվ սակայն նրա այդ քաղաք գալը բարերար էր, իսկ նրա ներկայությունը՝ նախախնամություն: Հայր Մադլենի գալուց առաջ երկրում ամեն բան ուժասպառ էր, իսկ այժմ ամենքն էլ ապրում էին աշխատանքային առողջ կյանքով: Ուժեղ շրջանառությունը աշխուժացնում էր ամեն ինչ և թափանցում ամեն տեղ: Գործազրկությունն ու թշվառությունը մոռացվել էին: Չկար որևէ չքավոր գրպան, ուր մի քիչ փող չլիներ, չկար որևէ աղքատիկ բնակարան, ուր մի քիչ ուրախություն չլիներ:

Հայր Մադլենը բոլորին էլ աշխատեցնում էր: Նա միայն մի բան էր պահանջում. «Պարկեշտ մարդ եղեք, պարկեշտ աղջիկ եղեք»:

Ինչպես ասացինք, այս գործունեության ընթացքում, որի պատճառն ու առանցքն էր հայր Մաղլենը, նա իր հարստությունն էր ավելացնում, բայց բոլորովին չէր երևում, որ նրա նպատակը հարստանալն էր, մի բան, որ զարմանալի էր առևտրով զբաղվող մարդու համար: Թվում էր, որ նա շատ ավելի ուրիշների, քան թե իր համար էր մտածում: 1820 թվականին գիտեին, որ վեց հարյուր երեսուն հազար ֆրանկ է պահ տվել Լաֆիտին, բայց նախքան այդ վեց հարյուր երեսուն ֆրանկը պահելը՝ մեկ միլիոն ֆրանկից ավելի նա ծախսել էր քաղաքի ու աղքատների համար:

Հիվանդանոցը վատ դրության մեջ էր. նա իր հաշվին տասը մահճակալ էր դնել տվել այդտեղ: Մոնտրոյ-այուտ-Մեռը բաժանված է վերին և ներքին քաղաքների: Ներքին քաղաքը, ուր նա ապրում էր, սոսկ մի դպրոց ուներ, մի ողորմելի խարխուլ ու քանդվող շենք. նա երկու դպրոց էր շինել, մեկը տղաների, մյուսը աղջիկների համար: Երկու ուսուցչի նա թոշակ էր տալիս՝ կրկնակի ավելի նրանց պաշտոնական ռոճիկից և մի օր նա հետևյալ պատասխանը տվեց մի մարդու, որ զարմացել էր այդ երևույթի վրա. «Պետության առաջին երկու պաշտոնյաները ստնտուն և ուսուցիչն են»: Իր ծախսով նա մի ապաստարան էր հիմնել, անձանոթ երևույթ այդ ժամանակվա Ֆրանսիայի համար և մի օգնության դրամարկը՝ ծեր ու անկարող բանվորների համար: Նրա ֆաբրիկան կենտրոնն էր այն թաղամասի, որ արագությամբ ստեղծել էին չքավոր ընտանիքները: Այստեղ նա մի ձրի դեղատուն էր հիմնել:

Սկզբում, երբ նա նոր էր սկսում այդ գործը, բարեհոգի մարդիկ տեսնելով դա, ասում էին. «Ձեռներեց մարդ է և ուզում է հարստանալ»: Երբ տեսան, որ հարստացնում է երկիրը ու ինքն էլ է հարստանում, միևնույն բարեմիտ մարդիկ ասացին. «Փառասեր է»: Սա էլ ավելի հավանական էր թվում այն պատճառով, որ այդ մարդը հավատացյալ էր և որոշ չափով էլ ցույց էր տալիս դա, մի բան, որ լավ երևույթ էր նկատվում այդ ժամանակ: Ամեն կիրակի կանոնավորապես գնում էր պատարագ լսելու: Տեղական պատգամավորը, որ ամեն տեղ մրցակիցներ էր տեսնում՝ շատ չանցած անհանգստացավ այս բարեպաշտությունից: Այս պատգամավորը, որ կայսրության օրենսդիր ժողովի անդամ էր եղել՝ համամիտ էր Օտրանտի դուքս, Ֆուշե անունով ծանոթ մի հոգևորականի կրոնական հայացքներին, որի ձեռնասունն էր եղել ու բարեկամը: Փակ տեղերում նա կամացուկ ծիծաղում էր ասածն վրա, բայց երբ տեսավ, որ հարուստ ֆաբրիկանտ Մաղլենը գնում էր ժամը յոթի պատարագին՝ հնարավոր թեկնածու նշմարեց նրա մեջ և որոշեց գերազանցել նրան: Մի ճիզվիտ խոստովանահայր ընտրեց և սկսեց պատարագին ու եկեսցեին եկեղեցի գնալ: Այդ դարաշրջանում փառասիրությունը, բառի լայն առումով, նպատակակետ էր: Աղքատներն ու աստված օգտվեցին այս ահաբեկումից, որովհետև հարգելի պատգամավորն էլ հիվանդանոցում երկու մահճակալ հիմնեց, որով դարձան տասներկու:

Սակայն 1819 թվականին մի օր քաղաքում լուր տարածվեց, որ նահանգապետի հանձնարարությամբ, նկատի առնելով երկրին մատուցած ծառայությունները, թագավորը հայր Մաղլենին Մոնտրոյ-այուտ-Մեռի քաղաքապետ է նշանակելու: Նրանք, ովքեր այդ նորեկին հայտարարել էին «փառասեր»՝ անմիջապես բռնեցին այս առիթը, թե ամենքն էլ ասում են. «Հը՞, մեր ասածը ճշտվե՞ց»: Ողջ Մոնտրոյ-այուտ-Մեռն իրարանցման մեջ էր: Լուրը ճիշտ էր: Մի քանի օր հետո նշանակումը տպվեց «Մոնիտորում»: Հաջորդ օրը հայր Մաղլենը հրաժարվեց այդ պաշտոնից:

Այդ միևնույն 1819 թվականին Մաղլենի հնարած եղանակով պատրաստված արտադրանքները ցուցադրվեցին արդյունաբերական ցուցահանդեսում, ըստ որում, ժյուրիի գեկուցագրի հիման վրա, թագավորը ցուցատարարին պատվով լեգեոնի ասպետ կարգեց: Մի նոր իրարանցում քաղաքում: «Պարզ է, շքանշանի էր ձգտում»: Հայր Մաղլենը հրաժարվեց խաչից:

Այդ մարդը վճռականապես հանելուկ էր: Բարեհոգի մարդիկ եզրափակեցին՝ հայտարարելով.
«Վերջիվերջո ավանտյուրիստի մեկն է»:

Ինչպես տեսանք, երկիրը նրան շատ բան էր պարտական, իսկ աղքատները՝ ամեն բան: Նա այնքան օգտակար մարդ էր, որ պետք էր մեծարել նրան, մանավանդ բանվորները, որ պաշտում էին նրան, և նա կրում էր այդ պաշտամունքը մի տեսակ մելամաղձոտ լրջությամբ: Երբ հաստատվեց, որ նա հարուստ է, «հասարակության անդամներն» սկսեցին բարևել նրան և քաղաքում սկսեցին պարոն Մադլեն անվանել, բայց նրա բանվորներն ու երեխաները շարունակեցին հայր Մադլեն կոչել, և այդ հանգամանքը նրան ավելի դուրեկան էր: Ինչքան նրա դիրքը բարձրանում էր, այնքան շատ հրավերներ էին տեղում: «Հասարակությունը» պահանջում էր նրան: Մոնտրոյ-սյուռ-Մեռի վերևում ճախրող սալոնները, որ առաջին շրջանում, պարզ է, փակվեցին այդ արհեստավորի առջև, լայն բացվեցին միլիոնատիրոջ առջև: Հազարավոր նախաքայլեր արվեցին, բայց նա մերժեց:

Այս անգամ էլ բարեհոգիները չկարողացան զսպել իրենց. «Տգետ ու ցածր կրթության տեր մարդ է: Ինչ գիտես, թե որտեղից է դուրս եկել: Հավանաբար չպիտի կարողանար հասարակության մեջ պահել իրեն: Ապացուցված էլ չէ, որ նա կարդալ գիտե»:

Երբ տեսան, որ նա փող է շահում, ասացին. «Վաճառական է»: Երբ տեսան, որ փողը շաղ է տալիս, ասացին. «Ավանտյուրիստ է»: Երբ տեսան, որ վանում է բարձր դասը, ասացին. «Անտաշի մեկն է»:

1820 թվականին, Մոնտրոյ-սյուռ-Մեռ հասնելուց հինգ տարի հետո, երկրին մատուցած նրա ծառայություններն այնքան պերճախոս էին և բնակչության ցանկությունն այնքան միատարր էր, որ թագավորը նորից քաղաքապետ նշանակեց նրան: Նա դարձյալ հրաժարվեց, բայց նահանգապետը դիմադրեց նրա հրաժարականին, երկրի բոլոր երևելիները եկան խնդրելու նրան, ժողովուրդը փողոցի մեջտեղը աղերսում էր և պնդումն այնքան ջերմագին էր, որ նա ստիպված ընդունեց: Նկատեցին սակայն, որ նրան վճռական դարձնողը՝ իր տան շեմքից աշխուժությամբ բացականչող մի հասարակ պառավի հետևյալ նկատողությունն էր. «Լավ քաղաքապետն օգտակար բան է: Մի թե կարելի է հրաժարվել այն լավությունից, որ կարող ես անել»:

Նրա բարձրանալու երրորդ փուլն էր դա: Հայր Մադլենը դարձել էր պարոն Մադլեն, պարոն Մադլենը դարձավ պարոն քաղաքապետ:

III

ԼԱՖԻՏԻՆ ՊԱՆՏՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Իմիջիայլոց, նա մնացել էր նույնքան պարզ, ինչքան առաջին օրը: Նրա մազերն ալեխառն էին, հայացքը լուրջ, դեմքը բանվորի արևակեզություն և փիլիսոփայի խոհունություն ուներ: Սովորաբար կրում էր լայնեզր գլխարկ ու մինչև կզակը կոճկած սև չուխայի երկար ռեդենգոտ: Կատարում էր քաղաքապետի իր պարտականությունը, իսկ դրանից դուրս մենակյաց էր ապրում և քչերի հետ էր խոսակցում, խոսափում էր մեծարանքներից, կողմնակի էր բարևում, արագ հեռանում, ժպտում էր զրուցելուց ազատվելու համար և մի բան էր տալիս՝ ժպտալուց ազատվելու համար: Կանայք նրա մասին ասում էին. «Ի՛նչ բարի արջ է»: Նրա հաճույքը դաշտերում զբոսնելն էր:

Միշտ միայնակ էր ճաշում և իր առջև դրած գիրքը կարդում: Մի փոքր, բայց լավ ընտրված գրադարան ուներ և սիրում էր գրքերը. գրքերն ապահով ու սառն բարեկամներ են: Ինչքան որ

հարստության հետ ավելանում էին և ազատ ժամերը, թվում էր, որ նա այդ ժամերն օգտագործում էր իր միտքը մշակելու համար: Այն օրվանից, ինչ նա Մոնտրոյ-այտու-Մեռում էր, նկատել էին, որ տարեցտարի նրա լեզուն ավելի քաղաքավարի, ավելի ընտիր ու քաղցր էր դառնում:

Զբոսանքների ժամանակ նա սիրով հրացան էր վերցնում իր հետ, բայց շատ քիչ էր գործածում: Իսկ երբ պատահաբար կրակում էր, այնպիսի անվրեպ նշան էր խփում, որ ականատեսները սարսափում էին: Երբեք որևէ անվնաս կենդանի չէր սպանում և ոչ մի փոքր թռչուն չէր որսում:

Թեև նա արդեն երիտասարդ չէր, բայց պատմում էին, որ զարմանալի ուժի տեր է: Անմիջապես ձեռքը կարկառում էր՝ ով դրա կարիքն ուներ, բարձրացնում էր ընկած ձին, դուրս էր հանում ցեխի մեջ խրված անիվը և կոտորներից բռնելով կանգնեցնում էր կապից փախած ցուլը: Դուրս գալիս գրպանները միշտ էլ լի էին լինում դրամով, իսկ վերադարձին՝ դատարկ: Որևէ գյուղից անցնելիս ցնցոտիներ հազած երեխաներն ուրախ-զվարթ վազում էին նրա ետևից ու շրջապատում մժեղների պարսի նման:

Կարծես գուշակում էին, որ ժամանակով նա դաշտերի կյանքով է ապրել, որովհետև միշտ էլ մի օգտակար գաղտնիք էր իմանում ու սովորեցնում գյուղացիներին, օրինակ ցորենի ցեղը բնաջնջելու համար հանձնարարում էր սովորական աղի ջրով ցողել ամբարը, իսկ տախտակամածի ճեղքերում լիովի աղաջուր լցնել. ուտիճներին հալածելու համար ամենուրեք, պատերից ու առաստաղից, խոտհարքում ու տներում ծաղկած եղեսպակ դնել. ուներ նաև «դեղատոմսեր» որևէ արտից ստնիճը, վիզը, երիցանուկը և դրանց նման՝ ցորենը խեղդող մոլախոտերը ջնջելու համար. ճագարանոցը պաշտպանում էր խոշոր մկներից՝ պարզապես ծովախոզիկի հոտն այնտեղ թողնելով:

Մի անգամ նա տեսավ, որ գյուղացիները խիստ զբաղված են եղինջ արմատախիլ անելով, նայեց նա այդ պոկված և արդեն չորացած բույսի դեզին ու ասաց.

— Դրանք մեռած են. սակայն կարող էիք օգտագործել, եթե իմանայիք ինչ պետք է անել: Երբ եղինջը դալար է, նրա տերևը հիանալի բանջար է, իսկ ծերանալուց հետո վուշի ու կանեփի պես թելեր ունի: Եղինջի կտավը կանեփի կտավին հավասար է: Զարդված եղինջը լավ է հավերի, իսկ մանրվածը՝ եղջերավոր անասունների համար: Եղինջի հունդերը չոր կերին խառնելով, կենդանիների բուրդը փայլ կստանա, իսկ արմատն աղին խառնելով՝ կարելի է գեղեցիկ դեղնագույն ստանալ: Բացի դրանից դա հիանալի կեր է և կարելի է երկու անգամ քաղել: Իսկ ի՞նչ է պետք եղինջին. մի քիչ հող, ոչ մի խնամք և ոչ մի մշակում. միայն թե հունդը հենց որ հասնում է, թափվում է և դժվար է հավաքել: Այս է բոլորը: Եթե մի քիչ հոգնություն հանձն առնեն, եղինջը օգտակար կդառնա. մինչդեռ արհամարհում են, այն դառնում է վնասակար և այդ ժամանակ սպանում են: Քանի-քանի մարդիկ նմանում են եղինջին:— Մի փոքր լռելուց հետո ավելացրեց. — Բարեկամներս, մի մոռացեք, որ ոչ վատ խոտեր կան, ոչ էլ վատ մարդիկ: Կան միայն վատ մշակողներ:

Երեխաները նրան սիրում էին նաև այն պատճառով, որ նա կարողանում էր շատ ձողոտներից ու հնդկընկույզից գեղեցիկ փոքրիկ բաներ շինել:

Երբ նա տեսնում էր, որ որևէ եկեղեցու դուռ սևով է պատված՝ ներս էր մտնում. վազում էր թաղման այնպես, ինչպես ուրիշները վազում են կնունքի: Ուրիշի այրիանալը և դժբախտությունը քաջում էին նրան, որովհետև քաղցրաբար խառնվածք ուներ: Նա խառնվում էր սգացող բարեկամներին, սևեր հագած հարազատներին և դազաղի շուրջ հեծեծող քահանաներին: Կարծես թե հաճությամբ իր խոհերի նյութ էր դարձնում մի այլ աշխարհի տեսիլքով լի այդ մահերգային սաղմոսերգությունը: Հայացքը երկնքին հառած և դեպի անհունի գաղտնիքներն ուղղված ներշնչմամբ, նա լսում էր մահվան խավար անդունդի եզրին երգվող այդ տխրագին ձայները:

Բազմաթիվ բարի գործեր էր կատարում նա թաքնվելով, ինչպես թաքնվում են վատ գործ կատարելիս: Երեկոները նա գաղտագողի մտնում էր տները և փախստականի նման բարձրանում սանդուղքներով: Որևէ խեղճ մարդ իր աղքատիկ տունը վերադառնալիս նկատում էր, որ դուռը իր բացակայության միջոցին բացել են, երբեմն նույնիսկ բռնի բացել: Խեղճ մարդը բացականչում էր. «Որևէ չարագործ է եկել»,— ներսեր մտնում և առաջին բանը, որ տեսնում էր՝ կարասիներից մեկի վրա մոռացված ոսկեդրամն էր: Ներս մտած «չարագործը» հայր Մադլենն էր:

Նա քաղցրաբարո էր ու տխուր: Ժողովուրդն ասում էր. «Ահա մի հարուստ մարդ, որ հպարտ տեսք չունի: Ահա մի երջանիկ մարդ, որ գոհ դեմք չունի»:

Ումանք ենթադրում էին, որ նա մի խորհրդավոր մարդ է և պնդում էին, որ ոչ ոք չի մտնում նրա սենյակը, որը ճգնավորի իսկական խուց է՝ կահավորված թևավոր ավազածամացույցներով և զարդարված խաչաձև դրված սրնքոսկրներով ու մեռած գլուխներով: Այս բանն այնքան շատ էր կրկնվում, որ Մոնտրոյ-սյուռ-Մեոի մի քանի շքեղ ու չարամիտ դեռատի կանայք մի անգամ եկան նրա մոտ ու հարցրին.

— Պարոն քաղաքապետ, ցույց տվեք վերջապես ձեր սենյակը: Ասում են, որ դա քարանձավ է:— Նա ժպտաց և իսկույն առաջնորդեց այդ «քարանձավը»: Եվ նրանք լավ պատժվեցին իրենց հետաքրքրասիրության համար: Դա մի սենյակ էր, հարդարված պարզապես բավական տգեղ կարմրափայտե կահույքով, ինչպես լինում են այդ տեսակ բոլոր կարասիները, իսկ պատերը ծածկված էին տասներկու սուանոց թղթե պաստառներով: Նրանք ոչինչ չնկատեցին, բացի հնացած ոճի մի գույգ աշտանակներից, որ դրված էին բուխարու վրա և կարծես արծաթե էին, «որովհետև հարզը ցույց տվող դրոշմ էին կրում»: Փոքր քաղաքներին հատուկ ուշադիր դիտողություն:

Այնուամենայնիվ չպակասեցին խոսակցություններն այն մասին, թե ոչ ոք չէր թափանցում այդ սենյակ, թե դա ճգնավորի քարայր էր, երազատուն, որջ, դամբարան:

Փսփսում էին նաև, որ նա «հսկայական» գումարներ էր պահ տվել Լաֆիտին, այն առանձնահատկությամբ միայն, որ դրանք միշտ էլ անմիջական տրամադրության տակ էին, այնպես որ, ավելացնում էին, թե պարոն Մադլենը կարող էր որևէ առավոտ գնալ Լաֆիտի մոտ, մի ստացական ստորագրել և տասը բոպլեի մեջ ստանալ իր երկու-երեք միլիոնը: Իրականում, ինչպես ասացինք, այս «երկու-երեք միլիոնը» վեց հարյուր երեսուն կամ քառասուն հազարից ավելի չէր:

IV

ՊԱՐՈՆ ՄԱԴԼԵՆԸ ՍԳԻ ՄԵԶ

1821 թվականի սկզբներին լրագրերը ծանուցեցին մահը Դիյնի եպիսկոպոս պարոն Միրիելի՝ «մականվանյալ գերապատիվ Բիենվնյու», վախճանված որպես սուրբ՝ ութսուներկու տարեկան հասակում:

Սակայն այստեղ պետք է ավելացնենք մի մանրամասնություն, որ լրագրերը բաց էին թողել. երբ Դիյնի եպիսկոպոսը մեռավ, արդեն միտարի էր, ինչ կուրացել էր և, որովհետև քույրը իր մոտ էր, ապա չէր տխրում կույր լինելուց:

Անցողիկ կերպով ասենք, որ կույր լինելն ու սիրվելը երջանկության տարօրինակորեն հաճելի ձևերից մեկն է այս աշխարհում, ուր ոչ մի բան կատարյալ չէ: Շարունակաբար իր մոտ ունենալ մի

կին, կամ աղջիկ, կամ քույր, մի չքնաղ էակ, որ այդտեղ պատրաստ կանգնած է, որովհետև դուք նրա կարիքն ունեք, որովհետև նա չի կարող առանց ձեզ ապրել. զգալ, որ անհրաժեշտ ես նրան՝ ով քեզ պետք է, կարողանալ անընդհատ չափել նրա գործով՝ նրա տված ներկայության քանակով և ասել ինքն իրեն — քանի որ նա իր ողջ ժամանակը նվիրում է ինձ, ապա դա նրա համար է, որ նրա սիրտն ինձ է պատկանում. նրա անձի փոխարեն՝ տեսնել նրա մտածողությունը, հավաստել որևէ էակի հավատարմությունը՝ երբ աշխարհը խավարել է քեզ համար. իմանալ շրջագգեստի շրշյունը՝ թևերի թափահարման նման, լսել նրա գնալ-գալը, ներս-դուրս անելը, խոսելը, երգելը և գիտակցել, որ այդ քայլերի, այդ խոսքի և երգի կենտրոնը ինքդ ես, յուրաքանչյուր բոլոր ցուցադրես քո անձնական ձգողականությունը, զգաս, որ ինչքան ավելի է անկարությունդ՝ այնքան ավելի է հզորությունդ, խավարի մեջ և խավարի կողմից դառնաս այն աստղը, որի շուրջը մագլցում է այդ հրեշտակը — քիչ բերկրանքներ կան, որ հավասարվում են սրան: Կյանքի գերագույն երջանկությունն այն է, որ համոզված ես, թե քեզ սիրում են, սիրում են իրենց համար, ավելի ճիշտ, սիրում են հակառակ իրենց ցանկության և այդ համոզումը կույրն ունի: Այդպիսի դժբախտության մեջ խնամքի արժանանալ՝ նշանակում է գուրգուրվել: Նրան որևէ բան պակասո՞ւմ է: Ոչ: Մեծ կորուստ չէ լուսսից զրկվել՝ երբ փոխարենը սեր ես շահում: Եվ ինչպիսի սեր, ամբողջովին առաքիներությունից կազմված սեր: Կուրություն չկա այնտեղ, ուր հավաստիք կա: Հոգին խարխափելով փնտրում է հոգին և գտնում այն, իսկ այդ գտնված ու հայտնված հոգին մի կին է: Ձեզ մի ձեռք պահում է, դա նրա ձեռքն է. մի բերան թեթևակի դիպչում է ձեր ճակատին, դա նրա բերանն է. խիստ մոտից զգում եք մի շնչառություն, դա նրանն է: Ունենալ նրա ամեն բանը՝ սկսած նրա պաշտամունքից, վերջացրած կարեկցությամբ, երբեք մենակ չթողնվել, ունենալ ձեզ օգնող այդ քաղցր թուլությունը, հենվել այդ անսասան եղեգին, ձեռքերովդ հպվել նախախնամության և գրկել նրան բազուկներովդ, աստված իմ, ի՞նչ երանություն: Միտը, այդ երկնային խավար ծաղիկը մտնում է խորհրդավոր փթթումի մեջ: Այդ ստվերը չի կարելի փոխանակել ողջ լուսսի հետ: Հրեշտակային հոգին այնտեղ է. նա հեռանում է վերադառնալու համար. նա ջնջվում է երազի նման և դարձյալ երևում իրականության նման: Զգում ես մոտեցող ջերմությունը՝ նա է: Հանդարտություն, ուրախություն և զմայլում է հորդում վրադ. խոր գիշերը պայծառություն ես տեսնում: Եվհագարավոր այլ մանր խնամքներ: Չնչին բաներ, որ այդ դատարկության մեջ հսկայական են: Կանացի ձայնի ամենաջինջ շեշտերը գործադրվում են ձեզ օրորելու և անհետացած տիեզերքին փոխարինելու համար: Հոգով եք դուք գուրգուրվում: Ոչինչ չեք տեսնում, բայց զգում եք, որ պաշտում են ձեզ: Դա խավարի դրախտն է:

Հենց այս դրախտից էր գերապատիվ Բիենվյուն անցել մյուսը:

Մոնտրոյ-սյուռ-Մեռի տեղական լրագիրն արտասպեց մահագողը: Պարոն Մադլենը հաջորդ օրը ամբողջովին սև հագած և գլխարկի շուրջն էլ սև շղարշ կապած դուրս եկավ:

Քաղաքում նկատեցին այս սուգը և սկսեցին շաղակրատել: Այս հանգամանքը կարծես լույս սփռեց պարոն Մադլենի ծագման վրա: Եզրակացրին, որ նա որևէ կապ ուներ պատվարժան եպիսկոպոսի հետ: «Դիյնի եպիսկոպոսի համար է սև հագել», — ասացին սալոններում, այս բանը խիստ բարձրացրեց պարոն Մադլենին և հանկարծ որոշ կարծիք առաջացրեց Մոնտրոյ-սյուռ-Մեռի ազնվական շրջանակում, տեղական մանրադիտակային Սեն-Ժերմեն արվարձանը մտածեց ընդհատել եպիսկոպոսի ազգականի սգի քառասունքը: Պարոն Մադլենն այդ մեծարանքը նկատեց այն բանից, որ պառավ կանայք ավելացրին իրենց ռևերանսը, իսկ դեռատիները՝ իրենց ժպիտը: Մի երեկո այդ փոքր բարձրաշխարհի ավագագույն կանանցից մեկը, որ պարծենում էր իր տոհմի վաղեմիության իրավունքով՝ համարձակվեց հարցնել նրան.

— Պարոն քաղաքապետը երևի Դիյնի հանգուցյալ եպիսկոպոսի եղբորորդի՞ն է:

— Ոչ, տիկին,— պատասխանեց նա:

— Բայց,— շարունակեց ավագագույնը,— սուգ եք պահել նրա համար:

— Որովհետև երիտասարդությանս տարիներին սպասավոր եմ եղել նրա ընտանիքում,—
պատասխանեց քաղաքապետը:

Մի ուրիշ բան էլ, որ նկատել էին, այն էր, որ ամեն անգամ, երբ մի պատանի սավոյացի էր անցնում քաղաքից ու մաքրելու ծխնելույզ փնտրում, պարոն քաղաքապետը նրան կանչել էր տալիս, հարցնում անունը և փող նվիրում: Փոքր սավոյացիներն իրար պատմում էին այս բանը և այդ պատճառով էլ շատ էին գալիս:

V

ԱՂՈՏ ԼՈՒՅՍԵՐ ՀՈՐԻՉՈՆԻ ՎՐԱ

Քիչ-քիչ, ժամանակի ընթացքում, ամեն տեսակ ընդդիմադրությունները վերացան: Սկզբում պարոն Մադլենի դեմ գործել էր այսպես ասած, այն օրենքը, որին միշտ էլ ենթարկվում են վեր բարձրացողները,—սևացնել ու բամբասել, որը հետո դարձավ սոսկ չարաճճություն և ի վերջո բոլորովին վերացավ և հարգանքը դարձավ կատարյալ, միաձայն ու սրտաբուխ: Եկավ նույնիսկ մի բուպե, 1821 թվականին, երբ պարոն քաղաքագլուխ բառը արտասանվում էր գրեթե նույն շեշտով, ինչ գերապատիվ եպիսկոպոս բառն արտասանվում էր Դիյնում 1815 թվականին: Տասը լիտ հեռավորությունից գալիս էին պարոն Մադլենից խորհուրդ հարցնելու: Նա վերջ էր դնում վեճերին, դատերի դեմն էր առնում և հաշտեցնում թշնամիներին: Ամեն մեկը նրան դատավոր էր կարգում արդար իրավունքին: Թվում էր, որ նրա հոգին բնական օրենքի գիրքն էր: Կարծես թե հարգանքի համաճարակ էր դա, որ վեց կամ յոթ տարվա ընթացքում քիչ-քիչ վարակեց ողջ երկիրը:

Քաղաքում ու գավառում միայն մի մարդ չենթարկվեց այդ վարակմանը և ինչ էլ որ աներ հայր Մադլենը, նա մնում էր անհամաձայն, կարծես թե մի տեսակ անկաշառելի ու անխռով բնագղը զգաստացնում էր նրան ու անհանգստացնում: Թվում է, որ իրոք որոշ մարդկանց մեջ կա իսկական անասնական բնագղ, մաքուր ու ամբողջական, ինչպես յուրաքանչյուր բնագղ, որը հակակրանք ու համակրանք է ստեղծում, որ ճակատագրորեն մի բնավորություն բաժանում է մի ուրիշ բնավորությունից, որ չի երկմտում, չի լռում և բնավ չի հերքում, լուսավոր է իր խավարի մեջ և անսխալ, հրամայական ու անսաստ՝ իմացականության բոլոր խորհուրդների նկատմամբ և, որը, ինչպես էլ բախտը դասավորվի՝ գաղտագողի ծանուցում է մարդ-շանը մարդ-կատվի ներկայության մասին և մարդ-աղվեսին՝ մարդ-առյուծի ներկայության մասին:

Հաճախ պատահում էր, որ երբ պարոն Մադլենը հանդարտ, գորովալի, ընդհանուր օրհնությամբ շրջապատված անցնում էր փողոցով, մի բարձրահասակ, գորշ ռեդինգոտ հագած, խոշոր ձեռնափայտով զինված և աչքերին քաշած գլխարկով մի մարդ հանկարծ ետ էր դառնում և հայացքով հետևում նրան՝ մինչև անհետանալ, իսկ նա թները խաչած, գլուխը թեթևակի օրորելով և վերի շրթունքը ներքնի շրթունքի հետ բարձրացնելով մինչև քիթը՝ մի տեսակ նշանակալից ծամաճռություն էր անում, որը կարող էր թարգմանվել. «Բայց ո՞վ է այս մարդը: Անկասկած ես նրան որևէ տեղ տեսել եմ: Համենայն դեպս երկար չեմ խաբվի»:

Այս գրեթե սպառնալից լրջությամբ լուրջ մարդը նրանցից էր, որոնց եթե նույնիսկ անցողակի նշմարեն՝ դարձյալ կանհանգստացնեն դիտողին:

Նրա անունը ժավեր էր և նա աշխատում էր ոստիկանությունում:

Մոնտրոյ-սյուռ-Մեռում նա դժվարին, բայց օգտակար աշխատանք էր կատարում. քննիչ էր: Նա չէր տեսել Մադլենի գործունեության սկզբնավորությունը: Իր վարած պաշտոնը ժավերը պարտական էր պետական մինիստր կոմս Անգլեսի քարտուղար՝ Փարիզի այդ ժամանակվա ոստիկանապետ պարոն Շաբուլյեին: Երբ ժավերը Մոնտրոյ-սյուռ-Մեռ էր եկել՝ խոշոր ֆաբրիկանտն իր հարստությունն արդեն սարքել էր և հայր Մադլենը դարձել էր պարոն Մադլեն:

Ոստիկանության որոշ պաշտոնյաներ առանձնահատուկ կերպարանք ունեն, որը բարդանում է ստորությամբ ու ազդեցիկությամբ լի տեսքով: Ժավերն էլ այդպիսի կերպարանք ուներ, միայն թե ստորություն չկար:

Մեր կարծիքով, եթե հոգիները տեսանելի լինեին աչքերին, ապա որոշակի կտեսնվեր հետևյալ տարօրինակ բանը. մարդկային ցեղի յուրաքանչյուր անհատ համապատասխանում է կենդանական աշխարհի որևէ տեսակի, և մտածողը հեշտությամբ կարող էր իմանալ այն հազիվ նշմարելի ճշմարտությունը, որ ոստրեից սկսած մինչև արծիվը, խոզից մինչև վագրը՝ բոլոր կենդանիներն էլ կան մարդու մեջ և, դրանցից յուրաքանչյուրը մի մարդու մեջ է: Երբեմն նույնիսկ դրանցից մի քանիսը միաժամանակ գտնվում են մի մարդու մեջ:

Կենդանիներն այլ բան չեն, եթե ոչ մեր աչքերի առջև թափառող մեր առաքինությունների ու արատների պատկերները: Աստված մեզ ցույց է տալիս դրանք, որպեսզի մենք մտածենք: Բայց քանի որ կենդանիները սոսկ ստվեր են, աստված նրանց ամեննին դաստիարակելի չի ստեղծել՝ բառի լրիվ իմաստով. ի՞նչ օգուտ կունենար դա: Եվ ընդհակառակը, քանի որ մեր հոգիներն իրականություն են և ունեն իրենց հատուկ մի վախճան, ապա աստված ուշիմություն է տվել նրանց, այսինքն հնարավոր դաստիարակություն: Լավ կազմակերպված սոցիալական դաստիարակությունը միշտ էլ կարող է որևէ հոգուց, ինչպիսին էլ նա լինի, ստանալ նրա պարունակած օգտակարությունը:

Սա, իհարկե, ասվում է սոսկ երկրային տեսանելի կյանքի տեսակետից, առանց կանխադատելու էակաների հնագույն կամ անդրաշխարհյա անձնավորության խոր հարցը, էականեր, որոնք այլևս մարդ չեն: Տեսանելի եսը ոչ մի ձևով չի արտոնում մտածողին ժխտել թաքուն եսը: Այս վերապահումն անելուց հետո՝ անցնենք առաջ:

Այժմ, եթե մի բույն մեզ հետ միասին ենթադրեք, որ յուրաքանչյուր մարդու մեջ կա մի կենդանական տեսակ՝ ապա մեզ համար հեշտ կլինի ասել, թե ինչ էր խաղաղության պաշտոնյա ժավերը:

Աստորիացի գյուղացիները համոզված են, որ էգ գայլի յուրաքանչյուր անգամ ծնած ձագերի մեջ մի շուն է լինում, որին մայրն սպանում է, այլապես մեծանալուց հետո նա կբզկտի մյուսներին:

Մարդկային կերպարանք տվեք էգ գայլից ծնած այդ շանը և կստացվի ժավեր:

Ժավերը ծնվել էր բանտում մի գուշակուհուց, որի ամուսինը թիարանում էր: Մեծանալով նա մտածեց, որ հասարակությունից դուրս է և այնտեղ երբևիցե մտնելու հույսը կտրեց: Նա նկատեց, որ հասարակությունն աններելիորեն իրենից դուրս է պահում մարդկային երկու դասակարգ. մեկը, ովքեր նրան հարվածում են և մյուսը՝ ովքեր նրան պահպանում են: Նրան մնում էր միայն այս երկուսից մեկնումեկն ընտրել: Սակայն միևնույն ժամանակ նա իր մեջ զգում էր ինչ-որ անաչառության, կանոնավորության և ազնվության հիմք, խառնված դեպի այդ գնչուական շերտը տաժած անբացատրելի աստվածությամբ, մի շերտ որից ինքն էլ էր առաջացել: Նա մտավ ոստիկանական ծառայություն և հաջողություն ունեցավ: Քառասուն տարեկանում նա քննիչ էր:

Իր երիտասարդության տարիներին նա պաշտոնյա էր եղել հարավային թիարաններում:

Նախքան ավելի հեռու գնալն ասենք, թե ինչ ենք հասկանում մարդկային կերպարանք խոսքով, որ հենց նոր կիրառեցինք Ժավերի նկատմամբ:

Ժավերի մարդկային կերպարանքը կազմված էր տափակ-ճմաճ քթից՝ մի զույգ խոր անցքերով, դեպի որոնց միտում էին զույգ խոշոր այտմորուսները: Վատ էիր զգում քեզ, երբ առաջին անգամ տեսնում էիր այդ զույգ անտառներն ու զույգ քարայրները: Երբ Ժավերը ծիծաղում էր,— որ հազվադեպ էր և ահարկու,— նրա նուրբ շրթունքները բացվում էին և ցուցադրում ոչ միայն ատամները, այլ նաև լնդերը, իսկ քթի շուրջն առաջանում էր մի աննիստ ու վայրենի ծալք, ինչպես վայրի կենդանու մոռութի վրա: Լուրջ Ժավերը դոգ էր, իսկ ծիծաղելիս՝ վագր: Դրանից զատ կարելի է ասել, որ գանգը փոքր էր, կզակը խոշոր, մազերը ծածկում էին ճակատն ու ընկնում հոնքերի վրա, աչքերի միջև մի մշտական կնճիռ՝ զայրույթի աստղի նման, հայացքը՝ մուր, բերանը պիտկ ու ահավոր, տեսքը կատաղի ու հրամայական:

Այս մարդը կազմված էր երկու շատ պարզ և հարաբերականորեն շատ բարի զգացումներից, բայց այնքան էր չափազանցում դրանք, որ դարձնում էր վատ, հարգանք դեպի իշխանությունը և աստվածություն դեպի ըմբոստությունը, իսկ նրա աչքին և գողությունը, և մարդասպանությունը, բոլոր ոճիրները միմիայն ըմբոստանալու ձևեր էին: Նա մի տեսակ կույր ու խոր հավատքով էր պարուրում այն ամենը, որ պետության մեջ պաշտոն ունի, սկսած մինիստր նախագահից, մինչև դաշտային պահակը: Նա արհամարհանք, խորշանք ու զզվանք էր տածում այն բոլորի նկատմամբ, ովքեր մի անգամ անցել էին չարիքի լեզալ շեմից: Նա բացարձակ էր և ոչ մի բացառություն չէր ընդունում: Մի կողմից ասում էր՝ պաշտոնյան չի կարող սխալվել. դատավորը բնավ սխալ չի գործում: Մյուս կողմից ասում էր՝ սրանք անդամանելիորեն կորած են: Ոչ մի լավ բան չի կարող նրանցից ստացվել: Նա լիովին համակարծիք էր այն ծայրահեղ մտածողներին, որոնք մարդկային օրենքին վերագրում են դևեր ստեղծելու, կամ եթե ուզում էք, դևեր գտնելու միինչ-որ կարողություն, և հասարակության ստորոտում մի Սոյուքս¹²³ են դնում: Նա ստիկ էր, լուրջ ու խստամբեր, տխուր երագող, խոնարհ ու միամիտ՝ ինչպես ֆանատիկոսները: Նրա հայացքը շաղափ էր՝ սառն ու ծակող: Նրա ողջ կյանքի իմաստը հետևյալ երկու բառի մեջ էր. արթուն կենալ ու հսկել: Մի ուղիղ գիծ էր մնացել այն ամենի մեջ, ինչ որ աշխարհում ծուռումուռ է: Նա գիտակցում էր իր օգտակարությունը և ուներ իր պարտականությունների կրոնը. լրտես էր ճիշտ այնպես, ինչպես մի ուրիշը քահանա է: Վայ նրա ձեռքն ընկնողին: Նա կձերբակալեր թիարանից փախչող իր հորը և աքսորից փախչող մորը: Եվ նա կաներ դա այն ներքին բավականությամբ, որ առաջանում է առաքիությունից: Դրա հետ միասին նա վարում էր զրկանքով, մեկուսացմամբ, անձնուրացությամբ ու ժուժկալությամբ լի կյանք, ոչ մի զվարճություն: Դա մի անողորմ պարտականություն էր. ոստիկանությունը նա հասկանում էր այնպես, ինչպես սպարտացիները Սպարտան, մի անխիղճ պահակություն, զազագած պարկեշտություն, մարմարյա լրտես, Բրուտոս՝ Վիդուկի մեջ:

Ժավերի ողջ անձնավորությունը նման էր լրտեսող, բայց թաքնվող մարդու: Ժոզեֆ դը Մեստրի միաստիկ դպրոցը, որ այդ դարաշրջանում տիեզերածնությամբ համեմունք էր այսպես կոչված ծայրահեղական մամուլը, չէր թերանա ասելու, որ Ժավերը խորհրդանիշ էր: Չէիր տեսնում նրա ճակատը, որ անհետանում էր գլխարկի տակ, չէիր տեսնում նրա աչքերը, որ անհետանում էին հոնքերի տակ, չէիր տեսնում նրա կզակը, որ թաղվում էր փողկապի մեջ, չէիր տեսնում նրա ձեռքերը, որ մնում էին թեզանիքների մեջ, չէիր տեսնում նրա ձեռնափայտը, որ կրում էր

¹²³ Դժոխքի գետը, որի ջրերում լողացողներն անխոցելի էին դառնում (ըստ հուն. դիցաբանության):

ռեդինգոտի տակից: Բայց առիթը ներկայանալիս, հանկարծ կարծես թակարդից, այդ ստվերից դուրս կգար մի նեղ ու անկյունավոր ճակատ, չարագուշակ հայացք, սպառնալի կզակ, հսկայական ձեռքեր ու դժոխային մահակ:

Ազատ բռնաներին, որ խիստ հազվադեպ էին, գրքերն ատելով հանդերձ՝ կարդում էր, որի հետևանքով էլ բոլորովին անգրագետ չէր և դա նկատվում էր նրա խոսակցության մի քանի ճոռում արտահայտություններից:

Ասացինք, որ ոչ մի մոլություն չունեի: Երբ ինքն իրենից գոհ էր լինում, մի պտղունց քթախոտով մեծարում էր իրեն: Միայն դրանով էր նա համամարդկային:

Դժվար չէ հասկանալ, որ Ժավերը սարսափն էր այն ողջ դասակարգի, որին արդարադատության միևնույնության տարեկան վիճակագրությունը մտցնում է թափառաշրջիկներ սյունակի մեջ: Ժավերի անունը լսելիս նրանք փախչում էին, իսկ Ժավերի դեմքը տեսնելիս քարանում էին:

Այսպիսին էր այդ զարհուրելի մարդը:

Ժավերը շարունակ պարոն Մադլենի վրա սևեռված աչք էր, կասկածներով ու ենթադրություններով լի աչք: Պարոն Մադլենը վերջիվերջո նկատեց նրան, բայց թվաց, որ դա աննշան բան համարեց: Ոչ մի հարց չտվեց Ժավերին, ոչ որոնում էր նրան, ոչ խույս տալիս և առանց ուշադրություն դարձնելու՝ համբերությամբ տանում էր նրա ճնշող, գրեթե ընկճող հայացքը: Ժավերին վերաբերվում էր ինչպես բոլորին՝ սիրալիր ու բարի:

Ժավերի բերանից փախած մի քանի խոսքերից կարելի էր կռահել, որ նա գաղտնի կերպով և ուստիկանների հատուկ հետաքրքրությամբ, ուր այնքան բնագոյ կա՝ ինչքան կամք, փնտրել էր հայր Մադլենի որևէ տեղ թողած բոլոր հնագույն հետքերը: Կարծես նա գիտեր և հաճախ անորոշ բառերով ասում էր, թե մեկը մի գավառում որոշ տեղեկություններ է հավաքել մի անհետացած ընտանիքի մասին: Մի անգամ էլ ինքն իրեն խոսելիս ասաց. «Թվում է, թե բռնել եմ թելը»:— Ապա երեք օր մնաց մտախոհ և ոչ մի բառ չարտասանեց: Պարզվեց, այն թելը, որ կարծում էր, թե բռնել է՝ կտրվել էր:

Բայց քանի որ (իսկ սա անհրաժեշտ մեղմացուցիչն է, որ որոշ բառերի իմաստը խիստ բացարձակ կերպով չընդունվի) որևէ մարդկային արարած չի կարող իսկապես անսխալ լինել, ապա հենց բնագոյին էլ հատուկ է հուզվելը, մոլորվելը և շվարելը, առանց որի նա իմացականությունից ավելի գերազանց կլիներ և անասունն ավելի կկոդմնորոշվեր, քան թե մարդը:

Ակներև էր, որ Ժավերը մի քիչ շփոթվել էր պարոն Մադլենի բնական կատարելությամբ ու անխռովությամբ:

Բայց մի օր էլ նրա տարօրինակ վարվելակերպը կարծես տպավորություն գործեց պարոն Մադլենի վրա: Ահա թե ինչի առթիվ:

ՀԱՅՐ ՖՈՇԼՎԱՆԸ

Մի առավոտ պարոն Մադլենն անցնում էր Մոնտրոյ-այուտ-Մեռի չսալահատակված փոքր փողոցով, երբ մի աղմուկ լսեց ու քիչ հեռու էլ տեսավ մի խումբ մարդկանց: Եվ գնաց այդտեղ: Հայր Ֆոշլվան անունով մի ծեր մարդ ընկել էր իր սայլի տակ, որի ձին նույնպես ընկել էր:

Այս Ֆոշլվանն այն հազվագյուտ թշնամիներից էր, որ պարոն Մադլենը դեռ ուներ այդ միջոցին: Երբ Մադլենն այդ քաղաք էր եկել, Ֆոշլվանը,— նախկին շրջանային նոտար ու գրեթե գրագետ գյուղացի,— առևտրով էր զբաղվում, բայց գործը վատ էր ընթանում: Ֆոշլվանը տեսել էր, որ այդ հասարակ բանվորը հարստանում է, մինչդեռ ինքը՝ գործատերը, կործանվում է: Այս բանը համակել էր նրան նախանձով և ինչքան առիթ որ ներկայացել էր ու ինչքան կարողացել էր՝ Մադլենին վնասել էր: Ապա սնանկացել էր ու բացի սայլակից ու ձիուց այլ բան չունենալով, ծեր, անընտանիք ու անզավակ, ապրելու համար սայլապան էր դարձել:

Ձիու երկու ազդրերը ջարդվել էին և չէր կարող վեր կենալ: Ծերունին մնացել էր անիվների արանքում: Անկումն այնքան վատ էր եղել, որ ողջ սայլը ճնշում էր նրա կրծքին: Սայլակը բավական բեռնված էր և հայր Ֆոշլվանը սրտակեղեք հառաչ էր արձակում: Փորձում էին դուրս հանել նրան, բայց իզուր: Որևէ արտակարգ ճիգ, ձախավեր օգնություն, սխալ ցնցում կարող էր վերջացնել նրան: Անկարելի էր նրան դուրս բերել, եթե ոչ սայլը վերնից բարձրացնելով: Ժավերը, որ արկածի թուղեին վրա էր հասել՝ մարդ էր ուղարկել մի վերամբարձ գործիք ճարելու:

Պարոն Մադլենը հասավ այդտեղ. ամբոխը հարգանքով ետ քաշվեց:

— Օգնությո՛ւն,— գոռում էր ծեր Ֆոշլվանը:— Մի՞թե ձեր մեջ չկա մի կտրիճ երիտասարդ, որ ազատի ծերունուն:

Պարոն Մադլենը դարձավ դեպի ներկաները.

— Վերամբարձ չկա՞ :

— Գնացել են ճարելու,— պատասխանեց մի գյուղացի:

— Ինչքա՞ն ժամանակից կարող են հասցնել:

— Գնացել են ամենամոտ տեղը՝ Ֆլաշո, ուր մի պայտառ կա, բայց միևնույն է, քառորդ ժամից շուտ չեն գա:

— Քառորդ ժա՛մ,— բացականչեց Մադլենը:

Մի օր առաջ անձրև էր եկել, գետինը խոնավ էր և սայլակը ամեն թույլ խրվում էր հողի մեջ և ավելի ու ավելի էր ճնշում ծեր սայլապանի կուրծքը: Ակներն էր, որ հինգ թույլ իսկ չանցած նրա կողերը կջարդվեին:

— Անկարելի է քառորդ ժամ սպասել — ասաց Մադլենն իրեն նայող գյուղացիներին:

— Ճար չկա, պիտի սպասենք:

— Բայց արդեն ու՛շ կլինի: Միթե չե՞ք տեսնում, որ սայլակը խրվում է:

— Իհարկե:

— Լսեք,— շարունակեց Մադլենը,— սայլակի տակ դեռ այնքան տեղ կա, որ մի մարդ կարող է սողալ այնտեղ ու իր կոնակովբարձրացնել այն: Միայն կես րոպե և խեղճ մարդուն կհանեն տակից: Չկա որևէ սրտոտ և ուժեղ մարդ ձեր մեջ: Հինգ ոսկի կստանա:

Խմբից ոչ ոք չշարժվեց:

— Տասը ոսկի,— ասաց Մադլենը:

Ներկաները խոնարհեցին աչքերը: Նրանցից մեկը շնչաց.

— Դժոխային ուժ պետք է ունենալ, բացի դրանից, ճիլվելու վտանգ կա:

— Հապա՞,— նորից խոսեց Մադլենը,— քսան ոսկի:

Նույն լռությունը:

— Բարյացակամությունը չէ, որ պակասում է նրանց,— ասաց մեկը:

Պարոն Մադլենը շուտ եկավ և ճանաչեց Ժավերին: Այդտեղ հասնելիս նրան չէր նկատել:

Ժավերը շարունակեց.

— Ուժն է պակասում: Մարդ ահավոր ուժ պետք է ունենա, որ մի այսպիսի սայլ բարձրացնի իր կոնակով:

Ապա շեշտակի նայելով պարոն Մադլենին, շարունակեց՝ շեշտելով իր արտասանած յուրաքանչյուր բառը:

— Պարոն Մադլեն, ես միայն մի մարդ եմ ճանաչել, որ ընդունակ էր ձեր պահանջածը կատրել:

Մադլենը ցնցվեց:

Ժավերն անտարբերությամբ, բայց առանց հայացքը Մադլենից հեռացնելու շարունակեց.

— Մի թիապարտ էր դա:

— Ա՛,— ասաց Մադլենը:

— Տուլոնի թիարանից:

Մադլենը գունատվեց:

Սակայն սայլակը շարունակում էր դանդաղորեն խրվել: Հայր Ֆռշվանը խորդում էր ու ոռնում:

— Խեղդվո՞ւմ եմ: Կողերս ջարդվեցի՛ն: Վերամբա՛րձ, որևէ բա՛ն: Օ՛ֆ:

Մադլենը նայեց իր շուրջը:

— Ուրեմն ոչ ոք չի՞ ուզում քսան ոսկի ստանալ և այս խեղճ ծերուկի կյանքը փրկել:

Ներկաներից ոչ ոք չշարժվեց: Ժավերը շարունակեց.

— Ես միայն մի մարդ եմ ճանաչել, որ կարող էր վերամբարձին փոխարինել. մի տաժանակիր էր դա:

— Ա՛խ, ջարդվեցի,— գոռում էր ծերունին:

Մաղլենը գլուխը բարձրացրեց, հանդիպեց շարունակ իր վրա սևեռած Ժավերի բազեի հայացքին, նայեց անշարժ գյուղացիներին և տխրագին ժպտաց: Ապա, առանց որևէ խոսք ասելու, չոքեց և ավելի շուտ, քան ամբոխը ժամանակ ունեցավ ճիշտ արձակելու, նա սայլակի տակ էր:

Սպասումի և լռության մի սոսկալի բուպե անցավ:

Տեսան, որ Մաղլենը գրեթե դեմքը գետնին կպցրած և այդ զարհուրելի ծանրության տակ երկու անգամ իգուր փորձեց արմունկները ծնկներին մոտեցնել. «Հայր Մաղլեն, դուրս եկեք» — աղաղակեցին ներկաները: Նույնիսկ ծեր Ֆռշվանն ասաց.

— Պարոն Մաղլեն, հեռացեք: Պարզ է, որ մահս հասել է: Թողեք ինձ, ինքներդ էլ կջարդվեք:—
Մաղլենը չպատասխանեց:

Ներկաները հեռում էին: Անիվները շարունակում էին խրվել և արդեն գրեթե անհնար էր, որ Մաղլենը սայլի տակից դուրս գա:

Հանկարծ հսկայական զանգվածը երերաց, սայլակը դանդաղ բարձրացավ և անիվները կիսով չափ դուրս եկան անվահետքից: Մի խեղդված ձայն լսվեց.

— Շտապեք, օգնեք:— Մաղլենն էր, որ իր վերջին ճիգն էր գործադրում:

Բոլորն էր նետվեցին: Մի մարդու անձնվիրությունը ուժ ու քաջություն էր տվել բոլորին: Քսան բազուկ բարձրացրին սայլակը: Ծեր Ֆռշվանը փրկված էր:

Մաղլենը վեր կացավ և չնայած քրտնաշաղախ լինելուն՝ գունատ էր: Նրա հագուստները պատառոտվել էին ու ցեխոտվել: Ամենքն էլ լաց էին լինում: Ծերունին համբուրում էր նրա ծնկները և անվանում նրան բարերար աստված: Իսկ Մաղլենի դեմքի վրա դրոշմված էր ինչ-որ երջանիկ ու երկնային տառապանքի արտահայտություն և իր խաղաղ հայացքը սևեռել էր շարունակ իրեն նայող Ժավերին:

VII

ՖՐՇՎԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՊԱՐՏԻՋՊԱՆ ՓԱՐԻՋՈՒՄ

Ֆռշվանի ընկնելու ժամանակ ծնկոսկը խախտվել էր: Հայր Մաղլենը նրան փոխադրել տվեց այն հիվանդանոցը, որ ինքն էր հիմնել իր բանվորների համար հենց գործարանի շենքում և, որ սպասարկվում էր երկու գրքության քույրերի կողմից: Հաջորդ առավոտ ծերունին իր սեղանի վրա հազար ֆրանկանոց մի բանկատոմս գտավ հայր Մաղլենի ձեռքով գրված հետևյալ երկտողի հետ միասին. «Ես գնում եմ ձեր սայլակն ու ձին»: Սայլակը ջարդվել էր, իսկ ձին սատկել: Ֆռշվանն առողջացավ, բայց ծունկը մնաց գոս: Պարոն Մաղլենը քույրերի ու քահանայի հանձնարարությամբ՝ ծերունուն տեղավորեց որպես պարտիզպան Փարիզում, Սենտ-Անտուան թաղի կանանց վանքում:

Մի քանի ժամանակ անց պարոն Մաղլենը նշանակվեց քաղաքապետ: Երբ Ժավերն առաջին անգամ տեսավ պարոն Մաղլենին այն միջակապով, որով քաղաքի ողջ իշխանությունը նրան էր

հանձնվում, սարսուռ զգաց, որպիսին զգում է շունն իր տիրոջ հագուստների մեջ գալի նկատելիս: Այդ օրվանից սկսած ինչքան կարող էր խուսափեց նրանից: Երբ պաշտոնական կարիքներն անհետաձգելիորեն ստիպում էին և այլ կերպ չէր կարող անել՝ եթե ոչ պարոն քաղաքապետի հետ լինել, ապա նրա հետ խոսում էր խոր հարգանքով:

Մոնտրոյ-սյուռ-Մեռում հայր Մադլենի ձեռքով ստեղծված այդ բարեկեցությունը բացի մեր հիշատակած տեսանելի նշաններից, մի այլ նշան ևս ուներ, որը թեև տեսանելի չէր, բայց նվազ նշանակալից չէր: Հետևյալ հանգամանքը երբեք չի խաբում. երբ բնակչությունը տառապում է, երբ աշխատանք չկա, երբ առևտուրը դադարում է, հարկ վճարողը չքավորությունից մղված դիմադրում է տուրքին, ժամկետը գալիս անցնում է և պետությունը խոշոր գումարներ է ծախսում հարկադրական գանձման համար: Իսկ երբ աշխատանքը շատ է, երբ երկիրը երջանիկ է ու հարուստ՝ հարկը հեշտությամբ է վճարվում և պետությանը քիչ ծախս նստում: Կարելի է ասել, որ աղքատությունն ու հարստությունը մի անսխալ ջերմաչափ ունեն — հարկերը գանձելու ծախսերը: Այդ ժամանակներում Մոնտրոյ-սյուռ-Մեռի գավառի հարկերը գանձելու ծախսերը երեք քառորդով նվազել էին, շնորհիվ որի այդ ժամանակվա ֆինանսների մինիստր պարոն դը Վիլելը հաճախ նշում էր այդ գավառը բոլորի միջից:

Այսպես էր երկրի դրությունը, երբ Ֆանտինն այդտեղ հասավ: Ոչ ոք նրան չէր հիշում: Բարեբախտաբար պարոն Մադլենի ֆաբրիկայի դուռը բարեկամի նման ժպտում էր նրան: Ֆանտինը գնաց այդտեղ և ընդունվեց կանանց բաժանմունքում: Այդ աշխատանքը նրա համար բոլորովին նոր էր, նա այնքան հմուտ չէր կարող աշխատել և քիչ օրավարձ էր ստանում, բայց վերջիվերջո բավականացնում էր: Հարցը լուծված էր, նա իր ապրուստը շահում էր:

VIII

ՏԻԿԻՆ ՎԻԿՏՅՈՒՐԻԵՆԸ ԵՐԵՍՈՒՆԴԻՆԳ ՖՐԱՆԿ Է ԾԱԽՍՈՒՄ ՀԱՆՈՒՆ ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Երբ Ֆանտինը տեսավ, որ ապրում է, մի պահ հրճվեց: Ապրել սեփական աշխատանքով, պարկեշտորեն, ի՛նչ երկնային շնորհ: Իսկապես նրա աշխատասիրությունը վերադարձավ: Նա մի հայելի գնեց ևհաճությամբ դիտեց իր երիտասարդությունը, իր գեղեցիկ մազերն ու գեղեցիկ ատամները, շատ բան մոռացավ, սկսեց մտածել միմիայն Կոզետի և իր հնարավոր ապագայի մասին և գրեթե երջանիկ զգաց իրեն: Մի փոքրիկ սենյակ վարձեց և կահավորեց վարկով՝ իր ստանալիք աշխատավարձի հաշվին, մի հանգամանք, որ կարելի է նկատել որպես նրա անկարգ սովորությունների մնացորդ:

Քանի որ չէր կարող ասել, թե ամուսնացած է, ուստի զգուշանում էր խոսել իր փոքրիկ աղջկա մասին, ինչպես արդեն նկատել ենք:

Սկզբում, ինչպես տեսանք, կանոնավորապես վճարում էր Թենարդիեններին, և քանի որ միայն ստորագրել գիտեր, ապա ստիպված էր հանրային գրագրի միջոցով նամակ գրել նրանց:

Եվ հաճախ էր գրում, իսկ դա նկատեցին: Արհեստանոցում կանայք սկսեցին խիստ կամաց խոսել, թե Ֆանտինը «նամակներ է գրում» և «մի տեսակ է պահում իրեն»:

Ոչ ոք այնպես չի լրտեսում ուրիշի արարքները, ինչպես այն մարդիկ, որոնց այդ արարքները ամեննին չեն վերաբերում: «Ինչո՞ւ այդ պարոնը միշտ իրիկնապահին է գալիս, ինչո՞ւ այսինչ պարոնը հինգշաբթիները բանալին գամից չի կախում երբեք, ինչո՞ւ նա միշտ էլ երկրորդական

փողոցներով է անցնում, ինչո՞ւ տիկինը միշտ կառքից իջնում է նախքան իր տուն հասնելը, ինչո՞ւ է նա ուղարկում նամակի թուղթ գնելու, երբ իր «գրենական պիտույքների» դարակը լի է այդպիսի թղթերով» և այլն, և այլն: Կան մարդիկ, որ այս հանելուկների պատասխանները ստանալու համար,— հանելուկներ, որոնք, ի դեպ, նրանց հետ բոլորովին առնչություն չունեն,— ավելի փող են ծախսում, ավելի ժամանակ են մսխում, ավելի հոգնություն են հանձն առնում, որքան պետք չէր տասը տարվա լավ գործ կատարելու համար: Եվ անում են ձրի, հաճույքի համար և նրանց հետաքրքրասիրությունը վճարվում է միմիայն հետաքրքրասիրությամբ: Նրանք օրերով կհետեն այսինչ մարդուն կամ այնինչ կնոջը, ժամերով պահակ կկանգնեն փողոցի անկյուններում, պարտեզների դարպասներում, գիշերը, ցրտին ու անձրևին, հանձնակատարներ կվարձեն ու կկաշառեն նրանց, կհարբեցնեն կառապաններին ու սպասավորներին, կկաշառեն սենեկապանուհուն, ձեռք կբերեն դռնապանին: Ինչի՞ համար՝ ոչնչի: Տեսնելու, իմանալու, թափանցելու մոլուցքի համար, սոսկ պատմելու մարմաջի համար: Եվ հաճախ, երբ այդ գաղտնիքներն իմացվում են, հրատարակվում են, հանելուկներն օրը ցերեկով լուծվում, ապա առաջ են գալիս աղետներ, մենամարտեր, սնանկություններ, ընտանիքներ են խորտակվում, կյանքեր փշրվում՝ ի մեծ հաճույս նրանց, որոնք «ամեն ինչ հայտնաբերել են» առանց շահ ունենալու և գուտ բնագդաբար: Տխուր երևույթ է:

Որոշ մարդիկ չար են սոսկ խոսելու կարիքի պատճառով: Նրանց խոսակցությունը, սալոններում ունեցած զրույցը, նախասենյակում արած շաղակրատությունը նման է այն բուխարիներին, ուր փայտն արագ է վառվում. նրանց վառելիք է պետք, իսկ այդ վառելիքը մերձավորն է:

Այսպես էլ սկսեցին հետևել Ֆանտինին:

Դրա հետ միասին կար և մի այլ պատճառ. շատ կանայք նախանձում էին նրա խարտյաշ մազերին ու սպիտակ ատամներին:

Հաստատեցին, որ արհեստանոցում, ուրիշների շրջապատում, նա հաճախ շրջվում էր արցունքը սրբելու համար: Այդ այն բույներին էր, երբ նա մտածում էր իր երեխայի մասին, գուցե այն մարդու մասին, որին սիրել էր:

Վշտալի բան է անցյալի մութ կապերը խզելը:

Հաստատեցին նաև, որ առնվազն ամսական երկու անգամ նա նամակ է գրում, միշտ էլ նույն հասցեով և ապահարկելով նամակը¹²⁴: Վերջիվերջո կարողացան ձեռք գցել նաև հասցեն. «Պարոն Թենարդիե. պանդոկապան, Մոնֆերմեյում»: Գինետանը հանրային գրագրին շաղակրատելու մղեցին, մի բարի ծերուկ, որ չէր կարող իր ստամոքսը կարմիր գինով լցնել՝ առանց դատարկելու գաղտնիքների գրպանը: Կարճ ասած, իմացան, որ Ֆանտինը մի երեխա ունի: «Իր պես էլ աղջիկը կլինի»: Գտնվեց մի բամբասասեր կին, որ գնաց Մոնֆերմեյ, խոսեց Թենարդիեների հետ և վերադարձին ասաց. «Երեսունհինգ ֆրանկիս դիմաց սիրտս հովացավ, երեխային տեսա»:

Այս ճամփորդությունը կատարող բամբասասերը, տիկին Վիկտյորիեն անունով մի այլանդակ էակ՝ ամենքի առաքինության պահապանն ու դռնապանն էր: Տիկին Վիկտյորիենը հիստունվեց տարեկան էր և նրա սգեղությունը ծերությունից ավելի էր ուժեղացել: Ձայնը դողդոջուն էր և միտքը ուստոստուն: Ձարմանալի էր, որ այս պառավը ջահել էր եղել: Երիտասարդ տարիներին, 1793 թվականի ամենաբուռն օրերին, նա ամուսնացել էր մենաստանից փախած ու կարմիր գլակ դրած

¹²⁴ Այդ ժամանակ նամակների փոխադրության ծախսը վճարում էր ստացողը և ոչ թե ուղարկողը, ինչպես հիմա է: Ուստի Ֆանտինն ինքն էր վճարում՝ Թենարդիեներին ծախսի տակ չցցելու համար: Շ. թ.:

մի վանականի հետ, որ բերնարդենյան միաբանության անդամ լինելուց հետո դարձել էր յակոբինական: Այս կինը չոր էր, թթված, դաժան, բծախնդիր, կնճռոտ ու գրեթե թունավոր և շարունակում էր հիշել իր վանականին, որի այրին էր և, որը նրան խիստ ձիգ էր տվել ու ծալել: Նա, այսպես ասած, եղինջ էր, և նրա մեջ երևում էր կրոնավորի ճմլած սքեմը: Ռեստավրացիայի ժամանակ դարձել էր սուտ բարեպաշտ և այնպիսի եռանդ էր ցուցաբերել, որ քահանաները ներել էին նրան՝ վանականի հետ ամուսնացած լինելու համար: Նա մի փոքր կալվածք ուներ, որը բարձրաձայն կտակում էր մի կրոնական համայնքի: Արրասի եպիսկոպոսարանում լավ համարում ուներ: Այս տիկին Վիկտորիենն էր ահա, որ գնաց Մոնֆերմեյ և վերադառնալով ասաց. «Երեխային տեսա»:

Այս բոլորը որոշ ժամանակ խլեց: Մի տարուց ավելի էր, ինչ Ֆանտինն աշխատում էր ֆաբրիկայում, երբ մի առավոտ էլ արհեստանոցի վերահսկիչը պարոն քաղաքապետի կողմից հիսուն ֆրանկ տվեց նրան և ասաց, որ նա այլևս արհեստանոցում մնալ չի կարող, առաջարկելով միաժամանակ, պարոն քաղաքապետի կողմից, հեռանալ քաղաքից:

Դա հենց այն ամսին էր, երբ Թենարդիենները վեցի փոխարեն տասներկու ֆրանկ պահանջելուց հետո՝ պահանջում էին տասնհինգ ֆրանկ՝ տասներկուսի փոխարեն:

Ֆանտինը տապալվեց: Նա չէր կարող հեռանալ քաղաքից, որովհետև սենյակի վարձն ու կահավորման գինը չէր վճարել, իսկ հիսուն ֆրանկը բավական չէր այդ պարտքերը վճարելու համար: Նա մի քանի աղերսալի խոսքեր թողնվեց: Վերահսկիչը հասկացրեց, որ նա պարտավոր է անմիջապես հեռանալ արհեստանոցից, մանավանդ որ Ֆանտինը միջակ որակի բանվորուհի էր: Ավելի շուտ ամոթից, քան թե հուսահատությունից ընկճված նա հեռացավ արհեստանոցից ու վերադարձավ իր սենյակը: Ուրեմն ամենքն էլ գիտեին իր ամոթը:

Նա այլևս որևէ խոսք ասելու ուժ չունեցավ: Ոմանք խորհուրդ տվին դիմել պարոն քաղաքապետին, բայց նա չհամարձակվեց: Պարոն քաղաքապետը հիսուն ֆրանկ էր տվել նրան, որովհետև բարի էր և արտաքսում էր, որովհետև արդարամիտ էր: Ֆանտինը հնազանդեց այս վճռին:

IX

ՏԻԿԻՆ ՎԻԿՏՈՐԻԵՆԷ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վանականի այրին այսպիսով մի բանի պետք եղավ:

Սակայն պարոն Մադլենը ոչինչ չէր իմացել այս բոլորից: Մյուս կողմից այն դեպքերի զուգադրությունն են, որով լեցուն է կյանքը: Պարոն Մադլենը սովորություն ուներ երբեք չմտնել կանանց արհեստանոց, որի ղեկավար էր կարգել մի պառաված օրիորդի, որին քահանան էր հանձնարարել և ամբողջովին վստահում էր այդ վերահսկիչին՝ իսկապես հարգելի, զուսպ, արդարասեր ու ուղղամիտ մի անձնավորություն, որ համակված էր տալու գթասիրությամբ, բայց նույն չափով էլ համակված չէր հասկանալու ու ներելու գթասիրությամբ: Պարոն Մադլենն ամեն բանում հիմնվում էր նրա վրա: Այս լիազորությամբ ու համոզմամբ էր, որ վերահսկիչը հասկացրել էր բանի էությունը, դատել, դատապարտել և ի կատար ածել Ֆանտինի գործը:

Ինչ վերաբերում է հիսուն ֆրանկին, ապա վերահսկիչը տվել էր դա այն գումարից, որ պարոն Մադլենը հանձնել էր նրան բաժանելու բանվորներին իբրև ողորմություն և օգնություն, և որի մասին նա հաշիվ չէր ներկայացնում քաղաքապետին:

Ֆանտինը փորձեց սպասուհի դառնալ և սկսեց տնից-տուն հարցնել: Ոչ ոք չուզեց նրան վերցնել, իսկ նա չէր կարող հեռանալ քաղաքից: Հնավաճառը, որից գնել էր կահույքը,— այն էլ ի՛նչ կահույք,— նրան ասել էր. «Եթե հեռանաք՝ ձերբակալել կտամ ձեզ որպես գող»: Տանտերը, որին բնակվարձ էր պարտք, ասել էր. «Դուք ջահել եք ու գեղեցիկ, կարող եք վճարել»: Հիսուն ֆրանկը նա բաժանեց տանտիրոջն ու հնավաճառին, որին վերադարձրեց կահույքի երեք քառորդը, պահեց միայն ամենաանհրաժեշտը և մնաց առանց աշխատանքի, ունենալով սոսկ մի անկողին և մոտ հարյուր ֆրանկ պարտք:

Ֆանտինն սկսեց կայազորի զինվորների համար հաստ շապիկներ կարել և օրական տասներկու սու վաստակել, որից տասը Կոզետի համար էր պետք: Այդ ժամանակ էր, որ սկսեց անկանոն վճարել Թենարդիեներին:

Սակայն մի պառավ կին, որ նրա ճրագն էր վառում, երբ Ֆանտինը վերադառնում էր աշխատանքից, սովորեցրեց նրան աղքատ ապրելու արվեստը: Քչով ապրելուց զատ, կա նաև ոչնչով ապրելը, որոնք նման են երկու սենյակի, մեկը մութ է, մյուսը՝ խավար:

Ֆանտինը սովորեց, թե ինչպես կարելի է ձմեռն անցկացնել առանց կրակի, ինչպես հրաժարվել այն թռչունից, որ երկու օրվա մեջ մեկ պլիկի արժեքով կորեկ է ուտում, ինչպես կարելի է շրջագգեստը վերմակ դարձնել, իսկ վերմակը՝ շրջագգեստ, ինչպես կարելի է խնայել մոմը՝ դիմացի լուսամուտից ընկնող լույսի տակ ընթրելով: Դժվար է ասել, թե ինչ կարող են ստանալ մեկ սուից որոշ մարդիկ, որ ծերանում են գրկանքի ու պարկեշտության մեջ: Դա վերջիվերջո դառնում է տաղանդ: Ֆանտինը ձեռք բերեց այս վսեմ տաղանդը և մի քիչ արիացավ:

Այդ միջոցին նա ասում էր հարևանուհիներից մեկին. «Պահ, ես ինձ ասում եմ, որ եթե օրը միայն հինգ ժամ քնեմ և մնացածը նվիրեմ կար անելուն, միշտ էլ կարող եմ ինչ-որ կերպ հացս վաստակել: Եվ հետո, երբ տխուր ես, քիչ ես ուտում: Այնպես որ մի կողմից տանջանք, անհանգստություն ու մի քիչ հաց, մյուս կողմից էլ վշտեր. ահա այդ բոլորը կկշտացնեն ինձ»:

Այդ չքավորության մեջ աղջկան իր կողքին ունենալն ի՞նչ արտակարգ երջանկություն կլիներ: Մտածեց բերել տալ: Ինչպե՞ս, նրան մասնակից դարձնել իր գրկանքի՞ն: Բացի դրանից, նա պարտք էր Թենարդիեներին, ինչպե՞ս վճարեր:

Իսկ ճամփի ծա՞խսը, ինչո՞վ վճարել: Պառավը, որ նրան այսպես ասած չքավոր կյանքի դասեր էր տվել, մի սուրբ կին էր՝ Մարգարիտ անունով, աղքատ բարեպաշտ և գթասիրտ դեպի աղքատները, նույնիսկ դեպի հարուստները և ճիշտ այնքան գրել գիտեր, որ ստորագրում էր Մարքարիթ և հավատում էր աստծուն, որ նրա համար գիտությունն էր:

Ներքևում շատ այսպիսի առաքինություններ կան և մի օր էլ դրանք վերևում կլինեն: Այս կյանքն իր վաղը ունի:

Սկզբում Ֆանտինն այնպիսի ամոթ էր զգում, որ չէր համարձակվում դուրս գալ:

Երբ փողոցում էր լինում, երևակայում էր, որ ամենքն էլ շուտ են գալիս և մատնացույց անում իրեն: Ամենքն էլ նայում էին նրան, բայց ոչ ոք չէր բարևում. անցորդների սառն ու կծու արհամարհանքը ցուրտ քամու նման մտնում էր նրա մարմնի ու հոգու մեջ:

Փոքր քաղաքներում կարծես դժբախտ կինը մերկանում է բոլորի հետաքրքրության ու հեգնանքի ներքո, իսկ Փարիզում գոնե ոչ ոք չի ճանաչում նրան և այդ անծանոթությունը դառնում է հագուստ: Օ՛հ, ինչպես էր նա ցանկանում Փարիզ վերադառնալ: Բայց անհնար էր:

Պետք եղավ վարժվել անուշադիր մնալուն, ինչպես որ վարժվել էր աղքատության: Քիչ-քիչ նա վճռական դարձավ և երկու-երեք ամիս հետո դեն շաքտելով ամոթը՝ սկսեց դուրս գալ այնպիսի տեսքով, կարծես ոչինչ չէր պատահել: «Ինձ համար մեկ է»,— ասաց նա: Սկսեց անցուդարձ անել գլուխը բարձր, դառն ժպիտով և զգաց, որ անամոթ է դառնում:

Տիկին Վիկտյորիենը երբեմն լուսամուտից տեսնելով, որ նա անցնում է, նկատում էր «այդ արարածի» աղքատությունը և իր շնորհիվ «արժանի տեղը գտած» լինելը ու հրճվում էր: Չարերը սև ուրախություն ունեն:

Երկարատև աշխատանքը հոգնեցնում էր Ֆանտինին և թեթև չոր հագը, որ արդեն ուներ, ավելացավ: Երբեմն իր հարևանուհուն ասում էր. «Տեսեք, թե ինչ տաք են ձեռքերս»:

Բայց առավոտները, երբ մի հին կոտրած սանրով սանրում էր իր գեղեցիկ մազերը, որ մետաքսի կաժի նման ծփում էին՝ մի բուրբուռ երջանիկ պչրասիրություն էր ունենում:

X

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նա աշխատանքից ազատվեց ձմռան վերջին. ամառն անց կացավ, բայց ձմեռը նորից եկավ: Կարճ օրեր սկսվեցին, հետևաբար և աշխատանքը նվազեց: Ձմեռ է, ջերմություն չկա, լույս չկա, երեկոն նման է առավոտին, թուխպ է, վերջալույսի ժամին լուսամուտը գորշ է, հստակ չի երևում: Երկինքը երդիկի նման է: Ողջ ցերեկը նման է քարանձավի: Արևն աղքատի տեսք ունի: Մոսկալի եղանակ. ջուրը և մարդու սիրտը քարի է վերածում: Պարտապանները չարչարում էին նրան:

Ֆանտինը շատ քիչ էր փող վաստակում, իսկ պարտքերն աճել էին: Թենարդիեններն անկանոն կերպով փող ստանալու պատճառով ամեն բուրբուռ նամակ էին գրում, որոնց պարունակությունը վշտացնում էր նրան, իսկ փոստային վճարը՝ կործանում: Մի օր էլ գրեցին, որ Կոզետը այդ ցրտին բոլորովին մերկ է և բրդի շորի կարիք ունի, իսկ դրա համար անհրաժեշտ է առնվազն տասը ֆրանկ: Նամակն ստանալով՝ ողջ օրը ձեռքում ճմռեց այն: Երեկոյան մտավ իրենց փողոցի անկյունում գտնվող սափրիչի մոտ և արձակեց իր մազերը: Նրա սքանչելի խարտյաշ մազերը հասնում էին մինչև ազդրը:

— Ի՛նչ գեղեցիկ մազեր,— բացականչեց սափրիչը:

— Ինչքա՞ն կտաք դրանց համար,— հարցրեց Ֆանտինը:

— Տասը ֆրանկ:

— Կտրեք:

Եվ մի զգեստ գնելով՝ ուղարկեց Թենարդիեններին:

Այդ զգեստը կատաղեցրեց նրանց: Նրանց ուզածը փողն էր: Շրջագզեստը տվեցին Էպոնինին, իսկ խեղճ Արտույտը շարունակեց սարսռալ:

Ֆանտինը մտածեց. «Երեխաս այլևս չի մրսում: Իմ մազերով հագցրի նրան»,— նա սկսեց կլոր փոքր գլխարկներ դնել, որով ծածկվում էր նրա խուզած գլուխը և այդպիսով էլ ավելի գեղեցիկ էր երևում:

Մի խավար աշխատանք էր կատարվում Ֆանտինի սրտում: Երբ տեսավ, որ չի կարող մազերը հարդարել, սկսեց ատելությամբ լցվել շրջապատի նկատմամբ: Երկար ժամանակ նա բաժանել էր դեպի հայր Մադլենը տաժած բոլորի հարգանքը. սակայն շարունակ կրկնելով ինքն-իրեն, թե նա էր իր դժբախտության պատճառը, որովհետև արտաքսել էր արհեստանոցից, վերջիվերջո ասեց նրան, հատկապես նրան: Երբ անցնում էր ֆաբրիկայի առջնից այն ժամերին, երբ բանվորները դռան մոտ էին լինում, սկսում էր ծիծաղել ու երգել:

Մի պառավ բանվորուհի տեսնելով նրան այդ ձևով ծիծաղելիս ու երգելիս՝ ասաց. «Այս աղջկա վերջը վատ է լինելու»:

Մոլեգնած սրտով նա մի սիրեկան գտավ, հենց առաջինպատահածին, մի մարդու, որին չէր սիրում: Դա մի թշվառական էր, մուրացիկ երաժշտի տիպ, անաշխատ ստահակ: Նա ծեծում էր Ֆանտինին և թողեց նրան, ինչպես որ նա էր մտերմացել այդ մարդուն՝ զզվանքով:

Ֆանտինը պաշտում էր իր երեխային:

Ինչքան ավելի էր նա իջնում, այնքան չորսբոլորը խավարում էր և այնքան ավելի այդ փոքրիկ հրեշտակը շողշողում էր նրա հոգու խորքում: «Երբ հարստանամ,— ասում էր նա,— Կոզետիս կվերցնեմ մոտս»,— և ծիծաղում էր: Հազը ձեռք չէր քաշում նրանից և մեջքը քրտնում էր:

Մի օր էլ նա Թենարդիեններից հետևյալ նամակն ստացավ. «Կոզետը հիվանդ է մեր շրջանում տարածված մի հիվանդությամբ. դրան բժավոր տենդ անունն են տալիս: Թանկարժեք դեղեր են պետք և դա մեզ քայքայում է, էլ չենք կարող գնել: Եթե ուր օրվա մեջ քառասուն ֆրանկ չուղարկեք՝ փոքրիկը կմեռնի»:

Ֆանտինն սկսեց քահ-քահ ծիծաղել և ասաց իր պառավ հարևանուհուն.

— Օ՛հ, ինչ բարի են դրանք, քառասուն ֆրանկ, ինչպես չէ, այսինքն երկու նապոլեոն¹²⁵: Որտեղից են ուզում, որ ճարեն: Խենթ են այդ գյուղացիները:

Սակայն նա գնաց սանդուղքի լուսանցքի մոտ և նորից կարդաց նամակը:

Հետո իջավ սանդուղքից, դուրս եկավ, վազեց ցատկոտելով ու ժպտալով և շարունակ ծիծաղելով:

Նրան հանդիպողներից մեկը նկատեց.

— Ի՞նչ է պատահել ձեզ, որ այդքան ուրախ եք:

Ֆանտինը պատասխանեց.

— Մի սքանչելի հիմարություն են գրել այդ գյուղացիները: Քառասուն ֆրանկ են պահանջում: Գյուղացի են, է՛հ:

Երբ հրապարակով էր անցնում, տեսավ բազմաթիվ մարդիկ, որ շրջապատել էին մի տարօրինակ ձևի կառք, որի մեջ կարմիր շորեր հագած մի մարդ կանգնած երկար-բարակ խոսում էր: Մի խեղկատակ ատամնաբույժ էր դա, որ շրջագայում էր և հասարակությանն առաջարկում լրիվ ատամնաշարեր, ատամնախյուս, փոշիներ և սպեղանիներ:

¹²⁵ Նապոլեոն կամ լուիդոր — 20 ֆրանկանոց ոսկեդրամ:

Ֆանտինը խառնվեց խմբին և մյուսների նման սկսեց ծիծաղել այս ճառի վրա, որի մեջ արգոտյան բառեր կային ստորին խավի և ժարգոն արտահայտություններ պատվավոր մարդկանց համար: Ատամ քաշողը տեսավ այդ գեղեցիկ աղջկան, որ ծիծաղում էր և հանկարծ բացականչեց.

— Գեղեցիկ ատամներ ունեք, այ ծիծաղող աղջիկ: Եթե համաձայնեք ծախել ձեր երկու կտրիչները՝ յուրաքանչյուրին մեկ նապոլեոն կտամ:

— Այդ ի՞նչ բան է, իմ կտրիչները,— հարցրեց Ֆանտինը:

— Կտրիչները,— շարունակեց ատամնաբույժ-դասախոսը,— առջևի ատամներն են, վերևի երկուսը:

— Ի՞նչ սոսկալի բան,— գոչեց Ֆանտինը:

— Երկու նապոլեոն,— մոթմոթաց այդտեղ կանգնած մի ատամնաթափ պառավ:— Ա՛յ քեզ երջանիկ աղջիկ:

Ֆանտինը փախավ և ականջները խցկեց չլսելու համար կերկերուն ձայնն այդ մարդու, որ աղաղակում էր. «Մտածեք, գեղեցկուհի, երկու նապոլեոն, դա կարող է մեծ ծառայություն մատուցել: Եթե ձեր սիրտը թելադրի, եկեք այս երեկո «Արծաթե ծածկ» պանդոկ, ես այնտեղ կլինեմ:

Ֆանտինը վերադարձավ տուն խիստ զայրացած և դեպքը պատմեց իր բարի հարևանուհուն՝ Մարգարիտին. «Հասկանո՞ւմ եք, խայտառակ բան չէ՞ դա, ինչպե՞ս են թույլ տալիս, որ այդպիսի մարդիկ ման գան երկրում: Առջևի երկու ատամները պոկի, չէ՞ որ սարսափելի տեսք կունենամ: Մազերը կբուսնեն, իսկ ատամներ՞ը: Օ՛, գազան մարդ, ավելի շուտ կգերադասեմ հինգերորդ հարկից գլխիվայր ցած գցել ինձ սալահատակի վրա: Ասաց, որ այս երեկո կլինեմ «Արծաթե ծածկ» պանդոկում:

— Եվ ինչքա՞ն էր տալիս,— հարցրեց Մարգարիտը:

— Երկու նապոլեոն:

— Քառասուն ֆրանկ է անում:

— Այո,— ասաց Ֆանտինը,— քառասուն ֆրանկ է անում:

Նա մտքերի մեջ ընկավ և սկսեց աշխատել: Տասնհինգ րոպե հետո թողեց իր կարը և դուրս եկավ սանդուղք՝ նորից կարդալու Թենարդիենների գրած նամակը:

Ներս մտնելով ասաց Մարգարիտին, որ աշխատում էր նրա մոտ.

— Ի՞նչ բան է բծավոր տենդը, չգիտե՞ք:

— Այո,— ասաց պառաված օրիորդը,— հիվանդություն է:

— Ուրեմն շա՞տ դեղեր են պահանջում:

— Օ, սարսափելի շատ:

— Որտե՞ղ է ցավում:

— Դա մի հիվանդություն է, որ ամեն տեղ ցավում է:

— Երեխաների՞ն էլ է հարվածում:

— Մանավանդ երեխաներին:

— Մեռնում են դրանից:

— Ինչքան ուզես,— պատասխանեց Մարգարիտը:

Ֆանտինը դուրս եկավ՝ նորից կարդալու նամակը:

Երեկոյան նա դուրս գնաց, նրան տեսան Փարիզի փողոցով անցնելիս, որտեղ պանդոկներն են գտնվում:

Հաջորդ առավոտ, երբ Մարգարիտը լուսաբացից առաջ մտավ Ֆանտինի սենյակ,— նրանք միշտ միասին էին աշխատում և այդ ձևով երկուսի փոխարեն մեկ մոմ էին վառում,— Ֆանտինին գտավ անկողնու վրա նստած, գունատ ու սառած: Նա չէր քնել, գլխարկն ընկած էր ծնկներին, մոմը ողջ գիշեր վառվել էր և գրեթե ամբողջությամբ սպառվել էր:

Մարգարիտը կանգ առավ շենքին՝ քարացած այդ վիթխարի անկարգությունից և բացականչեց:

— Տե՛ր աստված, մոմն ամբողջովին վառվել է մի բան պատահել է անպայման:

Ապա նայեց Ֆանտինին, որ իր խուզած գլուխը դարձրեց նրա կողմը:

Մի գիշերվա մեջ Ֆանտինը տասը տարով ծերացել էր:

— Տե՛ր Հիսուս,— գոչեց Մարգարիտը,— քեզ ինչ է պատահել, Ֆանտին:

— Ոչինչ,— պատասխանեց Ֆանտինը:— Ընդհակառակը, երեխաս չի մեռնի այդ զարհուրելի հիվանդությունից, քանի որ օգնություն կստանա: Ես գոհ եմ:

Այս ասելով նա ցույց տվեց սեղանի վրա փայլող երկու նապուլեոնը:

— Օ՛, տեր աստված,— գոչեց Մարգարիտը:— Սա մի ամբողջ հարստություն է: Որտեղի՞ց ես ստացել այս լուիդորները:

— Ստացա,— պատասխանեց Ֆանտինը:

Եվ ժպտաց: Մոմը լուսավորեց նրա դեմքը: Դա սրտակեղեք ժպիտ էր: Կարմրավուն լորձունքը կուտակվել էր նրա շրթունքի անկյուններում և մի սև խոռոչ կար բերանում:

Երկու ատամները հանվել էին:

Քառասուն ֆրանկը նա ուղարկեց Մոնֆերմեյ:

Իմիջիայլոց Թենարդիների խորամանկությունն էր դա փող ստանալու համար: Կոզետը հիվանդ չէր:

Ֆանտինն իր հայելին դուրս գցեց լուսամուտից: Վաղուց նա հրաժարվել էր երկրորդ հարկի իր փոքր սենյակից և տեղափոխվել էր տանիքի տակի ձեղնհարկը, որ սոսկ մի մղկակով էր փակվում: Դա մեկն էր այն խցերից, որոնց առաստաղները հատակի հետ անկյուն են կազմում և ամեն բոպե կաշում մարդու գլխին: Խեղճ բնակիչը չի կարող գնալ իր սենյակի խորքը, ինչպես որ չի կարող գնալ իր բախտի խորքը՝ եթե ոչ ավելի ու ավելի կռանալով: Նա այլևս անկողին չունեի, մնացել էր մի կտոր, որ նա կոչում էր վերմակ, մի ներքնակ էլ հատակին գցած և աթոռ՝ հարդե նստատեղին

քայքայված: Նրա ունեցած փոքր վարդենին չորացել էր մի անկյունում, մոռացվել: Մի ուրիշ անկյունում մի կարագաման կար, որ ջրաման էր դարձել ու սառում էր ձմռանը և, որի մեջ ջրի տարբեր մակերեսներ երկար ժամանակ մնում էին՝ նշանակված սառույցի շրջանակներով: Նա կորցրել էր ամոթխածությունը: Կորցրեց նաև պչրասիրությունը: Կանացիության վերջին նշանը: Տնից դուրս էր գալիս կեղտոտ գլխարկներով: Ժամանակ չունենալու թե անտարբերության հետևանքով էր, — միևնույն է, — նա այլևս հոգ չէր տանում իր սպիտակեղենին: Ինչքան գուլպայի կրունկները մաշվեին, այնքան ավելի ցած է քաշում գուլպաները կոշիկների մեջ: Դա երևում էր որոշ ուղղահայաց ծալքերից: Հին ու մաշված սեղմիրանը կարկատում էր չթի կտորտանքով, որոնք նվազագույն շարժում իսկ անելիս ճղվում էին: Այն մարդիկ, որոնց փող էր պարտք՝ «ներկայացումներ» էին սարքում և ոչ մի բույե հանգիստ չէին թողնում: Նրանց հանդիպում էր փողոցում, իր սանդուղքի վրա: Գիշերներն անց էր կացնում լալով և մտածելով: Նրա աչքերը խիստ փայլում էին, մշտական ցավ էր զգում թիկունքում, ձախ թիկնուկների վերևում և շատ էր հագում: Նա խորապես ատում էր հայր Մադլենին և չէր գանգատվում: Օրական տասնյոթ ժամ կար էր անում: Բայց մի բանտային աշխատանքի կապալառու, որ բանտարկված կանանց աշխատեցնում էր ցածր գներով, անմիջապես իջեցրեց գները, որից և ազատ բանվորուհիների օրավարձն էլ իջավ ինը սուի: Տասնյոթ ժամյա աշխատանքային օր և ինը սու: Նրա պարտապաններն ավելի քան երբևիցե անխիղճ էին դարձել: Հնավաճառը, որ ետ էր վերցրել գրեթե ողջ կահույքը, շարունակ ասում էր նրան.

— Ե՞րբ ես փողս տալու, լի՛րբ:

Ի՞նչ էին ուզում նրանից, ո՛վ աստված: Նա իրեն պաշարված էր զգում և մեջը սկսում էր զարգանալ ինչ-որ կատաղի գազան: Այդ օրերին Թենարդիեն գրեց նրան, որ ինքն իսկապես մեծ բարեսրտությամբ սպասել է, բայց այժմ հարյուր ֆրանկ է պետք, հակառակ դեպքում ծանր հիվանդությունից ապաքինվող Կոզետին դուրս կանի այդ ցրտին ինչ ուզում է լինի, թեկուզ ճանապարհների վրա սատկի, դա իր գործը չէ:

— Հարյուր ֆրանկ, — մտածեց Ֆանտինը: — Կա՞րողոք մի այնպիսի երկիր, ուր կարելի է օրական հինգ ֆրանկ շահել:

— Ճար չկա, — ասաց նա, — մնացածն էլ ծախենք:

Եվ դժբախտ աղջիկը դարձավ պոռնիկ:

XI

CHRISTUS NOS LIBERAVIT¹²⁶

Ի՞նչ է Ֆանտինի այս պատմությունը: Դա ստրկուհի գնող հասարակության պատմությունն է:

Ումի՞ց է գնում. թշվառությունից:

Քաղցից, ցրտից, մեկուսացումից, լքումից և զրկանքից: Կսկծալի առևտուր: Մի հոգի՝ մի կտոր հացի համար: Թշվառությունն առաջարկում է, հասարակությունն ընդունում:

¹²⁶ Քրիստոս փրկեց մեզ (լատ.):

Հիսուս Քրիստոսի սուրբ օրենքը կառավարում է մեր քաղաքակրթությունը, սակայն դեռ նրա մեջ չի թափանցել: Ասում են, որ եվրոպական քաղաքակրթությունից վերացել է ստրկությունը: Միայն է դա: Նա շարունակում է գոյություն ունենալ, բայց միայն կնոջ վրա է ծանրացած և դա կոչվում է պոռնկություն:

Նա ծանրացած է կնոջ վրա, այսինքն նազելիության, թուլության, գեղեցկության և մայրության վրա: Սա տղամարդու խոշորագույն ամոթներից մեկն է:

Այս ցավալի դրամայի այն կետում, որին հասանք, Ֆանտինին այլևս ոչինչ չէր մնացել նախկինից: Ցեխ դառնալուց հետո՝ նա դարձել է մարմար: Նրան կպչողը մրսում է: Նա անցնում է, ենթարկվում ձեզ ու մոռանում. նա անպատվված ու խստությամբ համակված մի էակ է: Կյանքը և հասարակարգը նրան ասել են իրենց վերջին խոսքը: Նրա գլխին եկել է այն ամենը, որ պիտի գա: Նա ամեն բան զգացել է, ամեն բան կրել, ամեն բան ապրել, ամեն կերպ տառապել, ամեն ինչ կորցրել և ամեն բան ողբացել: Նա համակերպվել է այն համակերպությամբ, որ նման է անտարբերության, ինչպես որ մահը նման է քնելուն: Նա այլևս ոչ մի բանից չի խուսափում: Նրա վրա է իջնում ողջ աղջամուղջը և նրա վրա է թափվում ամբողջ օվկիանոսը. նրա ինչ հոգն է. նա մի թրջված սպունգ է:

Համենայն դեպս, ինքն այդպես է կարծում, բայց սխալ է երևակայել, որ ճակատագրի վախճանը հասել է և կարելի է որևէ բանի խորքը տեսնել:

Ավա՛ղ, ի՞նչ են այս բոլոր խառնիխուռն առաջ մղված ճակատագրերը, ո՞ր են գնում նրանք, ինչո՞ւ են այդպես ստեղծվել դրանք:

Նա, ով գիտե այս բոլորը, տեսնում է ողջ խավարը:

Նա մենակ է: Եվ կոչվում է աստված:

XII

ՊԱՐՈՆ ԲԱՄՍԱԲՈՒԱՅԻ ԴԱՏԱԴԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր փոքր քաղաքներում և մասնավորապես Մոնտրոյ-սյուռ-Մեռում կա երիտասարդների մի դասակարգ, որ գավառում խժռում են հազար հինգ հարյուր լիլր տարեկան եկամուտը միևնույն ձևով, ինչպես որ նրանց նմանները Փարիզում լափում են երկու հարյուր հազար ֆրանկը մի տարվա մեջ: Նրանք մի չեզոք ցեղի պատկանող էակներ են՝ շատ մակաբույծ, անպետք մարդիկ, որ մի քիչ հոդ, մի քիչ հիմարություն և մի քիչ էլ խելք ունեն, որ որևէ սալոնում կոպիտ կհամարվեին, բայց գինետներում ջենտլմեն են զգում իրենց, որ ասում են՝ իմ արտերը, իմ անտառները, իմ գյուղացիները, սուլում են թատրոնի դերասանուհիներին՝ ապացուցելու համար, որ նրբաճաշակ մարդիկ են, կովշտում են կայագործի սպաների հետ՝ ցույց տալու համար, որ ռազմատենչ մարդիկ են, որսով են զբաղվում, ծխում են, հորանջում, խմում, քթախոտ քաշում, բիլիարդ խաղում, նայում են, թե ինչպես են հանրակառքից ճամփորդներն իջնում, ապրում են սրճարանում, ճաշում պանդոկում, մի շուն ունեն, որ սեղանի տակ ոսկոր է ուտում և մի սիրունիկ, որ պնակներ է շարում սեղանի վրա, մի սուի համար ժամերով վիճում են, չափազանցում են մոդաները, հիանում են ողբերգության վրա, արհամարհում են կանանց, հագնում են հին կոշիկներ, ընդօրինակում են Լոնդոնը Փարիզի միջոցով, իսկ Փարիզը Պոնտ-ա-Մուսոնի միջոցով, ծերանալիս ապուշ են դառնում, չեն աշխատում, ոչ մի բանի պիտանի չեն և մեծ վնաս էլ չեն հասցնում:

Պարոն Ֆելիքս Թուրմիսը եթե մնար իր գավառում և երբեք Փարիզը չտեսներ, այսպիսի մարդ կլիներ:

Եթե ավելի հարուստ լինեին նրանք՝ կասեին վայելչասերներ են, իսկ եթե ավելի աղքատ լինեին՝ կասեին դատարկապորտներ են: Նրանք պարզապես դատարկագործ մարդիկ են. դրանց մեջ կան ձանձրալիներ, ձանձրացողներ, երագողներ և մի քիչ էլ ստահակներ:

Այդ ժամանակվա վայելչասերի նշաններն էին բարձր օձիքը, խոշոր փողկապը, զարդարուն շղթայով ժամացույցը, երեք հատ իրար վրա հագած տարբեր գույնի ժիլետները, որոնցից կարմիրն ու կապույտը ներսը, ձիթապտղի գույնի մի կարճ զգեստ՝ ձկան պոչի նման տտունով և երկու շարք իրար սեղմված ու մինչև ուները հասնող արծաթե կոճակներով. ավելի բաց ձիթապտղի գույնի շալվար, որի կարերի կողմը զարդարված էր անորոշ թվով երիզներով՝ միշտ էլ կենտ՝ մեկից մինչև տասնմեկ, մի թիվ, որից երբեք չէին անցնում: Ավելացրեք դրան ճտքավոր կոշիկներ՝ կրունկներին փոքր երկաթներով, նեղ եզրով բարձրադիր գլխարկ, խիտ մազեր, խոշոր ձեռնափայտ և Պոտիեի բառախաղերով համեմված խոսակցություն: Այս ամենի վրա խթաններ ու բեղեր: Այդ դարաշրջանում բեղերը բուրժուա լինելու, իսկ խթանները հետևակ լինելու նշաններ էին:

Գավառական վայելչասերն ավելի երկար խթաններ և ավելի ամեհի բեղեր է կրում:

Դա այն ժամանակն էր, երբ Հարավային Ամերիկայի հանրապետությունները պայքարում էին Իսպանիայի թագավորի դեմ, իսկ Բուլվարը՝ Մորիլլոյի դեմ, Ռոյալիստները նեղ եզրով գլխարկ էին կրում, որ կոչվում էին մորիլլոներ, իսկ լիբերալները լայնեզր գլխարկ էին կրում, դրանք կոչվում էին բուլվարներ:

Ութ կամ տասը ամիս անց այն բանից, որ պատմվեց նախընթաց էջերում, 1823 թվականի հունվարի առաջին օրերին, մի երեկո, երբ ձյունը նստել էր, այդ պճնամուլներից մեկը, այդ դատարկագործներից մեկը, մի «ողջախոհ» (որովհետև մորիլլո էր կրում), խիստ տաք պարուրված այն խոշոր վերարկուով, որ ցուրտ եղանակին լրացնում էր մոդայիկ տարազը, զվարճանում էր՝ չարչարելով մի խեղճ արարածի, որ պարահանդեսի զգեստներ հագած, թներն ու ուները բաց և մազերին ծաղիկներ ամրացրած՝ դեգերում էր սպաների սրճարանի ցուցափեղկի առջև: Այդ պճնամուլը ծխում էր, որովհետև մոդայի պահանջն այդպես էր:

Ամեն անգամ, երբ այդ կինն անցնում էր նրա առջևից՝ պճնամուլը սիգարի մի քուլա ծխի հետ միասին շարտում էր նրան որևէ խոսք, որը իր կարծիքով սրամիտ էր ու զվարճալի, օրինակ.

— Ինչքա՛ն տգեղ ես դու: Լավ կանես թաքնվես: Անատամ, և այլն, և այլն:

Այդ մարդը կոչվում էր պարոն Բամատաբուա: Տխուր ուրվականի նման զարդարված այդ կինը երթնելում էր ձյան վրա, ոչ պատասխանում էր նրան, ոչ նայում և, չնայած դրան, մոայլ լռությամբ ու կանոնավորությամբ կատարում էր իր երթնելը, որ հինգ րոպեն մեկ բերում էր նրան այդ հեգնանքի տակ, ինչպես դատապարտված զինվորն է երթնելում ճիպոտների տակ: Այս անուշադրությունն անկասկած խոցեց անգործին, որն օգտվելով այն րոպեից, երբ կինը շուտ էր գալիս, անձայն առաջացավ նրա ետևից և ծիծաղը խեղդելով կոացավ, սալահատակի վրայից մի գունդ ձյուն վերցրեց և հանկարծ խոթեց կնոջ կոնակը՝ մերկ ուսերի արանքից: Կինը մոնչաց, շուտ եկավ, հովազի նման ցատկեց և նետվեց պճնամուլի վրա, եղունգները խրեց նրա դեմքի մեջ՝ այնպիսի զարհուրելի խոսքեր ասելով, որ միայն զինվորը կարող է այդպես տարափի նման թափել: Այս հայհոյանքները դուրս էին գալիս օդուց խոպոտած ձայնով մի զզվելի բերանից, որն իսկապես առջևի երկու ատամը չունեի: Ֆանտինն էր:

Այս դեպքի առաջ բերած աղմուկի վրա սպաները դուրս եկան սրճարանից, անցորդները հավաքվեցին և կազմվեց մի խոշոր շրջանակ, որը ծիծաղում էր, գոռգոռում ու ծափահարում երկու էակներից կազմված այդ հողմապտույտի վրա, որի մեջ դժվարությամբ կարելի էր զանազանել մի մարդու ու մի կնոջ. մարդը, որի գլխարկն ընկել էր գետին՝ ծեծվում էր, իսկ կինը մոնչալով, գլուխը բաց, առանց մազի և անատամ, զայրույթից կապարագույն դարձած և սոսկալի տեսքով՝ խփում էր և ոտքերով, և բռնցքներով:

Հանկարծ մի բարձրահասակ մարդ դուրս եկավ ամբոխից, բռնեց կնոջը նրա մետաքսե ցեխոտ գոտուց և ասաց.

— Հետևիր ինձ:

Կինը գլուխը բարձրացրեց և նրա մոլեգին ձայնը հանկարծ մարեց: Նրա աչքերն ապակու փայլ ունեին, կապարագույն դեմքը գունատվել էր և ինքը դողում էր սարսափահար: Նա ճանաչել էր Ժավերին:

Պճնամուկն օգտվել էր այս դեպքից ու փախել:

XIII

ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Ժավերը ներկաներին ետ մղեց, շրջանակը ճեղքեց և սկսեց մեծ քայլերով առաջանալ դեպի հրապարակի վերջավորությունում գտնվող ոստիկանական պահակատուն՝ հետևից քարշ տալով թշվառ կնոջը, որ մեքենայորեն ենթարկվում էր: Ոչ Ժավերը և ոչ էլ Ֆանտինը որևէ բան չէին արտասանում: Հանդիսատեսների ամբոխը՝ տարված ուրախության մոլուցքով, հետևում էր նրանց գռեհիկ խոսքեր արձակելով: Գերագույն թշվառությունը լկտիության առիթ էր ամբոխի համար:

Հասնելով ոստիկանական պահակատուն, որ մի վառարանով տաքացվող, փողոցի կողմից երկաթաձաղ, ներսից ապակե դռնով մի ցած սրահ էր և պահպանվում էր մի քանի զինվորներով, Ժավերը դուռը բացեց, Ֆանտինի հետ ներս մտավ, դուռն իր ետևից փակեց՝ ի մեծ հիասթափություն հետաքրքրասերների, որոնք բարձրանալով ոտքերի ծայրերին և վզները երկարելով պահականոցի պղտոր ապակու առջև՝ ջանում էին տեսնել: Հետաքրքրասիրությունը մի տեսակ որկրամոլություն է: Տեսնել՝ նշանակում է խժոռել:

Ներս մտնելուն պես Ֆանտինը գնաց ընկավ մի անկյուն և վախեցած էգ շան նման լուռ ու անշարժ պազեց այդտեղ:

Պահականոցի սերժանտը մի վառվող մոմ բերեց ու դրեց սեղանի վրա: Ժավերը նստեց, գրպանից մի դրոշմված թուղթ հանեց և սկսեց գրել:

Այս կարգի կանայք մեր օրենքներով ամբողջովին ենթարկված են ոստիկանության տնօրինությանը և ոստիկանությունը նրանց հետ ուզածն անում է, պատժում է՝ ինչքան հարմար է գտնում և իր հաճությամբ բռնագրավում նրանցից այն երկու տխուր բաները, որ այդ կանայք անվանում են իրենց արհեստը և ազատությունը: Ժավերն անդդվելի էր. նրա լուրջ դեմքը ոչ մի հուզում չէր մատնում: Մինչդեռ նա ծանրախոհ ու խոր կերպով զբաղված էր: Դա այն բույներներից մեկն էր, երբ նա առանց վերահսկողության, բայց խստաբարո խղճի ողջ խղճմտությամբ գործադրում էր իր երկյուղալի ու անձնական իշխանությունը: Այդ բույնին նա զգում էր, որ իր ոստիկանական աթոռը

դատարան է: Եվ նա դատում էր: Դատում էր ու դատապարտում: Մտքում եղած բոլոր գաղափարները հավաքում էր իր արած խոշոր գործի շուրջը: Ինչքան ավելի էր քննում այդ աղջկա դեպքը, այնքան ավելի էր վրդովվում: Ակներն էր, որ հանցագործություն էր տեսնում այդտեղ: Նա քիչ առաջ ակնանատես էր եղել, որ փողոցում հասարակությունը, հանձին մի սերփականատեր ընտրողի, նախատված ու հարվածված էր մարդկությունից դուրս գտնվող մի արարածի կողմից: Մի պոռնիկ կին ձեռք էր բարձրացրել մի բուրժուայի վրա, ժավերն ինքը տեսել էր դա և լուռ շարունակում էր գրել:

Երբ վերջացրեց, ստորագրեց, ծալեց թուղթը և այն տալով պահականոցի սերժանտին՝ ասաց.

— Երեք մարդ վերցրեք և այս կնոջն առաջնորդեք բանտ:— Ապա դառնալով դեպի Ֆանտինը՝ ասաց.— վեց ամիս կալանք:

Դժբախտ կինը ցնցվեց:

— Վեց ամիս, վե՛ց ամիս բանտ,— գոչեց նա:— Վեց ամիս օրական յոթ սուով աշխատել: Իսկ ի՞նչ կլինի Կոզետը, աղջի՛կս, աղջի՛կս: Չէ՞ որ ես դեռ հարյուր ֆրանկ պարտք եմ Թենարդիեներին, գիտե՞ք այս բանը, պարոն վերահսկիչ:

Եվ առանց վեր կենալու, ձեռքերը կցած, ծնկներով խոշոր քայլեր անելով, նա առաջացավ դեպի սալաքարը, որ ցեխոտված էր այդ բոլոր մարդկանց կոշիկներից:

— Պարոն Ժավեր,— ասաց նա,— շնորհ եմ հայցում: Հավատացնում եմ, որ ես հանցավոր չեմ: Եթե սկիզբը տեսնեիք՝ կիմանայիք: Երդվում եմ աստծով, որ հանցավոր չեմ: Այդ պարոն բուրժուան, որին ես չեմ ճանաչում, ձյուն լցրեց կոնակս: Մի՞թե իրավունք ունի ձյուն նետելու իմ կոնակը, երբ ես հանգիստ անց եմ կենում՝ առանց որևէ մեկին վատություն անելու: Դա ինձ սարսռեցրեց, մանավանդ, ինչպես տեսնում եք, մի քիչ հիվանդ եմ: Բացի դրանից, արդեն բավական ժամանակ էր, որ ափեղցփեղ խոսքեր էր ասում ինձ: Տգեղ ես դու, ատամչունես: Իսկ ես գիտեմ, որ ատամ չունեմ: Ես ոչինչ չեի անում, ասում էի, թե պարոն մարդ է, զվարճանում է: Շատ պարկեշտ էի նրա նկատմամբ, ոչ մի խոսք չեի ասում: Հենց այդ թույլեին էլ ձյունը գցեց: Պարոն Ժավեր, պարոն բարի վերահսկիչ, միթե որևէ մեկը չկար այնտեղ, որ ասեր ձեզ, թե ճիշտ եմ խոսում: Ես գուցե սխալվեցի, որ բարկացա: Առաջին թույլեին, գիտե՞ք, կորցնում ես քեզ, բորբոքվում: Բացի դրանից, երբ այդպիսի մի սառը բան գցում են ձեր մարմնի մեջ այն թույլեին, երբ դուք չեք սպասում: Ես սխալվեցի, որ այդ պարոնի գլխարկը ցած գցեցի: Ինչո՞ւ թողեց գնաց, ես ներողություն կխնդրեի: Օ՛, ասոված իմ, ինձ համար միևնույն է, ներողություն կխնդրեի նրանից: Այս անգամ շնորհ արեք ինձ, պարոն Ժավեր: Իսկ բանտերում, չէ՞ որ դուք գիտեք, օրական յոթ սու են աշխատում, դա կառավարության հանցանքը չէ, բայց յոթ սու են աշխատում և երևակայեցեք, որ ես հարյուր ֆրանկ պետք է վճարեմ, այլապես երեխայիս կուղարկեն ինձ մոտ: Օ՛, ասոված իմ, ես չեմ կարող նրան վերցնել մոտս: Չէ՞ որ իմ արածը խայտառակ բան է: Ո՛վ իմ Կոզետ, փոքրիկ հրեշտակս, ի՞նչ կլինի նրան, խեղճ զավակիս: Ասեմ ձեզ, Թենարդիեներն են, պանդոկապետները, գյուղացի մարդիկ են և ոչ մի խոսք չեն ուզում լսել: Փող են պահանջում: Ինձ բանտ մի դրեք: Տեսնո՞ւմ եք, իմ փոքրիկ աղջկան պարզապես դուրս կանեն մեծ ճամփի վրա և կասեն՝ գնա ուր ուզում ես, այս ցուրտ ձմռանը, պետք է գթալ այս առթիվ, բարի պարոն Ժավեր: Եթե ավելի մեծ լինեք, իր գլուխը կպահեք, բայց նա չի կարող, խիստ փոքր է: Ես ըստ էության վատ կին չեմ: Ոչ անառակությունը և ոչ էլ որևորամոլությունն է պատճառը, որ ես այսպիսին եմ դարձել: Ես օղի եմ խմել, բայց դա թշվառությունից է, ես օղի չեմ սիրում, բայց դա թմրեցնում է: Երբ ես ավելի բախտավոր էի, բավական էր միայն նայել դարակներս և կերևար, որ ես բնավ էլ անկարգ ու ցուփ կին չեի: Սպիտակեղեն ունեի, և շատ ունեի: Գթացեք ինձ, պարոն Ժավեր:

Եվ Ֆանտինը խոսում էր այսպես, կռացած, հեկեկանքներից ցնցվելով, արցունքից կուրացած, լանջը բաց, մատներն իրար ոլորելով, չոր ու կարճ հագավով և կամացուկ, հոգեվարքի ձայնով թոթովելով։ Մեծ վիշտը աստվածային, անեղ ճառագայթ է և կերպարանափոխում է թշվառներին։ Այդ թուպեին Ֆանտինը գեղեցկացել էր։ Մերթ-մերթ նա կանգ էր առնում և խանդաղատանքով համբուրում էր ոստիկանական լրտեսի ռեդինգոտի քղանցքը։ Նա կարող էր փափկացնել քարե սիրտը, բայց չի կարելի փափկացնել փայտե սիրտը։

— Դե,— ասաց Ժավերը,— ես քեզ երկար լսեցի։ Ամեն բան ասացի՞ր։ Իսկ հիմա՝ մարշ։ Վեց ամիս կնստես։ Երկնավոր հայրն էլ եթե գա, չի կարող այլևս որևէ բան փոխել։

Այս հանդիսավոր խոսքի վրա՝ Երկնավոր հայրն էլ եթե գա, չիկարող այլևս որևէ բան փոխել, Ֆանտինը հասկացավ, որ վճիռն արձակված է։ Ապա ծալվելով ինքն իր վրա՝ մրմնջաց.

— Շնորհ արեք։

Ժավերը շուտ եկավ։

Զինվորները բռնեցին նրա թևը։

Մի քանի թուպե էր, ինչ մի մարդ ներս էր մտել առանց նկատվելու, դուռը փակել էր, հենվել էր պատին ու լսել Ֆանտինի հուսահատ աղաչանքը։

Այն թուպեին, երբ զինվորները ձեռք դրին դժբախտ կնոջ վրա, որ չէր ուզում վեր կենալ, այդ մարդը մի քայլ արեց, ստվերից դուրս եկավ ու ասաց.

— Մի թուպե, եթե կարելի է։

Ժավերն աչքերը բարձրացրեց և ճանաչեց պարոն Մադլենին։ Ապա գլխարկը հանեց և մի տեսակ բարկացած, անշնորհքությամբ բարևելով՝ ասաց.

— Ներողություն, պարոն քաղաքապետ...

«Պարոն քաղաքապետ» խոսքը զարմանալի տպավորություն գործեց Ֆանտինի վրա։ Գետնից դուրս եկող ուրվականի նման նա հանկարծ ոտքի կանգնեց և թևերով դեն հրելով զինվորներին՝ գնաց ուղիղ դեպի պարոն Մադլենը՝ նախքան կկարողանային բռնել նրան, և շեշտակի նայեց նրան, ապա մոլորուն հայացքով գոռաց.

— Ա՛, ուրեմն այդ դո՞ւ ես պարոն քաղաքապետը։

Ապա սկսեց քահ-քահ ծիծաղել և թքեց նրա դեմքին։

Պարոն Մադլենը սրբեց դեմքը և ասաց.

— Վերահսկիչ Ժավեր, այս կնոջն ազատ արձակեք։

Ժավերին մի թուպե թվաց, որ գծվում է։ Այդ թուպեին նա իրար ետևից և գրեթե միախառն ձևով զգում էր ամենաբռնուն հուզումներ, որ իր ողջ կյանքում չէր զգացել։ Տեսնել, որ մի փողոցային պոռնիկ թքում է քաղաքապետի երեսին, սա այնպիսի ճիվաղային բան էր, որ Ժավերն իր ամենագարհուրելի ենթադրություններով կնկատեր որպես մի անհնարին սրբապղծություն։ Մյուս կողմից էլ, իր մտքի խորքում՝ նա մի տարտամ ու զզվելի մերձեցում էր կատարում այդ կնոջ ներկա վիճակի և քաղաքապետի թաքուն վիճակի միջև, և սարսափով նշմարում էր ինչ-որ խիստ պարզ

բան այդ զարմանալի դավադրության մեջ: Բայց երբ նա տեսավ, որ այդ քաղաքապետը, դատավորը հանգիստ կերպով սրբեց իր դեմքն ու ասաց. «Այս կնոջն ազատ արձակեք»,— կարծես ապշուժից շլացավ, և մտածողությունը, և խոսքը ցնդեցին, հնարավոր զարմանքի չափն անցավ:

Այս խոսքը նվազ տարօրինակ հարված չէր հասցրել նաև Ֆանտինին: Նա բարձրացրեց իր մերկ թևը և կառչեց վառարանի բանալիին՝ ընկնելու պատրաստ մարդու նման: Մակայն նա նայում էր իր շուրջը և ապա ցած ձայնով սկսեց խոսել՝ կարծես ինքն իրեն:

— Ազատե՛լ, թույլ տան, որ գնամ, որ վեց ամիս բանտ չնստե՛մ: Ո՞վ ասաց այդ: Անկարելի է, որ այդպիսի բան ասեն: Լավ չլսեցի: Այս գազան քաղաքապետն ասած չի լինի: Դո՞ւք էիք, բարի պարոն Ժավեր, որ ասացիք ինձ ազատ արձակեն: Օ՛, տեսնում եք, ես ձեզ հիմա կպատմեմ և դուք ինձ ազատ կթողնեք: Այս գազան քաղաքապետը, այս ծեր ու քնձռոտ քաղաքապետն է ամեն բանի պատճառը: Երևակայեցեք, պարոն Ժավեր, նա ինձ վնդեց իր արհեստանոցում աշխատող զգվելի պառավների ափեղցիներ խոսակցությունների պատճառով: Մոսկալի չե՞միթե սա: Վնդել մի խեղճ աղջկա, որ պարկեշտորեն իր աշխատանքն է կատարում: Դրանից հետո ես էլ չկարողացա բավականաչափ փող ստանալ և այս ողջ դժբախտությունը վրա հասավ: Կա մի բարեխղճ, որ պարոն ոստիկանները պետք է մտցնեն, այսինքն արգելեն, որ բանտերի կապալառուները վնասեն խեղճ մարդկանց: Այժմ բացատրեմ բանի էությունը: Շապիկ կարելով ես ստանում էի տասներկու սու, հետո դա իջավ ինը սուի, էլ ապրելու հնար չկար: Եվ պետք է դառնաս այն, ինչի ունակ ես: Ես մի երեխա ունեմ, Կոզետը, այնպես որ ստիպված էի վատ կին դառնալ: Այժմ հասկանո՞ւմ եք, որ այս անպիտան քաղաքապետն է իմ ողջ դժբախտության պատճառը: Ճիշտ է, ես կոխտեցի այդ պարոն բուրժուայի գլխարկը սպաների սրճարանի առջև, բայց նա էլ ձյունով փչացրեց իմ շրջագգեստը: Մեզպետները միայն մեկ մետաքսե զգեստ են ունենում՝ երեկոյան համար: Ինչպես տեսնում եք, ես երբեք էլ դիտմամբ վատություն չեմ արել, ընդհակառակը, ուրիշ կանայք, որ ավելի բախտավոր են, շատ ավելի չար են: Պարոն Ժավեր, դուք էիք, որ ասացիք ինձ արձակեն, այնպես չե՞:

Տեղեկություններ քաղեք, հարցրեք տանտիրոջս, այժմ ես կանոնավոր վճարում եմ և ձեզ կասեն, որ ես ազնիվ կին եմ: Օ՛, աստված իմ, ներողություն եմ խնդրում, անուշադրությամբ կպա այս բանալիին և վառարանը ծխում է:

Պարոն Մադլենը խոր ուշադրությամբ լսում էր նրան: Երբ նա խոսում էր, քաղաքապետը փորփրեց իր ժիլետը, հանեց քսակը ու բաց արեց՝ դատարկ էր: Ապա ետ դրեց քսակը և ասաց Ֆանտինին.

— Ինչքա՞ն ասացիք, թե պարտք եք:

Ֆանտինը, որ միայն Ժավերին էր նայում, շուտ եկավ:

— Ո՞վ է քեզ հետ խոսել:

Ապա դիմելով զինվորներին, ավելացրեց.

— Է՛յ, դուք հո տեսաք ինչպես թքեցի նրա երեսին: Ծեր սրիկա քաղաքապետ, եկել ես ինձ այստեղ վախեցնելու, բայց ես քեզնից չեմ վախենում: Պարոն Ժավերից եմ ես վախենում: Իմ բարի պարոն Ժավերից եմ ես վախենում:

Այս խոսքերից հետո նա նորից դարձավ դեպի վերահսկիչը:

— Բացի դրանից, պարոն վերահսկիչ, պետք է արդար լինել: Ես հավատում եմ, որ դուք արդար եք, պարոն վերահսկիչ: Իրականումգործը շատ պարզ է. մի մարդ հաճույք է զգում ձյուն գցելով մի կնոջ կոնակը, դա նրանց՝ սպաներին ծիծաղեցնում է. վերջապես պետք է, որ մի բանով զվարճանան, իսկ

մենք, մեզ նմաններն, ստեղծված են, որ նրանք զվարճանան, չէ՞: Հետո դուք եք գալիս, և իհարկե, պարտավոր եք կարգը վերականգնել, ապա տանում եք սխալ գործած կնոջը: Բայց երբ մտածում եք այդ մասին և որովհետև բարի եք՝ կարգադրում եք, որ ազատեն ինձ, իսկ դա գլխավորապես փոքրիկիս պատճառով, քանի որ վեց ամիս բանտարկելը ինձ թույլ չէր տա երեխայիս կերակրել: Միայն թե էլ այդտեղ չգաս, լիբբ: Օ՛, էլ այնտեղ չեմ գնա, պարոն Ժավեր, եթե գնամ, ինչ ուզում են անեն, այլևս ձայն չեմ հանի: Իսկ այսօր, հասկանո՞ւմ եք, ես գոռոռացի, որովհետև ցավ պատճառեց ինձ, ես ամենևին չէի սպասում, որ այդ պարոնը ձյուն կգցի, բացի դրանից, ինչպես ասացի, լավ չեմ զգում ինձ, հագում եմ, ստամոքսումս էլ կարծես մի այրող գնդակ կա, որի համար բժիշկն ասաց, հոգ տարեք ձեզ: Այ, շոշափեք, տվեք ձեր ձեռքը, մի վախենաք, այ, այստեղ...

Նա չէր լալիս, ձայնը փաղաքշող էր, և քաշելով Ժավերի խոշոր ու կոպիտ ձեռքը՝ դրեց իր սպիտակ ու նուրբ լանջի վրա և ժպտալով նայեց նրան:

Հանկարծ նա աշխուժորեն կարգի բերեց իր հագուստները, իջեցրեց շրջագգեստի ծալքերը, որը բարձրացել էր գրեթե մինչև ծունկը՝ երբ չոքեչոք առաջացել էր դեպի Ժավերը և գնաց դեպի դուռը, զինվորներին գլխով բարեկամական նշան արեց ու կամացուկ ասաց.

— Տղերք, պարոն վերահսկիչն ասաց, որ ինձ բաց թողնեն, ես գնում եմ:

Եվ ձեռքը դրեց սողնակի վրա. մի քայլ ևս՝ և նա փողոցում կլիներ:

Ժավերը մինչև այդ վայրկյանը մնացել էր անշարժ կանգնած, աչքը հառած գետնին և տնկված էր այդ տեսարանի մեջտեղ՝ նման տեղահանված արձանի, որն սպասում է, որ մի տեղ դնեն իրեն:

Սողնակի արձակած ճոինչն արթնացրեց նրան: Նա իր գլուխը բարձրացրեց միահեծան իշխանության արտահայտությամբ, որի կրողն ինչքան ցածրաստիճան է, այնքան ավելի զարհուրելի է այդ արտահայտությունը, զազանի մոտ մոլեգին, իսկ չնչին մարդու մոտ՝ զազանային:

— Մերժա՛նտ,— գոչեց նա,— չե՞ք տեսնում, որ այս բարի պտուղը գնում է: Ձեզ ո՞վ ասաց, որ բաց թողնենք դրան:

— Ես,— ասաց Մադլենը:

Ժավերի ձայնի վրա Ֆանտինը սարսռել էր և բաց թողել սողնակը՝ նման բռնված գողի, որ բաց է թողնում գողացած առարկան: Մադլենի ձայնի վրա նա շուտ եկավ և այդ թուլեցից սկսած առանց ծպտուն հանելու, առանց նույնիսկ ազատ շունչ քաշելու՝ նրա հայացքը գնաց Մադլենից Ժավերին և Ժավերից Մադլենին, նայած թե նրանցից ով էր խոսում:

Ակներև էր, որ Ժավերի, ինչպես ասում են, համբերությունը հատել էր, քանի որ թույլ տվեց իրեն սաստել սերժանտին այն բանից հետո, երբ քաղաքապետը կարգադրել էր ազատ արձակել Ֆանտինին: Գուցե նա այնքան էր վրդովվել, որ մոռացել էր պարոն քաղաքապետի ներկայությո՞ւնը: Գուցե նա հասել էր այն կետին, որ ինքն իրեն հայտարարել էր, թե անկարելի է, որ որևէ «իշխանություն» նման կարգադրություն անի, և հավանաբար պարոն քաղաքապետը իր կամքից անկախ մի բան է ասել մի այլ բանի փոխարեն: Եվ կամ թե այն խոշոր դեպքերը, որոնց երկու ժամից ի վեր ականատես էր, թելադրում էին նրան գերագույն որոշումնե՞ր ընդունել, թե անհրաժեշտ էր, որ փոքրը դառնա մեծ, որ ոստիկանական լրտեսը դառնա դատավոր, որ ոստիկանության ծառայողը դառնա արդարադատության պաշտոնյա, և այդ հրաշալի ծայրահեղության դեպքում կարգը, օրենքը, բարոյականությունը, կառավարությունը, ողջ հասարակությունը անձնավորվում էին նրա՝ Ժավերի՞ մեջ:

Ինչ էլ որ լինի, երբ պարոն Մադլենը քիչ առաջ ասաց այդ «ես»-ը, ուստի կանոնական վերահսկիչ Ժավերը գունատ, սառն, շրթունքները կապտած, հուսահատ հայացքով, ողջ մարմինը աննկատելի դողով բռնված, դարձավ դեպի պարոն քաղաքապետը և, չլսված բան, աչքերը խոնարհած ու հաստատակամ ձայնով ասաց.

— Պարոն քաղաքապետ, դա անկարելի է:

— Ինչպե՞ս,— ասաց պարոն Մադլենը:

— Այս գարշելին անարգել է մի բուրժուայի:

— Վերահսկիչ Ժավեր,— շարունակեց պարոն Մադլենը հաշտարար և հանգիստ շեշտով,— լսեք: Դուք ազնիվ մարդ եք, և ես առանց դժվարության կարող եմ բացատրվել ձեզ հետ: Ահա ճշմարտությունը: Ես անցնում էի հրապարակով, երբ դուք տանում էիք այս կնոջը. այնտեղ դեռ խմբված մարդիկ կային և ես տեղեկացա նրանցից, ամեն բան իմացա, բուրժուան է հանցանք գործել և, եթե լավ ուստի կանոնություն լիներ՝ նա պետք է ձերբակալվեր:

Ժավերը վրա տվեց.

— Այս գարշելին հենց նոր անարգեց պարոն քաղաքապետին:

— Դա իմ գործն է,— ասաց պարոն Մադլենը:— Ինձ հասցված նախատինքը ինձ է վերաբերում. ինչ ուզեմ, այն կանեմ:

— Ես ներողություն եմ խնդրում պարոն քաղաքապետից: Նրան հասցված նախատինքը նրանը չէ, արդարադատությանն է:

— Վերահսկիչ Ժավեր,— առարկեց պարոն Մադլենը,— առաջին արդարադատությունը խիղճն է: Ես լսեցի այդ կնոջը և գիտեմ ինչ եմ անում:

— Իսկ ես, պարոն քաղաքապետ, տեսածս չեմ հասկանում:

— Այդ դեպքում բավականացեք հնազանդվելով:

— Ես հնազանդվում եմ իմ պարտականությանը: Իմ պարտականությունը պահանջում է, որ այս կինը վեց ամիս բանտարկվի:

Պարոն Մադլենը քաղցրությամբ պատասխանեց.

— Լավ լսեք ասելիքս: Ոչ մի օր էլ չի բանտարկվի:

Այս վճռական խոսքի վրա Ժավերը համարձակվեց շեշտակի նայել քաղաքապետին և պահպանելով հանդերձ խորապես հարգալիր շեշտ՝ ասաց.

— Ես ցավում եմ, որ ընդդիմանում եմ պարոն քաղաքապետին և դա առաջին անգամ է կյանքումս, սակայն նա կբարեհաճի թույլ տալ ինձ նկատել այն, որ ես գործում եմ իմ իշխանության սահմաններում: Եվ քանի որ պարոն քաղաքապետը այդպես է պահանջում՝ ես սահմանափակվում եմ միայն այդ բուրժուայի դեպքով: Այս աղջիկն է հարձակվել պարոն Բամատաբուայի վրա, որ ընտրող է և սեփականատերը հարթավայրի անկյունը կազմող այն եռահարկ, ամբողջովին սրբատաշ քարից շինված գեղեցիկ, պատշգամավոր տան: Եվ վերջապես ուրիշ բաներ էլ կան

աշխարհում: Ինչ էլ որ լինի, պարոն քաղաքապետ, դա փողոցի ոստիկանության գործն է և ինձ է վերաբերում, ուստի ես պահում եմ Ֆանտին կոչվող կնոջը:

Այդ ժամանակ պարոն Մադլենը խաչաձևեց թևերը և ասաց այնպիսի խիստ ձայնով, որպիսին քաղաքում դեռ ոչ ոք չէր լսել.

— Դեպքը, որի մասին խոսում եք, քաղաքապետական ոստիկանության գործ է: Քրեական օրենսգրքի իններորդ, տասնմեկերորդ, տասնհինգերորդ ու վաթսունվեցերորդ հոդվածների հիման վրա ես եմ դրա դատավորը: Ես հրամայում եմ, որ այս կինն ազատ արձակվի:

— Բայց, պարոն քաղաքապետ...

— Ես ձեզ հիշեցնում եմ 1799 թվականի դեկտեմբերի 13-ի օրենքի ութսունմեկերորդ հոդվածը կամայական կալանավորության մասին:

— Պարոն քաղաքապետ, թույլ տվեք:

— Էլ ոչ մի խոսք:

— Բայց...

— Դուրս,— ասաց պարոն Մադլենը:

Ժավերը հարվածն ընդունեց կանգնած, դեմոլեմից ուղիղ կրծքին՝ ինչպես ռուս զինվոր: Ապա կռացավ մինչև գետին և խոր գլուխ տալով պարոն քաղաքապետին՝ դուրս գնաց:

Ֆանտինը դռնից հեռացավ և ապշած նայեց իր առջևից անցնող ժավերին:

Նա էլ ենթակա էր մի տարօրինակ տակնուվրայության: Նա տեսել էր, որ ինքը վեճի առարկա է երկու հակադիր գործությունների միջև: Տեսել էր, որ իր աչքերի առջև պայքարում են իր ազատությունը, կյանքը, հոգին ու երեխային ձեռքներում պահած մարդիկ, նրանցից մեկը քաշում էր իրեն դեպի խավարը, մյուսը առաջնորդում էր դեպի լույս: Սարսափի չափազանցման միջից դիտած այս պայքարի մեջ այդ երկու մարդիկ նրան երևացել էին երկու հսկաներ. մեկը խոսում էր որպես իր սատանան, մյուսը խոսում էր բարի հրեշտակի նման: Հրեշտակը հաղթել էր սատանային, և մի հանգամանք, որ նրան ոտքից-գլուխ սարսռեցնում էր, այդ հրեշտակը, այդ ազատարարը հենց այն մարդն էր, որից ինքը զարշում էր, այն քաղաքապետն էր, որին երկար ժամանակ նկատել էր որպես իր բոլոր դժբախտությունների հեղինակ, այո, այդ Մադլենն էր և նույնիսկ այն բռնակցի, երբ ինքը ամենազգվելի ձևով վիրավորեց նրան՝ նա փրկեց իրեն: Ուրեմն ինքը սխալվե՞լ էր: Ուրեմն պետք էր իր ողջ հոգին փոխե՞ր... Նա այդ չգիտեր և դողում էր: Եվ խելակորույս լսում էր, շվարած նայում ու պարոն Մադլենի ասած յուրաքանչյուր խոսքից զգում էր, որ ատելության սոսկալի խավարը հալչում ու փլվում է իր մեջ, իսկ սրտում ծնվում ինչ-որ ջերմացնող ու անջինջ բան, որը և հրճվանք էր, և վստահություն, և սեր:

Երբ ժավերը դուրս գնաց, պարոն Մադլենը դարձավ դեպի նա և դանդաղ, դժվարությամբ խոսելով, նման այն լուրջ մարդուն, որ չի ուզում լաց լինել, ասաց.

— Ես ձեզ լսեցի: Ես ծանոթ չեի ձեր ասածին: Կարծում եմ, որ դա ճիշտ է և զգում եմ, որ ճիշտ է: Ես նույնիսկ չգիտեի, որ դուք հեռացել եք իմ արհեստանոցից: Ինչո՞ւ ինձ չեք դիմել: Իսկ այժմ ես կվճարեմ ձեր պարտքերը, բերել կտամ ձեր երեխային կամ թե ինքներդ կգնաք վերցնելու նրան: Կարող եք ապրել այստեղ կամ Փարիզում, ուր ուզենաք: Ես հանձն եմ առնում ձեր երեխայի և ձեր

հոգսը: Եթե ուզենաք՝ այլևս չեք աշխատի: Ես կտամ ձեզ անհրաժեշտ ողջ դրամը: Դուք երջանկանալով՝ նորից պարկեշտ կին կդառնաք: Եվ նույնիսկ, — հենց հիմա էլ հայտարարում եմ ձեզ, — եթե ամեն բան այնպես է, ինչպես ասում եք, իսկ ես չեմ կասկածում դրան, դուք երբեք էլ չեք դադարել աստծո առջև առաքինի ու սուրբ լինելուց: Ո՛վ խեղճ կին:

Մա շատ ավելի էր, քան խեղճ Ֆանտինը կարող էր դիմանալ: Ունենալ Կոզետին, հրաժարվել այդ զգվելի կյանքից, ապրել ազատ, հարուստ, պարկեշտ և Կոզետի հետ. հանկարծ տեսնել, որ թշվառության ծովում այս բոլոր դրախտային իրականությունները փթթում են: Ապուշի նման նա նայեց իր հետ խոսող մարդուն և միայն երկու-երեք հեծկլտանք արձակեց. «Օհ, օհ, օ՛հ»: Նրա ծնկները ծավլեցին, նա չոքեց պարոն Մադլենի առջև և նախքան վերջինս կարգելեր, զգաց, որ Ֆանտինը բռնեց իր ձեռքը և շրթունքները հպեց նրան:

Ապա ուշաթափվեց:

Գիրք վեցերորդ

ԺԱՎԵՐ

I

ՀԱՆԳՍՏԻ ՄԿԻՋԲԸ

Պարոն Մադլենը Ֆանտինին փոխադրել տվեց իր սեփական տանն ունեցած հիվանդարանը և հանձնեց քույրերին, որոնք նրան պառկեցրին անկողին: Նա բռնվեց մի ուժեղ տենդով և գիշերվա մի մասն անցկացրեց զառանցելով բարձրաձայն խոսելով, բայց ի վերջո քունը տարավ:

Հաջորդ օրը կեսօրին մոտ նա արթնացավ և իր անկողնուն խիստ մոտից եկող հառաչանք լսեց. նա վարագույրը մի կողմ տարավ և տեսավ պարոն Մադլենին, որ մի բան էր դիտում իր գլխավերևում: Այդ հայացքը լի էր կարեկցությամբ, անձկությամբ և աղերսում էր: Նա հետևեց հայացքի ուղղությանը և տեսավ, որ նա դիմում էր պատին գամված խաչելությանը:

Պարոն Մադլենն այլևս կերպարանափոխված էր Ֆանտինի աչքում և թվում էր լույսով պարուրված: Նա թաղված էր ինչ-որ աղոթքի մեջ, և Ֆանտինը երկար դիտեց նրան՝ չհամարձակվելով ընդհատել: Ի վերջո ամոթխածությամբ հարցրեց.

— Ի՞նչ եք անում այդտեղ:

Պարոն Մադլենը մի ժամ էր, ինչ այդտեղ էր և սպասում էր, որ Ֆանտինն արթնանա: Ուստի բռնեց նրա ձեռքը, զննեց բազկերակը և պատասխանեց.

— Ինչպե՞ս եք:

— Լավ, քնել էի, — ասաց նա, — կարծում եմ, որ լավանում եմ: Ոչինչ էլ չի լինի:

Ապա Մադլենը պատասխանեց նրա արած հարցին, կարծես թե միայն դա էր լսել.

— Աղոթում էի այն նահատակին, որ վերնում է:

Եվ մտքում ավելացրեց: «Այս նահատակի համար»:

Պարոն Մաղլենը ողջ գիշերն ու առավոտյան պահը անց էր կացրել տեղեկություններ ստանալով: Այժմ նա ամեն բան գիտեր: Ֆանտիկի պատմությունն իր բոլոր սրտակեղեք մանրամասնություններով ծանոթ էր նրան: Ապա շարունակեց.

— Դուք շատ եք տանջվել, խեղճ մայր: Իսկ այժմ մի դժգոհեք, դուք կստանաք ընտրյալների օժիտը, այս ձևով է, որ մարդիկ հրեշտակներ են ստեղծում: Դա նրանց հանցանքը չէ, նրանք այլ կերպ անել չգիտեն: Տեսնում եք, այն դժոխքը, որից դուք ազատվեցիք, երկնքի առաջին ձևն է: Պետք էր դրանից սկսել:

Եվ մի խոր հառաչ արձակեց: Իսկ Ֆանտինը ժպտում էր նրան այն գերագույն ժպտով, որին պակասում էր երկու ատամ:

Ժավերն այդ միևնույն գիշեր մի նամակ էր գրել և հաջորդ առավոտ անձամբ հանձնել Մոնտրոյ-սյուռ-Մեռի փոստի գրասենյակին: Նամակը Փարիզի համար էր և հետևյալ մակագրությունն էր կրում. «Պարոն Շաբուլյեին՝ ոստիկանության պետի պարոն քարտուղարին»: Եվ, որովհետև պահակատան դեպքը տարածվել էր՝ փոստի գրասենյակի դիրեկտորուհին և մի քանի այլ մարդիկ առաքելուց առաջ տեսնելով այդ նամակը և հասցեից ճանաչելով Ժավերի ձեռագիրը՝ մտածեցին, որ իր հրաժարականն է ուղարկում:

Պարոն Մաղլենը շտապեց գրել Թենարդիեններին: Ֆանտինը հարյուր քսան ֆրանկ պարտք էր նրանց: Նա ուղարկեց երեք հարյուր ֆրանկ և պատվիրեց, որ այդ գումարի տարբերության հաշվին անմիջապես երեխային բերեն Մոնտրոյ-սյուռ-Մեռ, ուր նրան պահանջում է հիվանդ մայրը:

Այս բանը շլացրեց Թենարդիենին: «Գրողը տանի,— ասաց նա կնոջը,— երեխային բաց չթողնենք: Այս թռչնիկը դառնում է կթան կով: Ես կռահում եմ պատճառը: Որևէ տխմար սիրահարված կլինի մորը»:

Եվ անմիջապես պատասխան գրեց՝ հինգ հարյուր ու մի քանի ֆրանկի վարպետորեն կազմված մի հաշիվ ուղարկելով հետը: Այդ հաշվի մեջ երեք հարյուր ֆրանկից ավելի երկու անառարկելի կետեր կային՝ մեկը բժշկից, մյուսը դեղագործից, որոնք խնամել ու դեղ էին տվել Էպոնինի ու Ազելմայի երկու երկարատև հիվանդությունների ընթացքում: Իսկ Կոզետն, ինչպես ասել ենք, չէր հիվանդացել: Թենարդիենն մնում էր սոսկ անունները փոխել, մի չնչին գործ, որից հետո հաշվի ներքևը գրեց. «Ստացա կանխիկ երեք հարյուր ֆրանկ»:

Պարոն Մաղլենն անմիջապես ուղարկեց ևս երեք հարյուր ֆրանկ և գրեց. «Շտապեք բերել Կոզետին»:

— Հիսուս-Քրիստոս,— ասաց Թենարդիենն,— ձեռքից չհանենք երեխային:

Իսկ Ֆանտինը չէր լավանում և շարունակում էր մնալ հիվանդարանում:

Քույրերն սկզբում զգվանքով ընդունեցին և խնամեցին «այդ աղջկան»: Ով տեսել է Ռեյմսի¹²⁷ խորաքանդակները, կհիշի հիմար կույսերին նայող իմաստուն կույսերի ներքևի շրթունքի ուռած

¹²⁷ Քաղաք է Փարիզի հյուսիսում: Այստեղ է գտնվում ամենագեղեցիկ տաճարներից մեկը, որի քանդակներն է ակնարկում հեղինակը: Շ. թ.:

լինելը: Վեստալուհիների այս հնամենի արհամարհանքը դեպի պոռնիկները՝ կանացի արժանապատվության խորագույն բնագոյներից մեկն է: Քույրերն էլ նույն բանն զգացել էին՝ գումարած կրոնի առաջացրած կրկնապատկումը: Սակայն մի քանի օրվա մեջ Ֆանտինը զինաթափ արեց նրանց: Նա գտնում էր ամեն տեսակ խոնարհ ու քնքուշ բառեր և մայր լինելու հանգամանքը մեղմացնում էր նրանց: Մի անգամ էլ քույրերը լսեցին, որ նա տենդի մեջ ասում էր.

— Ես մեղավոր եմ եղել, բայց երբ երեխաս մոտս լինի, դա կնշանակի, որ աստված ինձ ներել է: Երբ ես չարին էի պատկանում, չէի ուզում որ Կոզետն ինձ մոտ լինի, որովհետև չպիտի դիմանայի նրա զարմացած ու տխուր աչքերին: Բայց և այնպես նրա համար էր, որ ես հանցանք էի գործում, հենց դրա համար էլ աստված ինձ ներում է: Ես կզգամ աստծո օրհնությունը, երբ Կոզետն այստեղ լինի: Ես կդիտեմ նրան, իսկ այդ անմեղ էակին տեսնելն ինձ համար բարերար կլինի: Նա ոչինչ չգիտի, նա հրեշտակ է, հասկանո՞ւմ եք, քույրերս: Այդ հասակին դեռ թներն ընկած չեն:

Պարոն Մադլենը օրը երկու անգամ գնում էր նրան տեսնելու, և ամեն անգամ Ֆանտինը նրան հարցնում էր.

— Կոզետին շուտո՞վ կտեսնեմ:

Նա պատասխանում էր.

— Գուցե վաղ առավոտ: Բոպե առ բոպե նա գալու է, սպասում եմ:

Եվ մոր գունատ դեմքը ճառագայթում էր:

— Օ՛հ,— ասում էր նա,— ինչքան երջանիկ կլինեմ:

Քիչ առաջ ասացինք, որ նա չէր լավանում: Ընդհակառակը, նրա դրությունը շաբաթից-շաբաթ բարդանում էր: Այդ ձնակոշտը, ընկնելով մերկ մարմնի վրա թիկնոսկրերի միջև, առաջացրել էր արտաշնչության հանկարծակի հապավում, որի հետևանքով այն հիվանդությունը, որ թաքուն նստել էր ներսը՝ բուռն կերպով երևան եկավ: Դա այն ժամանակն էր, երբ նոր էին սկսել կրծքի հիվանդություններն ուսումնասիրել և բուժել ըստ Լաենեկի¹²⁸ օգտակար ցուցումների: Բժիշկը ականջադրեց Ֆանտինին և գլուխն օրորեց:

Պարոն Մադլենը հարցրեց բժշկին.

— Հետո՞:

— Նա մի երեխա ունի կարծեմ, որին ցանկանում է տեսնել:

— Այո:

— Ուրեմն շտապեք շուտ բերել տալ նրան:

Պարոն Մադլենը ցնցվեց:

Ֆանտինը հարցրեց նրան.

— Ի՞նչ ասաց բժիշկը:

Պարոն Մադլենը ջանաց ժպտալ:

¹²⁸ Ֆրանսիացի բժիշկ (1781—1826), հնարել ու տարածել է ականջադրման մեթոդը:

— Ասաց, որ շուտով ձեր երեխային բերել տանք: Դա ձեզ կառողջացնի:

— Օ՛, — վրա բերեց Ֆանտինը, — իրավունք ունի: Բայց ինչո՞ւ են այդ Թենարդիեները պահում Կոզետին: Օ՛, նա գալու է: Ահա վերջապես ես տեսնում եմ բախտավորությունն ինձ մոտեցած:

Սակայն Թենարդիեները «երեխային ձեռքից չէին հանում» և հարյուրավոր խայտառակ պատճառներ էին հնարում: Կոզետը մի քիչ տկար էր և չէր կարող այդ ցուրտ ձմռան ճամփա ընկնել, և բացի դրանից բազմաթիվ մանր, ճշան պարտքեր կային, որոնց հաշվեթոթերն էր հավաքում, և այլն, և այլն:

— Մի մարդ ուղարկեմ Կոզետին բերելու, — ասաց հայր Մադլենը: — Իսկ, եթե պետք լինի՝ անձամբ կգնամ:

Եվ Ֆանտինի թելադրությամբ գրեց հետևյալ նամակը ու նրան ստորագրել տվեց.

«Պարոն Թենարդիե,

Կոզետին կհանձնեք սույնը ներկայացնողին:

Բոլոր մանրուքների համար ձեզ կվճարի նա:

Պատիվ ունեմ հարգանքք բարևել ձեզ:

Ֆանտին»:

Այս միջոցին մի ծանր դեպք պատահեց: Մենք գուր ենք այդքան լավ տաշում այն խորհրդավոր կոշտը, որից կազմված է մեր կյանքը. ճակատագրի սև երակը միշտ երևան է գալիս այնտեղ:

II

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԺԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ՇԱՆ

Մի առավոտ պարոն Մադլենն իր առանձնասենյակում զբաղված էր քաղաքապետության վերաբերող մի շարք անհետաձգելի գործեր նախօրոք կանոնավորելով, որպեսզի կարողանար Մոնֆերմեյ գնալ, երբ եկանհայտնելու, որ ոստիկանության վերահսկիչ Ժավերը ցանկանում է խոսել նրա հետ: Այս անունը լսելով պարոն Մադլենը չկարողացավ դիմադրել մի անախորժ տպավորության: Պահականոցի դեպքից հետո Ժավերն ավելի քան երբևիցե խուսափել էր նրանից և պարոն Մադլենը նրան այլևս չէր տեսել:

— Թող ներս գա, — ասաց նա:

Ժավերը ներս մտավ:

Պարոն Մադլենը մնացել էր բուխարու առջև նստած՝ գրիչը ձեռքին, աչքը սևեռած մի թղթապանակի, որը թերթում էր ու ծանոթագրում և, որը պարունակում էր աղբահանության ոստիկանության կազմած օրինագանցությունների արձանագրությունները: Նա բնավ չշարժվեց Ժավերի համար և քանի որ չէր կարող չմտածել Ֆանտինի մասին, ապա հարմար էր գտնում սառը մնալ:

Ժավերը հարգանքով բարևեց պարոն քաղաքապետին, որ մեջքը շուռ էր տվել և առանց նայելու նրան շարունակում էր թղթապանակից ծանոթագրություններ կատարել:

Ժավերը երկու-երեք քայլ առաջացավ ու կանգ առավ՝ առանց լռությունը խզելու:

Որևէ դիմագետ, եթե ծանոթ լիներ Ժավերի խառնվածքին, երկար ժամանակ ուսումնասիրած լիներ քաղաքակրթությանը ծառայող այս վայրենուն և հռոմեացու, սպարտացու, վանականի ու տասնապետի այս արտառոց խառնուրդին, ստելու անընդունակ այս լրտեսին, այս կուսական ոստիկանական հետախույզին և, եթե իմանար պարոն Մադլենի մասին ունեցած նրա գաղտնիքը ու վաղուցվա հակադրությունը, և Ֆանտինի պատճառով քաղաքապետի հետ ունեցած միջադեպը՝ ապա այդ դիմագետը, եթե Ժավերին այս բուպեին գններ՝ կասեր ինքն իրեն՝ ի՞նչ է պատահել: Ով ճանաչել էր այդ ուղղամիտ, հստակ, անկեղծ, խիստ ու վայրագ խղճմտանքի տեր մարդուն, ակներև կերպով կնկատեր, որ Ժավերը դուրս էր գալիս որևէ ներքին խռչոյր դեպքից: Ժավերը չէր կարող որևէ բան ունենալ հոգում, որ չերևար դեմքի վրա: Նա էլ, բարկ մարդկանց նման, ենթակա էր հանկարծակի փոփոխությունների: Երբեք նրա դեմքն այդքան տարօրինակ ու անսպասելի փոփոխություն չէր կրել: Ներս մտնելով՝ նա խոնարհվեց պարոն Մադլենի առջև այնպիսի հայացքով, որի մեջ ոչ վախ կար, ոչ զայրույթ և ոչ էլ անվստահություն: Քաղաքապետի բազկաթոռից մի քանի քայլ հեռու կանգ էր առել և շարունակում էր այդպես էլ մնալ ձիգ կանգնած և այնպիսի մարդու միամիտ կոպտությամբ ու սառնությամբ, որը երբեք քաղցրահամբույր չի եղել և միշտ էլ համբերող է եղել: Առանց ծպտուն հանելու և որևէ շարժում գործելու, իսկական նվաստացմամբ ու հանդարտ համակերպությամբ, անխռով, լուրջ, գլխարկը ձեռքին, աչքերը խոնարհած, մի այնպիսի արտահայտությամբ, որ միջինն էր իր սպայի առջև կանգնած զինվորի ու դատավորի առջև կանգնած հանցագործի, Ժավերն սպասում էր, որ պարոն քաղաքապետը բարեհաճի շուռ գալ: Այն բոլոր զգացումները և հիշատակները, որ կարելի էր վերագրել նրան՝ անհետացել էին: Այդ անթափանցելի և գրանիտի նման պարզ դեմքի վրա միայն մի մութ տխրություն կար: Նրա ողջ անձը արտահայտում էր խոնարհություն ու հաստատակամություն և մի ինչ-որ խիզախ ընկճվածություն:

Վերջապես քաղաքապետը ցած դրեց գրիչը և կիսով շուռ եկավ.

— Հապա, ի՞նչ է, ի՞նչ կա, Ժավեր:

Ժավերը մի բուպե լուռ մնաց՝ կարծես ամփոփվելու համար, ապա ձայնը բարձրացրեց մի տեսակ տխուր հանդիսավորությամբ, որը չէր բացասում սակայն պարզությունը:

— Այն կա, որ մի հանցավոր գործ է կատարված, պարոն քաղաքապետ:

— Ի՞նչ գործ:

— Իշխանության մի ստորին գործակալ ամենաձանր կերպով զանց է առել հարգանքը մի բարձր պաշտոնատարի նկատմամբ:

— Ո՞վ է այդ գործակալը,— հարցրեց պարոն Մադլենը:

— Ես,— պատասխանեց Ժավերը:

— Դո՞ւք:

— Ես:

— Եվ ո՞վ է այն բարձրաստիճան պաշտոնյան, որ կարող է գանգատվել այդ գործակալից:

— Դուք, պարոն քաղաքապետ:

Պարոն Մադլենն ուղղվեց իր բազկաթոռի մեջ: Ժավերը խիստ շեշտով և միշտ աչքերը խոնարհած՝ շարունակեց.

— Պարոն քաղաքապետ, ես խնդրում եմ ձեզ, որ բարեհաճեք իշխանությունից պահանջել՝ ինձ պաշտոնանկ անեն:

Պարոն Մադլենն ապշած՝ բերանը բաց արեց: Ժավերը նրան ընդհատեց:

— Դուք պիտի ասեք, որ ես կարող էի հրաժարական ներկայացնել, բայց դա բավական չէ: Հրաժարական տալը պատվավոր բան է: Ես սխալվել եմ, ուրեմն պետք է պատժվեմ: Անհրաժեշտ է, որ ինձ վճռեն:

Եվ մի փոքր դադարից հետո ավելացրեց.

— Պարոն քաղաքապետ, անցյալ անգամ դուք անիրավ կերպով խիստ վերաբերվեցիք ինձ հետ: Այսօր իրավամբ խիստ եղեք:

— Ինչպե՞ս թե, ինչո՞ւ,— բացականչեց պարոն Մադլենը:— Այս ի՞նչ դաստիարակություն է, ի՞նչ է նշանակում սա. ե՞րբ եք դուք հանցագործություն կատարել իմ հանդեպ. ինձ ի՞նչ եք արել, ի՞նչ անիրավություն եք արել: Դուք ձեզ մեղադրում եք, երևի ուզում եք փոխարինվել...

— Վճռվել,— ասաց ժավերը:

— Վճռվե՞լ, լավ: Շատ լավ: Բայց ես չեմ հասկանում:

— Հիմա կհասկանաք, պարոն քաղաքապետ:

Ժավերը մի խոր շունչ քաշեց և շարունակեց նույն սառնությամբ ու տխրությամբ.

— Պարոն քաղաքապետ, վեց շաբաթ առաջ, այդ աղջկա առթիվ ծագած տեսարանից հետո՝ ես կատաղել էի և մատնեցի ձեզ:

— Մատնեցի՞ք:

— Փարիզի ոստիկանության պետին:

Պարոն Մադլենը, որ ժավերից ավելի հաճախ չէր ծիծաղում՝ սկսեց ծիծաղել:

— Որպես մի քաղաքապետ, որ խառնվում է ոստիկանության գործերի՞ն:

— Որպես նախկին տաժանապարտ:

Քաղաքապետը դարձավ կապարագույն:

Ժավերը, որ աչքերը չէր բարձրացրել, շարունակեց.

— Ես այդպես էի կարծում: Վաղուց այդպիսի կասկածներ ունեի: Մի նմանություն, տեղեկություններ, որ դուք հավաքել եք տվել Ֆավրոլում, ձեր մեծ ուժը, ձեր Ֆոշվանի արկածը, ձեր

նշանառությունը, ձեր քիչ կադ սրունքը, էլ ի՞նչ զիտենամ, հիմարություններ, մի խոսքով ես ձեզ ընդունում էի ոմն Ժան Վալթանի տեղ:

— Ոմն ի՞նչ... Ի՞նչ անուն ասացի՞ք:

— Ժան Վալթան: Դա մի տաժանապարտ է, որին ես տեսել եմ քսան տարի առաջ, երբ պահապանի օգնական էի Տուլոնի թիարանում, որտեղից դուրս գալուց հետո այդ Ժան Վալթանը գողություն է արել մի եպիսկոպոսի տանը և ապա զենքը ձեռքին, հասարակական ճանապարհի վրա կողոպտել է մի փոքրիկ սավոյացու: Ութ տարի է, ինչ նա, չզիտես ինչպես, փախուստ էր տվել և փնտրում էին նրան: Եվ ես երևակայեցի... Վերջապես կատարել եմ այդ բանը: Զայրույթը վճռեց դա և ես ձեզ մատնեցի ոստիկանության:

Պարոն Մադլենը, որ մի քանի ակնթարթ նորից քրքրում էր թղթապանակը, հարցրեց կատարյալ անտարբերության շեշտով:

— Եվ ձեզ ի՞նչ պատասխանեցին:

— Որ ես խենթ եմ:

— Հետո՞:

— Հետո այն, որ իրավունք ունեն:

— Լավ է, որ խոստովանում եք:

— Ուզեմ-չուզեմ, քանի որ իսկական Ժան Վալթանը գտնված է:

Այն թուղթը, որ պարոն Մադլենը բռնել էր, ձեռքից ընկավ. նա գլուխը բարձրացրեց, շեշտակի նայեց Ժավերին և մի անպատմելի շեշտով ասաց.

— Ա՛:

Ժավերը շարունակեց.

— Ահա թե ինչպես, պարոն քաղաքապետ: Պարզվում է, որ Այիլը-Հո-Կլոշեի շրջանում մի խղճուկ մարդ կա Շանմաթիյո անունով: Շատ թշվառ մարդ էր դա և ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրան: Նա այն մարդկանցից է, որ չզիտես ինչով են ապրում: Վերջերս, այս աշնան, հայր Շանմաթիյոն ձերբակալվել է խնձոր գողանալիս, ի՞նչ էր անում... կարևոր չէ, թե ում մոտից: Գողությունը կատարված է պատ բարձրանալով և ծառի ճյուղերը կոտրելով: Եվ Շանմաթիյոյին բռնել են, երբ խնձորենու ճյուղը դեռ ձեռքին էր: Այդ ծիծաղելի էակին տանում են բանտ: Այս ամենը լոկ ուղղիչ պատժի գործ է: Բայց տեսե՛ք նախախնամության միջամտությունը: Բանտը վատ վիճակում գտնվելու պատճառով՝ պարոն հետաքննիչը հարմար է գտնում Շանմաթիյոյին Արրասի նահանգական բանտ փոխադրել: Արրասի բանտում Բրեն անունով մի նախկին թիապարտ կա, որին, չզիտեմ ինչ բանի համար, ձերբակալել են և, որովհետև լավ է պահում իրեն, դարձրել են սրահներից մեկի պահապան: Պարոն քաղաքապետ, հենց որ Շանմաթիյոն ներս է մտնում այդտեղ՝ Բրենն գոչում է.

— Վա՛յ, ես այս մարդուն ճանաչում եմ: Սա նախկին թիապարտ է: Հապա, ծերուկ, ինձ նայիր: Ժան Վալթա՞նն ես դու:— Այդ ո՞վ է Ժան Վալթանը,— իբր թե զարմացած հարցնում է Շանմաթիյոն:— Միամիտ մի ձևանա,— ասում է Բրենն:— Դու Ժան Վալթանն ես: Քսան տարի առաջ Տուլոնի

թիարանում էիր: Այնտեղ միասին էինք մենք:— Շանմաթիյոն ժխտում է: Գրողը տանի, հասկանո՞ւմ եք: Հարցը խորացնում են և այս արկածախնդրությունը փորփրում: Եվ ահա թե ինչ են գտնում: Այս Շանմաթիյոն երեսուն տարի առաջ ծառ էտող է եղել զանազան տեղերում, հատկապես Ֆավրոլում: Այդտեղ էլ նրա հետքը կորչում է: Երկար տարիներ հետո նա նորից երևում է Օվերնում, ապա Փարիզում, ուր, ինչպես ինքն է ասում, սայլագործ է եղել և ունեցել է մի լվացարար աղջիկ, բայց սա ապացուցված չէ և ի վերջո մեր կողմերն է ընկել: Արդ, նախքան գողության համար թիարան գնալը, ի՞նչ էր այդ Ժան Վալժանը՝ էտող: Որտե՞ղ՝ Ֆավրոլում: Մի ուրիշ փաստ: Այս Վալժանն իր կնույնքի անունով կոչվում էր Ժան, իսկ նրա մոր ազգանունը Մաթիյու էլ ինչ ավելի բնական կարող է լինել, քան կարծել, որ թիարանից դուրս գալուց հետո թաքնվելու համար ընդունել է մոր անունը և կոչվել է Ժան Մաթիյու: Ապա գնում է Օվերն, որտեղի առանձնահատուկ արտասանությամբ Ժանը դառնում է Շան և նրան սկսում են կոչել Շան Մաթիյու: Մեր մարդը չի դիմադրում այս փոփոխության և ահա նա վերածվում է Շանմաթիյոյի: Դուք ինձ հետևում եք, չե՞՞: Տեղեկություն են ստանում Ֆավրոլից: Ժան Վալժանի ընտանիքն այլևս այդտեղ չէ և ոչ ոք չգիտե, թե ուր է: Ինչպես գիտեք, այդ դասակարգի մարդկանց մեջ հաճախ է պատահում, որ ընտանիքը ցնդի: Փնտրում ես, փնտրում, ոչինչ չես գտնում: Այդ մարդիկ ցեխ էլ չեն, փոշի են: Եվ քանի որ այս պատմության սկիզբը երեսուն տարվա բան է, ապա Ֆավրոլում այլևս այնպիսի մարդ չկա, որ Ժան Վալժանին ճանաչած լինի: Հարցնում են Տուլոն: Պարզվում է, որ Բրենից գատ միայն երկու այլ տաժանապարտներ կան, որ Ժան Վալժանին տեսել են: Դրանք ցմահ դատապարտված Կոշպայն ու Շնիլդիյոն են: Նրանց դուրս են անում թիարանից, բերել տալիս և առերես անում Շանմաթիյո կարծեցյալի հետ: Նրանք չեն երկմտում: Նրանց համար էլ, ինչպես Բրենի համար, դա Ժան Վալժանն է: Միևնույն տարիքը, — նա հիսունչորս տարեկան է, — միևնույն հասակը, տեսքը, վերջապես նույն մարդը, նա է: Հենց այդ ժամանակ էր, որ ես ուղարկեցի իմ գաղտնի զեկուցագիրը Փարիզի ոստիկանապետության: Ինձ պատասխանեցին, որ ես բանականությունս կորցնում եմ և, որ Ժան Վալժանը Արրասի բանտում է՝ արդարադատության ձեռքում: Դուք, իհարկե, հասկանում եք, թե դա ինչքան ինձ զարմացրեց, ինձ, որ կարծում էի, թե այստեղ բռնել եմ այդ նույն Ժան Վալժանին: Եվ ես գրեցի հետաքննիչին: Նա ինձ կանչեց իր մոտ և բերել տվեց այդ Շանմաթիյոյին...

— Հետո՞, — ընդհատեց պարոն Մադլենը:

Ժավերն իր անայլայլ ու տխուր դեմքով պատասխանեց.

— Պարոն քաղաքապետ, ճշմարտությունը ճշմարտություն է: Ինձ համար տհաճ է, բայց Ժան Վալժանն այդ մարդն է: Ես էլ ճանաչեցի նրան:

Պարոն Մադլենը խիստ ձայնով շարունակեց.

— Վստա՞հ եք:

Ժավերն սկսեց ծիծաղել այն կսկծալի ծիծաղով, որ խոր համոզումից է առաջանում:

— Իհարկե:

Մի բոպե նա մնաց մտածկոտ և մեքենայորեն վերցնելով սեղանի վրա մնացած թանաք չորացնելու ավազի ամանից մի քանի պտղունց՝ ավելացրեց.

— Եվ այժմ, երբ ես տեսա իսկական Ժան Վալժանին, չեմ հասկանում, թե ինչպես եմ կարողացել այլ բան կարծել: Ներողություն եմ խնդրում ձեզնից, պարոն քաղաքապետ:

Այս աղերսալի և ծանր խոսքերն ուղղելով այն մարդուն, որ վեց շաբաթ առաջ պահականոցի ամբողջ անձնակազմի առաջ ստորացրել էր նրան և ասել. «Դուրս, Ժավեր», այդ մեծամիտ մարդը անգիտակցաբար լի էր պարզությամբ և արժանապատվությամբ: Պարոն Մաղլենը նրա խնդրանքին պատասխանեց միայն այս հանկարծակի հարցումով.

— Իսկ ի՞նչ է ասում այդ մարդը:

— Օ, գրողը տանի, գործը վատ է, պարոն քաղաքապետ: Եթե նաԺան Վալժանն է, ապա կրկնահանցանք կկատարվի: Պատ Բարձրանալ, ճյուղ կոտրել և խնձոր թոցնելը երեխաների համար չարաճճիություն է, մարդու համար հանցանք է, իսկ տաժանապարտի համար՝ ոճրագործություն: Այստեղ և արգելք հաղթահարել կա, և գողություն: Սա այլևս ուղղիչ ոստիկանության գործ չէ, այլ ոճրադատ աստանի գործ: Սա այլևս մի քանի օրվա բանտարկությամբ չի վերջանա, այլ ցկյանս թիապարտությամբ: Բացի դրանից, կա նաև փոքրիկ սավոյացու դեպքը, որն ըստ իս, կգա կհասնի: Սատանան տանի, վիճաբանության տեղիք շատ կա, այնպես չէ՞: Մանավանդ Ժան Վալժանի համար: Բայց Ժան Վալժանը ծածկամիտ է: Դրանից էլ է, որ ճանաչում եմ նրան: Մի ուրիշը կզգար, որ կրակի հոտ է գալիս և աջ ու ձախ կընկներ, կգոռար,— թեյամանը երգում է կրակի վրա,— չէր ուզենա Ժան Վալժանը լինել և այլն: Իսկ նա հասկանալու միտք չունի ու ասում է:— Ես Շանմաթիյոն եմ և դրանից էլ դուրս չեմ գա:— Ջարմացածի տեսք ունի նա, տխմար է ձևանում և դա ավելի լավ է: Օ՛, այդ խեղկատակը ճարպիկ է: Բայց միևնույն է, փաստերն այդտեղ են. նրան ճանաչել են չորս մարդ, և ծեր սրիկան կդատապարտվի: Գործը Արրասի ոճրադատ աստանում է, ուր ես գնալու եմ վկայություն տալու: Կանչված եմ:

Պարոն Մաղլենը նորից շրջվել էր գրասենյակի կողմը, վերցրել էր թղթապանակը և հանդարտ թերթում էր այն, կարդում կամ գրում զբաղված մարդու նման: Ապա դարձավ դեպի Ժավերը.

— Բավական է, Ժավեր: Ըստ էության այս բոլոր մանրամասնություններն ինձ շատ քիչ են հետաքրքրում: Ժամանակ ենք կորցնում, մինչդեռ կարևոր գործեր ունենք: Անմիջապես կգնաք, Ժավեր, այդ բարի կնոջ՝ Բյուզուպիեի մոտ, որ Սեն-Սով փողոցի անկյունում կանաչի է ծախում: Նրան կասեք, որ գանգատ տա սայլապան Պիեռ Շեսնլոնի վրա: Դա մի կոպիտ մարդ է և քիչ է մնացել ճիլի այդ կնոջն ու նրա երեխային: Պետք է, որ նա պատժվի: Հետո կգնաք Մոնտր դը Շամպիյնի փողոց՝ պարոն Շարսլեի մոտ: Նա գանգատվում է, որ հարևան տան ջրհորդանից անձրևաջուրը թափվում է իր տան մեջ և փչացնում հիմքերը: Դրանից հետո կհաստատեք ոստիկանության կանոնների օրինազանցությունները, որ ինձ հաղորդել են Գիբուրդ փողոցի այրի տիկին Դորիսի ու Գառո-Բլան փողոցի տիկին Ռոնե լը Բոսեի մասին և արձանագրություն կկազմեք: Բայց շատ եմ գործ տալիս ձեզ. ասացիք, որ Արրաս եք գնում այդ գործի համար՝ ութ-տասը օրից...

— Ավելի շուտ, պարոն քաղաքապետ:

— Ուրեմն ե՞րբ:

— Ինձ թվում էր, որ ասացի պարոն քաղաքապետին, թե դատը տեղի է ունենալու վաղը, և ես պետք է մեկնեմ այս գիշերվա հանրակառքով:

Պարոն Մաղլենը մի աննկատելի շարժում գործեց:

— Իսկ ինչքա՞ն կտևի դատավարությունը:

— Ամենաշատը մեկ օր: Վճիռը կարձակվի ամենաուշը՝ վաղը գիշերը: Բայց ես չեմ սպասի վճռին, որն այլ կերպ չի լինի: Վկայությունս տալուն պես կվերադառնամ:

— Շատ լավ,— ասաց պարոն Մադլենը:

Եվ ձեռքի մի շարժումով ճամփու դրեց Ժավերին:

Ժավերը չգնաց:

— Ներողություն, պարոն քաղաքապետ,— ասաց նա:

— Էլ ի՞նչ կա,— հարցրեց պարոն Մադլենը:

— Պարոն քաղաքապետ, ինձ մնում է ձեզ մի բան հիշեցնել:

— Ի՞նչ բան:

— Որ ես պետք է պաշտոնանկ արվեմ:

Պարոն Մադլենը վեր կացավ:

— Ժավեր, դուք պատվասեր մարդ եք, և ես հարգում եմ ձեզ: Դուք չափազանցում եք ձեր հանցանքը: Եվ բացի այդ, դա ինձ վերաբերող վիրավորանք է: Ժավեր, դուք բարձրանալու արժանի եք և ոչ թե իջնելու: Ես ցանկանում եմ, որ դուք պահեք ձեր տեղը:

Ժավերը նայեց պարոն Մադլենին այնպիսի միամիտ հայացքով, որի խորքում կարծես երևում էր նրա քիչ լուսավորված, բայց անաչառ ու զգաստ խիղճը և հանդարտ ձայնով ասաց.

— Պարոն քաղաքապետ, չեմ կարող համաձայնել:

— Կրկնում եմ,— առարկեց պարոն Մադլենը,— դա ինձ է վերաբերում:

Բայց Ժավերը, որ ուշադիր էր սուսկ իր մտքին՝ շարունակեց.

— Գալով չափազանցելուն, երբեք էլ չեմ չափազանցում: Ահա թե ինչպես եմ ես դատում: Ես ձեզ անարդար կերպով եմ կասկածի տակ առել: Դա ինքնին մի բան չէ: Մեզ նման մարդկանց իրավունքն է կասկածելը, թեև սխալ է իրենից վեր կասկածել: Բայց առանց ապացույցի, զայրույթի նուպայում, վրեժ լուծելու նպատակով ես ձեզ մատնել եմ որպես տաժանակիր, որ հարգելի մարդ եք, քաղաքապետ, բարձրաստիճան պաշտոնյա. սա ծանր է, խիստ ծանր: Ես, իշխանության գործակալս, վիրավորել եմ իշխանությունը հանձին ձեր: Եթե իմ ստորադասներից որևէ մեկն աներ այն, ինչ ես եմ արել, ես նրան կհայտարարեի ծառայության անարժան և կարտաքսեի: Հետևաբար՝ Իսկ այժմ, պարոն քաղաքապետ, ևս մի խոսք: Կյանքումս ես հաճախ խիստ եմ եղել ուրիշների նկատմամբ: Եվ դա իրավացի էր. ես լավ էի անում: Իսկ եթե ես այժմ խիստ չլինեի իմ հանդեպ, ապա այն ամենը, որ ճիշտ եմ արել՝ կդառնար ոչ ճիշտ: Արդյո՞ք ես ինձ ուրիշներից ավելի պետք է խնայեմ: Ոչ: Եթե ես ընդունակ լինեի պատժելու ուրիշներին, իսկ ինձ ոչ, ո՛ր, ես խայտառակ մարդ կլինեի և ովքեր որ ասեին՝ այս Ժավերը թշվառական է, իրավունք կունենային: Պարոն քաղաքապետ, ես չեմ ցանկանում, որ դուք բարությունը վերաբերվեք ինձ, ձեր բարությունը արդեն բավականաչափ պղտորել է արյունս, երբ ուրիշների համար է եղել, իսկ ինձ համար այդ բարությունը չեմ ուզում: Այնպիսի բարություն, որ իրավունքը տալիս է պոռնիկ աղջկան՝ ընդդեմ բուրժուայի, ոստիկանության գործակալին՝ ընդդեմ քաղաքապետի, ներքևում գտնվողին՝ ընդդեմ վերևում եղողի, հենց դա էլ ես անվանում եմ վատ բարություն: Հենց այդ բարությամբ է, որ

հասարակությունը կազմալուծվում է: Աստված իմ, շատ հեշտ է բարի լինել, դժվարը արդար լինելն է: Գիտե՞ք ինչ, եթե դուք լինեիք այն, ինչ ես կարծում էի, ես բարի չէի լինի ձեր հանդեպ, դուք դա կտեսնեիք: Պարոն քաղաքապետ, ես ինձ պետք է դատեմ այնպես, ինչպես ուրիշներին կդատեի: Երբ ես սանձահարում էի չարագործներին, երբ չարչարում էի անպիտաններին, հաճախ ինքս ինձ ասում էի. եթե դու սխալվես, եթե երբևիցե քեզ բռնես հանցանքի մեջ, մի երկմտիր: Ես սխալվեցի, ինքս ինձ բռնեցի հանցանքի մեջ, ավելի վատ. դե, կարտաքսվեմ, կկոտրվեմ ու կվռնդվեմ, այս է լավը: Բազուկներ ունեմ, կաշխատեմ հողի վրա, ինձ համար միևնույն է: Պարոն քաղաքապետ, ծառայության օգտի համար անհրաժեշտ է օրինակ տալ: Ես խնդրում եմ պարզապես վերահսկիչ ժավերի պաշտոնակությունը:

Այս բոլորն արտասանվեց հեզ, հպարտ, հուսահատ ու համոզված շեշտով, մի բան, որ մի տեսակ արտառոց մեծություն էր տալիս այս տարօրինակ պարկեշտ մարդուն:

— Կտեսնենք,— ասաց պարոն Մադլենը:

Եվ ձեռքը մեկնեց նրան:

Ժավերը ետ գնաց և կատաղի շեշտով ասաց.

— Ներեցեք, պարոն քաղաքապետ, այդ չպետք է լինի: Քաղաքապետը ձեռք չի տա ոստիկանական լրտեսին:

Ապա ատամների արանքից ավելացրեց.

— Լրտե՞ս, այո. այն բռնեից, որ ես ի չար գործադրեցի ոստիկանության պաշտոնս՝ ես լուր լրտես եմ:

Ապա խոր գլուխ տվեց և ուղղվեց դեպի դուռը:

Այնտեղ նա շուտ եկավ և աչքերը միշտ խոնարհած՝ ասաց.

— Պարոն քաղաքապետ, ես կշարունակեմ պաշտոնս, մինչև որ ինձ փոխարինողը գա:

Եվ դուրս գնաց: Պարոն Մադլենը մնաց մտախոհ՝ ականջ դնելով այդ հաստատուն ու վստահ քայլերին, որ հեռանում էին միջանցքի սալահատակի վրա:

Գիրք յոթերորդ

ՇԱՆՄԱԹԻՅՈՅԻ ԳՈՐԾԸ

I

ՔՈՒՅՐ ՄԵՄՊԼԻՍԸ

Այն դեպքերը, որ հիմա կարդալու եք, ամբողջությամբ հայտնի չեն եղել Մոնտրոյ-սյուռ-Մեռում, բայց այն քիչն էլ, որ հայտնի է դարձել, այնպիսի հիշատակ է թողել այդ քաղաքում, որ մի լուրջ բաց կլիներ այս գրքի համար՝ եթե նվազագույն մանրամասնություններով չպատմեինք դրանք:

Այս մանրամասնությունների մեջ ընթերցողը երկու-երեք անճմարտանման հանգամանքների կպատահի, որ սակայն մենք պահում ենք ճշմարտությունը հարգելու համար:

Ժավերի այցելությունից հետո, հետճաշա ժամերին պարոն Մադլենն ըստ իր սովորության գնաց Ֆանտինին տեսնելու:

Նախքան Ֆանտինի սենյակը մտնելը կանչել տվեց քույր Սեմալիսին:

Հիվանդանոցի սպասավորությունը կատարող երկու քույրերը Լագարյան միաբանությունից էին, ինչպես գթության բոլոր քույրերը և կոչվում էին քույր Պերպետյու և քույր Սեմալիս:

Քույր Պերպետյուն սովորական գեղջկուհու էր նման, անտաշ գթության քույր էր և մտել էր աստծո ծառայության մեջ ճիշտ այնպես, ինչպես մտնում են այլ պաշտոնի: Նա կրոնավոր էր ճիշտ այնպես, ինչպես մի ուրիշը խոհարարուհի է: Այս տիպը հազվագյուտ չէ: Վանական միաբանությունները հաճությամբ են ընդունում այս ծանր կավե ամանների նման գեղջկուհիներին ու հեշտությամբ կապուցին կամ ուրսուլինի ձև տալիս նրանց և օգտագործում են միաբանության ծանր աշխատանքների համար: Եզնարածի վերածումը կարմեյանի ոչ մի դժվարություն չի ներկայացնում, առաջինը դառնում է երկրորդը՝ առանց մեծ աշխատանքի. գյուղի ու մենաստանի ընդհանուր տգիտությունը միանգամայն պատրաստ նախապատրաստում է և անմիջապես գյուղացուն շիփ-շիտակ դնում է վանականի կողքին: Վերարկուն մի քիչ լայնացրու, և ահաքեզ սքեմ: Քույր Պերպետյուն մի ամրակազմ կրոնավոր էր՝ Մարինցի, որ Պոնտուազի մոտ է, խոսում էր իր տեղական բարբառով և սաղմոսներգում էր, քթի տակից մլոտում կամ դեղաջուրը քաղցրացնում ըստ հիվանդի բարեպաշտության կամ կեղծավորության. շտապեցնում էր հիվանդներին, կոպիտ էր մեռնողների հետ, աստծո անունը համարյա չպարտում էր նրանց դեմքին, իր զայրացվուտ աղոթքներով քարկոծում մեռնողների հոգեվարքը:

Քույր Սեմալիսը մոմի նման սպիտակ էր: Քույր Պերպետյուի կողքին կանգնելիս նման էր մոմակալի մոտ դրված մոմի, Վենսան դը Պոլը հիանալի կերպով տվել է գթության քրոջ տիպը հետևյալ սքանչելի խոսքերի մեջ, որտեղ այդքան ազատամտությանը՝ այնքան ստրկամտություն կա խառնված. «Նրանց վանքը հիվանդների տունը կլինի, վանական տաճարի փոխարեն իրենց թաղի եկեղեցին, մենաստանի փոխարեն քաղաքի փողոցներն ու հիվանդանոցների սրահները, վանքարգելության փոխարեն հնազանդությունը, ցանկապատի փոխարեն աստծո երկյուղը, քողի փոխարեն համեստությունը»: Այս իդեալն ապրում էր քույր Սեմալիսի մեջ. նա երբեք դեռատի չէր եղել և թվում էր, որ երբեք չի ծերանա: Դա մի հեզահամբույր, խստամբեր, բարեկիրթ ու սառն անձնավորություն էր (չենք համարձակվում ասել կին էր) և երբեք չէր ստել: Նա այնքան քաղցրաբարո էր, որ կարծես դուրաքեկ լիներ, բայց իրականում գրանիտից ավելի ամուր էր: Նա հպվում էր հիվանդներին իր չքնաղ, նուրբ ու մաքուր մատներով: Նրա խոսակցության մեջ, այսպես ասած, լռություն կար. նա ասում էր միմիայն անհրաժեշտը և այնպիսի ձայնահնչյուն ուներ, որ կարող էր միաժամանակ և խոստովանարան հիմնել և որևէ սալոն զմայլեցնել: Այս նրբությունը հարմարվում էր կոպիտ բրդե հագուստին՝ այդ բիրտ հպման մեջ գտնելով մի մշտական հիշեցում երկնքի ու աստծո մասին: Ընդգծենք մի մանրամասնություն: Երբեք սուտ չէր ասել որևէ շահի համար, չէր ասել մի այնպիսի բան, որ իրականում չի եղել, որ սուրբ ճշմարտություն չի եղել. ահա սա քույր Սեմալիսի բնորոշ գիծն էր, նրա առաքինության շեշտը: Միաբանության մեջ նա գրեթե նշանավոր էր իր այդ անսասան ճշմարտախոսությամբ: Աբբա Սիկարը խուլ ու համր Մասիյոյին գրած իր նամակի մեջ խոսում է քույր Սեմալիսի մասին: «Ինչքան էլ որ անկեղծ ու մաքուր լինենք մենք, միշտ էլ մեր անմեղության վրա ունենք անմեղ, փոքր ստերի ճաքը: Իսկ նա երբեք չուներ»: Փոքր սուտ, անմեղ սուտ, այդպիսի բան կա՞ արդյոք: Ստելը բացարձակ չարիք է: Քիչ ստել

հնարավոր չէ. ով ստում է, ողջ սուտն է ասում. ստելը նույն ինքը սատանայի դեմքն է: Սատանան երկու անուն ունի՝ Սատանա և Սուտ: Ահա թե ինչպես էր մտածում քույր Սեմյվիսը և ինչպես որ մտածում էր, այդպես էլ գործում էր: Դրանից էլ բխում էր այն սպիտակությունը, որի մասին խոսեցինք, մի սպիտակություն, որ իր ճառագայթումով ծածկում էր նույնիսկ նրա շրթունքներն ու աչքերը: Սպիտակ էր և նրա ժպիտը, և նրա հայացքը: Նրա խղճի ապակու վրա որևէ սարդի ոստայն չկար, չկար նաև փոշու նշույլ: Սուրբ Վենսան դը Պուլի վանքը մտնելով՝ նա, հատուկ ընտրությամբ, ընդունել էր Սեմյվիս¹²⁹ անունը: Սիցիլիացի Սեմյվիսն, ինչպես գիտենք, այն սրբուհին է, որ գերադասեց իր ստինքները կտրել, քան թե ասել, որ ինքը ծնվել է Սեգեստում, մինչդեռ ծնվել էր Սիրակուզա քաղաքում, մի սուտ, որով նա կարող էր փրկվել: Այս պաշտպան-տիրուհին պատշաճում էր նրա հոգուն:

Քույր Սեմյվիսը միաբանության կարգը մտնելիս երկու թուլություն ուներ, որոնցից քիչ-քիչ ուղղվել էր. նա սիրում էր քաղցրավենիք և սիրել էր նամակներ ստանալ: Այժմ նա միմիայն մի գիրք էր կարդում, մի մեծատառ լատիներեն աղոթագիրք: Լատիներեն նա չէր հասկանում, բայց գիրքը հասկանում էր:

Բարեպաշտ կինը սիրել էր Ֆանտինին, հավանաբար նրա մեջ ծածուկ առաքինություն նշմարելով և գրեթե բացառապես նվիրված էր նրան խնամելուն:

Պարոն Մադլենը մի կողմ տարավ քույր Սեմյվիսին և Ֆանտինին հանձնարարեց նրան՝ մի առանձնահատուկ շեշտով, որը քույր Սեմյվիսը քիչ անց հիշեց:

Հեռանալով քրոջից, նա մոտեցավ Ֆանտինին:

Ֆանտինն ամեն օր սպասում էր պարոն Մադլենի երևալուն, ինչպես սպասում են ջերմության հրճվանքի ճառագայթին: Քույրերին նա ասում էր. «Ես ապրում եմ միայն այն րոպեներին, երբ պարոն քաղաքապետն այստեղ է»:

Այդ օրը նա ծանր տենդի մեջ էր և հենց որ պարոն Մադլենին տեսավ՝ հարցրեց.

— Իսկ Կոզե՞ տը:

Քաղաքապետը ժպտալով պատասխանեց.

— Շուտով:

Պարոն Մադլենը Ֆանտինին վերաբերվեց սովորականի պես, միայն թե կես ժամվա փոխարեն մեկ ժամ մնաց այնտեղ՝ ի մեծ բավականություն Ֆանտինի: Հազարավոր պատվերներ տվեց բոլորին, որ հիվանդին որևէ բան չպակասի: Նկատեցին, որ մի պահ նրա դեմքը խիստ մռայլվեց: Բայց դա բացատրվեց, երբ իմացան, որ բժիշկը նրա ականջին կոանալով ասել էր՝ շատ է ուժից ընկնում:

Հետո նա գնաց քաղաքապետարան և գրասենյակի ծառան տեսավ, որ նա ուշադրությամբ քննում է իր առանձնասենյակի պատից կախված Ֆրանսիայի ուղեգրային քարտեզը: Ապա մատիտով թղթի կտորի վրա մի քանի թիվ գրեց:

¹²⁹ Սեմյվիս նշանակում է պարզություն:

II

ՎԱՐՊԵՏ ՄԿՈՖԼԵՐԻ ԿՈՐՈՎԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքապետարանից նա գնաց քաղաքի ծայրը մի ֆլամանդացու վարպետ Սկոֆլերի մոտ (որ ֆրանսացիներով իր ազգանունը դարձրել էր Սկոֆլեր), որը ձիեր ու երկանիվ կառքեր էր վարձու տալիս՝ «ըստ ցանկության»:

Այդ Սկոֆլերի մոտ գնալու ամենակարճ ճանապարհը այն քիչ բանուկ փողոցն էր, ուր գտնվում էր պարոն Մադլենի բնակած թաղի ծխական երիցատունը: Ասում էին, որ քահանան արժանավոր, հարգելի մարդ էր և համարվում էր լավ խորհրդատու: Այն բոլորին, երբ պարոն Մադլենը հասավ երիցատուն, փողոցում սոսկ մի անցորդ կար, որը հետևյալը նկատեց. պարոն քաղաքապետը երիցատունն անցնելով կանգ առավ, մնաց անշարժ, ապա շուտ եկավ և ետ դարձավ մինչև երիցատան դուռը, որ միջնադուռ էր ու երկաթե ճկիկ ուներ: Նա արագ ձեռքը տարավ դեպի ճկիկը, բռնեց այն, ապա նորից կանգ առավ, մնաց անորոշ՝ կարծես մտախոհ դրության մեջ և մի քանի վայրկյան հետո՝ փոխանակ ճկիկը թափով բաց թողնելու, կամացուկ իջեցրեց այն և ճանապարհը շարունակեց կարծես շտապելով, մի բան, որ մինչ այդ չուներ:

Պարոն Մադլենը վարպետ Սկոֆլերին գտավ իր արհեստանոցում՝ զբաղված մի ձիասարք վերանորոգելով:

— Վարպետ Սկոֆլեր, մի լավ ձի չե՞ք ունենա,— հարցրեց նա:

— Պարոն քաղաքապետ,— պատասխանեց ֆլամանդացին,— իմ բոլոր ձիերն էլ լավն են: Ի՞նչ եք հասկանում մի լավ ձի ասելով:

— Այնպիսի ձի, որ կարողանա օրը քսան լիո գնալ:

— Պա՛հ,— գոչեց ֆլամանդացին,— քսան լիո՛ :

— Այո:

— Երկանիվի լծվա՞ծ:

— Այո:

— Իսկ տեղ հասնելուց հետո ինչքա՞ն ժամանակ է հանգստանալու:

— Կարիքի դեպքում պետք է կարողանա ետ դառնալ հաջորդ առավոտ:

— Միևնույն ուղին կտրելու համա՞ր:

— Այո:

— Գրողը տանի, քսան լիո՞ ասացիք:

— Այո:

Պարոն Մադլենը գրպանից հանեց այն թուղթը, որի վրա մատիտով մի քանի թվանշան էր գրված: Այդ թվանշանները 5, 6, 8^{1/2} էին:

— Տեսնո՞ւմ եք, ընդամենը տասնիննուկես, կլոր ասած քսան լիո:

— Պարոն քաղաքապետ,— շարունակեց ֆլամանդացին,— ձեր գործը գլուխ կբերեմ: Իմ փոքր սպիտակ ձին գիտե՞ք, մի քանի անգամ տեսած կլինեք: Դա ստորին Բուլոնեի մի փոքրիկ կենդանի է և խիստ տաքարյուն: Սկզբում ուզեցել են հեծնելու ձի դարձնել: Բայց նա քացի էր տալիս և բոլորին էլ ցած գցում: Ես գնեցի այդ ձին ու լծեցի երկանիվի: Պարոն, նա էլ հենց դա էր ուզում, հիմա աղջկա նման հեզ է ու քամու պես է արշավում: Դե ոնց ասեմ, չպետք է հեծնեին նրան: Նա միտք չունի հեծնելու ձի դառնալ: Յուրաքանչյուր էակ իր փառասիրությունն ունի: Քաշե՞լ՝ համաձայն եմ, կրե՞լ՝ ոչ, պետք է հավատալ, որ նա այս բանն ասել է ինքն իրեն:

— Եվ այդ ձին կարո՞ղ է ճամփան կտրել:

— Քսան լիոն կկտրի արագ արշավով՝ ոչ ավելի ութ ժամից: Բայց ահա թե ինչ պայմաններում:

— Ասացեք:

— Նախ թույլ կտաք, որ ճամփի կեսին մեկ ժամ շունչ առնի, ապա կերն ընդունի, իսկ այդ միջոցին, երբ նա ուտում է, պետք է այնտեղ լինեք, որպեսզի պանդոկի տղան չգողանա նրա վարսակը, որովհետև ես նկատել եմ, որ պանդոկներում վարսակն ավելի հաճախ ախոռապաններն են խմում, քան թե կենդանիներն ուտում:

— Այնտեղ կլինեմ:

— Երկրորդ... Երկանիվը պարոն քաղաքապետի համա՞ր է:

— Այո:

— Պարոն քաղաքապետը վարել գիտե՞:

— Այո:

— Շատ լավ. պարոն քաղաքապետը պետք է բոլորովին մենակ և առանց բեռի ճամփորդի, որպեսզի ձին թեթև լինի:

— Համաձայն եմ:

— Սակայն պարոն քաղաքապետը որևէ մարդ չունենալով իր հետ՝ ստիպված կլինի վարսակին անձամբ հսկելու հոգնությունը հանձն առնել:

— Արդեն խոսվեց այդ մասին:

— Օրական երեսուն ֆրանկ՝ հանգստի օրերն էլ ներառյալ: Ոչ մի գրոշ պակաս և կենդանու կերի ծախսը պարոն քաղաքապետի հաշվին:

Պարոն Մադլենը գրպանից հանեց երեք նապոլեոն ու դրեց սեղանի վրա:

— Ահա երկու օրվա կանխավճար:

— Չորրորդ, այդպիսի երթի համար կաբրիոլետը շատ ծանր կլինի և կհոգնեցնի ձիուն: Անհրաժեշտ է, որ պարոն քաղաքապետը համաձայնի ճամփորդել տիլբուրի երկանիվով, որպիսին ես ունեմ:

— Համաձայն եմ:

— Դա թեթև է, բայց ծածկ չունի:

— Միննույն է:

— Պարոն քաղաքապետը մտածե՞լ է, որ հիմա ձմեռ է...

Պարոն Մաղլենը չպատասխանեց: Ֆլամանդացին շարունակեց.

— Որ խիստ ցուրտ է:

Պարոն Մաղլենը լուռ մնաց: Վարպետ Սկոֆլերը շարունակեց.

— Որ կարող է անձրև գալ:

Պարոն Մաղլենը գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Տիլբուրին ու ձին պետք է դռանս առջև լինեն վաղը, առավոտյան ժամը չորսնկեսին:

— Շատ լավ, պարոն քաղաքապետ,— պատասխանեց Սկոֆլերը. ապա բթամատի եղունգով քերելով սեղանի փայտի վրա եղած բիծը՝ շարունակեց այն անհոգ շեշտով, որ ֆլամանդացիներն այնքան լավ գիտեն խառնել իրենց նրբամտությանը.

— Բայց ես այժմ մի բանի մասին եմ մտածում. պարոն քաղաքապետն ինձ չի ասում, թե ուր է գնում: Ո՞ր եք գնում, պարոն քաղաքապետ:

Խոսակցության հենց սկզբից էլ նա այլ բանի մասին չէր մտածում, բայց ինքն էլ չգիտեր, թե ինչու չէր համարձակվում այդ հարցումն անել:

— Ձեր ձիու առջևի ոտքերը լա՞վ են,— հարցրեց պարոն Մաղլենը:

— Այո, պարոն քաղաքապետ: Վայրէջքներին կգուպեք նրան: Շա՞տ վայրէջքներ կան այստեղից մինչև ձեր գնալիք տեղը:

— Չմոռանաք առավոտյան ժամը ճիշտ չորսնկեսին լինել իմ դռան առջև,— պատասխանեց պարոն Մաղլենը և դուրս եկավ:

Ֆլամանը մնաց «էշացած», ինչպես ինքն էր ասում մի քանի ժամանակ հետո:

Պարոն քաղաքապետը երկու-երեք րոպե էր ինչ դուրս էր եկել, երբ դուռը բացվեց. քաղաքապետն էր:

Նա նույն անհարիր ու գերզբաղված տեսքն ուներ:

— Պարոն Սկոֆլեր,— ասաց նա,— որքա՞ն եք գնահատում այն ձին ու երկանիվը, որ ինձ վարձու եք տալիս:

— Պարոն քաղաքապետ, ուզում եք գնե՞լ դրանք:

— Ոչ, բայց, համենայն դեպս, ուզում եմ ապահովել ձեզ: Երբ վերադառնամ՝ փողս կվերադարձնեք: Որքա՞ն եք գնահատում կառքն ու ձին:

— Հինգ հարյուր ֆրանկ, պարոն քաղաքապետ:

— Համեցեք:

Եվ պարոն Մաղլենը մի բանկատոմս դրեց սեղանի վրա, ապա դուրս գնաց և այլևս չվերադարձավ:

Վարպետ Սկոֆլերը խիստ զոջաց, որ հազար ֆրանկ չէր ասել: Իրականում կառքն ու ձին միասին հարյուր էքյու¹³⁰ արժեին:

Ֆլամանդացին կանչեց իր կնոջը և պատմեց իրադարձությունը:

— Գրողը տանի, ո՞ր կարող է գնալ պարոն քաղաքապետը:— Եվ սկսեցին միտք անել:— Փարիզ է գնում,— ասաց կինը:— Չեմ կարծում,— ասաց ամուսինը: Պարոն Մաղլենը մոռացել էր բուխարու վրա այն թուղթը, որի վրա թվանշաններ էր գրել: Վարպետը վերցրեց այն և ուսումնասիրեց:— Հինգ, վեց, ութուկես, սա հանգրվանների տարածությունն է ցույց տալիս:— Եվ դարձավ դեպի կինը:— Գտա:— Ինչպե՞ս: Այստեղից Էսգեն հինգ լիո է, Էսգենից Սեն-Պոլ՝ վեց լիո, Սեն-Պոլից Արբաս՝ ութուկես: Արբաս է գնում:

Իսկ պարոն Մաղլենը վերադարձել էր տուն:

Վարպետ Սկոֆլերի մոտից վերադառնալու համար ընտրել էր ամենաերկար ճանապարհը, կարծես թե երիցատան դուռը փորձություն լիներ նրա համար և նա ուզենար խուսափել դրանից: Ապա բարձրացել էր իր սենյակն ու փակվել այնտեղ, մի շատ պարզ երևույթ, որովհետև նա սովորություն ուներ վաղ քնել: Սակայն ֆաբրիկայի դռնապանուհին, որ միաժամանակ և պարոն Մաղլենի միակ սպասուհին էր, նկատեց, որ նրա լույսը հանգավ ժամը ութնկեսին և ներս մտնող գանձապահին ասաց.

— Պարոն քաղաքապետը հիվանդ չէ՞: Նա մի քիչ անսովոր տեսք ուներ:

Այս գանձապահն ապրում էր պարոն Մաղլենի սենյակի ճիշտ տակը գտնվող սենյակում: Նա բնավ ուշք չդարձրեց դռնապանուհու խոսքերին, պառկեց ու քնեց: Կեսգիշերի մոտ նա հանկարծ արթնացավ. քնի մեջ մի աղմուկ էր լսել իր գլխավերևում: Ականջ դրեց. երթևեկի ձայն լսեց, կարծես մեկը գնում էր գալիս վերնի սենյակում: Ավելի ուշադիր ականջ դրեց և ճանաչեց պարոն Մաղլենի քայլերը: Դա արտակարգ թվաց նրան: Սովորաբար ոչ մի ձայն չէր լսվում պարոն Մաղլենի սենյակից՝ նրա վեր կենալուց առաջ: Մի քանի րոպե հետո գանձապահը մի ուրիշ ձայն լսեց, որ նման էր բաց ու խուփ արվող դարակի ձայնի: Հետո մի կարասի շարժվեց, ապա լռություն տիրեց և քայլերը վերսկսվեցին: Գանձապահը նստեց անկողնում, բոլորովին արթնացավ. նայեց և իր լուսամտից դիմացի պատի վրա նկատեց լուսավորված պատուհանի կարմրավուն ցուլքը: Դատելով շողերի ուղղությունից՝ դա կարող էր լինել պարոն Մաղլենի լուսամտից: Յուրը երերում էր, կարծես արձակվում էր վառվող կրակից, քան թե լույսից: Ապակիների շրջանակների ստվերը չէր գծագրվում պատի վրա, մի բան, որ ցույց էր տալիս, թե լուսամուտը լայն բաց էր: Առավել ևս զարմանալի էր բաց լուսամուտն այդ ձմռան: Գանձապահը նորից քնեց: Մեկ-երկու ժամ հետո նա դարձյալ արթնացավ: Միննույն դանդաղ ու թեթև քայլերը շարունակում էին գնալ-գալ իր գլխի վրա:

Յուրը դեռ գծագրված էր պատի վրա, բայց այժմ աղոտ էր ու հանդարտ՝ նման լամպի կամ մոմի արտացոլման. և լուսամուտը միշտ բաց էր:

Ահա թե ինչ էր տեղի ունենում պարոն Մաղլենի սենյակում:

¹³⁰ Էքյուն հավասար է երեք ֆրանկի:

III

ՓՈԹՈՐԻԿ ԳԼԽՈՒՄ

Ընթերցողն անկասկած գուշակել է, որ պարոն Մաղլենը ոչ այլ ոք է, եթե ոչ Ժան Վալժանը:

Մենք արդեն նայել ենք նրա խղճի խորքերը. ժամանակը հասել է, որ մի անգամ էլ նայենք: Եվ առանց հուզվելու ու սարսռալու չենք անում այդ: Ոչ մի բան այնպես զարհուրելի չէ, քան այսպիսի հայեցողությունը: Հոգու աչքը ոչ մի տեղ չի կարող այնպիսի շլացուցիչ փայլ և այնպիսի սև խավար գտնել՝ ինչքան մարդու մեջ: Նա չի կարող սևեռվել որևէ բանի վրա, որ դրանից ավելի վտանգավոր, ավելի բարդ և ավելի խորհրդավոր ու անսահման լինի: Ծովից ավելի մեծ տեսարան կա. դա երկինքն է. երկնքից էլ ավելի մեծ տեսարան կա. դա հոգու ներքինն է:

Մարդկային խղճի պոռնը գրել, լինի դա մի առանձին մարդու առթիվ, լինի մարդկանցից ամենահետինի առթիվ, կնշանակի բոլոր էպոպեաները ձուլել մի վսեմ ու վերջնական էպոպեայի մեջ: Խիղճը դա ցնորքների, տենչանքների ու նախաքայլերի քառսն է, երազների հնոցը, գաղափարների քարանձավը, որից ամաչում ես. դա սովետությունների դիվածողովն է, կրքերի ռազմադաշտը: Որոշ ժամերի թափանցեք մի մտախոհ մարդկային էակի կապարագույն դեմքից ներս և ետ նայեք, նայեցեք նրա հոգուն, նայեցեք այդ խավարին: Այդտեղ, արտաքին լռության տակ, հսկաների պատերազմ է՝ ինչպես Հոմերոսի մեջ, վիշապների, հիդրաների և ուրվականների ճակատամարտեր են՝ ինչպես Միլտոնի մեջ, և տեսիլքային սպիրալներ՝ ինչպես Դանթեի մեջ: Ինչպիսի մտայլ բան է այն անհունը, որ յուրաքանչյուր մարդ կրում է իր մեջ և որի հետ հուսահատությամբ չափում իր ուղեղի ցանկությունները և իր կյանքի գործողությունները:

Ալիգիերին մի անգամ պատահեց մի չարագուշակ դոստ և նրա առջև երկմտեց: Մեր առջև էլ այժմ մի այդպիսի դուռ կա, որի շեմքին մենք էլ ենք երկմտում: Բայց և այնպես մտնենք:

Քիչ բան ունենք ավելացնելու այն ամենին, որ ընթերցողն իմանում է արդեն, բացի այն կետից, թե ինչ պատահեց Ժան Վալժանին փոքրիկ Ժերվեի հետ ունեցած դեպքից հետո: Այդ բուպեից հետո, ինչպես տեսանք, նա դարձավ այլ մարդ: Ինչ որ եպիսկոպոսն ուզեցել էր դարձնել նրան՝ նա իրագործեց: Դա ավելի էր, քան ձևափոխությունը, դա կերպարանափոխություն էր:

Նրան հաջողվեց անհետանալ, ծախեց եպիսկոպոսի արծաթեղենը, բացի աշտանակներից՝ իբրև հիշատակ, անցավ քաղաքից-քաղաք, կտրեց անցավ Ֆրանսիան և հասավ Մոնտրոյ-սյուռ-Մեո, հղացավ այն միտքը, որ արդեն ասել ենք, կատարեց այն, որ արդեն պատմել ենք և հասավ այն դրության, որ դարձավ անձերբակալելի ու անմատչելի և դրանից հետո՝ հաստատվելով Մոնտրոյ-սյուռ-Մեոում՝ երջանիկ էր զգում իրեն, որ իր խիղճը տխրում է իր անցյալով և իր գոյության առաջին կեսը հերքվում է վերջին կեսով: Ապրում էր նա խաղաղ, ապահով ու հուսալից և միմիայն երկու մտածմունք ուներ. թաքցնել իր անունը և սրբագործել իր կյանքը, խուսափել մարդկանցից և վերադառնալ աստծուն:

Այս երկու մտածմունքներն այնքան սերտորեն էին խառնված նրա մտքում, որ կազմում էին լոկ մի միտք. երկուսն էլ հավասարապես ներծծում ու ստիպողական էին և իշխում էին նրա նվազագույն արարքներին: Սովորաբար նրանք համերաշխ էին նրա կյանքի ընթացքը կանոնավորելու գործում. նրան շուտ էին տալիս դեպի ստվերը. նրան դարձնում էին բարյացակամ ու պարզ և միևնույն խորհուրդն էին միշտ տալիս: Սակայն երբեմն տարակարծություն էր ծագում նրանց միջև: Այդ դեպքում, ինչպես գիտենք, այն մարդը, որին Մոնտրոյ-սյուռ-Մեոյի ողջ շրջանն անվանում էր պարոն Մաղլեն, չէր տատանվում առաջինը երկրորդին զոհել, իր ապահովությունը՝

առաքինության: Այսպես, հակառակ ամենայն զգուշության և խոհեմության, նա պահել էր եպիսկոպոսի մոմակալները, նրա սուգն էր կապել, կանչել ու հարցաքննել էր այդտեղից անցնող բոլոր փոքրահասակ սավոյացիներին, տեղեկություններ էր հավաքել Ֆավրոլի ընտանիքների մասին և փրկել էր ծեր Ֆոշվանի կյանքը՝ հակառակ Ժավերի տագնապալի ակնարկներին: Թվում էր, ինչպես արդեն նկատել ենք, որ նա մտածում էր բոլոր իմաստուն սուրբ ու արդար մարդկանց նման, թե իր առաջին պարտականությունը դեպի ինքը չէ:

Բայց և այնպես պետք է ասել, որ նման բան երբեք չէր ներկայացել նրան: Այն երկու գաղափարները, որ կառավարում էին այդ դժբախտ մարդուն, որի տառապանքներն ենք պատմում՝ այդպիսի լուրջ պայքար չէին առաջացրել: Նա հասկացավ դա տարտամորեն, բայց խորապես հենց առաջին խոսքերից, որ Ժավերն ասաց նրա սենյակ մտնելուն պես: Այն բոլորին, երբ այնքան տարօրինակորեն արտասանվեց այն անունը, որ նա թաղել էր իր ծանրության ներքո, նա կարծես համակվեց ապշությամբ ու թվաց, որ գինովցավ իր ճակատագրի այդչաքաշուք արտառոցությամբ և այդ ապշության միջից նա ունեցավ այն սարսուռը, որ նախորդում է մեծ ցնցումներին: Նա կռացավ այնպես, ինչպես սոճին է կռանում փոթորկի մերձեցումից, ինչպես զինվորը՝ ռումբի մոտենալուց: Իր գլխի վրա նա զգաց ամպրոպով ու կայծակներով լի ամպեր: Լսելով հանդերձ Ժավերի խոսքերը՝ առաջին միտքը, որ ծագեց նրա գլխում, այս էր. գնալ, վազել, անձնատուր լինել, դուրս հանել բանտից այդ Շանմաթիյոյին և նստել նրա տեղը. կսկծալի էր ու ծակող այդ միտքը՝ նման կենդանի մսի հերձումին, ապա դա անցավ. և նա ինքն իրեն ասաց, — դեռ կտեսնենք: Նա ճնշեց այս առաջին վեհանձն շարժումը և նահանջեց հերոսության առջև:

Անկասկած սքանչելի բան կլինեք, որ եպիսկոպոսի սուրբ խոսքերից հետո, զոջումի ու անձնուրացության այդքան տարիներից հետո, հիանալիորեն սկսված ապաշխարության մեջ, այս մարդը, նույնիսկ այսպիսի սարսափելի դեպքի ներկայությամբ, ոչ մի ակնթարթ չվրիպեր և նույն քայլերով շարունակեր ընթանալ դեպի այն բաց անդունդը, որի խորքում երկինքն էր փայլում. դա հիանալի կլինեք, բայց այդպես չեղավ: Պետք է որ հաշիվ տանք այն ամենի մասին, որ կատարվում էր նրա հոգու մեջ և կարող ենք միայն այդտեղ եղածն ասել: Այն, որ ամենից առաջ համակեց նրան, ինքնապահպանման բնագոյն էր. նա շտապ ի մի հավաքեց իր մտքերը, խեղդեց իր հուզումը, նկատի առավ Ժավերի ներկայությունը՝ այդ մեծ վտանգը, սարսափից ծնված հաստատականությամբ հետաձգեց ամենայն վճռականություն, իր պաշտոնական անելիքների մասին մտածելով մոռացման անձնատուր եղավ և վերագտավ իր հանդարտությունը՝ ինչպես սուսերամարտիկն է բարձրացնում գետնից իր վահանը:

Օրվա մնացած ժամերն անցկացրեց ներքուստ վրդով և արտաքուստ խորապես հանգիստ դրության մեջ. նա ձեռք առավ միայն, ինչպես կարելի է ասել, «պաշտպանողական միջոցներ»: Ամեն ինչ դեռ խառնաշփոթ էր և ալեկոծվում էր նրա ուղեղում. սարսափն այնքան խիստ էր, որ նա որոշակի չէր տեսնում որևէ մտքի ձևը և ինքն էլ միայն մի բան կարող էր ասել իր մասին, որ մի մեծ հարված է ստացել: Սովորականի պես նա գնաց Ֆանտինի վշտալի անկողնու մոտ և երկարաձգեց իր այցելությունը՝ մտածելով, որ պետք էր այդպես անել և, եթե հարկ լինեք բացակայել՝ Ֆանտինին լրիվ հանձնարարել քույրերին: Նա անորոշապես զգաց, որ թերևս պետք լինեք Արրաս գնալ և բնավ էլ որոշած չլինելով այդ ճամփորդությունը կատարել, մտածեց, որ ամենայն կասկածից զերծ մնալու համար որևէ անպատեհություն չկար, եթե ներկա լինեք տեղի ունենալիքին և դրա համար էլ վերցրեց Սկոֆլերի երկանիվը՝ յուրաքանչյուր դեպքի համար պատրաստ գտնվելու նկատառումով:

Նա ճաշեց բավական ախորժակով:

Իր սենյակ մտնելով սկսեց ամփոփվել:

Ապա քննեց կացությունը և գտավ անլուր, այնքան անլուր, որ իր մտատանջության մեջտեղը, մի ինչ-որ գրեթե անբացատրելի անձկությունից մղված, վեր կացավ աթոռից և սենյակի դուռը մղկակով փակեց, վախենում էր, որ մի որևէ բան ներս չմտնի և պատնեշվում էր հնարավորի դեմ:

Մի րոպե հետո նա հանգցրեց լույսը, որ ճնշում էր նրան:

Նրան թվում էր, որ կարող են տեսնել իրեն:

Ո՞վ. մարդիկ:

Ավաղ, այն, որին նա ուզում էր դուրս շարտել՝ մտել էր. այն, որին ուզում էր կուրացնել՝ նայում էր նրան: Խիղճը:

Խիղճը, այսինքն աստված:

Բայց առաջին րոպեին պատրանք ունեցավ, համակվեց ապահովության և մենակության զգացումով. մղկակը քաշելուց հետո իրեն զգաց անառիկ, մոմը հանգցնելուց հետո իրեն զգաց անտեսանելի: Այդ ժամանակ տիրապետեց ինքն իրեն, արմունկները դրեց սեղանին, գլուխը հենեց ձեռքին և խավարի մեջ սկսեց մտածել:

— Ո՞ր եմ ես: Երագում չե՞մ արդյոք: Ի՞նչ ասացին ինձ: Ճի՞շտ է, որ ես տեսա այդ Ժավերին, և նա այդպիսի բան ասաց: Ի՞նչ կարող է լինել այդ Շանմաթիոն: Ուրեմն նա ինձ նմա՞ն է: Հնարավո՞ր է դա: Երբ մտածում եմ, որ դեռ երեկ այնքան հանգիստ էի և հեռու որևէ կասկածից: Ի՞նչ էի անում երեկ նույն ժամին: Ի՞նչ կա այս դեպքի մեջ: Ինչպե՞ս է լուծվելու դա: Ի՞նչ անել:

Ահա թե ինչ մտատանջության մեջ էր նա: Նրա ուղեղը կորցրել էր մտքերը պահելու ուժը, որոնք անցնում էին ալիքների նման և նա ճակատը սեղմում էր ձեռքերով, որպեսզի կանգնեցնի նրանց:

Իր կամքն ու բանականությունը տակնուվրա անող այդ մտատանջությունից նա փորձում էր որևէ հստակություն ու եզրակացություն հանել, բայց միմիայն անձկություն էր դուրս գալիս:

Գլուխն այրվում էր. նա մոտեցավ լուսամուտին և լայն բաց արեց. երկնքում աստղ չկար, և նորից ետ եկավ ու նստեց սեղանին:

Առաջին ժամն այդպես անցավ:

Սակայն քիչ-քիչ տարտամ ուրվագծեր սկսեցին կազմվել ու հաստատվել նրա մտախոհության մեջ և նա կարողացավ իրականության ճշգրտությամբ նշմարել ոչ թե ողջ կացությունը, այլ միայն մի քանի մանրամասներ: Նա սկսեց հասկանալ, որ չնայած խիստ արտակարգ ու ճգնաժամային կացության՝ այնուամենայնիվ ինքը դրա տերն էր:

Բայց նրա շվարումը դրանից աճեց միայն:

Անկախ նրա առաջադրած գործողությունների խիստ ու կրոնական նպատակից՝ այն ամենը, որ նա արել էր մինչև այդ օրը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի խոռոչ, որ նա փորում էր՝ իր անունն այդտեղ թաղելու համար: Այն, ինչից նա միշտ էլ ամենից ավելի վախեցել էր անքնության գիշերներին ինքն իր վրա խոկալիս՝ դա երբևիցե իր անունը լսելն էր: Եվ նա ասում էր ինքն իրեն, որ դա իր համար կլինի ամեն բանի վախճանը, որ այն օրը, երբ նորից երևան գա այդ անունը, ապա դա կմարեցնի իր նոր կյանքը, և ո՞վ գիտե, գուցե և իր ներսի նոր հոգին: Նա սարսռում էր լոկ այն մտքից, թե դա հնարավոր է: Եվ իսկապես, եթե այդ րոպեներին որևէ մեկն ասեր, թե կգա մի պահ, երբ այդ անունը

կինչի իր ականջին, երբ այդ զգվելի բառը՝ Ժան Վալժանը, հանկարծ դուրս կգա խավարից ու կտնկվի իր առջև, երբ այն ուժեղ լույսը, որ վառված է փարատելու այն խորհրդավորությունը, որով ինքը պարուրվում էր, հանկարծակի կշողշողա իր գլխի վրա և այդ անունը իրեն չի սպառնա, որ այդ լույսը էլ ավելի կթանձրացնի խավարը, որ այդ ճեղքված քողը կավելացնի խորհրդավորությունը, որ այդ երկրաշարժը կամրացնի իր շենքը, որ այդ զարմանալի դիպվածը, եթե միայն ինքն ուզի, այլ հետևանք չի ունենա, քան իր գոյությունը ավելի հստակ և ավելի անթափանց դարձնելը և, որ Ժան Վալժանի ուրվականի հետ երես առ երես լինելուց բարի ու արժանավոր բուրժուա պարոն Մադլենը դուրս կգա ավելի պատվավոր, ավելի հանգիստ և ավելի, քան երբևիցե՝ հարգված, եթե որևէ մեկը նրան այս բանն ասեր՝ նա կօրորեր գլուխը և նրա խոսքերը կնկատեր որպես գառանցանք։ Եվ իսկապես, այս բոլորը ճշտիվ պատահեց, այս ամբողջ անհնարինը փաստ էր և աստված թույլ էր տվել, որ այս խոլ բաները դառնան իրական։

Նրա երագներն սկսում էին հստականալ և նա ավելի ու ավելի էր հաշիվ տալիս իրեն իր դրության մասին։

Նրան թվում էր, որ նոր է արթնացել ինչ-որ քնից և կանգնած, դողդողալով, կեսգիշերին սահում է մի գառիթափից՝ իզուր ետ գնալով անդունդի եզրից։ Խավարի մեջ նա հստակորեն նշմարում էր մի անձանդի, մի օտարականի, որ ճակատագիրն ընդունել էր իր տեղը և իր փոխարեն մղում էր անդունդ։ Եվ, որպեսզի այդ վիճիք փակվեր նորից, անհրաժեշտ էր, որ մեկնումեկն ընկներ այնտեղ. կամ ինքը, կամ նա։

Եվ նրան մնում էր թողնել, որ դեպքերն ինքնին ընթանան։

Պարզորոշությունը դարձավ կատարյալ, և նա խոստովանեց հետևյալը. իր տեղը դատարկ էր թխարանում և զուր էր ջանք դրել՝ այդ տեղը միշտ էլ սպասում էր իրեն, փոքրիկ Ժերվեից արած գողությունը մղում էր իրեն այդտեղ, այդ դատարկ տեղը նրան կապասեր ու կձգեր, մինչև որ ինքն այնտեղ գնար, դա անխուսափելի էր ու ճակատագրական։ Ապա ինքն իրեն ասաց. այս բոլորին իրեն մի փոխարինող կա և այդ չար բախտին արժանացածը ում Շանմաթիյո է, իսկ ինքն այսուհետև ներկա է թխարանում՝ հանձին Շանմաթիյոյի, ներկա է հասարակության մեջ հանձին պարոն Մադլենի և վախենալու ոչ մի բան չունի՝ եթե միայն չխանգարի, որ մարդիկ դրոշմեն Շանմաթիյոյի գլխին այդ անարգանքի քարը, որը դամբանաքարի նման ընկնում է մի անգամ և այլևս չի բարձրանում։

Այս ամենն այնքան բուռն ու տարօրինակ էր, որ հանկարծ նրա մեջ կատարվեց այն աննկարագրելի շարժումը, որպիսին ոչ մի մարդ երկու-երեք անգամից ավելի չի զգա իր կյանքում. մի տեսակ խղճի գալարում, որ ցնցում է սրտում եղած ողջ կասկածելին, որ բաղկացած է հեզանքից, հրճվանքից ու հուսահատությունից և, որ կարելի էր անվանել՝ ներքին ծիծաղի պոռթկում։

Նա թափով վառեց մոմը։

— Հետո՞ ինչ,— ասաց նա մտովի,— ի՞նչ բանից եմ վախենում, ինչո՞ւ եմ այսպես մտատանջվում։ Ես փրկվել եմ ահա. ամեն ինչ վերջացած է։ Միայն մի կիսաբաց դուռ կար, որտեղից իմ անցյալը կարող էր ժայթքել կյանքիս մեջ, այդ դուռն ահա կալված է և ընդմիշտ։ Այս Ժավերը, որ ինձ անհանգստացնում է այսքան ժամանակ, այդ վտանգավոր բնագոյի տեր մարդը, որ կարծես գուշակել էր, թե ով եմ ես, գրողը տանի և, որ ինձ ամենուրեք հետևում էր, այս սոսկալի որսի շունը, որ միշտ կանգ էր առնում ինձ վրա՝ նա էլ ճամփից շեղվել է, այլ տեղ է զբաղված և բացարձակապես մոլորվել է։ Նա այլևս բավարարված է, ինձ հանգիստ կթողնի, քանի որ բռնել է իր Ժան Վալժանին։ Ո՞վ գիտե, գուցե և հնարավոր է, որ հեռանա քաղաքից։ Եվ այս ամենը կատարվել է առանց ինձ։ Եվ

ես անմասն եմ դրան: Այս այսպես, բայց ի՞նչ դժբախտ բան կա սրա մեջ: Ինձ տեսնող մարդիկ պիտի կարծեն, որ փորձանք է պատահել ինձ: Վերջիվերջո, եթե մի մարդու դժբախտություն է պատահել, ապա դա բնավ էլ իմ հանցանքը չէ: Նախախնամությունն է ամեն ինչ արել. ըստ երևույթին այդպես է նա կամենում: Արդյոք ես իրավունք ունե՞մ խանգարել այն, ինչ նա է կարգադրում: Ի՞նչ եմ ես պահանջում այժմ: Ի՞նչ բանի եմ ուզում միջամտել, դա ինձ չի վերաբերում: Ինչպես, ես գոհ չե՞մ: Ուրեմն ի՞նչ է ինձ անհրաժեշտ: Այն նպատակը, որին ձգտում եմ այսքան տարի, իմ գիշերների երազը, աղոթքներիս առարկան՝ ապահովությունը, ձեռք եմ բերում: Աստված է այդպես կամենում: Ես անելիք չունեմ աստծո կամքի դեմ: Իսկ ինչո՞ւ է աստված այդպես ուզում, որպեսզի շարունակեմ սկսածս, որպեսզի բարեգործություն անեմ, որպեսզի մի օր դառնամ մի մեծ ու խրախուսիչ օրինակ, որպեսզի ասվի, թե վերջապես մի քիչ երջանկություն առաջացրեց այն ապաշխարանքը, որին ենթարկվեցի, այն առաքինությունը, որին վերադարձա: Իսկապես չեմ հասկանում, թե ինչու այն ժամանակ վախեցա մտնել մեր բարի քահանայի մոտ և ամեն բան պատմել նրան՝ ինչպես խոստովանաժող և խորհուրդ հարցնել նրանից. ամենայն հավանականությամբ նա էլ նույնը կասեր ինձ: Որոշված է, թողնենք, որ դեպքերն ինքնին ընթանան, թողնենք, որ աստված տնօրինի:

Այսպես նա խոսում էր ինքն իր հետ, իր խղճի խորքերում, կոացած այն բանի վրա, որ կարելի է կոչել սեփական անդունդ: Նա վեր կացավ աթոռից ու սկսեց քայլել սենյակում:

— Հերիք է,— ասաց նա,— էլ չմտածենք այս մասին: Որոշումն ընդունված է:— Բայց ոչ մի հրճվանք չզգաց:

Ընդհակառակը:

Անկարելի է արգելել մտածողությանը, որ վերադառնա նույն մտքին կամ արգելել ծովին, որ վերադառնա իր ափերին: Նավաստու համար դա կոչվում է մակընթացություն, իսկ հանցավորի համար՝ խղճի խայթ: Աստված հուզում է հոգին օվկիանի նման:

Մի քանի րոպե հետո նա գուր տեղը նորից սկսեց այն մոայլ խոսակցությունը, որի մեջ խոսողն էլ ինքն էր, ունկնդրողն էլ ինքն էր, ասելով այն, ինչ կգերադասեր չասել, լսելով այն, ինչ չպիտի ուզեր լսել և տեղի տալով այն խորհրդավոր զորության առջև, որ նրան ասում էր. մտածիր, ինչպես որ երկու հազար տարի առաջ մի այլ դատապարտվածի ասել էր՝ քայլիր:

Նախքան ավելի հեռու գնալը՝ կանգ առնենք մի անհրաժեշտ դիտողության վրա, որպեսզի մեզ ավելի լավ հասկանան:

Անվիճելի է, որ մարդն ինքն իր հետ խոսում է և չկա մի մտածող էակ, որ այդպիսի առիթ չունենա: Եվ նույնիսկ կարելի է ասել, որ խոսքը ոչ մի ժամանակ այնպիսի հոյակապ խորհրդավորություն չէ, քան երբ այն մարդու ներսում՝ մտածողությունից գնում է խղճին ու խղճից վերադառնում մտածողության: Միայն այս իմաստով պետք է հասկանալ այս գլխում հաճախ գործածված «նա ասաց, նա գոչեց» բառերը: Մարդը խոսում է ինքն իր հետ, ասում, բացականչում՝ առանց ներքին լռությունը խզելու: Խոշոր իրարանցում կա և ամեն բան խոսում է մեր մեջ՝ բացի բերանից: Հոգու իրականությունները թեև տեսանելի ու շոշափելի են, բայց չնայած դրան մնում են իրականություն:

Ուստի նա հարցրեց իրեն՝ ո՞ր եմ հասել: Հարցաքննեց իրեն «այլևս որոշված է» կետի մասին: Ապա խոստովանեց, թե այն բոլորը, որ նա կարգավորեց իր մտքում, դժոխային միտք է. «թույլ տալ, որ դեպքերն ինքնին ընթանան, թողնել, որ աստված տնօրինի»,— սա պարզապես զարհուրելի բան է: Թողնել, որ կատարվի ճակատագրի ու մարդկանց թյուրիմացությունը, չարգելել այն, լուր մնալով համաձայնություն տալ դրան և վերջապես ոչինչ չանել՝ նշանակում է ամեն բան անել, դա

նշանակում է կեղծավոր անարժանության վերջին աստիճանը, դա համարժեք է մի ստոր, ցածրահոգի, ծածկամիտ, անարգ ու գարշելի ոճրագործության:

Ութ տարվա ընթացքում առաջին անգամ լինելով դժբախտ, մարդն զգաց վատ մտածմունքի ու վատ արարքի դառն համը:

Եվ զզվանքով թքեց այդ դառնությունը:

Ապա շարունակեց հարցաքննել իրեն ու խիստ շեշտով հարցրեց, թե ինչ է հասկանում ինքը, երբ ասում է. «Նպատակիս հասել եմ»: Եվ հայտարարեց, որ իր կյանքն իսկապես մի նպատակ ունեւ: Բայց ի՞նչ նպատակ, թաքցնել անո՞ւնը, խաբել ուստիկանությա՞նը: Մի՞ թե այսպիսի փոքր բանի համար էր արել այն ամենը, ինչ որ արել էր արդեն: Մի՞ թե այլ նպատակ չուներ, մի մեծ ու ճիշտ նպատակ: Փրկել ոչ թե իր անձը, այլ հոգին: Դառնալ ազնիվ ու բարի մարդ: Լինել արդար, արդյոք հատկապես սա չէ՞ր, միայն սա չէ՞ր, որ ինքը միշտ ցանկացել էր, որ եպիսկոպոսը պատվիրել էր իրեն: Դուռը փակել իր անցյալի վրա, բայց չէ՞ որ նա չէր փակում, այլ նորից բաց էր անում՝ մի անարգ գործ կատարելով, չէ՞ որ նորից դառնում է գող, այն էլ ամենագազրելի գողը, քանի որ գողանում է մի ուրիշի կյանքը, գոյությունը, հանգիստը, տեղը արևի տակ. չէ՞ որ դառնում է մարդասպան, սպանում է, մահացու կերպով սպանում է մի թշվառ մարդու, դատապարտում է նրան այն սոսկալի անմեռ մահվան, բաց երկնքի տակ մահանալուն, որ կոչվում է թիարան: Եվ ընդհակառակը, փրկել այնպիսի մահագույժ թյուրիմացության գոհ դարձած այդ մարդուն, նորից դառնալ իրավամբ տաժանապարտ Ժան Վալժանը՝ սա իրոք նշանակում է ավարտել հարությունը և ընդմիշտ փակել դուռը այն դժոխքի, որից դուրս է եկել: Ձևականորեն այնտեղ ընկնել, նշանակում է իրապես դուրս գալ այնտեղից: Պետք է այս բանն անել, չանել այդ՝ կնշանակի, թե ոչինչ չես արել, ողջ կյանքդ անօգուտ է, ամբողջ ապաշխարանքդ կորած է: Եվ նրան մնում էր ասել միայն՝ ինչի՞ համար:

Նա զգաց, որ եպիսկոպոսն այդտեղ է և ինչքան որ մեռել է՝ նույնքան ավելի ներկա է և շեշտակի նայում է իրեն, որ սրանից հետո քաղաքապետ Մադլենն իր բոլոր առաքիություններով հանդերձ խայտառակ մարդ է, իսկ թիապարտ Ժան Վալժանը սքանչելի ու մաքուր կերևա նրան: Ձգաց, որ մարդիկ տեսնում են իր դիմակը, իսկ եպիսկոպոսը՝ դեմքը, մարդիկ տեսնում են իր կյանքը, իսկ եպիսկոպոսը՝ խիղճը: Ուրեմն անհրաժեշտ է Արրաս գնալ, ազատել կեղծ Ժան Վալժանին և մատնել իսկականին: Ավա՛դ, հենց դա է մեծագույն գոհողությունը, ամենակսկծալի հաղթանակը և վերջին՝ ծանր քայլը. բայց դա անհրաժեշտ է: Վշտալի ճակատագիր, նա կարող էր աստծո աչքին սրբանալ միայն այն ժամանակ, երբ մարդկանց աչքում խայտառակվեր:

— Դե լավ,— ասաց նա,— այս որոշումն ընդունենք, կատարենք մեր պարտքը, փրկենք այդ մարդուն:

Այս խոսքերը նա բարձրաձայն արտասանեց, առանց այդ նկատելու:

Ապա վերցրեց մատյանները, ստուգեց ու կարգի բերեց: Մանր ու նեղվող առևտրականներից ունեցած առնելիքների մուրհակների ծրարը գցեց կրակի մեջ: Մի նամակ գրեց, կնքեց. եթե այդ ըուպեին որևէ մարդիկներ այդտեղ՝ նրա ծրարի վրա կարող էր կարդալ հետևյալը. Պ. Լաֆիտին, բանկիր, Արտուա փողոց, Փարիզ:

Այնուհետև դարակից հանեց մի թղթապանակ, որ պարունակում էր մի քանի բանկոտ և այն անձնագիրը, որ գործածել էր այդ տարի ընտրություններին գնալիս:

Եթե որևէ մեկը տեսներ նրան այս տարբեր գործերը կատարելիս, որոնց խառն էր այնքան ծանր մտածողությունը՝ չէր կարող իմանալ, թե ինչ էր կատարվում նրա մեջ: Միայն վայրկյան առ վայրկյան շարժվում էին նրա շրթունքները. մերթ-մերթ էլ նա մի բոլորով բարձրացնում էր գլուխը ու հայացքը սևեռում պատի որևէ կետին, կարծես ճիշտ այդտեղ մի բան լիներ, որ նա ուզում էր պարզել ու հարցաքննել:

Պարոն Լաֆիտի նամակն ավարտելուց հետո դրեց գրպանը, ինչպես նաև թղթապանակը և վերսկսեց քայլել:

Նրա երազանքն ամեննին չէր խոտորել: Նա շարունակում էր հստակորեն տեսնել լուսե տառերով գրված իր պարտքը, որ բոցավառվում էր նրա աչքերի առջև և տեղափոխվում էր նրա հայացքի հետ՝ գնա, ասա անունդ, մատնիր քեզ:

Նա տեսնում էր նաև, այն էլ կարծես իր առջև կանգնած, շոշափելի ձևերով, այն երկու գաղափարը, որ մինչ այդ եղել էին նրա կյանքի կրկնակի կանոնը. թաքցնել իր անունը և սրբագործել հոգին: Առաջին անգամ լինելով՝ դրանք երևում էին նրան բոլորովին որոշակի և նա տեսնում էր դրանց անջատող տարբերությունը: Նա խոստովանում էր, որ այդ գաղափարներից մեկն անհրաժեշտորեն լավ էր, իսկ մյուսը կարող էր դառնալ վատ, որ մեկը անձնագոհություն էր, մյուսը անձնականություն. մեկն ասում էր՝ մերձավորը, մյուսն ասում էր՝ ես. մեկը գալիս էր լույսից, մյուսը խավարից:

Այդ գաղափարները մարտնչում էին, և նա տեսնում էր նրանց մարտնչելը: Ինչքան ավելի էր մտածում, այնքան ավելի այդ գաղափարները մեծանում էին նրա մտքի աչքի առջև ու այժմ վիթխարի հասակ ունեին և նրան թվում էր, որ նույնիսկ իր ներսում, այն անհունի մեջ, որի մասին մենք քիչ առաջ խոսում էինք, խավարի ու ճաճանչների շրջապատում պայքարում էին մի աստվածուհի ու մի տիտանուհի:

Նա լի էր սոսկումով, բայց նրան թվում էր, որ բարի մտքերը տանում են իրեն:

Նա լի էր սոսկումով, բայց նրան թվում էր, որ իր խղճի և ճակատագրի համար վճռական պահին եպիսկոպոսը նշել էր իր նոր կյանքի առաջին փուլը, իսկ Շանմաթիյոն նշելու էր երկրորդը: Մեծ ճգնաժամից հետո՝ մեծ փորձություն:

Բայց մի պահ մեղմացած տենդը նորից սկսեց համակել նրան:

Հագարավոր մտքեր ալեկոծում էին նրան, բայց շարունակում էին ամրացնել նրա որոշումը:

Մի բուպե էլ նա ասաց, թե գուցե շատ ջերմորեն է ընդունում, թե վերջիվերջո այդ Շանմաթիյոն կարեկցության արժանի չէ և վերջին հաշվով գողություն է արել:

Ապա ինքն իրեն պատասխանեց. «Եթե այդ մարդն իսկապես մի քանի խնձոր է գողացել, մեկ ամիս բանտարկություն կստանա: Դա շատ հեռու է թիարանից: Եվ ով գիտի, գողացե՞լ է արդյոք, ապացուցվե՞լ է դա: Ժան Վալժանի անունն ընկճում է նրան և այլևս ապացույցների կարիք չկա: Արքայական դատախազները սովորաբար այդպես չե՞ն վարվում: Հավատացած են, որ գող է, որովհետև ընդունում են տաժանապարտի տեղ:

Քիչ հետո մեկ էլ այսպիսի միտք ունեցավ, որ երբ ինքն իրեն մատնի, գուցե նկատի առնեն իր հերոսական քայլը, յոթնամյա պարկեշտ կյանքը, երկրին մատուցված ծառայությունները և ներեն:

Բայց այս ենթադրությունը շուտով ցնդեց և նա դառնությամբ ժպտաց, մտածելով, որ փոքրիկ Ժերվեից գողացած երկու ֆրանկը նրան դարձնում էր կրկնագոյ, որ այս գործն անկասկած երևան կգար և օրենքի տառով նրան կդարձներ դատապարտելի ցմահ տաժանակիի աշխատանքի:

Նա հրաժարվեց ամեն տեսակ պատրանքից, ավելի ու ավելի կտրվեց երկրից և այլ տեղ մխիթարություն ու ուժ փնտրեց: Կրկնեց, որ պետք է պարտքը կատարել, որ թերևս ինքն այնքան դժբախտ չի լինի իր պարտքը կատարելուց հետո, քան եթե խուսափի դրանից, իսկ եթե թողներ, որ դեպքերն ինքնին ընթանան և մնար Մոնտրոյ-սյուռ-Մեռում՝ ապա իր համարումը, բարի անունը, բարի գործերը, ակնածությունը, հարգանքը, գթասիրությունը, հարստությունը, ժողովրդականությունը և առաքինությունը համեմված կլինեին ոճրագործության գիտակցությամբ և ինչպիսի համ կունենային այդ գարշելի բանի հետ կապված մյուս սուրբ բաները: Մինչդեռ, եթե ինքնագոհությունը կատարեր՝ թիարանում, ուղղորդ գերանի մոտ, անուրը վզին, կանաչ գդակը գլխին, անխոնջ աշխատանքում, անկարեկից ամոթի ներքո՝ ապա կխառնվեին երկնային գաղափարներով:

Վերջապես նա ասաց ինքն իրեն, որ դա անհրաժեշտ է, որ իր ճակատագիրն այդպես է, որ ինքն ի վիճակի չէ ի վերուստ արված կարգադրությունները փոփոխելու և համենայն դեպս, պետք էր ընտրել կամ արտաքուստ առաքինություն և ներքուստ խայտառակություն, կամ ներքուստ սրբություն և արտաքուստ անարգանք:

Այսքան դժնդակ գաղափարներ արծարծելով հանդերձ նրա արիությունը չէր նվազում, բայց ուղեղը հոգնում էր: Նա սկսում էր անկախիր ցանկությունից այլ բաների մասին, անտարբեր բաների մասին մտածել:

Նրա քունքերի երակներն ուժգին խփում էին, իսկ նա շարունակում էր երթնել սենյակում: Ժամը տասներկուսը խփեց նախ եկեղեցու, ապա՝ քաղաքապետարանի ժամացույցը: Նա հաշվեց երկու ժամացույցների տասներկու հարվածները և համեմատեց դրանց զանգերի հնչյունը: Այս առթիվ նա հիշեց, որ մի քանի օր առաջ երկաթեղենի մի վաճառականի մոտ տեսել էր մի հին, ծախու զանգակ, որի վրա գրված էր այս անունը՝ Անտուան Ալբեն, Ռոմենվիլցի:

Նա մրսում էր, ուստի մի քիչ կրակ վառեց, բայց չմտածեց լուսամուտը փակելու մասին:

Սակայն նորից ընկավ թմրության մեջ: Հիմա նա մեծ ճիգ պետք է գործադրեր հիշելու համար, թե ինչի մասին էր մտածում նախքան ժամը տասներկուսը հնչելը: Վերջապես վերհիշեց:

— Օ՛, իսկապես,— ասաց ինքն իրեն,— որոշել էի մատնել ինձ:

Եվ ապա հանկարծ մտածեց Ֆանտինի մասին:

— Ճիշտ որ,— ասաց նա,— հապա այդ խեղճ կի՞նը:

Այստեղ էլ մի նոր ճգնաժամ երևան եկավ:

Ֆանտինը հանկարծակի երևալով նրա երագանքների մեջ՝ անակնկալ լույսի շողի տպավորություն գործեց: Նրան թվաց, որ ամեն բան փոխվում է իր շուրջը և գոչեց.

— Բայց ի՞նչ եմ անում, մինչև հիմա միայն ինձ եմ նկատի ունեցել, միայն իմ հարմարությունն եմ հաշվի առել: Ինձ ձեռնտու է լռել կամ մատնվել, պահել անձնավորությունս կամ փրկել հոգիս, լինել մի արհամարհելի ու հարգված բարձրաստիճան պաշտոնյա, կամ մի անարգ ու պատկառելի թիապարտ, դա ես եմ, այսպես թե այնպես ես եմ, սոսկ ես եմ: Բայց, աստված իմ, չէ՞ որ այս ամենը

եսասիրություն է: Դրանք եսասիրության տարբեր ձևերն են, բայց դա եսասիրություն է: Իսկ, եթե մի քիչ էլ ուրիշների մասին մտածեի՞: Առաջին սրբությունն ուրիշների մասին մտածելն է: Եկ քննենք: Եթե ես չլինեմ, ջնջվեմ, մոռացվեմ, ի՞նչ կառաջանա դրանից: Իսկ եթե ես մատնվե՞մ, ինձ կբռնեն, այդ Շանմանթիյոյին բաց կթողնեն, ապա ինձ կուղարկեն թիարան, լավ, իսկ հետո՞: Ի՞նչ տեղի կունենա այստեղ: Ախ, չէ՞ որ սա մի երկիր է, մի քաղաք է, ուր գործարաններ կան, արդյունաբերության մի ճյուղ կա, բանվորներ, կանայք, ծեր պապեր, երեխաներ ու աղքատ մարդիկ կան: Ես եմ ստեղծել այդ բոլորը, ես եմ ապրեցնում այդ բոլորին. ամենուրեք մի ծխացող երդիկ կա, ես եմ կրակ տվել նրանց օջախներին և միս դրել կաթսաների մեջ. ես եմ ստեղծել բարեկեցությունը, շրջանառությունը, վարկը. ինձնից առաջ ոչինչ չկար. ես բարձրացրի, կենդանացրի, արգասավորեցի, խթանեցի ու հարստացրի ողջ շրջանը. ես չլինեմ, չի լինի և հոգին: Երբ ես հեռանամ՝ ամեն ինչ կմեռնի: Եվ այսկի՞նք, որ այնքան տառապել է, որ այնքան արժանավոր է իր անկման մեջ, մի դժբախտություն է, որ ես եմ պատճառել՝ առանց այն ցանկանալու: Եվ այդ երեխան, որ ուզում էի գնալ որոնել, որ խոստացել էի նրա մորը: Մի՞թե որևէ բան էլ պարտական չեմ այդ կնոջը՝ ի հատուցում նրան հասցրած իմ վատության: Եթե ես անհետանամ, ի՞նչ կպատահի: Մայրը կմեռնի, երեխան էլ կդառնա ինչ կարողանա: Ահա թե ինչ կլինի, եթե մատնեմ ինձ: Իսկ եթե չմատնեմ ինձ, նայենք թե ինչ կլինի այդ դեպքում:

Այս հարցումն անելուց հետո նա կանգ առավ. մի բուրբ կարծես ընկրկեց ու դողաց. բայց այս բուրբն քիչ տևեց և նա հանդարտ պատասխանեց ինքն իրեն.

— Նախ, այդ մարդը թիարան կգնա, ճիշտ է, բայց գրողը տանի, նա գողություն է արել: Զուր եմ ասում, թե չի գողացել, գողացել է: Իսկ ես կմնամ այստեղ ու կշարունակեմ գործս: Տասը տարվա մեջ տասը միլիոն կունենամ և այդ գումարը կսփռեմ երկրի մեջ. ինքս սեփական ոչինչ չեմ ունենա, ի՞նչ պիտի անեմ այն: Ինձ համար չէ, որ անում եմ: Ամենքի բարեկեցությունն էլ գնալով կաճի, արդյունաբերության տարբեր ճյուղեր կծնվեն ու կգարգանան, մանուֆակտուրաներն ու գործարանները կբազմապատկվեն, ընտանիքները, հարյուր, հազար ընտանիքներ երջանիկ կլինեն, շրջանի ժողովուրդը կավելանա. այնտեղ, ուր մի ազարակ կար՝ գյուղեր կգոյանան, ուր ոչինչ չկար՝ ազարակ կծնվի. թշվառությունը կանհետանա և թշվառության հետ էլ կանհետանա անառակությունը, պոռնկությունը, գողությունը, սպանությունը, բոլոր մոլություններն ու ոճիրները: Եվ այս խեղճ մայրը կխնամի իր երեխային և ահա մի ամբողջ շրջան՝ հարուստ ու պարկեշտ: Մի տես է, ես խենթ էի, անհեթեթ բան էի ասում, գլուխս էի գցել, թե գնամ մատնեմ ինձ: Պետք է իսկապես ուշադիր լինել և ոչ մի բան շտապ չկատարել: Ի՞նչ, որովհետև ինձ դուր կգա մեծ ու վեհանձն երևա՞լ,— սա վերջիվերջո մեղողբամա է,— որովհետև ես իմ մասին, սոսկ իմ մասին էի մտածում, այն էլ ինչո՞ւ, որպեսզի ազատեմ գուցե մի քիչ չափազանցված, բայց ըստ էության իրավացի պատժից՝ ինչ գիտնամ ում, մի գողի, մի ակներև ստահակի, բայց որպեսզի մի ամբողջ շրջան քանդվի, մի խեղճ կին շունչը փչի հիվանդանոցում, մի խեղճ աղջիկ մահանա սալահատակների վրա՝ շների նման: Օ՛, սա խայտառակություն է: Նույնիսկ առանց այն բանի, որ մայրը տեսնի իր երեխային և առանց այն բանի, որ երեխան էլ ճանաչի իր մորը: Եվ այս բոլորը այդ ծեր անպիտան խնձորի գողի համար, որն անկասկած թիարանի կարծանանար մի ուրիշ բանի համար՝ եթե այս դեպքն իսկ չլիներ: Հրաշալի խղճմտություն, որ փրկում է մի հանցավորի ու զոհաբերում անմեղների, որ փրկում է մի ծեր թափառաշրջիկի, որին վերջին հաշվով մի քանի տարի է մնացել ապրելու և թիարանում ավելի դժբախտ չի լինի, քան իր խարխուլտնակում է և, որ զոհաբերում է մի ամբողջ բնակչություն՝ մայրեր, կանայք, երեխաներ: Այդ խեղճ փոքրիկ Կոզետը, որ ինձնից զատ ոչ ոք չունի աշխարհում և, որ այս բուրբին անկասկած ցրտից բոլորովին կապտել է այդ Թենարդիների կեղտոտ խցիկում: Դրանք էլ լիբր մարդիկ են, հա՛: Եվ ես չպիտի կարողանամ կատարել այս բոլոր խեղճ էակների հանդեպ ունեցած պարտականություններս: Եվ ես գնում էի ինձ

մատնելու: Եվ այդ անմիտ հիմնարկությունն էի անելու: Այժմ էլ հոռեգույնն ընդունենք: Ենթադրենք, որ այս բանում մի վատ արարք կա ինձ համար և այդ պատճառով իմ խղճմտանքը մի օր ինձ կհանդիմանի այդ առթիվ, բայց ուրիշի օգուտի համար ընդունել այդ հանդիմանությունները, որ միայն ինձ են վերաբերում, և այդ վատ արարքը, որ միայն իմ հոգին է արատավորում, ահա այստեղ է անձնագոհությունը, ահա այս է առաքինությունը:

Նա վեր կացավ ու նորից սկսեց քայլել: Այս անգամ թվում էր, որ գոհ է:

Աղամանդները գտնվում են միայն երկրի ընդերքներում. ճշմարտություններն էլ գտնվում են միայն մտքի խորքերում: Նրան թվում էր, որ այդ խորքերն իջնելուց հետո, երկար ժամանակ այդ բացարձակ խավարում խարխափելուց ու որոնելուց հետո վերջապես գտել էր այդ աղամանդներից մեկը, այդ ճշմարտություններից մեկը և այն պահում էր իր ձեռքում ու աչքերը խտրտում էին նրան նայելով:

— Այո, — մտածեց նա, — հենց սա է, ճիշտ ուղու վրա եմ և լուծումը գտել եմ: Պետք է վերջ դնել սրան ու մի որոշում անել: Վճիռս արել եմ, թողնենք, որ դեպքերն ինքնին ընթանան: Էլ չվարանենք, այլևս չնահանջենք: Եվ ոչ թե իմ, այլ բոլորի շահն է այդ պահանջում: Ես Մադլենն եմ, Մադլեն էլ կմնամ: Վայ նրան, ով Ժան Վալժան է, դա ես չեմ այլևս: Ես էլ չեմ ճանաչում այդ մարդուն, ես այլևս չգիտեմ, թե ինչ է դա և, եթե պատահի, որ այս ժամին որևէ մեկը Ժան Վալժան է՝ թող ինչ ուզում է անի, դա ինձ չի վերաբերում: Դա ճակատագրական անուն է և ծփում է խավարի մեջ. եթե նա կանգ առնի ու ընկնի որևէ գլխի վրա՝ ավելի վատ նրա համար:

Ապա նայեց բուխարու վրա դրված փոքրիկ հայելուն ու ասաց.

— Տես է, որոշում ընդունելս թեթևացրեց ինձ: Այժմ բոլորովին այլ մարդ եմ:

Եվ մի քիչ էլ քայլեց, ապա հանկարծ կանգ առավ.

— Դե, — ասաց նա, — չպետք է երկմտել ընդունված որոշման որևէ հետևանքի պատճառով: Դեռ թելեր կան, որ ինձ կապում են այդ Ժան Վալժանին: Պետք է կտրել դրանք: Նույնիսկ այս սենյակում էլ կան այնպիսի առարկաներ, որ կարող են ինձ մեղադրել, համար իրեր, որ կարող են վկա լինել, որոշված է, այդ բոլորը պետք է անհետանան:

Ապա նա փորփրեց գրպանը, մի քսակ հանեց այնտեղից, բաց արեց և մի փոքր բանալի վերցրեց միջից:

Եվ այդ բանալին մտցրեց փականքի մեջ, որի ծակը հազիվ էր երևում պատի պաստառի վրա եղած նկարի ամենաանորոշ նրբությունների վրա: Բացվեց մի թաքստոց. դա մի կեղծ պահարան էր՝ շինված պատի անկյան և բուխարու ծածկույթի միջև: Այդ թաքստոցում միայն մի քանի ցնցոտի կար, կապույտ գործվածքե մի երկար վերարկու, մի հին շալվար, մեջքի մի հին պայուսակ, փշափայտից շինված ու զույգ ծայրերը երկաթապատ մի խոշոր ձեռնափայտ: Նրանք, ովքեր Ժան Վալժանին տեսել էին Դիյնից անցնելու ժամանակ, 1815 թվականին, հեշտությամբ կճանաչեին այդ ողորմելի հանդերձանքի բոլոր կտորները:

Նա պահել էր դրանք, ինչպես նաև պահել էր արծաթե աշտանակները՝ շարունակ հիշելու համար իր մեկնակետը: Միայն թե նա թաքցնում էր այն իրերը, որ գալիս էին թիարանից և ցուցադրում էր աշտանակները, որ գալիս էին եպիսկոպոսից:

Մի գողունի հայացք նետեց դեպի դուռը, կարծես վախենալով, որ չբացվի, թեև մղլակով փակված էր: Ապա մի արագ ու հախտուն շարժումով և մի բուռ անելով վերցրեց ամեն բան՝ ցնցոտիները, ձեռնափայտը, պայուսակը ու նետեց կրակի մեջ՝ առանց նույնիսկ մի վերջին հայացք գցելու այդ իրերի վրա, որ այնքան երկյուղածորեն ու վտանգավոր կերպով պահել էր այդքան տարի:

Ապա փակեց կեղծ պահարանը և կրկնակի նախազգուշության համար, մի բան, որն այլևս անօգուտ էր, քանի որ պահարանը դատարկ էր, նրա դուռը թաքցրեց՝ մի խոշոր կահույք մղելով նրա առջև:

Մի քանի ակնթարթ հետո դիմացի սենյակն ու պատը լուսավորվեցին կարմիր ու դողդոջուն ցուլացմամբ: Ամեն ինչ վառվում էր: Փշենի ձեռնափայտը ճարճատուր էր ու մինչև սենյակի կեսը կայծեր արձակում:

Պայուսակը վառվելով իր մեջ եղած մյուս զգվելի քուրջերի հետ՝ երևան էր հանել մի բան, որ փայլում էր մոխրի մեջ: Կռանալիս՝ հեշտությամբ կարելի էր նկատել, որ դա արծաթե փող է: Անկասկած դա փոքր սավոյացուց գողացած երկու ֆրանկանոցն էր:

Իսկ ինքը չէր նայում կրակին ու քայլում էր, երթնեկելով միշտ միևնույն արագությամբ:

Հանկարծ նրա աչքերն ընկան բուխարու վրա գտնվող երկու արծաթե աշտանակների վրա, որ կրակի ցուլից տարտամորեն փայլում էին.

— Վա՛յ, — մտածեց նա, — ամբողջ Ժան Վալժանը դեռ այստեղ է: Պետք է սրանք էլ փչացնել:

Եվ վերցրեց աշտանակները:

Դեռ այնքան կրակ կար, որ կարելի էր դրանք արագ ձևափոխել և դարձնել մի տեսակ անճանաչելի ձուլածո:

Նա կռացավ օջախի վրա, մի բուպե տաքացավ և իսկական հաճույք զգաց:— Ինչ լավ տաք է, — ասաց նա:

Ապա աշտանակներից մեկով խառնեց կրակը:

Մի բուպե ևս և նրանք կրակի մեջ կլինեին:

Այդ վայրկյանին նրան թվաց, որ իր ներսից եկող մի ձայն գոչում է.

— Ժան Վալժան, Ժան Վալժան:

Նրա մազերը տնկվեցին և նա նմանվեց մի զարհուրելի բան լսող մարդու:

— Այո, հենց դա է, վերջացրու, — ասում էր ձայնը: — Ամբողջացրու արածդ, փչացրու այդ աշտանակները, ոչնչացրու այդ հիշատակը, մոռացիր եպիսկոպոսին, մոռացիր ամեն ինչ, կորցրու այդ Շանմաթիյոյին, դե, այդպես արա: Ծափահարի՛ր քեզ, գործը գլուխ եկավ, որոշվեց, այդ է վերջնական խոսքը: Ահա մի մարդ, ահա մի ծերունի, որ չի իմանում, թե ինչ են ուզում իրենից, որ գուցե ոչինչ չի արել, մի անմեղ, որի դժբախտությունն առաջանում է քո անունից, որի վրա քո անունը ճնշում է ոճրի նման, որ պիտի բռնվի քո փոխարեն, պիտի դատապարտվի և վերջացնի իր օրերը անարգանքի ու սարսափի մեջ, այդ լավ է: Եղի՛ր պարկեշտ մարդ, կաց որպես պարոն քաղաքապետ, մնա հարգելի ու հարգված, հարստացրու քաղաքը, կերակրիր կարոտյալներին, խնամիր որբերին, ապրիր երջանիկ, առաքինի ու հիացմունքով շրջապատված, և այդ ժամանակամիջոցում, երբ դու ուրախության ու լույսի մեջ կլինես այստեղ, կլինի մեկը, որ կկրի քո

կալանավորական կարմիր հագուստը, անարգանքի մեջ կկրի քո անունը և թիարանում քարշ կտա շղթադ: Այո, այսպես լավ է կարգավորված: Օ՛, թշվառական:

Քրտինքը հոսում էր նրա ճակատից: Նա մի դաժան հայացք սևեռեց աշտանակների վրա: Սակայն նրա մեջ խոսողը դեռ չէր ավարտել: Եվ ձայնը շարունակեց.

— Ժան Վալժան, քո շուրջը շատ ձայներ կհնչեն և մեծ աղմուկ կգոյացնեն, կխոսեն բարձրաձայն ու կօրհնեն քեզ, կհնչի նաև մի առանձին ձայն, որ ոչ ոք չի լսի և, որ քեզ կանիծի խավարում: Դե այժմ լսիր, խայտառակ, այդ բոլոր օրհնությունները ցած կգլորվեն նախքան երկինք հասնելը և միմիայն անեծքը կհասնի աստծուն:

Այս ձայնը, որ սկզբում խիստ թույլ էր և բարձրացել էր նրա խղճի ամենամութ տեղից՝ աստիճանաբար դարձել էր վիթխարի ու շառաչուն և այժմ նա լսում էր իր ականջների մոտ: Նրան թվում էր, որ այդ ձայնը դուրս է եկել իր ներսից և այժմ խոսում էր իրենից դուրս: Նա կարծեց, որ վերջին խոսքերն այնպես հստակորեն է լսում, որ մի տեսակ սարսափով զննեց սենյակը:

— Ո՛վ կա այստեղ,— հարցրեց նա բարձրաձայն ու բոլորովին շփոթված:

Ապա շարունակեց ծիծաղով, որը նման էր ապուշի ծիծաղի.

— Ինչ հիմարն եմ, ոչ ոք չի կարող լինել այստեղ:

Մեկը կար այդտեղ, բայց այդտեղ եղողը նրանցից չէր, որ մարդկային աչքը կարող է տեսնել:

Նա աշտանակները դրեց բուխարու վրա:

Եվ վերսկսեց այն միօրինակ ու չարաշուք երթևեկը, որ ընդհատում էր երբեմն նրա մտածմունքը և ընդոստ վեր ցատկեցնում իր ներքևում քնած մարդուն:

Այս երթևեկը մխիթարում էր նրան և միևնույն ժամանակ գինովցնում: Երբեմն թվում է, որ գերագույն դեպքերում մարդիկ շարժվում են խորհուրդ հարցնելու համար այն ամենից, որ կարող է պատահել այդ տեղափոխության ժամանակ: Մի քանի բուպե հետո նա այլևս կորցրել էր իր մտածմունքների թելը:

Այժմ նա նույնպիսի սարսափով նահանջում էր այն երկու որոշումներից, որ ընդունել էր իրար ետևից: Նրան խորհուրդ տվող երկու մտքերն էլ թվում էին հավասարապես չարագուշակ:— Ինչ ճակատագրականություն, ինչպես պատահեց, որ այդ Շանմաթիյոն ընդունվեց իր տեղ: Տապալվել ճիշտ այն միջոցով, որը նախախնամությունն սկզբում կարծես գործածել էր իրեն ամրացնելու համար:

Եղավ և մի բուպե, երբ նա դիտեց իր ապագան: Մատնել իրեն, աստված իմ, հանձնվել: Անհուն հուսահատությամբ պատկերացրեց այն ամենը, որ պետք էր թողնել և այն ամենը, որ պետք էր նորից ձեռք բերել: Ուրեմն պետք էր մնաս բարով ասել այս բարեկեցիկ, շողշողուն ու մաքուր կեցությանը, բոլորի հարգանքին, պատվին ու ազատությանը: Այլևս չէր գնա դաշտերն զբոսնելու, էլ չէր լսի թռչունների դայլայլիկը մայիս ամսին, էլ ողորմություն չէր տալու փոքր երեխաներին: Այլևս չէր զգալու իր վրա սևեռված երախտագետ ու սիրավիր հայացքների քաղցրությունը: Պիտի թողներ այս տունը, որ ինքն էր կառուցել և այս փոքրիկ սենյակը: Ամեն ինչ հրապուրիչ էր երևում նրան այդ ժամին: Այլևս չէր կարդալու այս գրքերը, էլ չէր գրելու այս սպիտակ փայտե սեղանի վրա: Նրա պառավ դռնապանուհին, միակ սպասուհին, որ ունեցել էր՝ առավոտներն այլևս սուրճը ձեռքին չէր բարձրանալու, ո՛վ աստված և դրա փոխարեն թիապարտների ընտանիքը, անուրը, կարմիր

բաճկոնը, ոտքի շոթան, հոգնությունը, գնդանը, խշտյակը, այս բոլոր ծանոթ սարսափները: Այն էլ այդ տարիքին, լինել այն, ինչ արդեն եղել էա: Գոնե երիտասարդ լինեք: Այդ ծեր տարիքին «դու»-ով կոչվել առաջին պատահածի կողմից, խուզարկվել թիապարտների վերակացուի կողմից և ստանալ պահակի գավազանի հարվածները, բոքիկ ոտքերով երկաթապատ կոշիկներ հագնել, ոտքերն ամենառավոտ ու երեկո ներկայացնել շրջան կատարողի մուրճին, ենթարկվել կողմնակի մարդկանց հետաքրքրասիրությանը, որոնք կասեն՝ սա հայտնի Ժան Վալժանն է, որ քաղաքապետ է եղել Մոնտրոյ-սյուռ-Մեռում: Երեկոյան, քրտնաշաղախ ու վաստակաբեկ, կանաչ գդակն աչքերին քաշած, սերժանտի մտրակի ներքո, երկ-երկու վեր բարձրանալ ծփացող թիարանի կախ սանդուղքը: Օ՛, ինչպիսի թշվառություն: Ուրեմն ճակատագիրը կարող է չար լինել՝ իմացական էակի պես և դառնալ դժոխային՝ մարդկային սրտի պես:

Եվ ինչ էլ որ անում էր, շարունակ ընկնում էր իր մտածմունքների կենտրոնում եղած այս կսկծալի երկընտրանքի վրա. մնալ դրախտում ու դառնալ դև, կամ գնալ դժոխք և այնտեղ դառնալ հրեշտակ:

Ի՞նչ անել, ով աստված, ի՞նչ անել:

Տանջանքը, որից նա այնքան դժվարությամբ էր դուրս եկել, նորից մոլեգնեց նրա մեջ ու մտքերն սկսեցին խառնվել: Ապա նրանք դարձան մի տեսակ շվարուն ու մեքենայական, մի բան, որ հատուկ է հուսահատության: Շարունակ նրա միտքն էր գալիս Ռոմենվիլ անունը՝ մի երգի երկու տողի հետ միասին, որ նա երբեմն լսել էր: Նա մտածում էր, որ Ռոմենվիլը Փարիզի մոտ գտնվող մի փոքրիկ անտառ է, ուր սիրահարված երիտասարդները ապրիլ ամսին եղրնանի քաղելու են գնում:

Նա երերում էր թե արտաքուստ, թե ներքուստ և քայլում էր միայն այն փոքր մանկիկի նման, որին թողնում են մենակ գնա:

Որոշ բույներին, մաքառելով իր հոգնության դեմ, նա ջանք էր գործադրում իմացությունը բռնելու: Նա ճգնում էր մի վերջին անգամ էլ և վերջնականորեն դնել այն խնդիրը, որից նա որոշ չափով ուժասպառ էր եղել: Պետք է մատնե՞լ իրեն, թե՞ լռել: Բայց չէր հաջողվում որևէ հստակ բան տեսնել: Բոլոր դատողությունների տարտամ ձևերը, որ ուրվագծել էր նրա երևակայությունը՝ դողդողում էին ու ծխի նման իրար ետևից ցրվում: Նա զգում էր միայն, որ ինչ որոշում էլ անի՝ անհրաժեշտաբար, առանց դրանից խուսափելու հնարավորության՝ իրենից որևէ բան մահանալու է, որ ինքը մտնում է կամ աջակողմյան, կամ ձախակողմյան մի դամբարան, որ ինքը հոգեվարք է ապրելու. իր երջանկության կամ իր առաքինության հոգեվարքը:

Ավաղ, այս բոլոր անվճռականությունները նորից համակեցին նրան: Եվ այժմ նա այն կետի վրա էր, ինչ սկզբում:

Այսպես ծեծկվում էր անձկության մեջ այս դժբախտ հոգին: Հազար ութ հարյուր տարի առաջ մի ուրիշ անբախտ մարդ, խորհրդավոր էակը, որի մեջ ամփոփվում են մարդկության բոլոր սրբություններն ու բոլոր տառապանքները, այն պահին, երբ ձիթենիներն օրորվում էին անհունի կատաղի քամուց, նա էլ նույնպես երկար ժամանակ ձեռքով դեն էր մղել այն զարհուրելի սկիհը, որ նրան երևում էր որպես անոթ, որից մուլ է հոսում ու խավար է եզերքից թափվում դեպի աստղազարդ խորխորատները:

IV

ԻՆՉՊԻՍԻ՞ ՁԵՎԵՐ Է ԸՆԴՈՒՆՈՒՄ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՔՆԱԾ ԺԱՄԱՆԱԿ

Առավոտյան ժամը երեքը խփեց. հինգ ժամ էր, որ նա քայլում էր այդպես գրեթե անընդհատ, երբ ընկավ մի այծռոփ վրա:

Այդտեղ նա էլ քնեց ու մի երազ տեսավ:

Այդ երազը, ինչպես երազների մեծ մասը, միայն ինչ-որ չարագուշակ ու կսկծալի բանով էր առնչվում կացությանը, բայց տպավորություն գործեց նրա վրա: Այդ մղձավանջն այնպես ուժեղ ազդեց նրա վրա, որ հետագայում նա գրի առավ: Դա նրա ձեռքով գրված թղթերից մեկն է և մենք կարծում ենք, որ պարտավոր ենք բառացի արտագրել այդ բանն այստեղ:

Ահա այն: Ծրարի վրա գտնում ենք հետևյալ տողը. Այս գիշեր տեսած երազս:

«Ես գտնվում էի մի դաշտում: Դա մի ընդարձակ դաշտ էր և խոտ չկար այնտեղ: Ինձ թվում է, որ ոչ ցերեկ էր, ոչ գիշեր:

Ես զբոսնում էի իմ եղբոր հետ, իմ մանկական տարիների եղբորս հետ, որի մասին, պետք է ասեմ, թե երբեք չեմ մտածում և, որին գրեթե բնավ չեմ հիշում:

Մենք զրուցում էինք ու պատահում անցորդների: Խոսում էինք մի հարևանուհու մասին, որը, երբ սկսեց փողոցի կողմը գտնվող սենյակում ապրել՝ աշխատում էր լուսամուտը բաց թողած: Խոսելով հանդերձ, մենք մրսում էինք այդ բաց լուսամուտի պատճառով:

Ծառ չկար այդ դաշտում:

Մի մարդ տեսանք, որ մեր կողքից անցավ: Բոլորովին մերկ էր այդ մարդը, մոխրի գույն ուներ և հեծել էր մի հողագույն ձի: Այդ մարդը մազեր չուներ, երևում էր նրա գանգը և այդ գանգի վրա՝ երակներ: Ձեռքին բռնել էր որթատունկի ճյուղի նման ճկուն և երկաթի նման ծանր մի ճիպոտ: Այդ ձիավորն անց կացավ և մեզ ոչինչ չասաց:

Եղբայրս ինձ ասաց. «Այս խոր ճանապարհով գնանք»:

Մի խոր ճանապարհ կար այդտեղ, ուր ոչ մի մացառ և մի կտոր մամուռ չկար: Ամեն ինչ հողագույն էր, նույնիսկ երկինքը: Մի քանի քայլ հետո իմ ասածներին այլևս պատասխան չէի ստանում: Այդ միջոցին նկատեցի, որ եղբայրս այլևս ինձ հետ չէ:

Մի գյուղ տեսա ու մտա այդտեղ: Ես մտածում էի, որ դա Ռոմենվիլը պետք է լինի (ինչո՞ւ Ռոմենվիլ)¹³¹:

Առաջին մտած փողոցն ամայի էր. մտա մի ուրիշ փողոց: Երկու փողոցների կազմած անկյան ետև, պատին հենված կանգնած մի մարդ կար: Այդ մարդուն հարցրի: «Այս ի՞նչ երկիր է, որտե՞ղ եմ ես»:— Մարդը չպատասխանեց: Տեսա, որ տներից մեկի դուռը բաց էր և ներս մտա:

Առաջին սենյակն ամայի էր. անցա երկրորդը: Այդ սենյակի դռան ետև, պատին հենված կանգնած էր մի մարդ: «Մա ո՞ւմ տունն է, որտե՞ղ եմ ես»:— Մարդը չպատասխանեց:

¹³¹ Այս փակագիծն արված է Ժան Վալթանի ձեռքով: Ծ. հ.:

Այդ տունն այգի ուներ: Տնից դուրս եկա ու մտա այգի: Այգին ամայի էր: Առաջին ծառի ետև մի մարդ տեսա կանգնած: Այդ մարդուն հարցրի: «Ո՞ւմն է այս այգին, որտե՞ղ եմ ես»:— Մարդը չպատասխանեց:

Թափառեցի այգում և մեկ էլ նկատեցի, որ քաղաք է դա: Բոլոր փողոցներն ամայի էին և բոլոր դռները բաց: Ոչ մի կենդանի էակ չէր անցնում փողոցներից, չէր քայլում սենյակներում և ոչ էլ զբոսնում էր այգիներում: Բայց յուրաքանչյուր պատի անկյունում, յուրաքանչյուր դռան և յուրաքանչյուր ծառի ետև մի մարդ կար կանգնած, որը լռում էր: Ամեն անգամ միայն մի մարդ էր երևում և այդ մարդիկ նայում էին, թե ինչպես եմ անցնում:

Դուրս եկա քաղաքից և սկսեցի քայլել դաշտերում:

Մի քանի ժամանակ անց շուտ եկա և տեսա, որ մի մեծ բազմություն է գալիս իմ ետևից: Ճանաչեցի դրանց. քաղաքում տեսածս մարդիկ էին և տարօրինակ գլուխ ունեին: Նրանք չէին շտապում, բայց և այնպես ինձնից ավելի արագ էին քայլում և քայլելիս ոչ մի ծպտուն չէին հանում: Մի բռնակում այդ բազմությունը հասավ ինձ ու շրջապատեց: Այդ մարդկանց դեմքը հողագույն էր:

Այդ ժամանակ առաջին մարդը, որին տեսել ու հարցաքննել էի քաղաք մտնելիս՝ ասաց. «Ո՞ւր եք գնում: Մի՞ թե չգիտեք, որ դուք վաղուց է, ինչ մեռել եք»:

Բերանս բաց արի պատասխանելու և տեսա, որ ոչ ոք չկա շուրջս»:

Նա արթնացավ բոլորովին սառել էր: Առավոտյան ցուրտ քամին պտտեցնում էր բաց մնացած լուսամուտներն իրենց առանցքի վրա: Կրակը հանգել էր: Մոմը վերջանալու մոտ էր և դեռ մութ գիշեր էր:

Նա վեր կացավ ու գնաց դեպի լուսամուտը: Երկնքում առաջվա նման աստղ չկար:

Նրա լուսամուտից երևում էր տան բակն ու փողոցը: Մի չոր ճռինչ լսվեց հանկարծ ներքևից և գրավեց նրա ուշադրությունը:

Ներքևում երկու կարմիր աստղ տեսավ, որոնց շողերը տարօրինակորեն երկարաձգվում ու կարճանում էին խավարում:

Եվ, որովհետև նրա միտքը դեռ կիսով չափ թաղված էր մտածմունքների մեջ. «Վայ,— մտածեց նա,— երկնքում աստղ չկա, այժմ երկրի վրա են դրանք»:

Բայց այդ շփոթությունը ցրվեց, առաջինի նման մի երկրորդադմուկ նրան բոլորովին սթափեցրեց, և նա ճանաչեց, որ այդ գույգ աստղերը կառքի լապտերներ են, որոնց արձակած լույսից նա կարողացավ որոշել այդ կառքի ձևը: Տիլբուրի էր դա, որին լծված էր մի փոքր սպիտակ ձի և նրա լսած աղմուկը ձիու ոտքերի դոփյունն էր սալահատակի վրա:

— «Այս ի՞նչ կառք է,— մտածեց նա:— Ո՞վ է այսքան վաղ գալիս»: Այդ բռնակին մի թեթև բախեցին նրա սենյակի դուռը: Նա ոտքից գլուխ ցնցվեց և սոսկալի ձայնով աղաղակեց:

— Ո՞վ է:

Մեկը պատասխանեց.

— Ես եմ, պարոն քաղաքապետ:

Նա ճանաչեց դոնապանուհու՝ պառավ կնոջ ձայնը:

— Ի՞նչ կա:

— Պարոն քաղաքապետ, հիմա առավոտյան ժամը հինգն է:

— Հետո՞, ինձ ինչ:

— Պարոն քաղաքապետ, կառքը եկել է:

— Ի՞նչ կառք:

— Տիլբուրի:

— Ի՞նչ տիլբուրի:

— Մի՞թե պարոն քաղաքապետը տիլբուրի չի պահանջել:

— Ոչ,— ասաց նա:

— Կառապանն ասում է, որ նա եկել է պարոն քաղաքապետի ետևից:

— Ի՞նչ կառապան:

— Պարոն Սկոֆլերի կառապանը:

— Պարոն Սկոֆլե՞ր:

Այս անունը ցնցեց նրան այնպես, ինչպես եթե կայծակը խփեր նրա երեսին:

— Ախ, հա՛,— շարունակեց նա,— պարոն Սկոֆլերը:

Եթե պառավ կինը տեսներ նրան այդ բոլորին՝ կգարհուրեր:

Բավական երկար լռություն տիրեց: Նա ապշած տեսքով զննում էր մոմի բոցը և պատրույգի վրայից պոկում էր հալած մոմը ու մատներով տրորում: Պառավն սպասում էր: Սակայն նա խիզախեց դարձյալ ձայն տալ.

— Պարոն քաղաքապետ, ի՞նչ պատասխան տամ նրան:

— Ասեք՝ լավ, հիմա կգամ:

V

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Փոստային սպասարկությունն այդ ժամանակները Արրասի և Մոնտրոյ-այուռ-Մեռի միջև կատարվում էր դեռ կայսրության ժամանակվա փոքր փոստակառքերով, որոնք երկանիվ կաբրիոլետներ էին, ներսից շեկ կաշվով պատած, հաստատված բարձր զսպակների վրա և միայն երկու տեղ ունեին՝ մեկը սուրհանդակի, մյուսը ճամփորդի համար: Անիվները զինված էին դուրս ընկած երկար միջանիվներով՝ ուրիշ կառքերը հեռու պահելու համար, մի բան, որ հիմա կարելի է տեսնել Գերմանիայի ճանապարհներին: Նամակների արկղը, մի խոշոր երկարաձև տուփ՝

գետեղված էր կառքի ետնամասում և նրան էլ ամրացրած էր: Այդ տուփը սև էր ներկված, իսկ կառքը՝ դեղին:

Այս կառքերը, որոնց նման ոչ մի բան չկա այժմ, ինչ-որ այլանդակ ու կուզ բան ունեին և երբ տեսնում էիր դրանք հեռվից անցնելիս ու հորիզոնում որևէ ճանապարհով սողալիս, նման էին այն միջատներին, որ կարծեմ տերմիտ են կոչվում և, որոնք իրենց փոքր մեջքով՝ մի խոշոր ետնամաս են քարշ տալիս: Սակայն այդ կառքերը շատ արագ էին ընթանում: Ամեն գիշեր, ժամը մեկին, Արրասից մեկնող նամակակառքը, Փարիզի սուրհանդակի անցնելուց հետո՝ Մոնտրոյ-սյուռ-Մեո էր հասնում առավոտյան ժամը հինգից քիչ առաջ:

Այդ գիշեր, Հեադենի ճանապարհով Մոնտրոյ-սյուռ-Մեո իջնող փոստակառքը քաղաք մտնելիս՝ մի փողոցի ոլորույտի վրա կապավ մի սպիտակ ձի լծած փոքրիկ տիլբուրիի, որ գալիս էր հակառակ ուղղությամբ և, որի մեջ միայն մի մարդ կար, վերարկուով փաթաթված մի անձնավորություն: Տիլբուրիի անիվը մի բավական ուժեղ հարված ստացավ: Սուրհանդակը ձայն տվեց այդ մարդուն, որ կանգ առնի, բայց ճամփորդը մտիկ չարեց և արշավասույր շարունակեց ճամփան:

– Ահա քեզ խիստ շտապող մարդ,— ասաց սուրհանդակը:

Այսպես շտապող մարդը նա էր, որին քիչ առաջ տեսանք կարեկցության արժանի գալարումների մեջ տապակվելիս:

Ո՞ր էր գնում նա: Ինքն էլ չգիտի կարողանար ասել: Ինչո՞ւ էր շտապում, ինքն էլ չգիտեր: Գնում էր դեպի պատահականություն: Ո՞ր, անկասկած Արրաս, բայց գուցե այլ տեղ էլ էր գնում: Երբեմն նա զգում էր այդ ու ցնցվում: Նա խորանում էր այդ գիշերվա մեջ, ինչպես անդունդի մեջ: Մի բան նրան մղում էր, ձգում: Ոչ ոք չի կարող ասել, թե ինչ էր կատարվում նրա մեջ. բայց բոլորն էլ կհասկանան դա: Կա՞րողոք մի մարդ, որ գոնե մի անգամ իր կյանքում չի մտել անձանոթի այդ խավար քարայրը:

Բայց և այնպես նա ոչ մի բան չէր որոշել, չէր վճռել, չէր արել:

Նրա խղճի արարքներից և ոչ մեկը վերջնական չէր: Այժմ նա ավելի քան երբևիցե գտնվում էր սկզբնական կետի վրա:

Ինչո՞ւ էր Արրաս գնում:

Սկոֆլերի կառքն ապսպրելիս ինչ որ մտածել էր, այժմ էլ նույնն էր կրկնում, այսինքն, ինչպիսին էլ որ լինի հետևանքը, ոչ մի անհարմարություն չկար սեփական աչքերով տեսնելու և երևույթներն անձամբ դատելու մեջ և, որ այս եղանակը նույնիսկ ավելի խոհեմ էր, քանի որ անհրաժեշտ էր իմանալ, թե ինչ է տեղի ունենալու. որ ոչ մի բան չի կարելի վճռել՝ առանց գննելու ու մանրամասն հետազոտելու, որ հեռվից ամեն ինչ վիթխարի է երևում, որ վերջին հաշվով, երբ ինքը տեսներ այդ թշվառական ոմն Շանմաթիոյին՝ ապա իր խիղճը հավանաբար խիստ կթեթևանար, եթե նա իր տեղը՝ թիարան գնար, որ իսկապես այդտեղ կլինեին Ժավերը և այդ Բրենն, Շնիլդիյոն ու Կոշպայը՝ նախկին թիապարտները, որոնց ինքը ծանոթ էր, բայց դրանք վստահ կերպով այժմ իրեն չէին կարող ճանաչել,— պա՛հ, ինչ միտք,— Ժավերն այժմ իրեն կասկածելուց հարյուր մղոն հեռու է. որ բոլոր վարկածներն ու ենթադրությունները սևեռված էին այդ Շանմաթիոյի վրա, իսկ ոչ մի բան այնքան համառ չէ, ինչքան վարկածներն ու ենթադրությունները. ուրեմն ոչ մի կասկած չկա:

Այս ամենն անկասկած մի սև բոպե է, որից սակայն ինքը դուրս է գալու և վերջիվերջո իր ձեռքում է բախտը՝ ինչքան էլ այդ բախտն ուզենա վատանալ:

Բայց, ըստ էության, նա կգերադասեր բնավ էլ Արրաս չգնալ:

Բայց գնում էր:

Մտածելով հանդերձ նա մտրակում էր ձին, որը սլանում էր ժամում երկուսուկես լիո կտրոդ կանոնավոր ու ապահով վազքով:

Ինչքան կառքն առաջանում էր, այնքան էլ նա զգում էր, որ իր ներսում մի ինչ-որ բան նահանջում է:

Լուսաբացին նա հարթ դաշտում էր. Մոնտրոյ-սյուռ-Մեռ քաղաքը բավական հեռու էր մնացել: Նա նկատեց, որ հորիզոնն սպիտակում է և առանց տեսնելու՝ նայեց իր աչքերի առջևից անցնող ձմեռային այգաբացի սառն պատկերներին: Առավոտն էլ, ինչպես երեկոն, իր ուրվականներն ունի: Նա չէր տեսնում դրանք, բայց իրենից անկախ և ինչ-որ գրեթե ֆիզիկական սրաթափանցությամբ՝ ծառերի ու բլուրների այդ սև ուրվագծերը նրա բորբոքուն հոգեկան դրությանը մի տեսակ մռայլ ու դժնդակ բան էին ավելացնում:

Ամեն անգամ, երբ նա անցնում էր ճանապարհի եզրին գտնվող մեկուսացած տների կողքով, ասում էր ինքն իրեն. «Բայց և այնպես դրանց մեջ քնած մարդիկ կան»:

Ձիու դոփյունը, լծասարքի զանգակիկները և անիվների դորդոցը միօրինակ ու քաղցր աղմուկ էին առաջացնում: Այս բաները սքանչելի են, երբ ուրախ ես և շատ սգալի՝ երբ տխուր ես:

Արևն արդեն ծագել էր, երբ նա Հեռդեն հասավ: Ապա կանգ առավ մի պանդոկի առաջ՝ ձիուն հանգիստ ու կեր տալու համար:

Այս ձին, ինչպես Սկոֆլերն էր ասել, բուլոնեի այն մանր ցեղից էր, որ խոշոր գլուխ, խոշոր փոր, բայց կարճ վիզ ունի, սակայն լանջը բաց է, գավակը լայն, սրունքները չոր ու բարակ, ոտքը հաստատուն: Տգեղ ցեղ է, բայց առողջ ու հուժկու: Պատվական կենդանին երկու ժամվա մեջ հինգ լիո էր անցել և գավակի վրա ոչ մի կաթիլ քրտինք չկար:

Նա կառքից չէր իջել, իսկ ախոռապանը, որ վարսակ էր բերում, հանկարծ կռացավ ու գննեց ձախակողմյան անիվը:

— Հեռո՞ւ եք գնում,— հարցրեց այդ մարդը:

Նա պատասխանեց համարյա թե առանց մտածմունքից դուրս գալու.

— Ի՞նչ կա:

— Հեռվի՞ց եք գալիս,— շարունակեց ախոռապանը:

— Հինգ լիո դենից:

— Ա՛:

— Ինչո՞ւ «ա՛»:

Ախոռապանը նորից կռացավ, մի բռպե մնաց լուռ ու աչքը սևեռած անիվին, ապա ուղղվեց ու ասաց.

— Բանն այն է, որ այս անիվը թերևս հինգ լիո է կտրել, բայց այժմ անկասկած մի քառորդ լիո էլ չի կտրի:

Նա կառքից ցած թռավ:

— Ի՞նչ եք ասում, բարեկամ:

— Ասում եմ, որ հրաշք է ուղղակի, որ հինգ լիտ եկել եք՝ առանց գլորվելու դուք էլ, ձեր ձին էլ՝ ճանապարհի որևէ փոսի մեջ: Ավելի լավ է նայեք:

Անիվն իսկապես շատ լուրջ վնասվել էր: Փոստակառքի հետ ունեցած բախումից երկու շառավիղ ճեղքվել էին և միջնանիվը փշրվել, որի պտուտակածակն այլևս չէր պահում:

— Բարեկամ, սայլագործ չկա՞ այստեղ:

— Իհարկե կա, պարոն:

— Խնդրում եմ այդ ծառայությունը մատուցեք ինձ, գնացեք նրան կանչեք:

— Այստեղ է, երկու քայլի վրա: Հե՛, վարպետ Բուրգայառ:

— Վարպետ Բուրգայառը՝ սայլագործը, կանգնել էր իր դռան շեմին: Նա եկավ քննելու անիվը և այնպիսի ծամաճոթություն արեց, ինչպես վիրաբույժն է անում ջարդված սրունքը զննելիս:

— Կարո՞ղ եք իսկույն այս անիվը նորոգել:

— Այո, պարոն:

— Ե՞րբ կարող եմ ճամփաս շարունակել:

— Վաղը:

— Վա՞ղը:

— Մի ամբողջ օրվա աշխատանք կա: Պարոնը շա՞տ է շտապում:

— Շատ: Պետք է ամենաուշը մեկ ժամից մեկնեմ:

— Անկարելի է, պարոն:

— Ինչ որ ուզեք՝ կտամ:

— Անկարելի է:

— Լավ, երկու ժամից:

— Այսօր անկարելի է: Պետք է երկու շառավիղ և մի միջնանիվ շինել: Պարոնը վաղվանից շուտ չի կարող մեկնել:

— Իմ գործը վաղվան չի սպասի: Իսկ եթե այդ անիվը նորոգելու փոխարեն մի ուրիշով փոխարինե՞նք:

— Ինչպե՞ս:

— Դուք սայլագործ չե՞ք:

— Անկասկած, պարոն:

— Մի՞թե ծախու անիվ չունեք: Ես կարող եմ անմիջապես ճամփա ընկնել:

— Փոխնորդ անիվ ո՞վ:

— Այո:

— Այնպիսի անիվ չունեմ, որ ձեր կառքին հարմարի: Երկու անիվն էլ նման պետք է լինեն, իսկ տարբեր անիվները միասին չեն գնա:

— Այդ դեպքում մի գույգ անիվ ծախեք ինձ:

— Պարոն, բոլոր անիվները չեն ընկնում պատահած սոնակի վրա:

— Բայց և այնպես փորձեք:

— Ավելորդ է, պարոն: Ես միայն սայլի անիվներ ունեմ ծախելու: Գյուղ տեղ է այստեղ:

— Իսկ վարձով տալու կառք չունե՞ք:

Սայլագործը հենց առաջին հայացքից ճանաչել էր, որ դա վարձու տիրուրի է. ուստի ուները վեր գցեց:

— Լա՛վ էք պահում ձեր վարձած կառքերը. եթե ունենայի էլ, ձեզ վարձով չէի տա:

— Շատ լավ, իսկ ծախելո՞ւ:

— Չունեմ:

— Ինչպես, նույնիսկ սայլա՞կ էլ չկա: Ինչպես տեսնում եք՝ խստապահանջ չեմ:

— Փոքր գյուղ տեղ է սա: Ճիշտ է, այնտեղ, կառատանը, մի հին քառանիվ կառք ունեմ,— ավելացրեց սայլագործը,— որ պատկանում է մի քաղաքաբնակ բուրժուայի, նա թողել է ինձ մոտ և ամեն ամսվա երեսունվեցին է միայն օգտվում նրանից: Հաճույքով դա վարձու կտայիձեզ, ինձնից ինչ է գնում, բայց անհրաժեշտ է, որ այդ բուրժուան նրա անցնելը չտեսնի և բացի դրանից երկու ձի է պետք:

— Փոստից երկու ձի կվերցնեմ:

— Ո՞ւր է գնում պարոնը:

— Արրաս:

— Եվ պարոնն ուզում է այսօ՞ր գնալ:

— Դե, իհարկե:

— Փոստից երկու ձի վերցնելո՞վ:

— Ինչո՞ւ չէ:

— Պարոնի համար միևնո՞ւյն է, եթե հասնի այսօր, գիշերվա ժամը չորսին:

— Իհարկե ոչ:

— Գիտեք ինչ, մի բան էլ պետք է ասեմ, երկու ձի վերցնելիս... Պարոնի մոտ է իր անձնագիրը:

— Այո:

— Լավ ուրեմն, փոստի ձիեր վերցնելով, պարոնը Արրաս կհասնի վաղվանից ոչ շուտ: Սա կրճատ ճանապարհ է, փոխնորդ ձիերի կայանները վատ դրության մեջ են, ձիերը դաշտում են, սկսվում է աշնանային հերկի շրջանը, ուժեղ լուծ է պետք և ձիերն ամեն տեղից էլ վերցնում են, թե փոստից, թե այլ տեղերից: Պարոնը յուրաքանչյուր կայանում ամենաքիչը երեք-չորս ժամ սպասելու է: Բացի դրանից վազեցնել հնարավոր չէ, բազմաթիվ վերելքներ կան բարձրանալու:

— Դե լավ, ձիով կգնամ: Արձակեք կառքը: Մի թամբ ծախող կգտնվի այստեղ:

— Իհարկե: Բայց այս ձին կհանդուրժի՞ թամբ:

— Ճիշտ է, խելքի գցեցիք ինձ. թամբ չի հանդուրժում նա:

— Ուրեմն...

— Գյուղում մի վարձու ձի կգտնեմ իհարկե:

— Այնպիսի ձի, որ մի շնչով Արրա՞ս հասնի:

— Այո:

— Պետք է մի այնպիսի ձի, որպիսին մեր կողմերում չկա: Ամենից առաջ պետք կլինեն գնել, քանի որ ձեզ չեն ճանաչում: Բայց ոչ ծախու, ոչ վարձու, ոչ հինգ հարյուր ֆրանկով, ոչ հազարով չեք գտնի այդպիսին:

— Հապա ի՞նչ անեմ:

— Ամենալավն այն է, որ ես ազնիվ մարդու պես խոսք եմ տալիս նորոգել այդ անիվը, դուք էլ ձեր ճամփորդությունը կհետաձգեք վաղվան:

— Վաղը ուշ կլինի:

— Պա՛հ:

— Արրաս գնացող փոստակառք չկա՞, ե՞րբ կանցնի նա:

— Եկող գիշեր: Երկու փոստակառքերն էլ գիշերն են անցնում, թե գնացողը, թե վերադարձողը:

— Ինչպես թե մեկ օր է անհրաժեշտ այս անիվը նորոգելու համար:

— Մեկ օր, այն էլ լրիվ օր:

— Իսկ եթե երկու բանվոր աշխատե՞ն:

— Նույնիսկ եթե տասը բանվոր աշխատեն:

— Իսկ չի՞ կարելի շառավիղները պարանով կապել:

— Շառավիղներն այո, բայց միջանիվը ոչ: Բացի դրանից, անիվի շրջանակն էլ վատ դրության մեջ է:

— Քաղաքում կառք վարձու տվող չկա՞:

— Ոչ:

— Ուրիշ սայլագործ չկա՞:

Ախոռապանն ու սայլագործը պատասխանեցին միաժամանակ և գլուխը երերացնելով.

— Ոչ:

Նա անհուն հաճույք զգաց:

Ակներև էր, որ նախախնամությունը խառնվում է այդ գործին: Հենց նա էր ջարդել կառքի անիվը և նա էլ ուշացնում էր: Ինքը չէր անդրադարձել այս առաջին ազդարարությանը, ընդհակառակը, բոլոր հնարավոր միջոցները գործադրել էր ճանապարհը շարունակելու համար, բարեխղճորեն ու օրինապահորեն բոլոր միջոցներն սպառել էր, չէր նահանջել ոչ վատ եղանակի, ոչ հոգնության և ոչ էլ ծախսերի առջև և իրեն կշտամբելու ոչ մի պատճառ չունեւ: Իր կամքից անկախ չէր կարող ճամփան շարունակել: Դա իր հանցանքը չէր և ոչ էլ իր խղճի արարքը, այլ նախախնամության գործը:

Նա շնչեց: Առաջին անգամ Ժավերի այցելությունից հետո նա ազատ ու լիաթոք շունչ քաշեց: Նրան թվում էր, որ քսան ժամից ի վեր իր սիրտը սեղմող երկաթե դաստակը բաց թողեց իրեն:

Նրան թվաց, որ այժմ աստված իր կողմն է:

Ապա մտովի ասաց, որ արել է այն ամենը, ինչ կարող էր, իսկ այժմ հանգիստ կարող է ետ դառնալ:

Եթե սայլագործի հետ ունեցած խոսակցությունը տեղի ունենար պանդոկի որևէ սենյակում, ապա ոչ մի վկա չէր լինի, ոչ ոք նրան չէր լսի, խոսակցությունը կմնար այդտեղ և հնարավոր է, որ մենք չափսի կարողանայինք պատմել այն դեպքերը, որ քիչ հետո կկարդաք: Բայց այդ խոսակցությունը տեղի էր ունեցել փողոցում, իսկ փողոցում եղած յուրաքանչյուր խոսակցություն անխուսափելիորեն մի շրջանակ է գոյացնում: Միշտ էլ գտնվում են այնպիսի մարդիկ, որոնք մի բան են փնտրում՝ հանդիսատես լինել: Երբ նա բանակցում էր սայլագործի հետ՝ մի քանի գնացող-եկող կանգ էին առել նրանց շուրջը: Մի քանի բռպեղսելուց հետո մի պատանի, որին ոչ ոք ուշադրություն չէր դարձրել բաժանվել էր խմբից ու վազելով գնացել:

Այն բռպեղին, երբ ճամփորդը թեթևացնելով իր ներքնաշխարհը (որ մենք նշեցինք), որոշում էր ետ դառնալ, այդ պատանին վերադարձավ մի պառավ կնոջ հետ:

— Պարոն,— ասաց կինը,— իմ տղան ինձ ասաց, որ դուք ցանկանում եք մի կառք վարձել:

Այս պարզ խոսքը, որ արտասանում էր երեխայի առաջնորդությամբ եկած մի պառավ կին՝ քրտնեցրեց նրա մեջքը: Նրան թվաց, որ տեսնում է այն ձեռքը, որ քիչ առաջ բաց թողեց իրեն, իսկ այժմ նորից երևում է իր ետև՝ ստվերում, բոլորովին պատրաստ դարձյալ բռնելու իրեն:

Նա պատասխանեց.

— Այո, բարի կլին, վարձու կառք եմ փնտրում:

Եվ շտապեց ավելացնել.

— Բայց այս տեղերում չի ճարվում:

— Ինչո՞ւ չէ, կա,— ասաց պառավը:

— Ո՞ւր է,— վրա տվեց սայլագործը:

— Ինձ մոտ,— պատասխանեց պառավը:

Նա ցնցվեց: Ճակատագրի ձեռքը նորից բռնել էր իրեն:

Պառավն իսկապես մի ծածկի տակ գցած ուռենու ճյուղերից հյուսված սայլականման մի բան ուներ: Սայլագործն ու ախոռապանը զայրացած, որ ճամփորդին ձեռքներից բաց են թողնում, միջամտեցին:

— Դա մի զզվելի բեռնասայլ է, դա մերկ դրված էր առնակի վրա, նստատեղիներն էլ կաշվե փոկերով կախված են ներսից, անձրևը թափվում է ներսը, անիվներն էլ խոնավությունից ժանգոտել են, դա էլ ձեր կառքից հեռու չի գնա, մի խարխուլ ֆուրգոն: Պարոնը մեծ սխալ կգործի, եթե նրանով ճամփա գնա, և այլն, և այլն:

Այդ բոլորը ճիշտ էր, բայց այդ բեռնասայլը, այդ ֆուրգոնը, այդ՝ ինչ ուզում ես անվանիր, շարժվում էր իր անիվների վրա և կարող էր Արրաս գնալ:

Ինչ որ պահանջեցին՝ վճարեց, իր տիլբուրին թողեց սայլագործի մոտ նորոգելու և վերադարձին վերցնելու, սպիտակ ձին լծել տվեց սայլակին, նստեց մեջը և շարունակեց իր ճանապարհը:

Այն բոլորին, երբ սայլակը շարժվեց, նա խոստովանեց իրեն, որ մի բոլե առաջ որոշ ուրախություն էր զգացել՝ մտածելով, թե չի գնալու այլևս գնալիք տեղը: Մի տեսակ զայրույթով քննեց այդ ուրախությունը և այն գտավ անհեթեթ: Ինչո՞ւ հրճվել էտ դառնալու համար: Չէ՞ որ վերջիվերջո ինքնակամ կերպով է այդ ճանապարհորդությունը կատարում: Ոչ ոք չի ստիպում իրեն այդ բանն անել:

Եվ անկասկած տեղի էր ունենում լոկ այն, ինչ որ ինքը ցանկանում էր:

Երբ նա Հեադենից դուրս էր գալիս, մի ձայն լսեց, որ կանչում էր իրեն. «Կանգնեցեք, կանգնեցեք»: Նա արագ կանգնեցրեց սայլակը, որի մեջ մի այնպիսի տենդային ու ջղաձգական բան կար, որ նման էր հույսի:

Դա պառավի փոքր տղան էր:

— Պարոն,— ասաց նա,— չէ՞ որ ես հայթայթեցի ձեզ այդ սայլակը:

— Հետո՞:

— Ինձ ոչինչ չտվիք:

Նա, որ հեշտությամբ ամենքին տալիս էր, այս հավակնությունն արտակարգ գտավ, գրեթե նողկալի:

— Ա՛, այդ դո՞ւ ես, սրիկա,— ասաց նա,— ոչինչ չես ստանա:

Եվ մտրակելով ձին արագ սլացավ:

Հեադենում նա շատ ժամանակ էր կորցրել և այժմ ուզում էր տեղը հանել: Փոքրիկ ձին ուժեղ էր և երկու ձիու չափ էր քաշում, բայց փետրվար ամիսն էր, անձրև էր եկել և ճանապարհը վատն էր: Եվ

բացի դրանից, սայլակը տիլբուրի չէր, այն կարծր էր ու խիստ ծանր, իսկ դրա հետ միասին՝ բազմաթիվ վերելքներ:

Չորս ժամ տևեց Հեադենից մինչև Սեն-Պոլ: Չորս ժամում հինգ լիու Սեն-Պոլի հենց առաջին պանդոկում էլ ձին արձակեց և ախոռ տանել տվեց և ինչպես խոստացել էր Սկոֆլերին՝ մնաց մսուրի մոտ, մինչև ձին կերավ-վերջացրեց իր կերը: Այդ միջոցին նա մտածում էր տխուր ու խառնակ բաների մասին:

Պանդոկապանի կինը մտավ ախոռ:

— Պարոնն ուտել չի՞ ցանկանում:

— Օ, իսկապես,— ասաց նա,— նույնիսկ լավ ախորժակ ունեմ:

Նա հետևեց այդ թարմ երեսով ու զվարթ կնոջը: Կինը նրան տարավ մի ցած սրահ, ուր սեղաններ կային, որոնց սփռոցը մոմած կտավ էր:

— Շտապեք,— ասաց Ժան Վալժանը,— պետք է շուտով մեկնեմ: Խիստ շտապում եմ:

Մի չաղ ֆլամանդուհի սպասուհի ամենայն փութկոտությամբ պատրաստեց նրա սեղանը: Նա դիտում էր այդ աղջկան՝ բարության զգացումով:

— Ահա թե ինչն էր ինձ նեղում,— մտածեց նա,— չէի նախաճաշել:

Ճաշը մատուցեցին. նա հարձակվեց հացի վրա և մի պատահով կծեց, ապա դանդաղ ետ դրեց սեղանի վրա և այլևս ձեռք չտվեց:

Մի այլ սեղանի առջև մի սայլապան էր ճաշում. նա այդ մարդուն ասաց.

— Ինչո՞ւ սրանց հացն այսպես դառն է:

Սայլապանը գերմանացի էր և ոչինչ չհասկացավ:

Եվ նա վերադարձավ ախոռ՝ ձիու մոտ:

Մի ժամ հետո նա մեկնեց Սեն-Պոլից և ուղղվեց դեպի Տենք, որ Արրասից միայն հինգ լիու է հեռու:

Ի՞նչ էր անում նա այս ճանապարհին: Ինչի՞ մասին էր մտածում: Առավոտյան պես, այժմ էլ դիտում էր ծառերի անցնելը, հարդե կտուրները, մշակված արտերը և յուրաքանչյուր ոլորապատույտում անհետացող բնանկարները: Սա այնպիսի դիտում է, որ երբեմն բավական է հոգուն ու զերծ է կացուցում նրան մտածելուց: Հազարավոր առարկաներ տեսնել վերջին անգամ, ի՞նչ կարող է ավելի մեղամաղձոտ ու ավելի խոր լինել սրանից: Ճամփորդել՝ նշանակում է ամեն բոլոր ծնվել և մեռնել: Գուցե իր մտքի ամենատարտամ մասում համեմատություն էր անում այս հարափոփոխ հորիզոնների ու մարդկային գոյության միջև: Կյանքի բոլոր երևույթները շարունակ փախչում են մեր առջևից: Ստվերումներն ու շողշողումներն իրար են խառնվում: Շլացումից հետո խավարում. նայում ես, շտապում, ձեռքերդ պարզում, որ բռնես այն՝ ինչ անցնում է. յուրաքանչյուր դեպք ճանապարհի ոլորապատույտ է. և մեկ էլ տեսար ծերացել ես: Ցնցվում ես, հանկարծ ամեն ինչ սև է, մի սև դուռ ես նկատում, կյանքի այն մոայլ ձին, որ քեզ տանում էր՝ կանգ է առնում և տեսնում ես մի քողարկված ու անձանոթ էակ արձակում է այդ ձին խավարի մեջ:

Երբ վերջալույսն իջնում էր, դպրոցից դուրս եկող երեխաները տեսան Տենք մտնող այդ ճամփորդին: Թեև տարվա կարճ օրերն էին դեռ, բայց նա Տենքում կանգ չառավ և, երբ գյուղից դուրս էր գալիս՝ մի ուղեպահ, որ քարապատում էր ճանապարհը, զլուխը տնկեց ու ասաց.

— Ինչքան է հոգնել այս ձին:

— Խեղճ կենդանին իսկապես այլևս չէր վազում:

— Արրա՞ս էք գնում, — հարցրեց ուղեպահը:

— Այո:

— Եթե այս արագությամբ գնաք՝ պատեհ ժամի տեղ չեք հասնի:

Նա կանգնեցրեց ձին ու հարցրեց ուղեպահին:

— Այստեղից Արրաս դեռ ինչքա՞ն կա:

— Մոտ յոթ լիռ:

— Ինչպե՞ս թե, փոստային ուղեգիրը նշանակել է միայն հինգ ու մեկ քառորդ լիռ:

— Ա՛հ, — վրա տվեց ուղեպահը, — ուրեմն չգիտե՞ք, որ ճանապարհը նորոգվում է: Քառորդ ժամ հետո կտեսնեք, որ ճամփան կտրված է և դենը գնալու միջոց չկա:

— Իսկապե՞ս:

— Կգնաք ձախից՝ Կարանսի տանող ճանապարհով, կանցնեք գետը և, երբ Կամբլեն հասնեք՝ կթեք վեք աջ. դա Մոն-Սեն-Էլուայի ճամփան է և տանում է Արրաս:

— Բայց գիշերն էլ վրա է հասնում, և ես կմոլորվեմ:

— Այստեղացի չե՞ք:

— Ոչ:

— Դրա հետ մեկտեղ ամբողջ ճանապարհը խոտորնակ է: — Լսեք, պարոն, — շարունակեց ուղեպահը, — ուզո՞ւմ եք խորհուրդս լսել: Ձեր ձին հոգնած է, վերադարձեք Տենք, մի լավ պանդոկ կա այնտեղ, կգիշերեք, իսկ առավոտյան կգնաք Արրաս:

— Այս երեկո պետք է այնտեղ լինեմ:

— Դա այլ բան է: Եթե այդպես է՝ այնուամենայնիվ գնացեք այդ պանդոկը և մեկ օժանդակ ձի վերցրեք, իսկ ձիապանն էլ ձեզ կառաջնորդի խոտորնակ ճանապարհներով:

Նա լսեց ուղեպահի խորհուրդը, շուտ տվեց սայլակը և կես ժամ հետո նորից երևաց նույն տեղը, բայց արդեն սրարշավ առաջանալով և մի լավ օժանդակ ձի ավելացրած: Մի ախոռապան, որ սուրհանդակ էր հորջորջում իրեն՝ նստել էր սայլակի առաջամասում:

Բայց նա զգում էր, որ ժամանակ է կորցնում:

Արդեն բոլորովին մթնել էր:

Նրանք մտան խոտորնակ ուղիները: Ճանապարհը դարձավ սարսափելի և սայլակն սկսեց բարձրանալ մերթ այս, մերթ այն անիվի վրա: Նա ասաց սուրհանդակին:

— Շարունակիր այդպես արագ, կրկնակի խմողչեք կստանաս:

Մի դերբուկ անցնելիս կառքի փոկակալը ջարդվեց:

— Պարոն,— ասաց սուրհանդակը,— փոկակալը ջարդվեց, չգիտեմ, թե իմ ձին այժմ ինչպես լծեմ, այս ճանապարհին էլ գիշերները շատ վատն է, եթե կամենաք վերադառնալ Տենք ու գիշերել այնտեղ, առավոտ կանուխ Արրասում կարող ենք լինել:

Նա պատասխանեց:

— Մի կտոր պարան ու դանակ ունե՞ս:

— Այո, պարոն:

Եվ մի ծառի ճյուղ կտրեց ու փոկակալ շինեց:

Այդ բանը քսան ընկույթի կորուստ պատճառեց, բայց և այնպես նրանք քառասմբակ արշավեցին:

Դաշտը թխպոտ էր. ցած իջած, կարճ ու սև մառախուղը թառում էր բլուրների վրա և պոկվում ինչպես ծուխ: Սպիտակավուն լույսեր կային ամպերի մեջ: Ծովից եկող ուժեղ քամին հորիզոնի բոլոր անկյուններում բարձրացնում էր տնային իրեր շարժելու աղմուկ: Այն ամենը, որ նշմարվում էր, սարսափելի ձևեր ուներ: Ինչքան բաներ են սարսռում գիշերվա այս վիթխարի շնչառության մեջ:

Ցուրտը թափանցում էր նրա ներսը: Նախորդ երեկոյից հետո ոչինչ չէր կերել: Տարտամորեն հիշում էր իր մյուս գիշերային վազքը Դիյնի շրջակայքի ընդարձակ դաշտում: Ութ տարի էր անցել այդ օրվանից, բայց թվում էր, թե երեկ էր:

Մի հեռավոր զանգակատան ժամացույցը խփեց, նա հարցրեց սուրհանդակին.

— Ժամը քանի՞սն է:

— Յոթը, պարոն: Ժամը ութին կլինեք Արրասում, միայն երեք լիո է մնացել:

Այդ ընկույթին առաջին անգամ հետևյալ խորհրդածությունն արեց (և զարմանալով, որ նախկինում այդ միտքը չէր ծագել գլխում). թերևս անօգուտ էր ենթարկվել այդքան հոգնածության, ինքը չգիտե դատավարության ժամը, պետք էր գոնե տեղեկանալ այդ մասին և արտառոց բան էր այդպես առաջ գնալ՝ չիմանալով, թե դա որևէ բանի կծառայի¹: Ապա մտքում մի քանի մոտավոր հաշիվ արեց, թե ընդհանրապես ոճրադատ ատյանների նիստերն սկսվում են առավոտյան ժամը իննին, թե այս գործը շատ չէր տևի, թե խնձորի գողությունը երկար չէր քաշի, թե դրանից հետո միայն ինքնության հարցը կմնար, չորս կամ հինգ վկայություն, մի քանի խոսք էլ փաստաբաններին կմնար ասելու և ինքը կհասներ տեղ, երբ ամեն ինչ վերջացած կլիներ:

Սուրհանդակը մտրակում էր ձիերին, նրանք գետն անցել էին և իրենց ետևում էին թողել Մոն-Մեն-Էլուան:

Գիշերն ավելի ու ավելի էր խորանում:

ՔՈՒՅՐ ՍԵՄՊԼԻՍԸ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ

Ճիշտ այդ րոպեին սակայն Ֆանտինը հրճվանքի մեջ էր:

Նա շատ վատ գիշեր էր անցկացրել: Նրա դրությունը վատացել էր, ջերմը սաստկացել և ինքը երազներ էր տեսել: Առավոտյան, երբ բժիշկը եկել էր՝ նա զառանցում էր: Բժիշկը տազնապալի տեսք էր ունեցել և պատվիրել էր, որ պարոն Մադլենի գալու պես իրեն իմաց տան:

Առավոտյան ժամերին Ֆանտինը մոայլ էր, քիչ էր խոսում և վերմակի վրա ծալքեր էր անում ցած ձայնով հաշիվներ անելով, որոնք կարծես հեռավորության հաշիվներ էին: Նրա աչքերը խորացել էին ու նայում էին շեշտակի: Մերթ նրանք կարծես հանգում էին, մերթ կարծես բոցավառվում ու աստղերի պես փայլատակում: Թվում է, որ մթագին ժամը մոտենալիս երկնքի լույսը համակում է նրանց, ումից հեռանում է երկրային լույսը:

Ամեն անգամ, երբ քույր Սեմպլիսը նրան հարցնում էր, թե ինչպես է զգում իրեն՝ նա անփոփոխ կերպով պատասխանում էր:— Լավ, ուզում եմ պարոն Մադլենին տեսնել:

Մի քանի ամիս առաջ, այն պահին, երբ Ֆանտինը կորցրեց վերջին ամոթն ու ուրախությունը, նա արդեն սովեր էր ինքնին. այժմ նա ուրվական էր: Ֆիզիկական ցավը լրացրել էր բարոյական ցավի գործը: Այս քսանհինգ տարեկան էակի ճակատը կնճռոտ էր, այտերը թույլ էին, քթածակերը սեղմվել, ատամները թափվել, դեմքը կապարագունել, վիզը ոսկրոտ, անրակները ցցվել, անդամները նիհարել, մորթը հողե գույն ստացել, իսկ խարտյաշ մազերն աճում էին այժմ սպիտակների հետ միասին: Ավա՛դ, ինչպես է հիվանդությունը ծերություն հեղինակում:

Կեսօրին բժիշկը եկավ, մի քանի պատվեր տվեց, տեղեկացավ, թե պարոն քաղաքապետը եկե՞լ էր հիվանդանոց և զլուխը երեբեք:

Պարոն Մադլենը սովորաբար ժամը երեքին գալիս էր հիվանդին տեսնելու և քանի որ ճշտապահությունն էլ բարության նշան է, ապա նա ճշտապահ էր:

Ժամը երկուսնկեսի մոտերը Ֆանտինն սկսեց հուզվել: Քսան րոպեի ընթացքում ավելի քան տասն անգամ հարցրեց կրոնավորուհուն: «Քույր իմ, ժամը քանի՞սն է»:

Ժամը երեքը խփեց. երրորդ հարվածին Ֆանտինը նստեց, մինչդեռ սովորաբար հազիվ էր շարժվում անկողնում: Ապա վտիտ ու դեղին ձեռքերը կցեց մի տեսակ ջղաձգական պրկումով, և քույր Սեմպլիսը լսեց նրա կրծքից բխող խոր հառաչանքը, որ կարծես ընկճվածություն էր արտահայտում: Հետո նա շուտ եկավ ու նայեց դռանը:

Ոչ ոք ներս չմտավ. դուռը երբեք չբացվեց:

Մի քառորդ ժամ նստեց նա այդպես, աչքը սևեռած դռանը, անշարժ, կարծես շունչը բռնած: Քույրը չէր համարձակվում մի բան ասել նրան: Ի վերջո Ֆանտինն ընկավ անկողնու վրա:

Նա ոչինչ չասաց և նորից սկսեց ծալքեր շինել վերմակի վրա:

Կես ժամ անցավ, ապա մի ժամ: Ոչ ոք չեկավ: Ամեն անգամ, երբ ժամացույցը հնչում էր՝ Ֆանտինն ուղղվում էր ու նայում դեպի դուռը, ապա նորից պառկում:

Հստակորեն երևում էր նրա մտածմունքը, բայց նա ոչ մի անուն չէր արտասանում, չէր տրտնջում, չէր մեղադրում, միայն չարագուշակ ձևով հագում էր, թվում էր, որ մի խավար բան է իջնում նրա վրա: Նա այժմ կապարագույն էր ու շրթունքները կապտել էին. մերթ-մերթ ժպտում էր:

Հնչեց ժամը հինգը: Այդ ժամանակ քույրը լսեց, որ նա խիստ ցած ու դանդաղ ասաց:— Քանի որ վաղը ես գնալու եմ, նա վատ արեց, որ այսօր չեկավ:

Քույր Սեմալիսն ինքն էլ զարմացել էր պարոն Մադլենի ուշանալուց:

Այնինչ Ֆանտինն իր անկողնուց դիտում էր երկինքը: Նա այնպիսի տեսք ուներ, կարծես մի բան էր ուզում վերհիշել: Հանկարծ նա սկսեց թույլ ձայնով երգել: Քույրը լսում էր նրան: Ահա թե ինչ էր երգում Ֆանտինը.

Մենք կգնենք իրեր սիրուն, գեղեցիկ՝

Դեպ ավաններ այստեղ-այնտեղ գալով ման.

Վարդն է կարմիր, տերեփուկն է կապուտիկ.

Սիրում եմ ես սիրո ժամերն իմ այնքան:

Քողը գցած կույս Մարիամն իր գլխին՝

Երեկ եկավ վառարանիս մոտ զգուշ,

— Այս շղարշում մանկիկն է այն քնքշագին,

Որ օր մի դու,— ասաց,— ինձնից խնդրեցիր,

Շտապ վագիր դեպի քաղաք և գնիր

Կտավ, մատնոց և թել կանաչ ու կարմիր:

Մենք կգնենք իրեր սիրուն, գեղեցիկ՝

Դեպ ավաններ այստեղ-այնտեղ գալով ման:

Կույս Մարիամը վառարանիս մոտ դրեց

Օրորոց մի՝ ժապավենով զարդարուն:

Աստղի նման և շողշողուն, և անշեջ —

Ես սիրում եմ այդ մանկիկին սիրասուն:

— Ասա, տիկին, ինչ անեմ այս կտավով:

— Նորածինիս շոր պատրաստիր դու շուտով:

Վարդն է կարմիր, տերեփուկն է կապուտիկ

Սիրում եմ ես սիրո ժամերն իմ այնքան:

— Զինչ առվակում նախ այդ կտավը լվա,

Մի կեղտոտիր և դրանից դու կարիր

Մի շրջագգեստ, ուր նկարեմ ես գույներ՝

Կապույտ, դեղին և կակաչի պես կարմիր:

— Էլ մանկիկը չկա, կտավն ի՞նչ անեմ:

— Պատանք կարիր՝ ինձ թաղելու տխրադեմ:

Մենք կգնենք իրեր սիրուն, գեղեցիկ՝

Դեպ ավաններ այստեղ-այնտեղ գալով ման.

Վարդն է կարմիր, տերեփուկն է կապուտիկ,

Կապուտիկ է աչքերի պես իմ մանկան:

(Ֆրանս. թարգմ. **Վեսպեր**)

Այս երգը մի հին օրորոցային ռոմանս էր, որով նա մի ժամանակ քնեցնում էր իր փոքրիկ Կոզետին և, որը հինգ տարուց ի վեր չէր ծագել նրա գլխում, այն օրվանից, որ նա զրկվել էր իր երեխայից: Այնպիսի տխուր ձայնով և քաղցր եղանակով, որ կարող էր լացացնել նույնիսկ մի կրոնավորուհու: Խստաբարո բաների վարժված քույրն զգաց, որ իր աչքն արտասովակալեց:

Ժամացույցը խփեց ժամը վեցը: Ֆանտինը կարծես չլսեց: Թվում էր, որ նա այլևս ոչ մի ուշադրություն չէր դարձնում շուրջը եղած որևէ բանի:

Քույր Սեմալիսը մի մայրապետ ուղարկեց ֆաբրիկայի դռնապանուհու մոտ իմանալու, թե պարոն քաղաքապետը չի՞ վերադարձել և չի՞ կարող հիվանդարան գալ: Մայրապետը մի քանի րոպեից վերադարձավ:

Ֆանտինը շարունակում էր մնալ անշարժ և կարծես ողջ ուշադրությունը տվել էր միտքը հուզող մտածմունքներին:

Մայրապետը խիստ ցածր ձայնով պատմեց քույր Սեմալիսին, որ պարոն քաղաքապետը նույն առավոտ, ժամը վեցից առաջ մեկնել էր մի սպիտակ ձի լծած տիլբուրիով և այդ ցուրտ եղանակին գնացել էր մենակ, նույնիսկ առանց կառապանի, թե չէին իմանում նրա բռնած ճանապարհը, ոմանք ասում էին, որ նրան տեսել են Արրասի ճամփի վրա շրջելիս, ոմանք էլ վստահեցնում էին, որ տեսել են Փարիզի ճանապարհին, թե գնալիս սովորականի պես եղել է խիստ սիրալիր և դռնապանուհուն ասել է, որ այս գիշեր չսպասեն իրեն:

Երբ երկու կանայք կռնակները Ֆանտինին դարձրած շնջում էին,— քույրը հարցուփորձ անում, իսկ մայրապետը կռահում ասածը,— Ֆանտինը որոշ օրգանական հիվանդությունների տենդային աշխուժությամբ, որ առողջության ազատ շարժումները խառնում է մահվան սոսկալի նիհարության՝ չոքել էր անկողնու վրա, իրար կցած ձեռքերը մահճակալի սնարին ու զլուխը վարագույրների արանքից դուրս հանել և լսում էր: Հանկարծ նա աղաղակեց.

— Պարոն Մադլենի մասի՞ն եք խոսում, ինչո՞ւ եք այդպես ցածր խոսում, ի՞նչ է անում նա, ինչո՞ւ չի գալիս:

Նրա ձայնն այնքան անսպասելի էր ու խոպոտ, որ երկու կանայք կարծեցին, թե տղամարդու ձայն են լսում և սարսափած ետ դարձան:

— Դե պատասխանեք, շուտ,— գոռաց Ֆանտինը:

Մայրապետը թոթովեց.

— Դո՛նապանուհին ասաց, որ այսօր նա չի կարող գալ:

— Որո՞ղակս,— ասաց քույրը,— հանգիստ կացեք, պառկեք:

Ֆանտինն առանց դիրքը փոխելու՝ շարունակեց բարձրաձայն և միաժամանակ հրամայական ու սրտակեղեք շեշտով.

— Զի՞ կարող գալ: Ինչո՞ւ: Դուք պատճառը գիտեք, փսփսում էիք իրար հետ: Ուզում եմ պատճառն իմանալ:

Մայրապետն շտապեց քրոջ ականջին ասել. «Ասեք, որ նա զբաղված է քաղաքային խորհրդում»:

Քույր Սեմպլիսը թեթևակի շառագունեց. մայրապետը սուտ էր առաջարկում նրան: Մյուս կողմից էլ զգում էր, որ եթե ճշմարտությունն ասեր հիվանդին, ապա դա համագոր էր մի սոսկալի հարվածի, իսկ դա ծանր կլիներ Ֆանտինի համար՝ այդ վիճակում: Նրա կարմրությունը կարճ տևեց: Նա իր հանդարտ ու տխուր աչքերը բարձրացրեց Ֆանտինի վրա և ասաց.

— Պարոն քաղաքապետը մեկնել է:

Ֆանտինն ուղղվեց և նստեց ոտքերի վրա: Նրա աչքերը փայլատակեցին և մի անպատում հրճվանք շողաց նրա ցավատանջ դեմքի վրա:

— Մեկնե՛լ է,— բացականչեց նա:— Գնացել է Կոզետին բերելո՛ւ:

Ապա ձեռքերը տարածեց դեպի երկինքը և նրա ողջ դեմքը դարձավ աննկարագրելի: Նրա շուրթերը շարժվեցին. կամացուկ աղոթում էր:

Երբ աղոթքը վերջացրեց.

— Քույր իմ, ուզում եմ պառկել, կանեմ ինչ որ ուզեք. քիչ առաջ չարացել էի, ներողություն եմ խնդրում բարձր խոսելուս համար, վատ բան է ձայնը բարձրացնել, գիտեմ, իմ բարի քույր, բայց տեսնում եք, այժմ շատ գոհ եմ: Աստված բարի է, պարոն Մադլենն էլ բարի է, պատկերացնո՞ւմ եք, նա գնացել է Կոզետին բերելու Մոնֆերմելից:

Նա պառկեց, օգնեց քրոջը՝ բարձն ուղղել, համբուրեց իր վզից կախված արծաթե փոքրիկ խաչը, որ քույր Սեմպլիսն էր տվել:

— Որո՞ղակս,— ասաց քույրը,— ջանացեք այժմ հանգստանալ և էլ մի խոսեք:

Իր խոնավ ձեռքերով Ֆանտինը բռնեց քրոջ ձեռքը, որը տանջվում էր, զգալով, որ Ֆանտինը քրտնել է:

— Նա մեկնել է այս առավոտ դեպի Փարիզ: Ճիշտն ասած նա նույնիսկ կարիք չունի Փարիզից անցնելու Մոնֆերմելը քիչ ձախ է ընկնում՝ այստեղից գնալիս: Հիշո՞ւմ եք, թե ինչ էր ասում երեկ, երբ խոսում էի Փարիզի մասին. շուտով, շուտով: Ուզում է ինձ անակնկալ անել: Գիտե՞ք, մի

գրություն ստորագրել տվեց նա ինձ՝ երեխային Թենարդիեններից վերցնելու համար: Նրանք ոչինչ չեն կարող ասել, այնպես չէ՞, կտան Կոզետին, քանի որ փողն ստացել են: Իշխանությունը թույլ չի տա, որ երեխային պահեն, երբ փողն ստացել են: Քույր իմ, նշան մի անեք ինձ, թե չպետք է խոսեմ: Ես չափազանց երջանիկ եմ, շատ լավ եմ զգում ինձ, ոչ մի տեղս այլևս չի ցավում, շուտով կտեսնեմ Կոզետին, նույնիսկ խիստ քաղցած եմ: Մոտ հինգ տարի է նրան չեմ տեսել: Դուք չեք պատկերացնում, թե ինչպես ենք կարոտում նրանց՝ երեխաներին: Հետո նա այնքան սիրուն կլինի՝ կտեսնեք: Եթե իմանայիք, թե ինչպիսի վարդագույն սիրուն մատներ ունի: Նախ և առաջ գեղեցիկ ձեռքեր կունենա: Մեկ տարեկան հասակում ծիծաղելի ձեռքեր ուներ: Այ, այսպես: Այժմ նա մեծացած կլինի, այսինքն յոթ տարեկան, մի իսկական օրիորդ: Ես նրան Կոզետ եմ անվանում, բայց նրա անունը Եպրաքսիա է: Այ, այս առավոտ ես դիտում էի բուխարու վրա նստած փոշին և մտածում այն մասին, թե շուտով կտեսնեմ իմ Կոզետին: Աստված իմ, ինչքան հանցավոր բան է, երբ տարիներ շարունակ ապրում ես առանց երեխաներիդ տեսնելու. արժեր միշտ հիշել, որ կյանքը հավիտենական չէ: Օ, ինչքան բարի է պարոն քաղաքապետը, որ գնացել է: Ճիշտ է, որ խիստ ցուրտ է, գոնե վերցրե՛լ է իր վերարկուն: Վաղը նա այստեղ կլինի, չէ: Վաղը տոն կլինի ինձ համար: Քույր իմ, վաղը դուք ինձ կհիշեցնեք, որ այն փոքր, ժանյակներով գլխարկս դնեմ: Մոնֆերմելը հեռու չէ, այդ ճամփան ես ոտքով եմ կտրել ժամանակին: Ինձ համար շատ հեռու էր դա, բայց հանրակառքերը շատ արագ են գնում: Վաղը նա Կոզետի հետ այստեղ կլինի: Ինչքա՞ն է այստեղից մինչև Մոնֆերմել:

Քույրը, որ ոչ մի գաղափար չուներ հեռավորությունների մասին՝ պատասխանեց, — Օ, ես էլ եմ կարծում, որ վաղը նա այստեղ կլինի:

— Վա՛ղը, վա՛ղը, — գոչեց Ֆանտինը, — վաղը կտեսնեմ Կոզետին: Տեսնո՞ւմ եք. բարի աստծո բարի քույր, ես այլևս հիվանդ չեմ: Ես խենթ եմ, եթե ցանկանան՝ կպարեմ:

Եթե որևէ մեկը նրան քառորդ ժամ առաջ տեսներ՝ այժմ ոչինչ չէր հասկանա: Այժմ նա բոլորովին վարդագույն էր, խոսում էր աշխույժ ու բնական ձայնով և ամբողջ կերպարանքը ժպտում էր: Երբեմն խիստ ցածր խոսում էր ու ծիծաղում: Մոր հրճվանքը գրեթե մանկական հրճվանք է:

— Դե լավ, — կրկնեց քույրը, — այժմ արդեն երջանիկ եք, հնազանդեցեք ինձ և էլ մի խոսեք:

Ֆանտինը գլուխը դրեց բարձին և կիսաձայն ասաց. «Այո, պառկիր, խելոք կաց, քանի որ շուտով երեխայիդ տեսնելու ես: Քույր Սեմպլիսը իրավունք ունի: Այստեղի բոլոր մարդիկ էլ իրավունք ունեն»:

Ապա առանց շարժվելու կամ գլուխը շուտ տալու նա սկսեց նայել չորսսրբոլորը՝ աչքերը լայն բաց արած ու զվարթ դեմքով և էլ ոչինչ չասաց:

Քույրը նրա անկողնու վարագույրները վրա բերեց՝ հուսալով, որ կքնի:

Ժամը յոթից-ութը բժիշկը եկավ և ոչ մի ձայն չլսելով՝ կարծեց, թե Ֆանտինը քնել է, կամացուկ ներս մտավ և ոտքի ծայրերով մոտեցավ մահճակալին: Ճրագի աղոտ լույսի տակ, վարագույրը թեթև բաց անելով, նա տեսավ Ֆանտինի հանդարտ ու խոշոր աչքերը, որ նայում էին իրեն:

Ֆանտինը նրան ասաց.

— Պարոն, ինձ թույլ կտան, չէ՞, որ երեխայիս քնեցնեմ իմ կողքին՝ մի փոքրիկ մահճակալի մեջ:

Բժիշկը կարծեց, որ նա զառանցում է: Ֆանտինն ավելացրեց.

— Ահա տեսեք, ճիշտ այդքան էլ տեղ կա:

Բժիշկը մի կողմ տարավ քույր Սեմպլիսին, որը նրան բացատրեց բանի էությունը. թե պարոն Մադլենը մեկ կամ երկու օրով բացակայելու է և նկատի ունենալով հիվանդի դրությունը՝ չէին ուզեցել նրան մոլորությունից հանել, իսկ նա կարծում է, որ պարոն քաղաքապետը գնացել է Մոնֆերմեյ և հնարավոր է, որ նա ճիշտ է գուշակել: Բժիշկը հավանություն տվեց:

Եվ մոտենալով Ֆանտինի անկողնուն՝ վերջինս ասաց.

— Գիտե՞ք ինչ, բանն այն է, որ առավոտյան, երբ երեխաս արթնանա, ես բարի լույս կասեմ այդ խեղճ ճուտիկին, իսկ գիշերը, քանի որ քունս չի տանում՝ ականջ կդնեմ նրա քնելուն: Նրա մանկական քաղցր շնչառությունը ինձ բարենպաստ է:

— Տվեք ձեր ձեռքը,— ասաց Բժիշկը:

Ֆանտինը իր ձեռքը մեկնեց և ծիծաղելով գոչեց.

— Ահա, խնդրեմ, ճիշտն ասած, իրոք որ դուք չգիտեք, ես առողջացել եմ: Վաղը Կոզետը կգա:

Բժիշկը զարմացավ. Ֆանտինը համեմատաբար ավելի լավ էր: Սրտի ճնշումը նվազել էր, զարկերակն ուժեղացել և մի հանկարծահաս կյանք վերակենդանացրել էր այդ հյուծված էակին:

— Պարոն Բժիշկ,— շարունակեց Ֆանտինը,— քույրը ձեզ ասա՞ց, որ պարոն քաղաքապետը գնացել է փոքրիկ աղջկաս բերելու:

Բժիշկը հանձնարարեց լուռ մնալ և խուսափել որևէ կսկծալի հուզում պատճառելուց: Ապա պատվիրեց գուտ խինիսի թրջոց դնել, իսկ եթե տենդը վերսկսվեր գիշերը՝ հանդարտեցնող լուծույթ տալ: Հեռանալիս քրոջն ասաց.

— Դեպի լավն է գնում, եթե բախտը կամենար, որ իսկապես պարոն քաղաքապետը վաղը գար երեխայի հետ՝ ո՞վ գիտե, այնպիսի զարմանալի ճգնաժամեր են լինում, եղել են դեպքեր, երբ մեծ ուրախությունը վերջ է դրել հիվանդության: Գիտեմ, որ սա օրգանական հիվանդություն է և խիստ առաջացած է, բայց այնքան զաղտնիքներ կան այսպիսի բաների մեջ: Թերևս փրկենք նրան:

VII

ՃԱՄՓՈՐԴԸ ՏԵՂ ՀԱՄՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՁԵՌՔ ԱՌՆՈՒՄ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Երեկոյան ժամը ութի մոտ էր, երբ սայլակը, որ մենք ճամփին թողեցինք՝ մտավ Արրասի փոստատան դարպասներից ներս: Մարդը, որին մենք հետևեցինք մինչև այս վայրկյանը՝ ցած իջավ, մտացրիվկերպով պատասխանեց պանդոկի մարդկանց սիրալիր պատրաստակամությանը, օժանդակ ձին էտ ուղարկեց, սպիտակ ձին անձամբ ախոռ տարավ, ապա ներքնահարկում գտնվող բիլիարդանոցի դուռը հրեց, նստեց ու կոթնեց սեղանին: Տասնչորս ժամ էր տնել այդ ուղևորությունը, հույս ուներ կատարել վեց ժամում: Այդ առթիվ նա մտովի, արդարացրեց իրեն՝ գտնելով, որ իր հանցանքը չէր, բայց ըստ էության զայրացած չէր:

Հյուրանոցի տիրուհին ներս եկավ:

— Պարոնը գիշերելո՞ւ է, ուզո՞ւմ է ընթերել:

Նա գլխով ժխտական նշան արեց:

— Ախոռապանն ասում է, որ պարոնի ձին խիստ հոգնած է:

Այստեղ ճամփորդը լռությունը խզեց:

— Մի՞թե ձին չի կարող մեկնել վաղը առավոտ:

— Օ՛, պարոն, առնվազն երկու օր նա պետք է հանգստանա:

Ճամփորդը հարցրեց.

— Սա փոստային գրասենյակը չէ՞:

— Այո, պարոն:

Տիրուհին նրան տարավ գրասենյակ: Նա իր անձնագիրը ցույց տվեց և հարցրեց, թե հնարավո՞ր չէր այդ գիշերն իսկ վերադառնալ Մոնտրոյ-սյուռ-Մեո՝ փոստակառքով: Սուրհանդակի կողքի տեղը ի դեպ ազատ էր. նա վճարեց և ապահովեց այդ տեղը:— Պարոն,— ասաց գրասենյակի պետը,— չուշանաք, եղեք այստեղ գիշերվա ժամը ճիշտ մեկին:

Դրանից հետո նա դուրս եկավ փոստատնից և սկսեց քայլել քաղաքում:

Նա ծանոթ չէր Արրասին, որի փողոցները խավար էին, և նա գնում էր պատահականորեն, բայց համառորեն անցորդներից չէր հարցնում ճանապարհը: Անցնելով Կրենշոն գետակը՝ ընկավ նեղ փողոցների մի լաբիրինթոս ու մոլորվեց այդտեղ: Մի տեղացի էր անցնում՝ լապտերը ձեռքին: Քիչ երկմտելուց հետո ճամփորդը որոշեց դիմել այդ տեղացուն՝ նախօրոք հետ ու առաջ նայելով, կարծես վախենում էր, որ մեկնումեկը չլսի իր անելիք հարցումը:

— Պարոն, խնդրեմ ցույց տաք արդարադատության պալատը,— ասաց նա:

— Դուք տեղացի չե՞ք, պարոն,— պատասխանեց քաղաքացին, որ բավական ծեր մարդ էր,— շատ լավ, հետևեք ինձ: Հենց ես էլ արդարադատության պալատի կողմն եմ գնում, այսինքն նահանգապետության շենքի մոտով: Այժմ պալատը նորոգում են և դատարանի նիստերը ժամանակավորապես տեղի են ունենում նահանգապետության շենքում:

— Այդտե՞ղ են տեղի ունենում ոճրադատ ատյանի նիստերը,— հարցրեց ճամփորդը:

— Անկասկած, պարոն: Այն շենքը, որ հիմա նահանգապետարանն է, հեղափոխությունից առաջ եպիսկոպոսարանն էր: Պարոն դը Կոնզիեն, որ ութսուներկու թվականին եպիսկոպոս էր, մի մեծ սրահ է շինել տվել այդտեղ: Հենց այդ մեծ սրահում էլ տեղի է ունենում դատավարությունը:

Ճանապարհին քաղաքացին նրան ասաց.

— Եթե ուզում եք որևէ դատ լսել՝ մի քիչ ուշ է: Նիստերը սովորաբար վերջանում են ժամը վեցին:

Բայց, երբ մեծ հրապարակը հասան, քաղաքացին չորս երկար ու լուսավորված լուսամուտ ցույց տվեց նրան մի խոշոր ու մթին շենքի ճակատամասում:

— Հավատքս վկա, պարոն, ճիշտ ժամին եք հասնում, բախտ ունեք: Տեսնո՞ւմ եք այս չորս լուսամուտները, դա է ոճրադատ ատյանը: Լույս կա, ուրեմն չի վերջացել: Ըստ երևույթին գործը երկար է տևել, ուստի երեկոյան նիստ են ունեցել: Հետաքրքրվո՞ւմ եք այդ գործով. քրեակա՞ն գործ է, դուք վկա՞ եք:

Նա պատասխանեց.

— Ոչ մի գործի համար չեմ եկել, միայն պետք է խոսեմ մի փաստաբանի հետ:

— Դա ուրիշ բան է,— ասաց քաղաքացին,— ահա, պարոն, այս է դուռը: Այդտեղ էլ պաշտոնակատարն է: Դուք միայն պետք է բարձրանաք մեծ սանդուղքով:

Նա վարվեց ըստ քաղաքացու ցուցումների և մի քանի բոպե հետո գտնվում էր մի սրահում, ուր շատ մարդ կար և ուր զանազան խմբեր խառնված պաշտոնագգեստ հազած փաստաբանների՝ այսուայնտեղ շնջում էին:

Մի տեսակ սրտաճմլիկ բան կա, երբ ամեն անգամ տեսնում ես՝ սևազգեստ մարդկանց խմբեր ցածր ձայնով փափսում են արդարադատության պալատի սենյակների շենքերի մոտ: Հազվադեպ է, որ այս բոլոր խոսքերից կարեկցություն և գուրջ բխի: Ինչ որ ավելի հաճախ է դրանից բխում՝ կանխորոշված դատապարտություններն են: Անցնող ու երագող դիտողին այդ խմբավորումները թվում են մոայլ փեթակներ, որտեղ բզզացող մտքերը հավանաբար ամեն տեսակ մթագին շենքեր են կառուցում:

Այս ընդարձակ ու միայն մի լամպով լուսավորված սրահը եպիսկոպոսարանի նախկին սրահներից մեկն էր և այժմ ծառայում էր որպես դատարանի նախասրահ: Երկփեղկանի դուռը, որ այդ բոպեին փակ էր, բաժանում էր այն մեծ սենյակից, ուր տեղի էր ունենում ոճրադատ ատյանի նիստը:

Սրահում այնքան մուրթ էր, որ նա չվախեցավ դիմելու հենց առաջին պատահած փաստաբանին:

— Պարոն,— հարցրեց նա,— գործը ի՞նչ կետի է հասել:

— Վերջացել է,— պատասխանեց փաստաբանը:

— Վերջացե՛լ:

Այս խոսքն այնպիսի շեշտով արտասանվեց, որ փաստաբանը ետ դարձավ:

— Ներեցեք, պարոն, դուք երևի նրա ազգականներից եք:

— Ոչ: Ես ոչ ոքի չեմ ճանաչում այստեղ: Եվ դատապարտությո՞ւն տրվեց:

— Իհարկե: Այլ կերպ անհնար էր:

— Տաժանակիր աշխատանքի՞ ...

— Ցմահ:

Ճամփորդը շարունակեց այնպիսի թույլ ձայնով, որ հազիվ կարելի էր լսել:

— Ուրեմն ինքնությունը հաստատվե՞ց:

— Ի՞նչ ինքնություն,— պատասխանեց փաստաբանը:— Ինքնություն հաստատելու կարիք չկա, գործը պարզ էր, այդ կինն սպանել էր իր երեխային, որդեսպանությունն ապացուցվեց, ժյուրին ապացուցեց, որ կանխամտածություն չի եղել և դատապարտեց ցմահ:

— Ուրեմն կի՞ն էր դատվողը,— հարցրեց նա:

— Դե, իհարկե, աղջիկ Լիմոզենը: Ուրեմն ինչի՞ մասին եք դուք հարցնում:

— Ոչինչ, բայց քանի որ վերջացել է, էլ ինչո՞ւ է սրահը լուսավորված:

— Մյուս գործի առթիվ է, որ մոտ երկու ժամ առաջ են սկսել:

— Ո՞ր մյուս գործը:

— Օ, դա էլ պարզ է: Մի տեսակ անպիտան, ռեցիդիվիստ տիպ է, նախկին թիապարտ, գողություն է արել: Չեմ հիշում նրա անունը: Բանդիտի տեսքով մի մարդ է դա: Հենց այդպիսի դեմք ունենալը բավական է, որ ես նրան թիարան ուղարկեմ:

— Պարոն,— հարցրեց նա,— ներս մտնելու հնարավորություն կա՞:

— Չեմ կարծում: Շատ մարդ կա ներսում: Բայց նիստն ընդհատված է, շատերը դուրս են եկել և նիստը վերսկսելու ժամանակ կարող եք փորձել:

— Որտեղի՞ց են ներս մտնում:

— Այս մեծ դռնից:

Փաստաբանը բաժանվեց նրանից: Մի քանի վայրկյանում նա զգաց գրեթե միաժամանակ և համարյա իրար խառնված բոլոր հնարավոր հուզումները: Այդ անտարբեր մարդու խոսքերը հարվածել էին նրա սիրտը մերթ սառցանման ասեղի, մերթ հրաշեկ շեղբի պես: Երբ իմացավ, որ գործը չի վերջացել՝ ազատ շունչ քաշեց, բայց նա չէր կարող ասել, թե իր զգացածը գոհունակությո՞ւն էր, թե կսկիծ: Նա մոտեցավ բազմաթիվ խմբերի և ականջ դրեց նրանց խոսակցության: Քանի որ նստաշրջանը խիստ ծանրաբեռնված էր, ապա նախագահն այդ օրվա համար նշանակել էր երկու պարզ ու կարճատև գործ: Լսել էին նախ որդեսպանի գործը, իսկ այժմ լսում էին թիապարտի, ռեցիդիվիստի, «իր տեղը վերադարձող ձիու» գործը: Այդ մարդը խնձոր էր գողացել, բայց այս կետը լավ ապացուցված չէր, ապացուցվածն այն էր, որ այդ մարդը արդեն մի անգամ եղել էր Տուլոնի թիարանում: Հենց այս հանգամանքն էլ վատացնում էր նրա գործը: Ճիշտն ասած հարցաքննությունն ու վկաների ցուցմունքները վերջացել էին, բայց պետք էր լավեր փաստաբանի պաշտպանողականը և հանրային մինիստրության ամբաստանազիրը, այնպես որ ժամը տասներկուսից շուտ չէր կարող վերջանալ: Մեղադրյալը հավանաբար կդատապարտվեր. դատախազը խիստ հաջողակ էր, նրա ձեռքից մեղադրյալ չէր պրծնում, դա մի խելացի երիտասարդ էր և բանաստեղծություններ էր գրում:

Բարապանը կանգնել էր դատական ատյանի հետ հաղորդակցող դռան մոտ: Ճամփորդը հարցրեց նրան.

— Պարոն, դուրը ե՞րբ կբացվի:

— Զի բացվելու,— պատասխանեց բարապանը:

— Ինչպե՞ս, նիստը վերսկսելիս դուրը չե՞ն բանա, մի՞թե նիստն ընդհատված չէ:

— Նիստը շուտով կվերսկսվի,— պատասխանեց բարապանը,— բայց դուրը չի բացվելու:

— Ինչո՞ւ:

— Որովհետև սրահը լեցուն է:

— Ինչպես թե, մի տե՞ղ էլ չկա:

— Ոչ մի տեղ. դուրը փակված է. այլևս ոչ ոք չի կարող ներս մտել:

Բարապանը մի փոքր լռությունից հետո ավելացրեց:— Երկու-երեք տեղ կա պարոն նախագահի ետևը, բայց պարոն նախագահն այնտեղ թույլ է տալիս միայն հանրային պաշտոնատարների:

Այս խոսքից հետո բարապանը կռնակը դարձրեց նրան:

Նա գլխահակ ետ քաշվեց, անցավ նախասենյակից, դանդաղորեն իջավ սանդուղքով, կարծես յուրաքանչյուր աստիճանին երկմտելով: Հավանաբար նա ինքն իր հետ խորհուրդ էր անում: Այն բուռն պայքարը, որ նախորդ օրվանից տեղի էր ունենում նրա մեջ, չէր վերջացել և ամեն բուռն նորից կրկնվում էր: Երբ հասավ սանդուղքի գավիթը՝ թները խաչաձևեց ու ու հենվեց ճաղին: Հանկարծ նա բացեց վերարկուն, հանեց ծոցատետրը, վերցրեց մատիտը և մի թուղթ պոկելով լապտերի լույսի տակ արագ գրեց հետևյալ տողը. «Պարոն Մադլեն, Մոնտրոյ-սյուռ-Մեռի քաղաքապետ»: Ապա արագաքայլ բարձրացավ սանդուղքով, ճեղքեց բազմությունը և առաջացավ ուղիղ դեպի բարապանը, թուղթը սովեց նրան և ազդեցիկ շեշտով ասաց.

— Այս թուղթը տարեք պարոն նախագահին:

Բարապանը թուղթը վերցրեց, մի հայացք նետեց վրան և հնազանդվեց:

VIII

ՊԱՏՎԻ ՄՈՒՏՔ

Մոնտրոյ-սյուռ-Մեռի քաղաքապետը բավական մեծ համբավ ուներ և չգիտեր այդ մասին: Յոթ տարուց ի վեր, երբ նրա առաքինության հռչակը լցրել էր ամբողջ ստորին Բուլոնեն, ի վերջո անցել էր այդ փոքրիկ երկրի սահմաններից և տարածվել էր հարևան երեք-չորս դեպարտամենտներում: Բացի այն խոշոր ծառայությունից, որ նա մատուցել էր իրենց կենտրոնին սև ուլունքների արդյունաբերությունը վերականգնելով, այդ քաղաքը միակը չէր Մոնտրոյ-սյուռ-Մեռի հարյուր քառասունմեկ գավառակներից ու համայնքներից, որ նրան որևէ բարեգործություն պարտական չլիներ: Նա կարողացել էր նույնիսկ կարիք եղած դեպքում օգնել և արգասավորել այլ գավառակների արդյունաբերություններին: Այդ ձևով էլ նա առիթը ներկայանալիս իր վարկով և գումարներով օգնել էր Բուլոնի շղարշի ֆաբրիկային, Ֆրեսնի վուշի մեքենայական մանարանին և Բաբերսյուռ-Կանշի կտավի հիդրավիկ մանուֆակտուրային: Ամենուրեք պատկառանքով էին արտասանում պարոն Մադլենի անունը: Արրաս ու Դուե քաղաքները նախանձում էին Մոնտրոյ-սյուռ-Մեռ փոքրիկ բախտավոր քաղաքին՝ նրա քաղաքապետի համար:

Դուեի արքայական ատյանի խորհրդականը, որ նախագահում էր Արրասի ոճրադատ ատյանի այդ նստաշրջանին, բոլորի նման ճանաչում էր այս խորապես և համատարած կերպով հարգված անունը: Երբ բարապանը թաքուն բաց անելով դատավարության դահլիճի ու խորհրդի միջև ընկած

դուռը՝ կռացավ նախագահի բազկաթոռի ետևից ու հանձնեց նրան այն թուղթը, որի վրա գրված էր մեզ ծանոթ տողը ավելացրեց. «Այս պարոնն ուզում է ներկա լինել նիստին»,— նախագահը ակնածությամբ մի աշխույժ շարժում գործեց, վերցրեց գրիչը, մի քանի բառ գրեց նույն թղթի ներքևում, տվեց բարապանին ու ասաց,— ներս հրավիրեք:

Դժբախտ մարդը, որի պատմությունն ենք անում, մնացել էր սրահի դռան մոտ միևնույն դիրքով, ինչպես բարապանն էր թողել նրան: Իր երազանքի միջից նա լսեց, որ մեկն իրեն ասում է.

— Պարոնը կբարեհաճի՞ պատիվ անել ինձ՝ հետս գալով:

Այդ նույն բարապանն էր, որ մի րոպե առաջ կոնակ էր դարձրել նրան, իսկ այժմ մինչև գետին խոնարհվելով բարևում էր և միաժամանակ թուղթը հանձնում: Նա բաց արեց այն և որովհետև անցնում էր լամպի մոտով, կարողացավ կարդալ.

«Ոճրադատ ատյանի նախագահին իր հարգանքն է մատուցում պարոն Մադլենին»:

Նա ճվեց այդ թուղթն իր մատների մեջ, կարծես թե այդ մի քանի բառը իրեն մի տարօրինակ ու դառն հետնահամ էին պատճառում:

Եվ հետևեց բարապանին:

Մի քանի րոպեից նա հայտնվեց միայնակ՝ առանձնասենյակի նմանող մի անախորժ տեսք ունեցող սենյակում, որ լուսավորված էր կանաչ գորգով ծածկված սեղանի վրա դրված երկու մոմով: Դեռ նրա ակննջին հնչում էին քիչ առաջ հեռացող բարապանի վերջին խոսքերը. «Պարոն, դուք այժմ խորհրդակցության սենյակում եք, ձեզ մնում է պտտեցնել այս դռան պղնձե կոճակը և կգտնվեք նիստերի սրահում՝ պարոն նախագահի բազկաթոռի ետևը»: Այս խոսքերը նրա հիշողության մեջ խառնվում էին քիչ առաջ անցած նեղ միջանցքների ու սև սանդուղքների տարտամ հիշողության հետ:

Բարապանը մենակ էր թողել նրան: Գերագույն րոպեն հասել էր: Նա փորձում էր ամփոփվել, բայց չէր կարողանում: Հենց այն ժամերին, երբ ամենից ավելի կարիք ունես մտքի բոլոր թևերը կյանքի կսկծալի իրականություններին կապելու, նրանք կտրվում են ուղեղում: Նա հենց այն սենյակում էր այժմ, ուր դատավորներն ազատում են կամ դատապարտում: Շվարուն հանգստությամբ նա դիտում էր այդ խաղաղ ու վտանգավոր սենյակը, որտեղ այնքան կյանքեր էին խորտակված, որտեղ շուտով իր անունն էր հնչելու և որտեղ իր ճակատագիրն էր սավառնում այդ րոպեին: Նա դիտում էր պատը, ապա դիտում էր ինքն-իրեն, զարմանալով, որ դա այդ սենյակն է, որ այդ մարդն ինքն է:

Քսանչորս ժամից ավելի էր, որ նա ոչինչ չէր կերել, ջարդվել էր սայլակի ցնցումներից, բայց ոչինչ չէր զգում. նրան թվում էր, որ ինքն ընդհանրապես ոչինչ չի զգում:

Ապա նա մոտեցավ պատին ամրացված մի սև շրջանակի, որի ապակու տակ գտնվում էր անշուշտ սխալմամբ¹³² 2-րդ տարվա հունիսի 9 թվագրված, Փարիզի քաղաքապետ և մինիստր Ժան-Նիկոլա Պաշի մի հին ինքնագիր նամակը, որով Պաշը կոմունային էր ուղարկում իրենց տներում կալանքի տակ պահվող մինիստրների ու պատգամավորների ցուցակը: Եթե որևէ մեկը տեսներ նրան ու զններ այդ վայրկյանին, անշուշտ կկարծեր, որ այդ նամակը խիստ հետաքրքրում է նրան,

¹³² Հայտնի է, որ ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ժամանակ ջնջվեց քրիստոնեական թվականությունն ու փոխվեցին ամիսների անունները, ըստ որում այստեղ ոչ թե հունիս պետք է գրված լիներ, այլ համապատասխան նոր անունը (ինչպես Ֆլորիալ, Թերմիդոր, Բրյումեր և այլն):

որովհետև նա իր աչքերը չէր պոկում դրանից և երկու-երեք անգամ կարդաց այն: Բայց կարդում էր առանց ուշադրության և անկախ իրենից ու մտածում էր Ֆանտիմի և Կոզետի մասին:

Շարունակելով մտածել, նա շուտ եկավ և նրա աչքերը հանդիպեցին դռան պղնձե կոճակին, որ իրեն բաժանում էր նիստի սրահից: Նա համարյա մոռացել էր այդ դուռը: Նրա հայացքը, որ սկզբում հանդարտ էր՝ կանգ առավ դրա վրա, մնաց սնեռված այդ պղնձե կոճակին, ապա դարձավ սարսափեցիկ ու շեշտակի և քիչ-քիչ համակվեց սարսափով: Քրտնքի կաթիլներ երևացին մազերի արանքում և հոսեցին քունքերի վրա:

Մի րոպե էլ նա ըմբոստացմամբ խառը վճռականությամբ այն աննկարագրելի շարժումը գործեց, որ նշանակում է և այնքան լավ արտահայտում. գրողը տանի, ո՞վ է ինձ ստիպում այդտեղ գնալ: Ապա թափով շուտ եկավ, տեսավ այն դուռը, որով ներս էր մտել, գնաց այդ կողմ, բաց արեց և դուրս գնաց: Այլևս նա այդ սենյակում չէր, դուրսն էր, միջանցքում, մի երկար, նեղ, աստիճաններով ու դռնակներով կտրված, ամեն տեսակ անկյուններ կազմող, դետուդեն դրված և հիվանդների ճրագի նման փոքր լապտերներով լուսավորված մի միջանցք, այն միջանցքը, որով ներս էր եկել: Նա շունչ քաշեց, ականջ դրեց, ոչ մի աղմուկ ետևում, ոչ մի աղմուկ առջևում. ապա սկսեց փախչել, կարծես հետապնդելիս լինեին:

Երբ կրկին անցավ այդ միջանցքի բազմաթիվ արմունկները՝ նորից ականջ դրեց: Միևնույն լռությունն ու միևնույն մութն էր իշխում: Նա հեռում էր, երեքում, ուստի հենվեց պատին: Քարը սառն էր, քրտինքը սառեց նրա ճակատին, նա ցնցվեց և ուղղվեց:

Այդ միջոցին, մենակ կանգնած այդ խավարում, դողալով ցրտից և գուցե այլ բանից՝ նա մտածեց:

Մտածել էր ողջ գիշերը, մտածել էր ողջ ցերեկը, իսկ այժմ միայն մի ձայն էր լսում իր մեջ, որն ասում էր՝ ավաղ:

Քառորդ ժամ անցավ այդպես: Վերջապես նա խոնարհեց գլուխը, անձկությամբ հառաչեց, թները կախ գցած ետ վերադարձավ: Քայլում էր դանդաղ ու կարծես ընկճված: Թվում էր, որ մեկը հասել է նրան փախչելիս և ետ է դարձնում:

Նորից ներս մտավ խորհրդակցությունների սենյակ: Առաջին բանը, որ նա նկատեց՝ սողնակի բռնիչն էր: Այդ կլոր և փայլուն պղնձե բռնիչը շողշողում էր նրա առջև մի զարհուրելի աստղի պես: Նայում էր դռան այնպես, ինչպես գառն է նայում վագրի աչքերին:

Եվ նրա աչքերը չէին կարող պոկվել դրանից:

Մերթ-մերթ նա մի քայլ էր անում և մոտենում էր դռանը:

Եթե ականջ դներ՝ կլներ խառնակ մրմունջի նմանող աղմուկը հարևան դահլիճում: Բայց նա ականջ չէր դնում և չէր լսում:

Հանկարծ, ինքն էլ չիմանալով ինչպես, կանգնեց դռան առջև: Ջղաձգորեն բռնեց կոճակը, և դուռը բացվեց:

Նա դատական սրահում էր:

IX

ՄԻ ՎԱՅՐ, ՈՒՐ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՄՈՋՍՈՒՆՔՆԵՐ ՁԵՎԱՎՈՐՎԵԼՈՒ ՎՐԱ ԵՆ

Նա մի քայլ առաջացավ, դուռը մեքենայորեն փակեց իր ետևից և մնաց կանգնած՝ դիտելով իր շուրջը:

Դա մի բավական ընդարձակ և հազիվ լուսավորված սրահ էր, մերթ շարժվելով լի, մերթ թողնելով լի լուռ և, որտեղ քրեական դատի ձևականությունները զարգանում էին բազմության առջև իրենց ողջ ճղճիմ ու սգալի ծանրությամբ:

Սրահի այն ծայրում, ուր ինքն էր գտնվում, դատավորները մտացրիվ տեսքով, մաշված պաշտոնագգեստով՝ եղունգներն էին կրծում կամ թարթիչները փակում. մյուս ծայրում ցնցոտիներ հագած մի բազմություն, ամեն դիրքով կանգնած փաստաբաններ, պարկեշտ տեսքով ու խստադեմ զինվորներ, պատերի տախտակամածը հին ու բծերով ծածկված, առաստաղը կեղտոտ, սեղաններ՝ ծածկված ավելի շուտ դեղին, քան կանաչ կտորներով, ձեռքի հպումներից սևացած դռներ, պատերին խփված գամերից կախված մի քանի ճրագներ, որ ավելի ծուխ, քան լույս էին արձակում. սեղանների վրա պղնձե աշտանակների մեջ դրված մոմեր. աղջամուղջ, տգեղություն ու տխրություն, իսկ այդ բոլորից առաջանում էր խստամբեր ու վեհ տպավորություն, որովհետև մարդ այդտեղ զգում էր այն մարդկային մեծ բանը, որ կոչվում է օրենք և այն աստվածային մեծ բանը, որ կոչվում է արդարադատություն:

Ամբոխից ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրան: Բոլոր հայացքներն ուղղված էին դեպի մի կետ, դռան հենված փայտե նստարանին, որը դրված էր նախագահի ձախ կողմը՝ պատի երկայնքին: Այդ նստարանի վրա, որ լուսավորված էր բազմաթիվ մոմերից ընկնող լույսով, մի մարդ կար՝ ժանդարմների միջև նստած:

Այդ մարդը նա էր:

Մաղլենը նրան չորոնեց, այլ տեսավ: Նրա աչքերը բնականաբար գնացին այնտեղ, կարծես նախօրոք իմանալ, թե ուր է այդ արարածը:

Նրան թվաց, որ իրեն է տեսնում, ծերացած ու թեև ոչ բոլորովիննման իր դեմքին, բայց և այնպես դիրքով ու տեսքով խիստ նման, նույն բիզ-բիզ տնկված մազերով, անհանգիստ ու խարտյաշ բիբերով, նույն բլուզով, որպիսին նա հագել էր Դիյն մտնելու օրը, ատելությամբ լցված ու հոգում պահած այն զզվելի գանձը սև մտքերի, որ տասնինը տարի շարունակ հավաքել էր թիարանի սալահատակների վրա:

Նա ցնցվելով մտածեց. «Աստված իմ, ես է՞լ այսպես կդառնամ»:

Այդ արարածը մոտ վաթսույն տարեկան էր երևում և ինչ-որ գոեհիկ, ապուշ ու ահաբեկ բան ուներ:

Դռան բաց ու խուփ ձայնի վրա այդտեղ նստողները սեղմվեցին տեղ տալու համար, նախագահը գլուխը շրջեց և հասկանալով, որ մտնող անձնավորությունը Մոնտրոյ-սյուռ-Մեդի քաղաքապետն է՝ բարևեց նրան: Դատախազը, որ պարոն Մաղլենին հաճախ էր տեսել Մոնտրոյ-սյուռ-Մեռում՝ իր պաշտոնի բերմամբ այնտեղ գնալիս, ճանաչեց նրան և նույնպես բարևեց: Ինքը հազիվ նկատեց այդ ողջույնները: Նա ենթակա էր մի տեսակ զգայախաբության և նայում էր:

Դատավորներ, քարտուղար, ժանդարմներ, դաժանորեն հետաքրքրասեր գլուխների մի կույտ, այս բոլորը մի անգամ տեսել էր նա արդեն, վաղուց, քսանյոթ տարի առաջ: Նորից էր գտնում այս

չարագուշակ բաները. այդտեղ էին դրանք, շնչում էին, գոյություն ունեին: Դա այլևս հիշողության ճիգի արգասիքը չէր կամ թե մտքի ստեղծած տեսիլքը, դրանք իսկական ժանդարմներ և իսկական դատավորներ էին, իսկական բազմություն էր, միս ու արյուն ունեցող մարդիկ: Այժմ նա տեսնում էր, որ իր շուրջը կենդանացել են իր հրեշավոր անցյալի կերպարանքներն իրականության ողջ անողորմությամբ. ամեն ինչ լրիվ էր:

Այս ամենը փոված էր նրա առջև բոլորովին բաց կերպով:

Նա սարսափեց դրանից, փակեց աչքերը և իր հոգու ամենախոր կետում գոչեց՝ երբե՛ք:

Եվ բախտի մի ողբերգական խաղով, որ սարսռեցնում էր նրա բոլոր մտքերը ու գրեթե խենթացնում էր նրան,— մի ուրիշ Ժան Վալժան նստել էր այնտեղ: Մարդը, որին դատում էին, Ժան Վալժան էր անվանվում ամենքի կողմից:

Իր աչքերի առջև, որպես մի անլուր տեսիլք, տրվում էր իր կյանքի ամենագարհուրելի թուլեի ներկայացումը, որ խաղում էր այդ ուրվականը:

Ամեն բան նույնությամբ կար այդտեղ. նույն իրադրությունն էր, միևնույն գիշերային ժամը, դատավորների, զինվորների ու հանդիսատեսների գրեթե նույն դեմքերը. միայն թե նախագահի գլխավերևում մի խաչելություն կար, մի բան, որ պակասում էր իր դատապարտության ժամանակի դատարաններից: Երբ դատում էին իրեն՝ աստված բացակա էր:

Սարսափած, թե կարող են տեսնել իրեն, նա ընկավ իր ետևում գտնվող աթոռի վրա: Նստելով, իր դեմքը ողջ սրահից թաքցնելու համար, օգտվեց նախագահի սեղանի վրա դրված սովարաթղթի կտորից: Այժմ առանց տեսնվելու՝ կարող էր տեսնել: Քիչ-քիչ իրեն գտավ, համակվեց իրականության զգացումով և հասավ հանդարտության այն կետին, երբ կարելի է լսել:

Պարոն Բամատաբուան երդվյալների թվում էր:

Փնտրեց Ժավերին, բայց չտեսավ: Վկաների նստարանը ծածկված էր նրանից քարտուղարի սեղանով և, բացի այդ, ինչպես ասացինք, սրահը հագիվ թե լուսավորված էր:

Այն թուլեին, երբ նա մտավ ներս, մեղադրյալի պաշտպանը վերջացնում էր իր պաշտպանողականը: Ամենքի ուշադրությունը խիստ լարված էր. արդեն երեք ժամ էր, ինչ քննվում էր այդ գործը: Երեք ժամից ի վեր այդ բազմությունը տեսնում էր, որ մի զարհուրելի նմանության ծանրության ներքո քիչ-քիչ կռանում է մի մարդ, մի անծանոթ, մի թշվառական էակի տիպ, խորապես ապշած և խորապես ճարպիկ: Այդ մարդը, ինչպես գիտենք, մի թափառաշրջիկ էր և բռնվել էր դաշտում, երբ հասած խնձորներով բեռնավորված մի ճյուղ էր տանում. այդ ճյուղը կոտրված էր մոտակայքում գտնվող և Պիերոն անունը կրող փակ այգուց: Ո՞վ էր այդ մարդը: Մի հարցաթերթիկ էր լցված, վկաներ էին կանչված ու լսված, նրանք բոլորն էլ համակարծիք էին, և բացի այդ, կողմերի վիճաբանությունը լույս էր սփռել: Մեղադրականն ասում էր. լոկ պտուղ գողացող չէ, լոկ ասպատակող չէ մեր առջև կանգնած մարդը, այլ մի բանդիտ, աքսորից փախած թիապարտ, նախկին տաժանակիր, խիստ վտանգավոր սրիկա ու չարագործ Ժան Վալժան անունով, որին արդարադատությունը վաղուց է փնտրում և, որը Տուլոնի թիարանից ութ տարի առաջ դուրս գալիս, զենքը ձեռքին, մեծ ճանապարհի վրա կողոպտել է Փոքրիկ Ժերվե անունով մի սավոյացի երեխայի, ոճրագործություն, որ նախատեսված է քրեական օրենսգրքի 383 հոդվածով, որի համար մենք իրավունք ենք վերապահում մեզ հետապնդում կատարել հետո՝ երբ նրա ինքնությունը իրավաբանորեն ընդունվի: Այժմ նա մի նոր գողություն է կատարել, որով

կրկնահանգագործության դեպք է առաջացել: Դատապարտեք նրան այս վերջին դեպքի համար. ավելի ուշ նա կդատվի հին հանցանքի համար:

Սակայն այս մեղադրանքի և վկաների համակարծրության առջև մեղադրյալը զարմացած էր երևում: Նա այնպիսի շարժումներ ու նշաններ էր անում, որ նշանակում էին ոչ և կամ թե նայում էր առաստաղին: Խոսում էր նա դժվարությամբ, պատասխանում էր շփոթվելով, բայց ոտքից-գլուխ, ողջ անձով ժխտում էր: Նա մի ապուշ էր իր շուրջը պատերազմելու համար շարված այդ բոլոր խելացիների նկատմամբ և կարծես օտարական լինել իրեն բոնող այդ հասարակության մեջ:

Սակայն խիստ սպառնալի ապագա էր սպասում նրան և հավանականությունն ամեն բույե աճում էր, իսկ այդ բազմությունը նրանից ավելի անձկությամբ էր նայում աղետներով լի այդ դատավճռին, որ հետզհետե ավելի էր կտանում նրա վրա: Կար նաև մի չստուգված հանգամանք, որը թիարանի ետևում նշմարել էր տալիս մահապատժի հնարավորությունը, եթե ինքնությունը հաստատվեր և, եթե փոքրիկ Ժերվեի գործը հետագայում վերջանար դատապարտությամբ: Ո՞վ էր ուրեմն այս մարդը, ի՞նչ բնույթ ուներ նրա անզգայությունը, պակասամտություն՞ն էր դա, թե՞ խորամանկություն: Լա՞վ էր հասկանում, թե՞ ոչինչ չէր հասկանում: Այս հարցումներն էին զբաղեցնում բազմությանը և կարծես թե նաև դատական կազմին: Այս դատավարության մեջ և սարսափեցնող, և դավադրող բան կար. դրաման ոչ միայն մթագին էր, այլ նաև մութ էր:

Դատապաշտպանը բավական լավ էր պաշտպանել՝ այն գավառական լեզվով, որ երկար ժամանակ հանդիսացել է դատաբեմի ճարտասանությունը և, որ առաջներում գործածում էին բոլոր փաստաբանները՝ թե Փարիզում, թե Ռոմորանտեում կամ Մոնբրիզում, իսկ այժմ դասական դարձած լինելով՝ գործ է ածվում միայն դատական աստիճանի պաշտոնական հռետորների կողմից, որոնց նա համարում է իր ծանր հնչեղությամբ ու վեհափառ ձևերով. դա մի լեզու է, որի մեջ մարդը, ինչպես նաև կինը կոչվում է ամուսին, Փարիզը՝ արվեստների ու քաղաքակրթության կենտրոն, թագավորը՝ միապետ, գերապատիվ եպիսկոպոսը՝ սրբազան քահանայապետ, դատախազը՝ հանրային վրեժի ճարտասան թարգման, պաշտպանողականը՝ քիչ առաջ լսած շեշտերը, Լյուդովիկոս 14-րդի դարը՝ մեծ դար, թատրոնը՝ Մելպոմենի տաճար, թագավորող ընտանիքը՝ մեր արքաների օգոստոսափառ արյունը, համերգը՝ երաժշտական հանդես, դեպարտամենտի հրամանատար գեներալը՝ փառապանծ մարտիկը, որ և այլն, հոգևոր դպրոցի աշակերտները՝ այս քնքուշ դետալները¹³³, լրագրերին վերագրված սխալները՝ զրպարտություն, որ իր թույնն է թորում այս օրգանների պունակներում և այլն, և այլն:

Փաստաբանն սկսել էր իր ճառը խնձորի գողությունը բացատրելուց՝ բարձր ոճով արտահայտելու դժվարին գործ, բայց նույնիսկ Բենիյն Բոսյունեն էլ ստիպված է եղել մի անգամ դամբանական կարդալիս ակնարկություն անել հավի մասին և փառավորապես էլ դուրս է եկել այդ գործից: Փաստաբանը հաստատել էր, որ խնձորի գողությունը նյութապես չէր ապացուցված: Իր պաշտպանյալին, որին՝ պաշտպանը լինելու բերմամբ՝ համառում էր Շանմաթիյո անվանել, ոչ ոք չէր տեսել պատը բարձրանալիս կամ ճյուղը կոտրելիս: Նրան ձերբակալել էին այդ ճյուղի հետ միասին (որ փաստաբանն ավելի հաճույքով ուտ էր անվանում), բայց նա ասում էր, թե գտել է գետնին ու վերցրել: Կա՞ր այդպիսի դրա հակառակ ապացույցը: Այդ ճյուղն անկասկած կոտրել ու պոկել էր պատը բարձրանալուց հետո, ապա վախեցած ասպատակը գցել էր գետին, որն է գող, իհարկե, կար: Բայց ի՞նչն էր ապացուցում, որ այդ գողը Շանմաթիյոն էր: Միայն մի բան՝ նրա նախկին տաժանապարտ լինելու հանգամանքը: Փաստաբանը չէր ժխտում, որ այս հանգամանքը դժբախտաբար գրեթե ապացուցված էր. մեղադրյալն ապրել էր Ֆավրոլում և ծառ էտող էր եղել.

¹³³ Կրոնի սպասավորներ Հին Հրեաստանում:

Շանմաթիյո անունը հավանաբար ծագած կլինե՞ր Ժան Մաթիյո անունից. այս բոլորը ճիշտ էր և վերջապես չորս վկա աներկբայորեն և հաստատապես ճանաչում էին Շանմաթիյոյին, որպես թիապարտ Ժան Վալժան, այս ցուցմունքներին ու վկայություններին փաստաբանը կարողանում էր հակադրել միմիայն իր պաշտպանյալի բացասումը՝ շահագրգռված բացասումը, բայց մի բոլոր էնթադրելով, որ նա տաժանապարտ Ժան Վալժանն է, սա ապացուցո՞ւմ էր արդյոք, որ նա խնձոր գողացողն էր: Մա լավագույն դեպքում վարկած է, բայց ոչ ապացույց: Ճիշտ է, որ մեղադրյալն ընդգրկել էր «պաշտպանության մի վատ սխտեմ» և պաշտպանը «բարեխղճորեն» պարտավորված էր համաձայնել դրան: Նա համառորեն ժխտում էր ամեն բան, թե գողությունը, թե իր տաժանակիր լինելը: Այս վերջին կետի մասին խոստովանելն անպայման ավելի լավ կլինե՞ր և կառաջացներ դատավորների ներողամտությունը, փաստաբանն այդ խորհուրդը տվել էր նրան, բայց մեղադրյալը համառորեն հրաժարվել էր դրանից, կարծելով, անշուշտ, որ կփրկվի ամեն բան ժխտելով: Պետք չէ՞ր արդյոք նկատի առնել նրա կարճամտությունը, քանի որ այդ մարդն ակներև կերպով տկարամիտ էր: Երկար տառապանքը թիարանում և թիարանից դուրս էլ երկարատև թշվառությունը նրան անբանացրել էին և այլն, և այլն: Նա վատ էր պաշտպանվում, բայց արդյո՞ք դա իրավունք էր տալիս նրան դատապարտելու: Գալով Փոքրիկ Ժերվեի գործին՝ փաստաբանն այն վիճարկելու կարիք չէր զգում, որովհետև դա բնավ էլ գործի մեջ չէր մտնում: Փաստաբանը եզրափակելով ադերսում էր երդվյալներին ու դատարանին, որ, եթե Ժան Վալժանի ինքնությունը թվում էր ապացուցված, ապա կիրառել նրա նկատմամբ ազատված թիապարտների համար նախասահմանված ռստիկանական սահմանափակումներ և ոչ թե կրկնահանցագործ տաժանակրի համար նախասահմանված զարհուրելի պատիժը:

Դատախազն առարկեց պաշտպանին բուռն ու պերճախոս ճառով, ինչպես բոլոր դատախազներն են ճառում:

Նա շնորհավորեց պաշտպանին նրա «լոյալության» համար և ըստ իր սովորության օգտվեց այդ լոյալությունից: Նա հարվածեց մեղադրյալին հենց փաստաբանի արած զիջումներով: Փաստաբանը կարծես համաձայնում էր, որ մեղադրյալը Ժան Վալժանն է: Եվ դատախազը պինդկալով դրան. ուրեմն այդ մարդը Ժան Վալժանն է, այս հանգամանքը մեղադրությունն ստացել էր և այլևս չէր կարող հերքվել: Այդտեղ, մի ճարպիկ անտոնոմազ կատարելով՝ դատախազը շոշափեց ոճրագործության աղբյուրներն ու պատճառները և որոտաց ռոմանտիկական դպրոցի անբարոյականության դեմ, մի դպրոց, որ այդ ժամանակ դեռ իր արշալույսում էր և կոչվում էր սատանական դպրոց, որպիսի անուն շնորհել էին նրան «Քոտիգիենի» և «Օրիֆլամի» քննադատները: Որոշ ճշգրտությամբ այս հոռի գրականության ազդեցությանը վերագրեց դատախազը Շանմաթիյոյի, կամ ավելի ճիշտ Ժան Վալժանի ոճիրը: Այս դիտողություններն սպառելուց հետո նա անցավ հենց իրեն՝ Ժան Վալժանին: Ո՞վ էր Ժան Վալժանը: Եվ սկսում է Ժան Վալժանի նկարագրությունը. մի նողկալի ճիվաղ և այլն: Այս տեսակ նկարագրությունների տիպարը կա Թերամենի պատմվածքում, որը թեև ողբերգության համար օգտակար չէ, բայց ամեն օր խոշոր ծառայություններ է մատուցում դատավորական պերճախոսության: Հանդիսականներն ու երդվյալները «ցնցվեցին»: Նկարագրությունը վերջացնելուց հետո դատախազը շարունակեց մի այնպիսի հոետորական շարժումով, որ ստեղծված էր ծայրաստիճան գրգռելու հաջորդ առավոտվա Նահանգական Թերթի խանդավառությունը:— Եվ սա մի տիպ է, և այլն, և այլն, և այլն, թափառաշրջիկ է, մուրացկան, առանց ապրուստի միջոցների, և այլն, և այլն, իր անցյալ կյանքով վարժված է հանցագործ արարքների և թիարանում մնալուց հետո քիչ է ուղղվել, ինչպես այդ ապացուցում է Փոքրիկ Ժերվեի վրա կատարած ոճիրը, և այլն, և այլն,— այսպիսի մի մարդ է ահա, որ բռնվելով հանրային ճանապարհի վրա գողություն կատարելիս, մագլցած պատից մի քանի քայլ հեռու և դեռ գողացած առարկան ձեռքը բռնած՝ բացասում է ոճրագործությունը, գողությունը, պատ

բարձրանալը, բացասում է ամեն բան, բացասում է իր անունը, մինչև իսկ իր ինքնությունը: Բացի հարյուրավոր այլ ապացույցներից, որոնց մենք չէինք վերադառնա՝ չորս վկա ճանաչում են նրան.— Ժավերը, ուստիկանության անարատ վերահսկիչ Ժավերը և նրա՝ մեղադրյալի խայտառակության նախկին երեք ընկերները՝ տաժանապարտներ Բրենն, Շնիլդիոն ու Կոշպայը: Ի՞նչ է հակադրում նա այս ջախջախիչ համակարծությանը: Ժխտում է: Ինչպիսի՜ համառություն: Պարոն երդվյալներ, դատաստան կտրեք, և այլն, և այլն:

Երբ դատախազը խոսում էր, մեղադրյալը բերանը բաց լսում էր և արտահայտում էր այնպիսի զարմանք, որի մեջ հիացմունք էլ կա: Ակներն էր, որ նա զարմացած էր այն բանից, որ կարող է այդպես ճարտասան մարդ լինել աշխարհում: Երբեմն-երբեմն, մեղադրանքի «ամենաագոյ» բույներին, այն պահին, երբ ճարտասանությունը չի կարող զսպվել ու հորդում է որպես նշավակիչ մակդիրների հեղեղ և մրրկի նման պարուրում մեղադրյալին՝ նա դանդաղորեն երերում երգլուխն աջից ձախ,— մի տեսակ թախծալի ու համր բողոք, որով նա բավարարվում էր վիճաբանությունների հենց սկզբից: Երկու-երեք անգամ նրան ամենից ավելի մոտ գտնվող հանդիսականները լսեցին, նա կամացուկ ասում էր. «Ահա թե ինչ է նշանակում պարոն Բալուին չհարցնել»: Դատախազը երդվյալներին նկատել տվեց այս ապուշ, նախօրոք մտածված վերաբերմունքը, որ ցույց է տալիս ոչ թե տկարամտություն, այլ համարձակություն, խորամանկություն, արդարադատությանը խաբելու սովորություն և, որ իր ամբողջ լույսով երևան է բերում այս մարդու «խոր ապականությունը»: Նա վերջացրեց իր ճառը՝ վերապահում անելով Փոքրիկ Ժերվեի գործի մասին և խիստ դատապարտություն պահանջելով:

Ինչպես հիշում ենք, այդ կետը պահանջում էր ցմահ տաժանակիր աշխատանք:

Պաշտպանը վեր կացավ, սկսեց հաճոյախոսել «պարոն դատախազին» նրա «սքանչելի խոսքի» առթիվ, ապա առարկեց ինչքան կարող էր, բայց թուլանում էր. ակներն էր, որ հողը փախչում էր նրա ոտքի տակից:

X

ԲԱՑԱՍՈՒՄՆԵՐԻ ՄԻՍԵՄԸ

Վիճաբանությունները փակելու բույնն հասել էր: Նախագահը կարգադրեց մեղադրյալին կանգնել և սովորական դարձած հարցումն ուղղեց նրան. «Որն է բան ունե՞ք ավելացնելու ձեր պաշտպանողականին»:

Մարդը՝ կանգնած ու ձեռքերի մեջ զգվելի գդալ ոլորելով զբաղված՝ կարծես չլսեց:

Նախագահը կրկնեց հարցումը:

Այս անգամ մարդը լսեց և կարծես հասկացավ, ապա քնից արթնացողի շարժում գործեց, աչքերը շուտ ածեց չորսբոլորը, նայեց հասարակությանը, ժանդարմներին, իր փաստաբանին, ատյանին, ճիվադային բռունցքը դրեց իր նստարանի առջև դրված պատվարի եզրին, նորից նայեց և հանկարծ հայացքը սևեռելով դատախազին՝ սկսեց խոսել: Կարծես ժայթքում լինե՞ր դա: Անկապակից, անգուսպ, իրար խփվելով ու խառնիխառն բառերը դուրս էին թռչում նրա բերանից՝ կարծես թե նրանք բոլորն էլ միաժամանակ խոնվում էին այնտեղ միասին դուրս գալու համար: Եվ նա ասաց.

— Ասելիքս այս է: Ես սայլագործ էի Փարիզում, նույնիսկ կարող եմ ասել, որ պարոն Բալուի մոտ էի աշխատում: Ծանր է այդ գործը, միշտ էլ բացօթյա ես աշխատում, բակերում, իսկ լավ տերերի մոտ՝ ծածկի տակ, բայց ոչ մի դեպքում փակ արհեստանոցում, որովհետև ընդարձակ տեղ է պետք, հասկանո՞ւմ եք: Ձմռանն այնքան ես մրսում, ձեռքերդ իրար ես խփում տաքանալու համար, բայց տերերը թույլ չեն տալիս, ժամանակ է կորչում՝ ասում են: Երկաթ շոշափել, երբ սալահատակը սառույցով է պատած՝ խիստ ծանր է: Եվ դա շատ շուտ է մաշում մարդուն: Երիտասարդ տարիքիդ արդեն ծերանում ես այդ աշխատանքում: Քառասուն տարեկան հասնելիս՝ մարդը վերջացած է: Իսկ ես հիսուններեք էի և ինչքան ասես ցավ ունեի: Բացի դրանից, այնքան չար են բանվորները.— երբ մարդն այլևս երիտասարդ չէ՝ անվանում են ծեր տխմար, պառաված հիմար և այլն: Ես այլևս օրական երեսուն սուից ավելի չէի կարող վաստակել, ինձ ամենից քիչ էին վճարում, տերերն օգտվում էին իմ տարիքից: Դրա հետ միասին, մի աղջիկ ունեի, որ լվացք էր անում գետում և մի քիչ էլ նա էր փող աշխատում: Դա բավականացնում էր մեզ՝ երկուսիս: Նա էլ չարաչար տանջվում էր, ողջ օրը մինչև մարմնի կեսը տաշտակի մեջ, անձրևի ու ձյան տակ, երբ քամին շառաչում է դեմքիդ, երբ ամեն ինչ սառում է, միևնույն է պետք է լվալ.— կան մարդիկ, որ շատ սպիտակեղեն չունեն և անմիջապես պահանջում են, իսկ եթե չլվաս՝ կկորցնես հաճախորդներդ: Տախտակները լավ չեն միացված իրար և ամեն կողմից ջրի կաթիլներն ընկնում են վրադ: Շրջագգեստներդ ամբողջովին թրջվում են՝ թե ներսից, թե դրսից, թափանցում է: Մի ժամանակ էլ աղջիկս աշխատեց «Կարմիր երեխաներ» լվացքատանը, որտեղ ջուրը ծորակներով է գալիս, այլևս տաշտակի մեջ չես թաղվում, լվանում ես առջևիդ ծորակի տակ և ցայում հետևի ավազանում: Եվ, որովհետև փակ տեղ է դա, ապա մարմինդ այնքան չի մրսում: Բայց այդտեղ էլ տաք ջրի այնպիսի վատ գոլորշի կա, որ աչքերը կուրացնում է: Նա վերադառնում էր երեկոյան ժամը յոթին և այնպես հոգնած էր լինում, որ անմիջապես քնում էր: Ամուսինն էլ ծեծում էր նրան: Եվ նա մեռավ: Մենք երբեք էլ բախտավոր չենք եղել: Նա աշխատասեր աղջիկ էր, պարելու չէր գնում և շատ հանդարտ էր: Հիշում եմ, մի ուտիք օր, երեքշաբթի, նա պառկեց երեկոյան ժամը ութին: Ահա այս է բոլորը: Ճիշտ եմ ասում: Կարող եք հարցնել: Օ՛, իհարկե, հարցնե՛լ, ի՛նչ հիմարն եմ, Փարիզը վիհ է, ո՞վ է ճանաչում հայր Շանմաթիոյին: Բայց և այնպես, կրկնում եմ, պարոն Բալուն: Իմացեք պարոն Բալուից: Սրանից հետո է՛լ չգիտեմ, թե ինչ եք ուզում ինձնից:

Մարդը լռեց ու մնաց կանգնած: Այս խոսքերն ասել էր նա բարձր, արագ ու խոպոտ, կարծր ու ժանգոտ ձայնով, մի տեսակ զայրացած ու վայրենի միամտությամբ: Մի անգամ միայն ընդհատեց՝ բարևելու համար բազմությունից մի մարդու: Հավաստումների նմանվող խոսքերը, որ նա կարծես նետում էր իր առջև բախտապալեն, վերադառնում էին իրենց գկոտոցի նման և դրանցից յուրաքանչյուրին նա ավելացնում էր այն շարժումը, որ փայտահատն է անում փայտ ձեղքելիս: Երբ նա վերջացրեց՝ լսարանը հռիռաց: Նա նայեց հասարակությանը և տեսնելով, որ ծիծաղում են, հասկանալով, թե բանն ինչ է, ինքն էլ սկսեց ծիծաղել:

Սգալի էր այդ պատկերը:

Նախագահը, ուշադիր ու բարյացակամ մի մարդ, ձայնը բարձրացրեց:

Նախ հիշեցրեց «պարոնայք երդվյալներին», որ «պարոն Բալուն, սայլագործարանի նախկին տերը, որի մոտ մեղադրյալն ասում է, թե աշխատել է, անօգուտ կերպով հիշատակվեց: Նա սնանկացել է և նրան հնարավոր չէ գտնել»: Ապա դառնալով դեպի մեղադրյալը, հրավիրեց լսել այն, որ ասելու էր և ավելացրեց. «Դուք այժմ այնպիսի դրության մեջ եք, որ անհրաժեշտ է լավ մտածել: Ամենածանր կասկածներ կան ձեզ վրա և կարող են շատ լուրջ հետևանքներ առաջացնել: Մեղադրյալ, ձեր իսկ շահերի համար, վերջին անգամ հարցապնդում եմ հստակորեն բացատրել հետևյալ երկու կետերը. նախ պատասխանեք՝ այդ կամ ոչ, բարձրացե՞լ եք Պիերոն փակ այգու պատը, կոտրե՞լ եք ճյուղը և

գողացել խնձորները, այսինքն՝ կատարել պատվար հաղթահարելով գողություն անելու ոճիրը, երկրորդ՝ այդ կամ ոչ, դուք ազատագրված տաժանապարտ Ժան Վալժանն եք:

Մեղադրյալը թափահարեց գլուխը հաստատական ձևով, նման այն մարդուն, որ լավ է հասկացել և գիտե, թե ինչ է պատասխանելու: Նա բաց արեց բերանը, դարձավ դեպի նախագահն ու ասաց.

— Ամենից առաջ...

Ապա նայեց իր գդակին, նայեց առաստաղին ու լռեց:

— Մեղադրյալ,— խիստ ձայնով վրա տվեց դատախազը,— ուշադիր եղեք: Դուք չեք պատասխանում ձեզ տրված հարցին: Ձեր հուզմունքը դատապարտում է ձեզ: Ակներն է, որ դուք Շանմաթիյո չեք կոչվում, որ դուք տաժանապարտ Ժան Վալժանն եք՝ թաքնված նախ Ժան Մաթիյո անվան տակ, որ ձեր մոր անունն է, որ գնացել եք Օվերն, որ ծնվել եք Ֆալբրուլում, ուր էտոդ եք եղել: Ակներն է, որ պատվար բարձրանալու միջոցով հասած խնձոր եք գողացել Պիերոն փակ այգուց: Պարոն երդվյալները կգնահատեն:

Մեղադրյալը նորից նստել էր, բայց թափով վեր կացավ՝ հենց որ դատախազն ավարտեց և գոչեց.

— Դուք շատ չա՛ր եք, այ թե ինչ էի ուզում ասել: Սկզբում չհիշեցի, որ ասեմ: Ոչինչ չեմ գողացել: Ես այն մարդկանցից եմ, որոնք ամեն օր ուտելու բան չեն ունենում: Գալիս էի էլիից և քայլում էի դաշտով, որ տեղատարափից հետո բոլորովին դեղնել էր, նույնիսկ ջրակույտերն իրենց ափերից դուրս էին եկել և ավազի միջից միայն խոտիփոքր շյուղեր էին դուրս ցատկել, այն էլ ճամփի եզրին. գետնին մի կոտրած ճյուղ գտա, որի վրա խնձորներ կային. վերցրի այդ ճյուղը՝ առանց իմանալու, որ այդպիսի փորձանք կբերի գլխիս: Երեք ամիս է, որ բանտում եմ և ինձ քաշքշում են: Դրանից հետո էլ ինչ կարող եմ ասել, խոսում են իմ դեմ, ասում՝ պատասխանիր. ժանդարմը, որ լավ տղա է, խփում է արմունկիս ու կամացուկ ասում՝ դե, պատասխանիր: Ես չեմ կարող բացատրել, դպրոց չեմ գնացել, խեղճ մարդ եմ: Ահա թե ինչ սխալ եմ անում, երբ չեմ ուզում տեսնել այդ բանը: Ես գողություն չեմ արել, վերցրել եմ գետնին ընկած բանը: Ասում եք Ժան Վալժան, Ժան Մաթիյո: Այդ մարդկանց չեմ ճանաչում: Գյուղացիներ են երևի: Ես աշխատել եմ պարոն Բալուի մոտ, հիվանդանոցի պողոտայում: Իմ անունը Շանմաթիյո է: Դուք շատ չարամիտ եք, երբ ասում եք, թե որտեղ եմ ծնվել: Ես ինքս չգիտեմ, թե որտեղ եմ ծնվել: Ամեն մարդ հո տուն ունի, որ այդտեղ աշխարհ գա. այդպես շատ ավելի հարմար կլիներ: Ես կարծում եմ, որ հայրս ու մայրս ճանապարհների վրա ապրող մարդիկ էին: Այդ էլ չգիտեմ: Երբ փոքր էի, ինձ անվանում էին Ճստիկ, այժմ անվանում են Ծերուկ: Ահա իմ կնունքի անունները: Ընդունեցեք սա ինչպես ուզում եք: Ասում եք, թե եղել եմ Օվերնում, Ֆալբրուլում, գրո՛ղը տանի: Հետո ինչ, չի՞ կարելի լինել Օվերնում կամ Ֆալբրուլում՝ առանց թիարանում եղած լինելու: Ձեզ ասում եմ, որ գողություն չեմ արել, որ ես հայր Շանմաթիյոն եմ: Եղել եմ պարոն Բալուի մոտ և բնակարան եմ ունեցել: Ձեր հիմարություններով ինձ վերջիվերջո ձանձրացնում եք: Չեմ հասկանում, թե ինչու բոլորդ էլ կատաղածների նման ընկել եք ետևիցս:

Դատախազը, որ մնացել էր կանգնած՝ դիմեց նախագահին.

— Պարոն նախագահ, նկատի ունենալով այն խառնափնթոր, բայց չափազանց ճարպիկ բացասումները, որ մեղադրյալն ասում է՝ ցանկանալով ապուշ համարվել, թեև չի հասնելու դրան՝ մենք զգուշացնում ենք նրան այս առթիվ.— մենք խնդրում ենք՝ եթե կբարեհաճեք և, եթե դատական կազմը բարեհաճի նորից կանչել այս ատյան դատապարտված Բրեկին, Կոշպային ու Շնիլդիյոյին և

նուստիկանության վերահսկիչ Ժավերին և վերջին անգամ հարցապնդել նրանց մեղադրյալ տաժանապարտ Ժան Վալթանի ինքնության առթիվ:

— Ես նկատել եմ տալիս պարոն դատախազին,— ասաց նախագահը,— որ նուստիկանության վերահսկիչ Ժավերը, իր պարտականությունների բերմամբ կանչվելով հարևան գավառակներից մեկի կենտրոն, հեռացել է նիստից և նույնիսկ քաղաքից՝ իր ցուցմունքը տալուց անմիջապես հետո: Այդ թույլտվությունը մենք շնորհեցինք նրան՝ պարոն դատախազի և մեղադրյալի պաշտպանի բարեհաճությամբ:

— Ճիշտ է, պարոն նախագահ,— շարունակեց դատախազը:— Քանի որ պարոն Ժավերը բացակա է, ես կարծում եմ, որ պարտավոր եմ իշխեցնել պարոն երդվյալներին, թե ինչ ասաց նա այստեղ մի քանի ժամ առաջ: Ժավերը հարգված մարդ է և իր խիստ ու ճշգրիտ ազնվությամբ պատիվ է բերում ստորին, բայց կարևոր պաշտոններին: Մի քանի խոսքով կրկնեմ նրա ցուցմունքը. «Ես նույնիսկ կարիք չունեմ մեղադրյալի բացասումները հերքող բարոյական վարկածների ու նյութական ապացույցների: Ես նրան կատարելապես ճանաչում եմ: Այս մարդը Շանմաթիյո չի կոչվում. սա խիստ չար և չափազանց վտանգավոր նախկին տաժանապարտ է Ժան Վալթան անունով: Պատիժը լրանալիս դժվարությամբ ազատ արձակեցին նրան: Նա տասնինը տարի տաժանակիր աշխատանք է կատարել մեծ գողության համար: Հինգ կամ վեց անգամ նա փորձել է փախչել: Բացի փոքրիկ Ժերվեի և Պիերոն այգու գողություններից, ես կասկածում եմ նրան՝ նորին մեծություն Դիյնի հանգուցյալ եպիսկոպոսին կողոպտելու համար: Նրան հաճախ տեսել եմ այն ժամանակ, երբ Տուլոնի թիարանի պահակապետի օգնական էի: Կրկնում եմ, որ կատարելապես ճանաչում եմ նրան»:

Այս ճշգրիտ հայտարարությունը կարծես ուժեղ տպավորություն գործեց հասարակության և դատական կազմի վրա: Դատախազը վերջացրեց պնդելով, որ Ժավերի բացակայության պատճառով, մյուս երեք վկաները՝ Բրենեն, Շնիլդիյոն և Կոշպայը նորից լսվեն և հանդիսավորապես հարցաքննվեն:

Նախագահը հրաման տվեց բարապանին և մի րոպե հետո վկաների սենյակի դուռը բացվեց: Բարապանը՝ ընկերակցությամբ մի ժանդարմի, որ պատրաստ էր օգնության հասնել նրան՝ ներս մտցրեց դատապարտյալ Բրենին: Լսարանը վարանման մեջ էր և բոլոր կրծքերն էլ բաբախում էին, կարծես մի հոգի ունենային:

Նախկին տաժանակիր Բրենեն հագել էր կենտրոնական տների գորշ ու սև բաճկոնը: Բրենեն վաթսուևամյա մարդ էր և ուներ գործի մարդու ու ստահակի տեսք: Երբեմն այսպիսի գուգաղիպություն լինում է: Այն բանտում, ուր նորանոր չարագործությունների պատճառով կրկին էր ընկել՝ դարձել էր բարապանի ծառայի նման մի բան: Դա մի մարդ էր, որի մասին պետքն ասում էին՝ ջանում է օգտակար լինել: Խոստովանահայրերը լավ վկայություն էին տալիս նրա կրոնական վարքի մասին: Չպետք է մոռանալ, որ սա տեղի էր ունենում ռեստավրացիայի ժամանակ:

— Բրեն,— ասաց նախագահը,— դուք մի անարգ դատապարտություն եք կրել և չեք կարող երդում տալ:

Բրենեն խոնարհեց աչքերը:

— Սակայն,— շարունակեց նախագահը,— նույնիսկ օրենքի աստիճանագրված մարդու մեջ էլ կարող է պատվի և արդարասիրության զգացում մնալ, երբ աստվածային գուրջ այդ թույլ է տալիս: Հենց այդ զգացումն էմ ես կոչ անում այս վճռական ժամին: Եթե այդ զգացումը մնացել է ձեր մեջ և ես

հույս ունեւ, ապա պատասխանելուց առաջ խորհեք, մի կողմից նկատի առեք, որ ձեր մի խոսքը կարող է կործանել այս մարդուն, մյուս կողմից էլ, որ ձեր մի խոսքը կարող է լույս տալ արդարադատությանը: Դուպեն հանդիսավոր է և դեռ ժամանակ կա ասածը ետ առնելու՝ եթէ կարծում եք, որ սխալվել եք:— Մեղադրյալ, կանգնեք:— Բրնե, լավ նայեք մեղադրյալին, ամփոփեք ձեր հուշերը և ասեք ձեր հոգով ու խղճով, պնդո՞ւմ եք, որ ճանաչում եք այս մարդուն, որպէս թիարանի ձեր նախկին ընկեր Ժան Վալժան:

Բրնեն դիտեց մեղադրյալին, ապա դարձավ դեպի դատական կազմը.

— Այո, պարոն նախագահ: Առաջինը ես նրան ճանաչեցի և պնդում եմ: Այս մարդը Ժան Վալժանն է, մտել է Տուլոն 1796 թվականին և դուրս է եկել 1815 թվականին: Ես դուրս եմ եկել հաջորդ տարին: Այժմ նա ապուշի տեսք ունի, ուրեմն տարիքն է ապուշ դարձրել, իսկ թիարանում ծածկամիտ էր: Հաստատապէս ճանաչում եմ նրան:

— Գնացեք, նստեք,— ասաց նախագահը:— Մեղադրյալ, մնացեք կանգնած:

Ներս Բերին Շնիլդիյոյին, որ ցմահ տաժանապարտ էր, ինչպէս դա երևում էր նրա կարմիր բաճկոնից ու կանաչ գդակից: Նա կրում էր իր պատիժը Տուլոնի թիարանում, որտեղից դուրս էին բերել նրան այս գործի համար: Սա մի փոքրիկ մարդ էր՝ մոտավորապէս հիսուն տարեկան, աշխույժ, կնճռոտած, նիհար, դեղին, անամոթ ու մտահոյզ արտահայտությամբ, բոլոր անդամների ու ամբողջ անձի մեջ մի տեսակ հիվանդագին թուլությամբ, իսկ աչքերում մի անհուն ուժ: Թիարանի ընկերները մականվանել էին նրան Ես ժխտում եմ աստծուն¹³⁴:

Նախագահը նրան ուղղեց մոտավորապէս նույն խոսքերը, ինչ Բրնեին: Այն բոլորին, երբ նա Շնիլդիյոյին հիշեցրեց, որ նրա նշավակությունը գրկում էր նրան երդում տալու իրավունքից՝ նա գլուխը բարձրացրեց և անայլայլ նայեց բազմությանը: Նախագահը հրավիրեց նրան ամփոփվել և ինչպէս Բրնեին էր արել, հարցրեց, թե պնդո՞ւմ է, որ ճանաչում է մեղադրյալին:

Շնիլդիյոն քրքշաց:

— Ինչպե՞ս թե ճանաչում եմ, հինգ տարի միևնույն շղթայում էինք կապված: Ինչո՞ւ ես փքվել, ախպերացու:

— Գնացեք, նստեք,— ասաց նախագահը:

Բարապանը ներս բերեց Կոշպային: Այս մյուս ցկյանս դատապարտվածը, որ եկել էր թիարանից և Շնիլդիյոյի պէս կարմիր բաճկոն էր հագել՝ Լուրդի շրջանի գյուղացիներից էր և Պիրենեյան շրջանի մի կիսավայրենի: Հոտեր էր արածացրել լեռներում և հովվությունից անցել էր ավազակության: Մեղադրյալից նվազ վայրենի չէր և թվում էր նրանից ավելի տկարամիտ: Դա մեկն էր այն դժբախտ մարդկանցից, որոնց բնությունը ուրվագծում է որպէս վայրի կենդանի, իսկ հասարակությունն ավարտում ու դարձնում է թիապարտ:

— Նախագահը փորձեց մի քանի պաթետիկ ու ծանրակշիռ բառերով հուզել նրան, և ինչպէս մյուս երկուսին, սրան էլ հարցրեց, թե առանց երկմտելու ու այլայլվելու պնդո՞ւմ եք, որ ճանաչում է իր առջև կանգնած մարդուն:

¹³⁴ Ավելի ճիշտ մի քիչ փոխել էին նրա անունը — Ժը-նի-դիյո՝ գրեթէ նման է Շնիլդիյոյին և նշանակում է՝ ես ժխտում եմ աստծուն: Օ. թ.:

— Սա Ժան Վալժանն է,— ասաց Կոշպայը:— Նրան նույնիսկ անվանում էին Ժան-վերամբարձ՝ այնքան որ ուժեղ էր:

Այս երեք մարդկանց ըստ երևոյթին անկեղծ ու ուղղամիտ հավաստիացումներից յուրաքանչյուրը լսարանում զայրացկոտ մրմունջ էր բարձրացրել մեղադրյալի դեմ, մրմունջ, որ աճում և ավելի երկարատև էր լինում, երբ ամեն անգամ մի նոր հայտարարություն գալիս էր միանալու նախընթացին: Իսկ մեղադրյալը լսել էր դրանք այն զարմացած դեմքով, որն ըստ մեղադրանքի՝ նրա պաշտպանվելու հիմնական միջոցն էր: Առաջին հայտարարության վրա՝ նրա հարևան ժանդարմները լսեցին, որ ատամների արանքից մոլտաց: «Ըհը՛, այ քեզ բա՛ն»: Երկրորդից հետո ավելի բարձր և գրեթե բավարարված շեշտով ասաց. «Լա՛վ»: Երրորդին գոչեց. «Այ քեզ խաբեբա՛ »:

Նախագահը հարցապնդեց.

— Մեղադրյալ, բոլորը լսեցի՞ք: Ի՞նչ կարող եք ասել:

Նա պատասխանեց.

— Ասում եմ՝ այ քեզ խաբեբա՛:

Բազմության մեջ աղմուկ ծագեց և գրեթե համակեց դատական կազմին: Ակներև էր, որ մարդը կորած է:

— Բարապաններ,— ասաց նախագահը,— լռությունը վերականգնեք: Այժմ վիճաբանությունները կփակեմ:

Այդ թույլին մի շարժում առաջացավ հենց նախագահի մոտ: Լսվեց մի ձայն, որ գոչում էր.

— Բրեե, Շնիլդիյո, Կոշպայ, այս կո՛ղմը նայեք:

Բոլորն էլ, ով լսեց այդ ձայնը, սարսռացին, այնքան սրտակեղեք ու զարհուրելի էր այն: Բոլոր աչքերն էլ դարձան դեպի այն կողմը, որտեղից այդ ձայնն էր գալիս: Մենաշնորհյալ հանդիսականների միջև գտնվող մի մարդ, որ նստել էր դատական կազմի ետևը, վեր էր կացել, հրել-բացել էր ատյանը սրահից բաժանող դուռը և կանգնել սրահի մեջտեղը: Նախագահը, դատախազը, պարոն Բամատաբուան և քսան այլ մարդիկ ճանաչեցին նրան ու բացականչեցին միասին.

— Պարոն Մադլե՛նը:

XI

ՇԱՆՄԱԹԻՅՈՆ ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ Է ԶԱՐՄԱՆՈՒՄ

Իրոք որ նա էր: Քարտուղարի լամպը լուսավորում էր նրա դեմքը: Նա գլխարկը բռնել էր ձեռքը և հագուստի մեջ ոչ մի անկարգություն չկար, ռեդինգոտը խնամքով կոճկված էր: Նա խիստ գունատ էր ու թեթև դողում էր: Նրա մազերը, որ ալեխառն էին Արրաս հասնելու թույլին՝ այժմ բոլորովին սպիտակել էին: Եվ սպիտակել էին այդ մի ժամվա ընթացքում:

Բոլորն էլ իրենց գլուխները ցցեցին: Մենսագիան աննկարագրելի էր: Լսարանում մի թույլ երկբայություն տիրեց: Զայնն այնքան ծակող էր, իսկ այդտեղ կանգնած մարդն այնքան հանդարտ

էր երևում, որ սկզբում ոչինչ չհասկացան: Միմյանց հարցնում էին, թե գոչողն ով էր: Չէին կարող հավատալ, որ այդ հանդարտ մարդն էր այդ սոսկալի ճիչն արձակողը:

Այդ անորոշությունը միայն մի քանի ակնթարթ տևեց: Նախքան նախագահն ու դատախազը կկարողանային որևէ բառ արտասանել, նախքան ժանդարմներն ու բարապանները կկարողանային որևէ շարժում անել, այդ մարդը, որին բոլորն էլ դեռ այդ ընդհանուր անվանում էին պարոն Մադլեն, առաջացել էր դեպի վկա Կոչպայը, Բրենն ու Շնիդլիյոն:

— Ինձ չե՞ք ճանաչում,— ասաց նա:

Երեքն էլ մնացին շփոթված և գլխի նշանով պատասխանեցին, թե չեն ճանաչում: Կոչպայը՝ սարսափած, զինվորական բարն տվեց: Պարոն Մադլենը դարձավ դեպի երդվյալներն ու դատական կազմը և մեղմ ձայնով ասաց.

— Պարոն երդվյալներ, արձակել տվեք մեղադրյալին: Պարոն նախագահ, ձերբակալել տվեք ինձ: Այն մարդը, որին դուք փնտրում եք, նա չէ, ես եմ: Ես Ժան Վալթանն եմ:

Ոչ մի բերանից չունչ դուրս չէր գալիս: Զարմանքի առաջին ցնցումին հաջորդել էր գերեզմանային լռություն: Սրահում զգում էին այն տիպի կրոնական ահաբեկում, որ համակում է բազմությանը՝ երբ մի ահեղ բան է կատարվում:

Բայց նախագահի դեմքը դրոշմված էր համակրանքով ու տխրությամբ. նա արագ մի նշան էր փոխանակել դատախազի հետ և ցածր ձայնով ասված մի քանի խոսք՝ ընթերակա խորհրդակիցների հետ: Ապա նա դիմեց հասարակությանը և հարցրեց այնպիսի շեշտով, որ բոլորն էլ հասկացան.

— Որևէ բժիշկ չկա՞ այդտեղ:

Ապա դատախազն սկսեց խոսել.

— Պարոն երդվյալներ, այնքան տարօրինակ և այնքան անսպասելի այս դեպքը, որ ընդմիջում է նիստը, մեզ, ինչպես նաև ձեզ, այնպիսի զգացում է ներշնչում, որ կարիք չկա բացատրելու: Դուք բոլորդ է՞ ճանաչում եք, զոնե համբավով, Մոնտրոյ-սյուռ-Մեռի հարգելի քաղաքապետ պարոն Մադլենին: Եթե լսարանում որևէ բժիշկ կա, մենք էլ միանում ենք պարոն նախագահին՝ խնդրելու նրան, որ բարեհաճի օգնել պարոն Մադլենին և առաջնորդի նրան իր բնակարանը:

Պարոն Մադլենը չթողեց, որ դատախազն ավարտի: Նա ընդհատեց նրան հեզությամբ և հեղինակությամբ լի շեշտով: Ահա նրա արտասանած խոսքերը, բառացի կերպով, այնպես, ինչպես այդ տեսարանին ներկա եղողներից մեկը գրի էր առել նիստից անմիջապես հետո, այնպես, ինչպես նրանք այժմ էլ հնչում են նրանց ականջում, ովքեր լսել են սրանից քառասուն տարի առաջ:

— Շնորհակալ եմ ձեզնից, պարոն դատախազ, բայց ես խենթ չեմ: Այժմ կտեսնեք դա: Քիչ էր մնացել, որ դուք մի խոշոր սխալ գործեիք. ազատեք այս մարդուն, ես կատարում եմ իմ պարտականությունը, ես եմ այդ դժբախտ դատապարտվածը: Ես միակ մարդն եմ, ում համար այստեղ ամեն ինչ պարզ է, և ես ճշմարտությունն եմ ասում ձեզ: Այն, ինչ անում եմ այս ընդհանուր, աստված, որ վերևում է՝ տեսնում է, և դա բավական է: Դուք կարող եք ինձ բռնել, քանի որ ես այստեղ եմ: Բայց ես արեցի կարողացածս: Թաքնվեցի այլ անվան տակ, հարստացա, դարձա քաղաքապետ, ցանկացա մտնել ազնիվ մարդկանց շարքը: Ըստ երևույթին, դա անհնար է: Վերջապես շատ բաներ կան, որ չեմ կարող ասել. հիմա ձեզ չեմ պատմի կենսագրությունս, մի օր

դա կիմացվի: Ես կողոպտել եմ գերապատիվ եպիսկոպոսին, ճիշտ է, գողացել եմ Փոքրիկ Ժերվեի փողը, դա էլ ճիշտ է: Իրավունք ունեն, երբ ձեզ ասում են, որ Ժան Վալժանը խիստ չար արարած է: Ողջ հանցանքը թերևս իմը չէ: Լսեք, պարոն դատավորներ, ինձ պես նվաստացած մարդը նախախնամությանը խրատ տալու և ոչ էլ հասարակությանը խորհուրդ տալու իրավունք ունի. բայց, տեսնում եք, այն նշավակությունը, որտեղից ես փորձել էի դուրս գալ՝ վնասակար բան է: Թիարաններն են թիապարտներ ստեղծում: Հիշեք այս բանը, եթե ուզում եք: Թիարանից առաջ ես մի խեղճ գյուղացի էի, պարզամիտ, մի տեսակ ապուշ. թիարանն ինձ փոխեց: Ես տկարամիտ էի՝ դարձա չար, կոճղ էի, դարձա խանձող: Ավելի ուշ ներողամտությունն ու բարությունն ինձ փրկեցին, ինչպես որ խստությունն ինձ կործանել էր: Բայց, ներողություն, դուք չեք կարող հասկանալ, թե ինչ եմ ասում այժմ: Իմ տանը, բուխարու մոխիրների մեջ, դուք կգտնեք երկու ֆրանկանոց դրամ, որ յոթ տարի առաջ գողացել եմ փոքրիկ Ժերվեից: Էլ ոչինչ չունեմ ավելացնելու: Բռնեք ինձ: Աստված իմ, պարոն դատախազը շարժում է գլուխը և ասում՝ պարոն Մադլենը գժվել է, ու ինձ չի հավատում: Ահա թե ինչն է վշտացնումինձ: Գոնե այս մարդուն մի դատապարտեք: Ինչ, սրա՞նք էլ ինձ չեն ճանաչում: Ես կուզենայի, որ Ժավերն այստեղ լինեք: Նա ինձ կճանաչեր:

Ոչ մի բան չի կարող վերարտադրել այն, թե ինչքան բարյացակամ թախիժ ու տխրություն կար նրա խոսքերին ընկերացող շեշտի մեջ:

Նա դարձավ դեպի երեք տաժանապարտները.

— Իսկ ես ձեզ ճանաչում եմ: Բրեն, հիշո՞ւմ եք...

Նա ընդհատեց, մի լուրջ երկմտեց և ասաց.

— Հիշո՞ւմ ես այն շախմատանկար ուսակապերը, որ կրում էիր թիարանում:

Բրենն կարծես զարմանքից ցնցվեց և սարսափած տեսքով ոտքից-գլուխ դիտեց նրան: Իսկ նա շարունակեց:

— Շնիդլիյո, դու, որ ինքդ քեզ անվանում էիր՝ Ես բացասում եմ աստծուն, ամբողջ աջ ուսդ խորապես այրված է, որովհետև մի անգամ դու պառկել էիր կրակով լի կրակարանի վրա՝ ջնջելու համար T.F.P. տառերը, որոնք այնուամենայնիվ այժմ էլ երևում են: Պատասխանիր, ճի՞շտ է:

— Ճիշտ է,— ասաց Շնիդլիյոն:

Ապա դիմեց Կոշպային:

— Կոշպայ, քո ձախ բագուկի արմունկի ծալքում, վառողով կիզված, կապույտ գրերով մի թվական է փորագրված: Այդ թվականը այն օրն է, երբ կայսրը ցամաք իջավ Կաննում՝ 1815 թ. մարտի 1-ը: Թե՛ղ բաց արա:

Կոշպայը թևը բաց արեց, և ամենքն էլ հայացքները սևեռեցին նրա մերկ բագուկի վրա:

Ժանդարմներից մեկը լամպը մոտեցրեց նրան: Իրոք, թվականը կար:

Դժբախտ մարդը դարձավ դեպի բագմությունը, ապա դեպի դատավորներն այնպիսի ժպիտով, որից, ովքեր տեսել են, այժմ էլ մորմոքվում են, երբ մտածում են դրա մասին: Դա և հաղթանակի, և հուսահատության ժպիտ էր:

— Ինչպես տեսնում եք՝ ես Ժան Վալժանն եմ,— ասաց նա:

Այդ նիստում այլևս ոչ դատավոր կար, ոչ մեղադրող կար և ոչ էլ ժանդարմ. միայն սևեռուն հայացքներ ու հուզված սրտեր կային: Այլևս ոչ ոք չէր հիշում իր կատարելիք դերը. դատախազը մոռացել էր, որ ինքն այդտեղ է գտնվում պատիժ պահանջելու համար, նախագահը չէր հիշում, որ ինքն այդտեղ է գտնվում նախագահելու համար, պաշտպանը՝ պաշտպանելու համար: Ջարմանալի բան, ոչ մի հարց չտրվեց, ոչ մի իշխանություն չմիջամտեց: Վսեմ տեսարանների հատկանիշն այն է, որ համակում է բոլոր սրտերը և բոլոր վկաներին դարձնում հանդիսատեսներ: Թերևս ոչ ոք հաշիվ չէր տալիս իրեն, թե ինչ է գգում, թերևս ոչ ոք չէր մտածում, որ մի խոշոր լույս է շողշողում այդտեղ, բայց ամենքն էլ ներքուստ զգում էին, որ շլացած են:

Ակներև էր, որ իրենց առջև Ժան Վալժանն է կանգնած: Դա ճառագայթի պես լուսաշող էր: Այս մարդու երևալը բավական էր եղել լույս սփռելու մի բոլոր առաջ այնքան խավար թվացող այդ առեղծվածի վրա: Առանց հետագա որևէ բացատրության կարիք զգալու, այդ ողջ բազմությունը՝ մի տեսակ էլեկտրական հայտնության նման, անմիջապես և մի հայացքով հասկացավ պարզ ու հոյակապ պատմությունը մի մարդու, որ անձնատուր է լինում, որպեսզի մի ուրիշը չդատապարտվի իր փոխարեն: Մանրամասնությունները, տատամսումներն ու հնարավոր փոքրիկ դիմադրությունները կորան այդ լուսավոր, ընդարձակ փաստի մեջ:

Տպավորությունը շուտով անցավ, բայց այդ բոլորին անդիմադրելի եղավ:

— Ես այլևս չեմ ուզում խանգարել նիստը, — շարունակեց Ժան Վալժանը: — Եվ քանի որ ինձ չեն ձերբակալում՝ ես գնում եմ: Բազմաթիվ անելիքներ ունեմ: Պարոն դատախազը գիտե, թե ով եմ ես, գիտե, թե ուր եմ գնում և ինձ ձերբակալել կտա՝ երբ ուզենա:

Նա ուղղվեց դեպի դուռը և դուրս գնաց: Ոչ մի ձայն չլսվեց, ոչ մի բազուկ չերկարեց նրան ձերբակալելու: Ամենքն էլ ճամփա տվին: Այդ բոլորին նա ինչ-որ աստվածային բան ուներ, այն, որ բազմություններին ստիպում է նահանջել մի մարդու առջև: Նա դանդաղ քայլերով անցավ բազմության միջից: Այնպես էլ չիմացվեց, թե ով բաց արեց դուռը, բայց մի բան պարզ է, որ երբ նա հասավ դռանը՝ այն բաց էր: Երբ հասավ այդտեղ, շուտ եկավ և ասաց.

— Պարոն դատախազ, ես մնում եմ ձեր տրամադրության տակ:

Ապա նա դիմեց հասարակությանը.

— Դուք բոլորդ, բոլոր նրանք, ովքեր այստեղ են, գտնում եք, որ ես արժանի եմ կարեկցության, այնպես չէ՞: Աստված իմ, երբ մտածում եմ, թե ինչ արեցի հիմա, ինձ գտնում եմ նախանձելու արժանի: Բայց և այնպես կգերադասեի, որ այս ամենը չպատահեր:

Նա դուրս գնաց և դուռը նորից փակվեց, ինչպես որ բացվել էր, որովհետև նրանք, ովքեր որոշ գերազույն բաներ են անում, միշտ էլ վստահ են, որ բազմությունից մեկնումեկը կաջակցի իրենց:

Մոտ մի ժամ հետո, երդվյալների վճիռը մեղադրանքից ազատեց Շանմաթիյոյին, և Շանմաթիյոն անմիջապես ազատ արձակվելով՝ ապշած գնում էր, կարծելով, որ բոլոր մարդիկ խենթ են և ոչինչ չեն հասկանում այդ տեսիլից:

Գիրք ութերորդ

ՀԱԿԱՀԱՐՎԱԾ

I

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ Է ՊԱՐՈՆ ՄԱՂԵՆԸ ԴԻՏՈՒՄ ԻՐ ՄԱՋԵՐԸ

Լույսն սկսում էր բացվել: Ֆանտինն անց էր կացրել մի տենդոտ ու անքուն գիշեր, բայց և լի հաճելի պատկերներով: Առավոտյան կողմ նա քնեց. քույր Սեմայիսը, որ գիշերը հսկել էր նրան, օգտվեց նրա քնելուց և գնաց խինինի մի նոր լուծույթ պատրաստելու: Այդ արժանավոր աղջիկը մի քանի րոպե էր, ինչ լաբորատորիայում էր և կռացած իր դեղերի ու սրվակների վրա, շատ մոտիկից էր նայում նրանց՝ այն մուծի պատճառով, որ արշալույսն է սփռում առարկաների վրա: Հանկարծ նա շուտ տվեց գլուխը և մի թեթև ճիչ արձակեց: Պարոն Մաղլենը նրա առջև էր. նա ներս էր մտել բոլորովին լուռ:

— Այդ դո՞ւք եք, պարոն քաղաքապետ, — բացականչեց նա:

Քաղաքապետը ցածր ձայնով պատասխանեց.

— Ինչպե՞ս է այդ խեղճ կինը:

— Այս րոպեին վատ չէ: Բայց շատ անհանգստացանք:

Ապա պատմեց նրան տեղի ունեցածը. որ Ֆանտինը երեկ շատ վատ էր, իսկ այժմ համեմատած լավ է, որովհետև կարծում է, թե պարոն քաղաքապետը գնացել է Մոնֆերմեյ իր երեխային բերելու: Քույրը համարձակվեց հարցաքննել պարոն քաղաքապետին, բայց նրա տեսքից հասկացավ, որ այդտեղից չէր գալիս:

— Այդ բոլորը լավ է, — ասաց նա, — իրավունք ունեք, որ նրան թողել եք այդ սխալմունքի մեջ:

— Այո, — շարունակեց քույրը, — բայց այժմ, երբ նա ձեզ տեսնի, պարոն քաղաքապետ և չտեսնի իր երեխային, ի՞նչ պիտի ասենք նրան: Մի րոպե նա մնաց մտածկոտ:

— Աստված մի բան կներշնչի, — ասաց նա:

— Բայց և այնպես չի կարելի խաբել, — մրմնջաց քույրը ցածր ձայնով:

Առավոտյան լույսն արդեն լցրել էր սենյակը և ընկնում էր ուղիղ պարոն Մաղլենի դեմքին: Քույրը պատահաբար բարձրացրեց գլուխը:

— Աստված իմ, ի՞նչ է պատահել ձեզ, ձեր մազերը բոլորովին սպիտակ են, — բացականչեց նա:

— Սպիտա՞կ, — կրկնեց Մաղլենը:

Քույր Սեմայիսը հայելի չուներ, ուստի փորփրեց բժշկական գործիքների տուփը և մի փոքրիկ հայելի հանեց այնտեղից, այն հայելին, որ գործ էր ածում հիվանդանոցի բժիշկը հաստատելու

համար, որ հիվանդը մեռել է, այլևս չի շնչում: Պարոն Մաղլենը վերցրեց հայելին, դիտեց իր մազերն ու ասաց.

— Այ քեզ բա՛ն:

Այդ խոսքը նա ասաց անտարբերությամբ և կարծես այլ բանի մասին մտածելով:

Քույրը կարծես սառել էր մի անծանոթ բանից, որ նա նշմարում էր այս բոլորի մեջ:

Պարոն Մաղլենը հարցրեց.

— Կարո՞ղ եմ տեսնել նրան:

— Մի՞թե պարոն քաղաքապետը չի վերադարձնելու նրա երեխային,— ասաց քույրը, հազիվ համարձակվելով մի հարց տալ:

— Անշուշտ, բայց առնվազն երկու-երեք օր է պետք:

— Եթե մինչ այդ նա չտեսնի պարոն քաղաքապետին,— ամաչկոտ կերպով նկատեց քույրը,— չի իմանա, որ դուք վերադարձել եք, որով և հեշտ կլինի համբերել տալ նրան, իսկ եթե երեխան գա՝ նա բնականաբար կկարծի, որ պարոն քաղաքապետը վերադարձել է երեխայի հետ: Այդ դեպքում խաբելու կարիք չի լինի:

Պարոն Մաղլենը կարծես մի քանի բոպե մտածեց, ապա հանդարտ ծանրությամբ ասաց.

— Ոչ, քույր իմ, պետք է տեսնեմ նրան: Գուցե պետք լինի շտապել:

Քույրը կարծես չնկատեց այդ «գուցե» բառը, որ անորոշ ու բացառիկ իմաստ էր տալիս պարոն քաղաքապետի խոսքերին, ուստի խոնարհելով աչքերը և իջեցնելով ձայնը, պատասխանեց հարգանքով.

— Այժմ նա հանգստանում է, բայց պարոն քաղաքապետը կարող է ներս մտնել:

Պարոն Մաղլենը մի քանի դիտողություն արեց մի դռան մասին, որ վատ էր փակվում և, որի հանած աղմուկը կարող էր արթնացնել հիվանդին, ապա մտավ Ֆանտինի սենյակը, մոտեցավ նրա մահճակալին ու բացեց վարագույրը: Ֆանտինը քնած էր: Շունչը դուրս էր գալիս նրա կրծքից այն ողբերգական աղմուկով, որ հատուկ է այդ հիվանդություններին և, որ կեղեքում է խեղճ մայրերի սիրտը՝ երբ նրանք հսկում են գիշերներն իրենց քնած, բայց արդեն դատապարտված երեխայի կողքին: Բայց այս սրտաճմլիկ շնչառությունը հազիվ էր խանգարում այնանպատմելի պայծառությունը, որ դրոշմված էր նրա դեմքին և կերպարանափոխում էր նրան՝ իր քնի մեջ: Նրա գունատությունը դարձել էր սպիտակություն և այտերը շառագունել էին: Նրա երկար ու խարտյաշ թարթիչները՝ կուտությունից ու երիտասարդությունից մնացած միակ գեղեցկությունը, թրթռում էին՝ մնալով սակայն փակ ու խոնարհած: Նրա ողջ անձը սարսռում էր կարծես ինչ-որ պարզված թևերից, որոնք պատրաստ էին նրան գրկելու ու տանելու և, որով բաբախումն զգացվում էր, բայց չէր երևում: Տեսնելով նրան այդ վիճակում, երբեք չէր կարելի հավատալ, որ գրեթե անհույս հիվանդ է նա: Ավելի շուտ նա նման էր թռչել պատրաստվողի, քան մահամերձի:

Երբ մարդու ձեռքը մոտենում է ճյուղին՝ նրա ծաղիկը պոկելու համար, նա ցնցվում է և կարծես միաժամանակ թե խույս է տալիս, թե հանձնվում: Մարդկային մարմինն էլ այդ սարսուռի նման մի բան է ունենում այն բոպեին, երբ մահվան խորհրդավոր մատները գալիս են հոգին քաղելու:

Պարոն Մաղլենը մի քանի թույլ մնաց անշարժ այդ մահճակալի մոտ, նայելով մերթ հիվանդին, մերթ խաչելությանը, ինչպես երկու ամիս առաջ էր անում, այն օրը, երբ առաջին անգամ եկավ տեսնելու նրան այս ապաստարանում։ Այդ ժամանակ էլ նրանք այդտեղ էին, նույն դիրքով։ Ֆանտինը քնած էր, իսկ Մաղլենն աղոթում էր. միայն թե այժմ, երկու ամիս անց Ֆանտինի մազերն ալեխառն էին, իսկ քաղաքապետի մազերը՝ սպիտակ։

Քույրը նրա հետ ներս չէր եկել։ Պարոն Մաղլենը կանգնել էր անկողնու մոտ, մատը բերանին դրած, կարծես թե սենյակում կար մեկը, որին պետք էր լուռ պահել։

Ֆանտինը աչքերը բաց արեց, տեսավ նրան և ժպտագին ու քաղցրությամբ հարցրեց.

— Իսկ Կոզե՞տը։

II

ՖԱՆՏԻՆԸ ԵՐՋԱՆԻՎ Է

Նա ոչ զարմանքի ցնցում գործեց, ոչ էլ ուրախության շարժում. նա ինքն ամբողջությամբ ուրախություն էր։ Այդ պարզ հարցումը. «Իսկ Կոզե՞տը», արեց այնպիսի խոր հավատքով, այնքան վստահությամբ, կասկածի ու անհանգստության այնպիսի բացարձակ բացակայությամբ, որ պարոն Մաղլենը խոսք չգտավ պատասխանելու։ Եվ Ֆանտինը շարունակեց.

— Ես գիտեի, որ դուք այստեղ եք։ Քնել էի, բայց ձեզ տեսնում էի։ Երկար ժամանակ է, որ ձեզ տեսնում եմ։ Ամբողջ գիշեր աչքերովս հետևում եմ ձեզ։ Դուք փառքի մեջ էիք ու շրջապատված ամեն տեսակ երկնային դեմքերով։

Պարոն Մաղլենն իր աչքերն ուղղեց խաչելության վրա։

— Բայց ասեք, խնդրեմ, ո՞ր է Կոզետը։ Ինչո՞ւ նրան չեն դրել իմ անկողնու վրա՝ այն թույլին, երբ կարթնանայի։

Պարոն Մաղլենը մի բան պատասխանեց մեքենայաբար, բայց հետո երբեք չէր կարող հիշել, թե ինչ է ասել։

Բարեբախտաբար բժիշկն իմանալով քաղաքապետի վերադարձը, եկել էր և այդ միջոցին օգնության հասավ պարոն Մաղլենին։

— Որոյակս,— ասաց բժիշկը,— հանդարտվեցեք։ Ձեր երեխան այստեղ է։

Ֆանտինի աչքերը շողշողացին, և նրա ամբողջ դեմքը պատեցին լուսափայլով։ Նա կցեց իր ձեռքերն այնպիսի արտահայտությամբ, որ պարունակում էր այն ամենը, ինչ ամենից ավելի բուռն է և հեզ՝ որևէ աղոթքի մեջ։

— Օ՛հ,— գոչեց նա,— բերեք նրան ինձ մոտ։

Մայրական սրտառույզ պատրանք. Կոզետը նրա համար մնացել էր մի փոքր երեխա, որին գրկում-բերում են։

— Դեռ ոչ,— վրա բերեց բժիշկը,— ոչ այս բույսն է: Ձեր տենդը բուժողովին չի անցել: Ձեր երեխային տեսնելը ձեզ կհուզի և վատ ազդեցություն կգործի: Նախ պետք է առողջանալ:

Ֆանտինը անգուսպ կերպով ընդհատեց նրան:

— Ես արդեն առողջ եմ, ասում եմ, որ արդեն առողջ եմ: Ինչ էլ է այս բժիշկը. ինչպե՛ս թե, ուզում եմ տեսնել երեխայիս:

— Տեսնո՞ւմ եք,— ասաց բժիշկը,— ինչպես եք հուզվում: Ինչքան որ այդպես լինեք, ես համաձայն չեմ լինի, որ տեսնեք ձեր երեխային: Բավական չէ նրան տեսնել, պետք է նաև ապրել նրա համար: Երբ խոհեմ լինեք՝ ես անձամբ նրան կբերեմ ձեզ:

Խեղճ մայրը խոնարհեց գլուխը:

– Պարոն բժիշկ, ներողություն եմ խնդրում ձեզնից, իսկապես ներողություն եմ խնդրում: Առաջները ես այսպես չէի խոսում, ինչպես հիմա խոսեցի. այնքան դժբախտություն եմ տեսել, որ երբեմն չգիտեմ, թե ինչ եմ ասում: Հասկանում եմ, դուք վախենում եք հուզմունքից, կսպասեմ ուրեմն ինչքան կամենաք, բայց երդվում եմ, որ ոչ մի վնաս չէր առաջանա, եթե աղջկաս տեսնեի: Ես տեսնում եմ նրան երեկվանից և աչքերիցս չի հեռանում նա: Գիտե՞ք ինչ, եթե երեխայիս բերեին ինձ մոտ, ես կսկսեի կամաց խոսել նրա հետ: Միանգամայն բնական չէ՞ արդյոք, որ ես ցանկություն ունենամ տեսնել երեխայիս, որին հատկապես ինձ համար գնացել են որոնելու Մոնֆերմեյում: Ես բարկացած չեմ և վստահ եմ, որ երջանիկ կլինեմ: Ողջ գիշերն սպիտակ բաներ և ինձ ժպտացող մարդիկ եմ տեսել: Երբ պարոն բժիշկն ուզենա՝ Կոզետիս կբերի ինձ մոտ: Ես այլևս ջերմ չունեմ, որովհետև առողջացել եմ. գիտեմ, որ այլևս ոչ մի ցավ չունեմ, բայց այնպես կանեմ՝ ինչպես եթե հիվանդ լինեի, և այստեղի տիկիներին հաճույք պատճառելու համար այլևս չեմ շարժվի: Եվ երբ տեսնեն, որ ես բուժորովին հանդարտ եմ, կասեն՝ նրա երեխային պետք է հանձնել իրեն:

Պարոն Մադլենը նստել էր մահճակալի կողքին դրված աթոռի վրա: Ֆանտինը դարձավ դեպի նա. ակներև էր, որ նա ճիճ է գործ դնում հանդարտ ու «խելոք» երևալու, ինչպես ինքն էր ասում հիվանդության այդ թուլացած շրջանում, որը նման է մանկության, որպեսզի տեսնեն, թե ինչքան հանդարտ է ինքը և այլևս դժվարություն չհարուցեն Կոզետին իր մոտ բերելու: Բայց իրեն զսպելով հանդերձ՝ չէր կարող հազարավոր հարցեր չտալ Մադլենին:

— Լավ ճամփորդություն կատարեցի՞ք, պարոն քաղաքապետ: Օ՛, ինչքան բարի եք, որ գնացել եք երեխայիս բերել: Միայն այն ասեք՝ ինչպե՞ս է նա: Ճանապարհին չնեղվե՞ց: Ավաղ, նա ինձ չի ճանաչի. այսքան ժամանակվա ընթացքում ինձ մոռացած կլինի խեղճ սիրելիս: Չէ՞ որ երեխաները հիշողություն չունեն, թոչունների պես են: Այսօր մի բան է տեսնում, վաղը մի ուրիշը և էլ ոչ մի բանի մասին չի մտածում: Գոնե սպիտակեղենները մաքո՞ւր էին: Այդ թենարդիները մաքո՞ւր էին պահում նրան: Ինչպե՞ս էին կերակրում: Օ՛, եթե իմանայիք, թե ինչպես եմ տառապել՝ այս բոլոր հարցերը տալով ինքս ինձ՝ իմ աղքատության ժամանակ: Հիմա դա անցել է: Ես ուրախ եմ: Օ՛, ինչքան եմ ուզում նրան տեսնել: Նրան գեղեցիկ գտնո՞ւմ եք, պարոն քաղաքապետ: Իսկապես գեղեցիկ է աղջիկս, չէ՞: Դուք հավանաբար շատ եք մրսել այդ հանրակառքում: Մի՞թե չի կարելի նրան գոնե մեկ րոպեով ինձ մոտ բերել: Հետո անմիջապես ետ կտանեն: Ասեք, խնդրեմ, դուք տերն եք, ասեք թող բերեն:

Նա բռնեց Ֆանտինի ձեռքը և ասաց.

— Կոզետը գեղեցիկ է, նա լավ է ու առողջ, շուտով կտեսնեք նրան, բայց հանդարտվեք: Դուք շատ արագ ու տաք եք խոսում, և թևն անկողնուց դուրս հանում, իսկ դա հազաճում է ձեզ:

Իսկապես էլ հազի նոպաները գրեթե յուրաքանչյուր բոպեին ընդհատում էին Ֆանտինին:

Նա ձայն չհանեց. վախենում էր որևէ խիստ կրքոտ տրտունջով խախտել այն վստահությունը, ուստի սկսեց անտարբեր խոսքեր ասել:

— Բավական գեղեցիկ տեղ է Մոնֆերմեյը, այնպես չէ՞: Ամառն այնտեղ են գնում հաճախ քեֆ անելու: Այդ Թենարդիենների գործը հաջող է: Շատ մարդ չի անցնում նրանց երկրով, իսկ նրանց պանդոկը մի փոքրիկ, կեղտոտ ճաշարան է:

Պարոն Մադլենը շարունակում էր բռնել նրա ձեռքը և անձկությամբ նայում էր նրան: Պարզ էր, որ նա եկել էր որոշ բաներ ասելու, բայց այժմ նրա միտքը երկմտում էր: Բժիշկն իր այցելությունը կատարելուց հետո գնացել էր, միայն քույր Սեմպլիսն էր մնացել նրանց մոտ:

Բայց կարճ լռությունից հետո Ֆանտինը գոչեց.

— Լսո՞ւմ եմ նրա ձայնը, աստված իմ, լսում եմ նրա ձայնը:

Նա ձեռքով նշան արեց, որ ներկաները ձայն չհանեն, ապա իր շունչը պահեց և հափշտակությամբ սկսեց լսել:

Բակում մի երեխա էր խաղում. դռնապանուհու կամ որևէ բանվորուհու երեխան: Դա մեկն էր այն դիպվածներից, որ միշտ էլ կարելի է գտնել և, որը կարծես մաս է կազմում սգալի պատահարների խորհրդավոր բեմադրության: Այդ երեխան մի փոքրիկ աղջիկ էր, գնում էր, գալիս, վազվզում տաքանալու համար, ծիծաղում ու բարձրաձայն երգում: Ավաղ, ինչ բանի մեջ ասես երեխաների խաղերը չեն խառնվում: Այս փոքրիկ աղջկա երգն էր լսում Ֆանտինը:

— Օ՛հ, — շարունակեց նա, — իմ Կոզե՛տն է դա, ճանաչո՞ւմ եմ նրա ձայնը:

Երեխան հեռացավ, ինչպես որ եկել էր, և ձայնը կտրվեց: Ֆանտինը մի քանի բոպե էլ ունկնդրեց, ապա նրա դեմքը մռայլվեց և պարոն Մադլենը լսեց, որ նա ցածր ձայնով ասում էր.

— Ինչ չար է այդ բժիշկը, որ թույլ չի տալիս աղջկաս տեսնեմ: Վատ դեմք ունի այդ մարդը:

Բայց և այնպես նրա խնդագին մտքերը վերադարձան և շարունակեց ինքն իր հետ խոսել՝ գլուխը դրած բարձին: «Ինչքան երջանիկ ենք լինելու: Նախ մի փոքրիկ այգի կունենանք, պարոն Մադլենն ինձ խոստացել է: Աղջիկս կխաղա այգում: Հիմա նա երևի տառերը ճանաչում է, ես նրան հեզել կտամ: Նա կվազի խոտերի մեջ թիթեռների ետևից, ես էլ կհետևեմ նրան: Ապա առաջին հաղորդությունը կստանա: Եվ, իսկապես, ե՞րբ պետք է առաջին հաղորդությունն ստանա»:

Եվ սկսեց մատների վրա հաշվել:

— ...Մեկ, երկու, երեք, չորս... նա յոթ տարեկան է: Ուրեմն հինգ տարի հետո: Սպիտակ քող կգցի, թափանցիկ գուլպաներ կհագնի, փոքր տիկնոջ տեսք կունենա: Օ՛հ, իմ բարի քույր, չգիտեք ինչքան հիմար եմ ես, մտածում եմ աղջկաս առաջին հաղորդության մասին:

Եվ սկսեց ծիծաղել:

Պարոն Մադլենը թողել էր նրա ձեռքը և լսում էր նրա խոսքերը, ինչպես լսում են քամու սուլելը, աչքերը հառած գետնին և միտքը թաղած անհատակ մտածմունքների մեջ: Հանկարծ Ֆանտինը դադարեց խոսել և այս հանգամանքն ստիպեց պարոն Մադլենին գլուխը բարձրացնել: Ֆանտինը սոսկալի տեսք էր ստացել:

Նա այլևս չէր խոսում, այլևս չէր շնչում, կիսով չափ բարձրացել էր ու նստել, նիհար ուսը շապկից դուրս էր ցցվել, մի բոպե առաջ շողշողուն դեմքը այժմ դեփ-դեղին էր և սարսափից մեծացած աչքերը կարծես սևեռել էր իր առջև, սենյակի մյուս ծայրում գտնվող զարհուրելի բանի վրա:

— Աստվա՛ծ իմ,— գոչեց պարոն Մաղլենը:— Ի՞նչ պատահեց ձեզ, Ֆանտին:

Նա չպատասխանեց և իր հայացքը չպոկեց այն առարկայից, որ կարծես տեսնում էր, մի ձեռքը դիպրեց Մաղլենի թևին և մյուսով նշան արեց, որ իր ետևը նայի:

Պարոն Մաղլենը ետ նայեց ու տեսավ Ժավերին:

III

ԺԱՎԵՐԸ ԳՈՂ Է

Ահա թե ինչ էր տեղի ունեցել:

Երբ պարոն Մաղլենը դուրս էր եկել Արրասի երդվյալների դատարանի սրահից, գիշերվա ժամը տասներկուսն անց կես էր: Նա վերադարձել էր պանդոկ ճիշտ այն պահին, երբ փոստակառքը պիտի մեկներ, որի մեջ ինչպես գիտենք, տեղ էր վերցրել: Առավոտյան ժամը վեցից քիչ առաջ նա հասավ Մոնտրոյ-սյուռ-Մեռ և ամենից առաջ պարոն Լաֆիտին գրած նամակը գցեց փոստը, որից հետո մտավ հիվանդանոց՝ Ֆանտինին տեսնելու:

Հազիվ էր նա հեռացել երդվյալների դատարանի աստանից, որ դատախազը, առաջին շփոթությունից սթափված, խոսք էր վերցրել՝ ողբալու համար Մոնտրոյ-սյուռ-Մեռի հարգելի քաղաքապետի խենթ արարքը և հայտարարելու, որ իր համոզմունքները ոչնչով չէին փոխվել այդ արտառոց միջադեպից, որը հետո պարզվելու էր, մինչ այդ պահանջում էր Շանմաթիոյի՝ աներկբայորեն իսկական Ժան Վալժանի դատապարտությունը: Դատախազի համառությունն ակներև կերպով հակասում էր ընդհանուրի՝ հասարակության, դատական կազմի և երդվյալների զգացումին: Պաշտպանը մեծ հոգնության կարիք չէր ունեցել հերքելու համար այս ճառը և հաստատելու, որ պարոն Մաղլենի, այսինքն իսկական Ժան Վալժանի հայտնություններից հետո, գործի էությունը հիմնիվեր շրջվել էր և, որ երդվյալների առջև կանգնած է մի անմեղ մարդ: Փաստաբանը դրանից մի քանի՝ դժբախտաբար ոչ նոր, դատավճռական դեպքեր հիշատակեց դատավարական սխալների մասին, և այլն, և այլն: Նախագահը իր ամփոփման մեջ միացել էր պաշտպանին և երդվյալները մի քանի բոպեի մեջ Շանմաթիոյի մեղադրանքից անպարտ հայտարարեցին:

Բայց դատախազին մի Ժան Վալժան էր պետք և նա, այլևս Շանմաթիոյից զրկվելով՝ բռնեց Մաղլենից:

Շանմաթիոյին ազատ արձակելուց անմիջապես հետո դատախազն ու նախագահն առանձնացան: Նրանք բանակցեցին «Մոնտրոյ-սյուռ-Մեռի պարոն քաղաքապետին ձերբակալելու անհրաժեշտության մասին»: Այս նախադասությունը, որտեղ այնքան շատ սեռական հոլով կա՝ պատկանում է դատախազին և, որ նա ամբողջությամբ գրել է գլխավոր դատախազին ուղարկած զեկուցագրի բնագրում: Առաջին հուզումն անցնելուց հետո, նախագահը քիչ առարկություն արեց: Չէ՞ որ անհրաժեշտ էր, որ արդարությունն իր ընթացքն ընդունի: Բացի դրանից, ամեն բան ասած լինելու համար, հիշատակենք, որ նախագահը թեև բարի և խելացի մարդ էր, բայց և միաժամանակ

խիստ, գրեթե մոլի արքայական էր և շատ խայթված էր այն բանից, որ Մոնտրոյ-սյուռ-Մեռի քաղաքապետը Կաննի ցամաք իջնելու մասին խոսելիս՝ Բուռնապարտեի փոխարեն կայսրը ասաց:

Այսպիսով, ձերբակալության հրամանն ուղարկվեց: Դատախազը մի սրարշավ սուրհանդակի միջոցով այդ հրամանը Մոնտրոյ-սյուռ-Մեռ ուղարկեց և այդ պարտականությունը դրեց Ժավերի վրա:

Ինչպես գիտենք, Ժավերը Մոնտրոյ-սյուռ-Մեռ էր վերադարձել իր ցուցմունքը տալուց անմիջապես հետո:

Ժավերը վեր էր կենում անկողնուց, երբ սուրհանդակը նրան հանձնեց Ժան Վալժանին ձերբակալելու և Արրաս տանելու հրամանը:

Սուրհանդակն ինքն էլ ոստիկանության ծառայող էր և գործից հասկացող մարդ: Մի երկու խոսքով նա Ժավերին տեղեկացրեց, թե ինչ էր տեղի ունեցել Արրասում: Դատախազի ստորագրությունը կրող կալանավորելու հրամանն այսպես էր ձևակերպված. «Վերաքննիչ Ժավերը կձերբակալի Մոնտրոյ-սյուռ-Մեռի քաղաքապետ պարոն Մադլենին, որ այսօրվա նիստում ճանաչվեց որպես ազատված տաժանապարտ Ժան Վալժան»:

Ժավերին չճանաչող մեկը, եթե նրան տեսներ այն բույսին, երբ նա մտավ հիվանդանոցի նախասենյակ, երբեք չպիտի կարողանար կռահել, թե ինչ է տեղի ունենում և կկարծեր, որ նա ամենասովորական տեսքն ունի: Նա սառն էր, հանդարտ, ծանրախոհ, ալեխառն մազերը անթերի կերպով կոկել էր քունքերի վրա և իր սովորական դանդաղաշարժությամբ էլ բարձրացել էր սանդուղքով: Բսկ նրան խորապես ճանաչողը, եթե ուշադրությամբ զններ նրան՝ կսարսռար: Նրա կաշվե օձիքի ագույցը փոխանակ ծոծրակի վրա լինելու՝ ձախ ականջի վրա էր: Դա ցույց էր տալիս նրա անլուր վրդովմունքը:

Ժավերը ամբողջական բնավորություն էր, թույլ չէր տալիս, որ ծալքառաջանա ոչ իր պարտականության, ոչ էլ համագգեստի վրա. սրիկաների հետ մեթոդիկ էր, իսկ հագուստի կոճակների հետ՝ խստապահ:

Իր օձիքը վատ դնելու համար անհրաժեշտ էր, որ նա իր ներսում ունենար այնպիսի վրդովմունք, որը կարելի է կոչել ներքին երկրաշարժ:

Նա եկել էր շատ պարզ ձևով, հարևան պահակատնից մի տասնապետ և չորս զինվոր էր վերցրել, այդ զինվորներին թողել էր բակում և Ֆանտինի սենյակն իմացել էր կասկած չտանող դոնապանուհուց, որ վարժվել էր տեսնել պարոն քաղաքապետին հարցնող զինված մարդկանց:

Հասնելով Ֆանտինի սենյակին՝ Ժավերը պտտեց բանալին, դուռը հրեց հիվանդապահի կամ լրտեսի զգուշությամբ և ներս մտավ:

Ճիշտն ասած նա ներս չմտավ, այլ մնաց կանգնած կիսաբաց դռան մեջ՝ գլխարկը գլխին և ձախ ձեռքը մինչև կզակը կոճկված ռեդինգոտի ծոցը: Արմունկի ծալքում կարելի էր տեսնել նրա հսկայական ձեռնափայտի կապարե գլուխը, իսկ ձեռնափայտը անհետացած էր նրա ետևը:

Մոտ մի լոպե նա մնաց այդպես, և ոչ ոք չնկատեց նրան: Հանկարծ Ֆանտինն աչքերը բարձրացրեց, տեսավ նրան և պարոն Մադլենին էլ ետ դարձրեց:

Այն բոլորին, երբ Մադլենի հայացքը հանդիպեց Ժավերի հայացքին, Ժավերը, առանց շարժվելու, առանց երեքալու ու առաջանալու, դարձավ զարհուրելի: Մարդկային ոչ մի զգացում չի կարող այնպես զարհուրելի դառնալ, ինչպես ուրախությունը:

Նրա դեմքը նման էր այն հոգեառի դեմքին, որ վերջապես գտնում է իր գոհը:

Ժան Վալժանին վերջապես իր ձեռքում ունենալու աներկբայությունը երևան հանեց նրա դեմքի վրա այն ամենը, ինչ կար հոգում: Տեղաշարժի ենթարկված խորքը բարձրացավ մակերես: Հետքը մի քիչ կորցրած լինելու և մի քանի բուրբ օրվա Շանմաթիոյով սխալված լինելու նվաստացումը ջնջվում էր այն հպարտության գիտակցությունից, որ սկզբում շատ լավ էր գուշակել և երկար ժամանակ ճիշտ բնագո էր ունեցել: Ժավերի գոհունակությունը ճառագայթեց նրա ինքնիշխան կեցվածքի մեջ: Հաղթանակի այլանդակությունը սփռվեց նրա նեղ ճակատի վրա: Դա սոսկումի ողջ ցուցադրումն էր, որպիսին կարող է արտահայտել գոհ դեմքը:

Ժավերն այդ բոլորին յոթերորդ երկնքում էր: Առանց հստակորեն հաշիվ տալու իրեն, բայց իր անհրաժեշտության և հաջողության խառնաշփոթ ներհայեցողությամբ, նա կարծում էր, որ արդարությունը, լույսը և ճշմարտությունն իր անձի մեջ են՝ չարը ջախջախելու իրենց պաշտոնով: Նա զգում էր, որ իր հետևում և իր շուրջը, մի անհուն խորության վրա գտնվում է իշխանությունը, բանականությունը, կշռադատված խոսքը, օրինական խիղճը, հասարակական վրեժխնդրությունը, միխտաբով բոլոր աստղերը: Նա պաշտպանում էր կարգը, օրենքի շանթն էր ցայտեցնում, հասարակության վրեժն էր լուծում, աջակցություն էր ցույց տալիս բացարձակին, ամբողջ հասակով կանգնում էր փառքի մեջ: Նրա հաղթանակի մեջ մարտակոչի ու պատերազմի մնացորդ կար: Այդպես խրոխտ ու փառավոր կանգնած նա սփռում էր իր չորս կողմը կատաղի հրեշտակապետի գերմարդկային գազանությունը: Նրա կատարած գործողության վտանգավոր ստվերը տեսանելի էր դարձնում սոցիալական թրի տարտամ փայլատակումը՝ հանձին նրա սեղմված բռնուցքի: Թե իր երջանկության, թե նվաստության միջոցին նա իր կրունկի տակ պահում էր ոճիրը, մոլությունը, ըմբոստությունը, մոլորությունը, դժոխքը. նա շողշողում էր, բնաջնջում, ժպտում և մի անվիճելի մեծություն կար այս ճիվաղային Միքայել հրեշտակի մեջ:

Սակայն այդ ահավոր Ժավերը ոչ մի անարգ բան չունեւ:

Ուղղամտությունը, անկեղծությունը, անբծությունը, պարտականության գիտակցությունն այնպիսի բաներ են, որ կարող են չսխալվել, բայց դառնալ զզվելի, սակայն նույնիսկ զզվելի դառնալով՝ մնում են մեծ. նրանց վեհությունը, որ հատուկ է մարդկային խղճին, շարունակում է գոյություն պահել սարսափի մեջ: Դրանք առաքինություններ են և մի արատ ունեն՝ սխալանքը: Որևէ պարկեշտ ֆանատիկոսի անողոք հրճվանքը իր ողջ գազանության մեջ ունի ինչ-որ ցավագին կերպով պատկառելի շողշողում: Ժավերն առանց այդ գիտակցելու՝ իր զարհուրելի երջանկության մեջ խղճալի էր, ինչպես հաղթանակ տանող յուրաքանչյուր տգետ: Ոչ մի բան այնքան խոցող ու ահավոր չէր, ինչպես նրա դեմքը, որի վրա երևում էր այն, որ կարելի է անվանել բարիի ամբողջ չարությունը:

IV

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԻՑ Է ՄՏՆՈՒՄ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Այն օրվանից, ինչ պարոն քաղաքապետը Ֆանտինին խլել էր Ժավերից, Ֆանտինն այդ մարդուն չէր տեսել: Նրա հիվանդ ուղեղը ոչ մի բան չկարողացավ մտածել, բացի նրանից, որ նա եկել է իր

համար: Նա չկարողացավ այդ զարհուրելի կերպարանքին դիմանալ, զգաց, որ շունչը կտրվում է, ուստի դեմքը ձեռքերով ծածկեց և անձկությամբ գոչեց.

— Փրկե՛ք ինձ, պարոն Մադլեն:

Ժան Վալժանը,— մենք սրանից հետո նրան այլ կերպ չենք անվանի,— կանգնել էր: Նա ասաց Ֆանտինին ամենաքաղցր և ամենահանդարտ ձայնով.

— Անհոգ կացեք, ձեզ համար չի եկել նա:

Ապա դիմեց Ժավերին ու ասաց.

— Գիտեմ ինչ եք ուզում:

Ժավերը պատասխանեց:

— Գնանք, շուտ:

Այս երկու բառերն արտասանելու մեջ ինչ-որ անասնական ու մոլեգին բան կար: Ժավերը չասաց՝ գնանք, շուտ, այլ ասաց՝ գնան շուտ: Ոչ մի ուղղագրություն չի կարող արտաբերել այն շեշտը, որով այդ խոսքերն արտասանվեցին. դա արդեն մարդկային խոսք չէր, այլ մոնչոց էր:

Նա սովորականի պես չվերաբերվեց, գործի էությունը չբացատրեց, կալանավորելու հրամանագիրը ցույց չտվեց: Նրա համար Ժան Վալժանը մի տեսակ խորհրդավոր և անձերբակալելի մարտնչող էր, մի խավարապատ պայքարող, որին հինգ տարուց ի վեր սեղմում էր՝ առանց կարողանալու տապալել: Այս ձերբակալությունն սկիզբ չէր, այլ վախճան: Ուստի նա բավարարվեց ասելով՝ գնանք, շուտ:

Այս բանն ասելուց հետո նա ոչ մի քայլ չարեց, այլ սկեռեց Ժան Վալժանի վրա այն հայացքը, որ նետում էր ճանկի նման և, որով սովորություն ուներ թափով դեպի իրեն քաշելու թշվառ մարդկանց:

Հենց այդ հայացքն էր, որ երկու ամիս առաջ Ֆանտինն զգացել էր, որ թափանցում է մինչև իր ոսկրածուծը:

Ժավերի ճիչի վրա Ֆանտինը բաց էր արել աչքերը, բայց պարոն քաղաքապետն այդտեղ էր: Էլ ինչի՞ց նա կարող էր վախենալ:

Ժավերն առաջացավ սենյակի մեջտեղը և գոռաց.

— Ի՞նչ է, կգա՞ս, թե ոչ:

Դժբախտ կինը նայեց իր շուրջը: Բացի քրոջից ու քաղաքապետից ոչ ոք չկար. ուրեմն ո՞ւմ կարող էր վերաբերվել այս անարգ «դու»-ն: Միայն իրեն: Եվ նա ցնցվեց:

Այդ միջոցին նա մի անլուր բան տեսավ, այնքան անլուր, որ տենդի ամենասև զառանցանքների մեջ անգամ ոչ մի այդպիսի բան չէր երևացել նրան:

Նա տեսավ, որ ոստիկանական լրտես Ժավերը բռնեց պարոն քաղաքապետի օձիքից, իսկ պարոն քաղաքապետը գլուխը խոնարհեց: Նրան թվաց, որ աշխարհը կործանվում է:

Եվ իսկապես Ժավերը բռնել էր Ժան Վալժանի օձիքից:

— Պարո՛ն քաղաքապետ,— աղաղակեց Ֆանտինը:

Ժավերն սկսեց քրքջալ այն զգվելի քրքիջով, որը երևան էր բերում նրա բոլոր ատամները:

— Այստեղ այլևս պարոն քաղաքապետ չկա:

Ժան Վալժանը չփորձեց խանգարել իր ռեդիոգոտի օձիքը բռնող ձեռքը և ասաց.

— Ժավեր...

Ժավերն ընդհատեց նրան.

— Կոչիր ինձ պարոն վերաքննիչ:

— Պարոն,— շարունակեց Ժան Վալժանը,— ես ուզում եմ ձեզ առանձին մի խոսք ասել:

— Բարձր, շատ բարձր ասա,— պատասխանեց Ժավերը,— ինձ հետ բոլորը բարձր են խոսում:

Ժան Վալժանը շարունակեց ձայնն իջեցնելով.

— Մի բան եմ ուզում խնդրել ձեզնից...

— Ես քեզ ասում եմ բարձր խոսիր:

— Բայց այդ բանը միայն դուք պետք է լսեք:

— Իմ ինչ գործն է: Ես չեմ լսում:

Ժան Վալժանը շրջվեց նրա կողմը և արագ ու խիստ կամաց ասաց.

— Երեք օր շնորհեք ինձ, երեք օր, որ գնամ այդ դժբախտ կնոջ երեխան որոնեմ: Ինչ որ պետք է կվճարեմ: Եթե ուզենաք՝ կարող եք ընկերակցել ինձ:

— Ծիծաղո՞ւմ եք վրաս,— աղաղակեց Ժավերը:— Ես չեմ կարծում, որ դու հիմար ես: Երեք օր ես խնդրում այստեղից գնալու համար: Եվ ասում ես այս աղջկա երեխան որոնելու համա՞ր է: Օ՛, ինչպես չէ, այ քեզ խելք:

Ֆանտինը ցնցվեց:

— Երեխա՛ս,— գոչեց նա,— գնալ որոնելու երեխայիս: Ուրեմն նա այստեղ չէ՞: Քույր իմ, պատասխանեք, ո՞ւր է Կոզետը: Երեխայի՛ս եմ ուզում: Պարո՛ն Մադլեն, պարո՛ն քաղաքապետ:

Ժավերը ոտքը գետնին խփեց:

— Հիմա էլ ես մեկը: Ձայնդ կկտրե՞ս, անպետք: Խայտառակ երկիր, ուր թիապարտները բարձր պաշտոնների են հասնում, իսկ պոռնիկները խնամվում են կոմսուհիների պես: Բայց այդ բոլորը կփոխվի, վաղուց ժամանակն է:

Նա շեշտակի նայեց Ֆանտինին և նորից բռնելով Ժան Վալժանի փողկապը, շապիկն ու օձիքը՝ ավելացրեց.

— Ես քեզ ասում եմ, որ այլևս պարոն Մադլեն չկա և ոչ էլ պարոն քաղաքապետ: Կա մի գող, մի ավազակ, Ժան Վալժան կոչվող մի տաժանապարտ, հենց դրան եմ ես բռնել. ահա թե ինչ:

Ֆանտինն ընդոստ ուղղվեց, հենվեց իր փայտացած բազուկների ու ձեռքերի վրա, նայեց Ժան Վալժանին, նայեց Ժավերին, նայեց քրոջը, բացեց բերանը կարծես խոսելու համար, բայց կոկորդի խորքերից հոնդյուն բարձրացավ, ատամները կրճտացին, և ձեռքերը ջղաձգորեն բանալով նա անձկությամբ տարածեց բազուկները և կարծես փնտրեց իրշուրջը ջրահեղձ եղող մեկի, ապա հանկարծ ընկավ բարձի վրա: Նրա գլուխը կպավ մահճակալի սնարին ու հետ ընկավ կրծքի վրա, բերանը բաց, աչքերը անխուփ, բայց հանգած:

Նա մեռած էր:

Ժան Վալժանն իր ձեռքը դրեց Ժավերի՝ իրեն բռնած ձեռքի վրա, բաց արեց այն, ինչպես բաց կաներ երեխայի ձեռքը, ապա ասաց նրան:

— Դուք սպանեցիք այս կնոջը:

— Վերջացնե՛նք,— գոռաց կատաղած Ժավերը:— Ես չեմ եկել այստեղ դատողություններ լսելու: Կարճ կապենք: Պահակախումբը ներքևում է: Անմիջապես եկեք գնանք, եթե ոչ ձեռնակապերը...

Սենյակի անկյունում մի հին, երկաթե մահճակալ կար բավական խարխուլ վիճակում, որ ծառայում էր իբր ժամանակավոր անկողին գիշերները հսկող քույրերի համար: Ժան Վալժանը գնաց դեպի այդ մահճակալը, մի ակնթարթում պոկեց արդեն քայքայված սնարը,— հեշտ գործ նրա մկաններն ունեցող մարդու համար,— և պիրկ դաստակով սեղմելով գլխավոր ձողը՝ նայեց Ժավերին: Ժավերը ետ գնաց դեպի դուռը:

Ժան Վալժանը երկաթե ձողը բռնեցքում պահած՝ դանդաղ առաջացավ դեպի Ֆանտինի անկողինը և, երբ հասավ այդտեղ՝ ետ դարձավ և հազիվ լսելի ձայնով ասաց Ժավերին.

— Ձեզ խորհուրդ չեմ տալիս այս բռպեին ինձ խանգարել:

Մի բան կասկածից դուրս էր. այն, որ Ժավերը դողում էր:

Նա մտածեց գնալ պահակախումբը կանչել, բայց Ժան Վալժանը կարող էր օգտվել այդ վայրկյանից ու փախչել: Ուստի ձեռնափայտը հակադիր ծայրից բռնած մնաց այդտեղ և հենվեց դռան շրջանակին՝ առանց հայացքը Ժան Վալժանից կտրելու:

Ժան Վալժանը արմունկը հենեց մահճակալի սնարի գնդին, ճակատը ձեռքին և սկսեց նայել անշարժ ու տարածված Ֆանտինին: Եվ այդպես լուռ ու մտասույզ մնաց՝ ըստ երևույթին այս կյանքի մասին էլ ոչինչ չմտածելով: Նրա դեմքի ու կեցվածքի մեջ միայն մի բան կար. անպատմելի գուր: Այդ մտածմունքից մի քանի բռպե հետո նա կռացավ Ֆանտինի վրա ու ցածր ձայնով խոսեց նրա հետ:

Ի՞նչ ասաց նրան: Ի՞նչ կարող էր ասել այդ դատապարտված մարդն այդ մեռած կնոջը: Ի՞նչ խոսքեր էին դրանք: Աշխարհում ոչ ոք դրանք չի լսել: Իսկ մեռյալը լսե՞ց դրանք: Կան սրտառուչ պատրանքներ, որ գուցե վեհ իրականություններ են: Մի բան կասկածից դուրս է, այն, որ քույր Սեմյալիսը՝ այդ տեսարանի միակ վկան, հաճախ պատմել է, թե այն բռպեին, երբ Ժան Վալժանը խոսում էր Ֆանտինի ականջին, ինքը հստակորեն տեսավ, որ այդ գունատ շրթունքների և գերեզմանային զարմանքով լի, տարտամ բիբերի վրա մի անճառ ժպիտ ծագեց:

Ժան Վալժանը ձեռքերով բռնեց Ֆանտինի գլուխը, դրեց բարձի վրաայնպիսի խնամքով, ինչպես մայրն է անում իր երեխային, կապեց նրա շապկի արձակած կապը և մազերը մտցրեց գլխանոցի մեջ: Դրանից հետո փակեց նրա աչքերը:

Ֆանտինի դեմքն այդ վայրկյանին թվում էր տարօրինակ կերպով լուսավորված:

Մահը մեծ պայծառության նախադրումն է:

Ֆանտինի ձեռքը դուրս էր ընկել անկողնուց: Ժան Վալժանը ծունկ չոքեց այդ ձեռքի առջև, կամացուկ բարձրացրեց այն և համբուրեց:

Ապա նա ուղղվեց և դառնալով Ժավերի կողմը՝ ասաց.

— Այժմ ես ձեր տրամադրության տակ եմ:

V

ՀԱՐՄԱՐ ԳԵՐԵՋՄԱՆ

Ժավերը Ժան Վալժանին հասցրեց քաղաքի բանտը:

Պարոն Մադլենի ձերբակալությունը սենսացիա առաջացրեց Մոնտրոյ-սյուռ-Մեռում կամ ավելի ճիշտ՝ մի արտակարգ իրարանցում: Մեզ համար կսկծալի է, որ չենք կարող թաքցնել, **թե նա լոկ թիապարտ էր** խոսքի վրա համարյա ամենքն էլ լքեցին նրան: Ավելի պակաս, քան երկու ժամում, նրա արած ամբողջ բարեգործությունները մոռացվեցին և մնաց միայն «թիապարտը»: Անհրաժեշտ է նկատել, որ դեռ չգիտեին Արրասի դեպքերի մանրամասնությունները: Ողջ օրը, քաղաքի բոլոր մասերում, այսպիսի խոսակցություններ էին լսվում.

— Մի՞ թե չգիտեք, որ ազատ արձակված տաժանապարտ էր նա:— Ո՞վ:— Քաղաքապետը:— Պահ, պարոն Մադլեն՝ նր:— Այո:— Իսկապե՞ս:— Նա Մադլեն չէր կոչվում, մի այլանդակ անուն ունի, Բեժան Բոժան, Բուժան:— Օ՛հ, աստված իմ:— Այժմ ձերբակալված է:— Ձերբակալվա՞ծ:— Քաղաքի բանտում է, մինչև այլ վայր տեղափոխեն:— Դե թող տեղափոխեն:— Շուտով կտեղափոխեն:— Ո՞ր են տեղափոխելու:— Պետք է ներկայանա երդվյալների դատարանին՝ առաջները, մեծ ճանապարհի վրա կատարած մի գողության համար:— Ըիշտն ասած, ես կասկածում էի նրա վրա: Այդ մարդը շատ բարի էր, շատ քաղցրումեղցր: Հրաժարվեց խաչից, պատահած յուրաքանչյուր փոքրիկ խաբեբային մանր փողեր էր տալիս: Ես միշտ էլ մտածում էի, որ տակը ինչ-որ վատ պատմություն կա:

Այս տեսակ խոսակցություններով հեղեղվեցին մանավանդ «սալոնները»:

Մի պառաված տիկին, որ բաժանորդ էր «Դրապո Բլան»¹³⁵ թերթին, հետևյալ խորհրդածությունն արեց, որի խորությունը գրեթե անկարելի է չափել:

— Ես գայրացած չեմ դրանից: Բուռնապարտիստներին դաս կլինի սա:

Եվ այսպես, այն ուրվականը, որ կոչվել էր պարոն Մադլեն, ցրվեց Մոնտրոյ-սյուռ-Մեռից: Ողջ քաղաքում միայն երեք-չորս հոգի հավատարիմ մնացին նրա հիշատակին: Պառավ դոնապանուհին, որ ծառայել էր նրան, սրանց թվում էր:

Նույն օրվա երեկոյան, այս արժանավոր պառավը, դեռ բոլորովին ապուշ ու տխուր մտքերի մեջ թաղված, նստել էր իր խցիկում: Ֆաբրիկան ողջ օրը փակ էր եղել, դարպասը նիզով փակված էր և

¹³⁵ Սպիտակ դրոշ — ռոյալիստական թերթ:

փողոցն ամայի: Տանը միայն երկու կրոնավորուհիներն էին մնացել՝ քույր Պերպետյուն և քույր Սեմպլիսը, որոնք հսկում էին Ֆանտինի մարմնի վրա:

Մոտավորապես այն ժամին, երբ պարոն Մադլենը սովորաբար տուն էր վերադառնում, բարի դոնապանուհին մեքենայորեն վեր կացավ, դարակից վերցրեց պարոն Մադլենի սենյակի բանալին և այն մոմակալը, որ քաղաքապետը գործ էր ածում երեկոներն իր սենյակը բարձրանալու համար, ապա բանալին կախեց այն գամից, որից պարոն Մադլենը սովորաբար վերցնում էր և մոմակալն էլ դրեց կողքը, կարծես թե սպասելիս լիներ նրան: Հետո նորից նստեց իր աթոռի վրա և վերսկսեց մտածել: Բարի պառավն այդ բոլորն արել էր անգիտակցաբար:

Միայն ավելի քան երկու ժամից հետո նա դուրս եկավ իր երազանքից ու գոչեց.

— Վա՛յ, տեր Հիսուս, ես էլ նրա բանալին կախել եմ գամից:

Այդ րոպեին խցիկի ապակին բացվեց, մի ձեռք ներս մտավ, վերցրեց բանալին ու մոմակալը և վառեց մոմը կողքին վառվող մյուս մոմից:

Դոնապանուհին աչքերը բարձրացրեց ու մնաց բերանը բաց, իսկ ճիչը հազիվ պահեց կոկորդում:

Նա ճանաչում էր այդ ձեռքը, այդ բազուկը և վերարկուի թևնոցը:

Պարոն Մադլենն էր:

Մի քանի վայրկյան նա չկարողացավ խոսել, բռնվեց, ինչպես ինքն էր ասում հետո այդ դեպքը պատմելիս:

— Աստվա՛ծ իմ, պարոն քաղաքապետ,— բացականչեց նա վերջապես,— ես կարծում էի, որ դուք գտնվում եք...

Եվ կանգ առավ, որովհետև նախադասության վերջին մասը սկզբի նկատմամբ անհարգալիր կլիներ: Ժան Վալժանը նրա համար միշտ էլ պարոն քաղաքապետ էր:

Եվ Ժան Վալժանն էլ ավարտեց նրա խոսքը.

— Բանտում,— ասաց նա:— Այո, այդտեղ էի: Ջարդեցի պատուհանի երկաթե ձողը, տանիքից ցատկեցի և ահա այստեղ եմ: Գնում եմ սենյակս, կանչեք քույր Սեմպլիսին ինձ մոտ: Նա անկասկած այդ խեղճ կնոջ մոտ է:

Պառավը փութկոտ հնազանդվեց:

Ժան Վալժանը ոչ մի պատվեր չտվեց նրան, որովհետև վստահ էր որ նա ավելի լավ կպահպանի իրեն, քան թե ինքը:

Մինչև հիմա էլ չի պարզվել, թե ինչպես նա կարողացավ թափանցել բակը, առանց դարպասը բանալ տալու: Նա մի ամենաբանալի ուներ շարունակ իր վրա էր կրում, դրանով էլ բաց էր անում կողքի փոքր դուռը: Բայց հավանաբար խուզարկելիս այդ ամենաբանալին վերցրել էին: Այս հանգամանքը բնավ չպարզվեց:

Նա բարձրացավ իր սենյակն առաջնորդող սանդուղքով և երբ հասավ վեր, մոմակալը դրեց վերջին աստիճանների վրա, քիչ աղմուկով բաց արեց դուռը, խարխափելով փակեց լուսամուտն ու նրա դռնակը, ապա ետ եկավ, վերցրեց մոմը և նորից մտավ սենյակ:

Զգուշությունն անհրաժեշտ էր, ինչպես գիտենք, նրա լուսամուտը կարող էր փողոցից նկատվել:

Նա մի հայացք նետեց իր շուրջը, սեղանին, աթոռին և անկողնուն, որին երեք օր էր՝ ինչ ձեռք չէր տրված: Ոչ մի հետք չէր մնացել նախընթաց գիշերվա անկարգությունից: Դռնապանուհին «կարգավորել էր սենյակը»: Միայն թե նա մոխրից հանել, մաքրել ու սեղանի վրա էր դրել նրա երկաթապատ ձեռնափայտի գույգ ծայրերը և կրակից սևացած երկու ֆրանկանոցը:

Ապա նա մի թուղթ վերցրեց ու գրեց. «Ահա իմ երկաթապատ ձեռնափայտի գույգ ծայրերը և փոքրիկ Ժերվեից գողացած երկու ֆրանկանոցը, որի մասին խոսեցի երդվյալների ասոյանում», և այդ արծաթե փողն ու երկաթի կտորներն այնպիսի ձևով դրեց թղթի վրա, որ սենյակը մտնելուն պես առաջին անգամ դրանք տեսնեն: Հետո դարակից իր մի հին շապիկը հանեց ու պատռեց, որի կտորների մեջ փաթաթեց արծաթե երկու աշտանակները: Անհրաժեշտ է նկատել, որ նա ոչ շտապում էր, ոչ էլ անհանգստանում, և փաթաթելով հանդերձ եպիսկոպոսի աշտանակները՝ մի կտոր սև հաց էր ուտում: Հավանական է, որ դա բանտի հացն էր, որ փախչելիս հետն էր վերցրել:

Սա հաստատվեց այն հացի փշրանքներով, որ հետագայում գտնվեցին սենյակի հատակի վրա, երբ արդարադատությունը խուզարկություն կատարեց:

Դուռը երկու անգամ թեթև ծեծեցին:

— Մտեք,— ասաց նա:

Քույր Սեմպլիսն էր:

Նա դժգույն էր, աչքերը կարմրել էին և ձեռքի մոմակալը երերում էր: Բախտի ցնցումներն այն առանձնահատուկ բանն ունեն, որ ինչքան էլ մենք կատարելագործված կամ սառած լինենք, այնուամենայնիվ, նրանք մեր ընդերքից դուրս են քաշում մարդկային բնությունը և ստիպում նրան երևան գալ: Այդ օրվա հուզումների մեջ կրոնավորուհին նորից դարձել էր կին, նա լաց էր եղել ու դողում էր:

Ժան Վալժանը մի քանի տող էր գրել մի թղթի կտորի վրա, որը նա տվեց կրոնավորուհուն և ասաց.

— Քույր իմ, այս երկտողը կտաք քահանային:

Երկտողը ծավլած չէր. քույրը մի հայացք գցեց դրա վրա:

— Կարող եք կարդալ,— ասաց ժան Վալժանը:

Քույրը կարդաց. «Խնդրում եմ պարոն ավագերեցին հսկել այն ամենի վրա, որ ես թողնում եմ այստեղ: Բարի եղեք այդ կարողությունից վճարել իմ դատավարության և այսօր մեռած կնոջ ծախսերը: Մնացածը հատկացրեք աղքատներին»:

Քույրն ուզեց խոսել, բայց հագիվ կարողացավ մի քանի անորոշ վանկեր մրմնջալ: Ի վերջո կարողացավ ասել.

— Պարոն քաղաքապետը չի՞ ցանկանում վերջին անգամ տեսնել այդ դժբախտ կնոջը:

— Ոչ,— ասաց նա,— ինձ հետապնդում են և կարող են ձերբակալել նրա սենյակում, իսկ դա կվրդովի նրան:

Հազիվ էր վերջացրել, երբ մեծ աղմուկ լսվեց սանդուղքի վրա: Նրանք լսեցին բարձրացող ոտնաձայների ժխոր և պառավ դոնապանուհու խոսքերը, որ բարձր ու սուր ձայնով ասում էր.

— Իմ բարի պարոն, երդվում եմ աստծու անունով, որ ոչ ոք չի մտել այստեղ, ոչ ցերեկը, ոչ էլ երեկոյան, իսկ ես նույնիսկ դռնից չեմ հեռացել:

Մեկը պատասխանեց.

— Բայց և այնպես լույս կա այդ սենյակում:

Նրանք ճանաչեցին Ժավերի ձայնը:

Սենյակն այնպիսի դիրք ուներ, որ դուռը բաց անելիս ծածկվում էր աջ կողմի անկյունը: Ժան Վալթանը հանգցրեց մուրը և մտավ այդ անկյունը:

Քույր Սեմպլիսը ծունկ չոքեց սեղանի առջև:

Դուռը բացվեց:

Ժավերը ներս մտավ:

Միջանցքում լսվեց բազմաթիվ մարդկանց փսփսոցը և դոնապանուհու բողոքները:

Քույրն աչքերը չբարձրացրեց: Նա աղոթում էր:

Մոմը բոխարու վրա էր և շատ աղոտ լույս էր տալիս:

Ժավերը նկատեց քրոջը և շփոթված կանգ առավ:

Ինչպես գիտենք, Ժավերի էությունը, նրա տարերքը, նրա շրջապատը միայն մի բանից էր կազմված՝ պատկառանք դեպի յուրաքանչյուր իշխանություն: Նա չէր ընդունում ոչ առարկություն, ոչ սահմանափակում: Պարզ է, որ նրա համար եկեղեցական իշխանությունը ամենաառաջինն էր, ինքը կրոնասեր էր, թեև մակերեսային ու ճշտապահ, ինչպես և մյուս հարցերում: Նրա աչքին քահանան անսխալական մտքի տեր մարդ էր, իսկ կրոնավորուհին՝ չմեղանչող արարած: Դրանք այս աշխարհում ապրող պատնեշված հոգիներ են և մի դուռ ունեն միայն, որը բացվում է սոսկ ճշմարտություն դուրս հանելու համար:

Նկատելով քրոջը, Ժավերի գործած առաջին շարժումը ետ քաշվելն էր:

Սակայն կար մի այլ պարտականություն, որ նրան պահում էր և հակադիր իմաստով հրամայողաբար առաջ էր մղում: Երկրորդ շարժումը, որ նա գործեց՝ մնալ և գոնե մի հարցումն անելն էր:

Դա այն քույր Սեմպլիսն էր, որ իր կյանքում բնավ չէր ստել: Ժավերն այդ բանը գիտեր և դրա համար էլ հատկապես հարգում էր նրան:

— Քույր իմ,— ասաց նա,— մենա՞կ եք այս սենյակում:

Մի սոսկալի վայրկյան հաջորդեց դրան, որի ընթացքում խեղճ դոնապանուհին զգաց, որ նվաղելու մոտ է:

Քույրը բարձրացրեց գլուխը և պատասխանեց.

— Այո:

— Ուրեմն,— շարունակեց Ժավերը,— ներեցեք, որ պնդում եմ, դա իմ պարտականությունն է. այս երեկո մի անձ, մի մարդ չէ՞ք տեսել: Նա փախել է և մենք նրան ենք փնտրում, այդ Ժան Վալժան կոչվածին չէ՞ք տեսել:

— Ոչ,— պատասխանեց քույրը:

Նա ստեց: Ստեց երկու անգամ, իրար ետևից, առանց երկմտելու, արագ, անձնագոհություն կատարող մարդու նման:

— Ներողություն,— ասաց Ժավերը և հեռացավ՝ խոր գլուխ տալով նրան:

Ո՛վ սուրբ աղջիկ, դուք, որ վաղուց այս աշխարհում չեք և միացել եք ձեր կույս քույրերի ու հրեշտակ եղբայրների լույսին, թող այս սուտը հաշվի առնվի արքայության մեջ:

Քույր Սեմյալիսի հավաստումը Ժավերի համար այնքան վճռական եղավ, որ նա նույնիսկ չնկատեց մոմի առանձնահատկությունը. մոմը նոր էին փչել և դեռ ծխում էր սեղանի վրա:

Մեկ ժամ հետո մի մարդ էր քայլում ծառերի ու մառախուղի միջով և Մոնտրոյ-սյուռ-Մեռից արագությամբ հեռանում Փարիզի ուղղությամբ: Այդ մարդը Ժան Վալժանն էր: Ճանապարհին նրան հանդիպող մի քանի սայլապանների վկայությամբ ապացուցված է, որ նա մի կապոց ուներ և հասարակ բլուզ էր հագել: Որտեղի՞ց էր վերցրել այդբլուզը, երբեք էլ չպարզվեց: Ի դեպ, մի քանի օր առաջ մի ծեր բանվոր էր մահացել գործարանի հիվանդանոցում և լոկ մի բլուզ էր թողել: Գուցե այդ բլուզն էր:

Մի վերջին խոսք Ֆանտինի մասին:

Մենք բոլորս էլ մի մայր ունենք՝ հողը: Ֆանտինին վերադարձրին այդ մորը:

Քահանան կարծեց, թե լավ է անում և թերևս լավ էլ արեց, որ Ժան Վալժանի թողած փողի մեծագույն մասը պահեց աղքատների համար: Վերջիվերջո, հարցը ո՞ւմ էր վերաբերում. մի տաժանակրի և մի պոռնիկի: Ահա թե ինչու նա պարզեցրեց Ֆանտինի թաղումը և դա վերածեց այն ծայրահեղ անհրաժեշտության, որ կոչվում է ընդհանուր փոս:

Այդպիսով, Ֆանտինը թաղվեց գերեզմանատան այն ձրի անկյունում, որ պատկանում է ամենքին և ոչ ոքի, և որտեղ կորչում են աղքատները: Բարեբախտաբար աստված գիտե, թե որտեղ պետք է գտնել հոգին: Ֆանտինին դրին խավարի ծոցը, հենց առաջին պատահած ոսկորների միջև, և նա ենթարկվեց աճյունների խառնակեցության: Նա նետվեց ընդհանուր փոսը: Նրա գերեզմանը նման է նրա անկողնուն:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ